Գիրքը յուսապատճենահանվել է

www.a-pdf.com
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"ՀամաՀայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

www.a-pdf.com

ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՎ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԽՐԱԽԵԼ ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱՀԱՆՎԱԾ ԳՐՔԵՐԸ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ

**www.freebooks.do.am**

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:




ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

# ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՂԵԼ ԵՆ




ԱԶԴԱԿԱՆՉ 44

www.a-pdf.com

www.a-pdf.com

*Ես խոնարհվում եմ այն 6 հազար զոհված ազատամարտիկների պայծառ հիշատակի առջև, ովքեր իրենց արյունով վերագծեցին 12 հազար քառակուսի կիլոմետր տարածքով մեր սահմանները: Մենք բոլորս չհատուցված պարտք ունենք նրանց տալու:*

Սամվել Բաբայան



panarmenian freebooks library
www.freebooks.do.am
www.freebooks.am

www.a-pdf.com

ՀԵՆՐԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԳԱՐԵԳԻՆ ՂԱԶԱՐՅԱՆ
ՄԻՐՎԱՐԴ ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՆ՝ ԻՆՉՊԵՍ ԵՂԵԼ ԵՆ

## ԱԶԴԱԿԱՆՉ 44

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2008

www.a-pdf.com

ՀՏԴ 325
ԳՄԴ 66 3(2Հ
Խ 283

Խաչատրյան Հենրիկ և ուրիշներ
Խ 283 «ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՂԵԼ ԵՆ. ԱԶԴԱԿԱՆՉ 44
/Հ Խաչատրյան, Գ Ղազարյան, Ս. Մարգարյան Եր., «Հայկական հանրագիտարան հրատարակչություն 2008թ 384 էջ/·

Գիրքը նվիրված է հայոց նորագույն պատմության անհատականություններից մեկի՝ ռազմական, պետական և քաղաքական գործիչ Սամվել Անդրանիկի Բաբայանի բարդ ու բազմարժեք ճանապարհի լուսաբանմանը:

«Հաղթանակներն՝ ինչպես եղել են ազդականչ 44» գրքի ծանրության կենտրոն հանդիսացող առաջին գլխում («Օմարից մինչև Արաքս») փաստավավերագրական նյութերի հիման վրա արտացոլված է Պաշտպանության բանակի և նրա հրամանատարի մարտական ուղին (1991–1994թթ.).

Երկրորդ գլուխը («Պետականաշինության բավիղներում») պատմում է զինադադարից հետո կայացման ու զարգացման նոր փուլ թևակոխած ԼՂՀ պետականաշինության անդաստանում Սամվել Բաբայանի դերակատարության մասին

Երրորդ գլուխը («Հարցազրույցների ընտրանի») ամբողջական է դարձնում Սամվել Բաբայան ազգային հերոսի կերպարը:

ԳՄԴ 66 3 2Հ

ISBN 978 5 89700–034–0

© Հայկական հանրագիտարան հրատարակչություն 2008 թ

www.a-pdf.com



www.a-pdf.com



# ԱՆԱՎԱՐՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Պատմությունը մութ չբացահայտված էջեր չի հանդուրժում. Վաղ թե ուշ սերունդների պատմական գիտակցության և հիշողության մեջ դրանք ճշմարտացի լուծում են ստանում արժանանում արդարացի գնահատականի Բազում արքաներ, իշխաններ զորավարներ և այլ նշանավոր պատմական այրեր պահել են տարեգիրների. վարձել պատմիչների հօգուտ իրենց կեղծել իրականությունը Բայց ապարդյուն պատմությունը անողոք ժամանակի հրամայականով սովորաբար յուրաքանչյուրին դնում է իր իսկական տեղը Ավելորդ և անիմաստ հավակնությունները դառնում են անցյալ նետվում պատմության գզրոցը Սերունդներին հասնում է նորին մեծություն ճշմարտությունը մերկ ու տեսանելի, վեհ ու գեղեցիկ Եվ որ կարևոր է օգտակար ուղեցույց ապրողների համար Փա՛ռք այն երկրին և ժողովրդին, որոնք առաջնորդվում են նշված ճշմարտությամբ Դա հենց այն է ինչն այնքան փայլուն սահմանել է XIX դարի իտալացի մեծ ազատամարտիկ և իմաստասեր Ջուզեպե Մաձինին (1805 1872)՝ **ազգը պետք է ապրի համընդհանուր ճշմարտության միասնական սկզբունքով**

Ահա մի այդպիսի համընդհանուր ճշմարտության մասին է պատմում ընթերցողին առաջարկվող այս յուրահատուկ գիրքը. Յուրահատուկ, քանզի գրքի գլխավոր գործող անձինք շարունակում են ապրել, կերտել մեր օրերի այնպես հակասական որոգայթներով լի պատմությունը Անշուշտ բաղձալի ճշմարտությունը հենց այդ պատճառով մինչև վերջ չի բացահայտված. Մենք ազգովին դրան հասու դառնալու համար դեռ ճանապարհ ունենք անցնելու

Այս երկասիրության հեղինակները (Հենրիկ Խաչատրյան առաջին գլուխ Գարեգին Ղազարյան երկրորդ գլուխ) մեր խորին համոզմամբ պատմական ներկա պահի համար շատ ճիշտ են ընտրել իրենց հերոսին **Սամվել Բաբայանին**

Ընդհանրապես առաջին հայացքից պարզ թվացող **ազգային հերոս երևույթն** ինքնին բարդ է և դժվար բացատրելի Հին հույների պատկերացմամբ հերոսը նա է, ով իր բարոյական պարտքը հասարակության առջև կատարում է մինչև վերջ: Հետագա ընկալումները քիչ են փոխվել: Հասկանալի է. որ բարոյական պարտքը, նրա ընդգրկման սահմանները որոշվում են տվյալ դարաշրջանի հասարակության կողմից ընդունված չափանիշերով

Անցյալի պատմական փորձը ցույց է տալիս, որ հերոսները սովորաբար ունենում են ողբերգական ճակատագիր Եթե մենք փորձենք բանաձևել համընդհանուր պատճառը ապա հանգում ենք բազմիցս արտահայտված մտքին **հերոսը (կամ զինվորը) հայրենիքն ավելի է սիրում, քան հայրենիքը հերոսին** Իսկ դրա գլխավոր պատճառը ինչպես արդեն նշեցինք մեկն է հերոսը գնում է մինչև վերջ Իսկական հերոսը չի կարող կեսճանապարհին կանգ առնել և ասել

www.a-pdf.com



բավական է ես հոգնեցի, հիմա էլ թող ուրիշներն անեն Հերոսին միշտ անհասկանալի է մնում թե ինչու ուրիշներն էլ իր նման մինչև վերջ չեն գնում Այստեղից էլ նրա դրամատիկ հակադրությունները շատերին և նույնիսկ հասարակական առանձին խմբերի Շատերը չեն հանդուրժում հերոսի ուղղամտությունը շիտակությունը, վճռականությունը անշահախնդրությունը անձնազոհությունը որովհետև իրենք այդպիսին չեն: Հենց այս պատճառով է որ չի ներվում հերոսի նույնիսկ չնչին վրիպումը էլ չենք ասում սխալը: Իսկ եթե ազգը կարիք ունի ոչ միայն ազատագրվելու օտարի տիրապետությունից, այլև՝ հասարակական կյանքի նորացման, ապա վրիպելու կամ սխալվելու հավանականությունը մեծանում է Կա մի այսպիսի չարդարացված համոզում ըստ որի պատերազմի հերոսի առաքելությունը ռազմադաշտն է նա գործ չունի հասարակության չլուծված հիմնախնդիրների առավել ևս քաղաքականության հետ: Այդպես մտածողները մոռանում են, որ թշնամու դեմ յուրաքանչյուր ազատագրական պատերազմ անխուսափելիորեն իր հետ բերում է ազգային համընդհանուր վերածնունդ վերակառուցում և բարեփոխում Եվ դրանք բոլորը փոխկապակցված գործընթացներ են, որոնցից մեկին հերոսը կարող է մասնակցել մյուսին ոչ. Եվ որ հերոսը չի կարող հանդուրժել, որ ազատագրված (առավել ևս այդ գործընթացում գտնվող) տարածքում հասարակությունը պառակտվում է անձնական շահերով առաջնորդվող «իմ թիմի» և «նրանց թիմի»: Հերոսն անկարող է անտարբեր նայել թե ինչպես են տեղի ունենում համընդհանուր բարոյազրկում, հուսալքում և բարձր արժեքների անկում Ազգի համախմբումը ամեն մի հերոսի մեծ երազանքն է, քանզի առանց դրա հնարավոր չէ ազատագրումը Այդպիսի իրավիճակում հերոսը ստիպված է լինում բացելու «երկրորդ ճակատը» պայքարելու ներքին հակառակորդների դեմ՝ շատ ավելի բազմադեմ հաճախ անտեսանելի

Եթե փորձենք ‹ազգային հերոս» երևույթի այս բանաձևումները կիրառել Սամվել Բաբայանի նկատմամբ ապա կստանանք հույժ հետաքրքրական և օգտակար արդյունքներ Եվ այդ գործում մեզ կօգնեն ոչ միայն նրա մասին նախկինում ասված բազմաթիվ կարծիքներն ու տրված գնահատականները այլև նախ և առաջ այս գիրքը. Եվ եթե մենք նկատի չունենանք Վահրամ Աղաջանյանի և Ալբերտ Արզումանյանի՝ շատ ավելի զգացմունքային դիրքերից ստեղծված գրքերը[1], ապա ներկա աշխատությունն իր տեսակի մեջ բավական առանձնահատուկ է Քանզի ունի բացառիկ սկզբնաղբյուրային նշանակություն Ըստ էոթյան, հաջողվել է ստեղծել փաստավավերագրական հավաստի մի հերոսապատում որտեղ շրջանառության մեջ դրված նյութը շատ առումներով նորովի է լույս սփռում մեզ հայտնի և անհայտ իրադարձությունների վրա. Համոզված ենք որ հեղինակներին հաջողվել է հիմնականում վերականգնել մեր օրերի հե

1 Վահրամ Աղաջանյան, Ազգային հերոս Սամվել Բաբայան . Հարկ ենք համարում ընդգծել, որ այս գրքում նշված չեն ո՛չ հրատարակիչը, ո՛չ էլ հրատարակման տեղն ու թվականը: Պատճառն այն է որ այդ ժամանակ Սամվել Բաբայանը գտնվում էր բանտում, և վտանգավոր էր նրա մասին ճշմարտությունը բարձրաձայնել: Չնայած դրան՝ հեղինակը հանդես է բերել արիություն, շրջանառության մեջ է դրել բավական արժեքավոր նյութեր, որոնցից օգտվել են ներկա աշխատության հեղինակները հատկապես հետպատերազմյան գործընթացները լուսաբանելիս: Տե՛ս նաև Ալբերտ Արզումանյան «Մեր հերոսը», Եր., 2006 թ

www.a-pdf.com



րոսի մասին ճշմարտությունը. Եվ բոլորը կհամոզվեն դրանում եթե գիրքը կար դան շահագրգիռ հետաքրքրությամբ առանց ավելորդ զգացումների և կանխա կալ դիրքորոշման Մենք կցանկանայինք այս հանգամանքն առանձնապես շեշ տել քանզի Սամվել Բաբայանի առանց այն էլ բարդ կերպարը մեր հասարակու թյանը միշտ փորձել են ներկայացնել ծուռ հայելու դիտանկյունից: Դրա պատճառները որոնց ստորև դեռ կանդրադառնանք, ոչ միայն ենթակայական են հիմնազուրկ այլև բարոյականության անհամատեղելի

Եվ այսպես ինչի՞ մասին են մեզ պատմում գրքում բերված արժանահավատ փաստերն ու իրադարձությունները

Գիրքը բաղկացած է երեք գլխից որը պայմանավորված է Սամվել Բաբայա նի անցած համեմատաբար կարճ բայց անչափ հագեցած արգասավոր ո դիով ինչպես նաև հավաստող փաստաթղթային նյութերով:

Առաջին գլխում **(«Օմարից մինչև Արաքս»)** տրված է Սամվել Բաբայանի և ԼՂՀ Պաշտպանության բանակի մարտական ուղու պատմությունը· Ծանոթանա լով դրան կրկին համոզվում ես որ մեծ հերոսների կայացումը ազգի ճգնաժամա յին, օրհասական իրադրության արդյունք է Արցախյան շարժման 1988 թվակա նի սկիզբը շատ շատերի համար պարուրված էր չգիտակցված ռոմանտիկ շղար ով Դեռևս մեծ էր հավատը «ժողովուրդների մեծ ընտանիքը» մարմնավորող արժեքների, ինչպես նաև ԽՍՀՄ ի նորընծա ղեկավարության նկատմամբ Ինչ վիսի ոգևորություն էր տիրում հանրահավաքներում: Մինչդեռ Սամվել Բաբա յանն այդ ժամանակ արդեն «իրեն զգում էր ոչ թե հանրաժողովական, այլ գոր ծող ազատամարտիկ»: Քանզի ազգի ազատագրական հիմնախնդիրները չեն լո ծվում ոչ հանրագրերով ոչ էլ ճառերով այլ՝ ականավոր գերմանացի Օտտո ֆոն Բիսմարկի (1815–1898) խոսքով՝ «երկաթով և արյամբ»: Ահա դասագրքային այս պարզ ճշմարտությունն առաջիններից մեկը սկսեց կյանքի կոչել Սամվել Բա բայանը: Եվ դարձավ զինված պայքարի ընդհատակյա ղեկավարներից, ընդհա տակյա կենտրոնական շտաբի անդամ Ստեփանակերտի կամավորական 2-րդ վաշտի հիմնադիր հրամանատար, Ինքնապաշտպանության ուժերի ընդհանուր հրամանատարի տեղակալ· Այսպիսին էր նրա մուտքն ազատագրական շարժում

Այնուհետև սկսվում են Սամվել Բաբայանի և նրա համախոհների օրհասա կան կռիվները դեռևս չփլուզված հսկա տերության պատժիչ գործողություննե րի դեմ: Նրա անկոտրում կամքը դիմացավ Շուշիի և ապա Բաքվի բանտերում անցկացրած ավելի քան վեց ամիսների առաջին դաժան փորձությանը: ԽՍՀՄ ի փլուզումից հետո առավել քան երբևէ համոզվեց ուժն է ծնում իրավունք. Եվ նա դառնում է այդ իրավունքի մարմնավորողը Գրքում բերված նյութը վկայում է որ օրավուր հերոսացող ազատամարտիկը որպես զորահրամանատար կայա ցավ ռազմաճակատի առաջավոր գծում Մշտապես գտնվում էր թեժ կետերում մշտապես խաղում էր գլխավոր դեր: Եվ դրա լավագույն օրինակը Շուշիի ազա տագրման հերոսամարտին ինչպես ցույց է տրված գրքում Սամվել Բաբայանի մասնակցությունն էր Այդ մասին ինչպես հայտնի է շատ է խոսվել ու գրվել գրվել են տարատեսակ գնահատականներ. Սակայն անկասկած է, որ այս գրքում կատարված վերլուծությունն է առայժմ հավակնում լինելու ճշմարիտն ու անաչառը: Տեղի ունեցածի լիակատար պատկերացմանը շատ են օգնում մեծ թվով լուսանկարներ և տպավորիչ քարտեզները Իսկ թե ո՞ր ռազմարվեստն է բերել հաղթա

www.a-pdf.com



նակներ վկայում է ինքը. Մենք հնարավորինս խուսափել ենք դեմ հանդիման մարտեր մղելուց և դիմել ենք մեր տակտիկային հարվածել այն ուղղություննե րով որտեղ հակառակորդը մեզ չի սպասում, մշտապես փորձել ենք զգացնել որ եթե հակառակորդը ժամ առաջ չհեռանա իր դիրքերից ընկնելու է շրջապատ ման մեջ: Դա է եղել իմ ռազմավարությունը և Շուշիի, և մնացած ազատագրա կան մարտերի ժամանակ: Արդյունքում մենք ունեցել ենք անհամեմատ նվազ կորուստներ»: Եվ որ պետք է ‹հակառակորդի ծոծրակին մշտապես զգալ տալ մեր ներկայությունը

Տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքը վկայում է, որ այս ռազմարվեստը գործել է ամենուր: Սակայն այս ամենը փոքր հաջողություն կու նենար, եթե Սամվել Բաբայանի ջանքերով արցախյան հերոսամարտերում հաղթահարվեր մեկ այլ սխալ մտայնություն: Խոսքն այն մասին է որ ազատա մարտիկները գերադասում էին միայն պաշտպանել սեփական գյուղը, լավա գույն դեպքերում շրջանը Այնինչ նա կարողացավ հասնել այն առավելագույ նին որ գյուղական շրջանային և այլ կարգի բոլոր աշխարհազորայիններն ու կամավորական ջոկատները գործեն փոխհամաձայնեցված մեկ կենտրոնից եկող հրամաններով: Հենց այս շրջադարձն էապես նպաստեց Արցախի Պաշտ պանության կանոնավոր բանակի ստեղծմանը, որի հրամանատարը դարձավ Սամվել Բաբայանը

Բավական տպավորիչ են նաև Արցախի շուրջ անվտանգության գոտու ստեղծման գործում Սամվել Բաբայանի դերակատարության մասին պատմող նյութերը Ծանոթանալով դրանց նույնիսկ օտարազգի ընթերցողները կարող են համոզվել կատարվածի ռազմաքաղաքական անհրաժեշտության մեջ Ինքը Պաշտպանության բանակի հրամանատարն այդ մասին նկատում է ‹Ե՛վ Աղդա մը, և Քելբաջարը և մնացած հաղթանակները գաղափարի ու ճիշտ մարտավա րո թյան արդյունք էին. ի վերջո հաղթեցին մեր մարտավարությունը մեր մշա կած, ազատամարտիկների խելամտությամբ ու անձնազոհությամբ կիրառված համարձակ, իրենց պարզությամբ ու հստակությամբ առանձնացող օպերատիվ պլանները»· Օպերատիվ մարտական պլանների մշակման և դրանց իրա կանացման գործում հրամանատարի դերակատարումն անփոխարինելի էր Նրա նպատակը, իր իսկ խոսքով բնական սահմանների ստեղծումն է· Ռազմա կան առումով այդ հաղթանակներն ամրապնդեցին Արցախի և Հայաստանի անվտանգությունը,իսկ քաղաքական տեսանկյունից Ադրբեջանին ստիպեցին բա նակցություններ սկսել. Արցախի հիմնախնդրի միջազգայնացումն աննախա դեպ չափեր ընդունեց· Այդ ամենն ի վերջո հանգեցրեց Ադրբեջանի հրահրած արյունոտ պատերազմի (1988–1994 թթ. ) զինադադարին

Այսպես հայաշահ հանգրվանի հասավ ազատագրական պատերազմը Հաղ թանակը ձեռք բերվեց մեր ավելի քան վեց հազար ազատամարտիկ զավակնե րի արյան գնով: Մեզ քիչ է մխիթարում այն փաստը որ թշնամին տվել է մոտ հինգ անգամ ավելի զոհ Իսկ ինչպե՞ս սրբացնել զոհված հերոսների հիշատա կը· Միայն ճառերո՞վ գրքեր գրելո՞վ, թե՞ հուշարձաններ կառուցելով

Վաղուց հայտնի ճշմարտություն է մի բան է օտարի լծից ազատագրել հայ րենիքը այլ բան է պահպանել այն հզորացնել բարգավաճել և ապրել ազատ կյանքով: Քանզի թշնամին չի հաշտվում պարտության մտքին և շարունակում է

www.a-pdf.com



գործել Մյուս կողմից թվացյալ խաղաղությունը բերում է ավելորդ հանգստու թյուն գլուխ են բարձրացնում իշխանատենչ բյուրոկրատիան և շահամոլությու նը: Ասպարեզում հայտնվում են կասկածելի անցյալ ունեցող մարդիկ խաթար վում է ազգային նախնական միասնությունը: **Հետևաբար պատերազմն ավարտվել է, իսկ իրականում պատերազմը շարունակվում է:** Արդյո՞ք մենք ազգովին հասկացանք այս պարզ ճշմարտությունը Ցավոք զինադադարից ան ցած տասնչորս տարվա ժամանակահատվածն այլ բան է վկայում Դրանում ըն թերցողը կարող է համոզվել, եթե համբերությամբ և ուշադիր կարդա այս գրքի երկրորդ գլուխը («**Պետականաշինության բավիղներում**»)

Պատերազմից հետո Սամվել Բաբայանի գործունեությունը լիովին համա պատասխանում է ‹ հերոսը գնում է մինչև վերջ» բանաձևին: Նա մեծ ավյունով ձեռնամուխ է լինում պետական մարմինների կայացմանը որտեղ իրեն վերա պահում է բանակի հետագա ամրապնդման գործը· Միանգամայն ճիշտ են նկա տում գրքի հեղինակները, որ տարիներ շարունակ բռնապետ լինելու համար մե ղադրվող մարդը գերագույն իշխանությունը կամովին զիջում է ուրիշների· Դրա գլխավոր պատճառը հերոսի ազնիվ մղումներն են Նա համոզված էր որ ինքը երկրին առավել օգուտներ կարող է տալ պաշտպանության կազմակերպման գործում Եվ 1995 թ դարձավ ԼՂՀ պաշտպանության առաջին նախարար Նրա ջանքերով կառուցվեցին նոր զորանոցներ ամրություններ զորավարժարան ներ: Անխափան դարձավ զորակոչը ձևավորվեց բարձրագույն կարգավարժ հրամկազմ, ստեղծվեցին կադրերի պատրաստման համակարգ ռազմաբժշկա կան ծառայություն և զինվորական արդարադատություն, նոր զորամիավորում Ամրապնդվեց կարգապահությունը վերջ տրվեց «ֆիդայական ինքնա գործունեության» դրսևորումներին և այլն: Այլ խոսքով Արցախում ստեղծվեց կարգապահ և մարտունակ բանակ Հանրահայտ գեներալ Ալեքսանդր Լեբեդը այցելելով Արցախի զորամասեր, հայտարարում է. «Ես առաջին անգամ շատ տարիներ ի վեր տեսա մարտունակ գունդ, որին հաճելի է նայել».

Բանակը հասարակության ամենազգայուն մասն է Ուստի Սամվել Բաբա յանը չէր կարող անտարբեր լինել Արցախի հասարակության ամբողջական նո րացմանը Նրա գործուն մասնակցությամբ իրականացվում էին կարևոր սոցի ալ-տնտեսական բարեփոխումներ: Նրա պնդմամբ 1996 թվականի նոյեմբերի 24-ին առաջին անգամ տեղի է ունենում ԼՂՀ նախագահի ուղղակի համաժո ղովրդական ընտրություն որը մեծ պպավորություն թողեց Նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը ով 1997 թվականի հայտնի դեպքերի բերումով դարձավ ՀՀ վարչապետ Մինչ Արցախը հզորանում էր քաղաքական ասպարե զում Արցախի գլխին սև ամպեր էին կուտակվում ինչն ավարտվեց ՀՀ նախա գահ Լևոն Տեր Պետրոսյանի հրաժարականով·

1997 թվականի սեպտեմբերի 1 ին Արցախում երկրորդ անգամ տեղի ունե ցավ նախագահի համաժողովրդական ընտրություն Սամվել Բաբայանի գոր ծուն աջակցությամբ նախագահ ընտրվեց ԼՂՀ արտգործնախարար Արկադի Ղուկասյանը Նախնական պայմանավորվածությամբ բարեփոխումները պետք է շարունակվեին կյանքի կոչվեին բազում նոր բախտորոշ նշանակու թյան ծրագրեր Սակայն հենց այդ պահից հետզհետե ակնհայտ դարձավ որ կառավարության գործունեության մեջ առկա են «խցանումներ»: Բարեփոխում

www.a-pdf.com



ների նախկին ընթացքը դանդաղում է ընդո նված օրենքները մնում են անկա
տար Առաջընթացի գրավականը՝ հասարակության ազատականացումը և բա
րենորոգչական շարժումը խաթարվում էր Բնականաբար այդ փաստին Սամ
վել Բաբայանը որպես կառավարության անդամ հաշտվել չէր կարող: Հենց դա
էլ դառնում է 1997 1998 թվականների կառավարական ճգնաժամի պատճառ

Նման իրավիճակում շրջանառության մեջ է դրվում Սամվել Բաբայանի կող
մից բռնապետություն հաստատելու փորձերի մասին առասպելը. Ոմանք
պրտնջում էին թե ինչու պաշտպանության նախարարն այդքան շահագրգիռ է
կրթական կամ տնտեսական խնդիրների նկատմամբ Այդպես էլ չընկալվեց թե
ինչու է Սամվել Բաբայանը ցանկանում համատեղել վարչապետի և պաշտպա
նության նախարարի պաշտոնները: Երբ ասում ենք «չընկալվեց» նկատի չու
ենք ժողովրդին Դրա վկայությունը Սամվել Բաբայանի գաղափարների
պաշտպանության համար Ստեփանակերտում 1998 թվականին կայացած
զանգվածային հանրահավաքն էր

Ինչևէ ճգնաժամը ժամանակավորապես հաղթահարվում է Նոր վարչապետ
Ժիրայր Պողոսյանը Սամվել Բաբայանի աջակցությամբ, 1998–1999 թվական
ներին ձեռնամուխ է լինում համակողմանի բարեփոխումների իրագործմանը
Ասում ենք ‹ժամանակավոր› որովհետև այն ուժերը որոնք գործը հասցրին
ճգնաժամի չէին կարող համակերպվել բարեփոխումներին Այդ ուժերին մեկ
բառով կարելի է անվանել **բյուրոկրատիա:** Պատմական անցյալում բյուրոկրա
տիան նույնիսկ պետությունների կործանման պատճառ է դարձել. Բյուրոկրա
տիան թե՛ Հայաստանում և թե՛ նրա մարմնական մաս կազմող Արցախում այն
բազմամարդ պաշտոնեությունն է, նրա հետ կապված հասարակական որոշ ու
ժերը, ովքեր ‹են ստեղծում, բայց սպառում են Նրանց համար պաշտոնը և դրա
օգնությամբ արտատնտեսական հարկադրանքը հարստության աղբյուր են
Մարդը նման իրավիճակում իրեն զգում է միայնակ անօգնական և սովորաբար
դառնում է կամայականության զոհ: Հասարակությունն էլ դառնում է բյուրո
կրատիայի ապարանդը և ազատականացումը կաթվածահար է լինում. Այդ բազ
մազլուխ հրեշի բյուրոկրատիայի գործելակերպի գլխավոր մասն է կազմում իշ
խանության անընդմեջ վերարտադրությունը· Բյուրոկրատիան առանձնապես
վտանգավոր է դառնում երբ արտաքին թշնամին պատրաստվում է նոր պատե
րազմի Այդպիսի իրավիճակում բյուրոկրատիան որպես ‹գրված կանոն հակ
վում է ապազգային գործելակերպի, քանզի սեփական շահը գերակա է և անհա
մատեղելի ազգային ընդհանուր շահերին. Ավելորդ չենք համարում փաստել որ
այսօր էլ մենք ապրում ենք բյուրոկրատական հասարակությունում

Գրքում բերված հավաստի փաստերը վկայում են, որ տեղի ունեցած մահա
փորձը ինչին Սամվել Բաբայանը որևէ առնչություն չուներ, իշխանությունները
հմտորեն օգտագործեցին որպեսզի նա կրկին հայտնվի բանտում: Այս անգամ
յուրայինների ձեռքով և շատ ավելի տևական ժամանակով: Նա համարձակվել
էր հերոսի իրավունքով պահանջել իշխանության ապակենտրոնացում տեղա
կան իշխանությունների ուժեղացում պաշտոնյաների թվաքանակի նվազե
ցում, մակաբուծող կառավարման ապարատի պահպանման ծախսերի կրճա
տում սպվերային տնտեսության վերացում և այլն: Հիրավի, բանական չէ, որ մի
փոքրիկ երկրամասի կենտրոնում գործեն տասնյակ պետական մարմիններ

այն դեպքում, երբ գյուղերում և շրջաններում առկա է թույլ իշխանություն Այնտեղ պակասում են մանկավարժներ բժիշկներ գյուղատնտեսներ անասնաբույժներ և այլք: Իսկ ու՞մ խղճին է ծանրացած բնակչության և հատկապես ազատամարտիկների արտահոսքը Բանակա՞ն է արդյոք այն կառավարությունը որը բնակչության մեջ սերմանում է համոզում, որ Արցախն ի վիճակի չէ հոգալու իր մասին և մեծ մասամբ զբաղված է դրսից միջոցներ բերելով Չէ՞ որ այդպիսի քաղաքականության պատճառով է նաև մեր հասարակության մեջ փիրում մուրացկանի հոգեբանությունը

Սամվել Բաբայանի անկախ բնավորությունը և համարձակ գործելակերպը չէին բավարարում նաև Հայաստանի իշխանություններին Այս խորապատկերին Սամվել Բաբայանը մի անհատականություն էր և է ով դեռ Արցախում նախաձեռնել է ‹Մեր տունը Հայաստանն է» կուսակցության ստեղծումը, իսկ այնուհետև Հայաստանի Հանրապետությունում հիմնել «Խաչմերուկ» տեղեկատվավերլուծական և «Միասնական հայրենիք» հասարակական կազմակերպություններ, «Դաշինք» կուսակցությունը Ներկայումս նա, ի շահ ներքաղաքական կյանքի բարեփոխման և կուսակցությունների խոշորացման անձնական օրինակով դրական նախադեպ ստեղծելով գաղափարակից քաղաքական ուժերի հետ միավորվել է Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցությանը Ընդորում այս ամենը շարունակական բնույթ է կրելու քանի որ Սամվել Բաբայանը որդեգրել է գաղափարակից կուսակցությունների և անհատների միավորման սկզբունքը ինչն ի վերջո նպաստելու է քաղաքական դաշտի առողջացմանը:

Ցանկանում ենք առանձնակի արժևորել այս աշխատության երրորդ գլուխը **Սամվել Բաբայանի հարցազրույցների ընտրանին** (կազմող Միրվարդ Մարգարյան):

Այդտեղ բերված հարցազրույցները ոչ միայն օգնում են մեզ ավելի լավ հասկանալ Սամվել Բաբայան անհատականությանը այլև այն արատավոր միջավայրը որում ծավալվել են իրադարձությունները և որում մենք ապրում ենք·

Դարձյալ հիշենք հայտնի իրողությունը ժամանակը ավելի սրույգ` պատմությունը յուրաքանչյուրին դնում է իր իսկական տեղը Գոնե անցած երկու տասնամյակների պատմաշրջանում Սամվել Բաբայանը միշտ գտնվել է ճիշտ իր դիրքում հայրենիքի համար դժվարին րեղամասերում միշտ առջևի գծում, միշտ նվիրյալ միշտ պատրաստ փորձությանը նույնիսկ անարդար վերաբերմունքի ինչպես վայել է իսկական հերոսին: Դա են վկայում տպագիր և էլեկտրոնային մամուլին տրված նրա արժեքավոր հարցազրույցները 1993–2007 թվականների ընթացքում· Ընթերցողի առջև ողջ հասակով մեկ վեր է հառնում նրա անկաշառ մարդկային կերպարը, որը երբեք չի պատանվում չի խուսանավում մշտապես գիտե իր ասելիքն ու անելիքը մի դեպքում որպես զինվոր մի այլ դեպքում զորավար կամ հասարակական քաղաքական պետական գործիչ· Նույնիսկ այն տարիներին երբ յուրայինները նրան ստիպել են լռել, և դա հստակ երևում է հարցազրույցների ժամանակագրությունից, մեր հասարակությունը մշտապես զգացել է նրա շահեկան ներկայությունը: Հարցազրույցների նյութերը որոնք յուրովի լույս են սփռում մոտ անցյալի դեպքերին դեռևս կարիք ունեն վերլուծությունների և նորովի իմաստավորման

www.a-pdf.com



Թվում է, թե հիշյալ արժևորման առաջին լո րջ քայլն արդեն իսկ կատարվել է Մենք նկատի ունենք Սամվել Բաբայանի և նրա կուսակիցների ջանքերով ստեղծված ծրագրային այն փաստաթուղթը, որը նույնպես տեղ է գտել գրքում հիմնականո մ ամբողջացնելով գրքի ասելիքը: Ընթերցողի ուշադրությանը ներ կայացված այս նյութը որը կուսակցական ավելի մեծ ծրագրի մաս է կազմում գիտականորեն հիմնավորված հստակ պատասխաններ է տալիս այն հարցերին որոնք վաղուց հուզում են մեր հասարակությանը Որտե՞ղ է ի վերջո մեր տեղն աշխարհում, ի՞նչ ընտրության առջև ենք մենք կանգնած բոլորս որո՞նք են մեր անվտանգության երաշխիքը և լինելության զարգացման ռազմավարությունը Եվ ամենակարևորը ո՞րն է Արցախի ազատության ամրապնդման ներկա իրո ղություններից բխող ճշմարիտ ուղին: Լուծումները, որ առաջարկվում են մեր հա սարակությանը արդարացի խաղաղո թյուն կբերեն բոլորին այդ թվում տարա ծաշրջանի երկրներին

Երբ պետական մակարդակով ցանկանում են մարդո և հասարակության առջև վարկաբեկել կամ նվաստացնել, դիմում են ամենանողկալի հնարների ԽՍՀՄ ի գոյության տարիներին այդ բնագավառում կուտակվել էր հսկայական փորձ, որը ցավոք ժառանգել են իշխանությունները և որոշ քաղաքական ուժեր: Սամվել Բաբայանի պարագայում դրանք ի զորո չեղան նրան ընկճելու կամ հուսալքելու Չորսուկես տարվա ազատազրկումից հետո նա բանտից դուրս եկավ բաց ճակատով, մաքուր խղճով հպարտ և ինչպես վայել է հերո սին շարունակեց գնալ մինչև վերջ Եվ նրա հետ են բոլոր կուսակիցներն ու համախոհները բոլոր նրանք ովքեր հավատում են հերոսի ազնիվ մղումներին Նա դեռ անելիք ունի ժողովրդի, հայրենիքի ճակատագրի համար կենսական նշանակություն ունեցող անավարտ մնացած գործերում. Ահա թե ինչու այս պատմությունը դեռ չի ավարտվել և դրա շարունակությանը մասնակից ենք մենք բոլորս ազգովի

**Վալերի Ղլեչյան**

*պատմական գիտո թյունների թեկնածու*

*դոցենտ*

www.a-pdf.com

# ՕՄԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ ԱՐԱՔՍ



www.a-pdf.com



*Հայաստանի սիրտը Արարատյան դաշտը, չի կարելի պաշտպանել առանց պիրապետելու Ղարաբաղին»*

**Սերգեյ Գորոդեցկի**

*(ռուս բանաստեղծ 1884–1967)*

1988 թվական փետրվարի 20 Տարեթիվ և օր երբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ներկայա ցուցչական մարմինը պատմական որոշում կայաց րեց պատմական իսկ արդարությունը վերականգնե լու «ԼՂԻՄ ը Ադրբեջանական ԽՍՀ ի կազմից Հայ կական ԽՍՀ կազմ հանձնելու հարցի դրական լուծ ման» համար

1988 թվականի փետրվարի 20–22-ին ինչպես վկա յում էին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակի հանրաժողովականներից շատերը և նստաշրջանին մասնակից պատգամավորները, այնքան տարված ու ոգևորված էին Մայր Հայրենիքին վերամիավորվելու որոշումով որ ժամանակը պակասում էր խորհելու այն մասին թե ինչ է սպասում իրենց վաղը մյուս օրը և ընդհանրապես ապագայում..

Որոշման լուրը հասավ Երևան և տարածվեց Սփյուռքի ամենատարբեր գաղթավայրերում արթ նացրեց ողջ հայությանը փոխելով նրա հոգեկերտ վածքը փաստելով որ «Ղարաբաղյան շարժումը մեկ



Հանրահավաք Ստեփանակերտի Վերածննդի հրապարակո մ

www.a-pdf.com





Երևանի Անկախության հրապարակում ելույթ է ունենում ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար Սուրեն Հարությունյանը, հանրահավաքի հարթակում են աջից ձախ ԳԽ նախագահության նախագահ Հրանտ Ոսկանյան, Վիկտոր Համբարձումյան Ջ րի Բալայան)

չափում ունի անցյալից դեպի ապագա Դեպի ողջ Հայաստանի ապագա...»: Հայ անհատը և ազգային հավաքականությունը համոզվեցին որ միասնական ավյունով կարող են դուրս գալ պայքարի և այդ դեպքում կդիմագրավեն անգամ ամենաբիրտ ուժին ամբողջատիրական վարչակարգին Վերամիավորման պատմական պահանջը հայ ժողովրդին հետագա մաքառման ուժ հաղորդեց Իսկ «ժամանակն իր համար սպասավոր էր պահանջում»:

Ստեփանակերտի Եղիշե Չարենցի անվան հայկական միջնակարգ դպրոցի շրջանավարտ և նախկին Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունում տեղակայված ԽՍՀՄ զորախմբում ծառայությունն անցկացրած Սամվել Բաբայանն անհրաժեշտություն չէր զգում երկմտելու ընդունել կամ չընդունել ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանի որոշումը

Չգտելով նպատակները կյանքի կոչել նա այնուամենայնիվ պարզորոշ պատկերացնում էր ցանկության ու իրականության անհամապատասխանությունը և գիտակցում որ ղարաբաղյան հիմնախնդիրն այս փուլում քաղաքական քննարկումներով չի լուծվելու

www.a-pdf.com



Ո վ էր նա 1965թ մարտի 5 ին Ստեփանակերտում
ծնված երիտասարդը 1988 թվականին

Հայկական միջնակարգ դպրոցն ավարտելուց հե
տո ընտանիքի հոգսերը թեթևացնելու նպատակով
սկսեց աշխատել Ստեփանակերտի արտադրական
ձեռնարկությունում և չկարողացավ ուսումը շարունա
կել որևէ բարձրագույն ուսումնական հաստատությու
նում Խորհրդային զինված ուժերում ծառայելու
տարիները (1983 1985թթ ) նրա համար նշանավորվել
են ռազմական գիտելիքների և հատկապես հրետանա
յին գործի իմացության հիմնավոր կուտակումներով
Նա որպես տանկային գնդի հրետանային դիվիզիոնի
հետախուզական վաշտի հետախույզ ռազմական
պարապմունքների և զորավարժությունների ընթաց
քում հնարավորություն է ունեցել սովորելու և զար
գացնելու հրետանային գործի հմտությունները սպա
ռազինության մարտական տեխնիկայի կառուցվածքի
և շահագործման հարցերը մարտական կիրառման
եղանակները. Այս ամենը Սամվել Բաբայանը հետա
գայում օգտագործեց ինքնապաշտպանական և ազա
տագրական բոլոր մարտերի ընթացքում

1988 թվականի փետրվարյան և հաջորդած իրա
դարձությունների ժամանակ Սամվելն իրեն զգում էր
ու այնքան և նույնիսկ ոչ թե հանրահավաքի
գործող ազատամարտիկ Նա շարժուն ու մեծ ներուժի
տեր անհատականություն էր և ազգանպաստ դրսևո



Հանրահավաք
Երևանի Անկախու
թյան հրապարակում

www.a-pdf.com



րումների ներքին այրող պահանջ ուներ Հրապարակներում դահլիճներում Շարժման առաջամարտիկների ելույթները կոչերը Երևանից եկած լուրերը Մոսկվա մեկնած ու վերադարձած գործիչների ասածները նրան չէին բավարարում Սամվել Բաբայանն ավելի քան գործնապաշտ էր Նա հասկացավ որ դիմումներով նամակներով հանրագրերով գործադուլներով հարցը չի վճռվելու և որևէ ուժ բացի մարտնչող ազատամարտիկից, չի լուծելու հիմնախնդիրը

Բազմաթիվ հայրենասեր գործիչների ջանքերով Հայաստանում ու Արցախում կազմավորվեցին հարյուրավոր կամավորական ջոկատներ և աշխարհազորային խմբեր Միայն Ստեփանակերտում ստեղծվեցին մի քանի տասնյակ ջոկատներ ու վաշտեր ներառելով հազարավոր կամավոր ազատամարտիկների Սամվել Բաբայանի ճակատագիրը կանխորոշված էր Դա նրան տրվել էր ի վերուստ Հիշելով այդ ժամանակները ԼՂՀ Պաշտպանության բանակի առանձին հրետանային բրիգադի նախկին հրամանատար գնդապետ (այժմ Պաշտպանության բանակի հրամանատարի տեղակալ գեներալ մայոր) Լեոն Մնացականյանը պատմել է «Վաղուց եմ ճանաչում Սամվել Բաբայանին Հաճախ ենք առնչվել իրար հետ բայց երբեք մտքովս չի անցել որ մեր ծանոթությունը կվերածվի մի մեծ պայքարի և այդ միաժամանակ պայքարն ի վերջո կվճռի մեր ժողովրդի բախտը նրա լինել չլինելու հարցը Ո՞ւմ մտքով կանցներ որ ես Սամվել Բաբայան «Կոմանդույուշչու» (ռուս



Սամվել Բաբայանը ծառայության տարիներին 1983–85թթ

www.a-pdf.com



командующии» զորահրամանատար) հետ շփվե|ու եմ որպես գումարտակի հրամանատարի տեղակալ, ու պարտադրված ճակատագրով բոլորս դառնայու ենք Ազգի Զինվորը...»

Սամվել Բաբայանը մուտք գործեց արցախյան գոյապայքարի հորձանուտ հասարակամությամբ ու ինքնատիպությամբ Նա դարձավ զինված պայքարի ընդհատակյա ղեկավարներից, ընդհատակյա կենտրոնական շտաբի անդամ, Ստեփանակերտի կամավորական 2 րդ վաշտի հիմնադիր հրամանատար Արցախի ինքնապաշտպանական ջոկատների (ինքնանվանումը Արցախի ժողովրդական-ազատագրական բանակ) ընդհանուր հրամանատարի տեղակալ



Լեոն Մնացականյան

Սամվել Բաբայանը զավակն է Անդրանիկ Բաբայանի ծնված ԼՂԻՄ ի Մարտունու շրջանի Սոսնա գյուղում Այո, նույն այն հերոսական Սոսնայում, որը 1918 թվականին թուրք հրոսակները դարձրել էին հարձակման թիրախ նպատակ ունենալով հիմնովին ավերելու գյուղը Սոսնայի և շրջակա գյուղերի բնակիչները ելան ասպատակողների դեմ ջարդեցին և հալածեցին [ րանց Այս կապակցությամբ Սամվելն ասել է «Երբեք են կարող հաղթել այն ժողովրդին ում զավակները հասկանում են որ իրենք մարտնչում ու պայքարում են իրենց մայրերի քույրերի երեխաների և հայրենիքի համար» Հայրենասիրական այս ձգտումը ինքնաբեբաբար փրվող շնորհ չէ Դա պայքար է և մաքառում որի ընթացքում յուրաքանչյուր ժողովուրդ հաստատում է գոյության ու հարատևելու իր իրավունքը

Հայ ժողովրդի այս իրավունքին հակընդդեմ 1988 թվականի փետրվարի 27–29 ին ԽՍՀՄ իշխանությունների թողտվությամբ տեղի ունեցավ Սումգայիթի ցեղասպանությունը «Ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամությունը» մի աղճատ խորհրդանիշ յուրս եկավ և ի ցույց դրվեցին ամբողջատիրական դասարակության բոլոր արատները՝ ազգայնամոլության բարբարոսության անհատի ազատության ու մարդկային արժանապատվության ոտնահարման և ազգային պատկանելության հիմքով մարդկանց ոչնչացման իրենց ողբերգական հետևանքներով Սամվել Բաբայանը հասկանում էր որ այս հանցագործությունների նպատակն էր կանխել Արցախի

www.a-pdf.com

հիմնախնդրի հնարավոր լուծումը արցախահայության ահաբեկել նոր արյունահեղ գործողությունների հեռանկարով և հարկադրել հրաժարվելու ազգային-ազատագրական պայքարից Մոսկվայի Բաքվի հակահայկական գործողություններն ավելի էին շիկացնում Երևանի և Ստեփանակերտի մթնոլորտը Շարժումն ասպիճանաբար մտնում էր նոր փուլ՝

‹Լենին պարտիա-Գորբաչով» կարգախոսն իմաստազրկվել էր. Ստեփանակերտում վիճում էին «Միացում» թե «Անջատում» խնդիրների շուրջ. Այս ամենի հետևում զգացվում էին վերահաս պատերազմի ուրվականն ու շնչառությունը Կյանքը Ստեփանակերտում փոխվել էր պարետային ժամ, սաֆոնովներ (խոսքը Արցախում խորհրդային բանակի գեներալ Սաֆոնովի և նրա զինակիցների մասին է) անհիմն ձերբակալություններ «անձնագրային ռեժիմ», կրակոցներ Այս հակադրությունների խճճված կծիկում արցախահայությունը գործում էր ներքին կարողությունների գերագույն լարումով.

Սամվելը ծավալվող Շարժումից դասեր էր առնում և հետևություններ անում Նա համոզված էր որ հայ ժողովրդին բաժին ընկած աղետների հիմնական պատճառն անմիաբանությունն է. Նա միշտ ասում էր Պետք է համախմբվել ճառերի, հանրահավաքների նկատմամբ գործելու պայքարելու առաջնայնության գիտակցում պիտի ունենանք բոլորս ..»: Նա վստահ էր որ արկածախնդրական գործելակերպը վնասում է պայքարի ընթացքին ստեղծում քաոսային իրավիճակ անտեսում ազատագրական պայքարի ճշմարիտ ուղին Արցախյան գոյապայքարի այդ փուլում ազգային գոյության ու հարատևման խնդիրը իր բարոյական և ֆիզիկական հիմունքներով քննության առաջ կանգնեցրեց հայ ժողովրդի բոլոր խավերին պատմական հեռանկարի տեսանկյունից ի հայտ բերեց նրանց հայրենասիրական և բարոյական վարքագիծը

1990–91 թվականներին իրադարձությունները Ղարաբաղի համար ծայրահեղ աննպաստ էին զարգանում ԽՍՀՄ և Բաքվի իշխանությունների կողմից հայ ժողովրդի դեմ սանձազերծվեցին պատժիչ ահաբեկչական գործողություններ 1991 թվականի ապրիլ օգոստոսին իրականացվեց Օղակ ( Կոլցո ) պայ

www.a-pdf.com



սանական անունով գործողությունը որի նպատակն
էր Հայաստանին պարտադրել միանալ միութենական
նոր պայմանագրին, իսկ հայ ժողովրդին ահաբեկելով
սփիպել հետ կանգնելու Արցախի անկախության հա-
սար մղվող պայքարից Այդ ընթացքում ավերվեցին
Հյուսիսային Արցախի Գետաշեն և Մարտունաշեն
գյուղերը տեղահանվեցին Հադրութի Շուշիի Շահու-
մյանի շրջանների շուրջ 24 գյուղերի բնակիչները՝
Խորհրդային բանակի և ներքին գործերի նախարա
րության ներքին զորքերի ստորաբաժանումները
Ադրբեջանի օմոնականները շարունակում էին լայնա
ծավալ բռնություններ գործադրել ողջ մարզում Կա
տարված դեպքերը մի անգամ ևս առիթ տվեցին Սամ-
վելին ու նրա համախոհներին վերագնահատելու
իրավիճակը, և ալեկոծված այս մթնոլորտում որոշվեց
դիմել վճռական գործողությունների Սամվելն իր և
այլ ջոկատների հետ 1991 թվականի մայիսին ձեռնար
կեց Հադրութի շրջանի Խանձաձոր գյուղի ազատա
գրումը օմոնականներից. Մի քանի ժամ տևած ընդհա
րումից հետո օմոնականները խուճապահար փախան
գյուղի տարածքից. Այս մասին ահա թե ինչ է պատ
մում Կենտրոնական պաշտպանական շրջանի նախ
կին հրամանատար Սամվել Կարապետյանը (այժմ
ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատարի տե
ղակալ գեներալ մայոր) «Սամվել Բաբայանին ճա
նաչեցի 1991 թվականին Իմ առաջին գործը «Կոման
դոյուշկու» հետ Խանձաձորի օպերացիան էր Այդ
գործողությանը 70–80 մարդ է մասնակցել Մարտու



Օղակ գործողու թյունը. ադրբեջանցի օմոնականները Շահումյանի շրջանի Թոդան գյուղում 1991թ

նուց Մարփակերփից Մփեփանակերփից Հադրու
թից Մեզ ոչ ոք չէր հրամայել մեկնել Հադրութ պար
զապես փեղեկանալով որ այնփեղ դրությունը ծան
րացել է ամենքս մեր ջոկափներով մեկնել ենք Հադ
րութ և փեղում ճշփել օպերացիայի հեփ կապված բո
լոր խնդիրները Վիճակը բավական բարդ էր օմոնա
կանները մփել և 14 գյուղ էին բռնազավթել՝ Մարփա
կան գործողության հրամանափարը «Կոմանդույուշ
չին էր Նա աչքի էր ընկնում իր կարողունակությամբ
և նրան վսփահվեց միացյալ ջոկափների հրամանա
փարությունը Մի խոսքով օմոնականներին գյուղից
քշեցինք առանց զոհերի և վիրավորների »

Այս գործողությունից հեփո Սամվելի գործունեու
թյան հեփագա ընթացքը շարունակական շղթա է դառ
նում անակնկալ դիպվածներով հանդիպումներով ու
ընդհափակյա ակփիվ աշխափանքներով Երկրամասում
խորհրդային զինվորականության ղեկավարության և
ադրբեջանական օմոնականների գործողությունները
բանականության որևէ նշույլ չէին պարունակում Դրանք
մարդկային առողջ մղումներից օփարել էին խղճի ու
առաքինության բոլոր զգիռները և հանձնվել կույր կայ
սերապաշփության ու զռեհիկ նյութապաշփությանը.
Տարբեր պափրվակներով («անձնագրային ռեժիմի»
խախփում «ֆիդայի› և այլն) ձերբակալում, պափան-
դում ու անմարդկային կփփանքների էին ենթարկում
Շարժման ակփիվիսփներին ու անմեղ մարդկանց.

Սամվելը որպես էական դեր կափարող ընդհափա
կյա գործիչներից մեկը մշփապես գփնվել է խորհրդա
յին պափժիչ զինվորականության ուշադրության
կենփրոնում Եվ մի կարևոր ու խորհրդապահ հան
դիպման ժամանակ ոմանց ցուցմունքների հիման
վրա 1991 թվականի հունիսի 1 ին ձերբակալվել և վեց
ու կես ամիս կալանվել է Շուշիի և Բաքվի բանփերում
Ի ծնե լինելով ուժեղ բնավորության փեր անհափա
կանություն անգամ բանփում նա թշնամուն հնարա
վորություն չփվեց իրենից կորզելու այլ գործիչների
անուններ Նրա ձերբակալությունից հեփո ակնառու է
մի հանգամանք այլևս որևէ ընդհափակյա գործիչ չի
ձերբակալվել Ինչ բացափրություն էլ փրվի այս
երևույթին համենայն դեպս իրողությունը մնում է
իրողություն և «միշփ ավելին արժե քան ամեն բա

www.a-pdf.com



ցատրություն ու պատճառաբանություն»  Եվ այս ամենը հայտնի է եթե ոչ բոլորին  ապա՝ շատ-շատերին

Ադրբեջանական բանտային դաժան փորձությունները չփոխեցին Սամվելին  Խորհրդային Միությունն արդեն փլուզվել էր  և որևէ իրավական պաշտպանվածության մասին խոսք լինել չէր կարող  Վեց ու կես ամիս շարունակ  յուրաքանչյուր օր նրա համար կարող էր լինել վերջինը  Թվում էր  բանտարկությունից ազատվելու որևէ հույս չկար  Միևնույն ժամանակ  սակայն բուռն իրադարձություններ էին զարգանում Ստեփանակերտում: Ադրբեջանի նորանկախ հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ Շուքյուր Աբասովն այդ օրերին այցելում է Ստեփանակերտ· Օգտվելով առիթից  Սամվելի ավագ եղբայրը  Կարեն Բաբայանը ընկերների հետ ներս է խուժում դատախազության շենք և պատանդում դատախազին  Փոխանակման մի քանի անհաջող փորձերից հետո, պարետատան ղեկավարների հետ Ռոբերտ Քոչարյանի բանակցությունների շնորհիվ  ի վերջո  1991 թվականի դեկտեմբերի 17 ին Սամվելը հայտնվեց ազատության մեջ  Նա այս փորձությունից դուրս եկավ ոչ թե իբրև հուսալքված մի բանտարկյալ  այլ պայքարը շարունակելու վճռականությամբ  տոգորված անհատականություն  Ավելին բանտարգելության շրջանում Ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) հրամանատարությունը Սամվել Բաբայանին նշանակել է ԻՊՈՒ ի ընդհանուր հրամանատարի տեղակալ  Մի առիթով Բաբայանը զգուշավորության հորդորներին ի պատասխան  շեշտել է «..  ես անձամբ Շուշիի և Բաքվի բանտերից հետո ապրած իմ բոլոր օրերը համարում եմ իմ երկրորդ կյանքը և այլևս մտահոգվելու բան չունեմ»  Ազատվելուց կարճ ժամանակ անց  1991 թվականի վերջին  Սամվել Բաբայանն արդեն մարտական դիրքերում էր

## Կրկժանի ազատագրումը

Այդ նույն ժամանակ հակառակորդը շրջափակել էր Ստեփանակերտ Կրկժան  ճանապարհահատվածը  և արվարձանից սկսել էր գնդակոծել Ստեփանակերտը Դեկտեմբերի 26-ի լույս 27 ի գիշերը ԻՊՈՒ-ի ազատամարտիկները գրոհեցին հակառակորդի դիրքերի վրա

www.a-pdf.com



հայկական թաղամասի Մելիք Փաշաև փողոցի վեր նամասի և այլ ուղղություններով Բազմաթիվ զոհեր ու վիրավորներ փալուց հետո ազատամարտիկները նահանջեցին դեպի Ստեփանակերտ Այդ մարտում վիրավորվեց Սամվելի եղբայրը Սամվելը Ինքա պաշտպանության ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանի (այժմ գեներալ մայոր) համաձայ նությամբ 1992 թվականի հունվարի երկրորդ կեսին կազմակերպեց Կրկժանի կրակակետերի ճնշման գոր ծողությունը Նրա ծրագիրը հետևյալն էր վերահսկո ղության փակ վերցնել Կրկժանին հարող բարձունք ները Կրկժան Ղայբալի և Կրկժան–Քյոսալար ուղե հատվածները անսպասելի հարձակումով անակնկա լի բերել հակառակորդին և ոչնչացնել կրակակետերը Դիրքային մարտավարական այս ծրագիրն իրագործ վեց 1992 թվականի հունվարի 19 ի լույս 20 ի գիշերը ճնշելով հակառակորդի կրակակետերը վաղ առավո տյան ազատամարտիկները գրոհով մտան արվար ձան Հակառակորդն առանց լուրջ դիմադրության նա հանջեց դեպի Ղայբալի Կրկժանի կրակակետերի վնասազերծումով կասեցվեցին դրանցից փարբեր տրամաչափի զնդացիրներով և զենքի այլ տեսակնե րով Ստեփանակերտի գնդակոծությունները

Կրկժանի մարտական գործողությունից հետո Սամ վել Բաբայանի կյանքում սկսվում է նոր շրջան. Ընդհա տակյա պայքարին ու տեղային ռազմագործողություն ներին (Ղարադաղլու Խոջալու և այլն) փոխարինելու են գալիս պատերազմական իրողություններն ու ազա տագրական լայնածավալ մարտերի ժամանակները

Մինչ այդ ԼՂՀ անվտանգության և պաշտպանու թյան ապահովման նպատակով պահանջվող միջոց առումների մշակման ու իրագործման համար մինչև պաշտպանության նախարարության կազմավորումը ԼՂՀ Նախարարների խորհրդին առընթեր 1992 թվա կանի մարտի 26 ին ստեղծվեց Պաշտպանության (Ինքնապաշտպանության) կոմիտե Կոմիտեի նա խագահ նշանակվեց Սերժ Սարգսյանը (այժմ 2008 ից ՀՀ նախագահ), Սամվել Բաբայանը կոմիտեի անդամ 1992 թվականի օգոստոսի 14 ին նախագա հի առաջին տեղակալ 1993 թվականի մայիսից կոմիտեի նախագահի պաշտոնակատարն էր

www.a-pdf.com



## Շուշիի ազատագրումը

1992 թվականի գարնանն արցախյան գոյապայքարը թևակոխել էր նոր փուլ՝ Ցամաքային և օդային ճանապարհների շրջափակման, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի հացի պակասի կամ բացակայության Շուշիից պարբերաբար կատարվող հրթիռահրետակոծությունների պատճառով Ստեփանակերտում և հարակից բնակավայրերում կաթվածահար էին եղել տնտեսությունը կյանքի բնականոն պայմանները օր օրի ահագնանում էր հումանիտար աղետը 1991 թվականի նոյեմբերից մինչև 1992 թվականի մայիսի սկիզբը Շուշիից Ջանհասանից և Քյոսալարից 11 անգամ Ստեփանակերտը ենթարկվել է հրթիռահրետակոծությունների Դրանցից զոհվել են 111 վիրավորվել 268 խաղաղ բնակիչներ քանդվել կամ վնասվել են հարյուրավոր բնակարաններ սոցիալ մշակութային կենցաղային վարչական շենքեր Տագնապահարույց էր նաև այն, որ Շուշիում հակառակորդը կենտրոնացրել և կենտրոնացնում էր մեծաքանակ ծանր տեխնիկա, այդ թվում «Գրադ» տիպի հրթիռահրետանային կայանքներ և 2500 ից ավելի զինվորի ու սպայի Այս իրավիճակում Շուշիի ազատագրումը դարձել էր պարտադրված անհրաժեշտություն



Արկադի
Տեր Թադևոսյան

Շուշիի ազատագրման օպերատիվ պլանը որի մասին տեղյակ էին Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի անդամները մշակվել է Ինքնապաշտպանության ուժերի հրամանատար Արկադի Տեր-Թադևոսյանի գլխավորությամբ, հրամանատարի տեղակալ Սամվել Բաբայանի Ինքնապաշտպանության կոմիտեի (ԻՊԿ) նախագահ Սերժ Սարգսյանի, Ռաֆայել (Ֆելիքս) Գզողյանի (այժմ՝ գեներալ մայոր) Լեոնիդ Մարտիրոսովի (այժմ՝ գեներալ-մայոր) հարձակման ուղղությունների հրամանատարների (Վալերի Չիթչյան Արկադի Կարապետյան Սեյրան Օհանյան), ԼՂՀ պետական քաղաքական մի խումբ գործիչների մասնակցությամբ



Ֆելիքս Գզողյան



Լեոնիդ
Մարտիրոսով

Ապրիլի վերջին երբ արդեն վերջնականապես ճշգրտվում էր հարձակման հյուսիսային, Շոշի (արևելյան) Լաչինի (հարավային) Ջանհասան-Քյոսալարի

www.a-pdf.com



ուղղությունների խնդիրը Արկադի Տեր Թադևոսյանը և Վալերի Բալայանն առարկեցին Լաչինի ուղղությամբ հարձակման գործողությանը պատճառաբանելով «Չնայած այս ուղղությունը մյուսների համեմատ դյուրին է բայց այն պահանջում է ավելի տևական մարտեր ու ընդգրկելու է լայն տարածքներ և հետո քաղաքական ու այլ նկատառումներով պարզապես բացառվում է» (տես «Շուշի ոգու քաղաքը» Եր 2002թ.): Սամվել Բաբայանը հիմնավորեց որ ԻՊՈՒ ի ունեցած մարդկային ուժի և սպառազինության ոչ բավարար քանակի բարձրադիր տեղանքի բնական ու պաշտպանական ամրությունների պատճառով միայն Ստեփանակերտի (հյուսիսային) և Շոշի ուղղություններից բերդաքաղաքի ազատագրումն անհնարին է

Ցարական բանակի գեներալ-լեյտենանտ Քիշմիշևն իր «Նադիր Շահի արշավանքները Հերատ, Ղանդահար, Հնդկաստան և իրադարձությունները Պարսկաստանում նրա մահից հետո» (ռուսերեն, Թիֆլիս 1889 թ ) գրքում նշում է «Շուշիի բերդը (1795 թ պարսից Աղա Մահմեդ խանի արշավանքի ժամանակ ծանոթ հեղինակների) անմատչելի էր.... Միակ ճանապարհը, որով հնարավոր էր հասնել բերդապարսպին, անցնում էր հարավարևմտյան ուղղությամբ....» (հիմա՝ Լաչինի ուղղությամբ) Պատմությունից հայտնի է նաև, որ դեռևս 1805 թվականին, Կովկասում ռուսական բանակի գլխավոր հրամանատար գեներալ Պավել Ցիցիանովը ռուս-պարսկական պատերազմի ժամանակ ղեկավարելով գահաժառանգ Աբբաս Միրզայի զորախմբի դեմ հարձակողական մարտերը, Ալեքսանդր Առաջին կայսերն ուղղված զեկուցագրում շեշտել է. «Շուշին մի կողմից շրջապատված է քարե բարձր պարիսպներով, իսկ մյուս կողմից ամրացված է բնական դիրքով՝ ուղղաձիգ բարձրաբերձ ժայռերով, որոնց դեմ պաշարման ժամանակ, ցանկացած ռազմարվեստ անզոր է»: Ցարական գեներալ-լեյտենանտ, ռազմական պատմաբան Վասիլի Պոտտոն իր «Շուշիի բերդի հերոսական պաշտպանությունը» (ռուսերեն, Ս Պետերբուրգ, 1903 թ., 2 րդ հրատ.) աշխատության մեջ, խոսելով պարսից թագաժառանգ Աբբաս Միրզայի կողմից 1826 թ., ամիսներ շարունակ, շուրջ 40 հազարանոց զորքով Շուշիի պաշարման մասին, գրում է. «Բացառապես ուժով բերդի գրավումը գրեթե անհնար էր ... Շուշին մատչելի էր միայն հյուսիսարևելյան Ելիզավետպոլի կողմից: Այդ միակ ճանապարհին էլ այնքան զալարապտույտ էր թեք ժայռերով ու վիհերով խճողված, որ ճանապարհին տեղակայված երկու թնդանոթն ու հրաձիգների տեղացրված վաշտը կարող էին մի ողջ բանակի առաջխաղացումը կասեցնել »:

Սամվել Բաբայանը համոզված էր որ հակառակորդի պաշտպանությունը ճեղքելու խնդիրը հնարավոր է լուծել միայն Լաչինի ուղղությունից Սամվել

www.a-pdf.com



Բաբայանի հիմնավորումները պաշտպանեց նաև ՀՀ
և ԼՂՀ ԳԽ պատգամավոր, Պաշտպանության խորհրր
դի անդամ Ռոբերտ Քոչարյանը (ով ի դեպ նույն ուղ
ղությունում մասնակցել է մարտական գործողու
թյուններին) և հարձակման Լաչինի ուղղությունը
թողնվեց ուժի մեջ: Ջորի Բալայանն իր «Էջեր ռազմա
ճակատի օրագրից» (Շուշի 1992 թվականի մայիսի
8–9, վերնագրված «Շուշին ավելին է քան հաղթանա
կը») նյութում գրել է «Մի քանի անգամ հրամանա
տարական կետ եկան Ռոբերտ Քոչարյանը և Սամվել
Բաբայանը Ռոբերտին ես առաջին անգամ էի տես
նում զինվորական համազգեստով Նրանք երկուսով
մեքենայով շրջեցին, կարելի է ասել հրահանգավորե
ցին բոլոր ուղղությունները Նրանց խորհուրդներն ու
առաջարկությունները, ինչպես Կոմանդոսն էր ասում
անգնահատելի էին Դեռևս քարտեզի վրա աշխատե
լիս Արկադին հաճախ էր նկատել, ինչպես ինքն էր ար
տահայտվում Սամվելի շտաբային ունակություննե
րը. վերջինս հաճախ էր վիճում և ապացույցներով
համոզում իր դիրքորոշման ճշմարտացիությունը Հե
տագայում նրան նման գնահատական էին տալիս
խորհրդային բանակի բազմափորձ ռազմագետները
Քրիստափոր Իվանյանը և Անատոլի Զինևիչը»

Հարկ է նշել որ Շուշիի ազատագրման ռազմական
գործողությունը մի քանի անգամ հետաձգվել է Իսկ
թե ինչու պարզաբանում է Սամվել Բաբայանը. «Այն
նախատեսված էր սկսել դեռ ապրիլի վերջին կամ մա
յիսի 4 ին բայց կային մի շարք խնդիրներ օրինակ



Ժորա
Գասպարյան



Ռազմիկ
Մելքումյան



Վալերի
Մարության

Արթուր Փափազյան



www.a-pdf.com



մեր ունեցած զենքի և զինամթերքի պակասը Բացի այդ միայն Շուշիով հարց չէր լուծվում պետք էր ամ րացնել Ասկերանի և Մարտակերտի պաշտպանա կան դիրքերն ու բնագծերը Այդ իսկ պատճառով որո շեցինք օպերացիան սկսել այն բանից հետո երբ կա պահովվեինք զենքով ու զինամթերքով և կճշգրտվե ին հետախուզության տվյալները ›



Սերժ Սարգսյան

Գլխավոր հրամանատարական կետում էին (տե ղակայված էր Շոշ գյուղից հյուսիս 1206 նիշով բար ձունքին) գեներալ-մայոր (այժմ գեներալ գնդապետ) Գուրգեն Դալիբալթայանը Զորի Բալայանը ԼՂՀ Նախարարների խորհրդի նախագահ Օլեգ Եսայանը և ԼՂՀ իշխանության այլ ներկայացուցիչներ Օպե րատիվ իրավիճակը վերահսկվում էր փոփոխու թյունների մասին տեղեկացվում էին ԼՂՀ ԻՊԿ նա խագահ Սերժ Սարգսյանը և ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը



Վազգեն Սարգսյան

1992 թվականի մայիսի 7 ի լույս 8 ի գիշերվա ժա մը 2[30] ին Սամվել Բաբայանը ըստ օպերատիվ պլա նի, հասնելով և ռազմախարսխվելով Լիսագորի տեղորոշչի բարձունքին (2214 8 նիշ) զեկուցեց Արկա դի Տեր Թադևոսյանին ‹44 ը կապի մեջ է. վերահսկո ղության տակ ենք առել բարձունքն ու մայրուղին կա րելի է սկսել հարձակումը»

ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի հայաստա նյան կամավորական ջոկատների ազատամարտիկ ներից կազմված հարձակողական-գրոհային խմբերը ռեակտիվ հրետանավորները (ընդհանուր հրամանա տար Ռազմիկ Մելքումյան) հրետանավորները (հրամանատար Ժորա Գասպարյան այժմ գեներալ մայոր), Դ 30 հաուբիցների ու ականանետների դիվի զիոնը (հրամանատար Ալեքսանդր Դամպեր) կապի (պետ Արթուր Փափազյան հետագայում գեներալ մայոր), բժշկական (պետ Վալերի Մարության) ու այլ ծառայությունների մասնակցությամբ, **հյուսիսային Շոշի (արևելյան), Լաչինի (հարավային-գլխավոր), Ջանհասան–Քյոսալարի** ուղղություններով ձեռնա մուխ եղան մարդկային ուժով և սպառազինության միջոցներով մի քանի անգամ գերազանցող հակառա կորդի ջախջախմանը Շուշիի անառիկ ամրոցի և



Գուրգեն Դալիբալթայան

www.a-pdf.com

# ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ (1992 թ մայիսի 8 9)




ՄԱՍՇՏԱԲ 1: 300 000

Թիվ 1

շրջակա բնակավայրերի հենակետերում *(տե՛ս թիվ 1 քարտեզը)*

**Հյուսիսային ուղղություն** (ընդհանուր հրամանատար Վալերի Չիթչյան)

Ստեփանակերտ-Շուշի մայրուղիով նրա աջ և ձախ եզրերով գրոհեցին 4 րդ վաշտի (հրամանատար Յուրի Պողոսյան) չորս դասակները (85 հետևակային) մեկ տանկի և հետևակի երկու մարտական մեքենաների աջակցությամբ: Շրջանի արտադրական միավորման տարածքի և երաժշտական գործիքների գործարանի բնագծով ձգվող բարձունքի հատվածներում մարտեր մղեց 6 րդ վաշտի առաջին գրոհային խումբը Սերգեյ Թովմասյանի գլխավորությամբ: Հետախուզական վաշտի գրոհային երկու խմբերը՝ Սեմյոն Աբրահամյանի և Վալերի Հայրիյանի ղեկավարությամբ գրոհեցին ճանապարհամերձ երկու բարձունքների ուղղությամբ և կրակային միջոցներով աջակցեցին ձախ թևով գրոհող 4 րդ վաշտի դասակներին: Սակայն հակառակորդը լուրջ դիմադրություն ցույց տվեց ռադիոաշտարակների («Երեք աշտարակներ») բարձունքում և բենզալցման կայանի մոտ: Գրոհներից մեկի ժամանակ խփվեց մեր զրահամեքենան, զոհվեցին մեխանիկ-վարորդը և գնդացրորդը («Շուշի» թերթ, 1994թ. օգոստոս, թիվ 6)։ 4-րդ վաշտի առաջխաղացումը կասեցրին հակառակորդի ռազմական ուղղաթիռները և մայրուղու ոլորաններում մնացող երկու տանկերը: Տանկային մենամարտում խփվեց Գագիկ Ավշարյանի, Աշոտ Ավանեսյանի և Շահեն Սարգսյանի տանկը, որի հետևանքով զոհվեցին վերջին երկուսը: Մարտական տեխնիկայի շարքից դուրս գալը և հակառակորդի հակահարձակումն աստիճանաբար թուլացրին ազատամարտիկների հարձակման թափը, և նրանք չկարողանալով շարունակել գրոհը նահանջեցին դեպի ելման դիրքերը: Ազատամարտիկների բարոյամարտական վիճակը վերականգնելու, խուճապային տրամադրությունները կանխելու նպատակով Արկադի Տեր-Թադևոսյանի առաջարկով Բաբայանը Լաչինի ուղղությունից մեկ տանկ և զրահամեքենա տեղափոխեց հյուսիսային ուղղություն: Այսուամենայնիվ կորուստներից խուսափելու համար հարձակողական գործողությունները դադարեցվեցին, ազատա



Վալերի Չիթչյան



Սերգեյ Թովմասյան

www.a-pdf.com





8 րդ վաշտի ազա փամարփիկներ



Սնան ջոկատի ազատամարտիկներ



Հրազդանի Սասուն» ջոկատի ազատամարտիկնել

www.a-pdf.com







Յուրի
Հովհաննիսյան

մարտիկներն անցան պաշտպանության Այդ մասին ահա թե ինչ է ասում Ֆելիքս Գզողյանը «Զեկուցեցի Արկադի Իվանովիչին որ անհնար է զարգացնել գրո հը Հրամանատարական դիտակետում գտնվող Ար կադի Իվանովիչը փվեց գրոհը դադարեցնելու իր հա մաձայնությունը» (Հովիկ Վարդումյան «Շուշիի ազա տագրումը» էջ 39 Եր 2007թ )

7 րդ վաշտին (հրամանատար Արկադի Սար գըսյան) 8 րդ վաշտին (Մարտիկ Գասպարյան) 9 րդ վաշտին (Յուրի Իշխանյան) և Սպիտակի ու հայաս տանյան այլ կամավորական ջոկատների առաջա դրանք էր տրված համագործակցելու պահեստազորա



Արկադի
Սարգսյան



Տանկ իր շարժան



Արկադի Կարապետյան

յին ուժերի հետ որոնք մարտեր էին մղում «26» ի ամրակետի շրջակայքում Հրազդանի ‹Սասուն» Կոռնիձորի Սնանի Ստեփանավանի և հայաստանյան այլ ջոկատներից կազմված պահեստազորային գումարտակը Յուրի Հովհաննիսյանի ղեկավարությամբ «26» ի ամրակետից շարժվեց Ջանհասանի ուղղությամբ մայիսի 8 ին փակեց Շուշիի և Ջանհասան–Քյոսալարի հաղորդակցության կապը օժանդակեց այդ ուղղությունում հակառակորդի ուժերի փարանջատմանն ու ջախջախմանը

**Շոշի (արևելյան) ուղղություն** (ընդհանուր հրամանատար Արկադի Կարապետյան)

Այս ուղղությունում հակառակորդի դիմադրությունը հաղթահարելու համար ազատամարտիկներից պահանջվում էր ուժերի գերագույն լարում քանի որ հակառակորդի դիմադրությունը հաղթահարելու և անառիկ բնագծերում նրա պաշտպանությունը ճեղքելու խնդիրը դժվար լուծելի էր Հարվածային զինուժի խմբերը հարձակումը սկսեցին երեք ենթաուղղություններով Բանփի ուղղությունում գործում էին 1 ին վաշտը (հրամանատար Աշոտ Ղուլյան նույն ինքը Բեկոր) և ՀՅԴ մի առանձին դասակ (հրամանատար Վարդան Ստեփանյան նույն ինքը Դուշման Վարդան) աջ թևում հետախուզական խումբը Քռասնու Դաշուշենի Աբովյան Չարենցավան քաղաքների Ու ջան գյուղի և այլ ինքնապաշտպանական ջոկատներ ձախ թևում Շոշի ջոկատը (հրամանատար Արզամ



1 ին վաշտի ազատամարտիկներ

www.a-pdf.com



Հարությունյան) Արարատի ջոկատները (ընդհանուր
հրամանատար այժմ ոստիկանության գեներալ-լեյ
տենանտ Գրիգոր Գրիգորյան) Հարձակումների ժա
մանակ պարզվեց որ ազատամարտիկների դիրքերը
հիմնականում աննպաստ են Հակառակորդի դի
մադրությունը կոտրելը հատկապես պարսպապա
տերի շրջակայքում. Իսկ երբ Ղարաբաղմետաքսկոմ
բինատի մասնաճյուղի շենքի ուղղությամբ ազատա
մարտիկներն առաջ շարժվեցին բախվեցին հակա
ռակորդի պահեստային ուժերի հակահարձակմանը
և չկարողանալով դիմադրել նահանջեցին նախնա
կան դիրքերը Աջ թևում գործող ստորաբաժանումնե
րը կարողացան հաղթահարել ձորակի բնական ար
գելքը, մոտենալ ֆինանսական տնակներին և սկսեցին
շարժվել ավտոբազայի ուղղությամբ Ազատամար
տիկները լուրջ դիմադրության հանդիպեցին նաև
«Երեք աշտարակներ» բարձունքից նահանջած և
ֆերմայում դիրքավորված հակառակորդի կողմից
Ազատամարտիկների շարքերում եղան զոհեր և վի
րավորներ Գրոհային խմբերը ստիպված նահանջե
ցին և դիրքավորվեցին ավտոբազայից վերև Աշոտ
Ղուլյանի ղեկավարած վաշտի ազատամարտիկները
բանտի պարիսպների տակ հանդիպեցին հակառա
կորդի կատաղի դիմակայությանը. Ծավալվեցին թեժ
մարտեր որոնց ժամանակ ձեռքից վիրավորվեց
Աշոտ Ղուլյանը Հակառակորդը մարտի մեջ նետեց
ռազմական 3 ուղղաթիռներ որոնք չկառավարվող



Վարդան
Ստեփանյան



Գրիգոր
Գրիգորյան



Արարատի շրջանի
ջոկատների ազա
տամարտիկներ

www.a-pdf.com



իրթիռներ արձակեցին հայկական ուժերի դիրքերի և ազատամարտիկների կուտակման հատվածներում ունեցանք զոհեր ու վիրավորներ Այնուհետև այդ ուղղությունում փիրեց հարաբերական անդորր, և Արկադի Տեր-Թադևոսյանը որոշեց Շոշից գրոհելը հետաձգել հաջորդ օրվան



Սեյրան Օհանյան

**Ջանհասան–Քյոսալար (հյուսիսարևմտյան) ուղղություն** (ընդհանուր հրամանատար Սեյրան Օհանյան այժմ գեներալ գնդապետ ՀՀ պաշտպանության նախարար)

Այս ուղղությամբ հայկական ուժերը հետապնդում էին երկու խումբ նպատակներ սրընթաց գործողություններով շեղել հակառակորդի ուշադրությունը հարձակման հիմնական ուղղություններից զարգացնել դեռևս ապրիլի 26-ին սկսած ապակողմնորոշող մարտական գործողությունները և ապահովել հյուսիսից հարձակվող ԻՊՌԻ ի ստորաբաժանումների թիկունքը ճնշել Ջանհասանում Կարագյավում և Քյոսալարում տեղակայված հակառակորդի կրակակետերը Այս խնդիրների լուծման մարտակարգն իրագործեցին Մեհտիշենի, Բադարայի Խանցքի, Բալուջայի Դաշբուլաղի Խնածախի Դահրավի «Կումայրի» «Արամո» ջոկատները խափանարար հետախուզական խումբը

Խափանարար հետախուզական խմբի ազատամարտիկները մարտանցումով մոտեցան «Կումայրի» ջոկատի պաշտպանության գոտուն նպատակ ունենալով օգնելու շրջապատված և անհավասար մարտի մեջ մտած կամավորականներին Մարտական գործողության ժամանակ ջոկատի կամավորականներից եղան զոհեր և վիրավորներ Նոր արյունահեղ մարտերից խուսափելու համար ազատամարտիկները որոշեցին նահանջել դեպի նախնական դիրքերը

Այսպիսով հյուսիսարևմտյան ուղղությունում գործող ստորաբաժանումները շեղեցին հակառակորդի ուշադրությունը հարձակման այդ ուղղությունից և ճնշեցին Ստեփանակերտը հրթիռահրետակոծող հյուսիսային կրակակետերը

**Լաչինի (հարավային) գլխավոր ուղղություն** (ընդհանուր հրամանատար Սամվել Բաբայան)

Ռազմական գործողության մասնակից ուժերին հրամայված էր առաջանալ Շուշի Լաչին մայրուղու

ուղղությամբ ապահովել Շուշին գրոհող ստորաբա
ժանումների թիկունքը կանխել Կուբաթլուի շրջանից
հակառակորդի հնարավոր թափանցումը, փակել Լա
չին Շուշի ճանապարհը ինչը Շուշիում տեղակայված
հակառակորդի զինուժին կզրկեր Ջառըսլուից սպաս
վող օգնությունից Հայտնի էր որ Ջառըսլու գյուղի
հենակետում տեղակայված էր հակառակորդի ուժեղ
խմբավորում որը կարող էր օգնության հասնել Շու
շիում տեղակայված ուժերին Միևնույն ժամանակ
ուղղության ուժերը պետք է դիմագրավեին հակառա
կորդի առաջխաղացումը ձախ թևից Մեծ և Փոքր
Քիրսերի բարձունքների հենակետերից



Սամվել
Բաբայան

Ունենալով նման խնդիր հարվածային խմբերը
հարձակման անցան Քիրս լեռան Ջառըսլուի և Լիսա
գորի ենթաուղղություններով: Փոքր Քիրսի ենթաուղ
ղությամբ հարձակում ձեռնարկած Հրանտ Ծատրյա
նի ղեկավարած 2 րդ վաշտի ազատամարտիկները
մարտանցելով 1902 և 1803 բնագծերը աջ թևով
շրջանցեցին Փոքր Քիրսը ճնշեցին ստորոտում տե
ղակայված հակառակորդի ռազմական հենակետը
այնուհետև մոտեցան 2214 8 բարձունքին ուղղու
թյուն վերցրին դեպի Լիսագորի ճանապարհահատ
վածը և հսկողության տակ առան Լաչին Շուշի ճա
նապարհի Լիսագոր Ջառըսլու հատվածը Աշոտ Խա
չատրյանի ղեկավարած 3 րդ Ավետարանոցի վաշտե



2 րդ վաշտի
ազատամարտիկներ

www.a-pdf.com



րը (հրամանապար Համլետ Ստեփանյան) և ջավա խահայերի կամավորական ջոկատը Մեծ Քիրս լեռան հատվածում ճնշեցին հակառակորդի հենակետը Հա կառակորդն ունեցավ զոհեր և փախուստի դիմեց դե պի Մուսուլմանլարի ձորակի գյուղերը (Ղումարտու Ղշլաղ և այլն) Դրանով իսկ 2346 և 2571 բարձունքնե րի դիրքերում չեզոքացվեց հակառակորդի ուժերի հնարավոր հարվածը հայկական զինուժի թիկունքին



Արշավիր Ղարամյան

Տումի գյուղի ջոկատը և «Քիրս» խումբը հարձակ ման անցան 2292 բարձունքի ուղղությամբ խնդիր ու նենալով կանխելու հակառակորդի հարձակումները Քիրսի ուղղությամբ Սակայն ազատամարտիկները կարողացան ընդամենը մոտենալ Մուսուլմանլարի ձորակի գյուղերի մատույցներին և միայն մասնակիո րեն կատարեցին իրենց առաջադրանքը

Ջառըսլուի ենթաուղղությունում գործում էին Ակն աղբյուրի և Սարուշենի միացյալ վաշտերը (հրամանա տար՝ Արշավիր Ղարամյան այժմ գեներալ մայոր) աֆղանցիների» (հրամանատար Նվեր Չախոյան) Սերգեյան» (հրամանատար Արմեն Բաղդասա րյան), «Բյուրեղավան» (հրամանատար Վրեժ Ղարտո յան) կամավորական ջոկատները որոնց խնդիրն էր լայն շրջանցումով, Ջառըսլու գյուղի ուղղությամբ շարժվել և վերահսկողության տակ առնել Շուշի Լա

Աֆղանցիներ» ջո կատի ազատամար տիկներ



www.a-pdf.com



չին ճանապարհահատվածը (1449 և 1462 բնագծերից) Եվ երբ 2 րդ վաշտի ստորաբաժանումները դուրս եկան 2214 8 բնագծով Շուշի–Լաչին մայրուղի Սամվել Բաբայանի հրամանով բացվեց Ջառըլուի ուղեհատվածը նպատակ ունենալով արագացնելու հակառակորդի փախուստը Շուշիից: Հակառակորդը զգալով դիմադրության անհուսալիությունը կածաններով միջգյուղային ճանապարհներով խուճապահար փախուստի դիմեց

ՀՅԴ 1 ին վաշտի չորս դասակները (ընդհանուր հրամանատար Ժիրայր Սեֆիլյան) Վալերի Բալայանի խումբը Բերդաձորի ջոկատն առաջադրանք էին ստացել շրջանցելու Ջառըլուն, գրավելու Լիսագորը և փակելու Լաչին Շուշի ճանապարհը կանխելով այդ ուղղությունից հակառակորդի օգնությունը Սակայն շրջանցող խմբերը կարողացան մոտենալ միայն Ջառըլուի դիմացի բարձունքներին Մարտական գործողության զարգացումն ապահովելու հակառակորդի խուճապը բազմապատկելու համար Բաբայանը հրամայեց 2 րդ վաշտի զինտեխնիկան (մեկ տանկ երկու ՀՄՄ և մեկ զրահափոխադրիչ) դուրս բերել Շուշի–Լաչին ավտոճանապարհի ուղղությամբ



Ժիրայր Սեֆիլյան

Զինտեխնիկայի անձնակազմը (հրամանատար Սասուն Աղաջանյան) մարտանցումով դուրս եկավ Շուշի Լաչին մայրուղի վերահսկողության տակ պահեց այն հարվածեց ռազմական տեխնիկա և ռազմական նշանակության բեռներ փոխադրող մեքենաներին և իրադարձությունների նպաստավոր զարգացումից հետո վերադարձավ ելման դիրքեր շարունակելով կրակի տակ պահել մայրուղին 2 րդ վաշտի զրահաջոկատի (կրակային աջակցությամբ) գրոհող խմբերը Քարին տակի Սղնեղի Արտաշատի և այլ ջոկատներ միավորվելով Կարմիր քարի հատվածում դուրս եկան Շուշի Լաչին ճանապարհի մատույցները և մասամբ կատարեցին իրենց առաջադրանքը: Այսպիսով հարավային (Լաչինի) գլխավոր ուղղությամբ ծավալված մարտերի արդյունքում ճնշվեցին Մեծ և Փոքր Քիրսերի հատվածում գտնվող հակառակորդի կրակակետերը մարտանցելով Քիրսերի դիրքերը՝ ուղղության հիմնական ուժերը դուրս եկան և ամբողջովին փակեցին Շուշի Լաչին մայրուղին Լաչինի ուղղությունում ծավալ

ված մարտական գործողությունների շնորհիվ հաջող
վեց նաև Ջառըսլուում կանխարգելել հակառակորդի
ուժերի վերախմբավորումը բացառել Շուշիում տեղա
կայված նրա ստորաբաժանումներին օգնելու հնարա
վորությունը և հակահարձակման գործողությունները
Ավելին երբ ահագնացավ և ամբողջացավ շրջապատ
ման վտանգը ադրբեջանական զորախմբերի ու խա
ղաղ բնակչության մեջ սկսվեց խուճապ և հակառա
կորդն անկազմակերպ լքեց Շուշին Ահա թե այդ մա
սին ինչ է ասել Շուշիի պաշտպանությունը ձախողե
լու» համար մահապատժի դատապարտված և փա
խուստի մեջ գտնվող Ադրբեջանի պաշտպանության
նախկին նախարար Ռահիմ Ղազիևը ‹Մոսկովսկի կոմ
սոմոլեց» (ռուսերեն) թերթին տված հարցազրույցում
(արտատպված «Գոլոս Արմենիի» ռուսերեն թերթում
Եր 1995թ դեկտեմբերի 19 թիվ 136)

«. Գլխավոր շտաբի պետի տեղակալ գնդապետ
(այժմ պաշտպանության նախարար գեներալ գնդա
պետ Հ Խ.) Սաֆար Աբիևին որպես կրակային զորա
խմբի հրամանատարի որոշել էի ուղարկել Շուշիի ու Լաչի
նի շրջան: Սակայն նա անձնակազմը և զրահատեխնիկան
թողնելով Կուբաթլուի և Լաչինի միջև դիմել է փախուս-
տի.... Լաչինի շրջանում տեղակայված 4 րդ բրիգադի հրա
մանատար Էլբրուս Օրուջևը ‹Երեք յոթնյակներ գու



Քիրս լեռը

www.a-pdf.com



մարտակի հրամանատար Ռովշան Ալեքպերովը նույնպես
դասալքել և փախել են Շուշիի ու Լաչինի շրջաններից....
Զանազան պատրվակներով Շուշին սկսեցին լքել կամավո-
րական և այլ ջոկատներ... Այս ամենից հետո ահազնացան
դասալքությունը և խուճապը: Ահա հենց այդ ամենի խորա
պատկերին էլ Շուշին ընկավ....»:

Այս մարտավարության մասին Սամվել Բաբա
յանն ասում է Նույն տակտիկան կիրառել ենք նաև
մեր մյուս բոլոր օպերացիաների ժամանակ Մենք
հնարավորինս խուսափել ենք դեմ հանդիման մար
տեր մղելուց և դիմել ենք մեր տակտիկային հարվա
ծել այն ուղղություններով որտեղ հակառակորդը
մեզ չէր սպասում, միշտ ապես փորձել ենք զգացնել որ
եթե հակառակորդը ժամ առաջ չհեռանա իր դիրքե
րից ընկնելու է շրջապատման մեջ Դա է եղել իմ մար
տավարությունը Շուշիի և մնացած ազատագրական
մարտերի ժամանակ· Արդյունքում մենք ունեցել ենք
անհամեմատ նվազ կորուստներ թեև սովորաբար
հարձակվող կողմի կորուստները շատ են լինում»:

1992 թվականի մայիսի 9 ին առավոտյան ժամը 6 ին
հայկական ստորաբաժանումները մտան ադրբեջանա
կան զորախմբերից մաքրված քաղաքը Լաչինի ուղղու
թյունում ձեռնարկված գործողությունների փայլուն ար
դյունքներով ապացուցվեց Սամվել Բաբայանի հիմնա
վորված մտահղացման իրատեսականությունը Շուշին
հնարավոր է ազատագրել Լաչինի ուղղությունից

Շուշիի ազատագրումից հետո շատերն էին զարմա
ցել. «Շուշիում եղած նման զենքի պաշարով աշխար
հագրական բնական նման դիրքով այն կարելի էր
ամիսներով պահել ու չհանձնել ..»: Ի պատասխան
այս մտքի Սամվել Բաբայանն ընդգծել է ‹Ամիսներ
շարունակ կարո՞ղ էին պահել թե՞ ոչ, կասեմ մեկ բան.
Շուշին գրավեցինք ճիշտ ընտրված մարտավարու
թյամբ այլ ոչ միայն ուժային մեթոդով Ավելացնեմ
նաև որ մեր որևէ ստորաբաժանում Շուշի չի մտել դի
մացից կամ թևերից Այդ ուղղություններում մարտըն
չող ստորաբաժանումներն իրենց վրա վերցրել են մի
այն կրակը և կազմակերպել ընթացիկ դիմադրություն
Մայիսի 8 ի կեսօրից հետո ադրբեջանցիները սկսեցին
լքել քաղաքը իսկ մայիսի 9 ի առավոտյան քաղաքում
որևէ ադրբեջանցի չկար Քաղաքում չեն եղել մարտեր

www.a-pdf.com



Շո շին ազատագրված է

Մեր ուժերը Շուշիում ադրբեջանցի զինվորների չեն տեսել Գերի են ընկել միայն այն ադրբեջանցիները ովքեր թաքնվել էին նկուղներում և տեղյակ չէին թե իրենց շուրջն ինչ է կատարվում: Ազատամարտիկը մայիսի 8 ի մարտական գործողությունների ողջ ընթացքում մեկ մետր առաջ չի գնացել մեր խփված տանկից Միայն մայիսի 9 ի առավոտյան առանց դիմադրության հանդիպելու ազատամարտիկները մտել են քաղաք...»

Շուշիի ազատագրումն առաջին հերթին ազատամարտիկների անձնազոհության, սխրանքի ազգային միասնության և անհատի խելամտության արգասիքն էր Այս ռազմական գործողությամբ ապացուցվեց հայ ժողովրդի ռազմական մտքի կենսունակությունը Ավելորդ չհամարելով նշենք որ այս ճակատամարտում Սամվել Բաբայանը գործադրեց այնպիսի ռազմարվեստ ինչը սլատիվ կբերեր շատ զորահրամանատարների

Շուշիի ազատագրումով վնասազերծվեցին Ստեփանակերտի շրջակա բոլոր թշնամական կրակակետերն ու ռազմական հենակետերը Մարտական գործողությունների ժամանակ հայկական կողմն ունեցավ 57 զոհ հակառակորդը 250–300 զոհ 600–700 վիրավոր և 13 գերի

Շուշիի ազատագրումից հետո նպատակավոր նախադրյալներ ստեղծվեցին Ինքնապաշտպանության ուժերի ռազմական հաջողությունները զարգացնելու համար Արդեն մայիսի 12-ին վերահսկողության տակ առնվեց Ջառըսլու գյուղը· Ժիրայր Սեֆիլյանի և Արշավիր Ղարամյանի հրամանատարությամբ գործող ստո

www.a-pdf.com



րաբաժանումները փակեցին դեպի Շուշի հակառա
կորդի հնարավոր առաջխաղացման ճանապարհները
Վարդան Ստեփանյանը նախօրոք ականապատեց Լի
սագոր Ջառըսլու ուղեհատվածը Մայիսի 13 ին հակա
ռակորդը հարձակվեց Ջառըսլուի ուղղությամբ սա
կայն ականի վրա պայթած նրա տանկը և ոռնականե
տով շարքից հանված զրահամեքենան վերջնականա
պես անկարելի դարձրին հակառակորդի հետագա
առաջխաղացումը Ինքնապաշտպանության ուժերի
ստորաբաժանումները սկսեցին հակահարձակումնե
րը խճուղու աջ ու ձախ կողմերով Ճնշելով հակառա
կորդի դիմադրությունը նրանք վերահսկողության
տակ առան Շուշիի շրջանի 9 գյուղ Այնուհետև հար
վածային զորախմբերը դուրս եկան Լիսագորից աջ ու
ձախ ընկած բարձունքները որոնց գրավումը կանխ
որոշեց մարտի ելքը առանց էական դիմադրության
մայիսի 17 ին ազատագրվեց Բերդաձորի ենթաշրջա
նը Խաղաղ բնակչության տարհանումն ապահովելու
համար հակառակորդը պայթեցրեց Լաչին–Բերդաձոր
տանող ճանապարհի կամուրջը և ընդամենը մեկ օր
դիմադրելուց հետո խաղաղ բնակչության հետ նահան
ջեց դեպի Կուբաթլու Հայկական ուժերը առանց լուրջ
հարձակումների, մտան Լաչինի շրջան ապահովելով
անվտանգությունն աջ և ձախ կողմերում. Մայիսի 18
ին Ինքնապաշտպանության ուժերի կազմավորումնե
րը առանց մարտերի մտան նաև
շրջկենտրոն (այժմ Բերձոր քա
ղաք), ապա դուրս եկան Հայաս
տանի Հանրապետության պետա
կան սահմանը բացելով Արցախը
ՀՀ ին կապող ճանապարհը
Մարդասիրական միջանցքը»

Սամվել Բաբայանը վերհիշելով
Շուշիի ազատագրմանը հաջորդած
իրադարձությունները ասել է «Լա
չինի ազատագրման համար օպե
րացիա չենք մշակել Շուշիի ազա-
տագրումից հետո հակառակորդի
շարքերում տիրում էր խուճապային
տրամադրություն Բերդաձորում
հակառակորդը դիմադրեց ընդամե

Բացվել է
Ստեփանակերտ
Գորիս ճանապարհը



նը մեկ օր  Այդ դիմադրությամբ նրանք փորձում էին պահպանել բարձունքները  որպեսզի հիմնական ուժերը փարհանվեին  Ավելացնեմ, որ Լաչինի ազատագրումը Շուշիի և Լիսագորի ռազմական գործողությունների հաջողությունների ուղղակի հետևանքն էր» ·



Վիտալի
Բա ասանյան

## Ասկերանի ռազմական գործողությունը

1992 թվականի հունիսի 7 ին Ադրբեջանի Հանրապետությունում կայանալիք նախագահական ընտրության նախապատրաստության պատճառով մայիսի վերջին և հունիսի սկզբին հակամարտության գոտում լարվածությունը նվազել էր  Սակայն հակառակորդը հունիսի առաջին կեսին  ըստ հետախուզության տվյալների, ԼՂՀ սահմանամերձ գոտու երկարությամբ  Միրբաշիրի, Կուբաթլուի, Ջաբրայիլի, Աղդամի շրջաններում, կուտակել էր մեծաքանակ հետևակ զրահատեխնիկա  ծանր հրետանի  Սկսած հունիսի 12 ից  շուրջ 120 կիլոմետր երկարությամբ  հակամարտության գոտու հյուսիսարևելյան  արևելյան և հարավարևելյան ուղղություններով հակառակորդն անցավ լայնամասշտաբ հարձակման, որի հետևանքով ԼՂՀ-ում ստեղծվեց ծանր կացություն  Իրավիճակը բարդ էր հատկապես Ասկերանի, նաև Մարտակերտի և Շահումյանի շրջանների հյուսիսարևելյան հատվածներում  Ասկերանի շրջանը զավթելու նպատակով հակառակորդը մարտի մեջ նետեց մեծաքանակ կենդանի ուժ և զինտեխնիկա  Միաժամանակ հակառակորդը մարտական գործողությունների մեջ ներառեց Գյանջայում (նախկին Կիրովաբադ) տեղակայված նախկին խորհրդային 4 րդ բանակի համապատասխան ուժերը. Թիկունքից հայկական ուժերի օգնությունը կանխելու նպատակով ադրբեջանա

Ասկերան
Մ այրաբերդը



www.a-pdf.com



կան օղուժը պարբերաբար արկակոծում էր Ասկերան
շրջկենտրոնը Նորագյուղ Խանաբադ բնակավայրե
րը և Ինքնապաշտպանության ուժերի առաջապահ
դիրքերը. 1992 թվականի հունիսին հակառակորդը
զավթելով Նախիջևանիկը Փրջամալը Սառնաղբյու
րը Քյաթուկը Արանզամինը ընդհուպ մոտեցավ
շրջկենտրոն Ասկերանի մատույցներին Ինքնա
պաշտպանության ուժերի համար կացությունը խիստ
անբարենպաստ էր Առկա սպառազինության քանա
կը չէր բավարարում վաշտերի և ջոկատների պա
հանջները Այս ծանր կացությունը շտկելու համար
Ասկերանի ճակատ գործուղվեց Սամվել Բաբայանը
Հետախուզության և նախօրոք ձեռք բերած տվյալնե
րի վերլուծությունից հետո Սամվել Բաբայանը հա
մոզվեց որ ճիշտ մարտավարությամբ կարելի է կան
խել Ասկերանի գրավման վտանգը Դրա համար
անհրաժեշտ էր ժամանակին ու ճշգրտորեն որոշել
հակառակորդի գլխավոր հարվածների ուղղությունը
և հարվածային ուժերն ու միջոցները կենտրոնացնել
այդտեղ պարբերաբար իրագործել հակառակորդի ու
շադրությունը շեղող մարտեր և խափանարար գործո
ղություններ Բաբայանը նաև վճռեց պաշտպանու
թյունը զարգացնել խորությամբ և ստեղծել պաշտպա
նական կրկնակի բնագծեր: Կազմակերպվեց հետախու
զություն ապահովեց ջոկատների ու վաշտերի փոխ
համաձայնեցված գործողությունները կարգավորեց
դրանց նյութատեխնիկական ապահովման խնդիրը.

Մարտական գործողություններին մասնակցեցին
2 րդ վաշտը (հրամանատար՝ Հրանտ Ծատրյան) 4 րդ
վաշտը (հրամանատար Յուրի Պողոսյան) 3 րդ վաշ
տը (հրամանատար Աշոտ Խաչատրյան) 5 րդ վաշտը
(հրամանատար Դավիթ Առուշանյան), Խանաբադի
վաշտը (հրամանատար Սանասար Ծատրյան) Քյա
թուկի (հրամանատար Կամո Դանիելյան), Բադարա
յի (հրամանատար Կարեն Արզումանյան), Նորա
գյուղի (հրամանատար Էդուարդ Ասլանյան) Քռաս
նու (հրամանատար Վալերի Բաղրյան) և Իվան Մեհ
րաբյանի (նույն ինքը «Դյավոլ») ղեկավարած ու հա
յաստանյան մի շարք կամավորական ջոկատներ Աս
կերանի շրջանի կամավորական ջոկատների ու վաշ
տի ընդհանուր ապա համանուն Պաշտպանական



Հրանտ
Ծատրյան



Աշոտ
Խաչատրյան



Սանասար
Ծատրյան

www.a-pdf.com





Կամո
Դանիելյան



Իվան
Մնիրաքյան



Յուրի
Պողոսյան

շրջանի հրամանատարն էր Վիտալի Բալասանյանը
(այժմ գեներալ մայոր)․

Այսպիսով ստեղծվեց Ասկերանի ռազմաճակա
տը, որին էր վերապահվել Ասկերանի և Ստեփանա
կերտի պաշտպանության առաքելությունը Ռազմա
ճակատի պաշտպանական բնագծերն էին Սառնաղ
բյուր–Նախիջևանիկ Նախիջևանիկ Խրամորթ Քյա
թուկի հատվածները Ծանր մարտեր ընթացան այդ
բնագծերում հատկապես 1992 թվականի հունիսի
առաջին տասնօրյակին Կուտակելով նորանոր ու
ժեր հակառակորդը նպատակ էր դրել գրավելու Աս
կերան շրջկենտրոնը, ապա զարգացնելով մարտա
կան գործողությունները նաև Ստեփանակերտը
Ինքնապաշտպանության ուժերին հաջողվեց արդեն
հունիսի 11 ին կասեցնել հակառակորդի մեծաքանակ
ուժերի առաջխաղացումը դեպի Ստեփանակերտ Աս
կերան Աղդամ մայրուղին հսկող հայկական ուժերը
այդ թվում հրետանին հակառակորդին թույլ չտվե
ցին ճեղքել մի քանի կարևոր պահակակետեր Սա
կայն մեծ կորուստների գնով թշնամուն հաջողվեց
գրավել Ինքնապաշտպանության ուժերի որոշ առա
ջապահ բնագծեր Հայկական ուժերը դիմադրությու
նը շարունակեցին երկրորդ բնագծից Ասկերան–Նա
խիջևանիկ ճանապարհին գծում 4 րդ վաշտը անցնելով
հակահարձակման կարողացավ հետ մղել հակառա
կորդի գրոհները Այդ գրոհներից մեկի ժամանակ
Նախիջևանիկ Ուղտի մեջք բարձունքի հատվածում
1992 թվականին հունիսի 12-ին զոհվեց 4 րդ վաշտի
հրամանատար Հայաստանի ազգային և Արցախի
հերոսի բարձրագույն կոչումներին հետմահու արժա
նացած Յուրի Պողոսյանը․

Ասկերան–Աղդամ մայրուղու կենտրոնով տանկի և
հետևակի մարտական մեքենայի ուղեկցությամբ հար
ձակումներ կատարեց 2 րդ վաշտը իսկ 5 րդ վաշտն ու
Բալուջայի ջոկատը դիրքավորվեցին և հսկեցին Նախ
իջևանիկի մոտակա բնագծերը Հակահարձակման
նախապատրաստության ժամանակ սակրավորներն
ականապատել էին նախապես որոշված հատվածնե
րը, որով նախադրյալներ ստեղծվեցին հայկական ու
ժերի հակահարձակման համար Ինքնապաշտպանու
թյան ուժերը համալրվելով նոր ստորաբաժանումնե

www.a-pdf.com



րով հակահարձակման անցան մարտագծի բոլոր ուղղություններով: Սակրավորների փեղադրած ականների վրա պայթեց հակառակորդի 20 ծանր փանկ, խփվեց մեկ փասնյակից ավելի ՀՄՄ Առգրավվեցին հետևակի մարտական 3 մեքենա, մեկ ռազմական «ՈւԱԶ» մակնիշի ավտոմեքենա, որը Սամվել Բաբայանն օգտագործեց պատերազմի ողջ ընթացքում Ասկերանի ճակատում պարբերաբար ընթացած մի քանի ամսվա (հունիս սեպտեմբեր) մարտերի արդյունքում ազատագրվեցին Ասկերանի շրջանի բռնազավթված մի շարք բնակավայրեր Սամվել Կարապետյանը հիշելով այս ռազմական գործողությունները պատմում է «Պետք է շեշտեմ, որ ամենակրիտիկական պահերին «Կոմանդույուշչին» կարողանում էր ճիշտ կողմնորոշվել՝ կանխազգալ, թե ո՛ր վաշտը որ ուղղությամբ հաջողություն կունենա Հաջողության գրավականներից մեկն էլ, թերևս դա էր Ասկերանի ուղղությամբ արձանագրելով հաջողություններ, մեր դիրքերն ամրապնդելով այդ պաշտպանական շրջանում Սամվել Բաբայանը մեզ այդտեղից տեղափոխում է Մարտակերտի շրջան, որտեղ հակառակորդն արդեն մոտեցել էր Չլդրան գյուղի սահմաններին »

Երբ հարցրել են Սամվել Բաբայանին թե Ասկերանի ռազմական գործողություններից հետո ինչ եզրահանգման է եկել նա պատասխանել է «Ասկերանի ճակատի ազատագրական մարտերի ժամանակ ես հասկացա թե ինչպես կկարողանանք ազատագրել Աղդամը Իսկ որ Աղդամը մենք կկարողանանք ազատագրել ես արդեն որևէ կասկած չունեի».

Սակայն մինչև Աղդամի ազատագրումը Սամվել Բաբայանին սպասում էին դժվարին, բայց հաղթական բազում մարտական գործողություններ 1992 թվականի հունիսին երբ նա ղեկավարում էր Ասկերանի շրջանի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերը հակառակորդն իր գլխավոր հարվածներն ուղղել էր հյուսիսարևելյան և հարավարևելյան շրջաններին Հակառակորդի զրահի առաջապահ գծում մոտ 150 միավոր զրահատեխնիկա ու տանկեր էին գործում որոնք կարճ ժամանակում կարողացան գրավել Ինքնապաշտպանության ուժերի հիմնական դիրքերը Հետագայում պարզվեց նաև որ 1992 93 թվականնե

www.a-pdf.com



րին հակառակորդը 3–4 անգամ ավելի սպառազինու
թյուն ուներ քան Ինքնապաշտպանության ուժերը

### Մարտակերտի շրջանի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերը (1992 թվականի հունիս – 1993 թվականի մարտ)



Արկադի Տեր-Թադևոսյան



Արտուշ Հարությունյան



Հայկազ Բաղմանյան

Հակառակորդի ձեռնարկած լայնամասշտաբ հար
ձակման հետևանքով Մարտակերտի և Շահումյանի
շրջաններում ստեղծվել էր ծանր դրություն: Իրավիճա
կը կարգավորելու և ինքնապաշտպանությունը կազմա
կերպելու համար Մարտակերտ գործուղվեցին Արկադի
Տեր Թադևոսյանը, Արկադի Հարությունյանը (1989 թ
ԽՍՀՄ գեներալ-մայոր) Սեյրան Օհանյանը (այժմ գե
ներալ գնդապետ ՀՀ պաշտպանության նախարար),
Վալերի Չիթչյանը այժմ գեներալ մայորներ Աստվա-
ծատուր Պետրոսյանը, Հայկազ Բաղմանյանը, Ժորա
Գասպարյանը, Ֆելիքս Գզողյանը և ուրիշներ: Հակա
ռակորդը ունենալով տեխնիկայի և կենդանի ուժի
առավելություն, հրի էր մատնել Շահումյանի ողջ շրջա
նը Մարտակերտի շրջանի դաշտային մասը Վտանգ
ված էր Մարտակերտ քաղաքը որը պարբերաբար
հրթիռահրետակոծվում էր ծանր հրետանիով և
«Գրադ» կայանքով: Հունիսի կեսերին Լենինավանի
Կարմիրավանի և Փափրավենդի կողմերից հակառա
կորդը հարձակվեց Մարտակերտ քաղաքի վրա: Հա
կառակորդի բազմաքանակ ուժերի դեմ կատաղի
մարտեր մղելուց հետո Ինքնապաշտպանության ու
ժերը հարկադրաբար թողեցին Մարտակերտը և նա
հանջեցին Ներքին Հոռաթաղի դիրքերը: Հակառա
կորդը Քելբաջարի շրջանից ներխուժեց Հաթերք գյու
ղը և հրկիզեց այն Հունիսի վերջին հակառակորդի
վերահսկողության տակ անցան Մոխրաթաղ Ներ
քին Հոռաթաղ, Դամրլու Կուսապատ Մեհմանա
Ջանյաթաղ գյուղերը Ռազմաճակատի գիծն անց
նում էր 1157–1093 1248 նշագծեր Չլդրան Վանք
Նարեշտար ուղղությամբ որտեղ ինքնապաշտպա
նական մարտեր էին մղել Առաջաձորի Կիչանի Վան
քի Վաղուհասի մարտակերտյան այլ ու հայաստա
նյան ՀՅԴ «Արաբո» «Աշտարակի երկրապահ»
Երևանի Արամ Մանուկյան» «Մեծն Տիգրան»

www.a-pdf.com





Երևանի Արաբո ջոկատի ազատամարտիկներ



Աշտարակի երկրապահ» ջոկատի ազատամարտիկներ

Ապարանի ջոկատի ազատամարտիկներ



www.a-pdf.com





Արաբկիր» ջոկատի
ազատամարտիկներ



Սև հովազ» ջոկա
տի ազատամար
տիկներ



Արարատի
«Արաբո» ջոկատի
ազատամարտիկներ

www.a-pdf.com







Մեծն Մուրադ» ջո կափի ազապամար փիկներ

Մեծն Տիգրան› ջո կափի ազապամար փիկներ



«Մուշ ջոկապի ազապամարփիկներ

www.a-pdf.com

Մեծն Մուրադ» ու բազմաթիվ ուրիշ կամավորական
ջոկատներ որոնք հետագայում ներառվեցին Պաշտ
պանական շրջանների կառուցվածքում



Ալբերտ
Բագեյան

Մարտակերտի և Շահումյանի շրջաններում հակա
ռակորդի աննախադեպ լայնածավալ հարձակումների
հետևանքով բռնագաղթեցին ավելի քան 40 հազար
խաղաղ բնակիչներ ավերվեցին և հրկիզվեցին մի քա
նի տասնյակ բնակավայրեր ԼՂՀ ում ստեղծվել էր
ծանր կացություն Հակառակորդի հարձակման հետե
վանքները վերացնելու հակառակորդի առաջխաղա
ցումը կանխելու, հանրապետությունում օրինականու
թյունն ու կարգուկանոնը վերականգնելու ռազմաքա
ղաքական իրավիճակն առողջացնելու նպատակով
1992 թվականի հունիսի 13 ին հրավիրվեց ԼՂՀ ԳԽ
նախագահության նիստ հունիսի 18 ին հայտարար
վեց արտակարգ դրություն և որոշվեց հանրապետու
թյան ողջ տարածքում անցկացնել մասնակի զորահա
վաք իսկ հակառակորդի կողմից զավթված տարածք
ներում սկսել պարտիզանական պայքար Նույն թվա
կանի ողջ ամռանը դրությունը մնում էր ծայրաստի
ճան լարված Վտանգված էր հանրապետության
ապագան Այդ ժամանակ շարունակվել են դիրքային



Նիկոլ Դուման
ջոկատի ազատա
մարտիկներ

www.a-pdf.com


ՇԱՀՈՒՄՅԱՆ
ՄԱՐՏԱԿԵՐՏ
Արկադի Տեր-Թադևոսյան
Աստվածատուր Պետրոսյան
Սեյրան Օհանյան
Վալերի Չիթչյան
Ժորա Գասպարյան
Կրտուշ Հայրապետյան
Հայկազ Բաղմանյան
Չլդրան
Արկադի Տեր-Թադևոսյան
Ժորա Գասպարյան
Հայկազ Բաղմանյան
Սեյրան Օհանյան
Վալերի Չիթչյան
Ֆելիքս Գզողյան
Կիչան
Վանք
Մաղավուզ
Թալիշ

www.a-pdf.com




# ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԼԱՅՆԱՄԱՍՇՏԱԲ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

(1992 թ հունիս հուլիս)

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Հրամանատարական կետ
- Պաշտպանության բանակի սա բարաժանումների հարձակման ուղղությունը
- Հակառակորդի ստորաբաժանումների հարձակման ուղղությունը
- ՊԲ-ի ստորաբաժանումների տեղաշարժ
- Պաշտպանության բանակի դիրքեր
- Հակառակորդի դիրքեր
- Խաղաղ բնակչության բռնագաղթի ուղղությունը
- Ռազմական տեխնիկա
- Պետական սահման
- Քաղաք
- Գյուղ
- Ավտոմայրուղի
- Գլխավոր ճանապարհներ
- Այլ ճանապարհներ
- Թունելներ, կամուրջներ
- Երկաթուղիներ և կայարաններ
- Լեռնագագաթ
- Գետ
- Լիճ, ջրամբար

ՄԱՍՇՏԱԲ 1:300 000

*Թիվ 2*

www.a-pdf.com





Գարեգին Նժդեհի ջոկատի ազատամարտիկներ

ամարտերը սակայն նախաձեռնությունը հիմնականում
մնում էր հակառակորդի կողմը Ավելին մեծաքանակ
ռազմական տեխնիկայով զանգվածային հարձակում
ների ենթարկվեցին նաև Մարտունու Ասկերանի
Հադրութի մի շարք բնակավայրեր

Սամվել Բաբայանը վերհիշելով մարտակերտյան
իրադարձությունները պատմում է «1992 թվականի
ամռանն էր եթե հիշողությունս ինձ չի դավաճանում
հուլիսի վերջին կամ օգոստոսի սկզբին Խորհրդակցե
լուց հետո որոշում կայացրինք որ ես գործուղվեմ Մար
տակերտ կարգավորելու այդտեղ առկա ծանր իրավի
ճակը: Ստեփանակերտի 4 րդ 3 րդ, 2 րդ և 5 րդ վաշտե
րի հետ տեղափոխվեցինք Մարտակերտ 1 ին վաշտը
մեզանից առաջ էր գնացել և պաշտպանում էր Ջանյա
թաղի տարածքը: Հակառակորդի ճնշման հետևանքով
շտաբն այդ ժամանակ հարկադրաբար Մարտակերտից
տեղափոխվել էր Չլդրան *(տե՛ս թիվ 2 քարտեզը)*: Առա
ջին երկու օրը ծանոթացա իրավիճակին: Ստեղծված
դրությունը ինչ խոսք, բարդ էր Շտաբում հրավիրված
խորհրդակցությունից հասկացա, որ Մարտակերտում
առաջապահ գիծ չկա Անհրաժեշտ էր հնարավորինս
սպերատիվ կերպով ստեղծել այդ գիծը բացի այդ
Մարտակերտի ճակատում գործող 6–7 հրամանատար
ների միջև չկար փոխհամաձայնություն Անհրաժեշտ էր
ներդնել հրամանատարական ուղղաձիգ ենթակայու
թյան կարգը որին և աստիճանաբար մենք հասանք»

www.a-pdf.com





‹Խաչակիրներ› ջո կապի ազատամարտիկներ

Դյուրին էր ի մի բերել երկատված, հուսալքված ջոկատներին և ստորաբաժանումներում կարգուկանոն հաստատել Բայց և այնպես Սամվել Բաբայանը ժամանակի ընթացքում մեծ ջանքերի շնորհիվ կարողացավ իրար կամրջել ինքնապաշտպանական ուժերը ջնջելով այդ ուժերն իրարից բաժանող խութերը Ահա թե այդ մասին ինչ է պատմում գեներալ գնդապետ Գուրգեն Դալիբալթայանը « Մեր այս մարտակերտյան պատմությունը շատ թերի կլինի եթե չհիշենք 1992 թվականի այն ծանր ժամանակներում տեղի ունեցած ու ասքի վերածված որոշ պատմություններ Այստեղ մեծ խանդաղատանքով են հիշում «Կոմանդույուշչի» Սամոյին Սամվել Բաբայանին որն այն ծանր օրերին եկավ Չլդրան խուճապի մատնված հրամանատարներին հավաքեց իրար գլխի և ասաց մենք պիտի հաղթենք Որովհետև կռվում ոչ միայն ուժով են հաղթում այլև խելքով ու հնարամտությամբ իսկ այս կռիվը գաղափարի ու մարտավարության կռիվ է Նրան հաջողվեց առանձին նաև միաբանվելու ոչ այնքան հակված ջոկատներին համախմբել ու բռունցք ստեղծել ռազմական գործողությունների պլաններ մշակել որոնցով հաջողվում էր հիմնականում ծուղակը գցել թշնամուն» (տես Հ Այվազյան «Հաղթանակի և վերհուշի ճամփաներով» էջ 54 Եր 2006 թ )

www.a-pdf.com



Հատկանշական է նաև Մեյրան Օհանյանի կարծի
քը «Երբ Մարտակերտում ընթանում էին թեժ մար
տեր Սամվել Անդրանիկի Բաբայանը լինում էր հան
գիստ կարողանում էր ճիշտ կշռադատել իրադրությու
նը և դժվար ու ծանր պայմաններում որոշել կարևորը
թե որ ուղղությամբ հարձակվել որ ուղղությունը
պաշտպանել որից կախված կլինի ընդհանուր պատե
րազմական իրավիճակը....» (Վարդգես Բաղրյանի 30
ամյա գեներալը հեռուստաֆիլմից 1995թ )

Ճշտվեցին խմբավորումների պաշտպանության և
հակահարձակման ուղղությունները 1992 թվականի
հուլիսի երկրորդ կեսին և օգոստոսին մեր ուժերն ու
նեին հետևյալ պաշտպանական բնագծերը 932 նշա
գիծ Ջանյաթաղ Գյուլաթաղ 1236 նշագիծ Ումուդ
լու–Չափար և Կուսապատ Մոխրաթաղ–Հակոբ Կա
մարի ուղղություններ որտեղ ինքնապաշտպանա
կան և հակահարձակողական մարտեր էին մղում 1
ին վաշտը (հրամանատար Աշոտ Ղուլյան) 4 րդը
Սամվել Կարապետյան) 2 րդը (Հրանտ Ծատրյան)
3 րդը (Աշոտ Խաչատրյան) 9 րդը (Վալերի Չիթչյան)
Մոխրաթաղ–Տոնաշեն ուղղություն «Ազատագրա
կան բանակը» (նախկին հրամանատարներ Լեոնիդ
Ազգալդյան և Վլադիմիր Բալայան), մարտակեր
տյան և հայաստանյան կամավորական ջոկատներ
Վերին Հոռաթաղ–Հարությունագոմեր Գետավան
ճակատում մարտական գործողություններին մաս
նակցում էին կամավորական ջոկատներ Երևանից
Արարատի Մասիսի Արտաշատի Մասիսի Թալի



Աշոտ
Ղուլյան



Լեոնիդ
Ազգալդյան



Վլադիմիր
Բալայան



Ազատագրական
բանակի» ազատա
մարտիկներ



Սերգեյ Չալյան

նի և այլ շրջաններից Այս ուղղությունում մարտական գործողությունների ընթացքը համակարգել ու ղեկավարել են Մեյրան Օհանյանը և Ֆելիքս Գզողյանը Գյուլիստանի ուղղությունում պարտիզանական խափանարար մարտեր է մղել ‹Եղնիկներ» ջոկատը (հրամանատար Սերգեյ Չալյան այժմ՝ գեներալ մայոր) ***(տե՛ս թիվ 3 քարտեզը)***: Հուլիս-օգոստոս ամիսները հաճառ և ծանր մարտերում մի շարք բնակավայրեր ձեռքից ձեռք են անցել ընթացել են տեղային նշանակության ինքնապաշտպանական կամ ազատագրական մարտեր



Արագածի շրջանի ջոկատի ազատամարտիկներ

«Սասունցիներ» ջոկատի ազատամարտիկներ



www.a-pdf.com


ՇԱՀՈՒՄՅԱՆ
ՄԱՐՏԱԿԵՐՏ
ՍԱՄՎԵԼ
ԲԱԲԱՅԱՆ
2065
2777
1045
606
630
704
1757
1307
1359
803
969
932
1248
093
1427
1050

www.a-pdf.com



# ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

(1992 թ. հուլիս օգոստոս)

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Հրամանատարական կետ
- Պաշտպանության բանակի ստորաբաժանումների հարձակման ուղղությունը
- Հակառակորդի ստորաբաժանումների հարձակման ուղղությունը
- ՊԲ-ի ստորաբաժանումների տեղաշարժը
- Պաշտպանության բանակի դիրքեր
- Հակառակորդի դիրքեր
- Ռազմական տեխնիկա
- Երկաթուղի
- Քաղաք
- Գյուղ
- Ավտոմայրուղի
- Գլխավոր ճանապարհներ
- Այլ ճանապարհներ
- Թունելներ, կամուրջներ
- Երկաթուղիներ և կայարաններ
- Լեռնագագաթ
- Գետ
- Ջրամբար
- Ս

ՄԱՍՇՏԱԲ 1: 300 000

*Թիվ 3*

www.a-pdf.com



1992 թվականի օգոստոսի առաջին փասնօրյակին
հակառակորդը շարունակում էր գնդակոծել ԼՂՀ
շրջանների սահմանային գոտիները Մարտունո
շրջանի ադրբեջանաբնակ Ամիրանլար Մուղանլու
Կուրապատկինո գյուղերի կրակակետերից հրթի
ռահրետակոծվել է Մարտունի շրջկենտրոնը իսկ Ֆի
զուլիի Ջաբրայիլի հենակետերից Կարմիր շուկայի
ձորակի և Հադրութի շրջանի սահմանամերձ բնակա
վայրերը Օգոստոսի 12 ին Քելբաջարի շրջանից հա
կառակորդը մեծաքանակ տեխնիկայով և հետևակով
հարձակվեց ու բռնազավթեց Գետավան Չափար
Ջարդախաչ Հաթերք գյուղերը Կրկին ծանր վիճա
կում հայտնվեց Մարտակերտի ճակատը Իրավիճա
կի կայունացումը օրախնդիր էր դարձել՝ Ռազմական
գործողությունների ծավալմանը զուգահեռ իրադրու
թյան պարտադրանքով 1992 թվականի օգոստոսի 13
ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահությունն ըն
դունեց «Ռազմական դրության մասին» օրենքը, ինչին
օգոստոսի 14 ին հաջորդեց Ինքնապաշտպանության
կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանի հրամանը
հանրապետության տարածքում 6 Պաշտպանական
շրջաններ (ՊՇ) ստեղծելու մասին Ըստ այդ հրամա
նի՝ յուրաքանչյուր Պաշտպանական շրջան պետք է ու
նենար կանոնավոր զինված ուժերին հատուկ կառուց
վածք Այդ նույն ժամանակվանից Պաշտպանական
շրջանների կառուցվածքում ներառվեցին հայաստա
նյան կամավորական ջոկատները որոնք մասնակցե
ցին գրեթե բոլոր ինքնապաշտպանական և ազատա



Արտաշատի շրջանի
ջոկատի
ազատամարտիկներ

www.a-pdf.com



գրական մարտերին 1992 թվականի օգոստոսի 15 ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ ստեղծվեց ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ) որպես իշխանության արտակարգ բարձրագույն մարմին. նրան վերապահվեցին գործադիր իշխանության ինչպես նաև «Ռազմական դրության մասին» օրենքի իրականացման լիազորությունները Կոմիտեի նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը Պաշտպանության պետական կոմիտեի կազմում ընտրվեց նաև Սամվել Բաբայանը

Այս մասին ահա թե ինչ է պատմում Ռոբերտ Քոչարյանը «... Ես երկու երեք լուծումներ առաջարկեցի ասելով որ դրանց ընդունման դեպքում պատրաստ եմ վերցնելու հետագա գործողությունների պատասխանատվությունը Ծրագիրը հետևյալն էր մտցնել ռազմական դրություն, ստեղծել Պաշտպանության պետական կոմիտե ..»



Վազգեն Մանուկյան

1992 թվականի այդ թեժ և հետագա ճգնաժամային օրերին հրաժարականներ տվեցին ԻՊՌՒ ի հրամանատար Արկադի Տեր Թադևոսյանը և ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը ով 1993 թվականին նշանակվեց ՀՀ պետնախարար 1992 թվականի սեպտեմբերին ՀՀ պետնախարարի, իսկ հոկտեմբերին նաև պաշտպանության նախարարի պաշտոնակատար նշանակվեց Վազգեն Մանուկյանը

Մինչ ԼՂՀ-ում իրագործվում էին կառուցվածքային նման փոփոխություններ հակառակորդը շարունակում էր իր լայնածավալ հարձակումները ռազմաճակատի տարբեր հատվածներում Ըստ հետախուզության և գերիների հայտնած տվյալների հակառակորդն իր ունեցած մարդկային ուժի և սպառազինության թվաքանակով գերազանցում էր Մարտակերտի Մարտունու Ասկերանի և Հադրութի ճակատներում հայկական ուժերին Ստեղծվել էր բարդ իրավիճակ ռազմաճակատի բոլոր ուղղություններում Բայց և այնպես գլխավոր վտանգը մնում էր հատկապես հյուսիսային և հյուսիսարևմտյան ուղղություններում. Այդ մասին Սամվել Բաբայանը հետագայում հիշում է. «Մենք առժամանակ կարողացել էինք շատ ուղղություններում կասեցնել հակառակորդի առաջխաղացումը և ազատագրել մի շարք բնակավայրեր Այդ օրերին ես մեկնեցի Երևան

www.a-pdf.com



Մի քանի օր անց Երևանում ինձ տեղեկացրին որ մե
րոնք հանձնել են դիրքերը և շրջապատումից խուսա
փելու համար ստիպված նահանջել են»

1992 թվականի օգոստոսի 15-ին հայկական հե
ռուստատեսությամբ ելույթ ունեցավ Վազգեն Սար
գըսյանը Նրա հեռուստազորակոչով և նախաձեռնու
թյամբ կազմավորվեց «Արծիվ մահապարտներ» հա
տուկ նշանակության գումարտակը (գլխավոր հրամա
նատար Վազգեն Սարգսյան ընդհանուր համակար
գող Աստվածատուր Պետրոսյան հրամանատար
Հովսեփ Հովսեփյան). «Արծիվ-մահապարտներ» գու
մարտակը տեղաբաշխվեց Վանք–Վաղուհաս ճանա
պարհին: Անձնազոհաբար մարտնչող ազատամարտիկ
ներին անծանոթ տեղանքը մարտավարության
առանձնահատկությունները հակառակորդի նպաս
տավոր դիրքերը սպառազինության պակասը նրանց
դժվարությունների առջև կանգնեցրին Հակառակոր
դը, օգտվելով այս հանգամանքից հարձակվեց մահա
պարտների կողմից վերահսկվող դիրքերի վրա Սամ
վել Բաբայանը գնահատելով ստեղծված իրավիճակը
կատարեց որոշակի վերադասավորումներ Այդ մասին
ինքն էլ պատմում է «Մարտակերտի և Հայաստանի
տարբեր ջոկատներ համախմբվել և Վանք ու Վաղու
հաս գյուղերի միջև ընկած հատվածում ստեղծել էին
պաշտպանական բնագիծ նպատակ ունենալով կան
խելու հակառակորդի առաջխաղացումը դեպի Առաջա
ձորի ձորակ Օգոստոսի վերջին և սեպտեմբերին մա
հապարտները տարատեղվեցին այդ հատվածում, ո րև
ծավալվեցին մարտական թեժ գործողություններ· Ըստ



Արծիվ-մահա
պարտներ›
գումարտակի ազա
տամարտիկներ
(առջևում աջից
Հովսեփ Հովսեփյան

www.a-pdf.com





Նորայր
Դանիելյան



Մուշեղ
Բաբայան



Կարեն
Բաբայան

նրանց մշակած պլանի մահապարտների գումարտա կը մարտական գործողություններ զարգացրեց Վանք Վաղուհասի ճակատներում Մղվեցին արյունա լի մարտեր Ավելի քան 70 զոհեր և վիրավորներ ունե նալուց հետո նրանք վկարողացան հաջողությունների հասնել այդ ճակատներում Ինձ հետ խորհրդակցելուց հետո որոշվեց որ ես զբաղվեմ այդ հատվածով Ծանո թանալով իրավիճակին մենք սփիպված մահապարտ ներին և Վանքի ջոկատի ազատամարտիկներին տե ղաբաշխեցինք տարբեր ստորաբաժանումների կազմե րում որտեղ էլ նրանք հերոսաբար մասնակցեցին Մարտակերտի և այլ շրջանների ինքնապաշտպանա կան ու ազատագրական մարտերին»:

1992 թվականի օգոստոսի վերջին հակառակորդի հաջողությունները Վաղուհասի ուղղությունում և հյուսիսարևմտյան ռազմաճակատում ղարաբաղյան ուժերի նահանջը նրան հնարավորություն տվեցին ակտիվանալու Դրմբոն–Գյուլաթաղ Ներքին Հոռա թաղ–Մոխրաթաղ և այլ հատվածներում

1992 թվականի օգոստոսի 24 ին Դրմբոն գյուղի մո տակայքում ինքնապաշտպանական մարտերի ժամա նակ զոհվեց Արցախի հերոս (հետմահու) Աշոտ Ղուլյանը

Ադրբեջանական հրամանատարությունը շարունա կում էր Քելբաջարից, Միրբաշիրից և Աղդամից լայնա ծավալ հարձակումները Իրավիճակն առանձնապես ծանր էր Վանք–Առաջաձոր Կիչան Ղազանչի Չլդրան Վաղուհաս. Ջանյաթաղ–Կուսապատ Հակոբ Կամարի Տոնաշեն և այլ ուղղություններում Այս ընթացքում փոփոխական հաջողություններով 1093 նշագիծ–Կի չան Սրխավենդ Չլդրան հատվածում մարտեր մղելով առաջացան Խաչենի գումարտակի 3 րդ վաշտը (հրա մանատար Մելսիկ Ալահվերդյան), 5-րդ վաշտը (հրա մանատար Վիտալիկ Բեդյան) Շուշիի առանձին (77 րդ) մոտոհրաձգային գումարտակը (հրամանատար Ժիրայր Սեֆիլյան) Կենտրոնական պաշտպանական շրջանի 1 ին գումարտակը (հրամանատար Հենրիխ Հակոբյան) Ջերմուկի ջոկատը (հրամանատար Մու շեղ Բաբայան) Առաջաձոր Վանք–Հարությունագո մեր–Վերին Հոռաթաղ ուղղությունում Կենտրոնական պաշտպանական շրջանի 2-րդ գումարտակը (հրամա նատար Գագիկ Սարգսյան) 71 րդ առանձին մոտո


ՆԱՓԹԱԼԱՆ
ՇԱՀՈՒՄՅԱՆ
2065
1757
1359
1248
ՄԵՅՐՈՒՆ ՕՀԱՆՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ԱՐԱՊԵՏՅԱՆ
427

www.a-pdf.com

www.a-pdf.com




# ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

(1992 թ. օգոստոս-հոկտեմբեր)

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- [illegible]
- Պաշտպանության բանակի ստորաբաժանումների հարձակման ուղղությունը
- Հակառակորդի ստորաբաժանումների հարձակման ուղղությունը
- Պաշտպանության բանակի դիրքեր
- Հակառակորդի դիրքեր
- Ռազմական տեխնիկա
- Պետական սահման
- Քաղաք
- Գյուղ
- Ավտոմայրուղի
- Գլխավոր ճանապարհ
- Այլ ճանապարհներ
- Թունելներ,կամուրջներ
- Երկաթուղիներ և կայարաններ
- Լեռնագագաթ
- Գետ
- Լիճ, ջրամբար
- Անտառ

ՄԱՍՇՏԱԲ 1: 300 000

*Թիվ 4*

www.a-pdf.com





Սամվել Կարապետյանը Մարտակերտում

հրաձգային գումարտակը (հրամանատար Կարեն Բաբայան), Խաչենի գումարտակի (հրամանատար Վիտյա Մանգասարյան) 1 ին վաշտը (հրամանատար Յուրի Հակոբյան) Դրըմբոն Մեծշեն–782 նշագիծ Դրմբոն–Հակոբ Կամարի Տոնաշեն 1359 նշագիծ Մոխրաթաղ ճակատներում Կենտրոնական պաշտպանական շրջանի գումարտակները Ջանյաթաղ Գյուլաթաղ–Դամըրլու–Կուսապատ և 932 նշագիծ 1248 նշագիծ հատվածներում Մարտակերտի պաշտպանական շրջանի (հրամանատար Նորայր Դանիելյան) մյուս ստորաբաժանումները ***(տե՛ս թիվ 4 և թիվ 5 քարտեզները)***

Ծանր պաշտպանական մարտերից հետո Ինքնապաշտպանության ուժերի ստորաբաժանումները և կամավորական ջոկատները հարկադրաբար զիջեցին դիրքերն ու նահանջեցին դեպի Չլդրանի բարձունքները Սեպտեմբերի սկզբներին Ինքնապաշտպանության ուժերը մի շարք հակահարձակումներով Ասկերանի և Մարտունու ուղղություններում տիրեցին նպաստավոր բնագծերի ստիպելով հակառակորդին թուլացնել ճնշումը Մարտակերտի և Լաչինի միջանցքի ուղղություններում Մասնավորապես աշնան սկզբներին ռազմագործողությամբ ազատագրվեցին Ասկերանի շրջանի դեռևս հունիսին բռնազավթված Դահրավ Սառնաղբյուր Արանզամին Փրջամալ Նախիջևանիկ Խրամորթ, ինչպես նաև հակառակորդի հենակետերի վերածված Ավդալ և Գյուլաբլու գյուղերը ինչն ամրապնդեց Ինքնապաշտպանության ուժերի դիրքերը Ասկերանի ու Մարտունու պաշտպանական շրջանների հարակից ճակատում Նույն ժամանակամիջոցում ազատագրված դիրքերը և Մաճկալաշեն գյուղը ենթարկվեցին հրետակոծության և հակահարձակման Համառ մարտերից հետո Ինքնապաշտպանության ուժերին հաջողվեց կասեցնել հակառակորդի առաջխաղացումը և վերահսկողության տակ պահել Մաճկալաշեն գյուղն ու դրան հարող տարածքները



Վիտյա Մանգասարյան



Հենրիխ Հակոբյան

www.a-pdf.com



1992 թվականի սեպտեմբերին Սեյրան Օհանյանի ծանր վիրավորվելուց հետո, հյուսիսային ռազմաճակատի պատասխանատու նշանակվեց Կենտրոնական պաշտպանական շրջանի հրամանատար Սամվել Կարապետյանը: Ինքնապաշտպանության ուժերի շտաբը տեղակայվեց Առաջաձորում· Սամվել Կարապետյանը պատմում է. «Մարտակերտի ճակատում իրավիճակը ծանրագույնն էր Մի առավոտ արթնացանք և տեսանք ոչ մի հրամանատար չկա այդ ուղղությամբ մի 3–4 հրամանատար եղել են և զարմանալիորեն նրանք չկային այդտեղ. «Կոմանդույուշչին» առավոտյան գալիս է այդտեղ և երբ պիտի խփեինք ու վերցնեինք Չլդրանը ոչ ոքի չէինք գտնում... «Կոմանդույուշչին» ինձ նշանակեց Մարտակերտի ճակատի հրամանատար Պահն ինձ համար շատ պատասխանատու էր ես գտնում էի որ անհնար է մի վաշտով կանգնել հակառակորդին դեմ հանդիման իսկ Սամվելն ասում էր «Ուրիշ ելք չկա, պիտի կանգնես ու հրամանատարությունը վերցնես քո ձեռքը» Ես խնդրեցի, որ ինձ համար 10 15 կմ անոց մի հատված առանձնացնի, սակայն արդեն որոշված էր. ես նշանակված էի այդ ճակատի հրամանատար, իսկ հակառակորդը օրն առնվազն 3 անգամ հարձակվում էր Ընդհանրապես ես գտնում եմ որ հրամանատարը պիտի լինի խիստ և պահանջկոտ այդպիսին էր մեր հրամանատարը Եթե որևէ հրամանատար չէր կատարում իր առաջադրանքը ապա ինքը բացատրություն էր պահանջում նրանից Ուրիշները չգիտեմ ինչպես ես խոսում եմ իմ փոխարեն եթե իմ առջև խնդիր է դրել ապա անպայման պիտի կատարեի ու կատարել եմ... Առաջին հերթին ես նրան ընդունել եմ ոչ թե որպես հրամանատարի այլ որպես լավագույն ընկերոջ և եթե նրա դրած խնդիրները, առաջադրանքը չկատարեի ապա ինչպե՞ս պիտի նայեի նրա աչքերին Ես չեմ կարողանա պատկերացնել թե ստեղծված նման իրավիճակից մեկ ուրիշ հրամանատար կկարողանա՞ր ելք գտնել, թե՞ ոչ. շատ հարցեր էին ծագում շատ փակ ուղիներ էր բացում ու միշտ էլ ելք գտնում էր»

Աշնան վերջին Ինքնապաշտպանության ուժերը գրոհներ ձեռնարկեցին Մարտակերտի հյուսիսարևելյան հատվածի ուղղությամբ ազատագրելով Չլդրանը

ապա Վաղուհաս, Հարությունագոմեր և Կոճողոտ գյու
ղերը վերահսկողության փակ վերցրին Թար
թառ Մարտակերտ–Քելբաջար ավտոմայրուղին Նույն
օրը Դրմբոնի ուղղությունից ազատամարտիկները
հարձակողական մարտերով ընդհուպ մոտեցան Թար
թառ–Մարտակերտ մայրուղուն և հրնթացս մի քանի
անգամ գնդակոծեցին վառելանյութ տեղափոխող ավ
տոշարասյուները պայթեցրին մեկ փասնյակի հասնող
բենզատարներ Ըստ Բաքվի աղբյուրների 1992 թվա
կանի հունիս–դեկտեմբեր ամիսների ընթացքում Ադրբ
բեջանը տվել է շուրջ 5 հազար զոհ և 18 հազար վիրա
վոր կորցրել 115 տանկ 20 ինքնաթիռ և ուղղաթիռ

Բաբայանը հասկանում էր որ արձանագրված հա
ջողությունները ժամանակավոր են Վերհիշելով այդ
ժամանակվա իրադարձությունները Սամվել Կարա
պետյանը պատմել է. «Մեջտեղ եկավ Լաչինի միջանց
քի հարցը Քելբաջարի և Կուբաթլուի կողմերից հա
կառակորդը փորձում էր միանգամից փակել ճանա
պարհը Ընդհանրապես որ ուղղությունում բարդա
նում էր վիճակը «Կոմանդոյուշչին» գալիս էր այդտեղ
և նախաձեռնությունը վերցնում իր ձեռքը Եվ պիտի
ասեմ նաև որ բոլոր հրամանները սպանում էինք ան
միջապես իրենից Խնդիր էր դրվում այդ ճակատը պա
հելու մինչև գարուն իսկ գարնան համար նա նախա
պատրաստել էր անհրաժեշտ քայլեր այդ ուղղությամբ
Կոմանդոյուշչին» ասում էր մինչև Քելբաջարը մեջ
տեղից չվերանա մենք հանգիստ չենք ունենալու»

Հետախուզության տվյալներով հակառակորդը
մեծ ուժեր էր կուտակել Քելբաջարում և Աղդամում:
Այժմ հարկավոր էր փոխել մարտավարությունը՝
Անհրաժեշտ էր թույլ չտալ որ թշնամին դառնար
իրադրության տերը պատմում է Բաբայանը ու թե
լադրեր իր կամքը Անհրաժեշտ էր անհապաղ փոխել
մարտավարությունը և գտանք որ Մարտակերտի
ճակատում հակառակորդի ուժերը պետք է տարան
ջատվեն ու տեղափոխվեն այլ ուղղություններ որտեղ
նրանց հարթավայրաբնակ և այլ քաղաքաբնակ զինվոր
ների համար բնակլիմայական պայմանները (բարձրա
դիր տեղանք ցածր ջերմաստիճան և այլն) աննպաստ
էին Եվ գտանք որ միակ տարբերակը Ֆինգայի Լաչի
նի՝ ուղղությունում գրոհներ ձեռնարկելն է՝ Մարտակեր



Մարգիկ
Գասպարյան



Վլադիմիր
Կասյան

պում ամրացնելով պաշտպանական դիրքերը Լաչինի ուղղություն տեղափոխեցինք 8 րդ, 7 րդ, Բերդաձորի պարեկային և այլ վաշտեր Մարտիկ Գասպարյանի ընդհանուր ղեկավարությամբ և դեկտեմբերին սկսեցինք հարձակողական գործողությունները»

Այդ ուղղությունում էին տեղաբաշխված նաև հարավային զորախումբը և հայաստանյան կամավորական մի շարք ջոկատներ Հակառակորդը, սթափված մեծ ուժեր հանելով Մարտակերտից Քելբաջարով դրանք տեղափոխեց Լաչին Հետախուզության տվյալներով պարզվեց, որ Մարտակերտից տեղափոխված հակառակորդի բանակախմբի ուժերը գերազանցում են հայկական ստորաբաժանումների կենդանի ուժի և սպառազինության առկա հնարավորությունները Հակառակորդը իրետանային նախապատրաստությունից հետո անցավ լայնածավալ հարձակումների· Կապանի մարտերը շարունակվեցին օրեր Բախումների սկզբնափուլում հակառակորդի գերազանցող ուժերի հարձակումներից հայկական ուժերը կորուստներով հետ քաշվեցին Ղոչազ (Հոչանց) լեռան և այլ ուղղություններ՝ փորձելով ամրանալ լեռնային բնակավայրերում: Իրադարձությունների զարգացումն ակնհայտորեն դասավորվում էր ոչ հայկական ուժերի օգտին Հակառակորդը համառորեն ձգտում էր ճեղքել հայկական ուժերի պաշտպանությունը և վերահսկողություն հաստատել միջանցքի ու շրջակա տարածքների վրա Դեկտեմբերի երկրորդ կեսին շարունակվող ցերեկային մարտերը երեկոյան դադարել են, իսկ դրան հաջորդող օրերին գլխավորապես ընթացան փոփոխակի հաջողություններով Հակառակորդը մարտի մեջ նոր ուժեր ներգրավեց ստեղծելով վտանգավոր հենակետեր Սամվել Բաբայանը որոշեց ուժեղացնել հակառակորդին հասցվող հարվածները և վերլուծելով հարձակման թույլ և ուժեղ ուղղությունները պաշտպանական խոցելի հատվածները սկսեց ձեռնարկել հանկարծահաս հարձակումներ· Արդյունքում հակառակորդը զիջեց կարևոր դիրքերը և նահանջեց հարավային ուղղությամբ Մարտական գործողությունների ժամանակ հակառակորդը կորցրեց 4 տանկ մեկ տասնյակի հասնող այլ զրահատեխնիկա չորս տասնյակից ավելի զինվորի և սպայի Հայկա

www.a-pdf.com

www.a-pdf.com



կան կողմից նույնպես եղան զոհեր և վիրավորներ Ֆինգայի ուղղությունում ձեռնարկված մարտական գործողությունների արդյունքում վերահաստատվեց Ստեփանակերտ-Գորիս մայրուղով անխափան երթևեկությունը «Բացի այդ – ասում է գեներալը փոր ձեցի զինել մեր վաշտերը խմբերը, որոնք Մարտակերտի ճակատում մարտեր էին մղում».

Ֆինգայի ուղղությունում դեկտեմբերյան մարտերի ժամանակ ադրբեջանական հրամանատարության սարտավարական պլանների ձախողումը հետևանք էր այն բանի որ նրանք թերագնահատեցին Ինքնապաշտպանության ուժերի հնարավորությունները այդ թվում ազատամարտիկների արհեստավարժությունը և նրանց կողմից օպերատիվ պլանի արդյունավետ իրագործումը Սամվել Բաբայանի հաշվարկները ճիշտ դուրս եկան «Իմ առաջարկած տարբերակը ընդհանուր առմամբ ճիշտ էր»,– ասել է գեներալը

Այդ ռազմական գործողություններից հետո 1992 թվականի դեկտեմբերի վերջին և 1993 թվականի հունվարի սկզբին ռազմաճակատի բոլոր ուղղություններում նկատելի էր մարտական գործողությունների ակտիվության անկում

1993 թվականի հունվարի երկրորդ կեսից սկսած ադրբեջանա ղարաբաղյան հակամարտությունը թևակոխեց շրջադարձային և որակական նոր փուլ Ինքնապաշտպանության ուժերը ձեռնամուխ եղան ԼՂՀ ի շուրջ անվտանգության գոտու ստեղծմանը Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարը քայլ առ քայլ գործողություն առ գործողություն 1–1 5 ամսվա ընթացքում մշակում էր ազատագրական մարտերի օպերատիվ պլանները: Իր յուրաքանչյուր պլանը պարզ էր ու հստակ և սրանում էր նաև դրա անդիմադարձ ուժը: Գլխավոր դժվարությունն իր մտահղացումները գործնականում իրականացնելու մեջ էր Ինքը գիտեր, որ հակառակորդն ուժերի զգալի գերակշռություն ունի գրեթե բոլոր ճակատներում

1993 թվականի հունվարի երկրորդ տասնօրյակին հակառակորդը Մարտակերտի ռազմագոտում ուժեղ հենակետ ստեղծելու և լայնածավալ հարձակումներ ձեռնարկելու ընդհանուր նախաձեռնությունը խլելու համար այդ ուղղություն տեղափոխեց իր բանակի

www.a-pdf.com



Նիկոլայ Բաբայան



Գուրգեն Մելիքյան

703 րդ մոտոհրաձգային բրիգադի ծովային հետևակազորի ներքին զորքերի, Թարթառի աշխարհագորային գումարտակի զորախմբերը Սամվել Բաբայանը համոզված էր որ հակառակորդի նման առավելությունը կարելի է հաղթահարել միայն հանկարծահասությամբ մանևրայնությամբ և թիկունքից հարձակումների միջոցով գերակշռության հասնելով ինչպես ինքն է ասում «հակառակորդի ծոծրակին մշտապես զգալ տալով մեր ներկայությունը» Սամվել Բաբայանը կարողացավ շրջանառությունից հանել այսպես կոչված «տեղային պաշտպանության› հոգեբանությունը երբ տեղացի ազատամարտիկը հակված էր մնալու իր գյուղում և մասնակցելու գյուղի լավագույն դեպքում իր շրջանի ինքնապաշտպանությանը

Սամվել Բաբայանը գործում էր հանգամանորեն մշակված պլաններով և հաշվարկներով ինչպես շախմատային պարտիայում Իր իսկ նախաձեռնությամբ ուղենշվեցին կադրային քաղաքականությունը, կառավարման զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարական կազմի ընտրության ու տեղաբաշխման գործը Ստեղծվեցին բանակային համապատասխան ծառայությունները, որոնք իրականացնում էին ներքևից վերև կենտրոնացված ենթակայության գործընթացը Ռազմական գործում իրականացրեց լուրջ բարեփոխումներ (տես նաև Ս Հասրաթյան «Ղարաբաղյան պատերազմ» Եր., 2001թ.). Սամվել Բաբայանը ձեռնամուխ եղավ հակաօդային պաշտպանության (հրամանատարներ Արմեն Գրիգորյան, Նիկոլայ Բաբայան) կատարելագործմանը առկա միջոցները և տեխնիկան արդիականացնելով Առաջնահերթ խնդիր էր դարձել ռադիոտեղորոշիչ կայաններ և կապի մեծաքանակ միջոցներ ունենալը՝ Այս խնդրի լուծման գործում անգնահատելի ներդրում ունեցավ Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի ներկայիս (2008 թվական) դեկան գնդապետ Գուրգեն Մելիքյանը Նրա ձեռք բերած հազարավոր «Ալինկո»-ների օգնությամբ մշտապես հաղորդվող հրաման տեղեկություններով ապահովվում էին ստորաբաժանումների սերտ համագործակցությունը և կենտրոնական շտաբից ղեկավարումը Բացի այդ ապակողմնորոշող ռադիոհեռախոսային տեղեկու

www.a-pdf.com



թյուններից շատ դեպքերում հակառակորդը շփոթու
թյան մեջ էր ընկնում Ռազմական գործողությունների
հաջողության մեջ զգալի դերակատարություն ունե
ցավ նաև հրետանային ծառայությունը Հրետանա
վորների պատրաստման գործում մեծ էր գեներալ-լեյ
տենանտ Քրիստափոր Իվանյանի անմնացորդ
ավանդը Ստեղծված հրետանային ուսումնական
կենտրոնում սովորեցին բազմաթիվ հրետանավորներ
ովքեր ռազմական գործողությունների ժամանակ աչ
քի ընկան ոսկերչական ճշգրտությամբ Ամուր հիմքե
րի վրա դրվեց նաև զրահատանկային ծառայությունը
ի դեմս զրահատեխնիկայի նորոգման գումարտակի

Պատերազմի ամբողջ ընթացքում բացառիկ կա
րևորություն ունեցավ նաև ռազմաբժշկական ծառա
յությունը դրա հիմնադիր Վալերի Մարությանի իսկ
1993 թվականից Սամվել Գևորգյանի ղեկավարու
թյամբ Այս ամենի առկայության պայմաններում ավե
լի նպատակասլաց ու կազմակերպված բնույթ ստա
ցան Ինքնապաշտպանության ուժերի գործողություն
ները բոլոր այդ թվում Մարտակերտի ճակատներում

Մարտական գործողությունները զարգացնելով
Մարտակերտի հարավարևմտյան և կենտրոնական
շրջաններում՝ Սամվել Բաբայանը խնդիր դրեց իրակա
նացնելու Սարսանգի ամբողջ հիդրոհանգույցի ազա
տագրման գործողությունը Գործողության իրականա
ցումը հանձնարարվեց Կենտրոնական Ասկերանի
Մարտակերտի պաշտպանական շրջանների ստորա



Քրիստափոր
Իվանյան



Սամվել
Գևորգյան



Սարսանգի
ջրամբարը



Հեփախուզական ջո կապը Մարփակեր-փի շրջանում

բաժանումներին Հակառակորդը նկափի ունենալով հիդրոհանգույցի կորսփի իր համար խիսփ աննպասփ հեփևանքները այսփեղ փեղափոխեց մեծաքանակ զինուժ Բացի այդ Ինքնապաշփպանության ուժերի փեխնիկայի առաջխաղացումը կանխելու նպափակով հակառակորդը պայթեցրեց դեպի հիդրոհանգույց փա նող ճանապարհները Առաջացած նման դժվարու թյունները հաղթահարելու համար Սամվել Բաբայանն օգփագործեց մարփավարության փարբեր հնարքներ սփորաբաժանումների արագ և փոխգործակցված փե ղաշարժեր թիկունքային անսպասելի հարվածներ և այլն Պաշփպանական շրջանների սփորաբաժանում ների համագործակցությունը, ճակափ թիկունք արագ փեղաշարժերը հակառակորդի հրամանափարությանը զրկեցին մարփական գործողությունները վերահսկելու

Ակնալիճ» ջոկափի ազափամարփիկներ





ՆԱՖԹԱԼԱՆ
ՇԱՀՈՒՄՅԱՆ
2065
2777
606
704
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՎԻՏԱԼԻ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
1298
1236
1307
1359
803
932
ՍԱՄՎԵԼ
ԲԱԲԱՅԱՆ
630
142
157


www.a-pdf.com

www.a-pdf.com




# ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

(1993 թ. հունվար մարտ)

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Հրամանատարական կետ
- Պաշտպանության բանակի ստորաբաժանումների հարձակման ուղղությունը
- Հակառակորդի ստորաբաժանումների հարձակման ուղղությունը
- ՊԲ-ի ստորաբաժանումների տեղաշարժը
- Պաշտպանության բանակի դիրքեր
- Հակառակորդի դիրքեր
- Ռազմական տեխնիկա
- Նտակյան սահման
- Քաղաք
- Գյուղ
- Ավտոմայրուղի
- Գլխավոր ճանապարհներ
- Այլ ճանապարհներ
- Թունելներ, կամուրջներ
- Երկաթուղիներ և կ/ս կայարաններ
- Լեռնագագաթ
- Գետ
- Լիճ, ջրամբար
- Անտառ

ՄԱՍՇՏԱԲ 1: 300 000

Թիվ 5

www.a-pdf.com



հնարավորությունից նրա շարքերում ահագնացավ
խուճապը ճեղքվեց պաշտպանությունը և 1993 թվա
կանի մարտի սկզբին արցախյան ուժերը վերահսկո
ղության տակ առան Սարսանգի հիդրոհանգույցը Հի
շելով այդ ժամանակների մարտական գործողություն
ները Սամվել Բաբայանն ասել է. «Հաջողություններ
գրանցելով Մարտակերտի առանձին ուղղություննե
րում դուրս եկանք Սարսանգի հիդրոհանգույց. Ան
հրաժեշտություն առաջացավ գրավելու ‹Կոբրա» բար
ձունքը հասնելու Մարտակերտի ներքևի հատվածնե
րին և ամրապնդվելու այդտեղ փոքր ուժերով բայց
արդյունավետ պաշտպանություն կազմակերպելով
Ֆինգայում մեր ուժերը շարունակել են մարտեր մղել և
դրանով փորձել ենք հակառակորդին ստիպել որ իր
որոշակի ուժերով մնա այդտեղ»

1993 թվականի հունվար փետրվար մարտ ամիս
ներին ըստ հրամանատարի հրամանի 1285–1093
նշագծեր Սրխավենդ–Կիչան–Առաջաձոր Վանք և
Չլդրան Պողոսագոմեր–Կոճողոտ Հարությունագո
մեր Վաղուհաս ուղղություններով և հյուսիս արևել
քում մարտնչել են 1 ին 3 րդ վաշտերը 77 րդ 71 րդ
ԱՄՀԳ-ները Խաչենի գումարտակը (դրա կազմում
Չլդրանի Առաջաձորի վաշտերը) Վանքի Ջերմուկի և
հայաստանյան այլ կամավորական ջոկատներ Կենտ
րոնական Մարտակերտի պաշտպանական շրջանների
մյուս ստորաբաժանումները Այդ մարտերի ընթացքում
ɔատերի հետ աչքի է ընկել նաև Կենտրոնական պաշտ
պանական շրջանի երրորդ մոտոհրաձգային գումարտա
կը (հրամանատար Սամվել Հարությունյան 1970–93)
Փետրվարի վերջին և մարտի սկզբին Ինքնապաշտպա
նության ուժերի և դրանց կազմում հայաստանյան կա
մավորական ջոկատների ազատամարտիկները հարձա
կումներ ձեռնարկեցին Դրմբոն–Մեծշեն Հակոբ Կամա
րի և Ջանյաթաղ Կուսապատ–Մոխրաթաղ ուղղություն
ներում Հայկական ուժերը կարողացան վերահսկել
Մարտակերտ-Քելբաջար մայրուղու ռազմավարական
նշանակության հատվածները և որոշակի մարտական
դիրքեր. Պարտիզանական և խափանարար գործողու
թյուններ էր իրականացնում «Եղնիկներ› ջոկատը (հրա
մանատար Սերգեյ Չալյան) ***(տե՛ս թիվ 5 քարտեզը)***



Սամվել
Բաբայան



Սամվել
Հարությունյան

## Քելբաջարի ազատագրումը



Նորատ
Տեր Գրիգորյանց



Անատոլի
Զիննիչ

1993 թվականի մարտի վերջին իրավիճակը
կտրուկ սրվել էր հյուսիսարևմտյան ճակատում
Ադրբեջանի Լաչին քելբաջարյան խմբավորումը հյու
սիսարևմտյան և հարավարևելյան ուղղություններից
սկսեց թիկունքային հուժկու հարձակողական գործո
ղություններ ծավալել Մարտակերտի և Լաչինի
շրջաններում տեղակայված հայկական ուժերի
նկատմամբ Ինքնապաշտպանության ուժերի հրա
մանատարության առջև խնդիր դրվեց վնասազերծե
լու Քելբաջարում և Լաչինում տեղակայված կրակա
կետերն ու ջախջախելու Լաչին-քելբաջարյան խմբա
վորումը. Ինքնապաշտպանության ուժերի 28 ամյա
հրամանատար փոխգնդապետ Սամվել Բաբայանը
գիտակցում էր ձեռնարկվող ռազմական գործողու
թյան բարդությունը Այստեղ ամեն ինչ դրվում էր զո
հասեղանին բանակի վարկանիշը արցախահայու
թյան անվտանգության ապահովման խնդիրը և, ին
չու՞ չէ, իր հրամանատարի հեղինակության հարցը
Նա հասկանում էր որ այս ծայրահեղ բարդ թնջուկը
լուծելու համար յուրաքանչյուրից պահանջվում են ու
ժերի գերլարում բարձր կարգապահություն ռազմա
վարության հմտություն և ինքնազոհության պատ
րաստակամություն. Այս կապակցությամբ նա ասել է
Բայց ես գիտակցում էի, որ ուրիշներից այդ բոլորը
կարող է պահանջել նա ով ինքն ունի դրանց խոր
զգացումը Չկա մեկը որ ասի թե Սամվել Բաբայա
նը երբևէ խախտել է կարգ ու կանոնը հայրենիքի
հանդեպ իր պարտականությունները կատարելիս



Սամվել Բաբայանը
և Քրիստափոր
Իվանյանը

www.a-pdf.com

www.a-pdf.com

# ՔԵԼԲԱՋԱՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ (1993թ մարտի 27 ապրիլի 1 )




Թիվ 6

ՄԱՍՇՏԱԲ 1 500 000

Դրմբոնում տեղակայված կենտրոնական շտա
բում դիտարկվեցին ռազմական գործողությունների
ուղղությունների հնարավորությունները և ընթացիկ
զարգացումների հուսալիությունը Ստուգվեցին դիր
քերը սպառազինության քանակը ազատամարտիկ
ների բարոյամարտական վիճակը Վերլուծվեցին հե
տախուզության ռադիոհեռախոսային ալիքակալման
տվյալները Ստուգումներից ու վերլուծություններից
հետո զորահրամանատարը և շտաբայինները եկան
հուսադրող եզրահանգման Զորահրամանատարը
ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի նախա
գահ Ռոբերտ Քոչարյանի Ինքնապաշտպանության
կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանի Պաշտպա
նական շրջանների հրամանատարների (Նորայր Դա
նիելյան Մոնթե Մելքոնյան) մասնակցությամբ
քննարկեց ռազմական գործողության օպերատիվ
պլանը Պլանին հավանություն են տվել նաև Հայաս
տանի Հանրապետության պաշտպանության նախա
րարի պաշտոնակատար Վազգեն Մանուկյանը ՀՀ
զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ գեներալ լեյ
տենանտ Նորատ Տեր Գրիգորյանցը Գուրգեն Դալի
բալթայանը Քրիստափոր Իվանյանը ԻՊՈւ ի
շտաբի պետ Անատոլի Զինևիչը և ուրիշներ.

Վազգեն Մանուկյանը հիշում է «Ես նրան (Հա
յաստանի Հանրապետության նախագահի Լևոն Տեր
Պետրոսյանին ՀԽ) զեկուցեցի այդ օպերացիայի
փոքր մասը միայն, և ստանալով նրա համաձայնու
թյունը մենք արեցինք ավելին»

Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարը
կարճ ժամկետում վերախմբավորեց ու վերաբաշխեց
Պաշտպանական շրջանների և կենտրոնական ենթա
կայության ուժերն ու ռազմատեխնիկական միջոցնե
րը. Մարտակերտում փոքրաթիվ ուժերով բայց ար
դյունավետ պաշտպանություն կազմակերպելուց հե
տո Ֆինգայում չթուլացնելով հարձակումների թափը
Ինքնապաշտպանության ուժերը 1993 թվականի մար
տի 27 ին կանխարգելիչ հարվածներից ու հրետանա
յին նախապատրաստությունից հետո ձեռնարկեցին
Քելբաջարի շրջանի հենակետերի վնասազերծման և
Լաչինի շրջանի հակառակորդի վերահսկողության
տակ մնացած տարածքների ազատագրման ռազմա



Լևոն
Տեր Պետրոսյան

Ռաֆայել Սայիյան («Միրուք Ռաֆո աջից)





Արկադի Շիրինյան



Արմեն Աբրահամյան



Յուրի Հակոբյան

կան գործողությունը մի քանի ուղղություններով ***(տես թիվ 6 քարտեզը)*** Հյուսիսային՝ Օմարի ուղղությունում հարձակումներն իրագործում էին Մարտակերտի պաշտպանական շրջանի (հրամանատար Նորայր Դանիելյան) գումարտակները (հրամանատարներ Արկադի Շիրինյան, Ռաֆայել Սայիյան և Պաշտպանական շրջանի հրամանատարի տեղակալ ուղղության համակարգող Աշոտ Առուշանյան) Մարտակերտ–Քելբաջար ճանապարհի (դեպի թունել) ուղղությունում՝ Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար Մոնթե Մելքոնյանի ղեկավարությամբ գործող խմբավորումը, որի կազմում էին Էդիլուի ձորակում գործող Էջմիածնի կամավորական ջոկատի 100 ազատամարտիկների խումբը և Հադրութի մի առանձին ջոկատ (ընդհանուր հրամանատար Արմեն Աբրահամյան, այժմ գեներալ մայոր), կենտրոնական ենթակայության խափանարար հարվածային խումբը հայաստանյան կամավորական միացյալ ջոկատը (հրամանատար Սամվել Հովսեփյան «Աղմիբալ Սամվել»): Վանք–Նարեշտար–Լաչին–Քելբաջար ճանապարհի ուղղությունում գործում էին Վանքի գումարտակը (հրամանատար Յուրի Հակոբյան) Սիսական» ջոկատը (հրամանատար Աշոտ Մինասյան) Կիռխնիզ Ալյազի ուղեհատվածում Ասկերանի պաշտպանական շրջանի (հրամանատար Վիտալի Բալասանյան) Կարեն Արզումանյանի գումարտակը

www.a-pdf.com





Մոնթե Մելքոնյան ձախից



Մարտիկ Գասպարյան



Արշավիր Ղարամյան

իսկ Ֆիզուլու և Թիգիկ 1 Թիգիկ 2 ուղղություննե րում 35 րդ գումարտակը (հրամանատար Արշավիր Ղարամյան) 53 րդ գումարտակը (հրամանատար Մարտիկ Գասպարյան), 51-րդ գումարտակը (հրամա նատար Վլադիմիր Կանյան) հարավային զորախում բը հայաստանյան կամավորական ջոկատները ՀՀ ներքին գործերի նախարարության ներքին զորքերի

Էջմիածնի կամավո րական ջոկատի մի խումբ ազատամար տիկներ



www.a-pdf.com





Սիսական»
ջոկատի ազատա
մարտիկներ (վերևից
կենտրոնում Աշոտ
Մինասյան)

գումարտակը (ընդհանուր հրամանատար Հմայակ
Հարոյան, այժմ գեներալ մայոր) հյուսիսարևմտյան
հատվածում հյուսիսային զորախմբի կազմավորում
ները և հայաստանյան կամավորական ջոկատները
(համակարգող Գուրգեն Դալիբալթայան ուղղության
հրամանատար Հովսեփ Հովսեփյան) Վերհիշելով
քելբաջարյան ազատագրական ռազմական գործողու
թյունը Սամվել Բաբայանը պատմել է Ֆինգայում
այդ ընթացքում մարտերը շարունակվում էին և փոր
ձում էինք հակառակորդին ափիպել որ իր ուժերով
դեռ մնա այդտեղ Ես համոզվեցի որ հաջողվեց մեր
կամքը թելադրել հակառակորդին, որից հետո փորձե
ցինք հարվածել Քելբաջարին մի քանի ուղղություն
ներով առաջինը Օմարի հատվածը երկրորդը Մար
տակերտ–Քելբաջար ճանապարհը որը դուրս է գալիս

www.a-pdf.com



թունելի կողմը և փակում խաչմերուկը, երրորդը Վանք
գյուղից դեպի Լաչին–Քելբաջար ճանապարհը փա
կելն էր և հսկողության տակ առնելը, չորրորդը Ֆին
գան Այդ ուժերը նշված ուղղություններով հարվածե
լուց հետո պիտի առաջ շարժվեին որովհետև հակա
ռակորդը երկու տարբերակ ուներ մեծ ուժերով հար
վածել և դուրս գալ շրջափակումից և երկրորդ չսպա
սելով շրջափակմանը՝ հնարավորին չափ արագ դուրս
գալ այդ «պարկից»: Շատերն էին փորձում ինձ համո
զել, որ հակառակորդը մեծ ուժերով կդիմադրի և
դուրս կգա այդտեղից բայց ես համոզված էի որ այդ
տարբերակը հակառակորդի համար անիրագործելի է
Իմ նկատառումները ճիշտ դուրս եկան Առաջին օրվա
հարձակումները Օմարի և Վանքի ուղղություններում
պսակվեցին հաջողությամբ Երրորդ ուղղությունում
(հրամանատար՝ Մոնթե Մելքոնյան) ունեցանք ժամա
նակավոր անհաջողություն Հարձակումներից մեկի
ժամանակ խփվեց ու շարքից դուրս եկավ մեր տանկը
և ունեցանք կորուստներ Պատճառն այն էր որ եր
րորդ ուղղության բոլոր ուժերը կենտրոնացած էին
Մարտակերտ–Քելբաջար ուղղության վրա և հակա
ռակորդը հարձակման հնարավորություն ստացավ
Խնդիր դրվեց անհապաղ հետախուզությամբ պարզե
լու հակառակորդի առաջապահ դիրքերի դասավորու
թյունը Հետախուզության տվյալների վերլուծությու
նից հետո հաջորդ օրը ձեռնարկեցինք հակահարձա
կումներ և ունեցանք հաջողություն վերագրավելով
առաջին գիծը Օմարից մինչև Ֆինգա Քելբա
ջար–Գյանջա Լաչին–Քելբաջար մայրուղիները վերց
րինք վերահսկողության տակ տարանջատեցինք և
շրջապատման մեջ առանք հակառակորդի ուժերը Եր
րորդ օրվա ընթացքում հակառակորդի զինվորակա
նության և խաղաղ բնակչության մեջ խուճապ սկսվեց
Խնդիր դրեցի ապահովելու խաղաղ բնակչության
անարյուն տարհանումն անվտանգ գոտի ինչը և ար
վեց այնպես ինչպես նախատեսել էի Ռադիոհեռա
խոսային ալիքակալման տվյալների վերլուծությունից
պարզվեց որ հակառակորդը Քելբաջար է տեղափո
խում 200 հոգանոց հարվածային այսպես կոչված
«ընտիր» զորախումբ որը պետք է պաշտպաներ խաչ
մերուկը և կամուրջը վերահսկողության տակ վերցներ


Հմայակ
Հարոյան


Հովսեփ
Հովսեփյան

www.a-pdf.com



Քելբաջար Օմար–Մարտակերտ ճանապարհը և ապահովեր խաղաղ բնակչության անվտանգ տարհանումը Բաքուն տեղյակ չէր որ մենք արդեն ապահովել էինք բնակչության անվտանգ տարհանումը Այս տեղեկությունը ստացա գիշերը և հենց նույն գիշերն էլ այնտեղ տեղափոխեցի Ստեփանակերտի գնդի 70 80 ազատամարտիկներից բաղկացած հարվածային խումբը Սամվել Կարապետյանի ղեկավարությամբ Ես ստույգ խնդիր էի դրել թե որտեղ հանդիպել և որքան մոտ թողնել հակառակորդին. Այդ օպերացիան հաջողությամբ պսակվեց և հակառակորդին մնում էր մտածել թե ինչպես դուրս գա այդ «պարկից» Մարտական գործողության ժամանակ վիրավորվեց (արդեն երկրորդ անգամ) Սամվել Կարապետյանը և ունեցանք այլ կորուստներ.

Հակառակորդի խուճապը բազմապատկելու համար մարտի 30 ին տեղեկացրի Երևանին որպեսզի արագացնեն մեզ հետ համագործակցող հյուսիսային զորախմբի և կամավորականների հարձակումները Օպերացիայից հետո, երբ հակառակորդը զգաց որ ճանապարհը փակվում է խուճապի մատնվեց: Լաչինում գործող մեր զորամասերը հետապնդեցին հակառակորդին այդ հատվածում Ես այդ հատվածում լարվածությունը նպատակադրված պահպանեցի որպես

Աղբբեջանցի խաղաղ բնակիչները հատկացված միջանցքով հեռանում են Քելբաջարից



www.a-pdf.com



զի հակառակորդը հետ քաշվի և ոչ թե առաջ գնա. Ու երբ հակառակորդը սկսեց ընկրկել, մեր զորամասերը ստիպեցին նրան արագորեն նահանջել Լաչինից դեպի Քելբաջար. Իսկ Մոնթե Մելքոնյանին հրաման տվեցի վերահսկելու խաչմերուկը և այնտեղ սպասելու հակառակորդին՝ Հակառակորդը չկարողանալով փախչել թունելով Քելբաջարից կածաններով և Օմարով դուրս եկավ մարտադաշտից». 1993 թվականի մարտի 27 ից մինչև ապրիլի 1 ը ներառյալ, Ինքնապաշտպանության ուժերի կամավորական ջոկատների հայաստանյան հարավային և հյուսիսային զորախմբերի կողմից իրագործված Քելբաջարի (այժմ Նոր Շահումյան պատմանունը Քարվաճառ) ազատագրման ռազմական գործողությունն ավարտվեց հակառակորդի Լաչին–քելբաջարյան խմբավորման լիակատար ջախջախմամբ Լաչինի, Քելբաջարի շրջանների խաղաղ բնակչությունը շուրջ 60 հազար մարդ հատկացված միջանցքով մարտի 30 ից մինչև ապրիլի 1 ը դուրս եկավ 3 8 հազար քառակուսի կիլոմետր ընդհանուր տարածքով ազատագրված շրջաններից



Սամվել Կարապետյան

Հնգօրյա ազատագրական մարտերի արդյունքում ստեղծվեց շուրջ 300 կմ սահմաններով անվտանգության գոտի, ամրապնդվեց հայկական ուժերի ռազմավարական նախաձեռնությունը Օմարի լեռնանցքում հնարավորություն ստեղծվեց Պաշտպանության բանակի զինուժը և տեխնիկական միջոցները նպատակադրված օգտագործելու մյուս ռազմաճակատներում ապահովվեց Ստեփանակերտ Գորիս ավտոճանապարհի անվտանգ երթևեկությունը Բացվեց Արցախը ՀՀ ին կապող Մարտակերտ–Վարդենիս փաստորեն երկրորդ ցամաքային ճանապարհը Հայտնի օտար ռազմական քաղաքական գործիչների գնահատմամբ Քելբաջարի ազատագրման ռազմական գործողությունն Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի ռազմարվեստի փայլուն հաղթանակներից է

Արցախյան գոյապայքարի փարեգրության մեջ Քելբաջարի ազատագրումը նոր շրջափուլի սկիզբն էր Պաշտպանության բանակն առաջին անգամ անհավասարական և պատմակշիռ հաջողությանը հասավ ԼՂՀ սահմաններից դուրս ու հարյուրամյակներ շար

ունակ բռնազավթված ընդարձակ հայապատկան
տարածքներ ազատագրեց Բաքվում լիակատար
խուճապ էր Հայտարարվեց որ պատերազմը մտել է
իրենց համար վտանգավոր փուլ: Ադրբեջանի ամբողջ
տարածքում հայտարարվեց արտակարգ դրություն
Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը հայտա
րարեց «Քելբաջարից հետո պատերազմն Ադրբեջա
նի համար հեռանկար չունի...»

Արագ ընթացող իրադարձություններին հետևող
պետությունները սկսեցին մտահոգվել նման զարգա
ցումներից՝ Ապրիլի 5 ին իր մտահոգությունն արտա
հայտեց ՀՀ ում ԱՄՆ ի գործերի ժամանակավոր հա
վատարմատար Թոմ Փրայսը պահանջելով որ տե
ղական ուժերը դուրս բերվեն Քելբաջարից և արձա
նագրելով որ «ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը
հայկական իշխանությունների ղեկավարության ներ
քո չեն». Իսկ Լեռնային Ղարաբաղի հարցով զբաղվող
Մինսկի խմբում ԱՄՆ ի ներկայացուցիչ Ջոն Մարես
կան հայտարարեց Թող ղարաբաղցիները հեռա
նան Քելբաջարից և թող ‹գան Ժնև Մինսկի խմբի
նիստին....» Ապրիլի 11 ին Ռուսաստանի Դաշնու
թյան արտգործնախարար Անդրեյ Կոզիրևը «բոլոր
հակամարտող կողմերին» կոչ արեց հրամաններ ար
ձակել՝ ապրիլի 12 ի լույս 13-ի կեսգիշերից նվազա
գույնը մեկ շաբաթ ժամկետով «ցանկացած հարձա
կողական գործողություններ ամենուրեք դադարեց
նելու» մասին 1993 թվականի ապրիլի 30 ին Միա
վորված ազգերի կազմակերպության Անվտանգու



Գեորգի
Պետրոսյան



Լևոն Տեր Պետրո
սյանը և Վազգեն
Սարգսյանը Ստե
փանակերտում

www.a-pdf.com



թյան խորհուրդն ընդունեց թիվ 822 բանաձևը որով պահանջեց ռազմական գործողությունների անհապաղ դադարեցում, հրադադարի հաստատում, տեղական ուժերի դուրսբերում Քելբաջարի շրջանից·

Մայիսի 14–15 ին Մոսկվայում առաջ քաշվեց եռակողմ «Ռուսաստանի Դաշնություն, ԱՄՆ և Թուրքիա» խաղաղ նախաձեռնության փաթեթը որի էությունը հանգում էր Քելբաջարից ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի հեռանալուն



Կարեն Բաբուրյան

Հունիսի սկզբին Ստեփանակերտը հանդես եկավ կոշտ դիրքորոշմամբ և հայտարարեց որ Թուրքիան բանակցային գործընթացում ապակառուցողական դեր է խաղում և Երևանն իզուր է համաձայնել «եռակողմ նախաձեռնությանը» Ավելին ԻՊՈՒ ի հրամանատար Սամվել Բաբայանը «Վրեմյա» թերթին (ռուսերեն Երևան, 1993 թվական հունիսի 2 թիվ 44) տված հարցազրույցում շեշտեց «Մենք չենք ուզում խաղաքարտ լինել Եվ թող մեր ժողովրդին չվախեցնեն ոչ Թուրքիայով ոչ Ամերիկայով ոչ Ռուսաստանով....»:

Հունիսի 7 ին Մինսկի խմբի նախագահ Մարիո Ռաֆայելին խմբի ինն անդամ երկրների (ԱՄՆ Ռուսաստան Ֆրանսիա Գերմանիա Իտալիա Շվեդիա Չեխիա Թուրքիա և Բելառուս) անունից հանդես եկավ նոր նախաձեռնությամբ հակամարտող կողմերին ուղարկելով թիվ 822 բանաձևի կատարման վերաբերյալ Անհապաղ միջոցառումների ժամանակացույց»: Լևոն Տեր Պետրոսյանը (Գորիսում ապա Ստեփանակերտում) արցախյան կողմին համոզում կամ պարտադրում էր ստորագրել Մարիո Ռաֆայելիի ժամանակացույցը» ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի պաշտոնակատար Գեորգի Պետրոսյան պատասխանելով Մարիո Ռաֆայելիին արձանագրեց որ այդ ժամանակացույցի իրականացման շուրջ լուրջ տարաձայնություններ են առաջացել ԼՂՀ ղեկավարության և Պաշտպանության բանակի հրամանատարական կազմի միջև (տես «Երկիր» թերթ 1993թ հունիսի 12) Ստեփանակերտում ՀՀ նախագահն իրագործեց «մինի հեղաշրջում» և Գեորգի Պետրոսյանի փոխարեն ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար նշանակվեց Կարեն Բաբուրյանը ստորագրված ժամանակացույցի կատարումը հե

www.a-pdf.com



պաձգվեց մեկ ամսով (տես Վ. Ստուպիշին Իմ առաքելությունը Հայաստանում 1992 1994», Եր 2005թ.) Հետաձգումն ուներ ծանրակշիռ պատճառ ժամանակն աշխատում էր ԼՂՀ ի օգտին Ակնառու էր նաև որ Ադրբեջանն այդ շրջանում վերածվել էր ներքաղաքական երկպառակության թատերաբեմի

Հուլիսի 13-ին Ստեփանակերտում տեղի ունեցան բանակցություններ ԵԱՀԽ յոթ հոգուց բաղկացած պատվիրակության և ԼՂՀ ղեկավարության միջև նշված թիվ 822 բանաձևի պահանջների կատարման համար Հուլիսի 14 ին Պաշտպանության պետական կոմիտեի նախագահ Ռոբերտ Քոչարյանը մամուլի ասուլիսում անդրադառնալով այս խնդրին ասել է որ ղարաբաղյան կողմը Ադրբեջանի հետ կբանակցի միայն այն դեպքում եթե դրական պատասխան ստանա իր առաջադրած հարցերին. Այդ հարցերի շարքում Քոչարյանը նշել է Ադրբեջանի առկա քաղաքական անկայուն իրավիճակը երաշխիքների բացակայությունը Թուրքիայի դիրքորոշման ճշգրտումը բանաձևի ‹անհապաղ իրականացմանը» Ղարաբաղի իշխանությունների դեմ լինելը (տե՛ս «Երկիր թերթ 1993 թ հուլիսի 15)

Այդ նույն ժամանակ էր որ Սամվել Բաբայանն իր զինակիցներին ասել է «Թուրքի դեմ պատերազմելը պարտադիր է քանի դեռ ԼՂՀ-ի շուրջ չի ստեղծվել անվտանգության ամբողջական գոտի» Եվ ապա ավելացրել. «Ես ոչ մի բանաձևի կամ առաջարկի չեմ ենթարկվի: Ես համոզված եմ որ հետագա հաղթանակները միայն կարող են ապահովել մեր ժողովրդի ամբողջական անվտանգությունը»: Իսկ Վազգեն Մանուկյանը հայտարարեց «Քելբաջարի ազատագրումը ռազմական առումով ամենաճիշտ որոշումն էր Դա ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի ձեռք բերած հաջողության նաև քաղաքական ամրագրումն էր որը նման դեպքերում ավելի քան անհրաժեշտ էր Ղարաբաղի միակ երաշխիքն այսօր բանակն է և ղարաբաղցիները չեն վստահում ոչ միայն Միավորված ազգերի կազմակերպության զորքերին այլև՝ մինչև անգամ Հայաստանի բանակին, ուստի երբեք չեն համաձայնի զինաթափվելուն.. Համոզված եմ, որ Ղարաբաղը կհաղթի և ի վերջո կհասնի նրան որ իրավաբանորեն կհաստատվի այն ինչը փաստացի իրականություն է»

www.a-pdf.com



Հայտնի է որ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 51-րդ հոդվածում ամրագրված են անհատական ինքնապաշտպանության այլ պետության (Ադրբեջանի) զինված հարձակմանն ի պատասխան, պետության (ԼՂՀ) զինված գործողության սկզբունքները Տուժող պետությունը (ԼՂՀ) նախահարձակի (Ադրբեջանի) հետ առնչված չլինելով խնդիրների խաղաղ կարգավորման պարտականություններով ինքն է որոշում պաշտպանական գործողությունների սկիզբը տեղը բնույթը և իրականացման միջոցները Անհատական ինքնապաշտպանությունը կարող է ունենալ հարձակողական բնույթ ու տեղափոխվել նախահարձակ պետության տարածք զինված հարձակումը խափանելու և նորը թույլ չտալու նպատակով ԼՂՀ ն որպես արտաքին նախահարձակման ենթարկված և անհատական ինքնապաշտպանության միջազգային իրավունքի սուբյեկտ դեռևս 1992 թվականի մայիսի 6 ին պաշտոնական դիմումով տեղեկացրել է Անվտանգության խորհրդին իր անհատական ինքնապաշտպանության իրավունքի իրացման մասին

Ուրեմն ազատագրական մարտերը շարունակելը պարտադիր էր այնքան ժամանակ քանի դեռ չէր ազատագրվել Արցախը և ԼՂՀ ի շուրջ չէր ստեղծվել անվտանգության ամբողջական գոտի Սա էր ազատագրական պատերազմի նկատմամբ հրամանատարի ունեցած վերաբերմունքը որով էլ ընկալվում էին նրա ինքնատիպությունը և հերոսի կերպարը Նա չէր կարող չըմբռնել այն որ անիրական թվացողն իրական դարձնելու համար հարկավոր է ազգային միասնություն Նա գիտեր որ արցախահայությունը մաքառում է ոչ միայն իր հողնոր այլ նաև ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար Բնականաբար, նա էր կարող ունենալ այլ դիրքորոշում քան ազատագրական պայքարը շարունակելու հաղթելու և կարծիք և գաղափար Իսկ եթե նա փորձեր խուսափել այդ գաղափարից փվյալ դեպքում՝ արցախահայության ճակատագրի օրհասական հարցի լուծումից ինչ խոսք կհեռանար ինքն իրենից և իր սկզբունքներից

Քելբաջարից հետո պատերազմը շարունակվեց ևս մեկ տարի և մեկուկես ամիս Ադրբեջանը փորձեց

www.a-pdf.com



ռազմաճակատում կրած պարտությունները փոխա փուցել քաղաքական դաշտում իր համար իբր թե երաշխավորված հաջողություններով. Ակտիվացան միջնորդ երկրների խաղաղարար ջանքերը Հակառա կորդն այս ընթացքում ընդունեց պասիվ դիրքորո շում որը բացատրվում էր Ադրբեջանի ներքաղաքա կան և բանակի անկայուն վիճակով



Արմեն Աբգարյան

1993 թվականի մայիսին Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ Սերժ Սարգսյանը գործուղվեց Ռուսաստանի Դաշնություն նպատակ ունենալով լու ծելու Պաշտպանության բանակի պարենային և հան դերձանքի ապահովման խնդիրները.

Օգտվելով ռազմաճակատում առկա հանդարտու թյունից Սամվել Բաբայանը ձեռնամուխ եղավ ավար տելու հանրապետության զինված ուժերի կազմավոր ման գործընթացը Ձևավորվեցին և համալրվեցին Պաշտպանական շրջանների ստորաբաժանումները Նրա հրամանով 18 տարեկան դարձած պատանիներ ըը մինչև ռազմաճակատ մեկնելը ուսումնական կենտրոնում պարտադիր զինվորական պատրաստու թյուն էին ստանում Կատարելագործվեց կառավար ման համակարգը Ուսումնական կենտրոններում պարտադիր հրամանատարական պատրաստություն էին անցնում ստորաբաժանումների սպաները հրե տանավորները հետախույզները Բարելավվեցին թի կունքային մատակարարումները Այս կապակցու թյամբ Սամվել Բաբայանն ասում է «Պատերազմի ամբողջ ընթացքում կարևոր դերակատարություն ու նեցավ 1992 թվականից ձևավորված թիկունքային ծառայությունը Հետագայում անհրաժեշտաբար վե րակառուցելով դա ստեղծեցինք նյութական ապահո վության ստորաբաժանումներ կենտրոնացրինք առանձին առանձին գործող հասարակական կազմա կերպությունների աշխատանքները հաստատեցինք նյութատեխնիկական, ֆինանսական փոխադրական միջոցների ապահովման ու հսկողության համակարգ վերևից ներքև որով իմ կարծիքով բարձրացան այդ ծառայության անձնակազմի օպերատիվությունն ու պատասխանատվությունը. Թիկունքային ծառայու թյան զարգացմանն անմիջական ու գործուն մասնա կցություն է ունեցել ծառայության պետ գնդապետ Ար



Վյաչեսլավ Հյուսնունց

www.a-pdf.com



մեն Աբգարյանը Մարտական տեխնիկայի և սպա
ռազինության ապահովման համալրման, Ստեփանա
կերտում զրահամեքենաների ու զրահատեխնիկայի
նորոգման աշխատանքները կազմակերպելու համար
ձևավորվեց սպառազինության համակարգը Կատա
րելագործվեց մարտի ընթացքում զինտեխնիկայի և
սպառազինության շահագործման կազմակերպումը
ռազմաճակատի գոտում ներդրվեցին տեխնիկայի նո
րոգման ձևերը Համակարգի զարգացման գործում
կարևոր դերակատարություն են ունեցել Հայաստանի
ազգային և Արցախի հերոս (հետմահու) Յուրի Պողո
սյանը Պաշտպանության բանակի հրամանատարի
սպառազինության գծով տեղակալ (1992 2004) Վյա
չեսլավ Հյուսնունցը (այժմ գեներալ մայոր) Ստեղծ
վեցին նաև ռազմադաշտային և կայազորային հոսպի
տալներ Շտաբի ծառայությունները մայիսին անց
կացրին մարտական պատրաստության, Պաշտպանա
կան շրջաններում անձնակազմի առկայության և տե
ղավորվածության պայմանների ստուգումներ. Սամ
վել Բաբայանը հրամանատարական կազմին և ծառա
յությունների պետերին առաջադրանք տվեց պայքա
րելու հրամանների ու կարգադրությունների անտես
ման ստորադրյալների կողմից հրամանների քննարկ
ման և նմանատիպ այլ երևույթների դեմ



Զինտեխնիկան
նորոգվում էր
հենց
մարտադաշտում

## Մարտակերտի ազատագրական ռազմական գործողությունը (1993 թ մայիս-հունիս)



Պետրոս Ղևոնդյան



Զորեն Ղազարյան

1993 թվականի մայիս հունիս ամիսներին հակառակորդը մարտական գործողություններ ծավալեց ռազմաճակատի հյուսիսային արևելյան և հարավային ուղղություններում Իրավիճակը փոխվեց նաև Մարտակերտի ճակատում Հակառակորդի վերահսկողության տակ գտնվող Մարտակերտի հեռուստաաշտարակի և Պուշկենյալ բարձունքներից հրետակոծվում էին ղարաբաղյան ուժերի դիրքերը Լաչին քելբաջարյան խմբավորման ջախջախումից հետո զորահրամանատարը մշակեց Մարտակերտի շրջանի մյուս տարածքների ազատագրման օպերատիվ պլանը Նա վերախմբավորեց ուժերն ու միջոցները և ձեռնարկեց միաժամանակյա հարձակումներ մի քանի ուղղություններում Փառուխ Ջինլի Շահբուլաղ հատվածում կենտրոնացվեցին Ասկերանի պաշտպանական շրջանի (հրամանատար Վիտալի Բալասանյան) գումարտակներն ու հետախուզական խումբը (հրամանատարներ Արշավիր Ղարամյան Սանասար Ծատրյան Զորեն Ղազարյան) և հրետանային դիվիզիոնը (հրամանատար Դավիթ Սաֆարյան) 77 րդ առանձին մոտոհրաձգային գումարտակը (հրամանատար Պետրոս Ղևոնդյան) Ալիմադաթլի Կզըլ Քենգեռլի հատվածում Խաչենի գումարտակի առաջին վաշտը (հրամանատար Յուրա Հակոբյան) 730 նշագիծ Բոյահմեդլի ուղղությունում Շուշիի պաշտպանական շրջանի ստորաբաժանումները (հրամանատար Վաչագան Իշխանյան) Փափրավենդ–Կարափիրիմլու և Ջանյաթաղ–Դամըրլու 819 նշագիծ Մարտակերտ բնագծերում Կենտրոնական պաշտպանական շրջանի (հրամանատար Սամվել Կարապետյան) ստորաբաժանումները Մոխրաթաղ–782–704–781–708–630 նշագծեր Լևոնարխ հատվածներում Մարտակերտի պաշտպանական շրջանի (հրամանատար Նորայր Դանիելյան) գումարտակները (Աշոտ Առուշանյան Արկադի Շիրինյան Ռազմիկ Հակոբյան Գարեգին Հակոբյան ***գնդ և թիվ 7 բատարեզը)***

Տևական և թեժ մարտերից հետո Կենտրոնական և Մարտակերտի պաշտպանական շրջանների ստորա

www.a-pdf.com



ՇԱՀՈՒՄՅԱՆ
2065
1940
1045
630
08
781
704
ՆՈՐԱՅՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ
Մարտակերտի ՊՇ
236
1307
1359
819
803
ՊԲ
ԳԼԽԱՎՈՐ
ՇՏԱԲ
969
ՍԱՄՎԵԼ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ԿՊՇ
932
ՎԱԶԳԵՆ
ԻՇԽԱՆՅԱՆ
093
1427
ԻՍԱԼԻ
ԲԱԼԱՍԱՆՅԱՆ
Ասկերանի ՊՇ
1157
1050
276
45

www.a-pdf.com

# ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

(1993 թ մայիս հունիս)




## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ամանատարական կետ
- Պաշտպանության բանակի ստ որաբաժանումների հարձակման ուղղությունը
- Հակառակորդի ստորաբաժանումների հարձակման ուղղությունը
- ՊԲ-ի ստորաբաժանումների տեղաշարժ
- Պաշտպանության բանակի դիրքեր
- Հակառակորդի դիրքեր
- Ռազմական տեխնիկա
- Եր կան սահման
- Ք ալ
- ուղ
- Ավտոմայրուղի
- Գլխավոր ճանապարհներ
- Այլ ճանապարհներ
- Թունելներ, կամուրջներ
- Երկաթուղիներ և կա արա
- Լեռնագա գաթ
- տ
- Լիճ, ջրամ ա
- տա

ՄԱՍՇՏԱԲ 1: 300 000

*Թիվ 7*

www.a-pdf.com



բաժանումները գրավեցին Մարտակերտի հեռուստա աշտարակի և Դուշկենյալ բարձունքները։ Պաշտպա նության բանակի ստորաբաժանումները հունիսի 23–26-ին Փառուխ Շահբուլաղ–Կզըլ Քենգեռլի– Փափ րավենդ Լևոնարխ–Մաղաղիս բնագծերից դուրս մղե ցին հակառակորդին, պայթեցրին Խաչենագետի կամուրջը և բոլոր բնագծերում ունենալով դիրքային առավելություն 1993 թվականի հունիսի 27 ին ազա տագրեցին Մարտակերտ քաղաքը և անցան գերիշ խող բարձունքների մասնավորապես Եղիխրման Բուզդախ լեռների Բոյահմեդլի Փափրավենդ Թազա խաչենյալ, Աղդարա լեռնաշղթայի վրայով ձգվող գծի ու հիմնական ճանապարհների կարևոր հատվածների պաշտպանությանը

Մարտակերտի ազատագրումը Պաշտպանության բանակի նշանակալի հաղթանակներից էր. Բարոյա հոգեբանական առումով դա բարենպաստ ներգործու թյուն ունեցավ շրջան վերադարձող խաղաղ բնակչու թյան ավերված բնակավայրերի և տնտեսության վե րականգնման վրա Անշուշտ դա դեռ չէր որոշում պատերազմի ելքը, բայց Սամվել Բաբայանը դրանից հետո հնարավորություն ստացավ որոշ հետևություն ներ անելու ռազմարվեստի կատարելագործման հա մար Նա հասկացավ որ հաղթանակին հաջողվեց հասնել այն բանի շնորհիվ որ կիրառվեց իր առա



Գանձասար վանա կան համալիրը

www.a-pdf.com



ջարկած համարձակ մկաhղացումը ճակատային
գրոհները փոխարինեց փոքրաթիվ խմբերի հարձա
կումներով հակառակորդի ստորաբաժանումների և
թևերի և թիկունքի վրա միաժամանակյա գրոհների
կենտրոնացմամբ

1993 թվականի մայիս հունիս ամիսներին Պաշտ
պանության բանակի իրականացրած հաջող ռազմա
կան գործողությունները հավասարակշռությունից
հանել էին հակառակորդին Նպատակ ունենալով
ապակողմնորոշելու ժողովրդին Ադրբեջանի իշխա
նությունները թաքցնում էին բանակի պարտություն
ները և կեղծ լուրեր էին տարածում «հաղթանակնե
րի» մասին Սակայն դասալքությունը, զոհերը և վի
րավորները հակառակն էին ապացուցում Բաքվում և
խոշոր քաղաքներում ցույցերի բուռն ալիք բարձրա
ցավ և արդեն հունիսի 18-ին հանրապետության նա
խագահ Աբուլֆազ Էլչիբեյը հեռացավ Բաքվից ու
բնակություն հաստատեց Նախիջևանի իր ծննդա
վայր Քելեկի գյուղում Նախագահի պաշտոնակա
տար կարգվեց Միլի Մեջլիսի խոսնակ Հեյդար Ալիևը
Միջազգային հանրությունը Ադրբեջանի քաղաքա
կան շրջանակները համոզված էին որ փորձառու
Ալիևը հաշվի առնելով իր երկրի ծանր կացությունը
հիմնախնդրի լուծումը կտեղափոխի բանակցային
դաշտ Սակայն տեղի ունեցավ հակառակը Հուլիսին
հակառակորդը սկսեց ակտիվ մարտական գործողու
թյուններ Հրթիռակոծվեցին Հադրութի և Ասկերանի
պաշտպանական շրջանի դիրքերը Հանկարծահաս
գրոհներ ձեռնարկվեցին նաև Մարտունու պաշտպա
նական Էդիլուի ձորակի (Հադրութի շրջան) դիրքերի
վրա Վերլուծելով հետախուզության և ռադիոհեռա
խոսային ալիքակալման տվյալները Սամվել Բաբա
յանի համար պարզ դարձավ հակառակորդի մտա
դրությունը Սահմանների պաշտպանությունն ապա
հովելու համար նա ռազմաճակատում կենտրոնաց
րեց պահեստազորային ուժերի մեծ մասը որպես
գլխավոր ուղղություն ընտրելով Ասկերան–Աղդամ
հատվածը նպատակ ունենալով կանխելու հակառա
կորդի առաջխաղացումը դեպի Ստեփանակերտ

www.a-pdf.com



## Աղդամի ազատագրումը

Եվ այսպես 1993 թվականին արցախյան գոյա
պայքարը մտավ նոր փուլ՝ տարբեր պետությունների
համար չնախատեսված գործողությունների ոլորտ
Վրա հասավ հետաձգումներ չընդունող որոշումների
ժամանակը Պաշտպանության բանակի 28 ամյա
հրամանատարը սկսեց կյանքի կոչել մարտը վարելու
իր ռազմարվեստը և կանոնները լինել այնտեղ որ
տեղ թշնամին իրեն չի սպասում շեղել հակառակորդի
ուշադրությունը մարտական գործողությունների հիմ
նական ուղղությունից արագ տեղաշարժերով սահ
մանափակ տեղամասում հակառակորդի նկատմամբ
հասնել առավելության ճակատային գրոհները փո
խարինել փոքրաթիվ գրոհային խմբերով մանրելու և
հարվածելու մարտավարությամբ զինամթերքի նվա
զագույն ծախսումներով զինտեխնիկայի սահմանա
փակ կորուստներով ու նվազագույն մարդկային կո
րուստներով հանկարծահաս հարվածներ հասցնել
հակառակորդի թիկունքին և թույլ թևերին վերահսկո
ղության տակ առնել մայրուղիներն ու ճանապարհնե
րը, ապա բոլոր ստորաբաժանումների փոխհամաձայ
նեցված գրոհներով հակառակորդին վերցնել օղակի
շրջապատման մեջ միջանցք թողնել խաղաղ բնակչու
թյան տարհանման համար և մարտը հասցնել վերջ
նական փուլի հաղթանակի Զորահրամանատարն իր
ռազմարվեստն իրագործեց նաև Աղդամի և դրան հա
ջորդած բոլոր ազատագրական մարտերի ժամանակ

Սամվել Բաբայանին հայտնի էր որ Աղդամը հա
կահայկական և ազգայնամոլական կենտրոն է 1988
թվականի փետրվարի 20 ին ԼՂԻՄ ի ժողովրդական
պատգամավորների մարզխորհրդի 20 րդ գումարման
արտահերթ նստաշրջանից հետո հենց Աղդամում են
առաջինը ծանակել, ծեծել, պատանդել հայերին կազ
մակերպել հակահայկական ցույցեր Հայտնի է որ
Աղդամում էին տեղակայված խորհրդային բանակից
ժառանգություն մնացած հրաձգային զենքի հրթիռա
յին և հրետանային արկերի զինապահեստները Աղ
դամը հակառակորդի առավել վտանգավոր հենա
կետն էր Ստեփանակերտ ներխուժելու համար Հե

www.a-pdf.com



պահուզության պվյալներից գերիների հայպնած պեղեկություններից պարզվեց որ այնպեղ է գպնվում ադրբեջանական բանակի կենպրոնական շպաբը որ պեղև մշակվում, ղեկավարվում են հիմնական ռազմական գործողությունների ուղղությունները Կրկժանի Ջանհասանի Ղայբալուի Մալիբեյլիի, Խոջալուի Շուշիի կրակակեպերի ճնշումից և ազապագրումից հեպո Աղդամից օր ու գիշեր շարունակ հրթիռահրեպակոծվում էին Սպեփանակերպը Ասկերանը, մոպակա և հեռավոր պասնյակ բնակավայրեր· Աղդամը ինչպես Հեյդար Ալիևն է ասել «Ղարաբաղի սիրպն ու հոգին է ադրբեջանական բանակի հույսը› Հայկական կողմի համար Աղդամի ազապագրումը ռազմավարական և բարոյահոգեբանական առումներով անհրաժեշպություն էր· Այն կոչված էր ամրապնդելու ազապամարպիկների մարպական ոգին ապահովելու Սպեփանակերպի Ասկերանի և այլ բնակավայրերի անվպանգությունը ռազմական ու բարոյական հարված հասցնելու հակառակորդին Հայասպանի Հանրապեպության որոշ պեպական քաղաքական, ռազմական գործիչներ Աղդամի վնասազերծման ռազմական գործողություններին դեմ են արպահայպվել Չնայած դրան Սամվել Բաբայանի ղեկավարությամբ առանց Երևանի պեղեկացվածության ու մասնակցության մշակվել է Աղդամի ռազմական հենակեպերի վնասազերծման օպերապիվ պլանը. Ըսպ օպերապիվ պլանի ռազմական գործողությունը բաժանվել է երկու ելակեպային և հարձակողական ազապագրական փուլերի ***(տե՛ս թիվ 8 և թիվ 9 քարտեզները)***

Առաջին փուլի ժամանակ որի իրագործումը հանձնարարված էր Ասկերանի պաշպպանական շրջանի (հրամանապար Վիպալի Բալասանյան) սպորաբաժանումներին, պեպք էր վնասազերծել Աղդամը եզերող կրակակեպերը և Կենպրոնական (հրամանապար Սամվել Կարապեպյան) ու Մարպունու (հրամանապար Մոնթե Մելքոնյան) պաշպպանական շրջանների աջակցությամբ ելակեպային հարձակման համար սպեղծել պաշպպանական ամուր բնագիծ արևմուպք արևելք սահմանագոպում

Ասկերանի պաշպպանական շրջանի ազապամարպիկները սակայն խախպելով օպերապիվ պլա

www.a-pdf.com

# ԱՂԴԱՄԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

(1993 թ հունիսի 12 15)




Թիվ 8 Թիվ 9

ՄԱՍՇՏԱԲ 1:300 000

www.a-pdf.com

# ԱՂԴԱՄԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ (1993 թ հուլիսի 21 23)



www.a-pdf.com



նով նախապեսված Խանաբաղ–Խրամորթ մարտա
կան ուղղությամբ հարձակումների առաջադրանքը
դուրս եկան Ասկերան–Աղդամ ճանապարհ՝ Հակա
ռակորդի հակահարձակման ժամա
նակ զոհվեցին մոտ մեկ տասնյակ
ազատամարտիկներ խփվեց ու շար
քից դուրս եկավ մեկ տանկ, և ոչ
նպաստավոր պայմաններ ստեղծվե
ցին Կենտրոնական պաշտպանա
կան շրջանի ստորաբաժանումների
գրոհների համար: Երկրորդ հար
ձակման ժամանակ ազատամարտիկ
ները գերտանցումով մոտեցան 579
նշագծով բարձունքի («Ուղտի
մեջք») Շելիի Կասըմլուի կրակակե
տերին Մարտական գործողություն
ների ժամանակ զոհվեցին 5 ազա
տամարտիկներ իսկ ստորաբաժա
նումները նահանջեցին դեպի ելման
դիրքերը Սամվել Բաբայանի հրա
մանով մեր ազատամարտիկները
հակահարձակման անցան մարտա
դաշտից դուրս բերեցին զոհվածների
մարմինները և կարողացան վերա
հաստատվել նախկին պաշտպանական դիրքերում



Մոնթե
Մելքոնյան

Մարտունու պաշտպանական շրջանի հրամանա
տար Մոնթե Մելքոնյանը 1993 թվականի հունիսի 12
ին նպատակ ունենալով ստուգելու պաշտպանու
թյան դիրքերի հուսալիությունը Սայբալու–Մարզի
լու հատվածում հսպեց հայկական ուժերի դիրքերը
Դարանակալած հակառակորդը զինտեխնիկայից
կրակ բացեց հրամանատարին ուղեկցող մարտիկնե
րի ուղղությամբ Արկերից մեկի անդրադարձած բե
կորը մահացու եղավ Մոնթե Մելքոնյանի համար
Կռվի բռնված մարտիկներից Ռաչ (Սարիբեկ) Մար
տիրոսյանը զոհվեց իսկ Ճարտարի 23 րդ գումար
տակի հրամանատար Հովիկ Ջիվանյանը Պաշտպա
նական շրջանի հրամանատարի քաղաքական գծով
տեղակալ Գևորգ Քամալյանը Արտակ Զարգարյանը,
Կոմիտաս Ավանեսյանը Սարո Երեմյանը վիրավոր-
վեցին Գնդապետ Հմայակ Հարոյանի (այժմ գեներ

www.a-pdf.com



բալ մայոր) հրամանով Մարտունու պաշտպանական շրջանի ազատամարտիկները նախանշեցին պաշտպանական դիրքերից Սամվել Բաբայանի հրամանով նույն օրը ազատամարտիկները վերադարձան պաշտպանական դիրքեր



Մովսես Հակոբյան

Հուլիսի երկրորդ կեսին արցախյան ստորաբաժանումները գրավեցին մարտավարական տեսակետից կարևոր բարձունքներ հսկողության տակ վերցրին Աղդամ Մարտակերտ ճանապարհը Կզըլ Քենգեռլիի մոտ պայթեցրին Խաչենագետի կամուրջը շոշափելի կորուստներ պատճառեցին հակառակորդին Ալիմադաթլու Քյուրդլյար Ղալայչիլար Փափրավենդ և այլ գյուղերի ուղեգծում իսկ Ասկերանի պաշտպանական շրջանի ստորաբաժանումները առաջանալով 610–681 բնագծով գրավեցին և դիրքավորվեցին Շահբուլաղ Տարնոյուտ (Տիգրանակերտ) գյուղերի բնագծերում:

Մարտակերտի ճակատում նկատելի մարտավարական հաջողություններից հետո 1993 թվականի հուլիսի 21 ին Սամվել Բաբայանը ձեռնարկեց իրագործել Աղդամի ռազմական գործողության երկրորդ հարձակողական ազատագրական փուլը (ընդհանուր հրամանատար Վիտալի Բալասանյան): Հանկարծահաս հարվածներ հասցնելու նպատակով հարվածային գումարտակները Խանաբադի խմբավորումը և այլ ստորաբաժանումներ ճնշեցին Խդըրլուի Եդիխըրմանի Կիյասլուի Չուխուրմահլայի կրակակետերը դիրքավորվեցին և վերահսկողության տակ վերցրին Շահբուլաղ–Տիգրանակերտին հարող տարածքը Հե



Նելսոն Սողոմոնյան

տախուզական խումբը և 33 րդ գումարտակը (հրամանատար Իվան Մեհրաբյան նույն ինքը «Դյավոլ») գրոհելով մտան Խրամորթ դուրս եկան խաչմերուկ փակեցին դեպի Շելի տանող ճանապարհը Հրնթացս Իվան Մեհրաբյանի գումարտակի ազատամարտիկները մարտանցելով դուրս եկան դեպի Շելի, իսկ հետախուզական խումբը ուղղություն վերցնելով դեպի Հաղթանակի հուշարձան», շարժվեց դեպի Աղդամի մատույցներ: Այս գրոհների արդյունքում նպաստավոր պայմաններ ստեղծվեցին Կենտրոնական պաշտպանական շրջանի և մնացած ստորաբաժանումների դեպի Աղդամ գրոհներ զարգացնելու համար Ընդ որում Կենտրոնական պաշտպանական շրջանի

www.a-pdf.com



ստորաբաժանումները երեք թևերով շարժվեցին եր կաթուղու Կասըմլու, Մարտունի–Աղդամ ճանապար հի ուղղությամբ և ճնշեցին հակառակորդի կրակակե տերը Հարավարևելքից Մարտունու պաշտպանական շրջանի երկու ստորաբաժանումներ (հրամանատար ներ Նելսոն Սողոմոնյան Մովսես Հակոբյան այժմ գեներալ-լեյտենանտ ԼՂՀ պաշտպանության նախա րար և ՊԲ հրամանատար) հարձակումները զարգաց րին Աջարլուի օդանավակայանի Աղդամ–Աղջաբեդ ճանապարհի (պայթեցրին ճանապարհի մի հատ ված) Սարըջալի ուղղություններով վնասազերծեցին



Աղդամն ազատագրված է

կրակակետերը Վերահսկողության տակ առնելով Աղդամ մտնող և դուրս եկող ճանապարհները հյուսի սարևմտյան հյուսիսարևելյան, հարավային ուղղու թյուններով հակառակորդին վերցնելով օղակի շրջա փակման մեջ թիկունքից հարվածելով հակառակորդի աջ ու ձախ թևերին ստիպեցին նրան լքել քաղաքը Ռազմական գործողությունն ավարտվեց Պաշտպա նության բանակի փայլուն հաղթանակով Աղ դամ–Բարդա ճանապարհի ուղղությամբ հատկաց ված մարդասիրական միջանցքով խաղաղ բնակչու թյունը և հակառակորդի մնացած ստորաբաժանում ները հեռացան քաղաքից 1993 թվականի հուլիսի 23 ից Աղդամը Պաշտպանության բանակի վերահսկո



Աղդամը ՊԲ-ի վերահսկողության տակ է (1993թ. հուլիսի 23 ից

ղության տակ է Անատոլի Զինևիչը հետագայում անդրադառնալով Աղդամի և հետագա ազատագրական մարտերի ժամանակ Բաբայանի գործունեությանը «Գոլոս Արմենիի» ռուսերեն թերթին տված հարցազրույցում (21 09 2000թ.) ասել է ‹Սամվել Բաբայանը սուր մտքի ապշեցուցիչ հիշողության տեր անհատականություն է Քաջ, համարձակամ ես կասեի ինքնասածի ծանրագույն պայմաններում գործողությունները արիաբար կառավարող »

Աղդամի ռազմական գործողության շնորհիվ դադարեցվեցին Ստեփանակերտի Ասկերանի և շրջակա բնակավայրերի հեռահար հրթիռահրետակոծությունները Հակառակորդին հասցվեց ռազմական և բարոյահոգեբանական հզոր հարված կաթվածահարվեցին ԼՂՀ արևելյան և հարավարևելյան սահմանների երկայնքով հակառակորդի կենտրոնացված խմբավորումների գործողությունները նրա թիկունքի ապահովումը ավելի առարկայական դարձան Մարտակերտի Ֆիզուլիի Ջաբրայիլի, Կուբաթլուի Զանգելանի շրջանների ազատագրումները

Աղդամի ռազմական գործողությունը Պաշտպանության բանակի ազատագրական մարտերի նշանակալի և բեկումնային ռազմական գործողությունն էր Սամվել Բաբայանի գլխավորած Պաշտպանության բանակի հաղթանակները Հայաստանի, Արցախի և Սփյուռքի հասարակության բոլոր խավերի կողմից ցնծությամբ էին ընդունվում ոչ միայն այն պատճառով որ

www.a-pdf.com



այս հաղթանակներն արտահայտում էին հայ ժողովրդի ազգային և հայրենասիրական զգացմունքները, այլ նաև նրա շնորհիվ որ դրանք մոտեցնում էին Արցախի վերջնական ազատագրման բաղձալի օրը Հայաստանի Սփյուռքի և նույնիսկ օտարերկրյա լրատվամիջոցները արժանին մատուցելով ազատամարտիկների հերոսական դերակատարությանը նաև ընդգծում էին Սամվել Բաբայանի առանձնահատուկ գործունեությունը նրան ներառելով ականավոր զորահրամանատարների շարքում Մինչդեռ այս մեծարումներին անտեղյակ կամ անտարբեր զորահրամանատարը ընտանիքից հեռու շտաբում անքուն գիշերներ անցկացնելով, մտորում էր դեռ չիրականացրած նպատակների մասին Առջևում Մարտակերտի հաղթավայրային հատվածն էր Ֆիզուլին Ջաբրայիլը, Զանգելանը Կուբաթլուն, Օմարի լեռնանցքը Միրբաշիրը...

Հասկանալով Պաշտպանության բանակի հաղթարշավը խոչընդոտելու անհնարությունը Աղդամի ռազմական գործողությունից հետո Ադրբեջանը հակվեց ԼՂՀ-ի հետ ուղղակի շփումների Ադրբեջանի պաշտպանության նախարարի պաշտոնակատար (այժմ նախարար) Սաֆար Աբիևը 1993 թվականի հուլիսի 25 ին հուլիսի 27 ին և օգոստոսի 4 ին հեռապատճենային (ֆաքս) կապի միջոցով (տես նաև բնագիր հեռապատճենները) հարկադրաբար դիմեց Պաշտպանության բանակի հրամանատար Սամվել Բաբայանին կրակը դադարեցնելու խնդրանքներով

**1993 թ հուլիսի 25** **№ 2 234**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ**
**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ**
**պարոն Ս ԲԱԲԱՅԱՆԻՆ**

**Երկու կողմերի համանման հանձնառության դեպքում պարտավորվում ենք 3 (երեք) օր ժամկետով, որի ընթացքում պայմանավորվածություն ձեռք կբերվի Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ղեկավարների հանդիպման մասին, դադարեցնել ամեն տեսակի հարձակողական գործողությունները, հրթիռային, հրետանային արկակոծությունները ու օդային ռմբակոծությունները**

АЗӘРБАЈҸАН РЕСПУБЛИКАСЫ
МҮДАФИӘ НАЗИРЛИЈИ

АЗЕРБАЙДЖАНСКАЯ РЕСПУБЛИКА
МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ

Бакы шәһ., Әзизбәјов проспекти 3 370601 г. Баку, проспект Азизбекова, 3

№ 2/231 « 25 » июля 1993 года

МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ НАГОРНОГО КАРАБАХА
КОМАНДУЮЩЕМУ АРМИЕЙ

господину С БАБАЯНУ

В случае аналогичного обязательства обеих сторон обязуемся сроком на 3 (три) дня в течение которых будет достигнута договоренность о встрече руководителей Азербайджана и Нагорного Карабаха прекратить любые наступательные операции, ракетные, артиллерийские обстрелы и воздушные бомбардировки.

Договоренность вступает в силу с 00 часов 25 июля 1993 года, по получении сторонами упомянутых обязательств. При достижении договоренности о вышеупомянутой встрече, прекращение огня автоматически продлевается до 24.00 часов дня этой встречи, если на ней не будут согласованы иные сроки

И.О.МИНИСТРА ОБОРОНЫ АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ

С.АБИЕВ

www.a-pdf.com



АЗӘРБАЈЧАН РЕСПУБЛИКАСЫ
МҮДАФИӘ НАЗИРЛИЈИ

АЗЕРБАЙДЖАНСКАЯ РЕСПУБЛИКА
МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ

Бакы шәһ., Завобаjев проспекти 3 — 370001 — г. Баку, проспект Азизбекова, 3

№ 2/358 — «27» июля 1993 ил

МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ НАГОРНОГО КАРАБАХА

КОМАНДУЮЩЕМУ РМИЕ

Господину С БАБАЯНУ

В случае аналогичного обязательства обеих сторон, обязуе ся гарантировать безопасность на контролируемой нами террито рии в районе высоты 482,2, где в 14.00 28.07.93 г. состоитс встреча официальных лиц Азербайджана и Нагорного Карабаха.

Достигнутая ранее договоренность между сторонами о прекр щении огня автоматически продлевается до 24.00 часов 28.07.9 если в ходе упомянутой встречи не будут согласованы иные сро

Со стороны Азербайджана во встрече примут участие

1 АБИЕВ С - И.О.Министра Обороны Азербайджанской Республики
2 АЛИЕВ И. - Государственный Министр
3 КНЗИМОВ И - Заместитель Председателя Государственного комитета по делам военнопленных и заложников
4. ЗУЛЬФУГАРОВ Т.-Представитель МИД
5 ТАЛЫБОВ Н -секретарь

И О МИНИСТРА ОБОРОНЫ АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ

С АБИЕВ

АЗӘРБАЈҸАН РЕСПУБЛИКАСЫ
МҮДАФИӘ НАЗИРЛИЈИ

АЗЕРБАЙДЖАНСКАЯ РЕСПУБЛИКА
МИНИСТЕРСТВО ОБОРОНЫ

Бакы шәһ., Әзимбәјов проспекти, 3 — 370001 — г. Баку, проспект Азимбекова, 3

№ 631 — «4» августа 1993 г.

МИНИСТРУ ОБОРОНЫ НАГОРНОГО КАРАБАХ
ПОЛКОВНИКУ С ОХАНЯНУ

В случае аналогичного обязательства обеих сторон обязуемся сроком на 10 (десять) дней, в течение которых будет достигнута договоренность о встрече старейшин армян и азербайджанцев Нагорного Карабаха а в последующем и встреча руководителей Азербайджана и Нагорного Карабаха прекратить любые наступательные операции, ракетные, артиллерийские обстрелы и воздушные бомбардировки.

Договоренность вступает в силу по получении сторонами упомянутых обязательств.

При достижении договоренности о вышеупомянутых встречах прекращение огня автоматически продлевается до 24.00 часов дня этой встречи, если на ней не будут согласованы иные сроки.

И О МИНИСТРА ОБОРОНЫ АЗЕРБАЙДЖАНСКОЙ РЕСПУБЛИКИ

С АБИЕВ

4 августа 1993 г

www.a-pdf.com



Պայմանավորվածությունն ուժի մեջ է մտնում 1993 թվականի հուլիսի 25-ի 00 ժամից, կողմերի՝ հիշատակված պարտավորվածություններն ստանալուն պես

Վերոհիշյալ հանդիպման մասին պայմանավորվածության ձեռքբերման դեպքում հրադադարն ինքնաբերաբար երկարաձգվում է մինչև այդ հանդիպման օրվա ժամը 24 00, եթե դրա ընթացքում այլ ժամկետներ չհամաձայնեցվեն

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Մ ԱԲԻԵՎ

1993 թվականի հուլիսի 27 № 2/358

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
պարոն Ս ԲԱԲԱՅԱՆԻՆ

Երկու կողմերի համանման հանձնառության դեպքում պարտավորվում ենք երաշխավորել անվտանգությունը մեր կողմից վերահսկվող տարածքում՝ 482,2 բարձունքի շրջանում, որտեղ 28 07 93 թ 14 00 կկայանա Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի պաշտոնապար անձանց հանդիպումը:

Ավելի վաղ կողմերի միջև ձեռք բերված հրադադարի վերաբերյալ պայմանավորվածությունն ինքնաբերաբար երկարաձգվում է մինչև 28.07.93 թ ժամը 24.00, եթե հիշատակված հանդիպման ընթացքում այլ ժամկետներ չհամաձայնեցվեն:

Ադրբեջանի կողմից այդ հանդիպմանը կմասնակցեն

1 ԱԲԻԵՎ Ս – Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարարի պաշտոնակատար

2 ԱԼԻԵՎ Ի – պետական նախարար

3 ՔՅԱՋԻՄՈՎ Ի – Ռազմագերիների և պատանդների գործերով պետական կոմիտեի նախագահի տեղակալ

4 ԶՈՒԼՖՈՒԳԱՐՈՎ Թ –ԱԳՆ ներկայացուցիչ

5 ԹԱԼԻԲՈՎ Ն –քարտուղար

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ս ԱԲԻԵՎ

www.a-pdf.com



**1993 թ օգոստոսի 4** **№ 631**

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ**
**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

**ՊԱՐՈՆ Ս ԲԱԲԱՅԱՆԻՆ**

**Երկու կողմերի համաձայնության դեպքում պարտավորվում ենք 10 (տասը) օր ժամկետով, որի ընթացքում ձեռք կբերվի պայմանավորվածություն Լեռնային Ղարաբաղի հայերի և ադրբեջանցիների ավագանիների հանդիպման մասին, իսկ այնուհետ նաև Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ղեկավարների հանդիպումը, դադարեցնել ամեն տեսակի հարձակողական գործողությունները, հրթիռային, հրետանային արկակոծությունները և օդային ռմբակոծությունները.**

**Պայմանավորվածությունն ուժի մեջ է մտնում կողմերի հիշատակված պարտավորություններն ստանալուն պես:**

**Վերոհիշյալ հանդիպումների մասին պայմանավորվածության ձեռքբերման դեպքում հրադադարն ինքնաբերաբար երկարաձգվում է մինչև այդ հանդիպման օրվա ժամը 24.00, եթե դրա ընթացքում այլ ժամկետներ չհամաձայնեցվեն**

**ԱԴՐԲԵՋԱՆ Ի ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ**
**ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**Ս ԱԲԻԵՎ**
**4 օգոստոսի 1993 թ**

Նույն թվականի հուլիսի 29 ին Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը հակամարտող կողմերին կոչ արեց կատարել թիվ 853 բանաձևի պահանջները դատապարտեց մասնավորապես ադրբեջանական հայաբնակ շրջանների հրետակոծման և քաղաքացիական բնակչության վրա հարձակումների համար որպես պատասխան քայլ հայկական ուժերի կողմից Աղդամ քաղաքի գրավումը

Այսօր երբ ամեն բան արդեն հեփևում է Սամվել Բաբայանը վերհիշելով ազատագրական մարտերի ընթացքը ավելի հաճախ Աղդամն է մտաբերում Իր հրամանատարական կյանքում հաղթանակներ շատ կային Մարտակերտ Քելբաջար Ֆիզուլի Ջաբրայիլ Կուբաթլու Օմար... Բայց գեներալը Պաշտպանության բանակի նախկին հրամանատարը միշտ հպարտորեն է խոսում Քելբաջարի և հատկապես Աղդամի մասին Եվ ահա թե ինչ է պատմում նա «Ջորքը շրջից հանելու համար մեզ նորանոր հաղթանակներ էին

պետք Խնդիրն առավել քան պարզ էր և ինձ համար
Մարտակերտն ամբողջովին ազատագրելն այնքան
հրատապ խնդիր չէր որքան Աղդամին մահացու հար
ված հասցնելը... Աղդամն Ադրբեջանի համար (նրանց
ասելով) ոչ այլ ինչ էր եթե ոչ ազգայնամոլության
խորհրդանիշ Նրանք ասում էին եթե ուզում ես փղա
մարդու տեսնել գնա Աղդամ երգչի Շուշի. Ես որոշե
ցի գնալ Աղդամ փղամարդ տեսնելու Այդ «փղամար
դուն» ուզում էի տեսնել դեռևս 1992 թվականից ո
հստակ գիտեի որ Աղդամի ազատագրմամբ շատ հար
ցեր կլուծվեն և արդեն պետք է չի լինի գուցե որ ծանր
մարտեր մղենք Ֆիզուլիում Ջաբրայիլում Կուբաթ
լուում Այդպես էլ եղավ. Թող չընկալվի այնպես թե ես
գուշակ եմ. Ուղղակի խնդիրը պարզից էլ պարզ էր. լի
նել-չլինելու հարց էր դրված ու անհրաժեշտ էր շատ
զգույշ ճկուն խփել այն կետերին, որտեղ հակառակոր
դը քեզ չէր սպասում Նրանք չէին սպասում որ մենք
խփելու ենք Աղդամին և առ այսօր էլ իրենց հրամանա
տարներին դավաճանի պիտակ են կպցնում Թյուր և
անհիմն է այն կարծիքը թե պայմանավորվածություն
է եղել կողմերի միջև. Ոչ մի պայմանավորվածություն
էլ չի եղել պարզապես մենք ունեցել ենք ռադիոհեռա
խոսային պիքակալման կանոնավոր համակարգ և
կարողացել ենք այդ համակարգի օգնությամբ պարզել
հակառակորդի յուրաքանչյուր տեղաշարժը Ավելաց
նեմ պատերազմի ժամանակ միայն ուժը զենքը չեն
որ հաղթանակներ են բերում ես այս եզրակացու
թյանն եմ եկել իմ կենսափորձով Պատերազմի ժամա
նակ զենքի ուժի առկայության հետ կարևոր է նաև
այն, թե դու որքանով ես տիրապետում հակառակորդի
ոգեբանությանը նրա ունեցած տեղեկատվությանն
ու շարժուղարձին Եթե դու չիմացար թե դիմացդ ինչ
որք է կանգնած ինչ է իրենից ներկայացնում հրամա
ատարը մարտի ժամանակ ինչպիսի ճկունություն էլ
ւնենա, դժվար կլինի հակառակորդին հաղթելը· Իսկ
ավելի ճիշտ ասեմ որ և Աղդամը և Քելբաջարը և
ացած հաղթանակները գաղափարի և ճիշտ մար
ավարության արդյունք էին ի վերջո հաղթեցին մեր
արտավարությունը մեր մշակած ազատամարտիկ
երի խելամտությամբ ու անձնազոհությամբ իրակա

նացված համարձակ, իրենց պարզությամբ ու հուսա
կությամբ առանձնացող օպերատիվ պլանները»

Աղդամից հետո Ադրբեջանի ղեկավարությունը
հասկանալով որ ռազմական գործողությունների
շարունակումը հղի է անկանխատեսելի հետևանքնե
րով, ստիպված հանդես եկավ հրադադար հաստա
տելու առաջարկությամբ 1993 թվականի հուլիսի 25
ից մինչև հուլիսի 28 ը ներառյալ ռազմաճակատում
չեն արձանագրվել լուրջ բախումներ Սակայն ինչ
պես միշտ այս դեպքում էլ հակառակորդը հրադադա
րը ծառայեցրեց իր բանակի մարտունակության վե
րականգնմանը ներուժի հավաքագրմանը ռուս ուկ
րաինացի չեչեն աֆղան արաբ վարձկաններով բա
նակի համալրմանը Եվ արդեն օգոստոսի սկզբին
ռազմաճակատում իրադրությունը վերստին փոխվեց



Սամվել
Բաբայան

## Ֆիզուլիի, Ջաբրայիլի և Կուբաթլուի ազատագրումը

Ըստ հետախուզության տվյալների հակառակոր
դը հարավային շրջաններում մեծ քանակի կենդանի
ուժ և զինտեխնիկա էր կուտակել Հակառակորդը
գործողության մեջ դրեց միջին հեռահարության
հրթիռներ որոնք խոշոր ավերածություններ պատ
ճառեցին խաղաղ բնակավայրերին Պաշտպանու
թյան բանակի հրամանատարը հարավային ռազմա
ճակատում (Ֆիզուլի Ջաբրայիլ Կուբաթլու) իրա
դրությունը շտկելու նպատակով մշակեց պաշտպա
նական հարձակողական օպերատիվ պլան որին
ընդդիմանում էր Հայաստանի քաղաքական ղեկավա
րությունը Ավելին Հայրութ մեկնեց Աստվածատուր
Պետրոսյանի ղեկավարած «բանագնացների» խում
բը համոզելու 5 րդ բրիգադի (ներառում էր Երևանի
Էջմիածնի, Արմավիրի Վեդիի Վանաձորի և այլ գու
մարտակներ ու վաշտեր) հրամանատար Մանվել
Գրիգորյանին չմասնակցել Ֆիզուլիի ազատագրման
ռազմական գործողությանը Սակայն Մանվել Գրի
գորյանը, կարևորելով ռազմագործողության անհրա
ժեշտությունը մերժեց բանագնացներին»



Նելսոն
Սողոմոնյան

www.a-pdf.com



«Խնդիրը պարզ էր, պատմում է գեներալը. հակառակորդը Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կուբաթլուի շրջանների կրակակետերից հրթիռակոծում էր Հադրութի, Մարտունու, Գորիսի, Կապանի շրջանների պաշտպանական դիրքերը: Խնդիր դրվեց լռեցնելու այդ կրակակետերը և հակառակորդի ուժերը հեռացնելու ԼՂՀ և ՀՀ սահմաններից: Ըստ մեր կազմած օպերատիվ պլանի հարձակումները զարգացրինք Ֆիզուլիի շրջանում: Մարտունու պաշտպանական շրջանի գումարտակները (ուղղությունների հրամանատարներ Նելսոն Սողոմոնյան և Մովսես Հակոբյան), հրետանու աջակցությամբ ճեղքելով հակառակորդի մարտակարգերը, ձախ թևից դուրս եկան մայրուղի և մոտեցան քաղաքի մատույցներին, իսկ Հադրութի պաշտպանական շրջանի Տողի գումարտակը «Կավար» բարձունքից հարձակումները զարգացրեց Ֆիզուլի քաղաքի ուղղությամբ: 5-րդ բրիգադը (հրամանատար Մանվել Գրիգորյան), լռեցնելով մի շարք կրակակետեր մի քանի ուղղություններով, շարժվեց դեպի Ֆիզուլի, դուրս եկավ Ֆիզուլի–Ջաբրայիլ ճանապարհը, վերահսկողության տակ առավ Հորադիզ գյուղ–մերձարաքսյան շրջան տանող խճուղին: Ազատագրելով Ֆիզուլիից դուրս եկող կենտրոնական ճանապարհից մինչև Հորադիզ գյուղը (մոտ 25 կմ տարածք)՝ բրիգադը մոտեցավ ընդհուպ մերձարաքսյան տարածքներին և դիրքավորվեց գետից 15 կմ հեռավորության վրա»:



Մովսես Հակոբյան



Մանվել Գրիգորյան

Ձեռնարկված մարտական գործողությունների ժամանակ 1993 թվականի օգոստոսի 22-ին ադրբեջանական 160-րդ գնդի և Ֆիզուլիի բրիգադի զորախմբերը, զգալով շրջապատման վտանգը, կորուստներ տալով, հարկադրված թողեցին Ֆիզուլի քաղաքը և շուրջ 1380 քառակուսի կմ տարածք ունեցող համանուն շրջանը:



Արթուր Աղաբեկյան

Այդ նույն ընթացքում Պաշտպանության բանակի զորաբաժանումները նպատակային գործողությունների շնորհիվ ոչնչացրին Ջաբրայիլի շրջանին ...րող տարածքներում տեղակայված հակառակոր... մի շարք ռազմական հենակետեր: Եվ արդեն օգոստոսի 23-ին Հադրութի պաշտպանական շրջանի հրամանատար Արթուր Աղաբեկյան այժմ գե

www.a-pdf.com



ներալ-լեյտենանտ) զումարտակները ազատագրելով Հադրութի շրջանի բռնազավթված մի շարք գյուղեր դուրս եկան և վերահսկեցին Ֆիզուլի Ջաբրայիլ ճանապարհի մնացած հատվածները Կենտրոնական պաշտպանական շրջանի (հրամանատար Սամվել Կարապետյան) ստորաբաժանումները, Սարինշենի բարձունքից սկսած ազատագրելով Հադրութի շրջանի բռնազավթված մյուս գյուղերը ճեղքելով հակառակորդի պաշտպանությունը հատելով սահմանները մտան Ջաբրայիլի շրջանի տարածք Հադրութի պաշտպանական շրջանի մի այլ զումարտակ որոշ ու



Ց լոդ բրիգադի Երևանի գո մարտակի ա զապամարտիկնե ր



Մալաթիա ջոկատի ազատամարտիկներ (5 ր ղ բրիգադի կազմո մ

www.a-pdf.com



շացումով զարգացնելով գրոհները մարտի բռնվելով հակառակորդի մի խմբավորման դեմ և օգտագործե լով Կենտրոնական պաշտպանական շրջանի ստորա բաժանումների հաջողությունները նույնպես մտավ Ջաբրայիլի շրջանի տարածք

Օգոստոսի 23 ին Կենտրոնական Հադրութի պաշտպանական շրջանների ստորաբաժանումներն ազատագրեցին Լենքորանի գումարտակի կողմից պաշտպանվող Ջաբրայիլ շրջկենտրոնը իսկ օգոստո սի 25 ին Պաշտպանության բանակի վերահսկողու թյան տակ անցավ 1050 քառակուսի կմ տարածք ու



Արշալույս Փայփյան



5 րդ բրիգադի Վանաձորի գումարտակի ազատամարտիկներ



5 րդ բրիգադ| մի խա մ. ազատամարտ իկներ

www.a-pdf.com



նեցող Ջաբրայիլի շրջանը Մեր զորամասերը դիրքա վորվեցին Արաքս գետից 15 կմ հեռավորության վրա ***(տե՛ս ս թիվ 10 և թիվ 11 քարտեզները)***

Զորահրամանատարը հասկացավ որ օրըստօրե հակառակորդն ավելի է թուլանում, իսկ այդ ընթացքում կայունացել ու ամրացել է հարավային ռազմաճակատի մեր զորամասերի պաշտպանունակությունը Ֆիզուլիի և Ջաբրայիլի շրջանների ազատագրումից հետո հարա վային ռազմաճակատում սեպի պես խրված մնացել էր Կուբաթլուի շրջանը Ահա թե ինչ է վերհիշում այդ մա սին Սամվել Բաբայանը ‹Ֆիզուլին ու Ջաբրայիլն ազատագրելուց հետո մեր զորախմբերը դուրս եկան մի կողմից Ջաբրայիլից դեպի Կարախանբեյլի Կորգան Հորադիզ գյուղերի ուղղություն մյուս կողմից Խորով լու Խավիսլու գյուղերը մինչև Դաղ Թումասի բնագծեր Սեպի պես խրված էր մնացել Կուբաթլուն» Սամվել Բաբայանը քաջ գիտակցում էր թե ինչպիսի ռազմավա րական նշանակություն ունի Կուբաթլուի շրջանը թե Ադրբեջանի և թե՛ ԼՂՀ ի ու Հայաստանի համար Խնդիր դրվեց ազատագրելու Կուբաթլուն

Հարկ է այստեղ նշել, որ ինչպես Կուբաթլուի այն պես էլ ընդհանուր ռազմական գործողությունների (Ֆի զուլի Ջաբրայիլ Կուբաթլու) օպերատիվ պլանը համա ձայնեցվել էր ԼՂՀ Պաշտպանության պետական կոմի տեի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ Բայց, հա կառակ և ի պատասխան Ստեփանակերտի որոշման Երևանը Գորիս գործուղեց «բանագնացների› մի այլ խմբի (Վահան Շիրխանյան Գագիկ Գևորգյան և ուրիշ ներ)՝ կանխելու Գորիսում Կապանում և Լաչինում տե ղակայված հայաստանյան ուժերի (հրամանատարներ Միքայել Գրիգորյան, Հայկազ Բաղմանյան) մասնա կցությունը Կուբաթլուի ռազմական գործողությանը



Վաչագան Իշխանյան

Ըստ օպերատիվ պլանի Շուշիի պաշտպանական շրջանի (հրամանատար Վաչագան Իշխանյան) ստո րաբաժանումները Քիրս լեռան գոտուց և Հադրութի պաշտպանական շրջանի Խծաբերդի ու Տումիի վաշ- տերը մարտանցումով պետք է մտնեին Կուբաթլուի շրջանի տարածք Սակայն վերջիններս, հայաստա նյան նշված ուժերի համագործակցությունը չստանա լու պատճառով որոշ կորուստներ կրելով ստիպված

www.a-pdf.com

# ՖԻԶՈՒԼԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ
(1993թ օգոստոսի 22)




ՄԱՍՇՏԱԲ 1: 500 000

Թիվ 10

# ՋԱԲՐԱՅԻԼԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ

(1993 թ. օգոստոսի 23)




Թիվ 11

www.a-pdf.com



նահանջեցին ելման դիրքերը Ավելին ռազմական գործողությունը հետաձգվեց մեկ շաբաթով

Ստեղծված իրավիճակը կարգավորելու համար Սամվել Բաբայանը նախ Մարտակերտի պաշտպա նական շրջանի (հրամանատար Նորայր Դանիելյան) մի գումարտակ (150 ազատամարտիկ) տեղափոխեց Լաչին և տեղակայեց Հայկազ Բաղմանյանի ուղղու թյունում ապա մեկնեց Ջաբրայիլ. Մարտունու (Մով սես Հակոբյան) Հադրութի (Արթուր Աղաբեկյան) Կենտրոնական (Սամվել Կարապետյան) պաշտպա նական շրջանների հրամանատարների առջև խնդիր դրվեց ստեղծելու 3 խմբավորում բուп հարձակման ուղղությունների

Եվ հակառակ Երևանի ոչ իրատեսական պնդում ների օգոստոսի 29 ին, ձևավորված խմբավորումնե րի ստորաբաժանումներին զորահրամանատարը հրամայեց հարձակումներ ձեռնարկել Դաղ Թումասի հատվածից և դուրս գալ գլխավոր մայրուղի փակել Խանլիղի կամուրջը Լաչին Մամեդբեյլի ճանապարհ ների խաչմերուկներն ու ճանապարհահատվածները և օղակի մեջ վերցնել հակառակորդին Վերջինս բա վական ուժեղ էր և նրա հարձակողական ավյունը սկզբնափուլում չէր սառել Սակայն Պաշտպանու թյան բանակի ստորաբաժանումները իրագործելով օպերատիվ պլանի առաջադրանքները (հարվածային խմբերով հանկարծահաս հարձակումներ, թիկունքա յին գրոհներ ճանապարհների վերահսկողություն հրետանային նշանառու արկակոծումներ մանևրայ նության առավելություն և այլն) խուճապ առաջաց նելով հակառակորդի շարքերում, 1993 թվականի օգոստոսի 31 ին գրոհով մտան Կուբաթլու շրջկենտ րոն և վերահսկողության տակ առան համանուն շրջանի հյուսիսային տարածքները Զարգացնելով հաջողությունները ինքնապաշտպանական ուժերը դիրքավորվեցին Արաքս գետից 15 կմ հեռավորու թյան վրա *(տե՛ս թիվ 12 քարտեզը)*

Ռազմական գործողությունից հետո Երևանից հրաման ստացվեց որ Մանվել Գրիգորյանի բրիգա դը պետք է դուրս բերվի Ֆիզուլիի հատվածից Հա դրութ ուղղաթիռով Մանվել Գրիգորյանը մեկնեց Երևան և հանդիպեց Լևոն Տեր Պետրոսյանի հետ



Քրիստափոր Իվանյան

www.a-pdf.com



Դրանից հետո 5 րդ բրիգադը նոր համալրում ստա նալու և վերակազմավորվելու պատրվակով դուրս բերվեց փարածքից և փեղափոխվեց Երևան

‹5 րդ բրիգադի փոխարեն դիրքեր փեղափոխեցի Շուշիի գունդը Մի քանի օր դիրքերը պահելուց հե տո ինչ-ինչ‹ պատճառաբանություններով (ազատա մարտիկներից մեկի հարսանիքի առիթով) գնդի հրամանատարությունը ցանկություն հայտնեց մեկ նելու Ստեփանակերտ Նրան ընդառաջում ենք և փո խարենը դիրքեր ենք տեղափոխում Կենտրոնական պաշտպանական շրջանի ստորաբաժանումները Այդ ժամանակ ռազմաճակատի համակարգող էի նշանա կել գեներալ Քրիստափոր Իվանյանին ով էլ այդ պատճառաբանությունների մասին զեկուցել էր ինձ Հանձնարարեցի բոլոր հրամանատարներին պար տադիր կատարել Իվանյանի բոլոր որոշումները որոնք առնչվում են ստորաբաժանումների կառավար ման հարձակման պաշտպանության և նմանատիպ այլ հարցերի› պատմում է Սամվել Բաբայանը

Սամվել Բաբայանի մշակած օպերատիվ պլանով Ֆիզուլիի Ջաբրայիլի և Կուբաթլուի ազատագրումից հետո ստեղծվեց ռազմաքաղաքական յուրահատուկ վիճակ Արդեն 1993 թվականի սեպտեմբերին ղարա բաղյան ուժերը մոտեցել էին Իրանի Իսլամական Հան րապետության պետական սահմանին Ադրբեջանը և տարածաշրջանի տերությունները խուճապի էին մատնվել Հայաստանի Հանրապետությունում հավա տարմագրված գրեթե բոլոր դեսպաններն իրենց պե տությունների բողոքը հայտնեցին Հայաստանի իշխա նություններին ակնկալելով որ վերջիններս կարող են ազդել ԼՂՀ քաղաքական և զինվորական իշխանու թյունների վրա մարտական գործողությունները դա դարեցնելու համար Այդ նույն ժամանակ Թուրքիա յում կոչեր հնչեցին Հայաստանը ռմբահարելու և նրա դեմ զինված հարձակումներ ձեռնարկելու մասին Իրանի Իսլամական Հանրապետությունը սկսեց պայ մանական «Մողան» անվանմամբ զորավարժություն ները մարտական գործողությունների գոտու անմիջա կան հարևանությամբ Օգոստոսի 31 ին Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ ձեռք բերվեց տասն օրյա ժամկետով հրադադարի պայմանավորվածու

www.a-pdf.com

# ԿՈՒԲԱԹԼՈՒԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ (1993 թ օգոստոսի 31 )




Թիվ 12

թյուն Համաձայնագիրը ստորագրեցին ԼՂՀ Պաշտ
պանության բանակի հրամանատար Սամվել Բաբա
յանը իսկ Ադրբեջանի կողմից պաշտպանության նա
խարարի պաշտոնակատար Սաֆար Աբիևը·
1993 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում
ռազմաճակատների գրեթե բոլոր հատվածներում լի
արժեք մարտական գործողություններ չարձանա
գրվեցին Այդ ընթացքում ակտիվություն նկատվեց
դիվանագիտական շփումների բնագավառում: Արդեն
սեպտեմբերի 22 28 ին Փարիզում ԵԱՀԽ Մինսկի
խմբի նախագահն առաջարկեց խաղաղ կարգավոր
ման համար «Անհապաղ միջոցառումների ժամանա
կացույց» Փարիզյան խորհրդակցությունների ար
դյունքով՝ Լեռնայինը Ղարաբաղը ճանաչվեց հակա
մարտ կողմ Ստորագրվելիք փաստաթղթով հակա
մարտ կողմերը պարտավորվելու էին զինադադար
պահպանել մինչև նոյեմբերի 2-ը Մինսկի խորհրդա
ժողովի բացումը· Սակայն Ադրբեջանը մերժեց այս
նրագիրը փորձելով արծարծել անընդունելի այնպի
սի հարցեր ինչպիսիք են արցախյան ուժերը Լաչինից
և Շուշիից դուրս բերելը և այլն Ավելին արդեն հոկ
տեմբերին, ադրբեջանական կողմը հերթական ան
գամ խախտեց պայմանավորվածությունը հիմ
նախնդրի լուծումը դարձյալ մղելով ռազմական հուն
Հակառակորդը օգտվելով հրադադարի ընձեռած
հնարավորությունից լայնածավալ հարձակողական
գործողություններ նախաձեռնեց Հադրութի շրջանի
սահմանամերձ դիրքերի ուղղությամբ. Մասնավորա
պես հակառակորդի բանակը համալրվեց վարձկան
ների (մոջահեդների) ջոկատներով ձեռք բերվեցին
տեխնիկա և սպառազինություն (միայն Ուկրաինա
յից S 55 տիպի 40 տանկեր և այլն)



Աֆղան վարձկաններ

Հոկտեմբերի երկրորդ տասնօրյակին Կենտրոնա
կան Հադրութի Մարտունու պաշտպանական
շրջանների հրետանային տանկային գումարտակ
ներն ու վաշտերը սկսեցին մարտական գործողու
թյունները: «Կենտրոնական պաշտպանական շրջա
նը հարձակումներ ձեռնարկեց դեպի Հորադիզ կայա
րան Մարտունու պաշտպանական շրջանի ստորա
բաժանումները (հրամանատար Մովսես Հակոբյան)
դեպի Բոյուք Բահմանլու Աշաղի Յաղլևենդ Հադրու

www.a-pdf.com



թի գունդը Ջաբրայիլից մարտանցումով մտավ Հորա դիզ–Ջանգելան տանող ճանապարհը Կարճատև մարտերից հետո կարողացանք դուրս գալ մերձարաք յան տարածքներ և այդ հատվածներում ամրացնել մեր դիրքերը. Նելսոն Սողոմոնյանի գունդը հարձա կումներ ձեռնարկեց Աղբուռուն բարձունք–Կուրա պատկինո հատվածում ազատագրեց ծորակը որից հետո կարգավորեցինք և ամրապնդեցինք այդ շրջան ներում սահմանային պաշտպանական բնագծերը Դրանից հետո Հադրութի պաշտպանական շրջանի ստորաբաժանումները գրոհներ զարգացրին դեպի Մինջևան (այժմ՝ Միջնավան)», պատմում է Սամվել Բաբայանը *(տե՛ս թիվ 13 քարտեզը)* Հմտորեն կազմա կերպված մարտական գործողությունների շնորհիվ Պաշտպանության բանակի ստորաբաժանումները ճնշեցին Հորադիզի տրանսպորտային հանգույցում և նրա շրջակայքում տեղակայված հակառակորդի հե նակետերը որպես ռազմավար վերցրին S 72 տիպի երեք տանկ հետևակի մարտական չորս մեքենա ‹Գրադ› համակարգի չորս հրթիռային կայանքներ բեռնատար մեքենաներ մեծ քանակությամբ զենա մթերք գերեվարեցին 100 ից ավելի զինվորների Մարտական գործողությունների ընթացքում հայկա կան կողմից զոհվեցին ութ և վիրավորվեցին տասն մեկ ազատամարտիկներ

Այս ընթացքում, Սամվել Բաբայանի հրամանով հոկտեմբերի 25 26-ին միակողմանիորեն դադարեցվե ցին մարտական գործողությունները, որպեսզի Ջան գելանի շրջանի խաղաղ բնակչությունն անվտանգ գո տի տարհանվի Հակառակորդի Հորադիզ Կուբաթ լու–Ջանգելանի զորախմբի ջախջախման ռազմական գործողությունն ավարտին հասցվեց նոյեմբերի 1 ին երբ Պաշտպանության բանակի ստորաբաժանում ներն իրենց վերահսկողությունը հաստատեցին Ջան գելան շրջկենտրոնի (այժմ՝ Կովսական ) և ռազմական հենակետերի վերածված մոտակա բնակավայրերի նկատմամբ Այս ռազմական գործողության շնորհիվ Ադրբեջանը կորցրեց վերահսկողությունը Հորադիզ երկաթուղային հանգույցից մինչև Հայաստանի Հանրապետության սահմանը ձգվող տարածքի վրա (շուրջ 140 կմ) և մինչև սահմանապահ զորամասի

www.a-pdf.com

# ՀՈՐԱԴԻԶԻ ԵՆԹԱՇՐՋԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ
(1993 թ հոկտեմբեր)




ՄԱՍՇՏԱԲ 1: 500 000

Թիվ 13

www.a-pdf.com

# ԶԱՆԳԵԼԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ

## (1993 թ նոյեմբերի 1 )









www.a-pdf.com



կազմավորումը Հորադիզում պեղակայվեց 71 րդ առանձին մոտոհրաձգային գումարտակը *(տե՛ս թիվ 14 քարտեզը)* 1992 94 թվականներին Հայաստանի Հան րապետությունում Ռուսաստանի Դաշնության արտա կարգ և լիազոր դեսպան Վլադիմիր Ստուպիշինը վեր հիշելով այդ ժամանակները գրել է «Դե իսկ երբ 1993 թ աշնանը ղարաբաղցիները (իմա Պաշտպանության բանակի ստորաբաժանումները Հ Խ ) ադրբեջանցի ներին դուրս մղեցին Հայաստանին սահմանակից շրջաններից Պոլ Գոբլի (ամերիկացի փորձագետ վերլուծաբան առաջարկել է հակամարտության կար գավորման ծրագիր որով նախատեսվում էր Լաչինի և Մեղրու շրջանների փոխանակմամբ ուղղակի աշխար հագրական կապեր հաստատել համապատասխա նաբար Ադրբեջանի և Նախիջևանի Հայաստանի և ԼՂ ի միջև - Հ Խ ) խոստացած ‹փոխհատուցման ծրագրից (ամեն փարբերակով) ոչինչ չմնաց»:

Ազատագրված տարածքն ինքնին ապահովեց պաշտպանական նվազագույն անհրաժեշտ խորու թյուն, որտեղ հնարավորություն ընձեռվեց ստեղծելու շելոնացված (բազմաշերտ) պաշտպանություն, այս ինքն պաշտպանական մի քանի բնագիծ ունենալու կարելիություններ Արցախի խիտ բնակեցված կենտ րոնական շրջանները ներառյալ մայրաքաղաք Ստե փանակերտը ինչպես նաև Հայաստանի Գորիսի Կապանի ու Մեղրու շրջանների բնակավայրերն ար դեն գտնվում են ադրբեջանական հրետանու և Գրադ ՄՄ 21 համազարկային կրակի համակարգե րի հրթիռակոծման հասանելիության շառավղից դուրս Կուբաթլուի Զանգելանի Ջաբրայիլի և Ֆիզու լիի շրջաններն ազատագրելով ու ճակատի գիծն ավելի քան 100 կմ դեպի արևելք տեղափոխելով հայկական կողմը չեզոքացրեց 40 կմ լայնություն ունեցող և պաշտպանության կազմակերպման տեսանկյունից խոցելի Մեղրու (նաև Կապանի Հ Խ ) շրջանին սպառնացող վտանգը [տե՛ս Դավիթ Սիմոնյան «Ազատագրված տարածքը Հայաստանի ՀՀ և ԼՂՀ) ռազմական համապերստում», «Գոլոս Ար մենիի» (ռուս., 17 08.2006թ.)]

1993 թվականի նոյեմբերի 12 ին Միավորված ազ գերի կազմակերպության Անվտանգության խոր

հուրդն ընդունեց իր թիվ 884 բանաձևը որտեղ պաշտ
նապով նշվել են Ադրբեջանի կողմից հրադադարի
խախտման փաստն ու ռազմական գործողություննե
րի ծավալումը և որպես հետևանք ու պատասխան
հայկական ուժերի կողմից Զանգելանի շրջանի և Հո
րադիզ ավանի գրավումը.

1993 թվականի վերջին ըստ հետախուզության
տվյալների, հակառակորդը լարված նախապատրաս
տական աշխատանք իրականացրեց հարավային
ռազմաճակատում Բեյլոգանի շրջանում հակառակոր
դը կենտրոնացրեց 10 տանկ հետևակի մարտական
մեքենաներ 18 «Գրադ» կայանք հեռահար թնդանոթ
ներ ավելի քան 500 մոջահեդների, բազմաթիվ այլ
վարձկանների 300 հետևակազորայինների հատուկ
նշանակության ստորաբաժանումների զինվորների և
այլն Մարտեր ծավալվեցին ռազմաճակատի ողջ եր
կարությամբ Արաքս գետից մինչև Օմարի լեռնանցք
Հակառակորդը ձգտում էր միաժամանակյա հարված
ներով ջլատել Պաշտպանության բանակի ստորաբա
ժանումների դիմադրությունը նաև Թալիշ Մարտա
կերտ և Հադրութ–Մարտունի ուղղություններում
Դեկտեմբերի երկրորդ կեսին հակառակորդը ռազմա
ճակատի որոշ հատվածներում ունեցավ մասնակի
հաջողություններ. Կատաղի մարտերից հետո մեր
ստորաբաժանումները ստիպված դիրքերը թողեցին
Մարտակերտի շրջանի Թալիշ Մաղավուզ գյուղերում
մի շարք պահակակետեր Փափրավենդ գյուղի մո
տակայքում և մի առանձին դիրք Մարտունու պաշտ
պանական շրջանի Աղբուռուն տեղամասում` Հրամա
նատարի մշակած պլանով դեկտեմբերի վերջին
Պաշտպանության բանակի ստորաբաժանումները
պաշտպանական մարտերից հետո անցնելով հակա
հարձակման վերագրավեցին կորցրած դիրքերը
ճնշեցին հակառակորդի հենակետերը և ընդհուպ
մոտեցան Թարթառի ջրանցքի աջափնյակին



Միքայել
Գրիգորյան

Այնուամենայնիվ, իրավիճակը ծայրաստիճան լար
ված էր հարավային ռազմաճակատում Հադրութի
պաշտպանական շրջանի ուղղությամբ` 1993 թվականի
դեկտեմբերի վերջին Կապանի բրիգադը (հրամանա
տար Միքայել Գրիգորյան այժմ գեներալ-լեյտե
նանտ) տեղակայված էր 2 րդ էշելոնում Գորիսի բրի

www.a-pdf.com



գադը (հրամանատար Վալերի Գրիգորյան) և ներքին զորքերի ստորաբաժանումները Արաքսի գետափնյա հատվածում, Հադրութի պաշտպանական շրջանը առաջին գծում. Հակառակորդը հարվածի գլխավոր թիրախ էր ընտրել Հորադիզ երկաթուղային հանգույցի հատվածը Կենտրոնացնելով իր հարվածային խմբավորումները հակառակորդը նույն ժամանակահատվածում կարողացավ ներխուժել 11 բնակավայր և գրավել հայ իրանական սահմանի շուրջ 30 կմ երկարությամբ փեղամաս մասնավորապես` հակառակորդի 702 րդ գնդի ստորաբաժանումները գրավեցին Հորադիզ ավանը և երկաթուղային կայարանը Հակառակորդի հաջողությունները պայմանավորված էին ոչ միայն նրա զինուժի և սպառազինության քանակի գերակշռությամբ այլև այն իրողությամբ որ Իրանին սահմանամերձ տարածքով հակառակորդի մի խոշոր խափանարար խմբավորում կարողացավ անսպասելիորեն դուրս գալ մեր զորախմբերի թիկունքը և հանկարծակիի բերել հայ մարտիկներին Մեր զորախմբերն իրենց անփութության պատճառով թողեցին դիրքերը նահանջեցին պաշտպանական երկրորդ բնագծեր և Հորադիզ գյուղի շրջանում ստեղծեցին պաշտպանություն «Հարավային ստորաբաժանումների (Կապանի և Գորիսի բրիգադների) հրամանատարները մշակեցին իրենց օպերատիվ պլանը Սակայն մարտական գործողությունների ընթացքում պարզվեցին այդ պլանի անկատարությունը ստորաբաժանումների համագործակցության թերացումները Մեկնելով Ֆիզուլի և ծանոթանալով իրավիճակին` մշակեցի օպերատիվ նոր պլան ու կազ



Կապանի բրիգադի մի խումբ ազատամարտիկներ

մակերպեցի հակահարձակումը Ռազմական գործողության համակարգող նշանակեցի Սեյրան Օհանյանին Գործողությանը մասնակցեցին Կենտրոնական Մարտունու (հրամանատար Մովսես Հակոբյան) Հադրութի (հրամանատար Վարդան Ավետիսյան այժմ գեներալ մայոր) պաշտպանական շրջանների ստորաբաժանումները 77-րդ ԱՄՀԳ (հրամանատար Ռոմիկ Մարգարյան), նրանց կազմում հայաստանյան մի շարք կամավորական ջոկատներ» պատմում է Սամվել Բաբայանը



Վարդան Ավետիսյան

Բացի այդ հունվարի սկզբին Ստեփանակերտ տեղափոխված 5 րդ բրիգադի մի գումարտակ Սամվել Բաբայանը տեղակայեց Ֆիզուլիի ուղղությունում նկատի ունենալով տեղանքին ազատամարտիկների ծանոթ լինելու հանգամանքը իսկ բրիգադի մնացած գումարտակները Մարտակերտի շրջանի Մեծշեն գյուղում Առաջարկված օպերատիվ պլանով Պաշտպանության բանակի խմբավորումները 1994 թվականի հունվարի առաջին կեսին վնասազերծեցին հակառակորդի ռազմական հենակետերը Կորգան Աշաղի Աբդուռահմանլի Յուխարի Մեյիդահմեդլի և մերձարաքսյան շրջանի այլ բնակավայրերում Ազատագրված շրջանի հատվածում կարգավորվեցին սահմանները ***(տես թիվ 15 քարտեզը)*** Դրան զուգահեռ հակառակորդը լայնածավալ ռազմական գործողությունների արդյունքում ռազմաճակատի մի շարք հատվածներում կարողացավ ճեղքել արցախյան ուժերի պաշտպանությունը իսկ մարտագծի հյուսիսարևելյան Մադաղիս–Հակոբ Կամարի – հեռուստաաշտարակի բարձունք ուղղություններում ստանալ անվիճելի առավելություն Նույն ժամանակահատվածում մարտական ակտիվություն նկատվեց 2-րդ և 3-րդ պաշտպանական շրջանների դիրքերի ուղղությամբ



Ռոմիկ Մարգարյան

Հակառակորդի կողմից չընդհատվող մարտական գործողությունների կանխման նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գլխ նախագահության 1994 թվականի հունվարի 13 ի «ԼՂՀ պաշտպանության պետական կոմիտեին հանրապետության տարածքում մասնակի զորակոչ անցկացնելու լրացուցիչ լիազորություններ տալու մասին» որոշմանը համապատասխան անցկացվեց արական սեռի

www.a-pdf.com

# ՀՈՐԱԴԻԶԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ (1994թ հունվար)




Թիվ 15

www.a-pdf.com





5 րդ բրիգադի ազա տամարտիկները Մարտակերտում. ձախից երրորդը՝ Մանվել Գրիգորյան

45–50 տարեկան քաղաքացիների զորակոչ Մինչ այդ հունվարի 11 ին հրապարակվեց ԼՂՀ ԳԽ նախագա հության «Զինվորական հանցագործությունների հա մար քրեական պատասխանատվության մասին» ԼՂՀ օրենքի կիրարկման կարգի պարզեցման մասին հրա մանագիրը ըստ որի՝ Պաշտպանության բանակի զինվորական տրիբունալի համակարգում ստեղծվե ցին ռազմադաշտային դատարաններ:

Հունվարի 25 ին 5 րդ բրիգադը ստեղծելով ամուր պաշտպանություն հակահարձակման անցավ ազա տագրեց Մաղավուզ Հակոբ Կամարի գյուղերը և վե րականգնեց նախկին դիրքերը Նույն ժամանա կահատվածում Մարտակերտի հյուսիսային հատվա ծում հարձակողական հաջող գործողություններ իրա կանացրեց «Եղնիկներ ջոկատը (հրամանատար Սերգեյ Չալյան)՝ Մարտակերտյան այս ռազմական գործողությունների ժամանակ ցավոք եղան բազմա թիվ զոհեր և վիրավորներ

## Օմարի ազատագրումը



Գուրգեն Մելքոնյան

Իրավիճակը սրված էր նաև Օմարի լեռնանցքի շրջանում: Քելբաջարի ազատագրումից հետո 1 04 1993թ.) շրջանի պաշտպանական դիրքերում տե ղակայվել էին հյուսիսարևմտյան զորախմբի ուժերը հրամանատար Գուրգեն Մելքոնյան այժմ գեներալ



Բակո
Սահակյան



Պավել
Գրաչով

լեյտենանտ) 1993 թվականի դեկտեմբերի վերջին հակառակորդը լայնածավալ հարձակումներ ձեռնարկեց այդ ուժերի դիրքերի վրա և հասավ որոշակի հաջողության Ադրբեջանի հրամանատարության նպատակը պարզ էր ճեղքել հայկական ուժերի պաշտպանությունը դուրս գալ Քելբաջարը Կիրովաբադին կապող ճանապարհի խաչմերուկը վերահսկողություն հաստատել ԼՂՀ ի համար կենսապահովության և ռազմավարական նշանակության Վարդենիս–Մարտակերտ միջանցքի նկատմամբ Հակառակորդի գերազանցող ուժերի հարվածների տակ հյուսիսարևմտյան զորախմբի ստորաբաժանումները կորուստներով հետ քաշվեցին Թարթառ գետից դեպի արևմուտք փորձելով ամրանալ Վարդենիսի շրջանի թիկունքային պաշտպանական բնագծերում: Հայկական ուժերի ժամանակավոր անհաջողության հետևանքով հակառակորդը վերստին խլեց ռազմավարական նախաձեռնությունն այդ ճակատում և թարմ ուժեր մտցնելով սկսեց առաջանալ դեպի հայկական ուժերի պաշտպանական դիրքերը Ստեղծվեցին հակառակորդի Արցախի արևմտյան սահմաններ դուրս գալու ուղղակի վտանգ և Հայաստանի հետ Արցախի ցամաքային հաղորդակցության երկրորդ ուղին կորցնելու սպառնալիք Այդ նույն ժամանակ Ադրբեջանը փորձում էր հաղթանակներ ձեռք բերել նաև քաղաքական ճակատում և ձգտում էր հասնել կրակի դադարեցմանն իր համար նպաստավոր սահմանների առկայությամբ 1994 թվականի փետրվարի 18 ին Ռուսաստանի Դաշնության ռազմական ղեկավարության անմիջական նախաձեռնությամբ Մոսկվայում պատրաստվել էր ադրբեջանական և հայկական կողմերի միջև կրակի դադարեցման վերաբերյալ Արձանագրություն որը ստորագրեցին ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը Պաշտպանության բանակի լիազոր ներկայացուցիչ Բակո Սահակյանը (այժմ 2007 թ ից ԼՂՀ նախագահ գեներալ մայոր) Ադրբեջանի պաշտպանության նախարար գեներալ լեյտենանտ Մուհամեդռաֆի Մամեդովը և որպես միջնորդ ՌԴ պաշտպանության նախարար բանակի գեներալ Պավել Գրաչովը

Արձանագրությունը ներկայացվում է հայերեն թարգմանված

www.a-pdf.com



փետրվ 18 94 թ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարարը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը, Լեռնային Ղարաբաղի զինված կազմավորումների լիազոր ներկայացուցչի մասնակցությամբ, այսուհետ Կողմերը

- ղեկավարվելով զինված հակամարտության մեջ ներգրավված ժողովուրդների արմատական շահերով,
- դրսևորելով վճռականություն աջակցելու ՄԱԿ ի Անվտանգության խորհրդի թթ. 822, 853, 874, 884 բանաձևերի ու Հայտարարության իրագործմանը, և պատրաստակամություն նպաստելու Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԵԱՀԽ Մինսկի համաժողովի շրջանակներում հակամարտության համապարփակ կարգավորմանը,
- Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարի միջնորդությամբ

համաձայնեցին հետևյալում.

1.«Կողմեր» եզրի օգտագործումը չի նշանակում որևէ այլ քաղաքական կամ իրավական կարգավիճակի ճանաչում՝ բացի սույն Արձանագրության մեջ նշվածից

2 Կողմերը պայմանավորվեցին ապահովել կրակի և ռազմական գործողությունների լիակատար դադարեցումը 1994թ մարտի 1 ի 00 ժամ 00 րոպեից, իսկ զորքերի հետքաշումը 1994թ մարտի 1 ի ժամը 10:00-ից:

Կրակի դադարեցման և զորքերի հետքաշման վերաբերյալ Կողմերի համապատասխան հրամանները կտրվեն և դրանց կատարման համար պատասխանատու զինվորական կազմավորումների հրամանատարներին (պետերին) կհասցվեն 1994թ. փետրվարի 28-ի ժամը 15:00-ից ոչ ուշ:

3 Զորքերի հետքաշումն իրականացնել 3 օրվա ընթացքում, Կողմերի զորքերի տարանջատման համաձայնեցված բնագծերում՝ նկատի ունենալով զավթված տարածքների ազատումը կարճագույն ժամկետներում՝ միևնույն ժամանակ լիակատար վստահությամբ

4 Ստեղծել փոխադարձ անվտանգության գոտի 20–30 կմ լայնությամբ (ընդ որում՝ ծանր սպառազինության հետքաշումն ու համակենտրոնացումն իրականացնել Կողմերի զորքերի շփման գծից ոչ պակաս 20 կմ հեռավորությամբ) Հյուսիսային,Կենտրոնական և Հարավային ուղղություններով, որոնցում կարգելվի զորքերի ամեն ռազմական գործունեություն, ներառյալ օգնական ուժերի տեղափոխումները, զինվորական ստորաբաժանումների և ռազմական տեխնիկայի, ինչպես նաև զինվորական ստորաբաժանումներին զինամթերք ու ռազմահանդերձանք մատակարարող տրանսպորտային միջոցների փոխադրումները, մարտական ինքնաթիռների և մարտական ուղղաթիռների, ինչպես նաև այլ թռչող սարքերի թռիչքները, որոնք կարող են օգտագործվել ռազմական նպատակներով՝ ներառյալ հետախուզական թռիչքները բնակավայրերի և ռազմական օբյեկտների շրջափակումը

5 Ձեռք բերված պայմանավորվածությունների կատարման վերահսկողությունն իրագործելու նպատակով կազմավորել

www.a-pdf.com

անվտանգության (վերահսկողության) գոտի, տեղակայել Կողմերի և Ռուսաստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչներից բաղկացած խառը կազմի դիտարկման պահակակետեր: Ստեղծել ձեռք բերված պայմանավորվածությունների իրացման վերահսկողության Միացյալ շտաբ, որը գլխավորում է Ռուսաստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչը: Անվտանգության (վերահսկողության) գոտիներում տեղաբաշխել խմբեր՝ Միացյալ շտաբի կազմից, որոնք նույնպես գլխավորում են Ռուսաստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչները Միացյալ շտաբի աշխատանքի սկիզբն է 1994թ. մարտի 1-ի ժամը 12:00 Միացյալ շտաբի կազմը, լիազորությունները, տեղաբաշխման կետերը, նրա պահպանության և անհրաժեշտ տրանսպորտով, ներառյալ ուղղաթիռներով, ապահովման կարգը, նաև դիտարկման պահակակետերի կոնկրետ կազմը, տեղակայման վայրերն ու դրանց ապահովման կարգը, ինչպես նաև Կողմերի զորքերի հետքաշման համաձայնեցված բնագծերը, ծանր սպառազինության համակենտրոնացման շրջանները որոշել աշխատանքային կարգով Կողմերի փորձագետների խմբերին մինչև 1994թ մարտի 1 ը, միջազգային իրավունքի գործող նորմերի հաշվառմամբ·

Միացյալ շտաբի, դիտարկման պահակակետերի անձնակազմերի գործունեության, դրանց պահպանման և ապահովման ծախսերի ֆինանսավորումն իրականացնում են Կողմերը հավասար նպատակային հիմունքներով

6.Վերացնել Կողմերի վերահսկած տարածքների անվտանգության (վերահսկողության) գոտիներում բոլոր զինված խմբերի գործունեությունը, թույլ չտալ հրադադարի ռեժիմի խախտումներ

7.Կողմերն իրավունք են վերապահում Միջնորդին անվտանգության (վերահսկողության) գոտիներում ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունների խախտման դեպքում կիրառել ներգործության բոլոր անհրաժեշտ միջոցառումներն ու միջոցները, ընդհուպ ռազմական, սույն Արձանագրության պայմանները խախտող զինված կազմավորումների նկատմամբ

Հանդիպման մասնակիցները վստահություն են հայտնում որ սույն Արձանագրության դրույթների իրացումը բարենպաստ պայմաններ կստեղծի հակամարտության քաղաքական կարգավորմամբ շահագրգիռ բոլոր Կողմերի բարձրագույն ղեկավարների հանդիպման համար

Կատարված է Մոսկվայում, 1994 թ փետրվարի 18 ին չորս բնօրինակներից, յուրաքանչյուրը՝ ռուսաց լեզվով

Ադրբեջանի Հանրապետության
պաշտպանության նախարար

Հայաստանի Հանրապետության
պաշտպանության նախարար

Լեռնային Ղարաբաղի զինված կազմավորումների
լիազոր ներկայացուցիչ

Ռուսաստանի Դաշնության
պաշտպանության նախարար

www.a-pdf.com



Հայկական կողմից բանակցություններին մաս
նակցում էր և ԼՂՀ արտաքին գործերի նախարար Ար
կադի Ղուկասյանը ով պետք է ստորագրեր նաև քա
ղաքական համաձայնագիրը Արկադի Ղուկասյանն
այդ մասին հեռախոսով տեղեկացրել է Սամվել Բա
բայանին և Ռոբերտ Քոչարյանին Սամվել Բաբայա
նը պատմում է «Քաղաքական համաձայնագրի մա
սին ինձ հեռախոսով տեղեկացրեց Արկադի Ղուկա
սյանը: Ես նրան ասացի որ ամեն ինչ պետք է արվի
ստորագրումը հետաձգելու կամ ուղղակի ձախողելու
համար Ստորագրման ձախողումը կամ հետաձգումը
հարկադրական էր և կախված էր մեր ռազմական
գործողությունների հաջողություններից ու ռազմա
քաղաքական իրադրությունից Եվ մենք կարողա
ցանք ձախողել քաղաքական համաձայնագրի վավե
րացումը Նախ դա չստորագրեց Արկադի Ղուկասյա
նը երկրորդ մենք ձեռնարկեցինք լայնածավալ ազա
տագրական մարտեր հյուսիսային և հարավարևելյան
ռազմաճակատներում»:



Վազգեն
Սարգսյան

Հյուսիսային ռազմաճակատում ստեղծված դրու
թյունը շտկելու նպատակով ՀՀ պետական նախարար
Վազգեն Սարգսյանն ահազանգեց Սամվել Բաբայա
նին Զորահրամանատարը շտաբում քննարկելով
իրադրությունը և հայկական ուժերի հնարավորու
թյունները հանգեց այն հետևության որ Պաշտպա
նության բանակի ստորաբաժանումները կկարողա
նան հակահարձակման անցնել փետրվարի երկրորդ
տասնօրյակից ոչ ուշ Զորահրամանատարը զիտեր
որ բարձրլեռնային տարածքում հարձակումը կարող է
արդյունավետ լինել այն դեպքում եթե այդտեղ
ստեղծվի հրետանային ուժերի գերակշռություն հա
կառակորդի ընդհանուր ուժերի նկատմամբ: Որպես
նախկին հրետանավոր նա գիտեր նաև որ հրետա
նին չպետք է սահմանափակել միանվագ համազարկե
րով դա պետք է լինի կենտրոնացված նպաստավոր
դիրքերում և գործի չընդհատվող համազարկերով
Նա խնդիր դրեց, որ զենքի բոլոր տեսակների փոխ
գործողությունները համապատասխանեցվեն Օմարի
լեռնային պայմաններին: Այս առումով տեխնիկայի և
հատկապես ծանր տեխնիկայի տեղափոխման հա
մար Պաշտպանության բանակի ինժեներական ծա



Ռոլես
Աղաջանյան



Վիտալի
Բալասանյան



Անդրանիկ
Սարգսյան



Աշոտ
Առուշանյան

ռայությունը (պետ Ռոլես Աղաջանյան) պատրաստեց ճանապարհներ վերացրեց արգելափակոցները Մարտական գործողությունը համակարգում էր Վիտալի Բալասանյանը Տարբեր ուղղություններում մարտական գործողությունները ղեկավարում էին Կենտրոնական պաշտպանական շրջանի հրամանատար Սամվել Կարապետյանը Մարտակերտի պաշտպանական շրջանի հրամանատար Աշոտ Առուշանյանը հրետանային բրիգադի հրամանատար Սամվել Սաֆարյանը· Ջինտեխնիկայի լրակազմում ներառված էին «Գրադ» կայանք ականանետներ հրանոթներ Դ 30 հաուբիցներ և այլն Զորահրամանատարը պաշտպանության գոտիներից դուրս բերեց և Քելբաջարի ճակատ տեղափոխեց Արկադի Ծիրինյանի գումարտակը (Մարտակերտի պաշտպանական շրջան) Անդրանիկ Սարգսյանի հետախուզական խումբը (Կենտրոնական պաշտպանական շրջան) Արշավիր Ղարամյանի գումարտակը (Ասկերանի պաշտպանական շրջան) Լևոն Մնացականյանի հրետանային դիվիզիոնը (Կենտրոնական պաշտպանական շրջան) 71 րդ և 77 րդ առանձին մոտոհրաձգային գումարտակները (հրամանատարներ Սասուն Աղաջանյան Պետրոս Ղևոնդյան) Հրետանային ճշգրիտ արկակոծումներով ու կտրուկ հակահարձակումներով Մարտակերտի պաշտպանական շրջանի ստորաբաժանումները մեկը մյուսի հետևից լռեցրին Օմարի լեռնանցքի հյուսիսային հատվածում տեղաբաշխված հակառակորդի ռազմական հենակետերը և վերահսկողության տակ վերցրին Օմարի լեռնանցքի ճանապարհներն ու բարձունքները Պաշտպանության բանակի ստորաբաժանումները շեշտակի գրոհներով վնասազերծելով հակառակորդի կրակակետերը Չիչագլու Բաղիրսաղ Ցանշաղ և այլ գյուղերում հնարավորություն ստեղծեցին աջ և ձախ թևերից զարգացնելու գրոհները և 1994 թվականի փետրվարի 18 ին Քելբաջարի հյուսիսային հատվածը ներառյալ Օմարի լեռնանցքը ամբողջությամբ անցավ Պաշտպանության բանակի վերահսկողության տակ ***(տես և թիվ 16 քարտեզը)***·

1994 թվականի փետրվարի 14 ին զոհվեց Արցախի հերոս (հետմահու) Պետրոս Ղևոնդյանը փետրվարի

www.a-pdf.com

# ՕՄԱՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

## (1994 թ. փետրվար մարտ)






ՄԱՍՇՏԱԲ 1 : 500 000

www.a-pdf.com



18 ին հրետանային բրիգադի հրամանատար Սամ վել Սաֆարյանը

Քելբաջարի հյուսիսային մասի և Օմարի բարձրա դիր լեռնանցքի ազատագրումը կարևոր նշանակու թյուն ունեցավ Մարտակերտի շրջանի թիկունքն ապահովելու համար գլխովին ջախջախվեց այդ ուղ ղությունում գործող հակառակորդի զորախմբավո րումը շարքից հանվեցին կամ առգրավվեցին մեծ քանակությամբ տեխնիկա զենք զինամթերք Մար տական գործողությունների ժամանակ ոչնչացվեցին կամ լեռնանցքում գրպահարվեցին և գերեվարվեցին հակառակորդի հարյուրավոր զինվորներ Մարտա կան գործողությունների ընթացքում հակառակորդի կրած կորուստները, բնականաբար պետք է որ բա ցասական ազդեցություն թողնեին նրա հոգեբանա կան վիճակի վրա Դրան հակառակ սակայն փետրր վարի 2-րդ կեսին և դրան հաջորդող օրերին հակառա կորդը ռազմական գործողություններ վերսկսեց Օմարի լեռնանցքում ժամանակավոր հաջողության հասնելով Հակառակորդի հարվածային ուժի դեմ կազմակերպվեց ամուր պաշտպանություն Մարտի 2 րդ կեսին Պաշտպանության բանակի ստորաբաժա նումները մի շարք կանխարգելիչ հարվածներ հասցը նելով անցան հակահարձակման և վերստին վերա հսկողության տակ առան լեռնանցքը Ինժեներական ծառայությունը պայթեցրեց Քելբաջարի մայրուղու մի հատված որով կանխվեց դեպի հարավ ադրբեջանա կան զորախմբի նահանջը Օմարի ռազմական գործողության հաջող ելքն ապացուցեց Սամվել Բա բայանի մարտավարության հակառակորդի նկատ



Սամվել Սաֆարյան



Դադիվանք

www.a-pdf.com



մամբ հրետանային ուժերի գերակշռություն ստեղծե լու արդյունավետությունը Նման ելքը կանխորոշեց հյուսիսային ռազմաճակատում Պաշտպանության բանակի հետագա հաղթանակները

## Միրբաշիրի ռազմական գործողությունը

Ձմեռային ռազմարշավից հետո Պաշտպանու թյան բանակի ստորաբաժանումները հաջողություն ներ ունեցան նաև Մարտունու պաշտպանական ճա կատագծում Հարկ է շեշտել որ 1993 թվականի դեկ տեմբերի վերջերից մինչև 1994 թվականի մարտը ներառյալ ընթացած ռազմական գործողությունների ժամանակ հակառակորդը կորցրել է շուրջ 5 հազար զինվորի և սպայի ավելի քան երկու տասնյակ մար տական ինքնաթիռներ և ուղղաթիռներ 36 տանկ, 12 հրանոթ և հրթիռահրետանային կայանք որոնցից երեքը «Գրադ» փիպի զերի են հանձնվել բազմա թիվ զինվորներ·

Արցախյան պատերազմի ձմեռային շրջանն ավարտվեց նրանով, որ ձախողվեցին ադրբեջանա կան հրամանատարության մարտավարական պլան ները հյուծվեցին Ադրբեջանի ուժերն ու միջոցները հակառակորդը գրեթե կորցրեց հարձակողական հնա րավորությունները Այս ձախողումներից հետո ռազ մաճակատի ողջ երկայնքով հաստատվեց հարաբերա կան անդորր Նկատելի էին միայն դիրքային հարձա կումներ Ֆիզուլի–Հորադիզ գյուղ ուղղությունում Աշ խուժացան հակամարտության կարգավորմանն ուղղ ված դիվանագիտական շփումները Ստեփանակերտի կարծիքով հակամարտության խաղաղ կարգավոր ման գործում ԵԱՀԽ ի և Ռուսաստանի Դաշնության ջանքերը պետք է մերձեցվեին, և բացառվեր զուգահեռ միջնորդական գործընթացների առկայությունը Այս կարծիքին հակառակ ԱՊՀ երկրների մոսկովյան գա գաթնաժողովի օրերին Հեյդար Ալիևը հանդիպելով ԵԱՀԽ ի ներկայացուցիչների հետ հայտարարեց որ Ադրբեջանը կողմնակից է դարաբաղյան հակամար

www.a-pdf.com



փության կարգավորման միայն ԵԱՀԽ ի միջնորդությանը. Սրան զուգընթաց Ադրբեջանի հրամանատարությունն ապրիլի սկզբին հյուսիսարևելյան ռազմաճակատում հատկապես Մադաղիս և Լևոնարխ գյուղերի շրջանում մարտական գործողություններ վերսկսեց Ապրիլի առաջին տասնօրյակի վերջին հայկական ուժերը կասեցրին հակառակորդի առաջխաղացումը և հյուսիսարևելյան ռազմաճակատում անցան հակահարձակման Գյուլիստանի Թալիշի ուղղությամբ գրավելով մի շարք բարձունքներ



Սեյրան
Օհանյան

«Հարավարևելյան ռազմաճակատում հակառակորդի զինուժի հարձակումը կասեցնելու նպատակով մշակեցի ռազմագործողության օպերատիվ պլան, որի իրականացումը հանձնարարեցի Պաշտպանության բանակի շտաբի պետ Սեյրան Օհանյանին Կարճ ժամանակահատվածում իրագործված օպերատիվ միջոցառումների շնորհիվ թշնամու առաջխաղացումը կասեցվեց· Ադրբեջանական բանակի ձեռնարկած բոլոր փորձերն ավարտվեցին ապարդյուն Այդ ռազմաճակատում ձեռք բերած հաղթանակներից և սահմանները կարգավորելուց հետո Կենտրոնական պաշտպանական շրջանի ստորաբաժանումները 35 րդ առանձին մոտոհրաձգային գումարտակը տեղափոխեցի Աղդամի ուղղություն որպես հարվածի գլխավոր թիրախ ընտրելով Գյուլիջա–Սումա հատվածը Մեր ուժերը անցնելով հակահարձակման վնասազերծեցին մի շարք ռազմական հենակետեր Ստեղծված բարենպաստ իրավիճակը հնարավորություն տվեց մարտական գործողություններ զարգացնելու Մարտակերտի ռազմաճակատի հյուսիսարևելյան հատվածում և նպաստավոր պայմաններ ստեղծելու Միրբաշիրի և հարակից բնակավայրերի ազատագրման համար», պատմում է Սամվել Բաբայանը 5 րդ բրիգադի (հրամանատար Մանվել Գրիգորյան) ստորաբաժանումները հարձակումներ ձեռնարկեցին Մադաղիս Թալիշ 630 բնագիծ–Լևոնարխ ուղղություններով Ազատագրելով այդ ուղղություններում հայկական բռնազավթված տարածքները և ոչնչացնելով հակառակորդի կրակակետերը 5 րդ բրիգադի ստորաբաժանումները մոտեցան ԼՂՀ սահմաններին ընդհուպ մինչև Միրբաշիրի առաջակողմը «Եղնիկներ

www.a-pdf.com



պարտիզանական ջոկատը (հրամանատար Սերգեյ Չալյան) գործել է Գյուլիստանի ուղղությամբ

‹Մարտակերտի պաշտպանական շրջանի (հրամանատար Աշոտ Առուշանյան) ստորաբաժանումները հարձակումներ ձեռնարկեցին Լևոնարխ Ջրաբերդ հատվածում Որոշ հաջողություններ ունենալուց հետո սակայն ազատամարտիկները հոգեբանորեն պատրաստ չէին զարգացնելու գրոհները և չկատարեցին առաջադրանքները Նույն ուղղությունում գործող 71 րդ առանձին և 77 րդ առանձին մոտոհրաձգային գումարտակները նույնպես, նման պատճառով, չեն կարողացել ավարտել գրոհները Շուշիի պաշտպանական շրջանի ստորաբաժանումները ևս իրենց ուղղությունում ի զորու չեղան լիովին կատարելու առաջադրանքները Կենտրոնական պաշտպանական շրջանի (հրամանատար Սամվել Կարապետյան) ստորաբաժանումները և Ասկերանի պաշտպանական շրջանի 35 րդ մոտոհրաձգային գումարտակը (հրամանատար Արշավիր Ղարամյան) հարձակումները հաջողությամբ զարգացրին համապատասխանաբար Յարմջա Իլխիչլար Կազյան և Այաղ Քարվենդ Օրթա Քարվենդ ուղղություններում, վնասազերծեցին այդ հատվածներում գործող կրակակետերը. Մարտունու պաշտպանական շրջանի Նելսոն Սողոմոնյանի ղեկավարած գունդն աջ թևից ազատագրեց երկու գյուղ» պատմում է Սամվել Բաբայանը ***(տե՛ս թիվ 17 քարտեզը)***

Աղդամի, Մարտակերտի շրջաններում 1994 թվականի գարնանային ռազմական գործողությունների ընթացքում Պաշտպանության բանակի զորամասերը զարգացնելով հաջողությունները փաստորեն կանխորոշեցին դեպքերի հետագա ընթացքը Պաշտպանության բանակի ուժերն ազատ տարածություն դուրս գալուց հետո մարտեր սկսեցին Մարտակերտի շրջանի Սեյսուլան Կարմիրավան և Յարմջա գյուղերի ուղղությամբ Ըստ հրամանատարի օպերատիվ պլանով առաջարկված մարտավարության խնդիր դրվեց վնասազերծելու հակառակորդի պաշտպանական դիրքերի ողջ համալիրը և ազատագրելու հակառակորդի վերահսկողության տակ գտնվող հայկական տարածքները Հակառակորդը զգալով այս պլանծրագրի իրականացման վերահաս վտանգը փարբեր

www.a-pdf.com


ՄԱՐՏԱԿԵՐՏ
2065
Սերգեյ Զալյան "Եղնիկներ" ջոկ
3340
045
6
630
708
781
704
V բրիգադ
(Մանվել Գրիգորյան)
175
236
30
298
1359
803
969
Շուշիի Պ Շ
(Վաչագան Իշխանյան)
932
30
1198
09
142
050
157

www.a-pdf.com

# ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՏԵՐ
## (1994 թ մարտ մայիս)




### ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Հ ամ սնատս բակամ վետ
- Պաշպանության բանակի ստորաբաժան , մների հարձակման ուղղությունը
- Հակառակորդի ստորաբաժանումների հարձակման ուղղությունը
- Պաշպանության բանակի դիրքեր
- Հակառակորդի դիրքեր
- Ռազմական տեխն կա
- Պ տա ա ա ան
- Քա սք
- Գ ո ղ
- Ավտոմա րո ղ
- Գլխավոր ճանապարհ
- Այլ ճանապարհներ
- Թո նելներ,կամուրջներ
- Երկաթո ղիներ ա ա ս
- Է նագագար
- Գետ
- Լիճ ջրամբա
- Անտա

ՄԱՍՇՏԱԲ 1: 500 000

Թիվ 17

www.a-pdf.com



ռազմաճակատներից զգալի ուժեր հանելով փեղափոխեց մարտագծի արևելյան և հյուսիսարևելյան հատվածներ նպատակ ունենալով Միրբաշիր քաղաքի ուղղությամբ ամրապնդելու իր դիրքերը· Այսպիսի բարդ ու հեռանկարային մարտավարական ռազմագործողության իրականացման նախօրեին Սամվել Բաբայանը Դաշտպանական շրջանների հրամանատարների մասնակցությամբ անցկացրած խորհրդակցության ժամանակ մոտենալով ռազմական քարտեզին և ցույց տալով հարձակման ուղղությունները ասաց «Ես զգում եմ որ բոլոր ժամանակներում հրամանատարները միշտ ապածել են, որ սահմանները պետք է բնական լինեն Երբ նայում ես քարտեզներին տեսնում ես որ պետությունների միջև սահմաններն անցնում են կամ գետի կամ լեռնաշղթայի երկարությամբ Մեր քաղաքագետները չկարողացան աշխարհին բացատրել որ բնության մեջ այնպիսի անհեթեթ ու իմաստազուրկ սահմաններ չեն կարող լինել ինչպիսիք նկարել են Ղարաբաղի համար Լավ իմացեք՝ այդ սահմանների մեջ է թաքնված ողջ հանելուկը Հատուկ այսպիսի սահման են գծել, որպեսզի Ղարաբաղը չկարողանա գոյատևել: Մեր պարտքն է սահմանները դարձնել բնական»· Այս խնդրի լուծման համար հրա



ՊԲ հրամանատար Սամվել Բաբայանը օպերատիվ առաջադրանք է տալիս հրամանատարներին

www.a-pdf.com



մանապարն ուներ հիմնավոր կռվաններ Նա ելնում էր այն փաստից որ հակառակորդը ստիպված մարտավարական պաշտպանության էր անցել ռազմաճակատներում Եվ հանդիպելով Պաշտպանության բանակի աննկուն դիմադրությանն ու հուժկու հակահարձակումներին կրեց կենդանի ուժի մարտական տեխնիկայի, սպառազինության և նյութական միջոցների խոշոր կորուստներ կորցրեց հարձակողական ներուժը Ավելին ռազմագերիների հարցաքննության և հետախուզության տվյալներից պարզվել է նաև որ զանգվածային դասալքության հաղթանակի նկատմամբ անվստահության ինչպես նաև զինվորների ու հրամանատարների բարոյամարտական վիճակի վատթարացման հետևանքով հակառակորդն ի վիճակի չէր ձեռնարկելու ռազմական որևէ լուրջ գործողություն Մյուս կողմից գնալով ավելի ցայտուն կերպով էին դրսևորվում Պաշտպանության բանակի աճող մարտունակությունը հրամանատարների սպայական կազմի և ազատամարտիկների արհեստավարժությունը նրանց կողմից ռազմական դժվարությունների հաղթահարման իրողությունը Զորահրամանատարի նպատակն էր Միրբաշիրի ռազմական գործողությամբ վերջնական լուծում տալ առկա ռազմաքաղաքական խնդիրներին որոնցից կախված էր արցախյան հիմնախնդրի կարգավորումը ընդհուպ ԼՂՀ անկախ կարգավիճակի ճանաչումը· Թեև ՀՀ քաղաքական և զինվորական պետական գործիչների միջև այս փուլում մարտավարական նպատակների միասնություն չկար բայց և այնպես Սամվել Բաբայանը չէր ցանկանում հրաժարվել Միրբաշիրի և հարակից բնակավայրերի ազատագրման մտքից եթե Պաշտպանության բանակը շահեկան այս պայմաններում ապահովվեր անհրաժեշտ սպառազինությամբ Երևանից սակայն ստացավ մերժում Դրան հետևեց սպառազինության մատակարարումը բացառելու մասին տեղեկությունը Ավելին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը Պաշտպանության բանակի հրամանատարությանն օգնելու նպատակով ստիպված մեկնեց Ստեփանակերտ Բացի այդ, ՀՀ պաշտպանության նախարարության սպառազինության վարչության պետ Ալիկ Միրզաբեկյանին

www.a-pdf.com



(այժմ գեներալ լեյտենանտ) փեղափոխել էին նախ արարության համակարգում այլ պաշտոնի կապա րակնքել մեկ փասնյակից ավել զինապահեստներ (հանձնաժողովի նախագահ գեներալ-մայոր Մկրտիչ Աբրահամյան հետագայում գեներալ-լեյտենանտ ) Նպատակը պարզ էր արգելել սպառազինության մա տակարարումը և կանխել ռազմական գործողությու նը Այնուամենայնիվ, 1994 թվականի ապրիլի երկրորդ տասնօրյակի վերջին Պաշտպանության բանակի ստո րաբաժանումները մտան Մարտակերտի շրջանի Մեյ սուլան գյուղը ճնշեցին հակառակորդի կրակակետերն Աղդամի շրջանի Օրթա Քարվենդ Բաշ Քարվենդ Շիխլյար բնակավայրերում, ծանր մարտեր մղեցին Կարմիրավանի ազատագրման համար, վերահսկողու թյան տակ առան Աղդամ–Բարդա մայրուղին Եվ ար դեն ապրիլի վերջին Միրբաշիրի շրջանի և հարակից բնակավայրերի շուրջ 50 հազար ադրբեջանցիներ լքել էին իրենց բնակավայրերը և ապաստանել Բարդայում ու Եվլախում Բայց Միրբաշիրի ազատագրման ռազ մագործողությունն ամբողջովին չիրագործվեց Իսկ եթե իրականություն դառնար այդ ռազմական գործո ղությունը, ապա ինչպես ամերիկյան «Բոստոն գլոբ թերթի հոդվածագիր Ջոն Ավերբախն է նշել «....քաղա քի գրավումը կարող է վերջնական հարված լինել Ա դրբեջանին փապալելով Ալիևի ներկայիս կառավա րությունը...› (տե՛ս Մ Հասրաթյան «Ղարաբաղյան պատերազմ» Եր 2001թ )

Հետպատերազմյան բոլոր տարիներին գեներալը մշտապես ափսոսանքով էր հիշում չկատարվածը Հե տադարձ հայացք ձգելով այդ օրերին նա մեղադրում է և իրեն և մյուսներին Միրբաշիրի ազատագրման ռազմագործողությունն ամբողջովին չիրականացնե լու համար Հիշում է ու ասում ‹ Միրբաշիր մի՞թե հնարավոր չէր դա ազատագրել Իհարկե հնարավոր էր եթե մեզ ապահովեին միայն ռազմամթերքով ու որոշակի քանակությամբ սպառազինությամբ· Ո՞վ էր մեղավոր Ժամանակը կճշտի ու կասի ո՞վ էր մեղա վորը Եվ եթե մենք հարգելի քաղաքագետներ ազա տագրեինք Միրբաշիրը ապա այսօր խոսք չէր կարող լինել ոչ նավթուղիների գազամուղների անցկացման տեղի նոր երկաթուղի կառուցելու ոչ էլ այսքան



Ալիկ
Միրզաբեկյան

www.a-pdf.com



ճգճգվող բանակցությունների մասին Այս ռազմա գործողությունից հետո որի հաղթանակի վերաբե րյալ կասկած չունեի պատրաստ կլիներ Ադրբեջանի կապիտուլյացիան»: Եվ ապա շարունակում է «Ինձ շատերը հիշեցնում էին իսկ արտաքին ուժերի ճնշումնե՞րը համաշխարհային հանրության կարծիք նե՞րը... Ես պատասխանել ու պատասխանում եմ մի թե Քելբաջարի Աղդամի Ֆիզուլիի, Ջաբրայիլի, Կու բաթլուի.. ազատագրումների ժամանակ չկային այդ նույն ճնշումներն ու կարծիքները Կային և միշտ էլ լի նելու են դրանք եթե դուք նրանց ապացուցեք մեր պայքարի արդարությունը և հզոր ուժի առկայությու նը Հետ նայելով այդ ժամանակահատվածին՝ միայն կարող եմ հարցնել ինչո՞ւ քաղաքագետները մերժե ցին իմ առաջարկները և ինչո՞ւ չհասկացան դրա կա րևորությունը Ինձ մնում է միայն ափսոսալ նման հնարավորությունը բաց թողնելու համար»

1994 թվականի գարնանային պատերազմաշրջա նի խոշորամասշտաբ ռազմական գործողությունների արդյունքում երկուստեք մարդկային իսկ Ադրբեջանի համար նաև նորանոր տարածքային կորուստներն անհեռանկար էին դարձրել պատերազմի շարունա կումը Ի հավելումն դրա Մարտակերտի Աղդամի շրջաններում Պաշտպանության բանակի հաղթարշա վի շնորհիվ և հակառակորդի ԼՂՀ ին սահմանակից վերջին ռազմահանգրվանի Միրբաշիրի կորստյան սպառնալիքի փակ Ադրբեջանում հասունացել էր նաև ներքաղաքական նոր ճգնաժամ ինչը ստիպեց Ադըր բեջանին ընդունել Ռուսաստանի Դաշնության առա ջարկությունը կրակը դադարեցնելու մասին Ռուսաս տանը նպատակ ունենալով չեզոքացնելու մի շարք երկրների շահագրգիռ միջամտության ու իր «ազդե ցության գոտի» ներթափանցելու փորձերը և հետա մտելով իր միջազգային վարկանիշը ու Այսրկովկա սում ազդեցության վերականգնման քաղաքական խնդիրը կարողացավ հասնել այն բանին որ 1994 թվականի մայիսի 5 ին Բիշքեկում, իր Ղրղզստանի և Անկախ Պետությունների Համագործակցության միջ խորհրդարանական համաժողովի միջնորդությամբ, Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետու- թյան և Հայաստանի խորհրդարանների ղեկավարնե

www.a-pdf.com



րը ստորագրեցին կրակը դադարեցնելու վերաբերյալ Արձանագրություն Ստորև ներկայացվում է դրա ամ բողջական տեքստը հայերեն թարգմանությամբ

## ԲԻՇՔԵԿՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**1994 թվականի մայիսի 4–5-ին, Բիշքեկ քաղաքում ԱՊՀ Միջխորհրդարանական համաժողովի, Ղրղզստանի Հանրա պետության խորհրդարանի, Ռուսաստանի Դաշնության Դաշ նային ժողովի և արտաքին գործերի նախարարության նախա ձեռնությամբ անցկացված հանդիպման մասնակիցները՝**

**վճռականություն արտահայտեցին համակողմանիորեն նպաստելու Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ զինված հա կամարտության դադարեցմանը, որը ոչ միայն անուղղելի վնաս է հասցնում ադրբեջանական և հայ ժողովուրդներին, այլև էա պես շոշափում է տարածաշրջանի մյուս երկրների շահերը լրջորեն բարդացնում միջազգային իրադրությունը**

**– սատարելով ԱՊՀ պետությունների Ղեկավարների խորհրդի 1994 թվականի ապրիլի 15 ի Հայտարարությունը պատրաստակամություն հայտնեցին լիակատար աջակցություն ցույց տալու գործադիր իշխանության ղեկավարների և ներկայացուցիչների ջանքերին զինված հակամարտության դադարեցման ու դրա հետևանքների վերացման համար համապատասխան համաձայնագրի շուտափույթ կնքման ճանապարհով**

**– հանդես եկան հակամարտության դադարեցման, դրան առնչվող ՄԱԿ-ի և ԵԱՀԽ-ի սկզբունքների նպատակների և կոնկրետ որոշումների ( նախ և առաջ ՄԱԿ ի Անվտանգության խորհրդի թթ. 822, 853, 874, 884 բանաձևերի) իրացման գործում Համագործակցության և Միջխորհրդարանական համաժողովի բնական ակտիվ դերի օգտին**

**– կոչ արեցին հակամարտության բոլոր կողմերին անսալ բանականության ձայնին, դադարեցնել կրակը ս թ մայիսի 8-ի լույս 9-ի կեսգիշերին հիմնվելով 1994 թվականի փետրվարի 18-ի Արձանագրության վրա (այդ թվում՝ դիրքորդների տեղաբաշխման մասով), և ամենաինտենսիվ աշխատանքով, սեղմագույն ժամկետներում ամրապնդել դա հուսալի, իրավաբանորեն պարտավորեցնող համաձայնագրի ստորագրման ճանապարհով, որը նախատեսում է ռազմական ու թշնամական գործողությունների չվերսկսման ապահովման մեխանիզմ, զբաղեցրած տարածքներից զորքերի դուրսբերում և հաղորդակցուղիների գործառման վերականգնում, փախստականների վերադարձ.**

**–համաձայնեցին առաջարկելու ԱՊՀ մասնակից պետությունների խորհրդարաններին քննարկել Միջխորհրդարանական համաժողովի Խորհրդի նախագահ Վ Ֆ.Շումեյկոյի և Լեռնային Ղարաբաղի գծով համաժողովի խաղաղարար խմբի ղեկավար Մ Շ.Շերիմկուլովի նախաձեռնությունը Համագործա կցության խաղաղարար ուժերի ստեղծման վերաբերյալ**

**– նպատակահարմար են համարում շարունակել նման հան դիպումները՝ ի շահ զինված հակամարտության խաղաղ լուծման**

երախտագիտություն հայտնեցին Ղրղզստանի ժողովրդին և ղեկավարությանը աշխատանքի հիանալի պայմաններ ստեղծելու, սրտաբացության և հյուրընկալության համար

Պատվիրակությունների անունից

Ա ՋԱԼԻԼՈՎ — Կ.ԲԱԲՈՒՐՅԱՆ — Բ ԱՐԱՐՔՑՅԱՆ

(Ռ.Գուլիևի ստորագրությունը)

Վ.ՇՈՒՄԵՅԿՈ — Մ ՇԵՐԻՄԿՈՒԼՈՎ

Վ.ԿԱԶԻՄԻՐՈՎ — Մ ԿՐՈՏՈՎ

Ռուսաստանի Դաշնության նախագահի լիազոր ներկայացուցիչ, Ռուսաստանի միջնորդական առաքելության ղեկավար

ԱՊՀ մասնակից պետությունների Միջխորհրդարանական համաժողովի խորհրդի քարտուղարության ղեկավար

Բիշքեկ 1994 թվականի մայիսի 5

Մոսկովյան 1994 թվականի փետրվարի 18 ի և բիշքեկյան նույն թվականի մայիսի 5-ի Արձանագրությունների հիման վրա ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովին, ՌԴ արտ գործնախարար Անդրեյ Կոզիրևին և ՌԴ նախագահի արցախյան

МИНОБОРОНЫ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ
П.С.ГРАЧЕВУ
МИД РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ
А.В.КОЗЫРЕВУ
В.Н.КАЗИМИРОВУ

Откликаясь на призыв к прекращению огня, изложенный в Бишкекском протоколе от 5 мая 1994 года, и опираясь на Протокол от 18 февраля 1994 года,противоборствующие Стороны согласились о следующем·

1.Обеспечить полное прекращение огня и военных действий с 00 часов 01 минуты 12 мая 1994 года.

Соответствующие приказы к прекращению огня будут отданы и доведены до командиров воинских формирований, ответственных за их выполнение 11 мая 1994 года.

12 мая до 23.00 Стороны обменяются текстами своих приказов о прекращении огня с целью их возможного взаимного дополнения и в дальнейшем унификации основных положений аналогичных документов.

2 Просить министра обороны Российской Федерации о созыве в Москве не позднее 12 мая с г срочного совещания министров обороны Азербайджана, Армении и командующего Армией Нагорного Карабаха с целью согласования рубежей развода войск, других неотложных военно-технических вопросов и подготовки развертывания передовой группы международных наблюдателей.

3 Настоящая договоренность будет использована для завершения в предстоящие 10 дней переговоров и заключения не позднее 22 мая с г. Соглашения о прекращении вооруженного конфликта.

4. Настоящая договоренность вступит в силу сразу после того, как Посредник уведомит о том, что он получил от противоборствующих сил полностью идентичные документы подписанные уполномоченными представентелями.

Министр обороны Азербайджана — Министр обороны Армении — Командующий Армией Обороны Нагорного Карабаха

www.a-pdf.com





1994 թ մոսկովյան հանդիպման խըմ բանկար ձախից Սամվել Բաբայան Վազգեն Սարգսյան Պավել Գրաչով Մուհամեդռաֆի Մամեդով և Սերժ Սար գըսյան

հարցով լիազոր ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովին հղված եռակողմ նամակներով 1994 թվականի մայիսի 12-ի 00 ժամ 01 րո պեից պաշտոնապես ռազմաճակատում հաստատվեց հրադա դար Մայիսի 9-ին Բաքվում նամակն ստորագրեց Ադրբեջանի պաշտպանության նախարար Մուհամեդռաֆի Մամեդովը, մայիսի 10-ին՝ Երևանում ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, ԼՂՀ անունից, որպես ԼՂՀ բանակի հրամանատար վավերացրեց Սամվել Բաբայանը Ստեփանակերտում մայիսի 11 ին: Ահա այդ պատմական փաստաթուղթը նաև հայերեն թարգմա նությամբ

**1994 Թ ՀՐԱԴԱԴԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԵՌԱԳՐԱՏԵՃԵՆ (փաքս)**

**ՌԴ ՊՆ Պ Ս ԳՐԱՉՈՎԻՆ**

**ՌԴ ԱԳՆ Ա Վ ԿՈԶԻՐԵՎԻՆ Վ Ն ԿԱԶԻՄԻՐՈՎԻՆ**

**Արձագանքելով 1994 թվականի մայիսի 5 ի Բիշքեկյան ար ձանագրության մեջ շարադրված կրակի դադարեցման կոչին և հիմնվելով 1994 թվականի փետրվարի 18-ի Արձանագրության վրա հակամարտող Կողմերը համաձայնեցին հետևյալում**

**1 Ապահովել կրակի և ռազմական գործողությունների լրիվ դադարեցումը՝ 1994 թվականի մայիսի 12-ի 00 ժամ 01 րոպեից:**

**Հրադադարի մասին համապատասխան հրամանները կտրվեն և դրանց կատարման համար պատասխանատու զին-վորական կազմավորումների հրամանատարներին կհասցվեն 1994 թվականի մայիսի 11-ից ոչ ուշ:**

**Մայիսի 12-ի մինչև 23:00-ն Կողմերը փոխանակում են հրա դադարի մասին իրենց հրամանների պեքստերը դրանց հնա-րավոր լրացման և համանման փաստաթղթերի հիմնադրույթ-ների հետագա միասնականացման նպատակով**

**2 Խնդրել Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարին Մոսկվայում, ս.թ մայիսի 12 ից ոչ ուշ, գումարել Ադրբեջանի, Հայաստանի պաշտպանության նախարարների և Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատարի շտապ խոր-հըրդակցություն զորքերի հետքաշման բնագծերի, այլ անհե-տաձգելի ռազմատեխնիկական հարցերի համաձայնեցման և միջազգային դիտորդների առաջավոր խմբի տեղաբաշխման նախապատրաստման նպատակով.**

**3 Սույն պայմանավորվածությունը կօգտագործվի առաջի-կա 10 օրերին բանակցություններն ավարտելու և զինված հա**

www.a-pdf.com



կամարտության դադարեցման մասին Համաձայնագիրը ս թ մայիսի 22-ից ոչ ուշ կնքելու համար:

4 Սույն պայմանավորվածությունն ուժի մեջ կմտնի այն բանից անմիջապես հետո, երբ Միջնորդը կտեղեկացնի, որ ինքը հակամարտող ուժերից ստացել է լիազորված ներկայացուցիչների ստորագրած լրիվ նույնական փաստաթղթեր

| | | |
|---|---|---|
| Ադրբեջանի պաշտպանության նախարար | Հայաստանի պաշտպանության նախարար | Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատար |

մայիսի 1994 թ

**<u>Ծանոթություն.</u>** փեքստը ստորագրել են համապատասխանաբար Մ.Ի Մամեդովը Բաքվում 1994թ. մայիսի 9-ին, Ս Ա Սարգսյանը Երևանում մայիսի 10 ին Ս Ա Բաբայանը՝ Ստեփանակերտում մայիսի 11-ին:

Министерство обороны
Российской Федерации
П.С ГРАЧЕВУ

Председателю Минской Конференции
СБСЕ по Нагорному Карабаху
ЯНУ ЭЛИАССОНУ

МИД Российской Федерац и
А.В. КОЗЫРЕВУ
В. Н. КАЗИМИРОВ

Лоложительно оценивая в целом соблюдение рекраще ия огня с 1 мая 1994 года в соответствии с договоренностью, оформленной при Российском посредничестве в период с 9 по 11 мая с.г., и, откликаясь на призыв полномочного представителя Президента Российской Федерации и Председателя Минской конференции СБСЕ от 23 ию я с

Противоборствующие стороны подтверждают:

- свою твердую решимость продолжать выполнять и в дальнейшем свои обязательства по прекращению огня, в частности, имея ввид сохранить тем самым условия для подписания большого политического Соглашения размещения еждународных наблюдателей о зо е к нфликта·

- свое стремление интенсифицировать заключение большого политического Соглашения в течение 30 дней августа 1994года, в котором будут проработаны военно-технические вопросы, включая взаимодействие международных сил безопасности миссии наблюдения СБСЕ.

Противоборствующие стороны обязуются в согласованные сро подтверждать взятые на себя обязательства по прекращению огня и сохранять режим прекращения огня вплоть до заключения большого политического Соглашен я которое предусматр вает полное прекращение военных действий.

| | | |
|---|---|---|
| МИНИСТР ОБОРОНЫ АЗЕРБАЙДЖАНА | МИНИСТР ОБОРОНЫ АРМЕНИИ | КОМАНДУЮЩИЙ АРМИЕЙ НАГОРНОГО КАРАБАХА |

26 7 94

Այս փաստաթղթով նախատեսվում էր նաև, որ կողմերը տասնօրյա ժամկետում ոչ ուշ, քան մայիսի 22 ին պետք է ստորագրեին զինված հակամարտության դադարեցման մասին համաձայնագիրը ինչը սակայն, նշված ժամկետում չկատարեց ադրբեջանական կողմը Դա հնարավորություն էր տալիս Պաշտպանության բանակին ցանկացած պահին վերսկսելու ռազմական գործողությունները Դրանք կանխելու նպատակով միջնորդները 1994 թվականի հուլիսին հանդես եկան նոր համաձայնագրի ստորագրման նախաձեռնությամբ Սույն համաձայնագիրը ստորագրվեց 1994 թվականի հուլիսի 26 ին ՀՀ ԱՀ պաշտպանության նախարարների և ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատարի կողմից

Ստորև շարադրում ենք նաև փաստաթղթի ամբողջական բովանդակությունը ռուսերեն բնօրինակից թարգմանությամբ

**Ռուսաստանի Դաշնության**
**պաշտպանության նախարարություն**
**Պ Ս ԳՐԱՉՈՎԻՆ**
**Ռուսաստանի Դաշնության ԱԳՆ**
**Ա.Վ. ԿՈԶԻՐԵՎԻՆ**
**Վ. Ն. ԿԱԶԻՄԻՐՈՎԻՆ**

**Լեռնային Ղարաբաղի հարցով**
**ԵԱՀԽ Մինսկի համաժողովի**
**նախագահ ՅԱՆ ԷԼԻԱՍՈՆԻՆ**

**Դրականորեն գնահատելով ընդհանուր առմամբ 1994 թվականի մայիսի 12-ից կրակի դադարեցման պահպանումը ռուսաստանյան միջնորդությամբ ս.թ. մայիսի 9-ից մինչև 11-ը ձևակերպված պայմանավորվածությանը համապատասխան, և արձագանքելով Ռուսաստանի Դաշնության նախագահի լիազոր ներկայացուցչի ու ԵԱՀԽ Մինսկի համաժողովի նախագահի ս թ հունիսի 23-ի կոչին, հակամարտող կողմերը հաստատում են**

**–իրենց ամուր վճռականությունը հետագայում ևս շարունակելու կրակի դադարեցման ուղղությամբ իրենց պարտավորությունների կատարումը՝ մասնավորապես, նկատի ունենալով դրանով իսկ պահպանել պայմանները Մեծ քաղաքական համաձայնագրի ստորագրման և հակամարտության գոտում միջազգային դիտորդների տեղաբաշխման համար,**

**–իրենց ձգտումը արագացնելու Մեծ քաղաքական համաձայնագրի կնքումը 1994 թվականի օգոստոսի 30 օրերի ընթացքում որում կմշակվեն նաև ռազմատեխնիկական հարցերը ներառյալ անվտանգության միջազգային ուժերի և ԵԱՀԽ դիտարկման առաքելության փոխգործողությունը:**

**Հակամարտող կողմերը պարտավորվում են համաձայնեցված ժամկետներում հաստատել հրադադարի անձնությամբ**

իրենց սպանձնած պարտականությունները և պահպանել հրադադարի ռեժիմը ընդհուպ մինչև Մեծ քաղաքական համաձայնագրի կնքումը որը նախատեսում է ռազմական գործողությունների լիակատար դադարեցում

Ադրբեջանի պաշտպանության նախարար
ՄՈՒՀԱՄԵԴՌԱՖԻ ՄԱՄԵԴՈՎ

Հայաստանի պաշտպանության նախարար
ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ

Լեռնային Ղարաբաղի բանակի հրամանատար
ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆ

Այդ համաձայնագրով նախատեսվում էր 30 օրվա ընթացքում կնքել Մեծ քաղաքական համաձայնագի րը ինչը սակայն, չստորագրվեց

Այնուամենայնիվ զինադադարից հետո ստեղծված ճակատային գծի փոխտեղադրությունը (կոնֆիգուրա ցիան) հայկական կողմի համար բավական բարե նպաստ է արցախյան ճակատի հարավային թևը պաշտպանվում է իրանական սահմանով հյուսիսա յին թևը դժվարամատչելի Մռավի լեռնաշղթայով Արևելյան ուղղությամբ Մռավի լեռնաշղթայից մինչև Արաքս գետը հայկական կողմն ունի բազմաշերտ պաշտպանական մի քանի գոտիներից բաղկացած և ինժեներական առումով լավ ամրացված սահմանա գիծ Եվ այսօր Պաշտպանության բանակն ու իր վե րահսկած ներկա տարածքը (շուրջ 12 հազար քառա

ՂԲ ի հաղթանակած հրամանատարները





8.02.1994
15.03-05.05.1994
27.03-01.04.1993
21-23-07
09.05.1992
22.08.199
31.08.1993
01.11.1993
Հարավային զորախումբ
3395 Օմար
3724 Գյամիշ
ՎԱՐԴԵՆԻՍ
ՔԵԼԲԱՋԱՐ
ՄԱՐՏԱԿԵՐՏ
ԱՍԿԵՐԱՆ
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
ՇՈՒՇԻ
ԼԱՉԻՆ
ԳՈՐԻՍ
ՍԻՍԻԱՆ
ԿՈՒԲԱԹԼՈՒ
ԶԱՆԳԵԼԱՆ
ՄԻՆՋԵՎԱՆ
ՂԱՓԱՆ
ՔԱՋԱՐԱՆ
ՄԵՂՐԻ
ԱԳԱՐԱԿ
ՀԱԴՐՈՒԹ

www.a-pdf.com



www.a-pdf.com

# ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ (1992 –1994 մայիս )

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Հրամանատարական կետ

Պաշպանության բանակի ստորաբաժանո մնե ի հարձակման ուղղություն

Հակառակորդի ստորաբաժանո մների հարձակման ուղղություն

ՊԲ-ի ստորաբաժանումների տեղաշարժ

Պաշպանության բանակի դիրքեր

Հակառակորդի դիրքեր

Նահանջի ուղղություններ

Խաղաղ բնակչության տարհանման ուղղությո ն

Խաղաղ բնակչության բռնագաղթի ուղղությունը

Ռազմական տեխնիկա

Պայթեցված օբյեկտներ

Սահմանագիծ

Բուժկետ

Պետական ա հմ ան

Քաղաք

Գյուղ

Ավտոմայրո ւղի

Գլխավոր ճանապարհներ

Այլ ճանապարհներ

Թո նե ներ կամուրջներ

Երկաթո ւղիներ կ ս ա ա ( ն

Լեռնագագաթ

Գետ

ճ ջրամբար

Անտառ

ՄԱՍՇՏԱԲ 1: 500 000

*Թիվ 18*

www.a-pdf.com

# ՀԱՅԿԱԿԱՆ ԶԻՆՈՒԺԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ 1994 Թ ՄԱՅԻՍԻ 12-ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՇՈՒՐՋ 25 – ԱԿԱՆ ԿՄ ԵՐԿԱՅՆՔՈՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՎ

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Հ ամա ա ո ակ ս կետ

Պաշտպանության բանակի ստորաբաժանումներ հարձակման ուղղություն

Հակառակորդի ստորաբաժանումների հարձակման ուղղություն

ՊԲ-ի ստորաբաժանումների տեղաշարժ

Պաշտպանության բանակի դիրքեր

Հակառակորդի դիրքեր

Նահանջի ուղղություններ

Խաղաղ բնակչության տարհանման ուղղություն

Խաղաղ բնակչության բռնագաղթի ուղղությունը

Ռազմական տեխնիկա

Պայթեցված օբյեկտներ

Սահմանագիծ

Քուժկետ

Պ ակ ն սահման

Ք ս սք

Գ ո ղ

Ավտոմա րո ղի

Գլխավոր ճանապարհնե

Այլ ճանապարհներ

Թունելներ.կամո րջն

Երկաթո ղիներ և կա ս ա ե

Լեռնազագաթ

Գետ

իճ ջրամբա

ար

Շուրջ 25 կմ երկայնքով վերահսկողության գոտի

1 սանտիմետրում 4 կմ
0 5 10 15 կմ

ՄԱՍՇՏԱԲ 00 000




Թիվ 19



ՇԱՀՈՒՄՅԱՆ
ԲԱՐԴԱ
5-րդ բրիգադ
Մանվել Գրիգորյան
ՄԱՐՏԱԿԵՐՏ
ռազմաքաղաքային գունդ
Մելքոնյան
7-րդ ՊՇ
Սերգեյ Չալյան
Մարտակերտի ՊՇ
Աշոտ Առուշանյան
ԱՂՋԱԲԵԴԻ
ԱՂԴԱՄ
Ասկերանի ՊՇ
Վիտալի Բալասանյան
ԱՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
Մարտունու ՊՇ
Մովսես Հակոբյան
ՄԱՐՏՈՒՆԻ
ՊՇ 71-րդ և 77-րդ ԱՄՀԳ
հետախուզական,
ականանետասակրավորական ՀՕՊ
8700 կմ²
ՇՈՒՇԻ
Մարտունու ՊՇ
Եյսոն Սողոմոնյան
ԼԱՉԻՆ
ՖԻԶՈՒԼԻ
Հադրութի ՊՇ
Արթուր Աղաբեկյան
ԳՈՐԻՍ
ՀԱԴՐՈՒԹ
ՀՈՐԱԴԻԶ
ՋԱԲՐԱՅԻԼ
ԿՈՒԲԱԹԼՈՒ
Կապանի բրիգադ
Միքայել Գրիգորյան
Հմայակ Հարոյան
2500 կմ
ԿԱՊԱՆ
ԶԱՆԳԵԼԱՆ
ՄԻՆՋԵՎԱՆ
ՄԵՂՐԻ


www.a-pdf.com

Գրքում զետեղված Շուշիի ազատագրման ռազմագործողության քարտեզի հարավային ուղղության և մյուս բոլոր քարտեզների հեղինակ  Սամվել Բաբայան

www.a-pdf.com



կուսի կմ որ կազմում է Մայր Հայաստանի Հանրապետության ներկայիս տարածքի շուրջ 40 տոկոսը) Արցախի անվտանգության հիմնական երաշխիքներն են ***(տե՛ս թիվ 18 քարտեզը)***

Մի առիթով Սամվել Բաբայանը շեշտել է որ մայիսի 9 ը հայ ժողովրդի համար նշանավոր է ամբողջ 4 տոնախորհուրդների առումով որպես ոչ միայն Հայրենական մեծ պատերազմում տարած Հաղթանակի Շուշիի ազատագրման և Պաշտպանության բանակի օր ինչպես սահմանված է ԼՂՀ ում այլև Ադրբեջանի կողմից պարտության ընդունման օր.

Այսպես ավարտվեցին Ադրբեջանի կողմից սանձազերծված 1988 1994 թվականների պատերազմական գործողությունները 1994 թվականի մայիսի 12 ի դրությամբ Օմարից մինչև Արաքս հայկական ուժերի տեղաբաշխման մասին ***տե՛ս թիվ 19 քարտեզը***



Սամվել Բաբայան

Իսկ ի՞նչ էին պատերազմական ժամանակներն իր Սամվել Բաբայանի համար Ահա պատասխանը

Պատերազմի ժամանակ հիշում է գեներալ-լեյտենանտ, Արցախի հերոս Սամվել Բաբայանը ունեցել եմ և՛ ուրախությունների, և՛ դառնությունների պահեր Ինձ համար դրանք հիմնականում համընկել են պատերազմի օրերի մեր հաջողություններին և կորուստներին Այդ տարիներին իմ սերնդակիցներից շատերի համար գլխավորը հայրենիքին ծառայելն էր Զինադադարից անցել է տասնչորս տարի Յուրաքանչյուր տարվա հետ մենք ուզենք թե չուզենք հեռանում ենք արցախյան գոյապայքարի ժամանակաշրջանից Աճել է նոր սերունդ Այդ նոր սերնդի համար մեր գոապայքարը հիշողություններ են Մեր այսօրվա սերնդին խնդրում եմ նրբորեն վերաբերվել այն ամենին ինչը կապված է արցախյան պատերազմին Մ›տպապես պետք է հիշել որ մեր հարևանությամբ ապրում են գոյապայքարի ազատամարտիկներ Իսկ ազատամարտիկը չի բողոքի իր չունեցածի համար նա բողոքելու բարդույթ չունի Հարգենք ու գնահատենք նրանց Դա ընդամենը մի փոքր հատուցում է այն ամենի համար ինչ նրանք արել են մեզ ու ձեզ համար Ես գուցե նորություն չէ որ ասում եմ ազատամարտիկի ուսերին էր ընկել պատերազմի դժվարին ու ծանր բեռը



Հրանտ Մարգարյան

Ես խոնարհվում եմ այն վեց հազար ազատամար տիկների պայծառ հիշատակի առջև, ովքեր իրենց արյան գնով ազատագրեցին բռնազավթված մեր փա րածքները Ազատագրեցին շուրջ 12 հազար քառա կուսի կիլոմետր տարածքով հայապատկան հողերը Ազատագրեցին ու իրենց արյունով վերագծեցին մեր սահմանները Մենք բոլորս չհատուցած պարտք ո նենք նրանց տալու Ես բարձր եմ գնահատում նաև կամավորական շարժումը որի շնորհիվ 1988 թվա կանից սկսած կամավորական ջոկատներ կազմա վորվեցին Հայաստանի Հանրապետությունում և Ար ցախում որոնց մեծ մասը 1992 թվականի ամռանից սկսած ներառվեց Պաշտպանության բանակի ստո րաբաժանումների կազմում և հերոսաբար մասնա կցեց մեր բոլոր մարտերին

Որքան էլ տարբեր ընթացք ստանային ազատա մարտիկների կենսագրությունները որքան էլ մեծ լի նեին տարբերությունները որոնք բնորոշում էին յու րաքանչյուրին և արդյունք էին անհատական գծերի նրանց մեջ ինչ-որ ընդհանուր բան էլ կար Եվ այդ ընդ հանուրը հատուկ էր ոչ միայն գրքում հիշատակված անուններին, այլև բազմաքազում ուրիշ նվիրյալների ովքեր թեև այստեղ չեն նշված, բայց նույնչափ իրա վունք ունեն մնալու ապագա սերունդների շնորհակալ հիշողության մեջ՝ Հիմնականը որ մերձեցնում էր (հա ճախ նաև գաղափարապես) այդքան տարբեր այդ անհատներին ստրկամտության և զոհի բարդույթնե

Էդուարդ Վէրդյանը և Սամվել Բաբայանը



www.a-pdf.com





Ռուբեն Գալստյանը և Սամվել Բաբայանը

րի մերժումն էր Եվ ես տեսա որ հայ մարդը այլևս 1915 թվականի կրավորական մարդը չէ

Ավելացնեմ՝ ծանրակշիռ են այն դերերը որ կատարեցին Վազգեն Սարգսյանը և Սերժ Սարգսյանը զորակոչերն ապահովելու բանակը ռազմական տեխնիկայով ու զինամթերքով զինվորական արհեստավարժ մասնագետներով համալրելու ասպարեզում 993–1994 թվականներին նրանք գործուն մասնակցություն ունեցան նաև ռազմական գործողություններին զինվորագրվող անձնակազմերի «եռամսյա վարժական հավաքները» նախաձեռնելու իրավական օրենսդրական կարգով հիմնավորելու և ամրագրելու կազմակերպումն ու իրականացումն ապահովելու



Քերոլան Նաջարյանը և բժիշկ, գրող Արցախ Բունիաթյանը ազատագրված Բերձորում

www.a-pdf.com



հիմնահարցերում Պետք է ասեմ որ ‹եռամսյա վարժական հավաքների մարտիկները մարտնչելով ռազմաճակատի ամենատարբեր այդ թվում առավել թեժ տեղամասերում իրենց մեծ նպաստը բերեցին մեր հաղթա նակները կերտելու գործին

Դժվար է գերագնահատել օղաչուական անձնակազմերի կամավոր մաս նակցությունն ու ներդրումը ազատագրական մարտերում, մասնավորապես օդաչուներն Արցախ են տեղափոխել կամավորական ջոկատների մարդասի րական օգնություն վառելանյութ և այլն

Ակնառու է նաև Արցախում Հայ Հեղափոխական Դաշնակցության ռազմական գործի կազմակերպիչ Հրանտ Մարգարյանի ( ում հետ ես մշտապես համագործակցել եմ ռազմական հարցերի քննագավառում) Դաշնակցության առանձին ջոկատների դերակատարությունը

Պատերազմին հայ ժողովուրդը մասնակցել է ուժերի գերագույն լարու մով և համազգային ընդգրկումով Հայաստանի Հանրապետություն Ար ցախ Սփյուռք Ես հիշում եմ նաև շատ բարեգործների նրանց մեջ՝ Ռու բեն Գալստանյանին Քերոլաև և Ջորջ Նաջարյաններին Էդուարդ Վեր դյանին և ուրիշների

Պատերազմը բացահայտեց հայ անհատի քաջությունը անձնազոհու թյունը և պատրաստակամությունը Պատերազմում մենք հաղթեցինք նաև մեր ռազմարվեստով Պատերազմը միայն ուժը և զենքը չէ այլև միտքն ու գաղափարն է Իսկ ավելի ճիշտ պատերազմը գաղափարի ու մարտավարության բախում է: Ի վերջո այս պատերազմում հաղթեց մեր մարտավարությունը Մի վիճակագրական փաստ այս պատերազմում մեր շուրջ վեց հազար զոհերի դիմաց հակառակորդը կորցրել է շուրջ երե սուն հազար զինվոր այսինքն մեր զոհված յուրաքանչյուր ազատամար տիկի դիմաց 5 ադրբեջանցի զինվոր

Պատերազմը բոլորիս և նաև ինձ տվեց ծայրահեղ ապրումներով բայց դրա կողքին լեցուն կյանք Դա նաև ինձ հնարավորություն տվեց փորձե լու իմ կամքը հասկանալու իմ անհրաժեշտությունը մեր ժողովրդի հա մար

Եվ այս գիտակցությամբ էլ հրադադարի հաստատումից հետո Սամվել Բաբայանը մուտք գործեց բանակաշինության պետականաշինության բնագավառ ու քաղաքականության դաշտ Այս իմաստով հարկ է նշել, որ Սամվել Բաբայանը հետպատերազմյան փուլում ևս ընդգծված տեսակետ է ունեցել արցախյան հիմնախնդրի կարգավորման հեռանկարների առնչությամբ Տնական մտորումները ռազմաքաղաքական ու պետական գործչի կենսափորձը բնատուր ներըմբռնումը, աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային զարգացումների համապատասխան բանակցու թյունների ողջ ընթացքի սթափ վերլուծությունը՝ զուգորդված անփոփոխ իրատեսությամբ նրա ազգային արժեքային կողմնորոշումներում խտաց

www.a-pdf.com



րել են մի հայեցակարգ որի շարադրանքն ամենաընդհանուր գծերով ներ կայացվում է ստորև

## ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Հարավկովկասյան պետությունների ինտեգրացիան ինչպես նաև ընդ հանուր արտաքին քաղաքականության եվրոպական ուղղվածությունը նպաստավոր նախադրյալներ կարող են ստեղծել տարածաշրջանային հակամարտությունների, մասնավորապես Լեռնային Ղարաբաղի հիմ նախնդրի լուծման առումով Հիմնախնդրի լուծման գլխավոր նախապայ մանը կողմերի ժողովրդավարացումը, ինքնըստինքյան կապահովվի եվ րոպական արժեքային համակարգի ասփիճանական ներդրմամբ. Իսկ խնդրի կարգավորման հիմքում ըստ մեզ պետք է ընկած լինեն որևէ միջ ազգային հեղինակավոր կազմակերպության (ենթադրաբար Եվ րոպական Միության) հովանու ներքո միջանկյալ ինքնիշխանության հայ փախստականների և ադրբեջանցի ներքին տեղահանված անձանց կա սավոր վերաբնակման Արցախում փնփեսության զարգացման նախա դրյալներ ստեղծելու և Արցախի կարգավիճակը նոր հանրաքվեի միջոցով որոշելու սկզբունքները

Ներկայացնում ենք նաև «Եվրոպական Միության մանդատի ներքո Լեռնային Ղարաբաղի կառավարման նոր կարգի ստեղծման սկզբունք ների մասին» համաձայնագրի նախագիծը և հիմնավորումներ որոնք վե աբերում են սույն նախագծի յուրաքանչյուր կետին

## Եվրոպական Միության մանդատի ներքո Լեռնային Ղարաբաղի կառավարման նոր կարգի ստեղծման սկզբունքների մասին

(համաձայնագրի նախագիծ)

Կարևորելով պետությունների միջև համակողմանի ու փոխշահավետ համագործակցություն հաստատելու Եվրոպական Միության դերը Ղարա բաղյան հակամարտությունը միջազգային իրավունքի նորմերին և հիմնա րար սկզբունքներին համապատասխան խաղաղ կարգավորելու իրենց կամականությունը Հայաստանի Հանրապետությունը Ադրբեջանի Հան րապետությունը և Լեռնային Ղարաբաղը կնքում են բազմակողմ փակ հա

www.a-pdf.com



մաձայնագիր Եվրոպական Միության մանդատի ներքո Լեռնային Ղարաբաղում կառավարման նոր կարգի մանդատային փարածքի ստեղծման մասին որը ներառում է հետևյալ սկզբունքները

1 Մինչև կողմերի միջև բացարձակ վստահության համակարգի և ընդհանուր համաձայնության հաստատումը Լեռնային Ղարաբաղը ճանաչվում է Հանրապետության ձևի պետական և տարածքային կազմավորում Եվրոպական Միության հովանու ներքո Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակը կորոշվի հանրաքվեի միջոցով որը կանցկացվի Լեռնային Ղարաբաղի տարածքում սույն պայմանագրի կնքումից 10 (տասը) տարի անց

2 Հակամարտության կարգավորման գործընթացում փոխադարձ կապեր հաստատելու համատեղ գործողությունները փոխհարաբերությունները համակարգելու նպատակով ստեղծվում են համապատասխանաբար Լեռնային Ղարաբաղի և Եվրոպական Միության մշտական ներկայացուցչություններ

3 Ընդհանուր գործառույթների առնչությամբ յուրաքանչյուր կողմի իրավունքներն ու պարտականությունները Եվրոպական Միությունը և Լեռնային Ղարաբաղը իրականացնում են հետևյալ կարգով

ա) արտաքին քաղաքականությանը վերաբերող ընդհանուր հարցերի կարգավորման իր իրավունքը Լեռնային Ղարաբաղը պատվիրակում է Եվրոպական Միությանը,

բ) Լեռնային Ղարաբաղն ունի վճռական ձայնի իրավունք տարածաշրջանի պետությունների հետ փոխհարաբերություններին առնչվող այն հարցերում որոնք շոշափում են իր շահերը

4 Լեռնային Ղարաբաղին վերապահվում է տնտեսական, առևտրային կրթական գիտական մշակութային մարզական մարդասիրական ոլորտներում այլ պետությունների ինչպես նաև այդ խնդիրներով զբաղվող տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ արտաքին ուղիղ կապերի իրագործման իրավունք որն իրացվում է Լեռնային Ղարաբաղի օրենսդրությամբ սահմանված կարգով Լեռնային Ղարաբաղի մշտական ներկայացուցչությունների միջոցով Լեռնային Ղարաբաղի կուսակցությունները և հասարակական կազմակերպություններն իրավունք ունեն կապեր հաստատելու այլ պետությունների կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների հետ

5 Լեռնային Ղարաբաղի սահմանները հաստատված են համաձայնագրով և չեն կարող փոխվել առանց Լեռնային Ղարաբաղի համաձայնության.

6 Մանդատային տարածքում բնակչության իրավական պաշտպանվածությունն ապահովելու համար կողմերն աջակցում են փախստականների և տեղահանված անձանց կամավոր վերաբնակմանը որի դեպքում

www.a-pdf.com



անձը և ծննդավայրը հաստատող փաստաթղթերի (ծննդյան վկայական և այլն) առկայությունը պարտադիր է

7 Ստեղծվում է Փախստականների և տեղահանված անձանց հար ցերն ուսումնասիրող մոնիտորինգի (դիտարկման) խառը խումբ որի շրջանակներում կողմերը պարտավորվում են պայմաններ ստեղծել նախկին Ադրբեջանական ԽՍՀ հց և հակամարտության հետևանքով տեղահանված անձանց վերաբնակման համար առանձին դեպքերում հնարավորություն տալով նրանց կամավորության սկզբունքով փոխա նակելու իրենց նախկին բնակարանները Վերաբնակված քաղաքացի ներն օգտվում են նույն իրավունքներից ինչ Լեռնային Ղարաբաղի քա ղաքացիները

8 Հայաստանի Հանրապետության Ադրբեջանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի որպես Եվրոպական Միության մանդատային տա րածքի սահմանները փոխադարձաբար բաց են անզեն քաղաքացիների ազատ տեղաշարժի համար. Գործնական կապեր վարելիս նրանք ազատ վում են մաքսային կամ այլ տուրքերից Մշտական բնակության իրավուն քի տրամադրումը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի կառավարու թյան իրավասությանը

9. Լեռնային Ղարաբաղի որպես մանդատային տարածքի կարգավի ճակը ներառում է նաև ներքոշարադրյալ իրավունքներն ու արտոնու թյունները ըստ համաձայնագրի դրույթների

ա) Լեռնային Ղարաբաղի ժողովրդի հանրաքվեով ընդունվում է Սահ մանադրություն որը չի հակասում Եվրոպական Միության հիմնական օրենսդրական ակտին (հենքային պայմանագրին): Սահմանադրությունը պարունակում է նաև սույն համաձայնագրի դրույթները և ունի հոդված Լեռնային Ղարաբաղը որպես մանդատային տարածք հավաստագրում է իր բոլոր քաղաքացիների համար երաշխիքներ միջազգային նորմերով նախատեսված քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները հարգելու և պահովելու վերաբերյալ »,

բ) Լեռնային Ղարաբաղն ունի դրոշ, զինանշան և օրհներգ

գ) Լեռնային Ղարաբաղը իր Սահմանադրությանը համապատասխան կազմավորում է օրենսդիր, գործադիր և դատական մարմիններ

դ) Լեռնային Ղարաբաղի քաղաքացիներն ունեն Եվրոպական Միության անձնագիր (ինքնության քարտ) որպես անձը հաստատող փաստաթուղթ Լեռնային Ղարաբաղ» հատուկ նշումով. Այդ փաստաթուղթը տրամադրե լու իրավունքը վերապահվում է Լեռնային Ղարաբաղի կառավարությանը Նշված փաստաթուղթն ունեցող քաղաքացիների արտերկրի հետ կապված իրավունքներն ու պարտականությունները կսահմանվեն Եվրոպական Մի ո թյան և Լեռնային Ղարաբաղի միջև կնքվելիք առանձին համաձայնագրով

ե) Լեռնային Ղարաբաղն ազատ տնտեսական գոտի է և իրավունք ու նի թողարկելու սեփական դրամանիշեր ու դրոշմանիշեր

www.a-pdf.com



գ) Լեռնային Ղարաբաղն ունի Հայաստանի Հանրապետության Ադրբեջանի Հանրապետության և այլ երկրների հետ ազատ ու անարգել տրանսպորտային հաղորդակցության և կապի իրավունք

է) Լեռնային Ղարաբաղն ունի Ազգային գվարդիա (անվտանգության ուժեր) և ոստիկանություն, որոնք կազմավորվում են կամավորության սկզբունքով և ունեն 30 000 (երեսուն հազար) թվաքանակից ոչ պակաս անձնակազմ համապատասխան սպառազինությամբ: Այդ ուժերը չեն կարող գործել Լեռնային Ղարաբաղի սահմաններից դուրս առանց Եվրոպական Միության մշտական ներկայացուցչության համաձայնության,

ը) Լեռնային Ղարաբաղի պաշտոնական լեզուն հայերենն է Լեռնային Ղարաբաղի քաղաքացիները կարող են օգտագործել նաև այլ լեզուներ տարբեր գործառույթներում

թ) Լեռնային Ղարաբաղի իշխանությունները սահմանված կարգով խրախուսում ու երաշխավորում են օտարերկրյա ընկերությունների և առանձին անձանց կապիտալ ներդրումները

## Երաշխիքների մասին

Համաձայնագիրը ստորագրում են երեք կողմերի լիազոր ներկայացուցիչները ինչպես նաև Եվրոպական Միության լիազոր ներկայացուցիչը՝ որպես սույն համաձայնագրի իրագործման երաշխավորներ Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

### Հիմնավորումներ
### Եվրոպական Միության (ԵՄ) մանդատի ներքո Լեռնային Ղարաբաղի կառավարման նոր կարգի ստեղծման սկզբունքների մասին համաձայնագրի նախագծի դրույթների

1 Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համար գերակա և կողմնորոշիչ են եվրոպական արժեքները մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների լիարժեք հարգումը քաղաքացիական հասարակության կայացումը

ԵՄ ն իր ներքին ու արտաքին բարենպաստ քաղաքականության շնորհիվ արդեն իսկ վերածել է հանրաճանաչ և հեղինակավոր աշխարհաքաղաքական բևեռի ու ժողովրդավարական արժեքներ դավանող կենտրոնի Իսկ Հարավային Կովկասը Եվրոպայի մի մասն է Այստեղ ԵՄ ն արդեն ունի հատուկ ներկայացուցչի գործող ինստիտուտ [հատուկ ներկայացուցիչը 2004 թվականին պաշտոնական այց է կատարել Լեռնային Ղարաբաղ այդ թվում նախկին ԼՂԻՄ ին հարող անվտանգության գոտի Բեր

www.a-pdf.com



ձոր շրջկենտրոն (նախկին Լաչին)] Բացի դրանից ԵՄ ն Հարավային Կովկասի երկրներն ընդգրկել է «Ընդլայնված Եվրոպա նոր հարևաններ ծրագրում

Ղարաբաղյան հակամարտության (այսուհետև ՂՀ) կարգավորման մանդատը տրված է զգալի մասամբ Եվրոպական Միության անդամ երկրներով ներկայացված ԵԱՀԿ Մինսկի խմբին և այժմ վերջինիս եռանախագահող երկրներից մեկն էլ Եվրոպական Միության հիմնադիր անդամ պետություն Ֆրանսիան է

Շահագրգիռ մյուս կողմերը ԵԱՀԿ անդամներ Հայաստանն ու Ադրբեջանը, չունեն կայուն իրավաքաղաքական դաշտ գործնականորեն ժողովրդավարական արժեքներ դավանող և կիրառող քաղաքացիական հասարակություն թափանցիկ ու փոխհակակշռող իշխանական ճյուղերով, տնտեսապես թույլ են ցածր իրավագիտակցությամբ և աղքատ բնակչության դեռ մեծ տեսակարար կշռով. Ուստի այս պայմաններում նշված երկրների իշխանություններն ի զորու չեն դրսևորելու քաղաքական կամք ու պատասխանատվություն սեփական ժողովուրդներին փոխզիջումների և տևական խաղաղության առաջնորդելու համար Նման իրավիճակում ԵՄ ի հովանու ներքո զարգացող ԼՂ ն կարող է դառնալ տարածաշրջանի եվրաինտեգրման գործընթացի արագացման յուրօրինակ խթան

Հետևապես, այս բոլոր իրողությունների բերումով հասունացել է նպատակահարմարությունը, որ միջնորդական գործառույթները ԵԱՀԿ կառույցներից փոխանցվեն ԵՄ ին՝ բացառելով թե ԱՄՆ ի թե ՌԴ-ի հետագա միջնորդական առաքելությունը ԵՄ ն դառնա հաշտարար միջնորդ հակամարտ կողմերի միջև ստանձնելով ԼՂ ի մանդատը, ընդ որում ԼՂ ն դիտարկելով ոչ թե որպես հակամարտության օբյեկտ այլ սուբյեկտ Հարավային Կովկասում որպես խաղաղության վերահաստատման կամուրջ Հայաստանի և Ադրբեջանի միջև

ԼՂ ի ժողովուրդն իր անվտանգությունը ստիպված է փնտրելու Եվրամիության ընդհանուր հովանու ներքո ձգտելով ինտեգրվել ԵՄ ի ընտանիքին. Այս պայմաններում մի կողմից կմեծանան ԵՄ ի բազմակողմանի ներկայությունը և դերակատարությունը տարածաշրջանում մասնավորապես՝ հակամարտ կողմերին փոխադարձ զիջումների հակելու գործում, մյուս կողմից ԼՂ ն իր հերթին հնարավորինս կաջակցի հակամարտության վերջնական կարգավորմանը և նոր բախումների կանխարգելմանը

Եվ եթե ԼՂ ի ժողովուրդն ազատ ինքնորոշմամբ, ժողովրդավարության բոլոր նորմերի պահպանմամբ հավաքական ցանկություն է հայտնում հայցելու ԵՄ ի մանդատը իսկ ԵՄ ն էլ ստանձնում է այն, ապա ՂՀ ի մեջ ներքաշված մյուս կողմերը չեն կարող դրան չհամաձայնել և առհասարակ կիմաստազրկվի նրանց կամքը հարցնելու խնդիրը Ինքնըստինքյան կլուծվի նաև նրանց իշխանությունների «սեփական ազգային քաղաքական շահե

www.a-pdf.com



րին չդավաճանելու պարտավորվելով փոխզիջումների անպարտաստականու թյան բարդույթը ԵՄ ի ղարաբաղյան մանդատը բավարար կլինի որ նրանք հանգիստ թողափեն այդ պատասխանատվության բեռը Հատկա պես որ բոլոր կողմերի հենց այդ շահերից է բխում ԵՄ ի հովանու ներքո առաջարկվող կարգավորման փաթեթակը հատես կաճեն ԼՂ ի անվտան գության երաշխիքները. Բոլոր կողմերն էլ վերականգնելով փոխշահավետ տնտեսական ու քաղաքական համագործակցությունը կինտեգրվեն ԵՄ ի ընդհանուր ընտանիքին մի կարևոր հանգամանք, որ կնպաստի նոր պա տերազմների բացառմանը ինչպես նաև ողջ տարածաշրջանի և նրա յուրա քանչյուր սուբյեկտի սոցիալ տնտեսական զարգացմանը:

Մինչև խնդրի վերջնալուծման փուլը կտրուկ մեծացնելով իր դերը ԵՄ ն իրեն իսկ հնարավորություն կընձեռի անմիջականորեն թափանցելու ՂՀ ի խոհանոցը» խորապես ըմբռնելու կողմերի մոտեցումների յուրահատ կությունները և այս ամենի հաշվառմամբ բազմակողմանի երաշխիքներ տրամադրելու ՂՀ ի գոտում անվտանգության ու փոխվստահության ամրապնդման տնտեսական զարգացման ու ինտեգրման համար. Իսկ ԼՂ ն դառնալով հարաբերականորեն ինքնուրույն վարչաքաղաքական միա վոր ԵՄ ի օգնությամբ աստիճանաբար կվերացնի պատերազմի հե տևանքները առավել լրիվ կիրացնի ու կզարգացնի սեփական տնտեսա կան ներուժը ԵՄ ի հովանու ներքո սերտ շփումներ հաստատելով տարբեր երկրների հետ կսկսի ընթանալ ժողովրդավարացման, տնտեսական ու ներքաղաքական համակարգային բարեփոխումների, տարածաշրջանային ու համաեվրոպական ինտեգրման՝ այլընտրանք չունեցող ճանապարհով

Այս ուղեգծի անշրջելիությունն ու արագությունը դարձյալ կախված կլինեն բացառապես ԵՄ ի աջակցության ընդգրկումներից ինտենսիվու թյունից

Հակառակ դեպքում եթե եվրոպական հանրության կողմից գործուն միջոցներ չձեռնարկվեն ԼՂ-ի վրա ԵՄ ի մանդատը տարածելու ուղղու թյամբ ապա ԼՂ Ադրբեջան հակամարտությունը կխորանա միայն բե րելով նորանոր առավել մեծաքանակ մարդկային ու նյութական կորուստներ տնտեսությունների քայքայումը կհանգեցնի այնպիսի սոցի ալ-քաղաքական աղետի որ այդուհետ այլևս միջազգային ամենամեծ ցանկության ու ջանքերի դեպքում իսկ անհնար կլինի ՂՀ ի գոտում ներ քաշված բնակչության մեջ գոնե այժմյան առանց այն էլ բոլոր առումնե րով անբավարար կացության վերականգնումը

Ի դեպ Ադրբեջանում հնչում են տարբեր հիմնավորումներ, որոնք նպա տակ ունեն ապացուցելու, թե ինչու Ադրբեջանի ընթացքը դեպի Եվրամի ություն այլընտրանք չունի՝ Այս համատեքստում հակամարտության լուծ ման բանալին այնտեղ նույնպես տեսնում են ԵՄ-ին տարածաշրջանի ինտեգրման շրջանակներում՝ Նրանք իրավամբ շեշտում են, որ բազմաթիվ հարցեր օրինակ ո՞ր օրենքները կգործեն Լեռնային Ղարաբաղում ո՞ր

www.a-pdf.com



փարադրամը կշրջանառվի ինչպիսի ք կլինեն մաքսային միգրացիայի կանոնները սահմանները քաղաքացիությունը և շատ այլ հարցեր որոնք այսօր անհաղթահարելի են կկորցնեն իրենց հրատապությունը

Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակեցման նպատակով նախատեսված հանրաքվեի անցկացումը 10 (տասը) տարի անց պայմանավորված է ԴՀ ի հետևանքների վերացման անհրաժեշտությամբ

2 Հիմնավորումները բխում են առաջին կետում շարադրված դրույթներից ինչպես նաև փոխշփումների հաստատման և դիվանագիտական հարաբերությունների վարման միջազգային իրավունքի պրակտիկայից

3 Տվյալ փուլում Լեռնային Ղարաբաղը հավակնում է սահմանափակ ինքնիշխանության որի հետ կապված

ա) Լեռնային Ղարաբաղը կամովին հրաժարվում է արտաքին քաղաքական գործառույթներ լրիվ ծավալով իրականացնելու բնականոն ձգտումից դրանք ընդհանուր առմամբ վերապահելով Եվրոպական Միությանը՝ Այս կարևոր ասպարեզում իր ձայնը վստահելով ԵՄ ին ԼՂ ն հուսով է որ ԵՄ ն լինելով արդեն միջազգային իրավարար (արբիտր) այդ ձայնը լիարժեք կօգտագործի ինչպես ԵՄ ի շահերը Հարավային Կովկասում պաշտպանելու այնպես էլ ԼՂ ի շահերին առնչվող վեճերն ու հակամարտ կողմերի խրթին փոխհարաբերությունները միջազգային հանրության առաջ կարգավորելու ուղղությամբ

բ) Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը 1988 թվականից ընտրեց ազգերի ազատ ինքնորոշման միջազգայնորեն ճանաչված սկզբունքի հիման վրա իր ապագան ժողովրդավարական ու օրինական կառուցակարգերով կերտելու և տնօրինելու միակ հնարավոր ուղեգիծը 1991 թվականի դեկտեմբերի 10 ին (Ադրբեջանից 5 օր շուտ) տարբեր երկրների դիտորդների ներկայությամբ ԼՂ ում անցկացվեց անկախության հանրաքվե որի արդյունքում ԼՂՀ ն դե ֆակտո գոյություն ունի շուրջ 17 տարի Միևնույն ժամանակ տարածաշրջանում ցավոք դեռևս փաստացի ձևավորված չէ փոխվստահության ցանկալի մթնոլորտ շուրջ 20 տարի շարունակվող բազմաթիվ հակամարտությունները կարգավորված չեն և բուն տարածաշրջանը տնտեսական ու քաղաքական բոլոր չափանիշներով մնում է եծ ռիսկային գոտի. Ուստի խիստ անհրաժեշտ է որ Լեռնային Ղարաղն ունենա լիարժեք ձայնի իրավունք տարածաշրջանային քաղաքաանության այն հիմնահարցերում որոնք շոշափում են իր շահերը

4. Ելնելով մարդու հանրաճանաչ իրավունքների և հիմնարար ազատությունների երաշխավորման ու հարգման անհրաժեշտությունից ԼՂ ն վերք է լիիրավ հնարավորություններ ստանա շահագրգիռ պետություններրի հետ համագործակցելու նաև հումանիտար ոլորտի բոլոր ճյուղերում պատակը նույնն է տնտեսական ու իրավաքաղաքական ճգնաժամից առավելագույնս արագ դուրս գալ խաղաղ ու ներդաշնակ զարգացման սսաեվրոպական մայրուղի Արտաքին ուղիղ կապերի իրագործման

www.a-pdf.com



մեխանիզմը կարելի է ապահովել համապատասխան երկրներում Լեռնա
յին Ղարաբաղի մշտական ներկայացուցչությունների միջոցով հատկա
պես որ արդեն կան նաև դրանց արդյունավետ գործող փաստացի նախա
դեպերը

5 ԼՂ սահմանների որոշման սկզբունքները թելադրված են հետևյալ
օբյեկտիվ պահանջներով

ա) անհրաժեշտ անվտանգության երաշխիքներ ինչին համապատաս
խան ԼՂ ռազմավարանշանակ արևմտյան թիկունքն ապահովող առ
նվազն 2 շրջանների Քաշաթաղի և Նոր Շահումյանի (Լաչինի և Քելբա
ջարի) տարածքներն ամբողջովին պետք է ներառվեն ԼՂ վարչատարած
քային կազմում

բ) ԼՂ բնակչության բազմաէթնիկության (խառնաբնակության) վերա
կանգնում կազմակերպելով ՂՀ-ի հետևանքով հայ փախստականների և
ադրբեջանցի ու այլազգի ներքին տեղահանվածների կամավոր վերա
դարձը նախկին բնակության վայրեր

Հիշյալ իրավունքներից ամբողջությամբ պիտի օգտվեն ոչ միայն նախ
կին ԼՂԻՄ ից այլև Ադրբեջանի բազմաթիվ այլ տարածքներից բռնագաղ
թած և նախկին բնակության երկիրը փոխած հայ փախստականները, ով
քեր այժմ գործնականում չեն կարող վերադառնալ Ադրբեջանում իրենց
նախկին բնակության վայրերը անվտանգության տարրական երաշխիք
ների բացառված լինելու պատճառով

գ) փոխվստահության վերականգման և ամրապնդման փոխադարձ
ինտեգրման գոտու ստեղծում և ապաճանական ընդարձակում որպես
նաև օրինակ տարածաշրջանի մյուս ազգամիջյան բախումների կարգա
վորման համար

6 Երկու կողմերի փախստականների ու բռնի տեղահանվածների կամա
վոր վերաբնակությունը թիվ մեկ պայմանն է ՂՀ ի վերջնական և մնայուն
կարգավորման համար Չլուծելով բնակչության առավել անպաշտպան խա
վի սոցիալական քաղաքական իրավունքների խնդիրները և դրանով իսկ
գործնականում չապահովելով հակամարտության մեջ ներքաշված ժողո
վուրդների փոխադարձ հանդուրժողականությունն ու համակեցությունը
անհնար է ՂՀ ն հանել փակուղուց

Անձը հաստատող փաստաթուղթը և ծննդավայրի հստակ նշումը շեշ
տադրելու անհրաժեշտությունը պայմանավորված է հիշյալ անձանց վե
րադարձի գործընթացում հնարավոր վարչաիրավական թյուրիմացու
թյուններից և ազգամիջյան նոր բախումներից խուսափելու ցանկությամբ

7. Խառը հանձնախմբի ստեղծումը հարկավոր է վերոնշյալ խմբերի
ներկայացուցիչների վերաբնակման բոլոր գործընթացները միջազգային
իրավունքի պահանջներին համապատասխան կազմակերպելու և
վերահսկելու համար

www.a-pdf.com



Գործընթացները նշված անձանց համար կկազմակերպվեն և կիրակա նացվեն հնարավորության սահմաններում առավելագույն լայն ընտրու թյամբ և կամավորության սկզբունքով
ա) բնակարանների փոխանակում
բ) Լեռնային Ղարաբաղի տարածքում որևէ այլ բնակավայրում բնա կարանի հատկացում.

Զուգահեռ գործնական լուծում կստանան հակամարտության գոտում անվտանգության կայուն և հուսալի համակարգի ստեղծման ու գործառման փոխվստահության վերականգնման և ամրապնդման, ապաշրջափակման վերաինտեգրման ու սոցիալ քաղաքական համերաշխության ապահովման հիմնախնդիրները

8 Ազատ տեղաշարժի իրավունքը հաստատված է ԵՄ ի հիմնարար փաստաթղթերում և ամենօրյա պրակտիկայում իսկ մեր պարագայում առավել ևս է կարևորվում քանզի ԵՄ ի նմանությամբ բացելով փշալարա պատ սահմանները վերանայելով առևտրային մաքսային արգելքները ԵՄ ի մանդատի ներքո հնարավորություններ կտրվեն ԼՂ քաղաքացինե րին փոխվստահության և ապագայի հանդեպ զորացող հավատի հենքի վրա ազատորեն զարգացնելու երկրի տնտեսությունը դրանով իսկ բարձ րացնելու բնակչության կենսամակարդակը, աստիճանաբար հավասարվե լու ԵՄ ի երկրների մակարդակին և վերջնարդյունքում տնտեսական ու քաղաքական փոխառնչությունների խորացման միջոցով ապահովելու բազմակողմանի ինտեգրումը ինչպես բուն կովկասյան տարածաշրջանում այնպես էլ ողջ ԵՄ ի մակրոտարածքում վերջինիս էլ մշտական ազդեցու թյամբ ու հովանավորությամբ քաղաքացիական հասարակություններ ձե վավորելու ԼՂ-ում և հակամարտող մյուս երկրներում

9 Բոլոր ենթակետերի դրույթները ձևակերպված են միջազգային իրա վունքի ընդունված նորմերին և սկզբունքներին համապատասխան
ա) վերոհիշյալ խնդիրների իրականացման համար նախ պարտադիր է որ ԼՂ օրենսդրությունը հատկապես մարդու իրավունքների ու ազա տությունների մասով համապատասխանեցվի ԵՄ ի օրենքների պահանջներին
բ գ) քանի որ ԼՂ ն ընտրելու է ապառազմականացման ուղին բացե լու է սահմանները անհրաժեշտ է և բավարար որ ԼՂ ն իր այդ սահման ներում որոնց բնույթը չի հակասելու ՂՀ ի վերջնական կարգավորման շահերին ունենա ինքնիշխանություն և իրավունք ազատ արդար և ուղ ղակի ընտրություններով կազմավորելու պետական իշխանական կա ռույցները
դ) եթե ԼՂ քաղաքացիներին այդ թվում վերադարձած նախկին բնա կիչներին անձը հաստատող փաստաթուղթ տրամադրի որևէ այլ երկիր այլ խոսքով եթե այդ փաստաթղթում (ԼՂ սահմանափակ ինքնիշխանու թյան բերումով թեկուզ ինքնության քարտում) չամրագրվի ԵՄ-ի մանդա

պը, և վերջապես եթե դա շնորհելու իրավունքը չվերապահվի ԼՂ կառավարությանը ապա ի դերև կհանվի ԼՂ ն ինքնուրույն միավորի իրավունքով ԵՄ ի մանդատի ներքո առնելու ողջ քաղաքական պրամաբանությունը իսպառ վերացնելով ԼՂ ի առանց այն էլ սահմանափակ ինքնուրույնության տարրերը և ՂՀ-ն նորից կմտնի փակուղի կամ նույնիսկ կբորբոքվի նոր բախում Քանի որ նաև ընթացիկ փուլում հակամարտ կողմերը դեռ պատրաստ չեն ինքնուրույն փոխհամաձայնեցմամբ կարգավորելու այս բարդ ու զգայուն հիմնախնդիրը մնում է միայն որ, ԵՄ-ի հսկողությամբ խառը հանձնախումբը վերջնական լուծում տա հետևյալ սկզբունքային հարցերին համաձայնեցնելով ԼՂ իշխանությունների հետ

տվյալ դիմողն ընդհանրապես իրավունք ունի՞ մշտական բնակություն հաստատելու ԼՂ տարածքում,

-ո՞ր բնակավայրում է ապրելու

երաշխավորել անձը հաստատող փաստաթղթի ձևակերպումը հենց տվյալ (և ոչ ուրիշ) հաշվառման հասցեով

ե) ԼՂ իշխանությունները կարող են ապահովել ազատ տնտեսական գոտում օֆշորային պայմանների ստեղծումը (ԵՄ ի որոշ փոքր երկրների Մալթայի, Լիխտենշթայնի, Հարավային Կիպրոսի օրինակով), տնտեսական մենաշնորհների բացառումը առողջ տնտեսական մրցակցության ծավալումը

զ) նշված իրավունքն ինքնաբերաբար բխում է նախագծի 8 րդ կետի դրույթներից և ԵՄ ի օրենսդրական պահանջներից

է) խուսափելու համար 19 րդ դարի վերջին և 20 րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունում ծրագրված և իրագործված հայերի ցեղասպանության նորանոր դրսևորումների իրական սպառնալիքից առաջնորդվելով Խորհրդային և անկախ Ադրբեջանների խտրական մշտապես ազգային զտումներով ուղեկցվող և հատկապես, հայահալած քաղաքականության հերթական զոհը չդառնալու բնական ինքնապահպան մղումով (չկրկնելու համար, օրինակ ի սկզբանե հայաբնակ զուտ հայկական տեղանվամբ և իբրև հայության համար որպես Ինքնավար Հանրապետություն ստեղծված բայց 1918 1989 թվականներին իսպառ հայաթափված Նախիջևանի ճակատագիրը) օգտվելով զինված ինտերվենցիայի պայմաններում անհատական ինքնապաշտպանություն կազմակերպելու միջազգայնորեն ճանաչված իրավունքից ԼՂ ն արդեն շուրջ 16 տարի դեֆակտո ունի Պաշտպանության կանոնավոր բանակ ըստ որում Ադրբեջանի սանձազերծած զինյալ հակամարտության փուլավարտից հետո (1996 թվականից) ԼՂ տարածքում ԼՂ բնակիչների համար վերացված է պարտադիր զինծառայության մասին օրենքը (ԵՄ ի անդամ և այլ երկըրների նման գործում են միայն ժամկետային և պայմանագրային կամավոր զինծառայության կարգերը). ԼՂ ն պնդում է կանոնավոր բանակային կառույցը պահպանելու անհրաժեշտությունը քանի որ բացակայում

www.a-pdf.com

www.a-pdf.com



են հակամարտ կողմերի միջև ցանկալի վստահությունը և ԼՂ բնակչու թյան անվտանգության իրական երաշխիքները Ինքնապաշտպանու թյան նվազագույն մակարդակի և կայուն խաղաղության ապահովման համար ԼՂ ն, ԵՄ ի թույլտվությամբ և նրա ռազմական փորձագետների վերահսկողությամբ ստեղծում է Ազգային գվարդիա (անվտանգության ուժեր) և ոստիկանություն ունենալով Ադրբեջանի զինված ուժերի սպա ռազինության առնվազն 1/4 ը.

Մյուս կողմից քանի որ Ադրբեջանը ներկայում ունի, իր իսկ պաշտո նական տվյալներով ավելի քան 150 (հարյուր հիսուն) հազար զինծառա յող Լեռնային Ղարաբաղն իրավունք ունի հավակնելու այդ թվի գոնե 1/5 մասին

ը) մինչև հակամարտության բռնկումը Լեռնային Ղարաբաղի բնակչու թյան ճնշող մեծամասնությունը (3/4 ից ավելին) կազմել են հայալեզու տեղաբնիկ հայերը Արդեն ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի ժողո վուրդն էլ իր նաև լեզվամշակութային ու հոգևոր անկախությունը վավե րացրած 1991 թվականի հանրաքվեի արգասիք հանդիսացող Սահմա նադրական օրենքում և 2006 թվականին ընդունած Սահմանադրության մեջ ամրագրեց Լեռնային Ղարաբաղի տարածքում հայերենի որպես մի ակ պետական ու պաշտոնական լեզվի կարգավիճակը

Մյուս կողմից ըստ Նախագծի հիմնադրույթների, ադրբեջաներենն իբրև պաշտոնական լեզու ունեցող Ադրբեջանի Հանրապետության հետ Լեռնային Ղարաբաղը հարաբերվելու է ընդհանուր հիմունքներով որպես այլ պետության

## Ամփոփում

ՀՀ ի ԼՂ ի և Ադրբեջանի թե իշխանությունների թե ժողովուրդների միջև չեն հաստատվել անհրաժեշտ վստահությունն ու միմյանց ընդառաջ գնալու քաղաքական կամքը Թե ՀՀ-ում ու ԼՂ-ում թե Ադրբեջանում դե ռևս գոյություն չունի ժողովրդի ազատ ընտրությամբ օրինական իշխա նություններ ձևավորելու համակարգ, որոնք կկարողանան նույն ժո ղովրդի առաջ պատասխանատվություն ստանձնած դիմել անհրաժեշտ փոխզիջումների գործող իշխանություններն էլ ՂՀ ի կարգավորման ջան քեր գործադրելու փոխարեն միայն ժամանակ են ձգձգում իշխանական լծակները պահպանելու և ինքնավերարտադրման շահամիտումով Երեք երկրներում էլ արմատացած չեն ժողովրդավարական արժեքներն ու հաս տատությունները ԼՂ-ում պահպանվում և պարեցտարի երկարաձգվում է հարկադրյալ ռազմական դրության ռեժիմը ինչը չի կարող նպաստել ո

www.a-pdf.com



ժողովրդավարության, ոչ էլ փնփեսության զարգացմանը Ուստի ներկա
յիս այլընտրանքը միակն է մնում այն է ԼՂ փարածքը միջազգային հան
րության և առաջին հերթին ԵՄ ի օգնությամբ դուրս բերել հակամարտ
կողմերի գործող իշխանությունների պարտադրած ռազմաքաղաքական
դաշտից և հանձնել ԵՄ ի իրավասությանը վերը շարադրված պայմաննե
րով Առավել ևս որ ապագան բոլոր դեպքերում ԵՄ-ինն է տարածաշրջա
նի երկրները անկասկած, կհամալրեն ԵՄ ի ընդլայնվող շարքերը վաղ
թե ուշ (մեր հիշյալ ժողովուրդների համար ցանկալի է իհարկե, հնարա
վորինս վաղ և ԼՂ ի մանդատի հանձնումը ԵՄ ին ինքնին կարագացնի
բոլոր երկրների անդամակցման գործընթացը)

www.a-pdf.com

# ՊԵՏԱԿԱՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲԱՎԻՐՂՆԵՐՈՒՄ



www.a-pdf.com



*Մենք զգում ենք մեծ ապագան հայ*
*հայրենիքի և երկյուղածորեն ծնրադրում նրա*
*ապրվածային դեմքիքի առջև*

*ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ*

Հրադադարի հաստատումից ոչ շատ անց 1994 թվականի մայիսի 28-ին հայոց առաջին հանրապետության խորհրդանշական օրը 29-ամյա Սամվել Բաբայանին ի գնահատումն արցախյան ազատամարտում նրա մատուցած անուրանալի ծառայությունների, շնորհվեց գեներալ մայորի զինվորական կոչում Դրանով իսկ Բաբայանը դարձավ վերջին 2 դարերում բարձրագույն սպայական կոչման արժանացած ամենաերիտասարդ հայորդին

Պատերազմական գործողությունների ավարտից հետո հաստատված հարաբերական խաղաղության պայմաններում Արցախի պետական կառույցների, մեծապես ավերված տնտեսության բազում դժվարություններ ու զրկանքներ դիմագրաված ողջ բնակչության առջև ծառացան սկզբունքորեն այլ բնույթի հիմնախնդիրներ· Հրադադարի՝ ուժի մեջ մտնելուց հետո երկար ժամանակ ԼՂՀ Պաշտպանության բանակն արցախահայության համար մնում էր միակ իրավասու և հեղինակություն վայելող հասցեատեր մարմինը Իշխանության տարբեր օղակներին և հատկապես բանակին հղվող բնակչության դիմում-բողոք-զանգատ առաջարկ պահանջների հարաճուն հոսքը հրատապ էր դարձնում ԼՂՀ պետական կառույցների կառավարման համակարգի և հանրային կյանքի բոլոր ոլորտների բարեփոխումը համապատասխանեցնելով նոր քաղաքական մարտահրավերներին ու սոցիալ տնտեսական պահանջներին Այլ խոսքով՝ հարկավոր էր ամրապնդել ինքնիշխան Արցախի պետականությունը

Հենց այս շրջադարձային գործում կարևորագույն դերակատարություն ունեցավ Սամվել Բաբայանը Գեներալը հասկանում էր որ իր առաքելության ուժը պայմանավորված է հաղթանակների հետ ժառանգական կապով այն գերխնդրով որ իր բոլոր մոտեցումները պետք է ծառայեն հաղթանակների արդյունքների պաշտպանությանը և խաղաղության ամրապնդմանը Հաղթանակների զորահրամանատարի խոսքն ուներ քաղաքական կշիռ որն էլ դրսևորվեց 1994 թվականի դեկտեմբերի 21–23-ին կայացած ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի նստաշրջանում Բանակի հրամանատարը ով նաև ԼՂՀ ԳԽ պատգամավոր էր, խորհրդարանական իր գործընկերների առջև հանդես գալով վճռորոշ ելույթով շեշտեց որ ելնելով մեր ժողովրդի ընդհանուր շահերից պահպանելով նաև Արցախի վարկը անհրաժեշտ է համարում իրականացնել հանրապետու

www.a-pdf.com



թյան նախագահի օրինական և քաղաքակիրթ ընտրություն կառավարության ձևավորում. Նույն ելույթում Բաբայանն առաջարկեց ԼՂՀ նախագահ ընտրել Ռոբերտ Քոչարյանին. Բաբայանի քաղաքական բազմաթիվ հակառակորդներ տարիներ շարունակ մեղադրում են Պաշտպանության բանակի հրամանատարին Արցախում իրենց իսկ կարծիքով հաստատված բռնապետության համար Մինչդեռ ինչպես տեսնում ենք, այդ բռնապետը» իրականում կամովին հրաժարվում է իր փաստացի իշխանությունից հանուն պետականության կայացման հանուն ժողովրդավարական հաստատությունների և ավանդույթների հիմնադրման ու զարգացման



Ռոբերտ Քոչարյան

Բաբայանի կողմից Քոչարյանի թեկնածության առաջադրումը պատահական չէր և առավել ևս թե լադրված չէր նեղ անձնական նկատառումներով Հայաստանի նորանկախ հանրապետությունն այդ ժամանակ գլխավորում էին Հայոց համազգային շարժման (ՀՀՇ) գործիչները և մարտավարական տեսանկյունից ակնհայտ էր որ պետք էր պահպանել ու խորացնել գործող փոխհարաբերությունները Ահա թե նաև ինչու ԼՂՀ առաջին նախագահի քաղաքական ընտրության հարցում Բաբայանի նախապատվությունը կանգ առավ Ռոբերտ Քոչարյանի թեկնածության վրա Մի գործչի ով դեռ 1989 և 1990 թվականներին Հայաստանի ընտրատարածքից ընտրվել էր ՀԽՍՀ, այնուհետև ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր և կազմակերպչական աշխատանքի փորձ ուներ իսկ պատերազմական տարիներին ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի (ՊՊԿ) նախագահն էր ըստ հարկին չեզոքացնելով ռազմաքաղաքական անհրաժեշտ ձեռքբերումներից զերծ մնալուն կամ հրաժարվելուն միտված տարատեսակ ճնշումներ

Բաբայանի այս դիրքորոշմամբ բացառվեցին օրենսդիր-ներկայացուցչական մարմնի ներսում առկա ընդդիմադիրների առարկությունները

ԼՂՀ Գխ, ապա Ազգային ժողովի շենքը և նախագահի նստավայրը Ստեփանակերտում



www.a-pdf.com



Քվեների բացարձակ մեծամասնությամբ 1994 թվականի դեկտեմբերին ԼՂՀ առաջին նախագահ ընտրվեց Ռոբերտ Սեդրակի Քոչարյանը (2 տարի ժամկետով) Վերջինս նոր օրենքով սահմանված կարգով, ձեռնամուխ եղավ ԼՂՀ կառավարության կազմավորմանը 1995 թվականի հունվարին որպես վարչապետի հրավիրելով ՀՀ կառավարության նախկին անդամ հատուկ ծրագրերի պետական վար ‹ության նախկին պետ Լեոնարդ Պետրոսյանին (զոհվել է 1999 թվականի հոկտեմբերի 27 ին ՀՀ ԱԺ նիստերի դահլիճում կատարված ոճրագործության հետևանքով)



Սամվել
Բաբայան

Հիմնադրվեց և Արցախի կառավարության կառուց վածքում ի թիվս պետական կառավարման այլ մար մինների ընդգրկվեց պաշտպանության նախարարու թյունը ԼՂՀ պաշտպանության նախարար նշանակ վեց Պաշտպանության բանակի հրամանատար Սամ վել Բաբայանը (1995 թվականի հունվարի 9)

Պաշտպանության նախարարի ուշադրության կենտրոնում շարունակում էին գերակայել ԼՂՀ ի ան վտանգության հիմնական երաշխավորի բանակի հիմնախնդիրները զորամասերի մարտունակության հետևողական ամրապնդումը Բաբայանի ղեկավա րությամբ աշխատանքներ ծավալվեցին Պաշտպանա կան շրջանների արդիականացման և հզորացման ուղղություններով Հանրապետության սահմանների ոուսալի պաշտպանությունն ապահովելու նպատա կով, կողմերի շփման գծի ամբողջ երկայնքով ստեղծ վեցին ամուր դիրքեր հագեցված ռազմատեխնիկա կան անհրաժեշտ սարքավորումներով Հիմնվեցին նոր զորանոցներ զորավարժարաններ, ռազմաճար տարագիտական այլ կարևոր ենթակառույցներ



Լեոնարդ
Պետրոսյան

Բանակում կառավարման համակարգի բարեփոխ ման շնորհիվ զորակոչերի կազմակերպումը դարձավ անխափան

Պաշտպանության բանակում ներգրավվեց հիմնականում փորձառու բարձրագույն հրամանատարական կազմ այդ թվում ԽՍՀՄ հրետանու գեներալ մայոր դեռևս Հայրենական մեծ պատերազմում աչքի ընկած հե փազայում ՀՀ համազորային գեներալ-լեյտենանտ Արցախի հերոս հետմահու) Քրիստափոր Իվանյանը ԽՍՀՄ զինված ուժերի (ԶՈՒ) գնդապետ աֆղանական պատերազմի մասնակից հետագայում ՀՀ գե ներալ-լեյտենանտ Անատոլի Զինևիչը ՌԴ ԶՈՒ գեներալ մայոր Վալերի Խաչատրյանը Սեյրան Օհանյանը և ուրիշներ Միևնույն ժամանակ կադ րերի ճիշտ ընտրությունը ԼՂՀ բանակում լրջագույն խնդիր էր Արցախի

www.a-pdf.com





Սամվե  Բաբայանը հետևո մ է հևրթ սկան զորավարժո թյանը



Սա մվել Բաբայանը հրամանատարների հետ

www.a-pdf.com





Զորամասի սպո գայց



Բանակաշինո թյո ն

www.a-pdf.com



բնակչության ընդհանուր թվից հարկավոր էր առանձնացնել պահանջվող սպայական և ենթասպայական թվակազմ այն դեպքում երբ Արցախում մինչ այդ չէր գործել որևէ ռազմական ուսումնական հաստատություն Կազմակերպվեցին տեղական զինվորական կադրերի մասնագիտական ուսումնառությունը և վերապատրաստումը ՀՀ ում ու արտերկրում Սպայակադրային արդյունավետ քաղաքականությունն առավել քան կարևոր վում էր ինչը բոլոր անխուսափելի թերություններով հանդերձ հաջողությամբ իրականացրեց նախարարը

Նոր հոսպիտալների կառուցմամբ և ընդհանրապես ռազմաբժշկական ծառայության բարելավման շնորհիվ զինծառայողների շրջանում կրճատվեց ընդհանուր հիվանդացությունը կանխարգելվեց վարակիչ հիվանդությունների տարածումը

Մեծ ուշադրություն էր դարձվում նաև թիկունքային ծառայության հատկապես սպայական ու ենթասպայական կազմի պարենային ու դրամական բավարարումների շարունակական բարելավմանը, զինծառայողների, զոհված ազատամարտիկների ընտանիքների և վիրավոր ազատամարտիկների սոցիալական (ներառյալ բնակարանային) կարիքների գոհացմանը Այս կապակցությամբ 1999 թվականի հունվարի 22 ին կառավարության ներկայացմամբ ընդունվեց «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ԼՂՀ օրենքը

Ամրապնդվեց ռազմական արդարադատության ենթահամակարգը Ու ժեղացվեց ԼՂՀ զինվորական դատախազության աշխատանքը Մարտունու Ասկերանի Մարտակերտի կայազորային զինդատախազությունների գործառմամբ Մինչև 2000 թվականը ի տարբերություն ՀՀ ի ԼՂՀ-ում գործում էր մասնագիտացված զինվորական դատարան (տրիբունալ)՝ իր հատիքային դատավորական կազմով որն անհրաժեշտության դեպքում արտագնա բաց դատական նիստեր էր անցկացնում համապատասխան զորամասերում. Այս ամենի շնորհիվ ամրապնդվեց զինվորական կարգապահությունը, ինչն էլ նպաստեց արտակարգ պատահարների աստիճանական նվազեցմանը

1995 թվականի սեպտեմբերին ԼՂՀ հյուսիսում տեղաբաշխված որոշ զորամասերի հենքի վրա կազմավորվեց Մարտակերտի լեռնահրաձգային դիվիզիան (հիմնադիր հրամանատար գեներալ-լեյտենանտ Քրիստափոր Իվանյան) Դա մեծ դեր ունեցավ և ունի ԼՂՀ հյուսիսային սահմանների արդյունավետ պաշտպանությունն ու անառիկությունն ապահովելու գործում

Նման բարեփոխումների հետ մեկտեղ հանրապետության առջև ծառացած հիմնահարցերի շարքում կարևորվել էր ներքին քաղաքական իրավիճակի կայունացման խնդիրը

Թե՛ պատերազմի տարիներին, թե հրադադարի հաստատումից հետո Բաբայանն իրավասու կառույցների միջոցով վճռական քայլեր ձեռնարկեց ապօրինի և անկանոն զինյալ խմբերը կազմացրելու ուղղությամբ որոնք

www.a-pdf.com


ստեղծել էին լարված իրավիճակ նպաստել քրեական տարրերի աշխու ժացմանը Հարդյունս, կարճ ժամկետներում հաջողվեց հասնել դրանց հիմնարմատների վերացմանը և քաղաքացիական կյանքի վերահաստատ ման գործընթացների արագացմանը

Թե որքան մեծ ու վճռորոշ նշանակություն էր տալիս Բաբայանը բանակաշինության և ընդհանուր պետականաշինության գործում բացա ռապես պետական մոտեցումների գերիշխմանը ամեն տեսակի «ֆիդայա կան ինքնագործունեության վտանգավոր երևույթների արմատահան ման անհրաժեշտությանը և ինչպես էին ավելի ու ավելի կարծր դառնում Արցախի անվտանգության ապահովման ներքին նախադրյալների ամրապնդման գերխնդրում նրա հայացքներն ու գործելակերպը լավա գույնս կարող է վկայել Շուշիի զորամասի կարճատև ողիսականը

Այսպես. Ազատագրված Շուշի քաղաքում էր տեղակայված տվյալ Պաշտպանական շրջանի շտաբը ՊՇ ի հրամանատար Վաչագան Իշխա նյանը գերազանցելով իր լիազորությունները հանդես էր բերում առանց այն էլ բազում բարդություններով կայացող ու պակավին չճանաչված «պե տության մեջ պետություն» ստեղծելու անթաքույց հավակնություններ

Կենսականորեն անհրաժեշտ էր ապահովել հասարակական կարգն ու օրինականությունը և վտանգավոր իրավիճակը կանխելու նպատակով Սամվել Բաբայանը 1996 թվականի ապրիլի 1 ին Շուշիի պաշտպանական շրջանը լուծարելու հրաման արձակեց. Սպաներն ու ենթասպաները ՁՈՒ գործող կարգապահական կանոնագրքին համապատասխան ենթարկվե ցին հորինակ այլոց խիստ կարգապահական տույժերի (ընդհուպ լրիվ աս տիճանազրկում) Նրանց մի զգալի մասը պաշտոնի և զինվորական կոչ ման իջեցմամբ ծառայության տեղափոխվեց այլ զորամասեր

Մյուս կողմից անհրաժեշտության դեպքում Բաբայանը միշտ էլ ռազ սական վերադասի առաջ, անհրաժեշտ և սփույգ հիմքերի վկայակոչմամբ պաշտպանում էր արցախյան ազատամարտում թրծված և կադրային հրամանատարների վերաճած ազատամարտիկներին

Ամենախիստ պահանջները բավարարող որակական բնութագրերի քեխնիկամարտավարական պատրաստության բարձր մակարդակի և դրանց մշտական կատարելագործման շնորհիվ բանակը սեղմ ժամանակա հատվածում իրավամբ նվաճեց հարավկովկասյան տարածաշրջանում առավել մարտունակի համբավ Հատկանշական է որ բանակաշինությանն առնչվող ամենատարբեր խնդիրների վերաբերյալ ԼՂՀ Պաշտպանության բանակի և նախարարության գերատեսչական ակտերի ընտիր տրցակը հրամաններ ուսումնական ծրագրեր ժամկետային զինծառայողների կայական ու ենթասպայական կազմի հասարակական պետական պատ րաստության գծով ձեռնարկ օպերատիվ ռազմատեղագրական քարտեզ ներ և այլն) որպես օրինակելի փաստաթղթերի փաթեթ հաջողությամբ օգ սգործվել է ՀՀ ռազմական գերատեսչության կողմից

www.a-pdf.com



Ռազմագործողություններին անմիջապես հաջորդող շրջանից ի վեր արդեն, Պաշտպանության բանակի ստորաբաժանումներում ժամկետա յին զինծառայության պայմանները իրավասու փորձագետների ժամկե տային զինծառայողների ծնողների միահամուռ խոստովանությամբ հա մարվում էին լավագույնը նույնիսկ ՀՀ ում տեղակայված զորամիավո րումների համեմատ

Այս առումով բնավ պատահական չէին ոչ միայն ՀՀ և ԼՂՀ զինվորա կան գործիչների այլև արտասահմանյան մասնագետների բարձր դրվա տական կարծիքները Պաշտպանության բանակի և նրա հրամանատարի վերաբերյալ: Զորօրինակ՝ 1997 թվականի ապրիլին Արցախի որոշ զորա մասեր այցելած ռուս հայտնի ռազմաքաղաքական գործիչ գեներալ լեյ տենանտ Ալեքսանդր Լեբեդը հայտարարեց «Ես առաջին անգամ շատ տարիներ ի վեր տեսա մարտունակ զունդ որին հաճելի է նայել»

Այսպիսի գնահատականների ծանրակշիռ առհավատչյաներն էին 1995 թվականի մայիսի 9 ին և 1997 թվականի մայիսի 9 ին արցախյան պետա կան եռատոնի Հաղթանակի օրվա ԼՂՀ Պաշտպանության բանակի ստեղծման և Շուշիի ազատագրման համապատասխանաբար 3 րդ և 5 րդ տարեդարձերի առթիվ Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղի ունեցած Պաշտպանության բանակի զորահանդեսները Փաստո րեն հայ իրականության մեջ առաջին անգամ հայոց ազատագրված երկ րամասի մայրաքաղաք Ստեփանակերտում կայացան համահավաք զորահանդեսներ որոնց մասնակցում էին նաև զինծառայողներ Հայաս տանի բոլոր շրջաններից (1997 թվականին արդեն բոլոր մարզերից)

Զորահանդեսների ուղիղ և ամբողջական հեռարձակումն իրականաց վեց Արցախի պետական, ինչպես նաև Հայաստանի ազգային հեռուստա տեսությամբ հարյուր հազարավոր մարդկանց սիրտը լցնելով հպարտու թյամբ և արցախյան շարժման ընդհանուր հաղթանակի անշրջելիության գիտակցությամբ Վերածննդի հրապարակում ներկա էին բազմահազար արցախցիներ ժամանել էին նաև բազմաթիվ հյուրեր ովքեր անմիջական վկաներն ու յուրօրինակ վավերացնողները եղան այդ խորհրդանշական ռազմաշքերթերի

1995 թվականի զորահանդեսի հատկանշական կողմն այն էր, որ դրա տեսագրության մի հատված ներկայացվեց Ռուսաստանի Դաշնության առաջին հեռուստաալիքի բազմամիլիոնանոց լսարանին ռուս հայտնի հեռուստալրագրող Ալեքսանդր Լյուբիմովի ուշագրավ լուսաբանմամբ

Զույգ զորահանդեսների հրամանատարը Պաշտպանության բանակի հրամանատարի առաջին տեղակալ Սեյրան Օհանյանն էր (այժմ գեներալ գնդապետ ՀՀ պաշտպանության նախարար). Զորահանդեսներն ընդունեց պաշտպանության նախարար Պաշտպանության բանակի հրամանատար Սամվել Բաբայանը

www.a-pdf.com



Կասկած չէր մնում այլևս, որ արցախյան զորահանդեսներին մեր ընդհանուր հայրենիքի և զուգապետության անխտիր բոլոր փարածաշրջանների զինվորականների մասնակցության իրողությունը հավաստեց հայ ժողովրդի միասնությունն ու ներքին ամբողջականությունը: Զորահանդեսների ամրագրած հաղթանակները Հայաստան Արցախ Սփյուռքի անափելի նվաճումներն են որոնք պարտավոր ենք փոխանցել սերունդներին

Նաև զորահանդեսների շնորհիվ մենք ըմբռնեցինք որ մեր ազգային անվտանգության գլխավոր երաշխիքը մարտունակ ու հայրենանվեր զինված ուժերն են

Ավելի քան բնորոշ էր զորահանդեսին ներկա Վազգեն Սարգսյանի խոսքը *«Դժվար է արտահայտվել՝ Երևի թե իմ կյանքի ամենահուզումնալից օրերից մեկն է եթե ոչ ամենա, ամենա. Այս ամենը շոշափելի է հատկապես առաջին օրերն ապրած մարդկանց համար: Ինչի՞ց մենք սկսեցինք Երեք ծակած ավտոմատ Ղարաբաղ հասցնելու համար մեզ ձերբակալում էին. Եթե ճարեինք էլ ավտոմատները. Ու հանկարծ այսօր Ղարաբաղի հզոր բանակը՝ ինչպես տարածաշրջանի ամենահզորը, հրաշալի շքերթ ունեցավ. Ղարաբաղցիք ցույց տվեցին, որ ինչպես կռվում են, այնպես էլ տոնում են իրենց հաղթանակները, և ցույց տվեցին, որ Ղարաբաղն ինչպես անառիկ ամրոց է և Ղարաբաղի դեմ ոչ ոք չի կարող պատերազմի գալ ով պատերազմով գա, գլուխը կջարդի այդ ամրոցի պատերին. Եվ վերջում ավելացնեմ. աջակից լինել չգիտեմ ինչ, դրանք սուտ բաներ են, դրսի համար ենք, ներսի համար ենք բոլորս միասին ենք*

*Այն ե՞րբ էր ձեռքներս մեկնած գութ էինք աղերսում աշխարհի ուժեղներից և աշխարհն անտարբեր էր մեր խնդրանքին Այն ե՞րբ էր ազգովին սարսափի եկած կռվում էինք և հավատում, որ հաղթանակը մերն է լինելու Ահա այն հաղթանակը. հրապարակով անցնում է ԼՂՀ Պաշտպանության բանակի ստորաբաժանումների մի մասը զրահատեխնիկա, հրետանի*



Ալեքսանդր
Լեբեդը և Սամվել
Բաբայանը

*ականանետներ, ռեակտիվ հրետանու կայանքներ, ՀՕՊ-ի մարտական մեքենաներ. Այն ամենը ինչ բանակը և պետությունը պետություն են դարձնում: Եվ որքան խորհուրդ է հնչում ԼՂՀ պաշտպանության նախարար, գեներալ-մայոր Սամվել Բաբայանի ձայնը այս հրապարակում. Եվ որքան շեշտ են քայլում զինվորները»՝*

1997 թվականի մայիսի 9 ի առավոտյան Ստեփանակերտի պոնազարդ Վերածննդի հրապարակի տրիբունայում էին ԼՂՀ նախագահին առընթեր անվտանգության խորհրդի անդամները ՀՀ կառավարության պատվիրակությունը

Ժամը 10-ին ԼՂՀ ՊԲ հրամանատարի առաջին տեղակալ, գեներալ մայոր Սեյրան Օհանյանը զորահանդեսին ՊԲ զորամասերը ներկայացնող ստորաբաժանումների պատրաստության մասին զեկուցեց ԼՂՀ պաշտպանության նախարար գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանին ընդունելով զեկույցը նախարարն անցավ ստորաբաժանումների շարքերի առջևով և ողջունելով զինծառայողներին, նրանց շնորհավորեց Հաղթանակի, ՊԲ ստեղծման օրվա, Շուշիի ազատագրման 5 րդ տարեդարձի առթիվ՝ Ի պատասխան հնչեցին զինվորների խրոխտ ուռաները Ավարտելով շրջայցը Սամվել Բաբայանն զբաղեցրեց իր տեղը տրիբունայում և հետևյալ շնորհավորական ճառով ողջունեց վետերաններին ՊԲ զինծառայողներին և ողջ ժողովրդին

*«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի զինվորներ, Հայրենական մեծ պատերազմի թանկագին վետերաններ, հարգելի հյուրեր. հայրենակիցներ*



Զորահանդեսներ] հրամանատար Սեյրան Օհանյանը զեկուցում է ԼՂՀ պաշտպանության նախարար Սամվել Բաբայանին

www.a-pdf.com

www.a-pdf.com





Սամվել Բաբայանը ողջու նու մ է զինծառայողներին և շնորհավորում եռատոնի առթիվ



Տրիբունայում են Սամվել Բաբայանը, ԼՂՀ քաղաքական ու հոգևոր ղեկավարները և ՀՀ պատվիրակությունը

www.a-pdf.com





Տողանցո մ են Հայրենական Մէծ պապ երազմի վեպերանները



Տող սնց մ են ՊԲ կ որ սքաժանո մնէրը

www.a-pdf.com





Անցնու մ է զրահատեխնիկան



Անցնու մ է ՀՕՊ ի մարտական մեքենան

www.a-pdf.com





Անցնու մ են ՀՕՊ ի կայանքները



Երկնքու մ են մարտական ու ղղաթիռները

www.a-pdf.com



*Շնորհավորում եմ ձեզ Հաղթանակի օրվա, Շուշի քաղաքի ազատագրման 5-րդ տարեդարձի և ԼՂՀ Պաշտպանության բանակի օրվա առթիվ*

*Հայրենական մեծ պատերազմի տարիներին ղարաբաղցիների արիության մասին մինչև օրս էլ առասպելներ են հյուսվում. Թանկագին վետերաններ, մենք երախտապարտ ենք ձեզ արիության և հայրենասիրության դասերի համար.*

*Հայրերի մարտական փառագործության էստաֆետն այսօր պատվով շարունակում են նրանց որդիները. Հինգ տարի առաջ մայիսի 9 ին, մենք ազատագրեցինք Արցախի հնամյա մայրաքաղաք Շուշին Այդ օրը մեր պատմության մեջ մտավ որպես Արցախի բարձր ոգու և արիության խորհրդանիշ ԼՂՀ Պաշտպանության բանակի հիմնադրման օր. Ինքնապաշտպանության ջոկատներից չդադարող մարտերում ծնվեց առնականացավ և ամրապնդվեց մեր բանակը. Մենք խոնարհվում ենք նրանց հիշատակի առաջ ովքեր իրենց կյանքը տվեցին հանուն մեր հայրենիքի ազատության և անկախության*

*Չնայած հսկայական դժվարություններին մենք դիմակայեցինք և հաղթեցինք թշնամուն՝ հարկադրելով նրան զինադադար կնքել, հարկադրելով նրան հրաժարվել ղարաբաղյան հիմնահարցի ուժային լուծման փորձերից*

*Այսօր Պաշտպանության բանակը հուսալիորեն կանգնած է մեր սահմանների պաշտպանության դիրքերում, կատարելագործում է մարտական պատրաստականությունը և վարպետությունը հանդիսանալով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի անկախության երաշխիքը.*

*Շնորհավոր Հաղթանակի տոնը.*

*Շնորհավոր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի օրը.*

*Կեցցե Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և իր զինված ուժերը.*

*Ուռա՜ .»:*

Այնուհետև հրապարակով առաջինն անցան Հայրենական մեծ ու արցախյան պատերազմների վետերանները նրանց հետևեցին Պաշտպանության բանակի զորամասերի ստորաբաժանումները փողանցեցին զրահատեխնիկան հրթիռահրետանային ու հակաօդային պաշտպանության կայանքները իսկ փոնական երկինքն ակոսեցին ԼՂՀ պետական դրոշներով զարդարված ռազմաօդային ուժերի ուղղաթիռներն ու ինքնաթիռները

1996 թվականի մարտի 5 ին ՀՀ պաշտպանության նախարարությունը նորհավորեց ԼՂՀ պաշտպանության նախարարի ծննդյան հոբելյանը

www.a-pdf.com

*«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն շնորհավորում է ԼՂՀ պաշտպանության նախարար գեներալ մայոր Սամվել Բաբայանին ծննդյան 31 րդ տարեդարձի առթիվ*

*Վճռորոշ է Ձեր ներդրումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արեղծման, զինված ուժերի կայացման և սահմանների պաշտպանության ամրացման գործում*

*Ցանկանում ենք Ձեզ անսկուն կամք և արիություն հանուն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ապագայի կերտման, ի փառս նրա հզորացման և անպարտելիության*

*Ձեր հերոսական սխրանքները հավերժ կապրեն երախտապարտ սերունդների հիշողության մեջ*

*ՀՀ պաշտպանության նախարարություն»* ( Հայ զինվոր պաշտոնաթերթ հ 9 9 16 մարտի 1996 թվական)

Սամվել Բաբայանի ռազմաքաղաքական բացառիկ վաստակի համար 1996 թվականի սեպտեմբերի 20 ին նրան շնորհվեց գեներալ-լեյտենանտի զինվորական կոչում, իսկ 1997 թվականի մայիսի 8 ին Սամվել Բաբայանը առաջինն արժանացավ ԼՂՀ բարձրագույն Արցախի հերոսի կոչմանը պարգևատրվելով «Ոսկե արծիվ» շքանշանով

Երիտասարդ գեներալը, սակայն, չէր պատրաստվում բավարարվելու արդեն ձեռք բերածով և ուշադիր հետևում էր կառավարության գործունեությանը Այն իր հերթին 1995 թվականին ձևավորվելուց անմիջապես հետո սկսեց ձեռնարկել մարտական գործողությունների հետևանքով ավերված բնակավայրերի վերականգնման ու վերաբնակեցման համակողմանի աշխատանքներ

Իրականացվեցին բանակի ժողովրդի սոցիալական կարիքների բավարարմանը նպատակամիտված օրենսդրական բարեփոխումներ· Ծավալվեցին լայն աշխատանքներ տնտեսական ենթակառույցների վերականգնման կամ վերակառուցման նպատակով Վերականգնվեց շուրջօրյա էլեկտրամատակարարումը Մշակվեցին սոցիալ տնտեսական զարգացման տարեկան և մարդասիրական օգնության բազմաթիվ նպատակային ծրագրեր Կառավարությունը բարձր որակավորում ունեցող կադրային մասնագիտական ներուժի ներգրավմանը զուգընթաց (առաջին հերթին ՀՀ ից)

---

1 Մի փաստ միայն. ՀՀ ՊՆ իրավական ակտի հիման վրա, հատուկ զորակոչով ՀՀ ից ԼՂՀ մեկնեցին երիտասարդ զինապարտ մասնագետների (ուսուցիչներ, իրավաբաններ և այլք) խմբեր: Այդ մասնագետները, իրենց ժամկետային պարտադիր զինծառայությանը հավասարեցված կարգի աշխատանքային շրջանակներում (3-ական տարով), որոշակի ներդրում ունեցան Արցախի վարչատարածքային շրջանների համապատասխան բնագավառներում, իսկ ոմանք, ծառայությունից հետո տեղում հիմնավորվելով և ընտանիք կազմելով յուրովի նպաստեցին նաև ԼՂՀ ժողովրդագրական վիճակի բարելավմանը

www.a-pdf.com



սկսեց կատարելագործել քաղաքացիական ծառայողների աշխատանքի վարձատրության համակարգը:

Բաբայանն ի սկզբանե մեծ նշանակություն է տվել պետության ֆինանսաբյուջետային քաղաքականության հիմնավոր լավարկմանը (օպտիմալացում) ընդհանրապես և պետական ապարատի պահպանման ծախսերի կրճատման նպատակով ուռճացված չափորոշիչների արմատական վերանայմանը մասնավորապես Ուշագրավ է թեկուզ այն փաստը որ 1996 թվականին Բաբայանի փաստարկված պնդման հիման վրա կրճատվեց սրհեստականորեն բարձրացված ԼՂՀ ԱԺ պատգամավորների աշխատավարձի ֆոնդը բացառություն անելով միայն օրենսդրական գործունեությամբ անմիջականորեն զբաղվող խորհրդարանական ընդհանուր ղեկավարության և մշտական հանձնաժողովների ղեկավար կազմի համար

Արցախը կարող էր շարունակել զարգանալ միայն ներպետական բարեփոխումների հետագա խորացման և ժողովրդավարական գործընթացների անշրջելիացման ուղիով Հենց այդ նպատակով Բաբայանը ԼՂՀ նախագահին առընթեր անվտանգության խորհրդի նիստում առաջարկեց հրաժարվել ԼՂՀ նախագահի ընտրությունն անուղղակի համակարգով (խորհրդարանի միջոցով) անցկացնելուց ինչին թեև դեմ հանդես եկան անվտանգության խորհրդի նիստի այլ մասնակիցներ այնուամենայնիվ Բաբայանի հիմնավոր փաստարկմամբ 1996 թվականի նոյեմբերի 24 ին առաջին անգամ տեղի ունեցավ նախագահի ուղղակի համաժողովրդական ընտրություն ժողովրդավարական չափանիշերի ապահովմամբ

Գաղտնիք չէ որ նախ և առաջ Սամվել Բաբայանի քաղաքական ու կազմակերպչական աջակցության շնորհիվ ժողովրդի քվեների



Տեր և տիկին Բաբայանները ընտրատեղամասում

www.a-pdf.com



բացարձակ մեծամասնությամբ, ԼՂՀ նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը, ում մրցակիցներն էին ԼՂՀ ԱԺ պատգամավոր ԼՂՀ նախկին Պաշտպանության պետական կոմիտեի անդամ Բորիս Առուշանյանը և ԼՂՀ կոմկուսի կազմկոմիտեի ղեկավար Հրանտ Մելքումյանը

Սակայն, ընտրություններից մի քանի ամիս անց (1997 թվականի մարտին) Ռոբերտ Քոչարյանը նշանակվեց ՀՀ վարչապետ ԼՂՀ նոր նախագահի հավակնորդների շարքում իր Բաբայանի ընտրությունն այս անգամ կանգ առավ ԼՂՀ արտաքին գործերի նախարար ԼՂՀ նախագահին առընթեր անվտանգության խորհրդի անդամ Արկադի Ղուկասյանի թեկնածության վրա ԼՂՀ պաշտպանության նախարարը կարևորում էր արցախյան հակամարտության միջազգային կարգավորման գործում արցախյան կողմի դերի ու գործառույթների զորացման անհրաժեշտությունը Հիշենք որ այն ժամանակ (1997 թվականին) ԼՂՀ ն դեռևս անմիջական մասնակցություն էր ունենում իր իսկ գերխնդրին առնչվող միջազգային բանակցություններին որոնց գործընթացում Ղուկասյանը ձեռք էր բերել բանակցողի փորձ



Լևոն
Տեր Պետրոսյան

Այդ նույն ժամանակ ՀՀ առաջին նախագահ և զինված ուժերի գլխավոր հրամանատար Լևոն Տեր Պետրոսյանն իր հրապարակային ելույթներում (մամուլի ասուլիս հարցազրույցներ և այլն) հատկապես «Պատերա՞զմ թե խաղաղություն լրջանալու պահը» հոդվածում (01 11 1997թ.) ներկայացրել է արցախյան հակամարտության կարգավորման փուլային տարբերակը (միջազգային երաշխիքների և Հայաստանի կարևոր դերակատարության ապահովմամբ պահպանել ԼՂ ի փաստական անկախությունը Հայաստանի հետ ցամաքային կապը վերացնել տնտեսական շրջափակումը իսկ ԼՂ ի կարգավիճակի հարցը թողնել ապագային) Այս ամենի մեջ ծագած հակասությունն ամենևին չէր վերաբերում հակամարտության լուծման փաթեթային կամ փուլային տարբերակներին Բաբայանին մտահոգում էին ռազմավարական նշանակություն ունեցող այնպիսի տարածքների հետագա ճակատագիրը ինչպիսիք են Քարվաճառի (Քելբաջար) և Քաշաթաղի (ներառյալ Լաչին) շրջանները որոնց մասին էլ ՀՀ նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի հայտնի նիստից առաջ (1997 թվական) Բաբայանն առանձնազրույց ունեցավ ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ ով պահանջեց ներկայացնել արցախյան կողմի հիմնավորումները և համապատասխան քարտեզը Բաբայանը հույս ուներ դրանով մոտեցնելու դիրքորոշումները Սակայն ապարդյուն Ուստի Սամվել Բաբայանին այլ ելք չէր մնում քան փորձել հրաժարվել վնասաբեր այդ միտումներից 1998 թվականի հունվարի 8 ին կայացած Ազգային անվտանգության խորհրդի նիստում

www.a-pdf.com



Արցախի զերխնդրի լուծման փաթեթային տարբերակի պաշտպանու թյամբ հանդես եկավ նիստի մասնակիցների մեծամասնությունը Նիստին հաջորդեց ԼՂՀ կառավարության հայտարարությունը (1998 թվականի հունվարի 24) Ճգնաժամը ի վերջո հանգուցալուծվեց 1998 թվականի փետրվարի սկզբին ՀՀ նախագահի պաշտոնաթողությամբ

Ինչ մնում էր ԼՂՀ ներքին հասարակական-քաղաքական հրամայա կաններին արձագանքելու պատրաստակամությանը ապա Բաբայանի և Ղուկասյանի միջև նախնական պայմանավորվածություն ձեռք բերվեց ԼՂՀ պետաիրավական ու սոցիալ տնտեսական բարեփոխումների կտրուկ արագացման և հետագա խորացման վերաբերյալ

1997 թվականի սեպտեմբերի 1-ին կայացած նոր արտահերթ համաժո ղովրդական քվեարկության արդյունքում ԼՂՀ նախագահ ընտրվեց Արկա դի Ղուկասյանը այս անգամ մյուս այլընտրանքային թեկնածուներն էին նույն Բորիս Առուշանյանը և ԼՂՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը

Ցավոք հետընտրական ամիսների ընթացքում ոչ միայն առաջընթաց չնկատվեց պայմանավորվածությունների կատարման ցանկալի ճանա պարհին այլև օրըստօրե սրվող արմատական հակասությունները հան գեցրին ներքաղաքական կոլիզիայի Արցախյան պետականության ամ րապնդման համար բախտորոշ նշանակություն ունեցող մի ամբողջ շարք ուղղություններում (իշխանության ապակենտրոնացում և տեղական ինք նակառավարման մարմինների ձևավորում գյուղատնտեսական և հար կաբյուջետային դատաիրավական բարեփոխումներ հողի սեփականա շնորհում ու պետական գույքի մասնավորեցում ջրամատակարարման և կոմունալ կենցաղային ծառայությունների մատուցման բարելավում տնտեսության մեջ ներքին և օտարերկրյա անհրաժեշտ ներդրումների ապահովում միջին խավի ձևավորման նպատակով փոքր ու միջին գոր ծարարության խթանում պետական մարմինների աշխատակազմերի պահպանման ծախսերի նորմատիվ հենքի օպտիմալացում և այլն) ԼՂՀ գործադիր իշխանությունը իրական և արդյունավետ քայլեր չէր կատա րում Կառավարությունը բավարարվում էր ընդամենը հիշյալ ուղղու թյուններով բարեփոխումների համար օրենսդրական հիմքերի (օրենս գրքեր օրենքներ ԼՂՀ նախագահի հրամանագրեր ԼՂՀ կառավարու թյան և վարչապետի որոշումներ այն էլ առավելապես պատճենված ՀՀ համապատասխան օրենսդրական ակտերից) պատրաստմամբ որոնց զգալի մասն այդպես էլ կյանքի ուղեգիր չէր ստանում մնալով թղթի վրա Այդ ամենն էլ 1997 1998 թվականների կառավարական ու ներիշխանական ճգնաժամերի պատճառ դարձավ

Սամվել Բաբայանը որպես ԼՂՀ կառավարության անդամ հանրապե տության նախագահի վարչապետի հետ աշխատանքային հանդիպումնե րում նախագահին առընթեր անվտանգության խորհրդում որի անդամն էր ի պաշտոնե պարբերաբար պահանջել է իրական բարեփոխումներ

www.a-pdf.com



տնտեսության ազատականացման և պետական կառավարման համակարգի կատարելագործման ոլորտներում Բաբայանը հաճախ չէր ստորագրում գործադիրի որոշման նախագծերը նկատի ունենալով որ կառավարությունը հավաքական մարմին է և նրա բոլոր անդամներն իբրև պետական քաղաքական գործիչներ առանց բացառության պատասխանատու են յուրաքանչյուր որոշման համար Դրանով նա յուրովի ձեռնպահ էր մնում կառավարության հիշյալ իմաստներով անգործությունից Բաբայանը միաժամանակ Արցախի առջև ծառացած հիմնախնդիրների լուծման իրատեսական մեխանիզմներ էր առաջարկում Տարիներ անց լրատվամիջոցներից մեկին տված իր մի հարցազրույցում անդրադառնալով այդ դեպքերին Բաբայանը շեշտել է որ մեր բոլոր ձեռքբերումները տանուլ կտանք եթե արմատական բարեփոխումներ չկատարենք սոցիալ-տնտեսական զարգացման ասպարեզում «Սակայն իմ այդ մտահղացումները ավիններով ընդունվեցին» Հենց այդ պատճառով էլ սկսվեց սև քարոզչություն որի նպատակն էր Բաբայանին ներկայացնել իբրև բռնապետի՝ Գլխավոր մեղադրանքներից մեկը որ ամբողջ սրությամբ ուղղվում էր պաշտպանության նախարարի դեմ, կառավարության գործունեությանը խառնամուխ լինելն էր Չհասկանալով տվյալ ժամանակաշրջանում առկա «ոչ պատերազմ ոչ խաղաղություն» իրավիճակից բխող մարտահրավերների վտանգավորության աստիճանը անիմաստ ու աննպաստ հարցադրումներ էին առաջ քաշում. «Ի՞նչ գործ ունի պաշտպանության նախարարը կառավարության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության հետ, ի՞նչ իրավունք ունի միջամտելու օրինակ կրթական կամ արդարադատության համակարգերում իրականացվող բարեփոխումներին», – անվերջ շահարկում էին լրատվամիջոցները Սամվել Բաբայանի քաղաքական հակառակորդները Եվ իրենք իրենց էլ ձեռաց եզրակացնում էին, որ Բաբայանն այդպիսով փորձում է իբր թե իր վերահսկողության տակ պահել բոլոր գործընթացները

Այս իրավիճակում Բաբայանը քաղաքական հայտ ներկայացրեց ստանձնելու գերհասունացած համալիր բարեփոխումների կազմակերպման ծանր պատասխանատվությունը՝ նժդեհյան Լեռնահայաստանի Իսրայելի այլոց օրինակով վարչապետի և պաշտպանության նախարարի լծակների անհրաժեշտ համատեղմամբ Վարչապետի և պաշտպանության նախարարի պաշտոնների զուգակցումը նա նպատակահարմար էր գտնում միմիայն ազգային շահերի թելադրանքով Բաբայանը կարող անհատ էր և երկրի քաղաքական կյանքում իր մասնակցությունը դիտարկում էր հենց այսպիսի մոտեցմամբ Նա հստակ պատկերացնում և գնահատում էր իր տեղն ու դերը իշխանության մեջ Դրանով փորձ էր անում որոշ իմաստով վերացական նկատառումները վերջապես փոխարինելու իրատեսական և իրական գործողություններով Ներարցախյան հասարակական աջակցությունն էլ թվում էր՝ ապահովված է 1998 թվականի

www.a-pdf.com



այդ ուղենշիչ օրերին Ստեփանակերտում զանգվածային հանրահավաք փեղի ունեցավ ի պաշտպանություն Սամվել Բաբայանի դիրքորոշման Ավաղ այդպես էլ Բաբայանին հնարավորություն չտվեցին ոչ լիիրավ սկսելու ո՛չ էլ առավել ևս տրամաբանական ավարտին հասցնելու բարե նորոգչական շարժումը ԼՂՀ պաշտպանության նախարարը հարկադրր ված եղավ հրաժարականի դիմումներ (ըստ էության բազմակողմանիո րեն հիմնավորված ծրագրային նամակներ) ներկայացնելու գործող քա ղաքական դաշտի գլխավոր դեմքերին ՀՀ նորընտիր նախագահ, զինված ուժերի գլխավոր հրամանատար Ռոբերտ Քոչարյանին ՀՀ պաշտպանու թյան նախարար Վազգեն Սարգսյանին և ԼՂՀ նախագահ Արկադի Ղու կասյանին. Ստորև ամբողջությամբ բերում ենք Վազգեն Սարգսյանին հղված բոլոր հիմնական հարցադրումներն ու նկատառումներն ամփո փող նամակը («Հույժ գաղտնի» մակագրով)



Հանրահավաքը Ստեփանակերտո մ 1998թ

*Հայաստանի Հանրապետության*
*պաշտպանության նախարար*
*պարոն Վազգեն Սարգսյանին*

## ԴԻՄՈՒՄ

*Հարգելի պարոն նախարար*

Մեր զրույցը երես առ երես այդպես էլ չկայացավ (թեև դա գուցե ար ժեն նշանակություն էլ չունի): Չկայացավ ըստ իս, նախ երևի հենց այն պատճառով որ «ասում եք մի բան մտածում ուրիշը»:

Ես դրանում ավելորդ անգամ համոզվեցի: Երբեք ինքս չեմ սիրել ու չեմ սիրում կեղծելն ու խաղալը «թիմի մեջ», թե անհատապես Գերադասել եմ միշտ պարզ ու անմիջական վերաբերմունքը և նույնն էլ իրավունք եմ ունեցել ակնկալելու

www.a-pdf.com



Միշտ անձամբ Ձեր կողքին եմ եղել Ինձ համար խոշոր հաշվով ու վերջին հաշվով չի եղել ոչ ԼՂՀ ոչ ՀՀ նախագահին ենթարկվել չեն թարկվելու խնդիր ազգային գերխնդիրն է եղել իմ առաջ Դուք էլ ընդա մենը ՀՀ պաշտպանության նախարար իմ նախարարը չեք հանդիսացել Ձեր մեջ տեսել եմ նախ ամենալավ եղբոր ազգին բոլորանվեր հայի ազ գի հերոսի (համաձայնեք դա շատ ավելի վեհ ու բարձր բայցև պարտա վորեցնող է սովորական «նախարարի» պաշտոնից ու դերից) ինքս էլ ինձ այստեղ թե այլուր համարել եմ (և ուրիշներին էլ հորդորել եմ համարել) բացառապես Պաշտպանության բանակի հրամանատար

Ամեն դեպքում միշտ էլ հարգել ու հարգելու եմ Ձեզ Ով ինչ ասում բամ բասում է կամ խոսում բացատրում իր խնդիրն է ոչ իմ Հուսով եմ նաև ոչ Ձեր

Արդեն մի քանի անգամ մասնավորապես 1996թ ՀՀ նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի նիստում զգացել եմ որ Արցախին Հայաստանի իշխանությունները վերաբերվում են որպես «խորթ զավակի կամ ‹աղքատ ազգականի» Դուք էլ զգացիք դա բայց տոն չտվեցիք Ես էլ շարունակել եմ համբերել մտածել եմ հանուն ազ գային շահերի զսպել իմ թող որ արդարացի ընդվզումն ու ոչ պակաս ազգանպաստ պահանջատիրությունները

Վերջին ժամանակներս վերջնականապես համոզվեցի որ այդտեղ «Ձեզ մոտ», հատուկ քաղաքականություն է որդեգրվել անվստահություն «ցանել հնձելու» հողի վրա ես համենայն դեպս չեմ կարող ու չեմ էլ ուզում աշխատել այն մարդկանց հետ ովքեր ինձ խաբում են ու չեն վստահում

Ամեն ինչ արել եմ որ հատկապես մեր միջև և մեր ընդհանուր գերխնդրի հաջող լուծման համար որևէ լուրջ թյուրիմացություն կամ թեկուզ պարզունակ խարդավանքներ (ինտրիգ) չհարուց(վ)են շեշտո մ եմ որ ոչ մի պաշտոնական գերիշխանություն ու հեղինակություն չեն եղել ինձ համար բացի Ձեզնից

Բայց իմ նկատմամբ քանիցս զգացել ու զգում եմ ինչ որ անփոխադարձ խանդի զգացում կամ նման փարօրինակ բարդույթներ Ինչ ասեմ միգու ցե Ձեր շրջապատից է դա ճարակվում Բայց դա չէ կարևորը

Իմ գործունեության ընթացքում ցավոք միանգամից 4 հակառակորդ ների եմ դիմակայել

ա) թուրքը

բ) ԼՂՀ իշխանությունները

գ) ՀՀ իշխանությունները

դ) ՀՀ պաշտպանության նախարարությունը

Թեև սկզբունքորեն պիտի պայքարեի միայն մեկ թվում էր մնացյալ երեքի համար էլ ընդհանուր թշնամու դեմ

www.a-pdf.com



Այլևս ուժ չունեմ սակայն, և անհրաժեշտ էլ չեմ գտնում կռվել չորս ճա կատով Ու առավել ևս համոզված չեմ թե ես եմ միայն կոչված ազգի հիմ նահարցերը լուծելու

Հարկ եմ համարում հիշեցնել որ միշտ եղել եմ Ձեր անխարդախ են թական ու ձգտել եմ սրբությամբ կատարել Ձեր բոլոր հրամանները եթե անգամ ներքուստ ճիշտ չեմ գտել դրանք Չեմ փորձել բնավ քաղա քականացնել ծագող թյուրըմբռնումներն ու սխալները. Երբեք համե նայն դեպս ինձ թույլ չեմ տվել տեղակալներիս հավաքել ու բողոքել ՀՀ պաշտպանության նախարարությունից Ու չեմ էլ կարծում որ նման բան կարելի է անել իմ անձի և անմիջականորեն իմ կողմից ղեկավար վող կառույցի դեմ. այն մարդիկ ովքեր չգիտեն էլ թե ինչ է իրական կռիվը և ինչպես են ձեռք բերվել նրա այժմյան արդյունքները ընդհան րապես իրավունք չունեն որևէ «տանիքի տակ» ներքաշվելու ճղճիմ ու նչին խարդավանքների, հայոց սպայակազմին ծայրահեղ անվայել որոգայթների կամ «թիմախաղերի» մեջ

Ձեզ քաջ հայտնի է որ երբեք իմ անձը չեմ ցուցադրել, եղել եմ առավե լաչափ զուսպ նաև այլ բազում առումներով երբեք ինքնագովազդային տեսահոլովակներ չեմ պատվիրել ու չեմ պտտեցրել

Ինչ մնում է առանձին ելույթներիս ու տվածս հարցազրույցներին ապա եղել են ազգային բախտորոշ պահեր ու հարցեր երբ չեմ կարծել թե պարտավորված պիտի զգայի որևէ մեկից թույլտվություն հայցելու դրանց շուրջ իմ կարծիքն ու մոտեցումները (այն էլ իմ անփոփոխ համոզ մամբ իրավացի ու օգտակար) հայտնելու համար

Ի՞նչն է սակայն ամենացավալին Սպառնալիքը Վստահ եմ որ այսպի ,ի ուղղություններով վարվող ներքին քաղաքականությամբ սոցիալ ,նտեսական ռազմավարությամբ ‹զարգացում» ապահովելով իրակա նում հետընթացի և կործանման ենք ազգը դատապարտում Այս առնչու- թյամբ ևս պիտի շեշտեմ որ չեմ ուզում ինչ որ աթոռներ պահել «հանուն թիմային» ինչ ինչ կասկածելի շահերի Ես իմ տղամարդկային վճիռն ըն ունել եմ և անում եմ ինձնից ուղղակիորեն թե անուղղակիորեն պահանջ ող քայլը Ներողամիտ եղեք միայն որ ՀՀ նախագահին եմ պաշտոնա ,ես ներկայացրել հրաժարականիս դիմումը (հիշու՞մ եք 1996թ ևս երբ Ձեզ ուղղեցի համանման խնդրանք Դուք պատասխանեցիք որ ինձ ՀՀ ախագահն է նշանակել, նրան էլ պետք է դիմել). Ի դեպ հանգիստ խղճով կարող եք ընթացավորել նաև համապատասխան զինվորական կոչումից ,զրկելու հարցը ես սա ասում եմ ինչպես միշտ սառնասիրտ ու անսեթևեթ

*Պարոն նախարար*

Արհասարակ այն համոզմանն եմ հանգել որ մեր միջև կայացած (բաց -. փակ) զրույցներն իրենք ոչ մի լավ արդյունքի չեն հանգեցրել Այնու ,նդերձ, էլի չեմ գտնում թե ես Ձեզ պիտի սովորեցնեմ կամ թե ինձ է ,տկանում վերին ատյանի ճշմարտություններ բարբառելու մենաշնոր

www.a-pdf.com



իր (ո վ գիտե կամ ո վ հետո իմանա գուցե ճիշտը Դուք եք) Բայց խնդի րը դա էլ չէ

Այս ժողովուրդն է մեղք Եվ ինչու միայն Արցախի Գտնում եմ որ Հա յաստանում խնդրո առարկա վիճակն անգամ ավելի վատթար է սակայն ինձ իրավունք ‹եմ վերապահում դատելու համայն հայության» մասին և նրա անունից

Իսկ ամենամեծ մտավախությունս իրոք այն է որ կարող ենք անշրջե լի կորուստներ տալ (եթե արդեն չենք տալիս) Արցախի զերխնդրում Հրա դադարից հետո անցած 4 տարում շուրջ 300 (երեք հարյուր) հաղթող տղերք են հեռացել այն հողի սահմաններից որ այնպես անձնուրաց պաշտպանել են Մի՞թե սա չէ տագնապի բարձրագույն ազդանշանը Չեն կարողանում ուրեմն ոչ միայն տնտեսապես գոնե յոլա գնալ, այլև չեն հա վատում իշխանությունների ուղեգծին Ոմանց թվում է թե իբր նկրտում եմ ավելի մեծ պաշտոնների հասնել թե իբր, ունեցածս իշխանությունն արդեն չի բավարարում. Բայց Դուք հո գերազանց կարող էիք ըմբռնել, որ Արցախում պարզ ասած փաստացի և նախագահ եմ եղել, և վարչապետ (իսկ փաստերն ավելի ‹համառ բաներ են› քան այդ մոլորությունը բազ մացնող բոլոր բանսարկուները միասին վերցված). Իսկ թե դեռ համոզ ված չէիք ապա այսուհետ կարճ ընթացքում առիթներ կունենայք համոզ վելու (ըստ որում ոչ կեղծ համեստության ո էլ անկեղծ հոխորտանքի նշույլներ մի փնտրեք այստեղ կամ ստորև)

Այսօր էլ համարձակվում եմ հավակնել վարչապետական պատասխա նատվության և պարտականությունների (բայց բնավ երբեք դափնիների կամ փառազորության) ոչ թե իշխանությունս «ամրապնդելու կամ ավե լացնելու› հետին նպատակով այլ որ տեսնում եմ Արցախի համակող մանի առաջընթացի տնտեսության հարաճուն զարգացման հստակ ճա նապարհ Եվ եթե իմ առաջ ասել է թե այդ ճանապարհի առաջ խոչըն դոտներ են դրվում մնում է ենթադրել ընդամենը 3 բան որ դուք («մնա ցած թիմով»)

կամ չեք տեսնում այդ առաջընթացի ուղին

կամ չեք ուզում Արցախի հզորացումը և տարածաշրջանում նրա որ պես ազդեցիկ գործոնի աճը

կամ էլ տեսնում եք դա բայց Արցախի հզորացումը ուղիղ համեմա տական կերպով կապելով իմ անձի «անթույլատրելի» «առաջանցիկ» «Ձեր իշխանությունը գերազանցելիք› հզորացման հետ Այսինքն առաջ նորդվում եք զուտ անձնական սկզբունքով (սխալ հասկացվող ինքնասի րության հիվանդագին խոցվածություն և այլն)

Ահա թե և ինչու ես, ելնելով համազգային շահերի գերակայությունից չեմ ուզում այդ սկզբունքին տուրք տալ ու պարզապես անաղմուկ հեռա նում եմ հրաժարվելով «թիմում մնալուց»

www.a-pdf.com



Իսկ այն մարդիկ կամ մարդուկները ավելի սպույգ որոնք հարյուրնե րով հերյուրում են ու ասեկոսում իմ թիկունքում, իրոք շատ են աննշան ու անտեսելի որպեսզի նրանց լրացուցիչ ուշադրության արժանացնեմ եթե չլինեիք ազգային գերխնդիրն ու Դուք, համարացնում եմ հեշտ ու հա գիստ կարող էի անցնել դրանց վրայով, ինչպես լուսավոր գերնպատակ Տաճար տանող ճամփին բուսած պատահական պատպատուկի կամ մոլա խոտի վրայով են անցնում

Այնուամենայնիվ կարծում եմ որ ես եմ արդեն խանգարում մերօրյա ազգային ջոջերին» մեր ազգի «պրոֆեսիոնալ հայրերին և չեմ ուզում կոկորդի մեջ խրված ոսկորի» դեր խաղալ

Ուզում եմ միայն որ այս անգամ գեթ ինձ ճիշտ հասկանաք երկար ար երկար խորհրդածելուց հետո եմ միայն հանգել որոշման Բայց վերջ նական որոշման սա գոնե ներքին բանակցությունների թեմա չի կարող լինել

Ու եթե շարունակելու եք կարծել որ ինձ կարելի է նմարել զուգակշռել ԼՂՀ վարչապետի հետ գուցե դարձյալ չեք սխալվում, բայց ինքս գտնում եմ որ դրան արժանի չեմ առնվազն ռազմաքաղաքական ու բարոյաքա ղաքական առումներով նրա «քաշային կարգում» հանդես չեմ եկել

Ուզում եմ հուսալ նաև ու հասկանալ տալ, որ իմ հեռանալուց (բայց ոչ անշուշտ Արցախից) հետո գոնե ինչ որ անշահեկան ուղղություններ ինչ որ «շահագրգիռ անձինք» կուղղվեն

*Պարոն նախագահ*

Ինչ էլ լինի ուրախ եմ և հպարտ որ Արցախում իրոք հզոր բանակ է ստեղծվել, և մշտական ձգտում է դրսևորվել էլ ավելի բարելավելու նրա պատրաստականության բոլոր ցուցիչները

Իհարկե բացթողումներ արտակարգ պատահարներ էլ են լինում գու ցե գալիս են Ձեզ մոտ արդարացի (կամ ոչ այնքան) զանգատներով դիմում սակայն հարկ է չմոռանալ որ պակաս քան 100 հազար անպատրաստ բնա սարդկանցից անհնար է սեղմ ժամկետում թեկուզ 3 հազարանոց ՆԱՏՕ ական արհեստավարժների մակարդակի անթերի անձնակազմ կոփելը

Ամեն դեպքում՝ լավատես եմ: Հուսով եմ Դուք ևս

*Պարոն նախագահ*

Հրաժարականիս հարցն ավելի վաղ էր հասունացել կամենում էի դա ներկայացնել ՀՀ ՊՆ ռազմական կոլեգիայի նիստից հետո սակայն խուսափել եմ մեր ազգային տոնը որևէ կերպ մթագնելուց Եվ, որ նվազ կարևոր չէ խիստ անհրաժեշտ էր համոզվել Ձեր մտածելակերպի և դրա կայունության մեջ Արդեն համոզվեցի Ամեն ինչ ծայրահեղ պարզ է դար ձել ես զգում եմ թե ինչ արժեք եք տալիս ազգին նվիրված մարդկանց Իմ ոգին իմ պղամարդկային առնացի հավատամքը լիուլի հերիքում են ցան կացած պահին ցանկացած տեղում արտահայտելու այն ինչ մտածում եմ

Իսկ եթե ոմանք կարծում են թե թույլ մարդ եմ որ դիմում եմ այդ քայլին պարզապես հեռանալը նախընտրելով, ապա նորից ու չարաչար են սխալվում իսկ ճիշտն այն կլինի, որ նմանները հաշիվ տան իրենց հին սխալները թույլ տալու համար և գոնե կրկնում եմ հետայսու չավելացնեն դրանք։ Մյուս կողմից իմ թե՛ ներքին ուժը թե՛ խելքը բավարարում են ընդդիմադիր կեցվածք ընդունելու իմ առջև ցանկացած նպատակ դնելու և այդ նպատակին հասնելու համար Համաձայնեք թեպետ դա էլ է ձև ու արգելված ձև Բայց ես մտադիր իսկ չեմ օգտվելու այդ ձևից

*Պարոն նախագահ*

Խոնարհաբար խնդրում եմ նաև իմ հրաժարականի հիմնահարցը չշաղկապել-չքարկապել ինչ-ինչ մանր մունր ֆինանսատնտեսական հարցերի հետ Նյութական ոչ մի կնճիռ չկա ու չէր կարող, չի էլ կարող լինել (դա Ձեզ փաստել եմ դեռ 1996թ ) Բանականությանս ներզորությունը (պոտենցիալը) և ունակություններս առնվազն այնքան են իրոք որ առանց դույզն իսկ դժվարության կարող եմ և սեփական տնտեսական մեծ գործ ձեռնարկել և պահել ընտանիքս, և ինչպես շարունակաբար նախկինում եմ արել, առկա բոլոր հնարավորություններս ու ցանկացած բնույթի ձեռքբերումներս ներդնել բանակի, պետության հզորացման ժողովրդի կենսամակարդակի աճն ապահովելու առաջնային գործում Այսուհետև էլ, չկասկածեք, պատրաստ եմ առավելագույնն անելու ազգիս համար անհրաժեշտ գործունեության յուրաքանչյուր տեղամասում

Մեր ազգային-ազատագրական շարժման սկզբից ևեթ եղել եմ շարժման ղեկավարներից մեկը (ոչ վերջինը) բայց երբևէ չեմ մտածել թե ռազմական առաջնորդ պիտի լինեի այսօր էլ այդպես չեմ գտնում (ուրիշը գուցե ավելի մեծ պատվով կատարի այդ դժվարին առաքելությունը) Որպես կանոն կյանքն է թելադրել իմ գործի ու դերի որպիսությունը պաշտոններն ու կոչումներն էլ ընդամենը հասել են իրողությունների հետևից իսկ չուզողներն էլ ստիպված հաշտվել են փաստերին։ Կուզենայի ինքս սխալվել բայց այդ կյանքում որևէ պաշտոնական դերով մասնակից մնալուց հրաժարվելուս դեպքում նույն ձեր իսկ կոլեկտիվ ուժերով ու հայտերով նախագծվող կյանքի ընթացքը ավելի ու ավելի արագ մեծացող հավանականությամբ, ձեզ հարկադրի ընդունել (ո՞վ գիտե) որ իրականում Դուք եք սխալվել (այլ հարց է որ այդ սխալն ընդունելու համար էլ բավարար պղամարդկայնություն անհրաժեշտ կլինի ունենալ բայց ինչու՞ հասնել այդ կյանքին)։

*Պարոն նախագահ*

Վախենամ մինչև իսկ սեփական ու այլոց խղճերի հետ գործարքների նկատվող սնափառության տոնավաճառը ազգի առաջ պարտքի և իշխանական իրավունքների միջև փոխզիջումների բարգավաճող աճուրդը մի «գեղեցիկ» օր էլ վերաճեն արդեն (իմ և ոչ միայն իմ կարծիքով) այնպիսի սահմանային (կրիտիկական) զիջման պարտադրանքի թեկուզ (թեև ոչ

www.a-pdf.com


սով) Արցախի հարցում, որ ցավ ի սիրտ զգաք որ ինքներդ էլ արդեն մե նակ եք մնացել. ասես ոչ մի իրական թիմ չակերտավոր թե անչակերտ գո յություն չի էլ ունեցել..

Ամեն դեպքում իրավունք ունեմ գոնե կարծելու որ 7 8 տարվա մեր հաղթահարած ընդհանուր ճանապարհին այսպես կոչված թիմակիցներս ավելի լավ կարող էին ինձ հասկանալ՝ Թեպետ դրա հիմքերը երբեք փոք րիշապե հսպակ չտեսնելով, ինքս էլ միշտ կարող էի սեփական խաղ խա ղալ: Այդպիսի մի նոր «փայլուն» հնարավորություն ստեղծվեց ՀՀ նախա գահի վերջին ընտրությունների նախօրեին Դա չեմ արել՝ Ավելին փորձել եմ ըստ ամենայնի նպաստել Ռ. Քոչարյանի բարեհաջող ընտրությանը

Ընդհանրապես այլևս չեմ ուզում որևէ տեղիք տալ շարունակելու մեր պատմության «ստվերային ժամերը» թրատած թերատած «գոնե մեկ անգամ կռիվը մինչև վերջ տալուն» խանգարած հայտնի անմիաբանու թյան քանիցս առթած ծանրածանր կորստաբեր սխալները

*Պարոն նախագահ*

Տեղին եմ համարում նաև ամենայն պատասխանատվությամբ զեկու ցել Ձեզ որ այստեղ Արցախում մասնավորապես բանակի շարքերում վաղուց արդեն վերացված է «ղարաբաղցի»-«հայաստանցի» չարաբաս տիկ տարբերակումը Ու թե այս թեմայով դեռ ինչ ինչ շշուկներ են շրջում վերջում հասնելով Ձեզ ապա դրանք հավաստիացնում եմ ընդամենը պարապ զրույցներ են ծնված խելքի թուլությունից ու մտքի ծուլությու նից կամ էլ վաղուց իսկ հիմնազուրկ իներցիայից Ուրիշ ոչինչ Փոխարե նը կփափագեի միայն որ Մայր Հայաստանում Ձեր գործունեության շնորհիվ արմատախիլ արվեր «հայաստանցի» «ղարաբաղցի» իրոք հա մակործանարար հակադրումը

*Պարոն նախագահ*

Խնդրում եմ գոնե այս վերջին անգամ ճշմարիտ անկեղծ-դղամարդա վարի վարվել իմա «ինչ մտածում եք այն էլ ասեք և ինչ ասում եք այն էլ անեք» Ամեն դեպքում համոզել նաև նախագահին ու էլի միասին հարգել եթե արդեն ոչ ինձ ապա դիմումս

*ԼՂՀ Պաշտպանության բանակի*
*հրամանատար, գեներալ-լեյտենանտ*
*Սամվել Բաբայան*

*1998թ 26 մայիսի*

Հ Գ Ինչպես արդեն համոզվեցիք, սույնը գրված է հայերեն

Վերջին նամակներիցս մեկը (ռուսագիր) կարգադրել էիք հետ ուղար կել և գրել հայերեն Իրավացի եք ինչ խոսք Իրավունք ունեք հարյուր տոկոսով

www.a-pdf.com



Բայց ուզում եմ հասկանաք նաև որ Արցախի ՊԲ ի սպաների առնվազն 25 տոկոսն առարկայական պատճառներով ռուսախոս է

Ինչևէ. Այդ փոքր թվացող բայց խիստ խոսուն փաստն էլ ի թիվս շատ այլ նույնատիպ փաստերի հին օրերի մեր տխուր ժառանգությունը խորհրդանշող մի հայելի էր, որի մեջ չէի կարող չտեսնել իմ անձի հանդեպ Ձեր «նորացված» վերաբերմունքի արտացոլքը

Շնորհապարտ եմ և դրա համար



Ժիրայր Պողոսյան

Սամվել Բաբայանի քաղաքական հրաժարականը չընդունվեց Վազգեն Սարգսյանը ստանալով դիմումը այցելեց Արցախ 1998 թվականի հունիսի 11-ին Ստե փանակերտում տեղի ունեցած խորհրդակցությունում կողմերը համաձայնության եկան, ըստ որի Բաբայանը հրաժարվում էր վարչապետի պաշտոնը համատեղելու պարտքերակից Սակայն պետք է ձևավորվեր նոր կառա վարություն, որտեղ պաշտպանության նախարարն իր լիազորություններով հնարավորություն էր ստանալու նպաստել բարեփոխումների ծրագրերի մշակմանը և իրագործմանը Այս պայմաններում ԼՂՀ նախագահը ստիպված էր ընդունելու վարչապետի հրաժարականը

1998 թվականի հունիսի 13 ին ԼՂՀ նոր վարչապետ նշանակվեց 1995 թվականից փոխվարչապետ Ժիրայր Պողոսյանը Հանուն ճշմարտության հարկ է նկատել որ ԼՂՀ նոր կառավարության կազմում ընդգրկվեցին մի խումբ համախոհներ՝ հակառակ ԼՂՀ նախագահի դժկամության Ժիրայր Պողոսյանի հետ համատեղ կազմվեց բարենորոգչական փաթեթը և սկսվեց սոցիալ տնտեսական ծրագրերի իրագործումը[1]

Նախկին կառավարությունը խիստ ցածր արդյունքներ էր արձանա գրել 1998 թվականի պետական բյուջեի առաջին կիսամյակի կատարման առումով 1998 թվականի հուլիսին Սամվել Բաբայանը Պաշտպանու թյան բանակի շտաբ հրավիրեց այսպես կոչված արտոնյալ խավի ներկա յացուցիչներին Այդ հավաքին մասնակցում էին նաև ՆԳ ու ՊԲ համա կարգերի ղեկավարները, գլխավոր դատախազը հարկային պետական վարչության պետը և այլք: Բաբայանը զգուշացրեց եթե նախկին կառա վարությունը հանդուրժել է ստվերում գործելը և պետբյուջեից գումար ներ թաքցնելը, ապա այսուհետ այլևս ներում բեկում չի լինելու. բոլորը անկախ պաշտոնից դիրքից հավասարապես պատասխանատու և հար կատու լինելով օրենքի ու ժողովրդի առաջ պարտավոր են ամեն մի հար

1 ԼՂՀ 1998–1999 թթ. բարեփոխումներին կարելի է ծանոթանալ նախագահի, ԱԺ-ի և կառավարության հրապարակված (ԼՂՀ օրենքների ժողովածուներում, մամուլում ) համապատասխան օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի միջոցով:

www.a-pdf.com





Սամվել Բաբայանի ԼՂՀ վարչապետ Ժիրայր Պողոսյանի և Արկադի Կարապետյանի հանդիպումը Արցախի երկրապ ահների հետ

կարևսակի գծով ժամանակին և լումայի ճշգրտությամբ մուծումներ կատարել պետական գանձարան բյուջեից թաքցված յուրաքանչյուր դրամի դիմաց հետ է բերվելու բազմապատիկը հաշվարկելով նաև անցյալի վճարումները հարկերից խուսափելը դավաճանության նման հանցագործություն է Արցախի պետականության և անվտանգության համար դա մեծ սպառնալիքներով է հղի

Նաև այս կոշտ դիրքորոշման շնորհիվ նոր կառավարությանը հաջող վեց 6 ամսից էլ պակաս ժամանակահատվածում ոչ միայն լրացնել «1998 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված եկամտային մասը այլև գերակատարել 3 տոկոսով

Այս ամենի հետևանքով սկսեց կտրուկ մեծանալ նախկին արտոնյալների հակազդեցությունը դժգոհների այդ ներկայացուցիչները (պետական ապարատի, քաղծառայողների սպվերում գործողների ողջ «ընտրանին») ընդամենը մեկ տարի անց ընդվզեցին Սամվել Բաբայանի դեմ Սակայն անգամ այդ իրադրության մեջ մտավախենում էին բարձրաձայնել գոնե իրական պատճառների մասին Եվ իհարկե ավելորդ է նկարագրել թե ինչ ալես պահն ու պատեհությունը բաց չթողնելով այս բոլորին իր շուրջը հավաքագրեց կամ ուղղակի վարձահրավիրեց ԼՂՀ նախագահը աջակցություն ստանալով ՀՀ իշխանություններից

Տնտեսության և այլ բնագավառներում օրեցօր ուրվագծվող հայեցակարգային բախումն անխուսափելիորեն պետք է հանգեցներ բարձրագույն իշխանության մեջ բացահայտ հակասությունների Ստեղծված հակադրությունը ›ատերը պատկերում էին որպես մրցակիցների ընդհարում ավելին դրա մեջ տեսնում իշխանության համար պայքարի սկիզբը Նման մեկնաբանությունը զուտ մակերեսային էր Բաբայանն առավել ազգային ու ժողովրդավարական գաղափարների կրող էր Նրա հայեցակարգային ծրագիրը անպարակույս ուժեղ զենք էր որ սասանում էր պաշտոնական իշխանության աննպաստ ծրագրերը և ըստ էության, լավագույն դեպքում «գործարար անգործությունը»: «Ես կապացուցեմ բոլորին որ մենք կարող ենք հաջողության հասնել նաև տնտեսական դաշտում և ամենաուշը 2 տարում վերացնել գոր

www.a-pdf.com



ծազրկությունը Բաբայանի ըստ ամենայնի հիմնավորված կարգախոս ղուսն էր

Բաբայանը համոզված էր, որ միայն ազգային արժեհենքին խարսխված ազատական, ժողովրդավարական բարեփոխումներով կարելի է ապահո վել տնտեսության զարգացումը, ժողովրդագրական վիճակի բաջալավումը դրանցով իսկ հասնել Արցախի հիմնախնդրի լուծմանը

1998 1999 թվականներին Բաբայան Պողոսյան երկյակի աշխա տաշրջանը նշանավորվեց տնտեսության տարբեր ճյուղերի առաջընթա ցով Եվ իրոք բուռն գործունեություն ծավալվեց Արցախում նոր աշխատատեղերի բացման, շինարարական վերականգնողական աշխա տանքների ակտիվացման ուղղությամբ Հիմնադրվեցին նոր ձեռնարկու թյուններ. Լայնածավալ շինարարություն էր սկսվել Ստեփանակերտում և այլ բնակավայրերում Հաշվված ամիսների ընթացքում պետք է կառուց վեին կամ վերագործարկվեին ևս 4 5 ձեռնարկություններ

1998 թվականի երկրորդ կեսին գյուղատնտեսության արմատական բարեփոխումների նպատակով ընդունվեցին և կենսագործվեցին «Հողի սեփականաշնորհման մասին», «Գյուղացիական և գյուղացիական կոլեկ տիվ տնտեսությունների մասին» օրենքներն ու կառավարության մի ամ բողջ շարք որոշումներ

Կառավարության 1998 թվականի հուլիսի 7 ի ի 94 որոշմամբ ընդլայն վեցին վերաբնակեցման ծրագրի շրջանակները ներգրավելով ազա տագրված Քելբաջարի (այժմ Նոր Շահումյանի) շրջանը ինչի համար կա պիտալ ներդրումները 1999 թվականին կազմել են 400 մլն դրամ իսկ 2000 թվականի համար նախատեսվել էր շուրջ 600 մլն դրամ Ի հավելումն դրա վերաբնակվող ընտանիքների (նաև Մարտակերտի ու Մարտունու շրջան ներում) տեղաբաշխման և սահմանված արտոնությունների տրա մադրման ծախսերի համար ԼՂՀ 1999 թվականի պետբյուջեում նախա տեսվեց 169 1 մլն դրամ 1999 թվականին ԼՂՀ կառավարությունն ընդու նեց վերաբնակեցման ընդհանուր քաղաքականության հայեցակարգ·



Սամվել Բաբայանը և ԼՂՀ Քաշաթաղի շրջանի վարչակազ մի նախկին ղեկա վար Ալեքսան Հակո բյանը

www.a-pdf.com



1998 թվականի երկրորդ կեսին կառավարության կողմից մշակված և ընդունման ներկայացված «Բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքով կանոնակարգվեցին հանրապետական և համայնքային բյուջեների կառուցվածքը դրանց հաստատման, կատարման և վերահսկողության գործընթացները Իրականացվեց նաև բյուջետային ծախսերի ծրագրման չափորոշիչների լավարկում (օպտիմալացում). Պետությունն անցում կատարեց առողջապահության և կրթության համակարգի օբյեկտային ֆինանսավորումից սուբյեկտների ֆինանսավորմանը երբ համակարգը ֆինանսավորելու փոխարեն պետությունը դառնում է համապատասխանաբար վճարող յուրաքանչյուր հիվանդի համար (ըստ հաստատված հիվանդությունների ցանկի) և պատվիրատու ամեն մի աշակերտի ուսանողի համար Բացի այդ ԼՂՀ կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 10 ի «ԼՂՀ համայնքի պետական հանրակրթական հաստատության ժամանակավոր տիպային կանոնադրությունը հաստատելու մասին› թիվ 255 որոշման հիման վրա 1999 թվականի հունվարի սկզբից կատարվել են դպրոցների խորհուրդների (մանկավարժների ծնողների և ճանաչված քաղաքացիների ներգրավմամբ) ու վերջիններիս կողմից գործադիր տնօրենների մրցութային ընտրություններ որոնց շնորհիվ ապահովվում էր տնօրենների և մանկավարժների անկախությունը Սակայն այս առաջադիմական ժողովրդավարական կարգը վերացվել է ԼՂՀ հաջորդ ‹դեմոկրատ› կառավարության կողմից 1998 թվականին ընդունված օրենքներով տարբերակված պետական մուրեցում ցուցաբերվեց աշխատանքի վարձատրության հարցում և ցածր վարձատրվողների մասնավորապես ուսուցիչների և բուժաշխատողների աշխատավարձերի չափն աճեց շուրջ երկու անգամ ԼՂՀ կառավարության 1998 թվականի հուլիսի 14 ի թիվ 113 որոշմամբ սահմանվեց և ԼՂՀ նախագահի համապատասխան հրամանագրով սկսեց իրագործվել ԼՂՀ քաղաքացիների 1993 թվականից արժեզրկված ավանդների նախնական փոխհատուցման կարգը որ նախորդեց ՀՀ և ԱՊՀ շատ այլ երկրներում համանման ակտերի կիրառմանը Խրախուսվեց փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեությունը Նշված նպատակով մասնավորապես ի խնդիր արդյունաբերական ոլորտի զարգացման ԼՂՀ 1999 թվականի պետբյուջեում ամրագրվեց մեկ միլիարդ դրամ ընդհանուր գումարով վարկի տրամադրում 1998 թվականի երկրորդ կեսին կատարված վիճակագրական ուսումնասիրությունների հիման վրա ճշտվեց կենսաթոշակառուների իրական թվաքանակը ավելի քան 34 հազարից դարձնելով շուրջ 27 հազար մարդ ինչը հնարավորություն ընձեռեց ավելացնելու կենսաթոշակների միջին չափը որ հասավ ամսական 6900 դրամի (2000 ական դրամ կազմող ‹Արցախ› տարածքային հավելումով) Առանձնապես կարևորվեցին գյուղատնտեսության զարգացման խնդիրները 1999 թվականի պետբյուջեով նախատեսվեց մեկ միլիարդ դրամի

www.a-pdf.com



ափով, ցածր (տարեկան մոտ 6%) տոկոսադրույքներով վարկի հատկացում գյուղատնտեսության բոլոր ճյուղերի զարգացման նպատակով. 2001 թվականին ՀՀ արտահանված 1000 տոննա խաղողի վաճառքից նույն «դեմոկրատների» ստացած պետական եկամուտները գոյացել են այս վարկավորման շնորհիվ Առաջանցիկ նշանակություն տրվեց նաև վերամշակող արդյունաբերության զարգացմանը: Բաբայանն այս առումներով հստակ և իրատեսորեն ընկալում ու հասկանալ էր տալիս նման քաղաքականության կենսական անհրաժեշտությունը

Սամվել Բաբայանի տնտեսական ծրագրերի հաջող իրականացումն իրոք հնարավորություն կընձեռեր վարելու սկզբունքորեն ինքնուրույն քաղաքականություն Արցախի տնտեսությունը դարձնելու շատ ավելի ինքնաբավ ու առավել կամրապնդեր արցախյան հիմնախնդրի շուրջ վարվող բանակցություններում Ստեփանակերտի դիրքերը

Որպես հետևանք նոր կառավարության գործունեությունն աստիճանաբար հանդիպում էր այնպիսի խոչընդոտների որոնց լուծումն առանց Հայաստանի բավական բարդ էր Ինքնին հասկանալի էր որ Արցախն սկզբնական շրջանում միայն իր ուժերով չէր կարող հաղթահարել սոցիալ տնտեսական բազմաթիվ խնդիրների ողջ թնջուկը 1999 թվականի Հայաստանի պետական բյուջեում սակայն Արցախին հատկացումների ծավալը մնաց գրեթե նույնը:

Սամվել Բաբայանի համար ավելի ու ավելի հստակ էր ուրվագծվում, որ արցախյան խնդրի բարենպաստ հանգուցալուծման բանալին ամենաուղիղ կերպով կապված է Մայր Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականության մեջ կուտակված բարդությունների սոցիալական ու տնտեսական զարգացման արգելապատնեշների շտապափույթ հաղթահարման հետ Վազգեն Սարգսյանի հետ քննարկելով այս խնդիրները գալիս են այն համոզման որ ՀՀ Ազգային ժողովում հարկավոր է ունենալ ԼՂՀ շահերը պաշտպանող ներկայացուցիչներ ովքեր մշտապես և աչալուրջ կհետևեն ընթացիկ գործընթացներին ու կներկայացնեն Արցախի շահերը ՀՀ օրենսդիր մարմնում 1999 թվականին ՀՀ խորհրդարանական ընտրությունների նախաշեմին, սակայն պարզ դարձավ որ այդ պայմանավորվածությունը ևս Հայաստանում չեն պատրաստվում կյանքի կոչելու: Խառնվածքով մշտապես հաղթունակ հրամանատարը սակայն, չէր պատրաստվում համակերպվելու ՀՀ իշխանությունների կողմից արհեստականորեն հարուցվող խոչուխութերին Կյանքը նոր ընթացք ունեցավ և նրա համար առաջադրեց նոր խնդիրներ անհամեմատ ծավալուն Ի պատասխան իշխանությունների ձեռնարկած հակաբաբայանական միջոցների նա ակտիվացավ ներքաղաքական դաշտում Օրենսդրական և հարակից բարեփոխումներով հասարակական տնտեսական կյանքն առողջացնելու լրջագույն մտադրությամբ և որ պակաս կարևոր չէ արդեն իսկ պատրաստի արցախյան իրականությամբ արդարացված հիմնավոր ծրագրերը

www.a-pdf.com



կյանքի կոչելու համար Սամվել Բաբայանը ՀՀ երկրորդ գումարման Ազգային ժողովի ընտրություններում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի շրջանակներում աջակցեց ՀՀ ում արդեն իսկ կայացած «Ազգային միաբանություն», «Սահմանադրական իրավունք» միություն կուսակցությունների ուժերից բաղկացած դաշինքին (1999 թվականի առաջին կես) Այս դաշինքը խոսպումնալից հաջողության հասավ նորընտիր ԱԺ-ում իր կազմավորած «Իրավունք և միաբանություն» խմբակցության անդամների թվաքանակով դառնալով երրորդը

ԼՂՀ-ում 1998 թվականի հունիսից իրականացված համալիր բարեփոխումների հայեցակարգային փաթեթը փոխանցվեց թե՛ «Իրավունք և միաբանություն» խմբակցության ղեկավարին, թե ՀՀ նորանշանակ վարչապետ Վազգեն Սարգսյանին ովքեր օգտվեցին դրանից մասնավորապես իրենց հրապարակային հանդիպումների ասուլիսների հեռուստաելույթների և սեփական ծրագրերը մշակելու ժամանակ

ԼՂՀ երկրորդ գումարման Ազգային ժողովի 2000 թվականի ընտրություններին ընդառաջ Բաբայանը ձեռնարկեց նաև ԼՂՀ ում «Մեր տունը Հայաստանն է» կուսակցության ստեղծումը և դրա շուրջ իր գաղափարակիցների համախմբման գործընթաց սկսեց[1] 1999 թվականի առաջին կեսին կազմվեցին կուսակցության ծրագրի և կանոնադրության նախագծերը ինչը որևէ «լավ բան» չէր խոստանում քաղաքական հակառակորդներին առանձնապես՝ բյուրոկրատիային

Տնտեսական մասնավորապես հարկաբյուջետային քաղաքականության կադրային և այլ կարևոր հարցերում նախագահ Արկադի Ղուկասյանի հետ սկզբունքային հակասություններ ուներ նաև վարչապետ Ժիրայր Պողոսյանը Եվ ահա 1999 թվականի հունիսի 24 ին ԼՂՀ նախագահը վարչապետին ազատեց պաշտոնից..

Կառավարության լուծարմամբ, ցավոք այդպես էլ ծրագրամաքանական ավարտին չհասցվեց բարեփոխումների ողջ ծրագիրը ԼՂՀ նախագահը նույն օրը ԱԺ դահլիճում անցկացրեց հանդիպում հանրապետության ակտիվի հետ Ղուկասյանը փորձեց բոլոր «ձախողումները» բարդել լուծարված կառավարության վրա Իշխանությունների այս զանգվածային սև քարոզչության հեռահար նպատակը Սամվել Բաբայանի ներքաղաքական դիրքերն արմատապես խարխլելն էր

Սակայն տեղին է ասված «Քննադատությունը վտանգավոր կայծ է որը կարող է պայթյուն առաջացնել գոռոզության վառոդի մառանում» (Դեյլ Կառնեգի)

---

[1] Մեր տունը Հայաստանն է կուսակցությունը չշփոթել ԼՂՀ ԱԺ արդեն հաջորդ գումարման՝ 2005 թվականի ընտրությունների նախօրեին հիմնված և ի տարբերություն վերոնշյալի համամասնական ցուցակով մասնակցելու հնարավորություն ստացած համանուն կուսակցության հետ

www.a-pdf.com



1999 թվականի հուլիսին քրեական հետապնդում հարուցվեց նախկին վարչապետ Ժիրայր Պողոսյանի նկատմամբ Պողոսյանը ենթարկվեց 3-օրյա նախնական կալանքի որից հետո միայն խափանման միջոցը փոխարինվեց Ստեփանակերտից չբացակայելու ստորագրությամբ

Կային նախկին վարչապետին «պատժելու» նաև այլ պատճառներ Ժիրայր Պողոսյանը բազմիցս կտրականապես մերժել էր ԼՂՀ նախագահի առաջարկություններն Անուշավան Դանիելյանին նշանակելու ԼՂՀ փոխվարչապետի թափուր պաշտոնում: Եվ ահա օգտագործելով առիթը, ԼՂՀ նախագահը նախադրյալներ էր ստեղծում Դանիելյանին ԼՂՀ կառավարության գլուխ կարգելու համար Ընդ որում այս պատասխանատու նշանակումը կատարվեց Ղուկասյան Դանիելյան զույգ ընկերական փոխհարաբերություն ների ենթահողի վրա

ԼՂՀ վարչապետ նշանակված Անուշավան Դանիելյանը բանակցություն ներ սկսեց Սամվել Բաբայանին նոր կառավարության կազմում ընդգրկելու նպատակով Բաբայանը վճռականորեն մերժեց այդ առաջարկը՝ գտնելով որ անընդունելի է ընդհանուր ճանապարհ անցնել Դանիելյանի կառավարության հետ Եվ գերադասեց մնալ միայն Պաշտպանության բանակի հրամանատար Թերևս՝ վիրավորված այդ պահվածքից՝ ԼՂՀ նախագահը որոշեց ցույց տալ, որ ոչ թե Բաբայանն է հրաժարվում այլ ինքն է վճռել Սամվել Բաբայանին ազատել ԼՂՀ պաշտպանության նախարարի պաշտոնից Այդ նույն ժամանակ, Երևան Ստեփանակերտ հեռուստակամուրջի ընթացքում Սամվել Բաբայանի՝ պաշտպանության նախարար լինելու հնարավորության հարցին ի պատասխան Ղուկասյանն ասել է ‹ Ես առարկություն չունեմ և ցանկանում եմ որ Բաբայանը մնա պաշտպանության նախարար բայց մի պայմանով նա չպետք է միջամտի կառավարության մյուս կառույցների աշխատանքներին»: Հասկանալի է որ այս կապակցությամբ Ղուկասյանն ինքնահաստատման խնդիրներ ուներ և չէր կարող այլ պատասխան տալ

Սամվել Բաբայանը ինչպես նշեցինք շարունակում էր վարել Պաշտպանության բանակի հրամանատարի պաշտոնը ինչը չէր գոհացնում ԼՂՀ և ՀՀ բարձրաստիճան շատ «չինովնիկների»: Ուստի չուշացան նոր սադրանքները Տակավին 1999 թվականի սեպտեմբերից Ստեփանակերտ էին ժամանում ՀՀ նախագահի ռազմական տեսչության ՀՀ պաշտպանության նախարարության և զինվորական դատախազության հատուկ հանձնաժողովները ԼՂՀ բանակում պարբերական ստուգումներ անցկացնելու նպատակով Սակայն այս մտահղացումը ևս տապալվեց Սամվել Բաբայանի շնորհիվ Պաշտպանության բանակը գրեթե անթերի վիճակում էր Բաբայանի հեղինակությունը բանակում սասանելու նպատակով նույն սեպտեմբեր ամսից մասամբ կրճատվում է բանակի ֆինանսավորումը Նպատակը մեկն էր հրամկազմի և այլ օղակներում առաջացնել դժգոհություն օրինակ աշխատավարձերի ուշացման պատճառով և նրանց ըմբոստացնել հրամանատարի դեմ 1999 թվականին բանակը ֆինանսավորվեց նախատեսվածից շուրջ 1 մլրդ դրամով պակաս Սամվել Բաբայանը հնարավորություններ գտավ ավելացնելու զին

www.a-pdf.com



ծառայողների պարենային բավարարումը Միևնույն ժամանակ ՀՀ ֆինանսական փոխակներով ԼՂՀ իշխանություններին 2 միլիարդ դրամ լրա ցուցիչ գումար էր հատկացվել Նպատակը կրկին մեկն էր այս անգամ սիրա շահել ժողովրդին Այս բոլոր փաստերը հաստատագրված են ՀՀ ֆինանսնե րի և էկոնոմիկայի նախարարության համապատասխան հաշվետվություննե րում Այսպիսի էժանագին մեթոդներով իշխանություններն ամեն կերպ ձգտում էին Բաբայանին հանել հավասարակշռությունից Ապարդյուն... Հրա մանատարն այս ամենին հակադարձել է արժանիորեն ու արժանապատվորեն Սրանք կարծում են, թե ես Չապանի նման սրեր ճոճելով, հիմա հակահար ձակման կնետվեմ: Ջուր ջանքեր արհամարհել եմ ու արհամարհում եմ բոլոր սադրանքները: Կոչ եմ անում դրանց հեղինակներին ի վերջո ուշադրություն դարձնել ժողովրդի օրեցօր վատթարացող վիճակին և տնտեսության վերա կենդանացմանը այլ ոչ թե անձնական հաշիվներ մաքրելուն Եթե ես ինչ որ բան չեմ հասցրել անել կամ սխալ եմ արել դո՛ւք արեք գործով ապացուցեք որ ես սխալվել եմ»:

1999 թվականի աշնանը Հայաստանի Հանրապետությունը կանգնած էր քաղաքական և պետական վտանգաշատ ճգնաժամի առջև

Հոկտեմբերի 27 ին ՀՀ ԱԺ դահլիճում մի խումբ ելուզակների ձեռքով կատարված ոճրագործության հետևանքով զոհվեցին ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանը վարչապետ Վազգեն Սարգսյանը և պետական այլ այրեր Արցախի ազատագրման և բանակաշինության գործում մեծ ներդրում ունե ցած Վազգեն Սարգսյանի սպանությունը ՀՀ ԶՈՒ-ում ստեղծել էր ճգնաժամա յին իրավիճակ Բանակը ներկայացնող որոշ անձինք փորձում էին միջամտել քաղաքական գործընթացներին իսկ Սամվել Բաբայանն այս ծանրագույն պահին ընդունել էր բանակը ներքաղաքական զարգացումներին միջամուխ դարձնելու դիրքորոշում և պատրաստակամ էր հանդես գալու ընդդեմ այդպիսի ամեն փորձի



Սամվել Բաբայանը և ՀՀ գլխավոր ռազմական տեսուչ (նախկին) Գուրգեն Դալիբալթայանը

www.a-pdf.com



1999 թվականի հոկտեմբերի 27 ը և ի մասնավորի Վազգեն Սարգսյանի զոհվելը Սամվել Բաբայանն ապրեց որպես անփոխհատուցելի կորստի ցավ Նշենք նաև որ Վազգեն Սարգսյանի և Սամվել Բաբայանի փոխհարաբերու թյունների բոլոր ոլորանները լավագույնս արտացոլում է Բաբայանի 1998 թվականի մայիսի 26-ի ծրագրային վերոնշյալ նամակը Վազգեն Սարգսյանին

Սամվել Բաբ սյանր և Վազգեն Սարգսյանը



Քաղաքականության մեջ հաճախ կարող են հաշվի չառնել և ոչ մի սրբու թյուն Նման քաղաքական մթնոլորտում Բաբայանը մեղադրվեց նաև թե իբր ԼՂՀ-ից դեպի Երևան տանկեր շարժելու երևակայական հրաման է տվել: Ոչ ոք իրեն նեղություն չտվեց վերլուծելու թե արդյոք հնարավո՞ր է տանկերը այն էլ սեփական ընթացքով մոտ 350 կմ հեռավորության վրա գտնվող Երևան հասցնել: Եվ արդյո՞ք հաղթանակների զորահրամանատարը կարող էր այդպիսի հրաման տալ՝ Իսկ նման շահարկումների առիթ հանդիսացել էր դեպքից օրեր անց ‹Ազատություն» ռադիոկայանին տրված մի հարցազրույց Բաբայանն ասել էր որ եթե ՀՀ ԱԺ ն համաձայնություն տա ապա բանակի առանձին ստորաբաժանումներ պատրաստ են կարգ ու կանոն հաստատելու ՀՀ մայրաքաղաքում Միևնույն միտքը կրկնել էր նոյեմբերի 12-ին Առավոտ թերթի թղթակից Մարգարիտ Եսայանին տված հարցազրույցի հետևյալ հատվածում

*«Հարց - Հոկտեմբերի 27 ից հետո լուր տարածվեց որ Լաչինի ճանապար հը փակ է Վտանգ կա՞ր, որ Ղարաբաղից զորքը կմտնի Հայաստան*

.... Իրոք Լաչինի ճանապարհին կար պահակակետ բայց ինձ թվում է դեպքերի հետ կապ չուներ ուղղակի փորձում էինք հսկել իրավիճակը՝ Ինձ թվում է Ղարաբաղից զորք գալու-չգալու խնդիր չէր կարող լինել՝ Ի՞նչ է բանակը երկու մասի՞ է բաժանվել: Դա ճիշտ չէ: .. Եթե հրաման տրվեր որ պետք է կարգ ու կանոն հաստատվի

www.a-pdf.com



*Եվ Դուք հրամանը կկատարեի՞ք....*

Իհարկե եթե հարցը ժողովրդի հետ կապ ունի եթե քաղաքացիականի մասին է խոսքը ապա հրամանը պետք է նախագահը տա: Չի կարող պատահել որ Սամվել Բաբայանը նախարարի հրամանով զորքը վերցնի և գա Երևան կամ չգիտեմ որտեղ ինչ որ իրենք մտածում են Պետությո՞ւն ենք կառուցում թե՞ բանդա Ինձ չի թվում, թե բանդա ենք ստեղծել մինչև այսօր Բանակը պետք է ենթարկվի իր իշխանություններին

Իր հերթին ԼՂՀ նախագահը դատողություններ էր անում Արցախում իր պատկերացմամբ ժողովրդավարություն հիմնելու, «բռնապետից» ազատվելու իր պայքարի մասին և այդպիսով ներկայանում հասարակությանը իբրև ժողովրդավարության ղրոշակակիր Ղուկասյանի այս պայքարին միացավ նաև ՀՅԴ Արցախի կազմակերպությունը նպատակ ունենալով առաջիկա համապետական ընտրություններում քաղաքական շահաբաժիններ կորզել ու Միայն տարիներ անց նույն կառույցը կհիասթափվի ԼՂՀ նախագահի ժողովրդավարության» «օրինականության», «արդարության» քարոզչական չերի իրական սնամեջ բովանդակությունից և նույն նախագահի առնչությամբ ստիպված կլինի բռնելու... ընդդիմադիր կեցվածք Դա առանձնապես ցայտուն արտահայտվեց ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների 2004 թվականի և ԼՂՀ ԱԺ 2005 թվականի ընտրություններում

1999 թվականի դեկտեմբերի սկզբին, ներիշխանական ճգնաժամի օրերին Հայաստանի Հանրապետություն» թերթին տված հերթական հարցազրույցում Արկադի Ղուկասյանն անթաքույց կասկածի տակ առավ Սամվել Բաբայանի գիտելիքների բավարարությունը «բյուջե կազմելու համար»· Իրականում նա չարաչար մեղանչում էր նորին մեծություն ճշմարտության դեմ· 1999 թվականի դեկտեմբերի 11-ին Բաբայանը հարկադրված եղավ հանդես գալու Արցախի պետական հեռուստատեսությամբ մեկ առ մեկ հերքելով իր հասցեով չարարկվող մեղադրանքները

Տեղին է այստեղ հիշել որ ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատար պաշտպանության նախարար և կառավարության անդամ Սամվել Բաբայանի վերաբերյալ նախանձելի գնահատականներ են շռայլել Արցախ ժամանած և Բաբայանի զրուցընկերությունը վայելած այնպիսի մտավորականներ ինչպիսիք են ականավոր տնտեսագետ նախկին ԽՍՀՄ ԳԱ նախագահության անդամ և ՌԴ ԳԱ իսկական անդամ Արցախի պետական համալսարանի պատվավոր դոկտոր Աբել Աղանբեգյանը իրավագետ պատմաբան սոցիոլոգ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Վահագն Տատրյանը գրող հրապարակախոս Վահե Օշականը (1922 2000) քաղաքական-պետական գործիչ Ալեքսան Կիրակոսյանը (1918–2007) նշանավոր բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը (1919 2006) և ուրիշներ Նրանք իմաստավորել են Սամվել Բաբայանի զորավարական հանճարը հասարակական քաղաքական, տնտեսության ոլորտներում ուշագրավ ծրագրեր կազմելու շահեկան վերլուծություններ կատարելու բնատուր օժտվածությունը Քիչ չեն նաև այլազգի գործիչների անկեղծ, անկանխակալ ու անշահախնդիր որակումները Անգլիացի լրագրող Կովկասի հիմնախնդիրներում մասնագիտացած

www.a-pdf.com

Թոմաս դե Վաալն իր Սև այգի Հայաստանն ո Ադրբեջանը խաղաղության
և պատերազմի միջև› գրքում, պատմելով ղարաբաղյան հակամարտության
ռազմական քաղաքական գործիչների մասին, առանձին անդրադառնալով
Սամվել Բաբայանին ու մեկդի թողնելով փարբեր կարծիքներ գրել է սեփա
կանը. «Ղարաբաղյան ուժերի գլխավոր հրամանապար Սամվել Բաբայանը
քսանութ պարեկանու ս դարձավ փարածաշրջանի ամենազորեղ անձը և նրա
հավակնությունների հեփ հարկ էր հաշվի նապել....»: Եվ ապա ավելացնում է
«1992 թվականին Բաբայանը հռչակվեց որպես համարձակ հրամանապար և
փայլուն ռազմական կազմակերպիչ....» (փես Թոմաս դե Վաալ ‹Սև այգի
(ռուսերեն), էջք 303 304 Մ., 2005 թ )·

Արցախյան հակամարփության ընդհանուր կարգավորման հիմնահար
ցում ևս միջազգային բոլոր բանակցորդները (ինչպես ԵԱՀԿ Մինսկի խմբի
համանախագահողները այնպես էլ առանձին երկրների ղեկավարներ,
նախարարներ, դեսպաններ ու այլ դիվանագեփներ) մշփապես ու մեծապես
հաշվի են նապել ԼՂՀ ՊԲ հրամանապարի ըսփ ամենայնի հիմնավորյալ հա
յանպասփ փեսակեփների հեփ, էլ չենք ծավալվում ՀՀ և ԼՂՀ ռազմաքաղա
քական վերնախավի ներկայացուցիչների ակնածալից վերաբերմունքի շուրջ

Այդ բոլոր արժևորումներին սակայն անհաղորդ էր Արկադի Ղուկասյա
նը Նա անհաղորդ մնաց նաև ԼՂՀ ԱԺ 33 պափգամավորներից 14 ի հայտա
րարությանը (1999 թվականի դեկփեմբերի 11) որով նախագահին կոչ էր ար
վում զուր ‹չհիկացնել մթնոլորփը: «Մենք ԼՂՀ Ազգային ժողովի պափգամա
վորներս, դապապարփում ենք ԼՂՀ նախագահի վերջերս մամուլի աստլիս
ներում փարբեր թերթերի փված հարցազրույցներում արված անհավասա
րակշիռ արփահայփությունները և կոչ ենք անում պահպանել հանրապեփու
թյան նախագահին վայել վարքագիծ, կեցվածք և գործելաոճ», – շեշփված էր
այդ հայփարարությունում (փես ‹10 րդ նահանգ› թերթ Սփեփանակերփ
1999թ դեկփեմբերի 18): Սակայն անօգուփ Սփեղծված իրավիճակում ի
նշան բողոքի ԼՂՀ Պաշփպանության բանակի հրամկազմի մի խումբ հեղի

Հայաստանի քաղա
քական, պեփական
գործիչներ Ալեքսան
Կիրակոսյանը, Վլա
դիմիր Մովսիսյանը
զրուցում են Սամվել
Բաբայանի հետ





Սամվել Բաբայանը Ստեփանակերտի հուշահամալիրում



ակավոր ներկայացուցիչներ որպես քաղաքական դեմարշ ԼՂՀ նախագա ին հետ հանձնեցին իրենց մարտական պարգևները Անձամբ ինքը ԼՂՀ աշտպանության բանակի հրամանատարը հանձնեց միակ ու ամենա արձր պարգևը Արցախի հերոսի թիվ մեկ վկայագրով վավերացված «Ոսկե ծիվ» շքանշանը

Դեռ 1999 թվականի նոյեմբեր ամսին Երևանում ՀՀ նախագահին առըն ըսր ազգային անվտանգության խորհրդի նիստում մասնավորապես ՀՀ վար ապետ Արամ Ջավենի Սարգսյանը և ՀՀ պաշտպանության նախարար գենե րալ-լեյտենանտ Վաղարշակ Հարությունյանը (այժմ նախկիններ, իսկ վերջինս նաև ապրիճանագրկված) պահանջել են խիստ վերջնագրային միջոցներ գործադրել հրամանատար Սամվել Բաբայանի նկատմամբ Ստո րագրվեց Պաշտպանության բանակի հրամանատարի ազատման հրամանագիրը որտեղ բառ անգամ չկար պատճառների մասին

Ստեփանակերտում շատերի համար բացահայտվեց տեղի ունեցածի բուն էությունը իրականը այլ ոչ երևակայականը Բանակը վիրավորված էր Կոմանդույուշչիի» ծառայությունների հանդեպ դրսևորված անհարգալից ու քամահրական վերաբերմունքից Մի՞թե ձեռք բերված հաղթանակները

www.a-pdf.com



բացառիկ արտերևո յլթ չեն սրբագործում հայ ժողովրդի մղած բոլոր պայքարների մեջ ի վերջո..

Արդեն դեկտեմբերի 16 ին բանակի հրամկազմի մի խո մբ ներկայացուցիչներ (նրանցից շատերի հետ Բաբայանն անցել էր պատերազմի ողջ ճանապարհը) հանդես եկան հայտարարությամբ ուղղված ԼՂՀ ԱԺ պատգամավորներին, որտեղ իրենց վրդովմունքն էին արտահայտում Պաշտպանության բանակի հրամանատար Սամվել Բաբայանի ազատման առնչությամբ Հայտարարության մեջ մասնավորապես ընդգծվում էր, որ «....այս քայլով իրավիճակն ավելի է սրվելու և լարվածությունն ավելի է մեծանալու որի համար մենք հայտնում ենք մեր խորին մտահոգությունը Ցավում ենք որ մեր կոչը անտեսվել է և Հայաստանում, և Արկադի Ղուկասյանի կողմից ... Այսու կոչ ենք անում ձեզ հարգելի պատգամավորներ որ իրավական ընթացք տաք ԼՂՀ նախագահի պաշտոնից հեռացման գործընթացին.. Վստահ եղեք, որ այդ ճանապարհին ժողովրդի ջախջախիչ մեծամասնությունը ձեզ հետ է լինելու (տես 10 րդ նահանգ», 1999թ դեկտեմբերի 18)՝ Բանակը պաշտպանում էր Սամվել Բաբայանին և պատրաստ էր ամեն պահ կատարելու նրա բոլոր հրամանները Սակայն հրամանատարը ով հաշված ժամերի ընթացքում կարող էր փոխել իշխանությունն Արցախում զերծ մնաց բոլոր տեսակի ուժային մեթոդներից նախընտրելով քաղաքական ազնիվ պայքարը ԼՂՀ ԱԺ ընտրությունների նախաշեմին. Հրամանատարի այս ազնվությունը շատ թանկ նստեց թե իր, թե՛ համախոհների վրա

ՀՀ պաշտպանության նախարար Վաղարշակ Հարությունյանը ժամանեց Ստեփանակերտ և անձամբ Բաբայանին ներկայացրեց վերջինիս պաշտոնա



Հանդիպում Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինի հետ (1995թ )

www.a-pdf.com


զրկման նախագահական հրամանագիրը Տեղին է վերահիմնապավորել նման գործիչների (Վաղարշակ Հարությունյան Արամ Զավենի Սարգսյան) ճակատագիրը ՀՀ վարչապետը և ՀՀ պաշտպանության նախարարն արդեն 2000 թվականի գարնանը ազատվեցին զբաղեցրած պաշտոններից

Իսկ զորահրամանատարը հանգիստ խղճով հեռացավ Պաշտպանության բանակից Բանակը կայացել էր Անձնիշխանության էլ երբեք չէր ձգտել ու չէր ձգտում: Ահա թե նաև ինչու կարող էր գործը պատվով արածի լիասիրտ զգացումով թողնել հրամանատարական բարձունքը

Մինչդեռ հասկանալու համար որ այդ ողջ ընթացքում ԼՂՀ նախագահի գործողություններն անպրամաբանական էին բավական էր հետևել նրա հայ տարարություններին ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորների հետ հան դիպման ընթացքում Ղուկասյանն ասաց բառացիորեն հետևյալը. «Ես հաս տատելու եմ իմ կարգերը և կրկնում եմ դա է լինելու մեր պետության և պե տականության հիմքը»

Ի պատասխան ԱԺ մի խումբ պատգամավորների 1999 թվականի դեկ տեմբերի 11 ի վերոբերյալ հայտարարության Ղուկասյանը հանդես եկավ հետևյալ ելույթով. «Դեպուտատները հայտարարել են որ դատապարտում են նախագահին Ես չգիտեմ արտահայտո՞ւմ են նրանք ժողովրդի կարծիքը թե ‹է Այսօր մենք պետք է մտածենք թե ոնց պաշտպանվենք դեպուտատներից»: Ղուկասյանը սպառնում էր նաև ԶԼՄ-ներին. «Բոլոր լծակներն ունեմ այս կամ այն թերթը կամ հեռուստաալիքը փակելու համար»

Իսկ իշխանությանը սպասարկող «փորձված» լրագրողները սկսեցին թխել անհեթեթ նյութերից մինչև բացարձակ կեղծիքներ Կեղծիքներ որոնք իշխանական պատվերով ծնված ու սնած, ինքնին սին մոգոնվածքներ էին Ավելին Սամվել Բաբայանի հեռանալը բանակից արձանագրեցին իբրև «ժո ղովրդավարության հաղթանակ» Արցախում Ինչպես իրավամբ նկատել է Վահրամ Աղաջանյանն իր ‹Ազգային հերոս Սամվել Բաբայան» գրքում երբ Սամվել Բաբայանը նպաստում էր խոսքի ազատության և անկախ մամուլի կայացմանը դա, ըստ իշխանությունների անօրինականություն էր Իսկ երբ Արկադի Ղուկասյանը ձերբակալում է լրագրողներին և նպաստում անկախ թերթի փակմանը դա «ժողովրդավարություն» է և «օրինականություն» Երբ Սամվել Բաբայանն առաջարկում է ընտրությունների անցկացման ժամանա կահատվածում դադարեցնել ռազմական դրության ռեժիմը դա «հակաժո ղովրդավարական» քայլ էր Իսկ երբ Արկադի Ղուկասյանն ընտրություններն անցկացնում է ռազմական խստակարգի (ռեժիմ) պայմաններում՝ արժանա վոր շատ թեկնածուների և մի ամբողջ ձևավորվող կուսակցություն կանխավ զրկելով առաջադրվելու և ընտրվելու օրինական իրավունքից դա մի՞թե այդքան թմբկահարվող ժողովրդավարության էր հանգույն...

Վերջին հրապարակային ու ծրագրային ելույթով Արցախի հերոսը հնարա վորություն ստացավ հանդես գալու 2000 թվականի հունվարին՝ ԼՂՀ ազատա մարտիկների «Երկրապահ» հասարակական կազմակերպության համագու մարի լեփ լեցուն դահլիճում եթե իհարկե հնարավորություն կարելի է համա

www.a-pdf.com



րել դիտավորյալ էլեկտրախափանման պայմաններում, ոչ վաղ անցյալի պա տերազմական մղձավանջը հիշեցնող մոմերի լույսի ներքո մի քանի խոսք ասել թույլ տալու իշխանական ‹ բարեհաճությունը»: Ավաղ իշխանություններն այս անգամ ևս չանսացին Բաբայանի նախազգուշական հանցականխից հորդոր ներին Բաբայանն իր ելույթում ի մասնավորի շեշտեց. «.... Այստեղ նստած ցանկացած տղամարդ հաղթանակ է բերել և նրանցից յուրաքանչյուրն իրա վացիորեն զգնում է որ ինքը պետք է նորմալ ապրի Զոհվածների ընտանիք ները պահանջում են հարգանք և ուշադրություն իրենց նկատմամբ Այդպես էլ պետք է լինի Ես այն ժամանակ կանգնել էի ընտրության առաջ բանակ-պե տությու՞ն թե՞ բոլորի աչքին լավ երևալու ցանկություն· Ես իմ ընտրությունն արել եմ 1995 թվականին ոչ թե ծանոթ–ընկերների եմ պաշտոն տվել (խոսքը բանակի մասին է), այլ նրանց, ովքեր կարողանում էին աշխատել· Ես ձգտել եմ պետություն ստեղծել, և դա ինձ հաջողվել է այնքանով, որքանով որ այսօր մարդիկ փողոցներում չեն քայլում զենքով իրար չեն կոտորում.... Ուրեմն պետություն ենք ստեղծել, մեր պետական համակարգը կայացել է» « Ես միշտ էլ անձնական կուսակցական շահը ստորադասել եմ պետական շահին 1992 թվականի ամռանը Ղարաբաղում չգտնվեց մեկը որ իր վրա վերցներ պատաս խանատվությունը և կանգնեցներ խուճապահար ժողովրդին Հիմա խոսում են այն մասին թե իբր ես հաղթանակն եմ «սեփականացրել», բանակի հաջողու թյուններն եմ «սեփականաշնորհել».... կիթառ նվագողներն այսօր խոսում են պատերազմից, բանակից, մեր ժողովրդի հաղթանակից այն դեպքում երբ դրա բարոյական իրավունքը չունեն», «Արցախյան պատերազմի վետերանների միությունը պետք է լինի ուժեղ, նրա անդամներից յուրաքանչյուրը պետք է սատարի իր ընկերոջը և պահի ու պահպանի մեր պետությունը » (տե՛ս «10 րդ նահանգ› , 2000թ հունվարի 22)·

Սամվել Բաբայանի ելույթի հանրային արձագանքներն ու ներգործությու նը նրա չնվազող վարկանիշը հատկապես ԼՂՀ ԱԺ մոտալուտ ընտրությու ների կապակցությամբ ԼՂՀ գործող վարչակարգին դրդեցին արտակարգ միջոցներ ձեռնարկել 2000 թվականի փետրվարից ԼՂՀ ամբողջ տարածքով մեկ սկսեցին կազմավորվել բացահայտ հակա «Երկրապահ» ու հակաբաբա յանական կառույցներ որոնք անհապաղ պիտի միավորվեին «Արցախի պատերազմի վետերանների միություն» կոչվող հասարակական կազմակեր պության բայց փաստորեն զուտ քաղաքական նպատակներ բունող և օրվա իշխանության ապակառուցողական նկրտումներին ծառայող նախազահա մեկը տանիքի ներքո

Գերխնդիրը մեկն էր Կարծես արցախահայության, բանակի և տնտեսու թյան համար այլ լրջագույն մարտահրավերներ գոյություն չունեին: Ամեն գնով պետք էր ամրապնդել, ի հեճուկս բոլոր ջանքերի դեռևս խիստ խախուտ մնացող ներքին իշխանական հենադաշտը Սամվել Բաբայանի քաղաքական չեզոքացումը վերջապես և վերջնականապես ավարտելու նպատակով

Եվ այդպես էլ մինչև վերջ չհաջողված սցենարով հեպզիեպե բեմադրվում էր Սամվել Բաբայանին մեկուսացնելու եղերազավեշտ փորձախաղը Փորձ

www.a-pdf.com



որ պետք է կասեցներ Բաբայանի մասնակցությունը առաջիկա խորհրդարանական ընտրություններին: Փորձ որ վերաճեց ԼՂՀ նախագահի նկատմամբ «մարտի 22-ի մահափորձ» հորջորջված քրեական գործի

Մինչ այդ ԼՂՀ իրավապահ մարմինները բնականաբար իշխանության հրահանգով քրեական հետապնդում սկսեցին և գործեր հարուցեցին ԼՂՀ նախագահի ներքաղաքական ուղեգիծը մերժող մի խումբ ազատամարտիկների (Սասուն Աղաջանյան Արարատ Մուսայելյան և ուրիշներ) նկատմամբ

Մինչև Ազգային ժողովի 2000 թվականի ընտրությունները հաշված ամիսներ էին մնում Հրամանատարի հաղթանակն ընտրապայքարում կասկած չէր հարուցում նույնիսկ նախագահական ճամբարում: Իրավիճակը դառնում էր ավելի ու ավելի աննպաստ Ղուկասյանի և նրա համախոհների համար ինչից հետո «հանկարծ» ու... ընտրություններից մոտ 2 ամիս առաջ տեղի է ունենում «զինված հարձակում» ԼՂՀ նախագահի դեմ որի թելերը տանում էին դեպի տիրող վարչակարգի պայմաններում իր համար որևէ հեռանկար և այլընտրանք չտեսնող նշված խումբը Ո՞ւմ էր դա ձեռնտու Դժվար է ասել բայց միանշանակ ոչ Բաբայանին

Ըստ պաշտոնական վարկածի բազմափորձ երկու դաշտային հրամանատարներ 4 5 մետրից ոչ այն է 57, ոչ այն է 68 անգամ կրակել են Ղուկասյանի մեքենայի վրա և մեկ անգամ վիրավորել նրան... ոտքից Մինչ այդ պաշտոնական մեկնաբանություններում գերիշխում էր «սպայական հեղաշրջման» թեման որից սակայն հրաժարվեցին քանզի թուլամտության նման էր հիշեցնում այն բացատրությունը թե մի քանի հոգի որոշել են զավթել իշխանությունը բայց ձերբակալվել են սեփական բնակարաններում քնած վիճակում Այս անհեթեթությանը փոխարինեց մեկ այլ անմտություն «սպեցնազ»-ի հայտնի հրամանատարները ովքեր 500–600 մետրից մեկ կրակոցով ոչնչացնում էին քողարկված ադրբեջանական դիպուկահարներին հանկարծ վրիպել են 4–5 մետրից այն էլ 57 68 կրակոց արձակելով Դժվար է ասել, թե ում ուղեղում է ծնվել այս զառանցավարկածը և ում պետք է դա համոզեր սակայն փաստը մնում է փաստ հենց այդպես էին «պարզաբանում» կատարվածը իրավապահ մարմինները

Մի ուշագրավ իրողություն ԼՂՀ ներքին գործերի նախարարության առաջին հաղորդագրություններում հստակ ասվում էր որ դեպքի վայրից անհայտ ուղղությամբ հեռացել է առանց համարանիշի, սպիտակ գույնի «Ժիգուլի» մակնիշի մեքենան որն այնուհետև հայտարարվեց որպես գորշ գույնի «Մերսեդես»:

Հատկանշական նաև մի մանրամասնություն ՀՀ ազգային անվտանգության նախարարության հատուկ նշանակության զորամասի հրամանատարությունը հասկանալի է նույնքան հատուկ հրամանով վաղօրոք դեռ մինչ հիշյալ «մահափորձի» փաստը, պատժիչ խումբ էր պատրաստել և գործուղել Ստեփանակերտ· Նպատակը՝ «ամենաթարմ հետքերով» գիշերը Սամվել Բաբայանին տնից հանելը կալանելը և դատավարություններին ամբաստանյալի կարգավիճակով ներկայացնելը

www.a-pdf.com



Նույն գիշերն իր բնակարանում ձերբակալեցին և եղբորը Կարեն Բաբայանին, ով դեռևս 1998 թվականին ընտրվել էր Ստեփանակերտի քաղաքապետ: Բնորոշ է նաև այն փաստը որ լուրջ իրավական հիմքեր չկարողանալով գտնել նրան մեղադրելու քրեական գործը դատարան մտցնելու և օրենքով սահմանված միայն այդ կարգով նրան քաղաքապետի ընտրովի պաշտոնից հեռացնելու համար իշխանությունները շուրջ 1 5 տարի կալանած պահեցին վիրավոր ազատամարտիկ հրամանատարին նրան բանտարկությունից ազատեցին միայն եռամյա պաշտոնաժամկետի սպառվելուց հետո (2001 թվականի վերջ) Այդպես էլ առանց որևէ դատաքննության..

Գաղտնիք չէ որ յուրաքանչյուր երկրում նախագահի դեմ կազմակերպված մահափորձը լինի այն հաջողված կիսահաջողված թե ձախողված, ծանրագույն հանցագործություն է որը պատժվում է օրենքի ողջ խստությամբ. Ընդ որում ահաբեկիչների հետ որպես կանոն որոշակի պատասխանատվության են ենթարկվում նաև տվյալ երկրի իրավապահ մարմինների ղեկավարները ովքեր սպառիչ միջոցներ չեն ձեռնարկել թիվ մեկ պաշտոնյայի անվտանգությունն ապահովելու համար 2000 թվականի մարտի 22 ին տեղի ունեցած տարօրինակ ահաբեկչությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանի դեմ, թերևս զարմանացունց բացառություններից է մահափորձերի համաշխարհային պարեգրության մեջ Ուժային նախարարներից և ոչ մեկն այդպես էլ չպատժվեց Դեռ ավելին ԼՂՀ իրավապահ մարմինների անխտիր բոլոր ղեկավարները... արժանացել են պետական բարձր պարգևների կամ ավելի բարձր կոչումների՝ Պարգևատրվել են նրանք ովքեր ի պաշտոնե պարտավոր էին կանխարգելել զինված հարձակումը. Մինչդեռ եթե հավատանք պաշտոնական աղբյուրներին Արկադի Ղուկասյանն ու իր թիկնապահները «ծանր վիրավորվել» էին մահափորձի հետևանքով ու փրկվել էին միմիայն «երջանիկ պատահականությամբ»: Իսկ եթե հաշվի առնենք ԼՂՀ գլխավոր դատախազ Մավրիկ Ղուկասյանի հայտնի խոստովանությունը թե «իրենք տեղյակ էին» նախապատրաստվող հարձակման մասին ապա ղարաբաղյան իրավապահների մեղքը կատարվածում ակնհայտ է դառնում Այնուամենայնիվ նրանք չշնորհազրկվեցին

Այնինչ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաքում և շրջաններում ապօրինաբար ձերբակալվում են 206 քաղաքացիներ որոնցից միայն 16 հոգու նկատմամբ են տրվում դատախազության համապատասխան փաստաթղթային վավերացումները (թույլտվությունները) Բռնաճնշումների «իններորդ ալիքն» ընդգրկեց նաև մի խումբ հեղինակավոր ժողովրդի կողմից ընտրվելու ներուժակ հավակնորդների որոնց «պատժաժամկետը» կրկին հակաօրինական կերպով երկարաձգվում էր՝ Իշխանությունները նրանց բարեհաճեցին մեկուսարաններից ազատել միայն այն վերջին օրը 2000 թվականի ապրիլի 19 ին, երբ արդեն սպառվում էր ԼՂՀ ԱԺ պատգամավորության թեկնածու պաշտոնապես առաջադրվելու ժամկետը

Ձերբակալվածների մեծամասնությունը բանտերում ենթարկվում էր ծեծ ու ջարդի համապարած անթաքույց և անդադար փորձեր էին արվում ստի

www.a-pdf.com





Աղոթք առ Ա փված



Սամվել Բաբայանի ընտանիքը կինը Իրինան, փղան՝ Անդրանիկը, ավագ դուստրը՝ Աննան կրտսեր դուստրը Գայանէն

Սամվել Բաբայանը և Անդրանիկ որդին



www.a-pdf.com



պելու նրանց կեղծ ցուցմունքներ տալ Սամվել Բաբայանի դեմ Դեռևս նախաքննության առաջին օրերին, ԼՂՀ իշխանությունները, մասնավորապես ԼՂՀ գլխավոր դատախազ Մավրիկ Ղուկասյանը խախտելով անմեղության կանխավարկածը ԶԼՄ-ներով հանդես եկավ կատարված հանցագործության մեջ Բաբայանի այսպես կոչված «մասնակցությունը հաստատող հայտարարություններով: Հրապարակվել են քննությամբ լրիվ չստուգված տվյալներ նպատակ ունենալով այդ եղանակներով ազդելու վկաների և գործով մասնակիցների ազատ կամքի արտահայտման վրա Այդ նպատակին են ծառայել և կատարված զանգվածային ձերբակալությունները ինչի հետևանքով շատ արցախցիներ հայտնվեցին վախի ու սարսափի մթնոլորտում·



Սամվել Բաբայանը եղբոր՝ Կարենի հետ

Նման իրավիճակում ազգային հերոսը բանտում, 2000 թվականի հուլիսի 17 ին հացադուլ հայտարարելու որոշում է կայացնում բողոքելով բազմաթիվ ապօրինությունների դեմ և պահանջելով քրեական գործի դատաքննությունը հանձնարարել ՀՀ դատական ատյաններին

Բնականաբար չիրականացվեց դատաքննությունը ՀՀ ում անցկացնելու ՀՀ քաղաքացու օրինական պահանջը Ավելին պաշտոնական ԶԼՄ-ները խնամքով սկսեցին թաքցնել հասարակությունից անթույլատրելի այն իրողությունը որ Սամվել Բաբայանից առգրավվել է նրա ՀՀ քաղաքացու անձնագիրը: Փոխարենը սկսեցին սև քարոզչություն տարածել, թե Բաբայանն ամենևին էլ ՀՀ քաղաքացի ‹է զլանալով բացատրել հասարակությանը թե այդ ինչպես է ՀՀ նախագահն իր հրամանագրերով նշանակում և ազատում ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատարներին, եթե վերջիններս ՀՀ քաղաքացիներ չեն· Կամ եթե Պաշտպանության բանակի հրամանատարները ՀՀ քաղաքացի չեն այդ ինչպես են նրանց վստահվում ՀՀ քաղաքացի հանդիսացող հազարավոր զինծառայողների ճակատագրերը...

1999 թվականին ՀՀ ն և ԼՂՀ ն ստորագրել էին պայմանագիր, որով միևնույն իրավական տարածքում միասնականացվում էին դատական համակարգերը Ավելին Արցախում զինվորական համապատասխան գործերը պետք է քններ (և առ օրս քննում է) ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի (այժմ՝ ընդհանուր իրավասության) դատարանը: Այս ամենը սակայն մարտի 22 ի գործին չէր կարող վերաբերել. այդպես էին որոշել վերևներում:

Այնինչ «մարտի 22»-ի գործի հանգամանքները ուսումնասիրում էր ՀՀ և ԼՂՀ իրավապահների համատեղ խումբը Իսկ դատական այդ գործընթացը ՀՀ տեղափոխելն արդեն համարվում էր ԼՂՀ ներքին գործերին միջամտելու փորձ

www.a-pdf.com



Պետք է խոստովանել որ հակաբաբայանական քարոզչությունն իր ազդեցությունը հայկական հասարակության վրա դժբախտաբար գործում էր Ընդհանրապես իշխանություններն այդ օրերին սև «ագիտպրոպ» ին ու դեղին մամուլին մեծ տեղ էին հատկացնում Մարտի 21 ի լույս 22-ի գիշերը տեղի ունեցած միջադեպից անմիջապես հետո կայծակնային արագությամբ Ստեփանակերտ է մեկնում լրագրողական մի խումբ` Համլետ Ղուշչյանի գլխավորությամբ Մեկնելուց առաջ Ղուշչյանն իր հաղորդումներից մեկում անդրադառնալով տեղի ունեցածին ասել էր որ իբր թե հեռուստադիտող մի թոշակառու կին խնդրել է այդ կապակցությամբ մանրամասն տեղեկատվություն տրամադրել Եվ ահա թոշակառուի խնդրանքով Ստեփանակերտում հայտնված Ղուշչյանը մի քանի օրվա ընթացքում նկարահանում է Դժոխքի և դրախտի տիրակալը տեսաֆիլմը որտեղ Բաբայանը ներկայացվեց իբրև բռնապետ, իբրև իսկական հարստության տեր, իբրև ձախողված մահափորձի կազմակերպիչ Տեսաֆիլմը երևի նույն «թոշակառուի խնդրանքով», ցուցադրվեց մի քանի անգամ և ցուցադրվեց հատկապես ԼՂՀ պետական և ՀՀ հեռուստաալիքներով Այդպես էր պետք իշխանություններին, այդպես «շնորհակալություն» էր հայտնվում ազգային հերոսին. Տեսաֆիլմն արեց իր սև գործը իսկ տեսաֆիլմի հեղինակը որոշ ժամանակ անց հեռացավ Հայաստանից ու հաստատվեց Ռուսաստանում Միայն տարիներ անց Ղուշչյանը կվերադառնա 2006 թվականի մայիսի 15 ին կիրավիրի մամուլի ասուլիս ու հրապարակավ մեղա կգա

*«Երբ 2000 թվականի մարտի 22 ին ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի դեմ կազմակերպվեց մահափորձ, որում մեղադրվեց Արցախի Պաշտպանու-թյան բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանը, նկարահանեցի Դժոխքի և դրախտի տիրակալը» ֆիլմը, որի նպատակն էր փորձել պարզել թե ինչպիսի գործընթացներ էին նախորդել և հաջորդել այդ ժամանակահատվածում տեղի ունեցած իրադարձություններին*

*Երբ նկարահանվեց ֆիլմը, ես եթերից հայտարարեցի որ տեսաֆիլմում ցավոք տեղ չեն գտել Սամվել Բաբայանի կողմնակիցների կարծիքները, քանի որ հասկանալի պատճառով այն ժամանակ նման կարծիքներ արտահայտողներ չեղան*

*Ասեմ որ ֆիլմում իմ մտցրած փաստերը և օպերատիվ նկարահանումները մեզ էին տրամադրել ԼՂ ի իշխանությունները /դատախազություն. հատկային տեսչություն, Արցախի պետական հեռուստառադիոընկերություն/ և մեզ փաստորեն, մոլորության մեջ էին գցել Արցախի այն ժամանակվա իրավապահ կառույցների մի շարք պաշտոնյաներ անձամբ և հատկապես գլխավոր դատախազ Մավրիկ Ղուկասյանը.*

*Ֆիլմից հետո շատերը համոզված էին, որ Ս Բաբայանը և իր կողմնակիցները ստացել են արժանի պատիժ Բայց արդեն դատավարության ավարտից հետո հաշված ամիսներ անց սկսեցին ավելի ու ավելի հաճախակի կարծիքներ հնչել նաև այն մասին. որ գեներալի հանդեպ հարուցված քրեական գործը քաղաքական երանգ ունի Հետագա գործընթացները ցույց տվեցին ասվածի ճշմարտացիությունը.*

www.a-pdf.com



*Եվ ահա այդ չարաբաստիկ իրադարձություններից 4,5 տարի անց 2004 թվականի սեպտեմբերին, Սամվել Բաբայանն ազատվեց բանտարկությունից. Շուտով պարզվեց նաև, որ այն մեղադրանքները, որոնք ժամանակին հարուցվել էին քրեական այս գործի կապակցությամբ, մեղմ ասած չէին համապատասխանում իրողությանը.*

*Կուզենայի Ձեր ուշադրությանը ներկայացնել մի շարք փաստեր, որոնց ես անդրադարձել էի ֆիլմում: Վերջերս մեզ տրամադրված թիվ 12200800 քրեական գործի պատճենից պարզվում է, որ գեներալի հետ բացարձակապես կապ չունեն մեծ քանակությամբ մեքենաները, ոսկեղենը, ինչպես նաև այլ նյութական արժեքները, որոնք վերագրվում էին Սամվել Բաբայանին: Հատկապես ուռճացված են եղել մեզ տրամադրված տեսաժապավենում ներկայացված 80-ից ավելի անձնական մեքենաների քանակը, Ս. Բաբայանին պատկանող չգիտես որտեղից վերցված 3 000 000 (ԱՄՆ դոլար կազմող ծանոթ. գրքի հեղ.) ոսկեղենի և ադամանդների գումարի չափը, մինչդեռ ըստ թիվ 12200800 քրեական գործի պատճենի այդ ամենը չնչին քանակի է եղել: Ավելացնեմ նաև, որ այդ ոսկեղենի և զարդեղենի մեծ մասը գեներալին են նվիրել ԼՂՀ-ի նախկին և ներկա ղեկավարներից շատերը. Այսպես կարելի է շարունակել խեղաթյուրված փաստերի շարադրումը, որոնք, ինչպես ես ասացի, մեզ էին տրամադրել իրավապահ մարմինները, և որի համար եթերում նույնիսկ ժամանակին նրանց շնորհակալություն ենք հայտնել*

*Եվ հիմա այս նույն եթերից ուզում եմ ասել, որ ինչպես մեզ, ֆիլմը նկարահանող խմբի անդամներիս, այնպես էլ Ձեզ, բոլոր հեռուստադիտողներին, ժամանակին պարզապես կեղծ, սուտ և աղավաղված փաստարկներ են տրամադրել, որոնց հեղինակները, կրկնում եմ, եղել են Արցախի իրավապահ մարմինների ներկայացուցիչները՝ գլխավոր դատախազ Մավրիկ Ղուկասյանի գլխավորությամբ: Այժմ չեմ ուզում որևէ կարծիք հայտնել այդ անձանց վերաբերյալ, բայց ակնհայտ է, որ նրանց գործողություններում փաստերը խեղաթյուրելու միտում է եղել: Որոշումն իրենցն էր, և իրենց խղճին եմ թողնում այդ ամենը: Իսկ իմ լրագրողական էթիկան պահանջում է, որ ես նախ և առաջ ներողություն խնդրեմ Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանից և բոլոր այն հեռուստադիտողներից, ում մենք փաստորեն սխալ տեղեկություններ ենք ներկայացրել*

*Փառք Աստծո, որ այսօր Սամվել Բաբայանը ազատության մեջ է, և արդարությունը ինչ-որ չափով վերականգնված է: Եվս մեկ անգամ հայցում եմ Ձեր ներողամտությունը»*

*Համլետ Ղուշյան*



www.a-pdf.com



*Այս համատեքստում հատուկ հնչեղություն է ստանում Սամվել Բաբայանի փաստաբան Ժուդեքս Շաքարյանի «Բաց նամակ-հարցադրումը ԼՂՀ նախագահ Ա Ղուկասյանին» ( «Հառաջ» թերթ Փարիզ, 2001 թ մայիսի 11) որն ունի սուր հռետորական բնույթ՝ ինքնին պարունակելով ատարկայական պատասխաններ*

*«Հարգարժան պարոն նախագահ*

*Ինձ հայտնի է դարձել որ պատրաստակամություն եք հայտնել Փարիզում մայիսի 12 ին, «Այր» ձայնասփյուռից պատասխանելու ունկնդիրների հարցերին : Ու թեև ինձ բախտ չվիճակվեց Ստեփանակերտում շուրջ յոթ ամիսների ընթացքում արժանանալու Ձեր ընդունելությանը, սակայն այսօր հուսով եմ, որ ուրիշների կարգին կպատասխանեք նաև ինձ, ապահովաբար մեր հայրենակիցներին ևս հետաքրքրող ներքոհիշյալ հարցերին կապված 2000 թ մարտի 22 ի դեպքերին.*

*1 Ճիշտ է որ ԼՂՀ նախագահի ընտրվելուն Ձեզ աջակցել է Սամվել Բաբայանը, որի հետ ունեցել եք պետության կայացման, ամրապնդման ու հզորացման միասնական նպատակներ.*

*2 Ճի՞շտ է որ նախագահի ընտրվելուց հետո Ս Բաբայանին առաջարկել եք վարչապետի պաշտոնը, և նա հրաժարվել է*

*3 Եթե Ս Բաբայանը նպատակ ուներ Ձեր նկատմամբ ‹ կազմակերպած ահաբեկության միջոցով զավթելու իշխանությունը, ապա. լինելով հաղթական բանակի հիմնադիրն ու հրամանատարը և ինչպես նշված է դատավճռում, «ունենալով հանրապետության քաղաքական, հասարակական և ընտրական դաշտերում դիրք ու ազդեցություն», երբևէ խորհե՞լ եք թե ինչու նա չօգտագործեց իր հնարավորությունները խաղաղ ճանապարհով Ձեզ իշխանությունից հեռացնելու համար:*

*4 Ձե՞ք խորհել երբևէ թե ինչու Ղարաբաղի անկախությանը ձեր երկու նվիրյալների միջև ազգակործան պառաձայնություններ առաջ եկան, և ու՞մ էր դա ձեռնտու Ձե՞ք կարծում, որ Ձեր և Ս Բաբայանի միջև առճակատումը մեղմելու և հետագա, արդեն իրողություն դարձած հետևանքները կանխելու առումով Դուք նույնպես ունեցած եք Ձեր բարոյական պարտքը.*

*5 2000 թ մարտի 22 ի գործով տուժող էիք ունեիք գործի ինչպես նախաքննությանը, այնպես էլ դատաքննությանը ակտիվ մասնակցության օրենքով երաշխավորված իրավունքներ. այսուհանդերձ անեն առիթով հայտարարում էիք, որ չեք միջամտում գործի քննությանը. Արդյոք այդ առերևույթ «չեզոքությունը» նպատակ չէ՞ր հետապնդում քննության ընթացքում գործադրված բռնությունների խոշտանգումների միջոցով ապացույցներ սարքելու օրինականության բազմաթիվ խախտումների համար, որպես օրինականության երաշխավոր, հեռու մնալու առնվազն բարոյական պատասխանատվությունից.*

*6 Դատաքննության ընթացքում բոլոր 16 ամբաստանյալները*

*հայտարարեցին, որ նախաքննության ժամանակ ենթարկվել են ծեծի ու խոշտանգումների: Դուք որպես գործով դատող ծանոթ լինելով բոլոր տվյալներին, ինչու՞ հանդես չեկաք կամ գոնե չպաշտպանեցիք պաշտպանական կողմի միջնորդությունները նշված փաստերը ստուգելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար քրեական գործ հարուցելու մասին: Անընդունելի չէ՞ք համարում, որ դատարանն ընդհանրապես քննության առարկա չդարձրեց մեր այդ միջնորդությունները.*

*7 Մամուլից հայտնի է, որ տարբեր առիթներով հայտարարել էիք, թե կցանկանայիք, որ Ս. Բաբայանը չլիներ Ձեր դեմ կատարված ահաբեկչության կազմակերպիչը: Եթե իրոք այդպես էր, ապա գոնե որպես դատող, ինչու՞ չնպաստեցիք օբյեկտիվ ճշմարտության բացահայտմանը.*

*Նրանք, ովքեր Ս. Բաբայանի դեմ մեղադրող ցուցմունք են տվել, դատարանում հրաժարվել են բռնության և խոշտանգումի միջոցով իրենցից կորզված այդ ցուցմունքներից: Սակայն դատարանը, առանց պատճառաբանության, հաշվի չառավ դատաքննության արդյունքները. Նշված փաստերը հիմք չէի՞ն տալիս եզրակացնելու, որ Ս. Բաբայանին մեղավոր ճանաչելը կանխորոշված էր.*

*8 Պարոն նախագահ, եթե հավատում եք դատարանի կողմից Ս. Բաբայանի նկատմամբ իրականացված «արդարադատությանը», ինչու չեք կանխում Ձեր շրջանակի անձանց սադրիչ հայտարարությունները, որոնք դատավճռի նկատմամբ կասկածները կապում են Ղարաբաղի հարցի լուծման հետ (վերջերս «Արցախի պատերազմի վետերանների» և այլոց հայտարարությունները) և այդ եղանակով փորձում լռեցնել անարդարությունների դեմ հանդես եկող հասարակության առողջ ուժերին.*

*9 Պարոն նախագահ, Ձեզ հայտնի է, որ դեռևս 1991 թ. ազերիների կողմից ձերբակալվելու, Շուշիի և Բաքվի բանտերում շուրջ յոթ ամիս կալանքի տակ գտնվելու ընթացքում Ս. Բաբայանը ձեռք էր բերել թոքերի բորբոքում, հիվանդություն, որը զգացնել տվեց ԿԳԲ-ի բանտում. Այսօր Ս. Բաբայանը կրկին Շուշիի բանտում է և չկատարված հանցագործության համար մնալու է 14 տարի, հատուկ խստացված ռեժիմով: Հոռեգույն պարագային արդյո՞ք կկարողանաք անկեղծորեն հայտարարել, թե բարոյական պատասխանատվություն չեք կրում Ս. Բաբայանի կյանքի ու առողջության համար.*

*Շնորհակալությամբ Ժուդեքս Շաքարյան*
*Փարիզ»*

Իսկ մինչ այդ ապօրինաբար հարուցված քրեական գործերը կեղծ հիմնավորումներով հանձնում են ԼՂՀ դատարաններին: Մարդկանց դատում էին 3 պետական սուբյեկտների քրեական օրենսգրքերով, ըստ որում այդ

սուբյեկտներից երկուսը արդեն գոյություն չունեին Խոսքը Ադրբեջանական ԽՍՀ և ԽՍՀՄ օրենսգրքերի (1961թ ) մասին է որոնցով դատվել են ձերբա կալվածները. Ուշագրավն այն է որ ԼՂՀ դատավորներից շատերը հրաժարվել են Սամվել Բաբայանին և նրա կողմնակիցներին դատելուց քաջ գիտակցե լով որ վերջում քավության նոխազներ են դառնալու. Իսկ Բաբայանին համա ձայնել է դատելու Սուրեն Ալեքսանյանը ովև դատավարության ընթացքում խախտել է հնարավոր և անհնար բոլոր օրենքները

Բայց նախ ո վ էր դատավոր Սուրեն Ալեքսանյանը Տարիներ առաջ երբ ԼՂՀ նախագահը դեռ Ռոբերտ Քոչարյանն էր ԼՂՀ ԱԺ ի հաստատմանն էին ներկայացված դատավորների մի շարք թեկնածություններ որոնց մեջ էր նաև Ալեքսանյանը Սույն պաշտոնի թեկնածության դեմ այդ ժամանակ հանդես էր եկել Սամվել Բաբայանը այն լրջագույն հիմնավորմամբ որ Ալեքսանյանը ժամանակին հոգեկան խանգարումներ է ունեցել և բուժվել ՀՀ հոգեբուժարանում: Ինքնին հասկանալի է որ նման անձնավորությանը չէր կարելի թույլ տալ տնօրինել մարդկանց ճակատագրերը Այն ժամանակ Ալեքսանյանի թեկնածությունը ‹հաստատվեց Սակայն տարիներ անց ար դեն «մարտի 22»-ի գործով ԼՂՀ իշխանությունները չգտնելով ոչ մի հավա սարակշիռ ու մեղսունակ դատավորի ով կստանձներ նման սարքված գործի վարույթը վաղուց թոշակի անցած դատավորին հետ են կանչում և վստա հում սույն գործը Դա դեռ քիչ էր իշխանությունները Սամվել Բաբայանի դատը կազմակերպեցին պարզապես գոյություն չունեցող դատարանում Բանն այն է. որ 1999 թվականի դեկտեմբերի 31 ին ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը ստորագրել էր «Դատարանակազմության մասին› ԼՂՀ օրեն քը, որով ԼՂՀ դատական համակարգը փաստորեն համապատասխանեց վում էր ՀՀ դատական եռաստիճան համակարգին Օրենքն ուժի մեջ էր մտել դեռևս 2000 թվականի հունվարի 1 ից Այնինչ Սամվել Բաբայանին որոշեցին դատել հին օրենսդրությամբ սահմանված մի դատարանում որը և վճռի կայացումից անմիջապես հետո դադարեց գոյություն ունենալ իսկ «դատա վոր» Ալեքսանյանին իշխանությունները կրկին ուղարկեցին թոշակի ԼՂՀ





Իմ վերջին խոսքը թող ասի հայ ժողո վուրդը...». Աջից դատապաշտ պան Ժուդեքս Ծա քարյանը

www.a-pdf.com



նախագահի վավերացրած օրենքը խախտվեց ոչ միայն Սամվել Բաբայանի այլև մյուս դատապարտյալների գործերում

2000 թվականի սեպտեմբերի 18-ին սկսվեց դատավարությունը Ճակատագրի հեգնանքով դատարանի շենքը գտնվում էր Ազատամարտիկների փողոցում: Դատարանն աշխատում էր ստալինյան ժամանակների՝ «ինքնախոստովանական ցուցմունքը ապացույցների թագուհին է» սկզբունքով: Ծեծի խոշտանգումների ժամանակակից մեթոդներով ցուցմունք կորզելն ավելի հեշտ էր, քան ապացույցներով մեղադրանք հիմնավորելը Այդ օրերին ԼՂՀ մայրաքաղաք այցելած Ռուսաստանի Դաշնության «Էքստրեմալ լրագրության կենտրոնի» տնօրեն ռուս իրավապաշտպան Օլեգ Պանֆիլովը, ով հանրությանը հայտնի է որպես ազգամիջյան հակամարտությունների խնդիրներում մասնագիտացած փորձագետ հայկական լրատվամիջոցներին ասել է հետևյալը ‹Մեզ հաջողվեց զրուցել ԼՂ պաշտպանության նախկին նախարարի դատաքննությունը վարող Սուրեն Ալեքսանյանի հետ Սահմռկեցուցիչ անձնավորություն է խորհրդային ժամանակներից մնացած ինչ-որ բոլշևիկյան վերապրուկ Իմ այն հարցին, թե «ի՞նչ օրենսդրությամբ եք առաջնորդվում դատական գործընթացում», նա միանգամայն անհոդդողդ կերպով պատասխանեց թե ղարաբաղյան դատարանները ղեկավարվում են Ադրբեջանական ԽՍՀ, Խորհրդային Միության, այսինքն գոյություն չունեցող պետությունների քրեական օրենսգրքերով Ես պարզապես ցնցված եմ նման խայտառակության ԱՊՀ որևէ երկրում չեմ հանդիպել»

Գերմանացի գրող Էրիխ Մարիա Ռեմարկը (1898–1970) մի առիթով նկատել է. «Պատերազմի հերոսները պետք է զոհվեն պատերազմի դաշտում, հակառակ դեպքում նրանք անտանելի են դառնում». Հերոսների նկատմամբ իմաստազուրկ թվացող այդ դաժան հաշվեհարդարներն ունեն զարմանալիորեն պարզունակ տրամաբանություն «առաջին դեմքերին» պետք չեն նոր «առաջին դեմքեր› հատկապես պատերազմում հաղթանակած և ժողովրդի կողմից փառաբանված Ողբերգականն ու միաժամանակ զավեշտականն այս անարդարության մեջ այն են որ հենց նույն զորավարներն են օգնել «առաջիններին» առաջինը դառնալու գործընթացում Թերևս հենց այդ ընտրապայքարներում ցույց տրված օժանդակության դիմաց իշխանությունների վրեժխնդրությունն այն աստիճանի հասավ որ քրեական գործեր հարուցվեցին նույնիսկ զորահրամանատարի տիկնոջ ինչպես նշեցինք եղբոր, առհասարակ Բաբայանների գերդաստանի արական սեռի գրեթե բոլոր ներկայացուցիչների նկատմամբ: Հաղթողներին դատում են այն էլ՝ ինչպե ս

‹Իմ վերջին խոսքը թող ասի հայ ժողովուրդը» տխուր քմծիծաղով ասաց Սամվել Բաբայանը դատավճիռը լսելուց առաջ. 14 տարվա ազատազրկում Պատիժը պետք է կրեր Շուշիում առողջությունը քայքայող խստակարգով («փակ ռեժիմով») մի քաղաքում որն ազատագրված է նաև նրա նվիրվածության ու ռազմական հնարամտության շնորհիվ:

Ի դեպ՝ իշխանական պատվերով, դատավճռում իբրև վարկաբեկիչ առաջարկ մի հատուկ դրույթ արձանագրվեց Սամվել Բաբայանին գեներալի զին

www.a-pdf.com



վորական կոչումից և ԼՂՀ բարձրագույն կոչումից զրկելու վերաբերյալ ինչը պեղիք պվեց մինչև օրս հանիրավի պարածում գպած թյուրիմացության իրա կանում այդ դրույթն այդպես էլ մնաց թղթի վրա որպես Սամվել Բաբայանի ‹ պաշպոնական դապավարության» հավելյալ խայպառակություն Իրակա նում ՀՀ և ԼՂՀ նախագահները ձեռնպահ մնացին սույն պխրահռչակ դրույթը կիրարկելուց Սամվել Բաբայանը եղել է ու մնում է Արցախի թիվ մեկ հերո սը գեներալ-լեյպենանպ

Այլևս կարծում ենք ընթերցողի համար պարզ է թե ինչու ԼՂՀ իշխանու թյունները «հանկարծ» որոշեցին, թե նախագահի դեմ մահափորձը «պեպք է որ կազմակերպած լիներ» Պաշպպանության բանակի նախկին հրամանապա րը, ում հաղթանակը համապեպական ընպրություններում կասկած չէր հարու ցում· Ինչո՞ւ ԼՂՀ իրավապահների կողմից ընդունվեց միայն այդ վարկածը մանավանդ որ Սամվել Բաբայանի առնչությունը մարպի 22 ի միջադեպին ոչ մի կերպ չէր հասպապվում ո՛չ նախաքննության ոչ էլ դապավարության ըն թացքում: Պարզ է նաև, թե ինչով պեպք է բացապրել ազգային հերոսի մինչ այդ պեղի ունեցած պաշպոնանկությունը ընդդեմ նրա իշխանությունների որդեգրած բազմամյա ու ակնհայպորեն սադրիչ գործողությունները որոնց երիպասարդ գեներալը պապասխանում էր սառնասիրպ լռությամբ Ինչո՞ւ ընդհանրապես փոխվեց իշխանությունների վերաբերմունքը մինչ այդ պաշ պոնապես փառաբանվող հրամանապարի հանդեպ ով կանգնած էր ԼՂՀ բա նակի սպեղծման ակունքներում և փայլուն հաղթանակներ էր պարել հակա ռակորդի դեմ ազգային ազապագրական պապերազմում

Գուցե ճիշպ է ասել գերմանացի փիլիսոփա Գեորգ Հեգելը (1770–1831) նման առնչությամբ. «Հզոր անհապները երբեք երջանիկ չեն նրանք մշպապես ունենում են դժվարին կյանք նրանց կամ սպանում են, կամ աքսորում»

Սամվել Բաբայանի ապօրինի ձերբակալումից ու բռնադապման սկզբից ևեթ օրինական բողոքի և ընդվզման հուժկու ալիք բարձրացավ Արցախում ՀՀ-ում և Սփյուռքում. հազարավոր ազապամարպիկներ ռազմական պեպա կան քաղաքական կուսակցական գործիչներ լրագրողներ պարասպիճան կրթական հասպապությունների մանկավարժներ ուսանողներ և առվորողներ այլևայլ մպավորականներ հանրության ամենապարբեր խավերի ներկայա ցուցիչներ բազմաթիվ ու բազմաբնույթ հրապարակային միջոցառումներով և ինքնաբուխ հանրային դրսևորումներով (կազմակերպված ու պարերային սպորագրահավաքներ հանրագրեր դիմում-բողոքներ ցույցեր երթեր, հան րահավաքներ համաժողովներ, մամուլի ասուլիսներ «կլոր սեղաններ» մեր հայրենիքի և արպասահմանյան զանգվածային լրապվամիջոցներով ըսպ կարելվույն սփռվող ու պարածվող բազմաժանր նյութեր) պահանջում էին օրի նական և արդար վերաբերմունք ազգային հերոսի նկապմամբ: Տիպական ու ցուցանշական է Մոսկվայում գործող «Արարապ» հայ մշակութալուսավորչա կան միության (խորհրդի նախագահ Էմանուել Դոլբակյան) դիմումը 10 09 2000թ հ.27/2) ՀՀ նախագահ Ռոբերպ Քոչարյանին և ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանին որպեղ նշվում էր « *Մոսկվայի և Ռուսասպանի հայ*

www.a-pdf.com



Մոսկվայի «Արարատ» հայ մշակութային սալոն-ակումբ միություն

*հանրությունը հայտնվեց զգացմունքների լիակատար խառնակի մեջ: Ադրբե-ջանական ակցիա՞ ԼՂՀ նախագահի դեմ մահափորձի կազմակերպմանը մաս նակցելու մեջ կասկածով ձերբակալվեց Արցախի հերոս, համայն հայ ժո ղովրդի հերոս Սամվել Բաբայանը. Ինչեր միայն չեն լինում՝ դառնությամբ մտածեցին հայերը, ովքեր տեսել էին նախկին կռիվների և ոչ այդպիսի կերպափոխություններ: Գործի բոլոր հանգամանքների մանրակրկիտ հետաքննությունը և հետագա արդար դատավարությունը ամեն ինչ և բոլորին իրենց տեղը կդնեն, մտածեցինք մենք ինչպես, ասենք և ողջ հայ ժո-ղովուրդն ի սփյուռս աշխարհի:*

*Սակայն մեզ տարբեր խողովակներով տեղեկատվություն է հասնում այն անիրավությունների մասին, որ կատարվում են նախաքննության մարմինների կողմից քննենթակաների և առաջին հերթին, Սամվել Բաբայանի նկատմամբ: Խոսվում և գրվում է ապօրինի զանգվածային կալանումների, քննենթակաների պաշտպանության իրավունքների խախտումների, ծայրահեղ հակասանիտարական պայմաններում նրանց պահելու, Սամվել Բաբայանի մյուս մեղադրյալների հանդեպ ներգործության ֆիզիկական միջոցների կիրառման մասին: Խոսվում և գրվում է Սամվել Բաբայանի ընտանիքի անդամների, ազգականների նկատմամբ բռնաճնշիչ միջոցառումների վերա բերյալ և այլն, և այլն: Կարճ ասած Մայր Հայրենիքի, ողջ հայ ժողովրդի հե րոսական արցախյան շարժման ավելի մեծ վարկաբեկման մասին մեր թշնա միները չէին էլ կարող երազել:*

*Մենք Մոսկվայի հայ մտավորականության ներկայացուցիչներս. դիմում ենք ձեզ ՀՀ և ԼՂՀ խորհրդի նախագահներին, որ անձնավորում եք հայոց պետականության առթիվ իրականացած դարավոր երազանքը, խնդրելով միջամտել լինել այդ դատական գործին, որպեսզի դառնաք հետաքննության և հետագա դատավարության արդարացի անցկացման երաշխավորներ արդի հանրության մարդասիրական ավանդույթների շրջանակներում, մարդու բոլոր իրավունքների լիակատար պահպանմամբ*

*Դրա արձագանքը, առանց չափազանցության, վիթխարի կլինի և կծառա լի ողջ աշխարհում մեր ժողովրդի և մեր պետականության հիմնավորապես սասանված հարգ ու փառքի ամրապնդմանը»*

*«Արարատ հայ մշակութալուսավորչական միություն (թարգմանություն ռուսերենից)*

2000 թվականի վերջին 2001 թվականի սկզբին կազմավորվեց և սկսեց գործունեություն ծավալել *«Սամվել Բաբայանի պաշտպանության մարտա կան ընկերների կոմիտեն»..*

2001 թվականի հոկտեմբերի 5 ին Երևանի ուռուցքաբանության գիտա կան կենտրոնում վախճանվեց ազգային հերոս Սամվել Բաբայանի 67 ամյա հայրը Անդրանիկ Բաբայանը՝ Առողջական վիճակը կտրուկ վատացել էր երբ անօրինական հետապնդումների էր ենթարկվել իր գրեթե ողջ գերդաստանը

1991 թվականին Շուշիի ապա Բաքվի բանտերում անցկացրած դժոխաժամանակն անհետևանք չէր անցել Լրջորեն խաթարվել էր նաև Սամվել Բաբայանի առողջությունը: 2000 թվականի մարտի 22-ից հետո սահ մանված խիստ ռեժիմն առավել սրեց առողջական խնդիրները՝ Շուրջ 4,5 տա րի ամեն օր հրամանատարը պայքարում էր պայքար այս անգամ բարբական գոյատևման համար Պարբերաբար ժամանող բժշկական հանձ նաժողովների եզրակացությունները գնալով դառնում էին առավել մտահո գիչ... Ի վերջո ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի 2004 թվականի սեպտեմ բերի 17-ի «ներման» հրամանագրով Սամվել Բաբայանն ազատվեց բանտար գելությունից ինչպես իրենք են ձևակերպել՝ «հաշվի առնելով Լեռնային



Դաշինք» կուսակ ցության հիմնադիր համագումարը. կենտրոնում՝ կու սակցության նախա գահ Սամվել Բաբա յան, քաղխորհրդի անդամներ Գնել Ղլե չյան (ձախից), Անդ րանիկ Թևանյան

Ելույթ է ունենում ՀՌԱԿ-ի ատենապետ Հարություն Առաքելյանը



Ելույթ է ունենո մ ‹Ազգային վերածնունդ» կուսակցության նախագահ Ալբերտ Բազեյանը



Լրագրողներին պատասխանում են երեք կուսակցությունների՝ ‹Դաշինքի», ՀՌԱԿ-ի, «Ազգային վերածնունդի» առաջնորդները



www.a-pdf.com



Ղարաբաղի Հանրապետությանը մատուցած նրա ծառայությունները› մինչ դեռ եթե նկատի ունենանք որ իրականում սպասում էին զորահրամանատարի մահվանը պարզ կդառնան իրենց ողջ երեսպաշտությունն ու փարիսեցիությունը Ըստ որում ճշմարտությունն ու արդարությունը պարտադրում են բացահայտել որ Սամվել Բաբայանը սահմանված կարգով ներում չէր էլ խնդրել քանզի իր անօրեն դատապարտման հարցում որևէ մեղսաբաժին ուներ ինչի համար զղջար

Փաստը մնում է փաստ որ Բաբայանը բանտարգելությունից ազատվել է բժշկական հանձնաժողովի (նախագահ ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր գաստրոէնտերոլոգ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Էդուարդ Գրիգորյան) մասնագիտական եզրակացության հիման վրա

Բանտարգելությունից հետո Բաբայանն անմիջապես տեղափոխվում է Երևան Ողջ հասարակությունն ակնկալում էր, որ շուտով նախկին հրամանատարը մերկացնող ու պսակազերծող հայտարարություններով հանդես կգա սակայն խոսքի փոխարեն ինչպես միշտ գործն էր նրան հոգեհարազատ Արդեն 2004 թվականի նոյեմբերին Բաբայանը Երևանում հիմնադրում է «Խաչ մերուկ» տեղեկատվավերլուծական կենտրոնը Նպատակը մեկն էր լրացնել տևական բանտարգելության հետևանքով առաջացած տեղեկատվության պակասը Կատարելով առաջին խնդիրը Բաբայանը շուտով ձեռնամուխ է լինում քաղաքական դաշտ վերադառնալուն և սկսում եռանդուն աշխատանքներ նոր կուսակցություն ստեղծելու նպատակով

2005 թվականի նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության նիստերի մեծ դահլիճում կայացավ «Դաշինք» կուսակցության հիմնադիր համագումարը

Համագումարի ամբիոնից Սամվել Բաբայանը ի թիվս կուսակցության առաջնահերթ ռազմավարական ու մարտավարական խնդիրների ազդարարեց Հայաստանի իրապես գործող ու չգործող կուսակցությունների բազմաքանակությամբ կոտորակված քաղաքական դաշտը բարեփոխելու մտադրությունների մասին նախ և առաջ համահունչ գաղափարներ ու ծրագրեր որդեգրած կուսակցությունների խոշորացման ճանապարհով: Այս տեսանկյունից հույժ խորհրդանշական էր արդեն իսկ իր հիմնած կուսակցության անվանման բազմիցս տարփողված իմաստը դաշինք ժողովրդի հետ դաշինք գաղափարակից նպատակամերձ քաղաքական ուժերի ու քաղաքացիների հետ Եվ այդ կարգախոսը հռչակող կուսակցությամբ ՀՀ Ազգային ժողովի 2007 թվականի մայիսի 12-ի ընտրություններին նախապատրաստվելուց և մասնակցելուց թե առաջ թե՛ հետո Բաբայանը հետևողականորեն ընդհանուր եզրեր էր փնտրում համապատասխան գործընկերների ներգրավում երկրի քաղաքական դաշտում համախմբիչ նպատակներն էացնելու համար

Իր էությամբ ներքին և արտաքին քաղաքականությանն ու տնտեսությանն առնչվող հայացքներով լինելով ազգային ազատական ժողովրդավարական արժեքների դավանորդ Բաբայանը չէր կարող ամենից առաջ իր ուշադրության և առողջարար հավակնությունների կիզակենտրոնում չպահել Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցությունը (ՀՌԱԿ)· Ժառան

www.a-pdf.com



գործը և իրավահաջորդը Հայաստանի Հանրապետությունում մի ազգային քաղաքական կազմակերպության որն ունի 123-ամյա նույնանուն ավան դույթներ և կառույցների լայն ցանց էր ստեղծել Սփյուռքում նշանակալի ավանդ մուծելով համազգային կարևորագույն խնդիրների արծարծման և իրագործման հայության բոլոր հատվածների ու խավերի միաբանման ընդհանուր ազգապահպանման և ազգազարթոնքի գանձանակում Մասնա վորաբար արժեքավոր են ռամկավարների դերն ու բաժինը արցախյան շարժման ողջ ընթացքում, մարտնչող Արցախին նյութական և այլ տեսակի օգնություններ կապի արդիական միջոցներ հատկացնելու գործում

Սրանք լրացուցիչ բայց ոչ պակաս ծանրակշիռ ազդակներ էին որ օրգա նապես ներգծվում էին համազգային կարգաչափեր ենթադրող բաբայանա կան իղձերի և ձգտումների շրջածիրում

ՀՀ ԱԺ ընտրությունների նախաշեմին հեռագնա գործակցություն հաս տատվեց ՀՌԱԿ ի հետ: 2007 թվականի փետրվարի 4-ին տեղի ունեցած ՀՌԱԿ ի 14 րդ համագումարը որոշում կայացրեց կուսակցության անդամնե րի քվեները նշված ընտրություններում տալ ‹Դաշինք» կուսակցության համամասնական ցուցակի օգտին Այդուհետև ՀՌԱԿ ի ատենապետ և Ռամկավար Ազատական Կուսակցության կենտրոնական վարչության անդամ Հարություն Առաքելյանն ընդգրկվեց «Դաշինք» կուսակցության համամասնական ցուցակում

Ընտրություններից հետո վերոնշյալ արժեքների ու քաղաքական տեսակետ սական գաղափարների շուրջ մեկ ընդհանուր կազմակերպության դրոշի ներքո համախմբվելու պայմանավորվածություն ձեռք բերվեց նաև Սամվել Բաբայանի մարտական ընկեր «Նիկոլ Դուման› կամավորական ջոկատի հիմնադիր հրամանատար «Ազգային վերածնունդ» կուսակցության նախա գահ մանկավարժական գիտությունների թեկնածու պահեստազորի գնդապետ Ալբերտ Բազեյանի ու նրա կուսակիցների հետ (ի դեպ համապա տասխան բանակցությունները դարձյալ սկսվել էին դեռ նախընտրական փուլում)

Եվ ահա 2007 թվականի նոյեմբերի 24 ին կայացած «Դաշինք» կո սակցության 2 րդ համագումարով սկզբնավորվեց նոր ուղենիշ երկրի քաղա քական կյանքում կուսակցությունների միավորում «Դաշինքը» պաշտոնա կան որոշում հրապարակեց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վերակազմակերպման միջոցով ՀՌԱԿ ին միավորվելու վերաբերյալ

2007 թվականի դեկտեմբերի 5 ին իր համագումարում համանման որո շում կայացրեց նաև «Ազգային վերածնունդ» կուսակցությունը

ՀՀ պետական ռեգիստրի 2008 թվականի մարտի 13 ի գրանցման վկայա կանով Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցությունը «Դաշինք և ‹ Ազգային վերածնունդ» կուսակցությունների իրավահաջորդն է

Գաղափարական հենքի վրա ՀՀ քաղաքական ուժերի համախմբման լիահույս ենք նաև հիշյալ փաստերի շնորհիվ ազգայի՛ն համախմբման գործընթացը շարունակվում է

www.a-pdf.com

# ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԸՆՏՐԱՆԻ



www.a-pdf.com


## ԲԱՆԱԿԸ ՄԵՐ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԵՐԱՇԽԻՔՆ Է

**(Սամվել Բաբայան)**

Հարցազրույցը ԼՂՀ լրատվության և մամուլի
դեպարտամենտի ղեկավար Մաքսիմ Հովհաննիսյանի
Մարտիկ թիվ 33 հոկտեմբեր 1993թ

**– Սկսենք այս հարցազրույցի ամենակարևոր հարցից մենք բանակ ու նե նք թե՛ ոչ**

Ունենք Իր բոլոր անկատարություններով հանդերձ հանրապետու թյունն այսօր ունի կանոնավոր բանակ· Այն ի վիճակի է թշնամու ներխուժում ներից պաշտպանելու մեր սահմանները ապահովելու մարդկանց խաղաղ աշ խատանքը. Ավելին եթե անվտանգության ապահովման համար հարկ լինի թշնամուն հարվածել նրա իսկ տարածքում մեր բանակը կարող է կատարել նման առաջադրանք

**– Ինչպե՞ս ծնվեց կանոնավոր բանակ ստեղծելու գաղափարը.**

Դեռևս այն ժամանակ երբ ազատագրեցինք Շուշին և բացեցինք Լաչինի միջանցքը զգում էինք որ ռազմական հաջողությունը պահպանելու համար պետք է ստեղծել կանոնավոր բանակ Շատերը այս մտքին համաձայնում էին բայց կոնկրետ քայլեր չէին անում. Թերևս այստեղ էլ թույլ տրվեցին բացթո ղումներ Հետո սկսվեց անհաջողությունների ծանր շրջանը Շահումյանը հանձնեցինք ապա Մարտակերտի շրջանի մեծ մասը Շատերը կորցրին հա վատը մեր ուժերի նկատմամբ Հուսալքությունը դարձավ մեր ամենամեծ թշնամին

Անհաջողությունների զոհին հաղթահարելու համար անհրաժեշտ էր թշնա մուն վճռական հակահարված տալ Դա հնարավոր էր միայն լավ պատրաստ ված կանոնավոր բանակի ուժերով որը մենք չունեինք

**– Այն կարծիքն է իշխում որ Լաչինի միջանցքի բացումով ֆիդայական կռիվը սպառեց իրեն**

Երբ այսօրվա դիտակետով մեկ երկու տարով հետ եմ վերադառնում ինձ թվում է որ կանոնավոր բանակ ստեղծելը պետք է սկսեինք 1991թ օգոստո սյան իրադարձություններից հետո երբ նախկին խորհրդային զորքերն ար դեն հոկտեմբերի վերջերին հեռացան Լեռնային Ղարաբաղից և մենք կանգ նեցինք ադրբեջանական կազմավորված զորամիավորումների դեմ դիմաց Իհարկե. անցյալը ներկայիս աչքերով գնահատելը հեշտ է բայց այն ժամա նակ մենք պարտիզանական ընդհատակյա վիճակից նոր էինք դուրս եկել սա ֆոնովյան ռեժիմի աքցաններից նոր էինք ազատվում Ռուսական բառով ասած ամեն ինչ անում էինք «նախադոն»

www.a-pdf.com



**– Ըստ երևույթին, միշտ չէ, որ «ուշ լինի նուշ լինի»-ն ճիշտ է Մենք վերապրեցինք 1992 թ հունիսի 12-ը· Դա արցախյան գոյամարտի սև օրերից մեկն էր.**

Ծանր է վերհիշելը մենք մեծ կորուստներ ունեցանք Քաղաքական խնդիրները մի կողմ դնենք մեր անհաջողությունների գլխավոր պատճառը համարում եմ այն, որ չունեցանք բանակ որ կարողանար դիմակայել թշնամո գերակշռող ուժին· Խանգարող հանգամանքները շատ էին թերևս այդ մասին մեկ ուրիշ առիթով կխոսվի

Անցյալ տարի երբ հանձնեցինք ռազմական կարևոր նշանակություն ունեցող Չլդրանը, և թվում էր, Խաչենի կամուրջը գրավելով, թշնամու տանկերի շարասյունը կարող է ազատ շարժվել դեպի Ստեփանակերտ մենք ամբողջ ծանրությամբ ու լրջությամբ հասկացանք որ միայն կանոնավոր բանակը կարող է հայրենիքը փրկել:

**Ուրեմն պետք էր ֆիդայական խմբերը համախմբե լ**

– Դա շատ ավելի դժվար գործ էր, քան առաջին հայացքից թվում է Տասն հինգ քսան հոգուց բաղկացած ամեն ջոկատ գործում էր անկախ և ինքնա գլուխ հրամանատարն էր որոշում ջոկատի մարտական խնդիրները և համապատասխանաբար գործում. Նրանց թվում էր, որ իրենք շատ կարևոր գործ են կատարում և հրաժարվում էին ենթարկվել կենտրոնական հրամանա տարությանը

Ի՞նչ էր մնում անել խորհրդակցեցինք այն ջոկատների հրամանատարների հետ ովքեր հասկանում էին բանակ ստեղծելու անհրաժեշտությունը, և որոշե ցինք թե ինչպես սկսենք գործը Հետո հավաքեցինք շատ թե քիչ ռազմական



www.a-pdf.com







ուժ ներկայացնող ջոկատների հրամանատարներին և նրանց առաջ խնդիր դրեցինք որ այլևս ոչ ոք իրավունք չունի ինքնագլուխ գործելու բոլորը պետք է ենթարկվեն մի կենտրոնի ընդհանուր հրամանատարությանը

Սկզբնական շրջանում շատ դժվար է եղել շատ ջոկատներ չէին ենթարկվում ընդհանուր կարգապահությանը ուժերը ցաքուցրիվ էին գործում Ասկերանի շրջանում համեմատաբար հեշտ է անցել, և արդյունքն էլ շուտ է սպացվել: Գործը դժվարությամբ էր գլուխ եկել Մարտակերտի շրջանում· Նախ շրջանի աչքի ընկնող ջոկատների հրամանատարները զոհվել էին, և ապա փիրում Իր խուճապային տրամադրություն 5–6 ամիս եղել եմ Մարտակերտի ճակատում Իրոք շատ

www.a-pdf.com



ջանքեր են պահանջվել ինչ որ բանի հասնելու համար Հետո ստեղծվել է գունդ որի հրամանատար է նշանակվել Սամվել Կարապետյանը Նույնը կատարվել է մյուս շրջաններում Մարտունիում հրամանատարությունն իր ձեռքն է վերցրել Ավոն, և իր հմուտ հրամանատարությամբ ռազմական շատ կարևոր խնդիրներ են վճռվել

Անցյալ տարվա օգոստոսից սկսվեց բանակի ստեղծման գործընթացը Իհարկե չի կարելի ասել, թե մենք արդեն բանակի ստեղծման հետ կապված բոլոր հարցերը լուծել ենք: Ոչ բայց այսօր բանակում ստեղծվել է զորանոցա յին ռեժիմ բացառվում է որ հրամանատարի կողմից դրված մարտական առաջադրանքը չհամարվի մարտական հրաման, որը պետք է անպայման կա տարել: Ուրիշ խնդիր է որ միշտ չէ որ հրամանները որակյալ են կատարվում Դա արդեն կապված է բանակի պատրաստականության հետ Ստեղծվում են բանակային կյանքի մեխանիզմները, որոնք մարտից մարտ կատարելագործ վում են Կռվելով տիրապետում ենք մարտական արվեստին Դա վերաբերում է բանակի բոլոր կառույցներին բոլոր ստորաբաժանումներին

**– Ներկայումս մամուլում շատ է խոսվում ԼՂՀ բանակի հարձակողական գործողությունների մասին, ակնարկում են որ բանակը շահագրգռված է այդ գործողությունների մեջ**

Այո, որոշ թերթեր խոսում են այն մասին որ իբր բոլորը խաղաղություն են ցանկանում, բացի բանակից: Դա ճիշտ չէ այն ինչ անում է բանակը միայն ու միայն երկու նպատակ է հետապնդում ապահովել բնակչության անվտան գությունն ու պետական սահմանների անձեռնմխելիությունը, և ապա հար կադրել թշնամուն ճանաչել մեր ազգային իրավունքները Մեր բոլոր գործո ղությունները համաձայնեցված են ԼՂՀ ղեկավարության հետ Թեկուզ վերց նենք Քելբաջարի ապառազմականացումը· Առանց դրա հնարավոր չէր Մար

www.a-pdf.com



պակերտի շրջանի բռնագաղթածներին վերադարձնել իրենց բնակավայրերը որովհետև մինչև էլ վտանգ կար որ թշնամին կարող է հարվածել թիկունքից Կար մի ժամանակաշրջան որ խուճապի մատնված մարտակերտցիները թողնում էին ոչ միայն իրենց բնակավայրերը, այլև լքում էին բանակի շարքերը Վիճակն այժմ բոլորովին ուրիշ է. ներկայումս շրջանի սահմանները պաշտպանում են միայն շրջանի ստորաբաժանումները

Մեկ ուրիշ օրինակ վերցնենք: Ինչո՞ւ հարկ եղավ ապառազմականացնել Աղդամ քաղաքը: Նախ անհրաժեշտ էր վերջ դնել Աղդամից իրականացվող՝ Ասկերանի և Ստեփանակերտի հրետակոծությանը ապա հարկադրել թշնամուն նստել բանակցությունների սեղանի շուրջը Ինչպես հայտնի է Աղդամի անկումից հետո տեղի ունեցավ Ադրբեջան-Ղարաբաղ առաջին պաշտոնական երկխոսությունը որը սակայն, միջազգային որոշակի ուժերի հրահրմամբ Ադրբեջանը չցանկացավ շարունակել

**– Համաշխարհային մամուլը և միջազգային ատյանները շտապեցին դատապարտել ԼՂՀ բանակի առաջխաղացումը ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը ընդունեց թիվ 822 և թիվ 853 բանաձևերը** (ուղղումները կազմողի), **որոնցով պահանջվում էր մեր զինված ուժերը դուրս բերել Քելբաջարից և Աղդամից· Բայց մենք մարտական գործողություններ ծավալեցինք նաև ռազմաճակատի հարավային հատվածում: Ինչպե՞ս այդ հասկանալ ձեռնո՞ց ենք նետում համաշխարհային կարծիքին, հակադրվում ենք միջազգային ուժերին Արդյո՞ք հանդուգն չէ մեր կեցվածքը**



www.a-pdf.com



Առաջին հայացքից այդպես է թվում, բայց իրերի իրական վիճակը բոլո րովին այլ է. Ինչպես գիտեք, 1991 թ. «Օղակ» օպերացիայով Հադրութի և այլ շրջանների 24 գյուղեր ազերիները գրավեցին Երկրորդ Ֆիզուլիից և Կուբաթ լուից անընդհատ հրետակոծում էին Մարտունին, Հադրութը, Էդիլուի ձորակի և մյուս բնակավայրերը, Լաչինի միջանցքը: Եվ երրորդ՝ մենք նրանց հասկաց րել ենք, որ Աղդամով ամեն ինչ չի վերջանում որ նրանք պետք է հաշվի նստեն ստեղծված իրողության հետ Ահա այս նկատառումներն էլ հարկադրում էին ակտիվացնել ռազմական գործողությունները հարավարևմտյան մասում: Ար դյունքում մենք ունեցանք Ադրբեջան Ղարաբաղ երկկողմ հանդիպումը Մոսկ վայում Ռուսաստանի Դաշնության նախաձեռնությամբ և հովանավորու թյամբ. Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ Լեռնային Ղարաբաղը որպես հակա մարտության կողմ, միջազգային ճանաչում ստացավ մեր ռազմական հաջողու թյուններից հետո: Ուժը ճանաչվում է: Նորից եմ կրկնում՝ ԼՂՀ բանակը խաղա ղության է ցանկանում և իմ կարծիքով որպեսզի խաղաղությո նը շուտ հաս տատվի մենք պետք է ուժեղ մարտական բանակ ստեղծենք:

Ադրբեջանական կողմը մի քանի անգամ խնդրել է երկարացնել հրադադա րը Մենք համաձայնել ենք դրան չնայած լավ գիտակցում ենք, որ նրանք այդ ժամանակն օգտագործել են ուժերը վերադասավորելու համար Մենք նույն պես պատրաստվում էինք թշնամուն դիմավորելու ինչպես հարկն է

**– Սամվել, վերադառնանք բանակի ստեղծման հետ կապված խնդիրնե րին: Ինչպե՞ս է քեզ պատկերանում ԼՂՀ բանակը**

Դա պետք է լինի ժամանակակից զենքով զինված, մարտունակ շար ժուն մի կազմավորում որ պատրաստ է հանրապետության ամեն մի կե տում հակահարված տալու թշնամուն պաշտպանելու մեր սահմաններն օդում և ցամաքում Առանց այդպիսի բանակի ես հնարավոր չեմ համարում ԼՂՀ ի գոյատևումը

**– Այնպես է ստացվել գուցե դա արցախյան շարժման առանձնահատ կություններից մեկն է, որ բանակի բարձր աստիճաններում հայտնվել են մեր ֆիդայի տղաները, որոնք հայրենասեր ու խիզախ են պատրաստ պաշտպանելու մեր հողը, բայց շատերը զինվորական կրթություն չունեն ոմանք նույնիսկ բանակում չեն ծառայել.**

Իրողությունը հիմնականում այդպիսին էր սկզբնական շրջանում Ներ կայումս մեր բանակում ունենք հարյուրավոր բարձր պրոֆեսիոնալ սպաներ որոնք լուրջ դպրոց են անցել խորհրդային բանակում Ինչ մնում է այն բանին որ շատ հրամանատարներ երեկվա ֆիդայի տղաներն են, ապա նրանք պա տերազմելու արվեստին տիրապետել են մարտի դաշտում, անցել են դաժան փորձությունների միջով Նրանք բնածին զինվորականներ են քաջ ու խելա հաս Բացի այդ, ներկայումս մեր համալսարանի առավել աչքի ընկնող ուսա նողներից ստեղծում ենք մի խումբ, որոնք ռազմական ուսում կստանան հա մապատասխան զինվորական ուսումնական հաստատություններում Մենք ունենք երիտասարդներ որոնք լուրջ գիտելիքներ ունեն և ցանկանում են հայ րենիքին ծառայել ԼՂՀ բանակի շարքերում: Հենց նրանք են մեր բանակի իս կական ապագան Առիթից օգտվելով կցանկանայի դիմել արցախցի այն

www.a-pdf.com



կադրային սպաներին որոնք ծառայում են ռուսական և այլ բանակներում եղ բայրներ վերադարձեք Ղարաբաղ և միասին պաշտպանենք հայրենիքը

**– Բանակի ստեղծման ճանապարհին ո՞րն եք համարում գլխավոր նվաճումը**

– Այսօր մեր բանակի յուրաքանչյուր զինվոր զինվորական հանդիսավոր երդում է տալիս և վերևից մինչև ներքև անառարկելիորեն կատարվում են հրամանատարների հրամանները: Վերջապես մեզ հաջողվեց տնավարի զինվորական ծառայությանը վերջ տալ և ներկայումս խստորեն պահպանվում է զինվորական ծառայության զորանոցային կարգը

Մյուս կարևոր ձեռքբերումը համարում եմ այն որ զինվորական տարբեր ծառայությունների համար ստեղծել ենք բավական նորմալ տեխնիկապես հագեցված բազաներ Մենք օրինակ կարող ենք հպարտանալ տանկերի նորոգման համալիրով որտեղ ամեն ինչ դրված է ամուր հիմքերի վրա

Մինչև վերջերս մեր զորանոցները զբաղեցնում էին մանկապարտեզների և դպրոցների շենքերը Մեր ուժերով կառուցել ենք անհրաժեշտ հարմարություններով զորանոցներ տարբեր զորատեսակների համար ուսուցման կենտրոններ իրենց հրաձգարաններով և այլ միջոցներով

**– Ներկայումս, հենց այս ժամանակահատվածում, բանակային շինարարության համակարգում ո՞րն եք համարում գլխավորը·**

– Առաջինը պահպանել անձնակազմի մարտական ոգին որովհետև այսօրվա ռազմական հաջողությունները վաղը կարող են ջնջվել, եթե ամեն օր մի բան չավելացնենք մեր ունեցածին Այս տեսակետից էլ ներկայումս պետք է ավելի ամրապնդենք մեր օդային սահմանները Ինչու՞ հատկապես օդային սահմանները. Վերջին տարիների փորձը ցույց է տալիս որ թշնամին ամեն կերպ խուսափում է մերձամարտից ճակատ ճակատի հանդիպելուց ու ցանկանում է գերակշռության հասնել զրահատեխնիկայի հրետանու և օդուժի մեջ· Այսօր մենք ունենք ներկայիս պահանջները բավարարող զրահատեխնիկա լավ հիմքերի վրա է դրված հրետանային ծառայությունը

**– Ի դեպ, օտար մամուլում կասկած է հայտնվում, որ փոքրիկ Ղարաբաղը տնտեսապես ի վիճակի չէ ձեռք բերելու այդքան տեխնիկա որ դրանում մեզ օգնում է Հայաստանը:**

Ասվածի առաջին մասը ճիշտ է, մենք իրոք տնտեսապես այնքան հզոր չենք մանավանդ շրջափակման պայմաններում, որպեսզի ձեռք բերենք այնքան զենք ու զինամթերք, որքան ունենք ներկայումս: Բայց սխալվում են այդ ամենը ձեռք բերելու աղբյուրների հարցում. Մեր մարտական կարողությունների 80 տոկոսը եթե ոչ ավելին առգրավել ենք թշնամուց Այս թեմայով մեր զինվորների մեջ անեկդոտներ են շրջում:

**– Օրինակ մեկանգամյա օգտագործման ինքնաթիռների և ասենք Ուկրաինայից ու Թուրքիայից Ադրբեջանի միջոցով մեզ մատակարարվող տանկերի մասին:**

Ինչ մնում է այն հարցին թե ներկայումս զինվորական ղեկավարությունը որ ուղղության վրա է սևեռում իր գլխավոր ուշադրությունը, ապա մենք ենթադրում ենք որ թշնամին անհաջողություն կրելով ցամաքում կփորձի

www.a-pdf.com



օդից հարվածել. Ահա այս ուղղությամբ էլ մենք աշխատում ենք ըստ որում աշխատում ենք որոշակի հաջողությամբ. Այսօր կարևոր է որպեսզի հակաօդային պաշտպանության անձնակազմը գիտակցի իր ծառայության կարևորությունը հանդես բերի անհրաժեշտ աչալրջություն զինվորական խիստ կարգապահություն կարգապահական ամեն մի խախտում պատժվելու է խստագույնս: 1992 թ օգոստոսի դասերը մեզ միշտ պետք է զգոն պահեն

**– Կցանկանայի անդրադառնալ կարևոր մի խնդրի զինվորի ընտանիքի սոցիալական ապահովության խնդրին**

Բանակում ստեղծել ենք սոցիալական պաշտպանության հատուկ բաժին իր ստորաբաժանումներով, որոնց գլխավոր գործը անձնակազմի սոցիալական պաշտպանությունն է: Շարքային զինվորը պիտի վստահ լինի, որ իր ընտանիքը նյութապես ապահով է Բացի աշխատավարձից կոնկրետ ստորաբաժանման հրամանատարն անհատական մոտեցում է ցուցաբերում առավել կարիքավորների նկատմամբ Բացի դրանից տեղական իշխանությունների հետ որոշակի արտոնություններ ենք նախատեսել: Դա հատկապես վերաբերում է զոհվածների ընտանիքներին Մեր քաղաքացիական և մարդկային պարտքն է հոգատարությամբ շրջապատել նրանց Ունենք արտաբյուջետային հիմնադրամ որտեղից ցույց ենք տալիս անհրաժեշտ նյութական օգնություն

**– Շուտով ձմեռ է, նախկինում շատ բողոքներ էին լինում, որ զինվորը տաք հագուստ չունի, լավ չի սնվում, ծխախոտը չի բավարարում·**

Այո, այդպիսի ժամանակներ եղել են բայց կարող եմ ասել, որ դա արդեն անցած շրջան է Ինչպես ասացի ձմռանը մեր զինվորները կապրեն իրենց զորանոցներում որոնք կլինեն տաքացված կաշխատեն մյուս բոլոր ծառայությունները խոհանոց բաղնիք և այլն: Դեռևս լրիվ չենք լուծել ձմեռային հագուստի հարցը այն ընթացքի մեջ է և հույս ունենք, որ առաջիկայում կլուծվի Ինչ մնում է նրանց ովքեր կլինեն խրամատներում և մարտական ծառայության մեջ, ապա այստեղ պետք է արձանագրենք որ պատերազմի դեմքը կոշտ է և դա պետք է հաշվի առնենք

**– Սամվել, վերադառնանք կրկին քաղաքականությանը. Ի վերջո պատերազմը քաղաքականության ծայրահեղացված ձևն է· Ներկայումս Ադրբեջանը, նրա նոր նախագահ Հեյդար Ալիևը գտնում են որ մենք պետք է անվերապահորեն վերադարձնենք այն տարածքները, որոնք գտնվում են ԼՂՀ բանակի վերահսկողության տակ Ընդհուպ նրանք պահանջում են Շուշին վերադարձնել**

Բանակցությունների ժամանակ միշտ էլ պետք է փոխզիջումներ լինեն ինչ որ բան վերցնել, փոխարենը ինչ-որ բան տալ Բայց որ բոլորը վերադարձնենք առանց որևէ հատուցման դրան մենք չենք գնա, ես դա լուրջ չեմ համարում· Ու րիշ բան է, եթե նրանք ճանաչեն մեր պետությունը, մեր անկախությունը Ոչ մի պատերազմում ազատագրված հողերը հենց այնպես չեն վերադարձրել և մենք չպետք է բացառություն կազմենք

**–1991թ սեպտեմբերի 2-ին հռչակեցինք Լեռնային Ղարաբաղի անկախ պետություն ԼՂՀ Մեկ տարի առաջ սկսեցինք կանոնավոր բանակ ստեղծել. Ընթանում է նոր, անկախ ԼՂՀ-ի որպես պետության, ստեղծման գործընթա-**

www.a-pdf.com



**ցը Ինչպե՞ս եք տեսնում բանակը պետական այդ կառույցների համակար գում·**

Իմ կարծիքով մենք պետք է ստեղծենք ռազմաքաղաքական պետու թյուն. թշնամական հարևանության պայմաններում մեզ համար բանակը ձեռք է բերում բացառիկ դեր. Մենք պետք է ունենանք ուժեղ լավ զինված և մոբիլ բանակ որպեսզի կարողանանք պաշտպանել մեր անկախությունը մեր ժո ղովրդի անվտանգությունը Մենք Եվրոպայի կենտրոնում չենք գտնվում այլ ոխերիմ երկրների հարևանությամբ. Մեր երեխաները ինչպես ասում են մայ րական կաթի հետ պետք է յուրացնեն կռվելու արվեստը իմանան ովքեր են մեր թշնամիները ինչպես պետք է նրանց դեմ պայքարել Դա պետք է դառնա ազգային հոգեբանություն ազգային մտածողություն Մեր պատմական ճա կատագիրն այսպիսին է

**– Վերջին հարցը կցանկանայի տալ. ինչպե՞ս եք գնահատում բանակի դերը արցախյան հիմնահարցի լուծման գործում:**

Ինձ թվում է ես արդեն պատասխանել եմ այսօր մեզ ճանաչում են որ պես հակամարտության կողմերից մեկի Ներկայումս ԵԱՀԽ Մինսկի խմբի որևէ կառուցողական քայլ անհնար է առանց մեր մասնակցության ինչպես նշեցի, մենք հարկադրեցինք Ադրբեջանին անմիջական երկխոսության մեջ մտնել մեզ հետ Այս ամենում վճռական նշանակություն են ունեցել մեր ռազ մական հաջողությունները

Եթե մենք այնպիսի մի բանակ ստեղծենք, որ կարողանա այսօր և հե ռանկարում պաշտպանել մեր անկախ պետությունը ապահովել մեր բնակչու թյան կյանքի նորմալ պայմանները ապա վաղ թե ուշ կճանաչեն ԼՂՀ ի գոյու թյունը անկախ պետություն ունենալու մեր իրավունքը

## ԱՅՍՕՐՎԱ ՄԵՐ ՆՎԱՃՈՒՄԸ ԴԵՌ ՀԱՂԹԱՆԱԿ ՉԷ»

Հարցազրույցը Շուշանիկ
Աբրահամյան–Հայրապետյանի
Հայոց աշխարհ» «Ազդակ» (Բեյրութ)
11 օգոստոսի 1997թ

**– Ե րբ է ստեղծվել ԼՂՀ Պաշտպանության բանակը**

Պաշտոնապես այն ստեղծվել է 1992 թ սեպտեմբերի 1 ին

Մինչ այդ կային առանձին մարտական (ֆիդայական) ջոկատներ բայց Մար տակերտի անկումից հետո հնարավոր չէր այդպես պատերազմել Արդեն պետք էին կառուցվածքային փոփոխություններ դա անհրաժեշտություն էր Բանակի ծննդյան օրը սեպտեմբերի 1 ն է

**– Այսօր ադրբեջանական մամուլը (հատկապես Ժողովրդական ճակատ կուսակցությունը) Արցախյան հիմնախնդրի լուծումը հնարավոր է համա**

www.a-pdf.com



**րում ուժային եղանակով Մենք կարո ղ ենք պատերազմելով պահել ազա փագրված տարածքները**

Իրենց կարծիքով դա միակ ձևն է որովհետև Ադրբեջանի իշխանություն ները քաղաքական լուծումը չեն հասկանում և կարծում են, թե կռվով կարող են այդ հարցը լուծել: Ես, որպես Արցախի պաշտպանության նախարար ասում եմ և պնդում որ մենք պահելու ենք ավելին այդպես կարծելով նրանք կարող են ավելին կորցնել

Խորհուրդ եմ տալիս մինչ քայլ անելը մտածել, այլապես հետո մտածելը ուշ կլինի Այսօր ո՛չ մենք ոչ նրանք իրավունք չունենք ասելու, որ ուժեղ ենք Ես հաճախ եմ կրկնում, մարտադաշտն է ցույց տալիս՝ ով ինչպիսին է. Վստահ եմ որ մեր բանակը պատրաստ է մարտի Հաղթանակի մասին կխոսենք պատե րազմի ավարտից հետո

**– Չնայած այն բանին, որ Հայաստանը չի ճանաչել ԼՂՀ անկախությունը բայց քաղաքական գործընթացներում Հայաստանը դիտվում է որպես հա կամարտող կողմ: Համարե՞նք, որ «դե ֆակտո» միացումը կայացել է**

Այն պահից, երբ Արցախը շրջափակումից դուրս եկավ այդ օրից դե ֆակտո» միացումը կայացավ Քաշաթաղ-Քարվաճառի ազատագրումից հե տո երբ Արցախը թիկունքով միացավ Հայաստանին այդ պահից միացումը եղավ: Այսօր աշխարհը չի ընդունում այդ իրողությունը Իրենք մեզ չեն հաս կանում մենք կփորձենք հասկանալ թե մեզնից ինչ են ուզում: Մենք առաջին հարցը դրեցինք միացում Հայաստանի հետ չընդունվեց Երկրորդը դրեցինք անկախ պետություն դա էլ չի ընդունվում Պնդում են որ Արցախը մնա Ադրբեջանի կազմում, որն էլ մենք չենք ընդունում Առավել ևս հիմա դա ան հեթեթություն է. Ես 23 տարեկան էի երբ Շարժումն սկսվեց. Այն ժամանակ ‹ենթակայություն› հասկացությունն այսքան խորը չէինք ընդունում Այսօր չեմ պատկերացնում Արցախը Ադրբեջանի կազմում· Այդպես է կարծում նաև այն ժամանակ 10 տարեկան և այսօր զինվոր դարձած պատանին որ արդեն 8 տարի կռվում է Այդ մասին խոսելն ամոթ է: Այդ հարցը հիմա կատակի ձևով կարելի է ասել ու անցնել (նախադասությունը ծիծաղելով ասաց Շ Ա Հ )

**– Բանակցային գործընթացներում Շահումյանի մասին գրեթե խոսք չի լինում: Այն դիտվում է որպես ԼՂՀ շրջա՞ն թե՛ մոռացվել է:**

Չէի ասի թե մոռացվել է: Ղարաբաղյան կողմը այդ հարցը միշտ էլ դնում է Թարմ փաստ է վերջին 2 հանդիպումների ժամանակ ավելի հստակ դրվեց Առանց Շահումյանի արցախյան խնդիրը երբեք չի լինի ամբողջովին լուծված որովհետև դեռևս 1991 թվականից Շահումյանը ԼՂՀ մի շրջանն էր, ինչպես Մարտակերտը Մարտունին մյուսները Դա շատ պարզ ներկայացվել է բոլոր կողմերին

**– Արցախը եղավ Սփյուռք–Հայրենիք կապի ամրապնդողը Ի՞նչ եք կարծում, Սփյուռքն իր ամբողջ հզորությա մբ է նեցուկ կանգնած Արցախին.**

Այսօր, երբ այդքան ամբողջությամբ չգիտեմ Սփյուռքի հնարավորություն ները այնուամենայնիվ, կասեմ՝ ո՛չ միայն ելնելով մեր ազգի կարողություննե րից Համոզված եմ որ մեր ազգն ի վիճակի է մեծ գործեր անելու այսօր դրա

www.a-pdf.com



5 տոկոսն էլ չենք անում Ըստ իս կան ինչ որ ուժեր որ չեն ուզում, որ միաբան ված լինենք և դա նրանց առայժմ հաջողվում է Սա մեր բոլորի՝ և մտավորա կանների և կուսակցությունների և՛ իշխանությունների խնդիրն է Եվ դրսի կուսակցությունները և ներսի իշխանությունները վերջիվերջո պետք է հասկա նան, որ մեր ամենավտանգավոր թշնամին պառակտումն է Բայց կա մի անժխտելի փաստ որ մեր ազգը իրավունք չունի այդպիսին լինելու որովհետև մենք շատ բան ենք կորցրել և այսօրվա մեր նվաճումը դեռ հաղթանակ չէ Պետք է համախմբվել այսօրվա ձեռք բերածը պահելու համար Թեկուզ թող իմանան, որ Արցախն իրենց պան չարաճճի երեխան է, և պետք է նրան բոլոր կողմերից նայել-պահել. Արցախ ասելով ես այսօր հասկանում եմ Ազգը, իսկ Ազգ հասկացությունը վեր է բոլոր տեսակի կուսակցական գաղափարներից Ազգը նաև Հայրենիքն է իսկ վերջինը Մայրն է. Պարզեցնեմ երբ վիրավորանք են հասցնում մորը ամեն տղամարդ անպայման ուզում է պատասխան տալ Այսօր վիրավորում են մեր Հայրենիքին, դա չպետք է կուլ տալ· Ավելի քան 70 տարի առաջ մեզ բաժանելով վիրավորել հայհոյել են Կամ մեր եղեռնը արե ցին, որովհետև մենք չկռվեցինք պարտվեցինք ափռվեցինք աշխարհով մեկ Հիմա այդպես վարվելու իրավունք չունենք. պետք է միաբանվենք ու կռվենք Եթե այսօր չպաշտպանենք մեր հողերը նոր եղեռն է լինելու այդժամ ուրիշին մեղադրելու իրավունք չենք ունենա. սերունդները մեզ կնզովեն այս պահը բաց թողնելու համար

**– Արհեստավարժ զինվորականների կարիք միշտ էլ զգացել ենք: Այսօր ունենք զինվորական ուսումնարան սփյուռքահայ երիտասարդները կարո՞ղ են այստեղ սովորել.**

Հետևելով Իսրայելի օրինակին ստեղծել ենք մի ուսումնական զորամաս որտեղ յուրաքանչյուր 3 ամիսը մեկ ծառայող սպաներն անցնում են որակա վորման բարձրացման դասընթացներ

Այո կարող են սփյուռքահայ երիտասարդները սովորել, միայն մի պայմա նով որ սովորելուց հետո 5 տարի ծառայեն մեր բանակում· Մենք սպասում ենք նրանց

**– Դուք ասացիք Իսրայելի օրինակով եք դա արել Որպես փոքր ազգե րին պարտադրանք Իսրայելի աղջիկներն էլ են կամավոր զորակոչվում Ժամանակը չէ՞ արդյոք, որ մեզ մոտ էլ այդպես լինի**

Զորակոչելը չէ, բայց կան մասնագիտություններ որտեղ կանայք ավելի կարևոր ու պատասխանատու են, քան տղամարդիկ Օրինակ օդային կառա վարման համակարգչային ծառայության բժշկական ծառայության մեջ համաձայն եմ Կանայք ավելի զգուշավոր են Ինչ մնում է կնոջը ճակատ ուղարկելուն ես չեմ գտնում որ մեր ազգը պետք է հասնի այդ օրվան

**– Վերադառնանք մի շատ կարևոր հարցի: Առջևում ԼՂՀ նախագահական արտահերթ ընտրությունն է: Եթե գաղտնիք չէ, պաշտպանության նախ արարն ունի՞ իր թեկնածուն, ո՞ւմ կտաք Ձեր ձայնը:**

Դա բնավ էլ գաղտնիք չէ որպես ընտրող իմ ձայնը տալու եմ այսօրվա արտգործնախարար Արկադի Ղուկասյանին. Ծանոթ եմ նաև մյուս թեկնածու ներին Այդ պաշտոնին արժանի եմ տեսնում միայն նրան

www.a-pdf.com



**– Բոլորս էլ գիտենք, որ այս զինադադարը դեռ խաղաղություն և հաղթանակ չէ Ի՞նչ է մտածում գեներալ Սամվել Բաբայանն այս մասին.**

1992 թից սկսած այդ մասին իմ ընկերները կվկայեն ես ներքին ձայնիս հավատալով հայտարարում էի, որ այդ հաղթանակը կա ու կլինի, դա մեզանից է կախված Ես իմ առջև դրած խնդիրը անպայման լուծել եմ նպատակին պետք է անպայմանորեն հասնել: Զինվորական կրթություն չունեմ բայց ասում էի որ այսօր Քարվաճառը կվերցնենք մյուս օրը Աղդամը ոչ թե որպես հրաման էի ասում, այլ կարծես կանխազգում էի ու հավատում: Նպատակին անպայման հասնելու ձգտում պետք է լինի Իսկ այսօրվա խաղաղությունը կպանի հաղթանակի պետք է հավատալ սրան

**– Ինչպե՞ս հասաք Արաքսին**

Աղդամի անկումից հետո համոզված էի որ Արաքս մարշով կհասնենք Արցախցին գիտի թե ինչ էր Աղդամը Ադրբեջանի համար և նրա գրավումը նոր հետագա հաղթանակների գրավականը եղավ Թշնամին պարտվեց ո միայն ճակատում այլև ազգովին ընկավ հոգեբանական շոկի մեջ և մենք առանց լուրջ դիմադրության հասանք Արաքս Աղդամի մարտը նրանց դիմադրության վերջին փորձությունը եղավ

1993 թ. դեկտեմբերի 18 ին Ադրբեջանը դուրս եկավ շոկից առանց հաշվարկ անելու նորից սկսեց պատերազմը և արդյունքում եղավ այն, որ 18 գյուղ էլ կորցրեց Էլի եմ ասում երբեք չպետք է թերագնահատել թշնամու ուժը Սա է իրականությունը Ես չեմ թերագնահատում նրանց, բայց կռիվը մարտադաշտում է երևում· Եվ այսօր մեր մեծ ուժն այն է որ մենք ունենք զուտ հայկական բանակ, իսկ նրանց բանակը խառն է 4-5 ազգություններից կազմված որն ամեն պահի կարող է կործանվել ներսից

**– Պատերազմական օրերին եղե՞լ է, որ հրամանը տալուց հետո զղջացել եք**

Այո, եղել է այդպիսի ապրում 1992 թ հունիսին Մարտակերտի անկումից հետո Ընկավ Մարտակերտը մենք նորից վերցրինք բայց չկարողացանք պահել նորից ընկավ Սխալ էինք Առանց Քարվաճառը վերցնելու փորձում էինք Մարտակերտն ազատագրել Սխալը հասկացանք և շտկեցինք Որպես զինվորականի, սա է իմ մեր սխալը Բայց դա իմ մեղքն եմ համարում Իհարկե, ծանր սխալներ էլ են եղել բայց պատերազմ է և մենք էլ ռազմական կրթություն չունեցող մարդիկ էինք

**Դուք ասացիք, որ պատերազմում դարձաք գեներալներ: Այսօրվա զինվորը պատերազմը չի տեսել, չի տեսել հաղթանակ և պարտություն Նրա պատրաստականությունը կբավականացնի՞ վաղվա օրվա համար:**

Այսօրվա զինվորի ձեռքերի շարժումներից նրանց քայլվածքից ելնելով ես հավատում եմ որ նա իրեն զինվորի պես կպահի Եթե ոմանց թվում է թե նա կռիվ չի արել սխալվում է Ճակատային գծի մոտ դիրք բռնելով նա հոգեբանորեն իրեն արդեն պատերազմում է զգում Լինում են և փոխհրաձգություններ, որոնք կարճատև մարտական պահեր են նաև զոհվում են Այսօր էլ պատերազմը կա Այս զինադադարի համար մենք պայմանագիր չենք ստորագրել այլ երկու կողմերն էլ հասել են այնպիսի մի մակարդակի որ իրար զգում են

www.a-pdf.com



Եթե մեկն ու մեկը փորձի շարժվել, անպայման կփփեն Մեր զինվորները գի պեն որ ամեն պահ կարող է պատերազմը սկսվել Սա իհարկե ասում եմ ոչ թե ժողովրդին սարսափի մեջ պահելու համար այլ որ ուղղակիորեն իմանան որ մենք պատրաստ ենք պատրաստ են իրենց որդիները

**– Ազատագրված տարածքներին ասում են գրավյալ տարածքներ Այս պահին դրանք ինչպի՞սիք են մեզ համար:**

Մենք ո՛չ գրավել ենք ոչ ազատագրել: Մենք ընդամենը ապահովել ենք Ղարաբաղի բնակչության անվտանգությունը Եթե քաղաքական սեղանների շուրջ քննարկվում են ինչ որ փոխզիջումային տարբերակներ, ոչինչ: Այդուհանդերձ՝ թող Ադրբեջանը լավ իմանա որ Ղարաբաղն այլևս իր թիկունքում ոչ մեկին չի թողնի: Առավել ևս նրան ով ուզում է մեզ կտրել Հայաստանից: Եթե բանակցությունների ժամանակ խոսք պանեն Քաշաթաղ-Քարվաճառի մասին ուրեմն իրենք ուզում են որ հարցերը չլուծվեն, մանավանդ երբ ակնարկվում է Շուշին: Եթե այս մասին մոռանան կարելի է նստել բանակցել հակառակ դեպքում բոլոր բանակցություններն էլ անիմաստ են Սա է մեր դիրքորոշումը: Ղարաբաղի և Հայաստանի միջև սեպ չպիտի լինի Ով էլ ղեկավարի Հայաստանը կամ Արցախը սա մեր թիվ 1 խնդիրը պետք է համարվի և ոչ մի փաստաթուղթ չպետք է ստորագրվի Ապացվում է որ ոչ թե օտար պետություններն են զինադադար պարտադրել այլ մենք ենք կայացրել այդ զինադադարը Հերթում ենք հակառակորդի մյուս քայլին կմոռանա արդեն նշված տարածքների մասին կնստենք բանակցությունների չի մոռանա կուզի վերցնել կռվելով կկռվենք Մենք ամեն ինչի պատրաստ ենք Այդ դեպքում իրենց համար ավելի վատ կարող է լինել

**– Ոչ որպես գեներալ Սամվել Բաբայան այլ որպես արցախցի ի՞նչ կասեք և կկամենաք մեր ազգին:**

Որպես ազգի զավակ ցանկանում եմ և խնդրում, որ միաբանվենք. Պետք չէ ընկնել սուտ լուրերի հետևից. «Ծախեցին Ղարաբաղը պվեցին ստորագրեցին»: Չի լինելու այն մարդը որ «ծախելու» փաստաթուղթ ստորագրի եթե անգամ ստորագրի դա չի իրագործվելու: Թող համոզված լինեն Մենք պետք է միաբանվենք և ապրենք մեր հայրենիքում Մենք ունենք Հայաստանի Հանրապետություն, ունենք Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն բայց ունենք մեկ Հայրենիք

## ՄԵԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԻՏԻ ԿԱՏԱՐՎԵՆ»

Հարցազրույցը Սիրվարդ Մարգարյանի
Մարտիկ» սեպտեմբեր 1997թ

ԼՂՀ պաշտպանության նախարար գեներալ լեյտենանտ Սամվել Բաբայանը հանրապետության նախագահի ընտրության օրը քվեարկեց թիվ 12 ընտրատարածքում

www.a-pdf.com



Քվեարկությունից հետո պաշտպանության նախարարը հայտնվեց լրագրողների «օղակի › մեջ...

**– Ի՞նչ կտա նախագահի ընտրությունը արցախյան բանակին**

Ղարաբաղյան բանակի կայացման համար այս ընտրությունը մեծ նշա նակություն ունի Հենց միայն այն, որ պետությունը կայանում է, իշխանություն կա մենք պետք է ավելի ձիգ աշխատենք պիտի զգանք որ ունենք ղեկավար ներ որոնք պատասխանատու են

**– Ձեր բարեմաղթանքները Ղարաբաղի ժողովրդին ԼՂՀ անկախության հռչակման տոնի առթիվ:**

Անկախության օրվա կապակցությամբ կցանկանայի, որ մեր ժողովուր դը ուրախ լինի տոնական տրամադրությամբ: Շնորհավորում եմ բոլորին ու ցանկանում մշտական խաղաղություն Մենք կաշխատենք պահպանել խաղա ղությունն ամեն գնով

**– Իսկ ի՞նչ միջոցներով պիտի պաշտպանեք այդ խաղաղությունը**

Այս տարածաշրջանում խաղաղության պահպանման ամենազորեղ միջո ցը ուժեղ բանակ ունենալն է

**– Ո՞ւմ օգտին քվեարկեցիք**

Արկադի Ղուկասյանի:

**– Ի՞նչ սպասելիքներ ունեք նորընտիր նախագահից**

Մեծ սպասելիքներ մեծ փոփոխություններ պիտի կատարվեն Կտես նենք

**– Կադրային փոփոխությունների մասին է խոսքը**

Ոչ, հարցը կադրային փոփոխությունների մասին չէ այլ բարեփոխումնե րի ընտրած ճիշտ ուղու շարունակության և տեմպերը արագացնելու

**– Իսկ Ղարաբաղի բանակը բարեփոխումների կարիք ունի՞·**

Ղարաբաղյան բանակը ստեղծման օրից արդեն երեք անգամ բարեփո խումներ է անցել և էլի կանցնի

**– Ի՞նչ դեր եք տալիս ղարաբաղյան բանակի կայացման և հետագա զարգացման մեջ Հայաստանին**

Առանձնահատուկ դեր չեմ տալիս Հայաստանին որովհետև մենք առանձին կառուցվածք ենք Մենք մեր գործն ենք անում տարբերություններ կան մեր և Հայաստանի միջև: Մեր բանակի զարգացումը մի քիչ այլ կերպ է ընթանում

**– Ձենք կարող ասել, թե Ղարաբաղում կռիվը վերջացել է, որովհետև դեռ շարունակում են զոհվել.. երկու կողմերից**

Ձենք կարող պնդել թե խաղաղություն է սա փխրուն խաղաղություն է Մենք պետք է միշտ պատրաստ լինենք և պատրաստ ենք

**– Դիպուկահարների պատերազմը անխուսափելի է ի՞նչ պատասխան միջոցներ եք ձեռնարկում..**

Բնականաբար պատասխան միջոցներ ձեռնարկում ենք

**– Պատրաստվո՞ւմ եք համագործակցելու նորընտիր նախագահի հետ**

Ես կուզենայի ասել, որ բոլորս լավ ենք գիտակցում թե որտեղ ենք ապ րում ինչ է մեզ սպասում· Այստեղ բոլոր պետական ամբիցիաներն ավելորդ են

www.a-pdf.com


ենթարկվելու, լսելու ենք նրան ում ժողովուրդը կընտրի նախագահ Այլ կերպ լինել չի կարող

## ՂԱՐԱԲԱՂԸ ԱՐԴՅՈՔ ՊԱՏԵՐԱԶՄ ԿՍԿՍԻ

Թարգմանություն ռուսերենից հարցազրույցը Արա Թադևոսյանի
Մոսկովսկիե նովոստի›
( Московские новости»)
7 14 սեպտեմբեր 1997թ

ԼՂՀ նախագահի արտահերթ ընտրություններում հաղթեց արտգործնախարար Արկադի Ղուկասյանը ով հավաքեց ընտրողների ձայների ավելի քան 90 %-ը Նա համարվում է Ղարաբաղի անկախության կարծր կողմնակիցներից մեկը և նրա ընտրությունը նշանակում է որ չճանաչված հանրապետությունը դեմ է լինելու Դենվերի զագաթնաժողովի որոշմանը Ղարաբաղը Ադրբեջանի կազմում ԼՂՀ պաշտպանության նախարարի կանխագուշակմամբ այդ հակասությունը կարող է կերպափոխվել մեծամասշտաբ պատերազմի

Այս և մի քանի այլ հարցերի պատասխանում է ԼՂՀ պաշտպանության նախարար գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանը

**– Ինչպե՞ս եք գնահատում ղարաբաղյան բանակի մարտական պատրաստության աստիճանը:**

Բանակը դեռևս հեռու է այնպիսի վիճակից որն ինձ իդեալական է թվում Մարտունակության մակարդակը երևում է ռազմադաշտում: Ես կառանձնացնեի մեր հսկայական փորձն ու մարտական գործողությունների ժամանակ մեր յուրահատուկ տակտիկան

**– Երկու տարի առաջ Դուք ասացիք որ սպասում եք պատերազմի վերջնական ռաունդին:**

– Այո ասել եմ և հիմա էլ կարող եմ կրկնել որ դա լինելու է չորրորդ և վերջին ռաունդը. Այսօր Ադրբեջանի առաջարկը ձեռք չի տալիս ղարաբաղցիներին իսկ մեր առաջարկը ադրբեջանական կողմին Գոյություն ունի այսպիսի նրբություն. մոտավորապես մեկ տարի անց Ադրբեջանում կսկսվեն նախագահական ընտրությունները և մինչ այդ իմ կարծիքով, ոչ ոք պատասխանատվություն չի ստանձնի Ընտրությունները կընթանան 1998թ սեպտեմբերին տարվա մնացյալ մասը կգնա դիրքորոշման կանոնավորմանը, իսկ հետո ձմեռ է

Ամեն ինչ կարծում եմ կլուծվի առաջիկայում: Ադրբեջանը կամ զիջումներ կգնա կամ պատերազմ կսկսի Այլ ճանապարհ չկա

**– Պատերազմը կլուծի՞ հարցը.**

Այո Այս անգամ ամեն ինչ կորոշվի վերջնականապես կամ նրանք մեզ կամ մենք նրանց: «Մենք նրանց» ասելով ես ի նկատի չունեմ որ մենք Բաքվի վրա կգնանք Ուղղակի պետք կլինի վերջակետ դնել Ռազմական գործո

www.a-pdf.com



ղությունների ընթացքում քաղաքագետները պետք է սպորագրեն այն փաս փաթղթերը որոնց ընդունումն այսօր հաջողության չի հասել·

**– Ի՞նչ պայմաններում եք Դուք պատրաստ վերադարձնելու ազա փագրված տարածքները**

Անիմաստ է տարածքների մասին խոսք բացել այնքան ժամանակ մինչև չպարզվի Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Սա և ժողովրդի և ղեկավա րության հասպապուն դիրքորոշումն է Այս թեմայով բանակցություններ կարելի է վարել միայն այն դեպքում եթե Բաքուն մոռանա Լաչինն ու Քելբա ջարը: Մենք պետք է վստահ լինենք որ մեր և Հայաստանի արանքում սեպ չի լինի. Երբ Ադրբեջանը հիշատակում է այդ տարածքները և դեռ սուր է ճռճում Շուշիի վրա ինձ պարզ է դառնում որ նա իրականում խնդրի կարգավորմամբ մտահոգված չէ

**– Այսինքն՝ Քելբաջարի շրջանի վերադարձման մասին ընդհանրապե՞ս խոսք չի կարող լինել:**

Եթե նույնիսկ այսօր մենք սպանանք անկախ պետության կարգավիճակ Քելբաջարի մասին խոսակցություններն անիմաստ կլինեն Չնայած ես համոզված եմ որ Բաքուն շարունակելու է իր քմահաճությունը Լաչինի և Քել բաջարի հարցում գերազանց իմանալով որ հայերը դրանք հետ չեն տա Ադրբեջանը նաև մեզ ճնշելու է միջնորդների միջոցով այսօր Ալիևը միջազգա յին ընկերակցությանը խնդրում է կարգավորումն ավարտել հենց այս տարի Ինը տարի է խնդիրը չեն կարողանում լուծել իսկ հիմա չորս ամսում են դա ուզում անել. Դա աբսուրդ է

**– Ի դեմս Ռուսաստանի, ԱՄՆ ի, Ֆրանսիայի միջնորդներն այսօր խան գարո՞ւմ են, թե՞ օգնում խնդրի կարգավորմանը:**

Սկզբունքորեն ոչ խանգարում են, ոչ էլ օգնում, չնայած Ադրբեջանին որո շակի զիջում են անում որն սկսել է կոշտ պնդել իրենը Նրանք անուղղակի օգ նում են Բաքվին բայց եթե ամբողջությամբ հասկանան թե որն է խնդիրը և հասկանան որ ոչ ոք Ղարաբաղը սկուտեղի վրա չի հանձնի այն ժամանակ նրանց պետք կլինի լավ մտածել թե ուր են գնում Չէ՞ որ Ադրբեջանն արդեն կորցրել է յոթ շրջան վաղը կարող է էլի մի քանիսը կորցնել Պարզապես Բա քուն գիտի որ այսօր հայերը առաջ չեն շարժվի և շարունակում է իր քմահա ճույքները. Միջնորդների մեծ հաջողությունն այն կլինի որ նրանք կարողանան Ադրբեջանին համոզել ուղիղ բանակցություններ վարել ԼՂՀ ի հետ

**– Արդյոք Ձեզ բավարարո՞ւմ է կարգավորման հարցում Հայաստանի դիրքորոշումը: Վերջերս Դուք բավական կտրուկ հայտարարեցիք, որ յու րաքանչյուր հայ քաղաքական գործիչ իր վերաբերմունքը հիմնախնդրին պետք է ոչ թե խոսքով, այլ գործով ցույց տա**

Մենք կարծում ենք որ Հայաստանը կամ պետք է հստակ արտահայտի իր դիրքորոշումը կամ ընդհանրապես չարտահայտվի

**– Հնարավո՞ր է որ հակամարտությանը օտարերկրյա զինված մի ջամտություն լինի**

Այս տարածաշրջանում, բացի մեր շահերից, կա նաև Ռուսաստանի և Իրա նի շահը և բոսնիական ուժային մեթոդով սցենարն այստեղ հնարավոր չէ

www.a-pdf.com



**– Ձեր մտքով անցնո՞ւմ է պատերազմի չորրորդ ռաունդում պարտվելու հնարավորությունը**

Չգիտես ինչու, մեր ժողովրդին երբեմն վախկոտ են համարել և մենք ար դեն ապացուցել ենք հակառակը Եթե դու քո առջև նպատակ ես դրել և վստահ գնում ես մինչև վերջ ապա չես պարտվի թեկուզ ողջ աշխարհը դա ցանկանա 1991 92 թվականներին մենք կորցրինք Ղարաբաղի տարածքի շուրջ կեսը և բոլորը համոզված էին որ մենք պարտվել ենք բայց մենք այդ ամենը վերա կանգնեցինք Մի հավատացեք այն շշուկներին թե Ղարաբաղը ծախել են: Չի լինի մի մարդ որն ստորագրի նման փաստաթուղթ իսկ եթե ստորագրի էլ ապա այդ թուղթը ոչ մի ուժ չի ունենա

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՍԿՍՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵԾ Է

Թարգմանություն ռուսերենից
հարցազրույցը Նոյան տապան › գործակալության թղթակից
Ժաննա Կրիկորովայի
11 սեպտեմբերի, 1997թ., (արտատպված
Գոլոս Արմենիի» («Голос Армении»)
թերթում 16 հունվարի 1999թ )

**– Ինչպիսի ք են Ձեր կանխատեսումները ղարաբաղյան հակամարտու թյան գոտում մարտական գործողությունների ծավալման հնարավորու թյան վերաբերյալ**

Մարտական գործողությունների վերսկսումը միանգամայն հնարավոր է Իրողությունն այսպիսին է

բանակցություններում Ադրբեջանի գրաված դիրքը կառուցողական չէ

հակամարտության կարգավորման գծով միջնորդների առաջարկություն ները ձեռնտու չեն ԼՂՀ-ին

մեր առաջարկած տարբերակը ձեռնտու չէ Ադրբեջանին

Այս պայմաններում երբ բանակցությունների սեղանի շուրջ անհնար է ինչ որ բան լուծել պատերազմի վերսկսման հավանականությունը մեծ է Մենք պատրաստ ենք դրան

**– Իսկ պատերազմը կլուծի՞ ղարաբաղյան հիմնախնդիրը**

Եթե պատերազմ լինի դա կլուծի հիմնախնդիրը Ինչու՞

Քանի որ այս անգամ դա կարող է վերջնական լինել կամ նրանք մեզ կամ մենք նրանց Եվ բոլոր հարցերը կփակվեն Հակամարտության կարգավոր ման մասին պայմանավորվածությունները պետք է ձեռք բերվեն մարտական գործողությունների ընթացքում, այլ ոչ թե դրանց դադարեցումից հետո Այլա պես նորից ժամանակը կվատնվի բանակցությունների հերթական 3 տարվա վրա որոնք չեն կարող բերել ինչ-որ լուծման: Հրադադարի ռեժիմի գործողու- թյան 3 տարվա ընթացքում հակամարտության գոտում մեր կորուստները

www.a-pdf.com



կազմում են ռազմական ժամանակի կորուստների գրեթե 70 տոկոսը Ես վստահ եմ, որ այդ պատկերն է և Ադրբեջանում, ինչպես էլ որ նրանք դա հերքեն: Եթե մինչև հաջորդ տարվա վերջը առ առավելն՝ մինչև 1999-ի գարունը, կարգավորման գծով առաջարկություններում ճշտումներ չմտցվեն ապա կող մերից մեկը ստիպված կլինի կամ զիջելու կամ սկսելու մարտական գործողու թյուններ Այլ տարբերակ չեմ տեսնում:

**– Ձեր վերաբերմունքը միջնորդների առաջարկությունների, ԼՂՀ բանակի վերահսկողության տակ գտնվող տարածքներն Ադրբեջանին վերադարձնելու հարցի հանդեպ**

Նախքան Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցի վճռումը ինչ-որ տարածքների վերադարձման մասին խոսք անգամ չի կարող լինել՝ Մեր առա ջարկած տարբերակն այսպիսին է Ղարաբաղին անհրաժեշտ է վստահու թյուն, որ նրա անվտանգությունն ապահովված է, որ նրա թիկունքում Հայաս տանն է որի հետ նա միացած է տարածապես: Եվ անգամ եթե մեզ առանձին պետության կարգավիճակ տրամադրեն առնվազն Լաչինի և Քելբաջարի վե րադարձման մասին խոսելն անհնար է Ադրբեջանից վտարվել է ավելի քան 400000 հայ Ուրե՞ղ պիտի ապրեն այդ մարդիկ Նրանց մի մասը հիմնավորվել է Լաչինի շրջանում նրանք բնակեցնում են Քելբաջարը. Մենք չենք կարող նրանց վռնդել այնտեղից: Ադրբեջանն իրավունք չունի տունուտեղից զրկելու երկրորդ անգամ Բանակցություններում Բաքուն մշտապես առաջադրում է Լաչինի հարցը թեպետ հրաշալի հասկանում է որ հայերը երբեք չեն վերա դարձնի Լաչինը

Հակամարտության կարգավորման միջնորդները ներկայացնելով իրենց առաջարկությունները սկսում են Ադրբեջանի տարածքային ամբողջականու թյունից և արդյունքում մեզ են առաջարկում այն ինչը նրա դիրքորոշումը բա նակցություններում ավելի կոշտ է դարձնում Իսկ եթե Ադրբեջանում հասկա նան, որ ոչ ոք Ղարաբաղը նրան սկուտեղով չի մատուցի և սկսեն մտածել այն մասին, որ վաղը կարող են կորցնել ևս մի 2 շրջան ապա հավանաբար և անհրաժեշտ կհամարեն զիջելը. Ուղիղ բանակցություններ են պետք Ադրբեջա նի և ԼՂՀ ի միջև և ես կարծում եմ որ մենք կարող ենք հասնել ավելիին քան միջնորդները:

**– Ինչպիսի՞ն է հակամարտության կարգավորման հարցում Հայաստանի դիրքորոշման Ձեր գնահատականը.**

Ինձ թվում է, որ Հայաստանը պետք է կամ հստակ արտահայտի իր դիրք որոշումը կամ ընդհանրապես ոչինչ չխոսի և մնա մի կողմ: Թեև մեկ երկու ան ձանց կարծիքը դեռ Հայաստանի, հայ ժողովրդի կարծիքը չէ:

**– Ղարաբաղի ժողովուրդը վստահ է, որ կհասնի առաջադրած նպատա կին. Ինչի վրա է հիմնվում այդ վստահությունը**

Անհնար է որ մենք պարտվենք, եթե նույնիսկ ամբողջ աշխարհը դա ու զենա Չկա մի ժողովուրդ որ իր առաջ նպատակ դնի գնա դեպի դա հետևո ղականորեն ու հաստատուն և չհասնի դրան Մենք գնում ենք դեպի մեր նպա տակը գրեթե 10 տարի և երբեք դրանից չենք հրաժարվի: Պարտվում է սոսկ նա ով հավակնում է իրեն չպատկանող ինչ որի Իսկ Ղարաբաղը մեր հողն է

www.a-pdf.com



մենք այդ հողի վրա ծնվել ենք, այստեղ են մեր նախնիների գերեզմանները այստեղ է մեր տունը այդ պատճառով էլ մեզ վիճակված է հաղթել։

## ՊԻՏԻ ՍՏԱՆԱՆՔ ԱՅՆ ԻՆՉԻ ՀԱՍԵԼ ԵՆՔ

Հարցազրույցը Միրվարդ Մարգարյանի
«Մարտիկ» 19 25 նոյեմբերի 1997թ

Նոյեմբերի 23-ին Ստեփանակերտի թիվ 12 ընտրատարածքում տեղի ունեցավ ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավորության թեկնածու առաջադրված Օլեգ Եսայանի ընտրությունը Ժամը 12-ին ընտրատարածք ներկայացավ ԼՂՀ պաշտպանության նախարար գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանը Քվեարկությունից անմիջապես հետո մեր թղթակիցը նախարարին խնդրեց իր նկատառումները կիսել «Մարտիկ» թերթի ընթերցողների հետ ԼՂՀ Ազգային ժողովում առկա խնդիրների պատգամավորության թեկնածուի և ներկայիս քաղաքական իրավիճակին առնչվող հարցերի շուրջ:

**– Պարոն նախարար, ԼՂՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ԼՂՀ պաշտպանության մասին» օրենքը Դուք կարո՞ղ եք համարել բավարար:**

Ես չեմ կարող այն բավարար համարել որովհետև այդ օրենքն ընդունվել է առանց իմ գիտության: Ես տեղյակ չեմ այն անշուշտ, վերանայվելու է Ազգային ժողովի նոր նախագահի ընտրությունից հետո այդ հարցը մենք առաջ կքաշենք

**– Ի՞նչ հույսեր եք կապում նոր թեկնածուի հետ**

Թվում է՝ նոր թեկնածուն կփորձի պառլամենտի հեղինակությունը բարձրացնել և նորմալ աշխատանք կատարել. Միայն է այն կարծիքը, թե իբր, պառլամենտի վրա ճնշում է գործադրվում պարզապես ներսի մթնոլորտը պետք է փոխվի Յուրաքանչյուր անձ կոնկրետ պիտի իմանա իր առջև ինչ է դրված և ինչ պիտի անի դա կախված է կոնկրետ անհատից Մեր պառլամենտը միշտ տուժել է անհատի բացակայության պատճառով որն իր վրա պիտի վերցնի տարբեր «հարվածներ» թե՛ նախագահի կողմից և թե մյուսների Փաստն այն է որ պառլամենտն իր դերը չի կարողացել կատարել:

**– Հայտնի է, որ այս տարվա դեկտեմբերին Կոպենհագենում կկայանա ԵԱՀԿ անդամ-պետությունների արտգործնախարարների խորհրդի նիստ Ի՞նչ ակնկալիքներ ունի ԼՂՀ պաշտպանության նախարարը Կոպենհագենի նիստից:**

Կարելի է ասել ոչ մեծ սպասելիքներ Ինձ թվում է թե այս անգամ նրանք չեզոք դիրք կբռնեն չեն փորձի սրել իրավիճակը ինչպես դա արեցին Լիսաբոնում Հավանաբար մի փոքր հայտարարությամբ կվերջացնեն՝ հող նախապատրաստելով նոր երկխոսության համար:

**– Օրերս ԼՂՀ նախագահը, վարչապետը և Դուք պաշտոնական հանդիպում ունեցաք ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ· Խնդրո առարկան ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացն էր**

www.a-pdf.com



Կարող եմ ասել, որ իմ հանդիպումը Հայաստանի Հանրապետության նա խագահի հետ անցել է նորմալ մթնոլորտում... Մենք ուղղակի նորից պնդել ենք մեր տեսակետներն արցախյան հիմնախնդրի կարգավորման վերաբե րյալ Իմ տեսակետը պարզ է ես այն բազմիցս արծարծել եմ.. Խոսել ենք այն մասին թե ինչ ճանապարհներով իրականացնենք այդ տեսակետը: Ինձ թվում է պետք է շտկվի ու փոխվի փարվող քաղաքականությունը

**– Քաղաքական ներկայիս կացությունը կարո՞ղ ենք նորմալ համարել Իմ կարծիքով օր օրի կրքեր են բորբոքվում, մանավանդ ՀՀ նախագահի մամուլի ասուլիսից և վերջերս «Հայաստանի Հանրապետություն թերթում պպագրված հոդվածից հետո.**

Լուրջ քաղաքական պրոբլեմներ, իմ կարծիքով, չկան... Ուղղակի ճշտում ներ են մտցվում մեր ու Հայաստանի Հանրապետության դիրքորոշման մեջ Ինձ թվում է գտնելու ենք շփման եզրերը:

**– Իսկ փոխզիջումների մասին ի՞նչ կասեք..**

Այս հարցի առթիվ բազմիցս արտահայտել եմ իմ կարծիքը դա չի կարող մի ակողմանի լինել· Փոխզիջում հասկացությունը մենք այսպես ենք հասկանում. պի տի ստանանք այն ինչի հասել ենք դե ֆակտո ինչ որ ունենք իրավաբանորեն այդ փաստաթուղթը պիտի ընդունվի իսկ ինչ մնում է տարածքների հարցին... Նայած ի՞նչ ենք ստանալու նրանցից ըստ այդմ էլ կտանք իսկ դա արդեն կորոշվի բանա կցությունների ընթացքում

## «ՄԵՆՔ ՄԵՐ ԽՈՍՔՆ ԱՐԴԵՆ ԱՍԵԼ ԵՆՔ

Թարգմանություն ռուսերենից հարցազրույցը Սերգեյ Սկլյարովի «Էքսպերտ ( Эксперт») 6 ապրիլի 1998թ

**– Հայաստանում ասում են, որ Ձեր ազդեցությունը Լեռնային Ղարաբա ղի քաղաքականության վրա զգալիորեն ավելի մեծ է քան՝ ԼՂՀ նախագա հինը**

Ես չէի ասի թե իմ ազդեցություննն ավելի մեծ է քան Ռոբերտ Քոչարյա նինն էր (ի դեպ ես նրան շնորհավորում եմ Հայաստանի նախագահի պաշտո նում ընտրվելու առթիվ) և քան ունի ԼՂՀ ներկայիս նախագահ Արկադի Ղու կասյանը Բայց իրադրությունն այնքան բարդ է որ մենք պարտավոր ենք ամեն մի վճիռ իրար հետ խորհրդակցելով ընդունել. Վերջին խոսքը մնում է նախագահին բայց միայն այն հարցերում որոնք անվտանգությանը չեն վե րաբերում... Իսկ Լեռնային Ղարաբաղի անվտանգության հիմնախնդիրներն այսօր առաջին տեղում են

**– Ղարաբաղի հիմնախնդրի լուծման ի՞նչ տարբերակ է բավարարում Ձեզ**

Մեր դիրքորոշումը մենք արտահայտել ենք հազար ինը հարյուր ութսուն ութ թվականին երբեք դա չենք փոխել և մտադիր չենք փոխելու: Ղարաբաղ ցիները պետք է ազատ ապրեն և ինքնուրույն լուծեն իրենց հիմնախնդիրները

www.a-pdf.com



Մենք պատրաստ ենք զիջումների բայց դրանք պետք է փոխադարձ լինեն Հարցը պետք է վերջնականապես լուծվի բայց միայն փաթեթային ձևով, բոլոր կողմերի այդ թվում Հայաստանի Ռուսաստանի և մյուս պետությունների շահերի հաշվառումով Մենք չենք ուզում որ ինչ-որ մեկի շահերը այդ փաթեթում հաշվի առնված չլինեն: Դա կարող է հանգեցնել նոր պատերազմի Մեր հարևանը Ադրբեջանն է մենք ուզում ենք նրա հետ հաշտություն կնքել Բաքուն նվաճել մենք մտադիր չենք բայց Ադրբեջանը պետք է մեր դիրքորոշումը հաշվի առնի Այժմ դա դեռ չկա: Այն ամենից հետո, ինչ տեղի է ունեցել մեր մշակութային ինքնավարության մասին խոսելը պարզապես անհեթեթություն է

**– Որո՞նք են փոխզիջման այն պայմանները, որոնք Ձեզ կբավարարեն համաձա՞յն եք արդյոք զիջելու Լաչինի շրջանը:**

Մենք ոչ ոքի հողերը նվաճել չենք ուզում Մեզ համար առաջին տեղում է Ղարաբաղի անվտանգությունը Դա կարող է ապահովված լինել միայն Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի բավարար չափով սահմանակցվածության դեպքում Չի կարելի որ դա լինի լոկ մի նեղ միջանցք որը կարելի է նվաճել մեկ օրում և մեզ թողնել շրջափակման օղակում: Այդպիսի փոխզիջման մենք չենք գնա Դա կլինի միայն Լաչինի շրջանը, թե Ադրբեջանի ամբողջ Քելբաջարի շրջանը կարելի է որոշել միայն բանակցությունների ընթացքում

Մենք պատրաստ ենք որոշ հողեր զիջելու դրանք մինչև պատերազմը հայաբնակ Շահումյանի շրջանով փոխանակելու դեպքում միայն: Մենք այն չենք համարում Ադրբեջանի մաս դա Լեռնային Ղարաբաղի մասն է Այդ սահմանները վերջնականապես պետք է արձանագրվեն փաթեթում, ըստ որում հարկ է վերջնականապես վճռել մեր կարգավիճակի հարցը· Մեր հողերը բազմիցս են մի երկրից մյուսին հանձնվել և մենք չենք ուզում որ մեզ էլի երբևէ տան որևէ մեկին ԼՂՀ ն պետք է իր ներկայացուցիչն ունենա ՄԱԿ ում ԵԱՀԿ ում...

**– Ադրբեջանը Ռուսաստանին մեղադրում է թե նա Հայաստանին մեկ միլիարդ դոլարի զենք է մատակարարել...**

Ես անձամբ ոչ մի զենք Ռուսաստանից չեմ ստացել ու նրան չեմ հանձնել և չգիտեմ թե արդյո՞ք այն մատակարարվել է Հայաստանին Ռուսաստանյան իշխանության բարձրագույն էշելոններում ոչ մի ծանոթ ես չունեմ· Ես չեմ կարող դատել և այն մասին թե ինչքան և ինչ զենք է Ադրբեջանը ստացել Ռուսաստանից Ուկրաինայից ու Մոլդովայից Միայն գիտեմ, որ նա ստացել է Բայց ես դրանից ողբերգություն չեմ սարքում Ադրբեջանն ու Հայաստանը ինքնիշխան պետություններ են ես մտադիր չեմ նրանց գործերին միջամտել

**– Երեք տարի առաջ, երբ Ադրբեջանի քաղաքական ղեկավարությունում քաոս էր տիրում, դուք կարող էիք մեծ զիջումների հասնել: Ձեզ չի թվում արդյոք թե հաշտություն կնքելու պահը բաց է թողնված.**

Մենք չենք վախենում որ Ադրբեջանն ուժեղանում և զինվում է ԽՍՀՄ փլուզման ժամանակ նա ստացել է չորրորդ բանակի սպառազինությունը իսկ դա շուրջ երեք հարյուր տանկ է և ավելի քան ութ հարյուր հրետանափող գումարած օդուժը Այն ժամանակ մենք միայն հրազեն ենք ունեցել, բայց շահել ենք այդ պատերազմը Նախ մենք կռվում ենք խելքով երկրորդ՝ մեր հողն ենք

www.a-pdf.com



պաշտպանում Եթե հաշվի առնենք մեր բանակի կարգապահությունն ու դյու րաշարժությունը, մենք միշտ էլ կարող ենք փոխհատուցել Ադրբեջանի զեն քով գերակշռությունը

**– Արդյո՞ք հույս եք դնում Հայաստանի և Սփյուռքի աջակցության վրա եթե պատերազմը վերստին բորբոքվի**

– Նախկին ԽՍՀՄ տարածքում շուրջ մեկ միլիոն ղարաբաղցի հայեր են ապրում. Բաքվեցի բոլոր հայերի նախնիները ծնունդով Ղարաբաղից են Մի այն հենց Մոսկվայում ապրող երեք հարյուր հազար հայերից հարյուր հազա րը ղարաբաղցի է՝ Հայաստանում չորս հարյուր հազար ղարաբաղցի է ապ րում, որոնք պարտավոր են զորակոչի դեպքում տուն վերադառնալ. Մարդկա յին ուժապաշարի սղությամբ ԼՂՀ ին ‹ես վախեցնի Ոչ ոք իրավունք չունի մեզ դատապարտելու այն բանի համար որ հայերը Ամերիկայից կամ այլ երկրներից, այդ թվում Ռուսաստանից գալիս են պաշտպանելու իրենց նախ նիների հայրենիքը Սփյուռքը մեզ օգնում է նաև ֆինանսներով մենք դա չենք թաքցնում: Ղարաբաղը մեր համազգային հիմնախնդիրն է և մենք երբեք վարձկանների կարիք չունենք այլազգի մարդկանց մեր փոխարեն կռվելու չենք ուղարկում

## ԱՄԵՆԱԾԱՆՐ ՊԱՀԻՆ ՏՂԱՄԱՐԴՈՒ ՊԵՍ ՍՏԱՆՁՆԵԼ ԵՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԵՄ ՓՈՇՄԱՆՈՒՄ»

(‹Հայաստանի Հանրապետություն» 1998թ ,
հունիս Գեղամ Բաղդասարյան)

Հունիսի 5 ին Ստեփանակերտում կայացավ ԼՂՀ պաշտպանության նա խարար Սամվել Բաբայանի մամուլի ասուլիսը Հենց սկզբում նա հայտնեց որ հակված է բաց ու անկեղծ զրույցի և պատրաստ է պատասխանելու լրագրողներին հուզող բոլոր հարցերին Դեպքերից առաջ անցնելով՝ ասեմ որ վերջում նա նշեց, որ իր հույսերը չարդարացան, քանի որ զրույցը ըստ նրա, լիովին անկեղծ չստացվեց Զարմանալի, թերևս ոչինչ չկա որովհետև արցախցի լրագրողները սովոր չեն պաշտպանության նախարարի հետ ինչպես ասում են «դու»-ով խոսել: Ինքն էլ ընդունեց դա խոստանալով իր գործունեության մեջ ավելի շատ տեղ հատկացնել լրագրողներին և «ընկերու թյուն անել նրանց հետ»: Քանի որ Բաբայանի հետ հանգամանալից զրուցե լու առիթ լրագրողներիս համար հազվադեպ է լինում, նպատակահարմար եմ գտնում հիմնականում ներկայացնել նրա ասածներն առանց մեկնաբանու թյան միայն խմբավորելով հնչած մտքերը

‹Ինձնից ուզում են քավության նոխազ սարքել և ներկայիս իրավիճակի ամբողջ մեղքը բարդել ինձ վրա բայց ես այդ մարդը չեմ և թույլ չեմ տա դա անեն Իսկ ձեզ համոզելու համար կսկսեմ 1992 թվականից որպեսզի պարզ լինի, թե ինչու է Սամվել Բաբայանն այդքան ուժեղ և ինչու ազդեցություն ու նի ամեն իշխանավորի վրա 1992 ի ամռանը երբ մեր տարածքի 48 տոկոսը

www.a-pdf.com



գտնվում էր թշնամու ձեռքին ոչ ոք չէր ուզում պատասխանատվությունն իր վրա վերցնել. Ավելին ինչ լավ բան կար իրենց էին վերագրում իսկ վատը ինձ Բայց ոչ ոք չէր համարձակվում իր վրա վերցնել ընդհանուր պատասխանատվությունը և լավի և վատի համար: Ինձ այն ժամանակ ոչ ոք չի նշանակել պարզապես այնպես է ստացվել որ իմ շուրջ հավաքվել են փոքր ջոկատներ Ջոկատներ շատ կային այն ժամանակ և պետք էր դրանք համախմբել Ես պարտավոր էի պատասխանատվությունն ինձ վրա վերցնել հանուն ժողովրդի քանի որ տեսնում էի ելքը Սկզբում Ասկերանի և Մարտունու շրջաններում մարտական գործողությունների պատասխանատուն էի հետո ողջ զինուժի Այսօր որոշ մարդիկ իրենց են վերագրում հաղթանակն ու հաջողությունները, պնդում որ իրենք են այն ժամանակ պատասխանատվությունը վերցրել իրենց վրա Այդպես չէ Այդ ծանր պահին տղամարդու պես վերցրել եմ պատասխանատվությունը և այսօր էլ չեմ փոշմանում Ինչ խոսք եղել են թերություններ, բայց կռվի ամենածանր պահին հեշտ չէ լինել ժողովրդավար խիստ պահանջներ են պետք: Ուստի պետք չէ ինձ դիկտատոր համարել Ես թույլ չեմ տա ինձ վարկաբեկել Կընդունեմ մեղադրանքը միայն այն դեպքում երբ իրոք մեղավոր եմ: Թալան չեմ արել գողություն չեմ արել կաշառք չեմ վերցրել Ասում են նախագահը ոչինչ չի որոշում և իբր ես եմ որոշում. Սա պարզապես անյուրջ զրույց է և այդպես ասողները գիտակցաբար պառակտում են մտցնում մեր մեջ· Պարզապես միֆ է ստեղծվել իմ մասին»

Լրագրողներից մեկի այն հարցին թե արդյո՞ք «ամենազոր Սամվել Բաբայանի» մասին միֆի ստեղծմանը չեն մասնակցում նաև նրա մրցակիցները նա պատասխանեց «Չեմ ժխտում կան մարդիկ, որ իմ անունից ինչ-որ բաներ են ասում, բայց նաև կան իշխանության ներկայացուցիչներ և՛ այստեղ և Հայաստանում, ովքեր փորձում են դիկտատորի կերպար հորինել պնդելով նախ որ ես ուրիշ, հեռուն գնացող նպատակներ ունեմ Դա հորինվածք է և սկիզբ է առել 1992-ից, որը 1995–96 ին ինձ հաջողվել է ինչ-որ չափով կասեցնել բայց այսօր նորից սրվել է Պատճառն այն է որ վախենում են ինձնից Վախենում են մի մարդուց որը չի վախենում իր կարծիքը հայտնելուց ցանկացած տեղում Անցած տարվա հուլիս-օգոստոս ամիսներին ես իմ տեսակետը հայտնեցի Լևոն Տեր Պետրոսյանի մասին որից հետո սկսվեց այն, ինչին տեղյակ եք Քաջ հասկանում եմ որ ամեն ղեկավարի համար ես վտանգավոր եմ· Որովհետև ինձ հնարավոր չէ կոտրել· Կարող եմ հեռանալ բայց տարհամոզել ինձ չի հաջողվի Ինձ կարող են չասել, որ ես իրենց համար անհաճո եմ բայց կարող են չորրորդ իշխանությունը ներգրավելով վարկաբեկել ինձ»:

«Ասում են՝ Սամվել Բաբայանն ուզում է վարչապետ դառնալ Այո ես գտնում եմ որ կարող եմ աշխատել այդ պաշտոնում, և չեմ թաքցրել ոչ մի ժամանակ և ոչ մեկից· Բայց նշանակողը ես չեմ նախագահն է. Փորձել ասել թե ես վախեցնում եմ ինչ որ մեկին փողային հարցեր եմ լուծում՝ ազնիվ չէ Պարզապես համոզված եմ որ կարելի է ժողովրդի համար ավելին անել, այն էլ ներքին ռեսուրսների հաշվին Սփյուռքահայության կողմից լուրջ ներդրումները իրական չեն և չպիտի ամբողջ հույսը դրա վրա դնել Փոքր հարցեր են դրանով լուծվելու Մենք պիտի տեղում միջոցներ հայթայթենք Իսկ դրա համար

www.a-pdf.com

աշխատել է պետք, մարդիկ են պետք Եթե պաշտոնյան իրեն չի արդարացնում, ուրեմն պիտի թողնի պաշտոնը· Հերիք է ամեն ինչ ինձ հետ կապել· Արդեն պարզ է որ վարչապետ չեմ լինելու Այն պարագայում, երբ սկսել են այնպես մեկնաբանել, որ ես իբր պարզապես ուզում եմ իշխանություն ունենալ երբեք չեմ համաձայնի գնալու այդ քայլին եթե սրանից հետո խնդրեն էլ»:

«Ես քաջություն ունեմ հրաժարական տալու և արդեն առաջին քայլը կատարել եմ դա եղբորս հրաժարականն է: Ոչ ոք չէր պահանջել նրա հրաժարականը Ես եմ նրան խնդրել Իսկ ժամանակին նրան խնդրել էին զբաղեցնել այդ պաշտոնը. Ես այն ժամանակ զգուշացնում էի որ կլինեն ասեկոսեներ երկու եղբայրների իշխանության մասին բայց իշխանության ներկայացուցիչները խոսք էին տվել, որ կպաշտպանեն նրան Սակայն այդպես չեղավ Եվ սկսեցին լուրեր տարածել թե ՆԳՆ ի միջոցով ուժ եմ գործադրում և այլն Այդքանից հետո ինձ համար պարզ էր որ նա հրաժարական պիտի տա Ես հիմա պատրաստ եմ ինքս էլ հրաժարական տալու Հերիք է ժողովրդին այս վիճակում պահել: Ամեն մարդ պիտի պատասխան տա իր տեղամասում: Իմ տեղամասը բանակն է և պատրաստ եմ պատասխան տալու Իսկ որ սկսել եմ ինչ որ հարցերով զբաղվել փողոցներ նորոգել շենքեր կառուցել, ապա հասկանում եմ որ դա իմ գործը չէ բայց արել եմ մի նպատակով ապացուցելու համար որ դա հնարավոր է

Ասում են պաշտոններ է ուզում հեռահար նպատակներ ունի Եթե ես այդքան ամբիցիաներ ունենայի ապա մինչ այդ կանեի քանի որ հնարավորություն ունեցել եմ և ունեմ· Բայց ես իմ տեղը գիտեմ Պետք չէ անհապի պաշտամունք ստեղծել և ամեն ինչ կապել իմ հրաժարականի հետ: Պետք չէ դրա մատիկացնել իրավիճակը վաղ թե ուշ, միևնույն է կգա մի ժամանակ որ ես կհեռանամ այս պաշտոնից Ինչ խոսք ինչ որ երբրում կլինի բայց չեմ կարծում թե ամեն ինչ կկործանվի: 1995–96 թթ ես երկու անգամ արդեն հրաժարականի մասին դիմում եմ ներկայացրել. Սա շանտաժ չէ, ոչ էլ սպառնալիք Ես գիտակցում եմ որ իրավիճակն ապակայունացնելու իրավունք չունենք և ինչ քան հնարավոր է՝ կփորձեմ համբերել Հավաստիացնում եմ մեր ժողովրդին որ նրա ծանր պահին եթե պատերազմ սկսվի ծառայելու եմ և կանեմ ինձնից կախված ամեն բան· Եվ բանակն էլ մարտունակ կմնա· Հերիք է ամեն ինչ ինձ հետ կապել Այն մարդիկ ովքեր իրենց չեն արդարացնում պիտի հեռանան անկախ նրանից թե ում բարեկամը կամ եղբայրն են: Կադրային քաղաքականությունն է կարևորը: Լավ փղան կամ լավ սեղանապետը դեռ նախարար չէ Երկու ձև կա կամ նրանք պիտի հեռանան կամ ես: Որոշումը նախագահն է կայացնելու Նոր թիմը եթե աշխատելու է հնի ռիթմով ապա կանգ ենք առնելու նույն անդունդի առջև փարիների տեղապտույտ է լինելու Դարձյալ ինչ որ մեկին կփորձեն համոզել Յոթ տարի ինձ համոզում են, ես ինքս եմ ինձ համոզում Յոթ տարվա ընթացքում ես կատարել եմ նաև այն ինչին դեմ եմ եղել ինչը պետք չեմ համարել: Բավական է»

‹Եթե հանկարծ նորից պատերազմ սկսվի մենք բարոյական իրավունք չենք ունենալու ժողովրդին նորից կռվի տանելու: Տղամարդկանց 90 տոկոսը ծառայել է բանակում ապա զորացրվել և այսօր նրանց պիտի օգնել գործով ապա

www.a-pdf.com



հովել, լուծել նրանց սոցիալ տնտեսական խնդիրները Սա այսօրվա առաջնա հերթ խնդիրն է Այսօրվա մեր պատերազմը տնտեսական զարգացումն է պա տերազմ որում նա պիտի հաղթենք Ես ծրագիր ունեմ Ամենաքիչը 30 հազար պիտի լինի սպառողական նվազագույն զամբյուղի պարունակությունը Դա հնարավոր է կես տարուց հետո իսկ հասնելու ձևը հետևյալն է ազատություն և կարգապահություն: Իսկ թոշակները կարելի է այսօր էլ բարձրացնել: Հարկա յին դաշտում լուրջ փոփոխություններ պիտի արվեն Հարկային նոր քաղաքա կանություն է պետք: Այն պիտի առանձնացվի ֆինանսների նախարարությու նից: Տնտեսել է պետք: Պիտի ապակենտրոնացվի ֆինանսների բաշխումը Կրթության բնագավառին հատկացված գումարներն առաջարկում եմ տալ ան միջականորեն դպրոցներին Նույնը առողջապահությունում Մի բան եմ ու զում որ ժողովուրդը նորմալ ապրի՝ Ինձ համար սա ամբիցիա չէ և ոչ էլ ընդհան րապես անձնականացված է որ անպայման ես պիտի լինեմ Պատրաստ եմ ամեն մարդու հետ աշխատելու, եթե նրա գործունեությունն ուղղված է մեր ժո ղովրդի բարեկեցությանն ու երկրի հզորացմանը՝ Ասում են ժողովրդին պիտի ոգևորել՝ Սոված ժողովրդին հնարավոր չէ ոգևորել»:

Տողերիս հեղինակի այն հարցին թե վարչապետ չդառնալու հանգամանքը նշանակո՞ւմ է արդյոք որ իր ծրագիրն այլևս չի իրականացվի, նա պատասխա նեց «Դա կախված է լինելու այն բանից թե ինչ կադրային քաղաքականու թյուն է տարվելու: Դրանից հետո կասեմ՝ աշխատելու եմ թե ոչ Ես քաջու թյուն կունենամ որոշելու»:

«Ինչ վերաբերում է ներկայիս կառուցվածքային փոփոխություններին ապա չեմ գտնում թե սա իդեալական ելք է իրավիճակից բայց կարծում եմ բավական լուրջ տեղաշարժ է Այլ հարց է որ սա պիտի արվեր առնվազն ութ ամիս առաջ: Ընդհանուր առմամբ, ես լավատեսորեն եմ տրամադրված՝ ելնելով այս մի քանի օրվա բանակցություններից: Բայց ցավոք գործը միշտ չէ որ հա մապատասխանում է խոսքին ուստի ժամանակը ամեն ինչ կհստակեցնի»

«Ես պատրաստ եմ պաշտպանելու ձեզ լրագրողներիդ եթե նեղելու լինեն բայց նաև կպահանջեմ որ ճշմարտությունը գրեք: Շատ քիչ եմ շփվել ձեզ հետ ելնելով իրավիճակից Չէի կարող սրտել ելնելով իմ բնավորությունից իսկ ճշմարտությունն էլ շատերին կկպչեր ուստի գերադասում էի չբացել խաղա քարտերը՝ Բայց որոշ պաշտոնյաներ ըստ երևույթին հենց դա են ուզում Շատ չերևալը նաև իմ էությունից է բխում չեմ ուզում զովազդային հոլովակ դառնալ Միևնույն ժամանակ գտնում եմ, որ պիտի օգնել չորրորդ իշխանու թյանը առանց անձնականացնելու խնդիրը: Առանց այն էլ մամուլը ուզի չուզի կախյալ վիճակում է: Իսկ կախված է ֆինանսներից: Դա է այսօրվա շուկայա կան հարաբերություններում մամուլի իրողությունը: Պիտի ֆինանսական աջակցություն լինի ոտքի կանգնելու և օբյեկտիվ լինելու համար Լրագրողը պիտի կարողանա արտահայտել այն ինչ մտածում է Վախ չպիտի լինի Վեր ջերս ինչեր ասես չեն գրել իմ մասին, բայց ո՞վ է տուժել ո ւմ են պատժել»

www.a-pdf.com



## ՂԱՐԱԲԱՂԸ ՀԱՄԱՌ Է ԼՈԿ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌՔ Է ԲԵՐՎԱԾ»

Թարգմանությունը ռուսերենից հարցազրույցը Կարեն Թոփչյանի
Նովոե վրեմյա
( Новое время ) 20 հունիսի 1998թ

**– Պարոն Բաբայան, Լեռնային Ղարաբաղից դուրս վերլուծաբանների մեծ մասը ԼՂՀ-ում վերջերս տեղ գտած ներքաղաքական կոլիզիաները կապում է Ձեր իսկ անվան հետ Մասնավորապես նրանք ուշադրությունը բևեռում են Ձեր, ինչպես նրանք են արտահայտվում անչափավոր պատ վախնդրության» վրա Դա այդպե՞ս է արդյոք.**

Իրականում ԼՂՀ ում տնտեսական ճգնաժամ է եղել Վերջին 3–4 տարում սխալ քաղաքականություն է տարվել այդ ոլորտում Եվ կառավարությունում շատերը չէին համաձայնում վարչապետի նման քաղաքականությանը Գործն այնտեղ էր հասել որ հարցը պարզ ու կոնկրետ էր դրվել պետք է կամ վար չապետը հրաժարական տար կամ 6 7 նախարար Հեռացավ Լեոնարդ Պետ րոսյանը:

Իսկ ինչ վերաբերում է այն բանին, թե իմ վարչապետության հարցն էր դրվել այո, ես ունեցել եմ և ունեմ իմ մոտեցումները Լեռնային Ղարաբաղի Հանրապե տության տնտեսության զարգացման ուղիների վերաբերյալ Օրինակ ես հա մոզված եմ, որ եթե մենք գտնվում ենք պատերազմի գոտում ապա ոչ մի ար տասահմանյան ներդրում այստեղ լինել չի կարող Մենք պետք է ինքներս ստեղծենք մեր տնտեսությունը Ի տարբերություն ինձ նախկին վարչապետը գտնում էր որ մեզ պետք է մշտապես այսպես ասած նվիրեն

Շուրջ երկու տարի շարունակվեց մեր վեճը Սակայն վերջնական վճիռը չէր ընդունվում օբյեկտիվ պատճառով· Նախ Ռոբերտ Քոչարյանը Երևան տեղա փոխվեց այնուհետև նախագահի ընտրությունը ճգնաժամը Հայաստանում Բացահայտ եմ ասում ոչ մի անձնական հիմնախնդիր իմ և Արկադի Ղուկա սյանի կամ էլ Ռոբերտ Քոչարյանի միջև չկա Ոչ ոք երբեք չի էլ մտածում Ղա րաբաղում եղած հիմնախնդիրներն ինչ որ ուժային մեթոդներով լուծել Այդ բոլոր խոսակցություններն անլուրջ են

**– Այդ դեպքում ինչո՞վ եք բացատրում ԼՂՀ-ում ներքաղաքական իրադրության անհարկի դրամատիկացումը, հատկապես՝ զանգվածային լրատվության միջոցների կողմից Հայաստանում և այլուր·**

Որոշ մարդիկ, ովքեր վիրավորված են եղել ինձնից անազնիվ խաղ են վարել ցանկացել են զանգվածային լրատվամիջոցներն օգտագործել իմ դեմ

**– Բայց գուցե հարցն ա՞յն է, որ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառների բերումով Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարարը պետք է ավելի շատ ու առավել արդյունավետ կերպով ազդի ԼՂՀ ում տեղի ունե ցող գործընթացների վրա**

Այո, ես մեծ ազդեցություն ունեմ Ղարաբաղում նրա ղեկավարության և ժողովրդի մեջ Ես կարող եմ շատ հարցեր լուծել Այդ ամենը բնական է

www.a-pdf.com



Պատերազմ է եղել, մենք հաղթել ենք և պաշտպանության նախարարը, բնականաբար, պետք է հսկայական ազդեցություն ունենա Բայց ինչ որ շրջանակներից սահմաններից դա դուրս չի գալիս. Չէ՞ որ մենք պետական ու ազգային շատ հիմնախնդիրներ ունենք որոնք պետք է համատեղ միասին լուծենք առանց բախումների

**– Իսկ վերջերս տեղի ունեցած իրադարձությունները բացառում եք ոչ հեռավոր ապագայում: Եվ, ի դեպ, Դուք չէի՞ք ցանկանա երբևէ ԼՂՀ նախագահ դառնալ**

Ես նախագահ դառնալու հնարավորությո ն վաղուց եմ ունեցել Այսօր ես զինվորական մարդ եմ, պատերազմը դեռևս չի ավարտված, ես Ղարաբաղին պետք եմ պաշտպանության նախարարի պաշտոնում Եթե վերջնական խաղաղություն լինի այն ժամանակ գուցեև մտածեմ նախագահ դառնալ

**– Պարոն Բաբայան, ինչո՞ւ Դուք վարչապետ չդարձաք**

Ես կարող էի գլխավորել նախարարների կաբինետը Բայց դրա համար պետք է թողնեի պաշտպանության նախարարի պաշտոնը Ես չհամաձայնեցի

**– Իսկ երկու պաշտոնների համատեղումը հնարավո՞ր չէ**

Ոչ որովհետև դա քաղաքական հետևանքներ կունենար Աշխարհը դա էր հասկանա

**– Կարելի՞ է պնդել, որ Հայաստանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը սկզբունքորեն միասնական քաղաքական, տնտեսական, ռազմական օրգանիզմ են. Եվ այն, ինչ Հայաստանում է տեղի ունենում, խկույն արտացոլվում է Ղարաբաղում, և ընդհակառակը:**

Ես չէի ասի

**– Որպես պաշտպանության նախարար ի՞նչ կասեիք Լեռնային Ղարաբաղի շուրջ բանակցային գործընթացի հեռագա զարգացման մասին Ավելի կոնկրետ ասած՝ ի՞նչ կարելի է սպասել, եթե ներկայիս փակուղային իրավիճակը երկար ժամանակ ձգձգվի**

Եթե Ադրբեջանն իրական փոխզիջումների չգնա պատերազմի հավանականությունը կմեծանա Այսպես կասեմ պատերազմն 90%-ով անխուսափելի է· Եվ ահա թե ինչու Ադրբեջանը որևէ զիջումների չի գնա իր դիրքերից չի հրաժարվի ընդդիմությունն այդ երկրում մշտապես ճնշում է գործադրելու Ալիևի վրա Եվ ինչքան ուժեղ լինի ճնշումը այնքան արագ է սկսվելու պատերազմը

**– Մի տարածված տեսակետ գոյություն ունի. որտեղ էլ որ դա տեզի ու նենա Հայաստանում, ԼՂՀ-ում, թե Ադրբեջանում, հարցերը մեր տարածաշրջանում, և մասնավորապես դա վերաբերում է հակամարտության կարգավորմանը, լուծվում են այսպես ասած աշխարհաքաղաքական մակարդակով Այսինքն՝ մեզնից իբր ոչինչ չի կախված: Ամեն ինչ միջազգային հանրակցության, իսկ ավելի կոնկրետ՝ մեծ տերությունների ձեռքին է·**

Մենք խամաճիկներ չենք Մեզնից շատ բան է կախված: Վերցնենք, օրինակ, նավթի հիմնախնդիրը: Նավթն ինչպե՞ս կարող է հոսել անդրկովկասյան տարածաշրջանով, եթե գոյություն ունեն ղարաբաղյան ու աբխազական հակամարտությունները Չէ՞ որ Աստված մի արասցե եթե ասենք պատերազմ

www.a-pdf.com



սկսվի Լեռնային Ղարաբաղում, այստեղ մեծ բարդություններ են լինելու. Չէ որ եթե չեմ սխալվում խողովակի «վրացական» երթուղին» ադրբեջանական տարածքով անցնում է ռազմաճակատի գծից ընդամենը 20 կմ հեռավորու թյամբ:

**– Դուք Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի ինչպիսի լուծում եք տես- նում**

Ամեն դեպքում ես մի բան գիտեմ Ղարաբաղը երբեք Ադրբեջանի ենթա կայության տակ չի լինելու:

**– Համենայն դեպս մինչև այն ժամանակ քանի դեռ Դուք էլ եք այդ հարցը լուծելու.**

Դա նշանակություն չունի Ղարաբաղը երբեք չի համաձայնի իր անկա խությունը սահմանափակող պարբերակների երբեք Ադրբեջանի կազմում կամ էլ այդ երկրի որևէ ձևի ենթակայության տակ չի լինելու՝ ով էլ որ լինի ԼՂՀ ի կամ Հայաստանի ղեկավարը. Բնականաբար, բանակցային գործըն թացում և Հայաստանը, և ԼՂՀ ն պետք է որ փոխզիջումների գնան Բայց նա յած թե ինչպիսի՝ Նորից եմ կրկնում Ղարաբաղը երբեք Բաքվին չի ենթարկ վելու

**ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԶԱՐԳԱՆԱՆՔ»**

Թարգմանություն ռուսերենից «Գոլոս Արմենիի («Голос Армении»)
25 հունիսի 1998թ

**– Պարոն Բաբայան զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչ ների հետ Ձեր շփումը, որպես կանոն, հանգեցվում է նրան, որ պատերազ մի և խաղաղության մասին հարցեր են հասցեագրում Ձեզ. Ընդհանրապես դրանից զարմանալու հարկ չկա Դուք նախկին ԽՍՀՄ տարածքում՝ «հրա վտանգ» տարածաշրջաններից մեկում, իր ժողովրդի կյանքի, ազատության ու արժանապատվության պաշտպանության դիրքերում կանգնած ամենա մարտունակ բանակի հրամանատարն եք հանդիսանում Այնուամենայնիվ կցանկանայի խախտել ավանդույթը և Ձեզ հետ զրույցի սկզբում էքսկուրս կատարել դեպի անցյալը**

**1988 թվականին Դուք 23 տարեկան էիք. Ինչո՞վ էիք զբաղվում այն ժա մանակ ինչի ց սկսվեց և ինչպե՞ս դասավորվեց Ձեր մասնակցությունը Ղարաբաղյան շարժմանը.**

1988-ին ես աշխատում էի արտադրությունում Այնուհետև մեկնեցի Լե նինգրադ՝ 89-ի սկզբին վերադարձա Ղարաբաղ և մարտին ամուսնացա

Ղարաբաղյան շարժմանն իմ անմիջական տեսանելի մասնակցությունը կապված է 89 թվականի վերջի հետ երբ Խոջալուի իրադարձություններից հե տո ես մտա դիմադրության խմբերից մեկը: Այդ խումբը ղեկավարում էր Մու րադ Պետրոսյանը Ինձ հանձնարարեցին և ես մի ոչ մեծ ջոկատ կազմակեր

www.a-pdf.com


պեցի երիտասարդ կամավորականներից, որը հետագայում խաղաղ բնակչության պաշտպանության կոնկրետ խնդիրներ էր լուծում:

1991 թվականի մայիսին սկսվեց «Օղակ» ռազմագործողությունը: Դա ծանր ժամանակաշրջան էր: Մենք մեր գյուղերից շատերը կորցրինք: Դա Բերդաձորն էր, Շահումյանի շրջանում Գետաշենն ու Մարտունաշենը: Այն բանից հետո, երբ 14 գյուղ էլ Հադրութի շրջանում կորցրինք, անհրաժեշտություն ծագեց ամեն գնով կանգնեցնելու հակառակորդի հետագա առաջխաղացումն այդ ուղղությունում: Առաջադրանք ստանալով, ես մեկնեցի Հադրութի շրջան, որտեղ 70 հրացանավորից բաղկացած մարտական խումբ կազմավորեցի: Այդ ուժերով մեզ հաջողվեց Խանձաձոր գյուղի շրջանում դիմակայել ադրբեջանական օմոնականներին ու խորհրդային զինվորներին:

Այդ գյուղի ազատագրումից հետո եկա Ստեփանակերտ, որպեսզի պարզեմ, թե ինչպես ավելի ամրապնդենք պաշտպանությունը: Սակայն տեղ հասնելուց հետո ինձ ձերբակալեց քաղաքի պարետությունը և հանձնեց ադրբեջանցիներին: Պարզվեց, որ ավելի վաղ «ռոստովյան գործով» Դոնի Ռոստովում ու Ղարաբաղում ձերբակալված մարդկանցից ոմանք ցուցմունքներ էին տվել իմ դեմ: Ինձ զգեցին հետաքննչական մեկուսարան, սկսվեցին հարցաքննությունները ու ամեն տեսակի փորձերը ինձ օգտագործելու այդ գործի հետագա բացահայտման համար:

Այդ իրավիճակում ես նպատակադրվեցի կտրել հետապնդման շղթան, և դա ինձ հաջողվեց. հունիսի 1-ին իմ ձերբակալվելուց հետո այլևս ոչ մի հայ չձերբակալվեց: Շրջանը փակվեց: Բնականաբար, գործի ընթացքում այդ շրջանի մեջ հայտնվեցին և դավաճանները: Այդ նրանք էին, ովքեր կարծում էին, թե մեկ ուրիշին բանտախուց ներքաշելով, իրենք կարող են ազատվել: Այդպես չի լինում:

**– Ինչքա՞ն ժամանակ եք բանտարկված եղել, որտե՞ղ և Ձեզ համար ինչպիսի՞ն է եղել դա` ադրբեջանական գնդանը: Ծանակումներ, կտտանքներ եղե՞լ են արդյոք:**

Սկզբում ինձ Շուշիի մեկուսարանում նստեցրին, 3 օրից հետո տեղափոխեցին Բաքու, այնուհետև կրկին Շուշի: Ընդհանուր հաշվով մոտ 7 ամիս: Բնականաբար և ծանակումներ են եղել, և ծեծեր: Այնտեղ կոնֆետներ չէին բաժանում: Մանավանդ, որ «ռոստովյան գործին» խառնվածներից մեկի կողմից իմ դեմ տրված ցուցմունքները բավական պարզ ու հստակ են եղել: Երբ 1992 թվականին ազատագրում էինք Շուշին, այդ մարդկանց հարցաքննությունների արձանագրությունները մեր ձեռքն ընկան: Հիմա դրա շուրջ քաշքշուկ է սկսված: Ոմանք ջանում են իրենց արդար դուրս բերել, մեղքը ուրիշի վրա գցելով:

**– Ձեզ ինչպե՞ս հաջողվեց բանտից ազատվել, և ի՞նչ եղավ հետո:**

Իմ եղբայրը Ստեփանակերտում կազմակերպեց Ադրբեջանի գլխավոր դատախազի տեղակալի գերումը, որից հետո համաձայնություն ձեռք բերվեց փոխանակման մասին: Փոխանակման պահանջով մեր կողմի ներկայացրած 12 մարդու ցուցակում կար նաև իմ ազգանունը:

www.a-pdf.com



Ազատվելով վերադարձա Ստեփանակերտ և երկու օր հանգստացա Ավե լին ինձ թույլ տալ չէի կարող Իմ հետագա ամբողջ գործունեությունը կապված է եղել զինված պայքարի կազմակերպման, մարտական կոնկրետ գործողու թյունների պլանավորման, նախապատրաստման և իրականացման հետ

1992 թվականին դարձա Սերժ Սարգսյանի տեղակալը Այդ ժամանակ նա ղեկավարում էր Ղարաբաղի զինված ուժերը Բայց հետագայում ստացվեց այնպես որ ամբողջ պատասխանատվությունն ընկած էր ինձ վրա և ստիպ ված էի լուծելու բոլոր այն հարցերը որոնք կապված էին Ղարաբաղի պաշտ պանության հետ

Դատելու իրավունքը, թե ինչ և ինչպես է արվել այն ժամանակ, այդ թվում ինչն է ճիշտ եղել և ինչը՝ սխալ իմ կարծիքով պատկանում է ականատեսնե րին ժողովրդին ու պատմությանը

Ուզում եմ անկեղծորեն ասել: Արդեն այն ժամանակ ես հասկանում էի որ հետագայում առանձին ղեկավարների համար ես անցանկալի մարդ կլինեմ Ես գիտեի թե ինչի եմ գնում: Բայց մեկ այլ ուղի ինձ թույլ տալ ես չէի կարող Ինձ համար դա չկար էլ

**– Սամվել Անդրանիկի Դուք ինչպե՞ս եք գնահատում, ամբողջությամբ վերցված, Հայաստանի քաղաքական ղեկավարության մոտեցումները Ղա րաբաղյան հիմնախնդրի լուծմանը**

Ղարաբաղը Հայաստանի անկապտելի մասն է Այդ պատճառով էլ եթե Հայաստանը հավաստեր որ տարածքային վեճ ունի Ադրբեջանի հետ դա իմ կարծիքով գործընթացը կուղղեր բնական և ամենքին հասկանալի ճանա պարհով Համաշխարհային հանրությունը իսկ գլխավորը մեր ժողովուրդը այդ դեպքում կդադարեին մոլորության մեջ լինել

Այդ հավաստումից հետո Հայաստանը կարող էր հայտարարել, որ այդ վե ճը վարելու իրավունքը հանձնում է հայ ժողովրդի այն հատվածին որն այսօր բնակվում և անցյալում բնակվել է վեճի առարկա հանդիսացող տարածքում:

Դրա հետ մեկտեղ այսօրվա իրադրությունն այնպիսին է որ Ղարաբաղը Ադրբեջանի հետ հիմնախնդիր չունի Ղարաբաղն անկախ է Սակայն ինչպես երևում է, հիմնախնդիր ունի ադրբեջանական կողմը և նա վեճն ավարտված չի համարում: Մենք դա հաշվի ենք առնում և պատրաստ ենք վեճի շարունակման ամեն մի ձևի

**– Դուք ինչպե՞ս եք վերաբերվում այն բանաձևին որի համաձայն Ղա րաբաղյան շարժումն ըստ էության եղել է պայքար հանուն Ղարաբաղի ապազաղութացման Ցանկալի է նաև լսել Ձեր կարծիքը ՀՀ-ի և ԼՂՀ-ի հե տագա միասնացման ուղիների մասին: Մասնավորապես Դուք ինչպե՞ս կվերաբերվեիք ԼՂՀ-ում ՀՀ մշտական ներկայացուցչություն հիմնելու գա ղափարին**

Ապազաղութացման բանաձևը միանգամայն տեղին է և արդարացի Հայաստանի մշտական ներկայացուցչությունը Ղարաբաղում միացումի տե սակետից անհեթեթություն է: Իսկ իրերի այսօրվա դրության շրջանակնե րում դա միանգամայն ընդունելի կլիներ Այդպիսով կապահովվեր համաչա փությունը· Բացի այդ եթե այդպիսի ներկայացուցչությունը լիարյուն լինի

դա կարող է կոնկրետ շատ օգուտ բերել Ինչ վերաբերում է միացմանն ընդհանրապես ապա ըստ իս այստեղ շատ բան կախված է տնտեսությունից Իսկ այդ ոլորտում մենք չպետք է ձեռքներս մեկնած մնանք. Դա նախ ստորացուցիչ է երկրորդ՝ լուրջ արդյունքներ չի տալիս· Ներդրողներ գտնել կարելի է բայց այսօրվա Ղարաբաղում նրանք բացառապես իրենց անձնական շահերն են հետապնդելու ըստ որում՝ նույնիսկ այդ պլանով ապագայի մասին չմտածելով. Մենք պետք է ինքնուրույն զարգանանք Ռեսուրսներ դրա համար մենք ունենք և գյուղատնտեսական և էներգետիկ և արդյունաբերական: Կշռադատված կադրային քաղաքականությունը կոնկրետ մթերքների ստացմանն ուղղված ճյուղային ծրագրերի պետական սատարումը կարող են և պետք է ապահովեն տնտեսական աճն ու մարդկանց բարեկեցությունը Ես կարծում եմ որ Ղարաբաղը պետք է զարգանա առավել արագ տեմպերով քան Հայաստանը: Միայն այդպես մենք կարող ենք մարդկանց շահագրգռել և ապահովել նրանց ներհոսքը ԼՂՀ

Ավելի կոնկրետ խոսելով ասենք սեփականաշնորհման մասին ես ճիշտ չեմ համարում որևէ օբյեկտ վաճառել բյուջեում ինչ որ սիմվոլիկ գումար ստանալ չունենալով հստակ երաշխիքն այն բանի թե այդ օբյեկտի հետ ինչ կկատարվի հետագայում Պետք է լինի մի կոնկրետ մարդ կամ մարդկանց խումբ որը կոնկրետ ծրագիր ու բիզնես պլան ներկայացնի կառավարությանը իսկ կառավարությունը որոշում կայացնի այդ հարցի վերաբերյալ Եթե ընդունվում է որ այդ ծրագիրը նպատակահարմար է պետությունը պետք է դա ֆինանսավորի Ըստ որում սեփականության ձևակերպումը պետք է կատարվի միայն այն բանից հետո երբ ծրագրի իրացման ընթացքում մարվի պետությանն ունեցած պարտքը

**– Կարելի՞ է համարել, որ այդպիսին է եղել Ձեր տեսակետը վերջերս ստեղծված կառավարական ճգնաժամի ընթացքում**

Ընդհանուր գծերով այո.

**– Պետք է ասել, որ կառավարական ճգնաժամի «ղարաբաղյան տարբերակը» դրական նորույթ է հետպատերազմյան ժամանակի հայկական պետական պրակտիկայում Ցավոք՝ գործը չմնաց առանց դրան ինչ-որ հիվանդագին նրբերանգ հաղորդելու փորձերի, բայց, ճիշտն ասած, դրանք այնքան էլ արդյունավետ չեղան· Միայն ողջունել կարելի է այդպիսի տարբերակը, երբ տնտեսական գերակայությունների և կողմնորոշիչների մասին սկզբունքային վեճը նախորդում է առողջ փոփոխություններին ու որոշում դրանք**

**Ինչ վերաբերում է զինված ուժերին, ապա, պաշտպանության ապահովման տեսակետից, դժվար է չհամաձայնել հայտնի բանաձևին «Ով իր բանակը չի կերակրում, նա ստիպված է լինում կերակրելու հակառակորդի բանակը»: Մյուս կողմից ամեն բանակ էլ ինքնուրույն մեծություն չէ, դա քաղաքականության գործիք է և ենթարկվում է քաղաքական ղեկավարության որոշումներին·**

**Դուք ի՞նչ կարծիքի եք դրա վերաբերյալ**

www.a-pdf.com



Ձեր հարցը ես հասկացա հարկապես նրա արտահայտված մասով. Այդ առնչությամբ այսպես կասեմ ես հավատում եմ այն բանին որ, կատարելով քաղաքական ղեկավարության կարգադրությունները և համապատասխան հրամաններ տալով զորքին ես երբեք սփիպված չեմ լինի ընտրություն կատարելու կարգապահության և խղճի միջև

## ԾՐԱԳԻՐԸ ՈՉ ԹԵ ԿԱՐԴԱԼՈՒ ԱՅԼ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ Է...»

Հարցազրույցը՝ Սիրվարդ Մարգարյանի,
«Մարտիկ» սեպտեմբեր 1998թ

1998թ սեպտեմբերի 27 ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների օրը ժամը 12-ին, թիվ 17 ընտրատարածք քվեարկելու եկավ ԼՂՀ պաշտպանության նախարար Արցախի հերոս գեներալ-լեյտենանտ Սամվել Բաբայանը: Քվեարկությունից անմիջապես հետո նախարարը հայտնվեց լրագրողների «օղակման» մեջ

**– Պարոն Բաբայան, վստա՞հ եք Ձեր ընտրությանը**

Իհարկե վստահ եմ

**– Դուք ո՞ւմ օգտին քվեարկեցիք**

Պարզ չէ՞ ում օգտին... Կարեն Բաբայանի

**– Եվ ինչի՞ օգտին ամենից առաջ.**

Բարեկեցության

**– Պարոն Բաբայան, արցախցիներն ընտրության փորձ արդեն ունեն սակայն ներկայիս ընտրությունն իր տեսակի մեջ եզակի է այն ի՞նչ է խորհրդանշում**

Խորհրդանշում է 3 տարվա զուսպ հավաքական անվարձահատույց աշխատանք

**– Ձեր թեկնածուի բնավորության ո ր հատկանիշներն եք առավել գնահատում**

Ես գտնում եմ, որ նա բնավորությամբ զգացմունքային է սրտացավ ան հանդուրժողական և չի կարող անտարբեր անցնել ժողովրդին հուզող ամեն հարցի կողքով Ես կարող եմ նաև երբեմն անտարբեր լինել բայց նա մի քիչ այլ կերպ է նայում իրերին և ամեն ինչ իր սրտին մոտ է ընդունում նա այլ բնավորություն ունի

**– Դուք որքանո վ եք աջակցելու Կարեն Բաբայան քաղաքապետին**

Դա էլ մի ավելի մեծ պրոբլեմ է ոչ թե որքանով այլ բոլոր հարցերը պետք է լուծվեն

**– Ի՞նչ եք կարծում նոր քաղաքապետը կկարողանա իր ծրագրի բոլոր կետերն իրագործել**

www.a-pdf.com



Անպայման Ծրագիրը թղթի վրա գրված է ոչ թե կարդալու այլ իրականացնելու համար Ծրագրի բոլոր կետերն էլ շատ լուրջ մտածված գրված են գումարները հաշվարկված և բոլոր կետերն էլ անպայման իրագործվելու են

**– Իսկ որքանո՞վ է քաղաքապետն առնչվելու պաշտպանության նախարարության հետ, եթե ընտանեկան հանգամանքները հաշվի չառնենք**

Քաղաքապետը ոչ մի կապ չի ունենալու ՊՆ ի հետ սակայն, անկախ նրանից թե ով կլինի քաղաքապետը ես սատարելու եմ որ գործն առաջ գնա Իսկ նրա դեպքում կրկնակին եմ անելու

**– Սկզբունքային հարցերում դուք վիճո ւմ եք**

Իհարկե

**– Ձեր բարեմաղթանքները նորընտիր քաղաքապետին**

Ցանկանանք, որ նա իր բոլոր խոստումները կատարի և մարդկանց օգնի իրոք նորմալ կյանքի վերադառնալու

**– Պարոն Բաբայան, մենք չենք կարող գոնե մեկ ռազմական թեմայով հարց չուղղել Ձեզ... ԼՂՀ ՊԲ-ում սկսված են զորավարժությունները, մեր բանակի մասին խոսվում է որպես ամենամարտունակի: Ձեր կարծիքով ինչպիսի՞ք կլինեն արդյունքները:**

Նորմալ դրական: Ես չէի ասի որ ամենալավն ենք բայց պետք է հասնենք ամենից լավին Զորավարժությունները դեռ մեկ ամիս շարունակվելու են արդյունքները վերջում կերևան

**– Իսկ ի՞նչ կասեք այն մասին, որ որոշ երկրներ հետաքրքրություն են ցուցաբերում սկսված զորավարժությունների կապակցությամբ.**

Դա նրանց պրոբլեմն է մենք մեր պետության տարածքում զորավարժություններ ենք կազմակերպում դա մեր իրավունքն է Պարզապես տեղյակ ենք պահել որ լինելու են... հասկանալով որ այդ աղմուկը կլինի (Ադրբեջանում նախագահական ընտրություն է շուտով) բայց մեր զորավարժությունները դրա հետ ոչ մի կապ չունեն: Դա, նորից եմ կրկնում իրենց պրոբլեմն է ի վերջո իսկ մեր պետության մեջ մենք էլ մեր իրավունքներն ունենք

**Թարգմանություն ռուսերենից, «Նովոե վրեմյա»**
**("Новое время") 3 հոկտեմբերի 1998թ**

**– Պարոն Բաբայան մեր նախորդ զրույցի ժամանակ ամռան սկզբին նոր վարչապետի և կառավարության նշանակումից անմիջապես հետո Դուք ԼՂՀ-ում ճգնաժամի հիմնական պատճառ անվանեցիք այն ոչ ճիշտ քաղաքականությունը որը վարվել է վերջին 3-4 տարում· Գործերն ինչպիսի՞ք են այսօր.**

Ես գտնում եմ որ արդեն առաջխաղացումներ կան և տնտեսական զարգացման այն մոտեցումները որ ես էի առաջարկում հիմա սկզբունքորեն իրացվում են Խոսքն այն մասին է որ մենք ղարաբաղցիներս ինքներս պետք է ստեղծենք մեր տնտեսությունը այլ ոչ թե միայն սպասենք արտասահմանից

www.a-pdf.com



ներդրումների և օգնության Կարծում եմ արդեն գալիք պարվա սկզբին կարելի է խոսել իրական արդյունքների մասին

**– Օրերս ձայների ճնշող մեծամասնությամբ Ստեփանակերտի քաղաքապետ է ընտրվել Ձեր եղբայր Կարեն Բաբայանը Դուք ինչո՞վ կբացատրեք, որ նա վերադառնում է մեծ քաղաքականություն Չէ՞ որ երբ մի քանի ամիս առաջ նա հրաժարական տվեց ԼՂՀ ներքին գործերի նախարարի պաշտոնից, Դուք հայտարարեցիք, որ դա արվում է լոկ նրա համար որպեսզի ապացուցվի որ Բաբայան եղբայրներն ամենևին էլ իշխանության չեն ձգտում.**

Երբ եղբայրս պաշտոնաթող էր լինում ես ասել եմ նա սովորական պետական պաշտոնյա չի լինելու այսինքն մի մարդ որին նշանակում են Իսկ Կարեն Բաբայանի ներկայիս վերադարձը ինչպես Դուք արտահայտվեցիք մեծ քաղաքականություն իր հստակ ու պարզ դրդապատճառներն ունի Ոմանք ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում ասում էին թե մենք հեղինակություն չունենք հանրապետության բնակչության շրջանում իսկ մեր հարցերն իբր, լուծում ենք ուժային մեթոդներով Ինչպես Դուք կարողացաք համոզվել Ստեփանակերտի քաղաքապետի ընտրություններն անցան լիովին քաղաքակիրթ ու ժողովրդավարական ձևով Այդպիսով՝ ԼՂՀ մայրաքաղաքի բնակչությունը քվեարկեց Բաբայանների և այն ամենի օգտին ինչ մենք արդեն մի քանի տարի ի վեր իրականացնում ենք ժողովրդի համար Կարենի օգտին քվեարկած շուրջ 87% ը ինչ որ չափով նաև իմ հանդեպ վստահության արտահայտություն է

**– Դուք ինչո՞վ կբացատրեք պարոն նախարար... Ձեր անձի մասին գոյություն ունեցող մեծաքանակ առասպելները, լեգենդներն ու լուրերը Դրանից շատերին կարելի է ծանոթանալ ոչ թե Ղարաբաղում, այլ՝ Հայաստանում·**

Խորանալ չէի ցանկանա. միայն կասեմ հետևյալը. շատերի սրտով չեն իմ դիրքորոշումները կենտեսության ու քաղաքականության ասպարեզներում. Եվ ընդհանրապես նրանք ուզում են, որ ես ‹միջամտեմ շատ հարցերի Բայց եթե չմիջամտեմ շահեկան չի լինի ինչպես Հայաստանի այնպես էլ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համար: Իմ հակառակորդները բանեցնում են մասնավորապես իմ անվան վարկաբեկման մեթոդներ: Բայց դրանով ոչնչի չեն հասնի

**– Վերջին ժամանակներս շատ հաճախ կարելի է Երևանում լսել Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հետ Ձեր ունեցած տարակարծությունների մասին**

Ռոբերտ Քոչարյանի հետ ես անձնական տարաձայնություններ չունեմ և չեմ ունեցել Պատահում է ես համաձայն չեմ լինում նրա հետ, կամ նա ինչ-որ բանում համաձայն չէ ինձ հետ Բայց դա բնական է. Ես իրավունք ունեմ իմ կարծիքն արտահայտել, նա իրենը Գուցե որևէ մեկի սրտով կլինի որ մեր միջև անձնական տարաձայնություններ ծագեն Բայց ի՞նչ անձնական հիմնախնդիրների կամ պատվամոլության մասին կարող է խոսք լինել երբ ըստ էության մեր ազգի բախտն է որոշվում

www.a-pdf.com



**– Հայկական մամուլում պարածված ևս մեկ վարկածը քաղաքական հա կամարտությունն է Ռոբերտ Քոչարյանի ու Սերժ Սարգսյանի մի կողմից և Վազգեն Սարգսյանի ու Սամվել Բաբայանի միջև մյուս կողմից**

Հակամարտող երկու քաղաքական պանդեմներ գոյություն չունենն Կան որոշ դիրքորոշումներ, երբ Վազգեն Սարգսյանն ինձ հետ է համաձայն կամ ես՝ նրա հետ բայց ես չէի ասի թե դա պանդեմ է

**– Ինչքանո՞վ է ճիշտ, պարոն Բաբայան, հաղորդումն այն մասին, թե ԼՂՀ սահմանադրության նախագծում նախագահի պաշտոն չի նախատես-ված Դուք ինչպե՞ս եք վերաբերվում Ղարաբաղում կառավարման ձևի հարցին. նախագահակա՞ն, թե՞ խորհրդարանական հանրապետություն**

Ես արդեն արտահայտվել եմ խորհրդարանական հանրապետության օգ տին Եվ ահա թե ինչու կրիտիկական շրջանում պետության ճակատագրի հա մար պատասխանատվությունը չպետք է մեկ մարդ ստանձնի քանի որ նա կա րող է սխալներ թույլ տալ՛ Իսկ կառավարման խորհրդարանային կարգի դեպ քում վճիռները կոլեկտիվ ձևով են կայացվում՛ Կարծում եմ հայ ժողովրդի հա սար խորհրդարանական հանրապետությունն առավել ընդունելի է քան նա խ ագահականը

**– Կարո՞ղ է այնպիսի իրադրություն ստեղծվել երբ ԼՂՀ վարչապետի պաշտոնը Դուք զբաղեցնեք.**

Եթե տնտեսական ճգնաժամ լինի և եթե որևէ պաշտոն առաջարկեն ինձ ես կարող եմ պատասխանատվությունն ինձ վրա վերցնել Բայց բանակը ես երբեք չեմ թողնի, մինչև ղարաբաղյան հիմնախնդիրը չլուծվի

**– Պարոն նախարար, Դուք մասնակցել եք Ստեփանակերտում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ վերջին հանդիպումներին Կա րո՞ղ է արդյոք բանակցային գործընթացը վերջապես դուրս գալ ներկայիս փակուղուց**

Համանախագահներից լսածներս հիմք են տալիս արձանագրելու կարե լի է ընդունելի ձևակերպումներ գտնել և առաջ ընթանալ կարգավորման գոր ծում Բայց շտապել պետք չէ Հնարավոր է՝ Ադրբեջանում նախագահական ընտրություններից հետո միջնորդներից փաստաթուղթ ստանանք և դրա վրա աշխատենք

Ակնհայտ է մի բան Եթե Ադրբեջանը կամենում է հիմնախնդիրը լուծել խա ղաղ ճանապարհով, նա պետք է իրատեսական նոր առաջարկություններ անի այլ ոչ թե կառչած մնա Ղարաբաղի ինքնավարության պնդմանը՛ Բաքվի նման կոշտ մոտեցման դեպքում ոչ մի լավ բան սպասել չի կարելի

**– Եվ այնուամենայնիվ, եթե ամենամոտ ժամանակներս բանակցու թյունները մեռյալ կետից չշարժվեն, արդյոք կարո՞ղ են, ասենք անցանկա լի հետևանքներ լինել մեր տարածաշրջանի համար**

Նման դեպքում բարդություններ, բնականաբար կծագեն Հնարավոր է նո յնիսկ ռազմական գործողությունների վերսկսումը

www.a-pdf.com



## ՉԿԱ ԵՐԿՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՂՀ պաշտպանության նախարարը
Երևանի պետհամալսարանում
Թամարա Ղալեչյան Հայաստանի Հանրապետություն» 22 դեկտեմբերի
1998թ

Դահլիճը բառացիորեն կլանում էր յուրաքանչյուր խոսքը բարբառային շեշտադրումներով ու լեզվառճական բազում դրսևորումներով բայց այնքան հայերեն ու հայավարի.. Մանավանդ պետական պաշտոնյայի շուրթերից լսել չմանկրող չլղոզված ու չսվաղված խոսք ուղղակի հազվադեպ է. Ու ժամանակ առ ժամանակ ԼՂՀ պաշտպանության նախարար Սամվել Բաբայանի խոսքն ընդհատվում էր ծափահարություններով Խոսում էր առանց այլևայլության «Ես կարիերիստ չեմ.... նախագահ դառնալ չեմ ուզում.... Ղարաբաղից դուրս էլ ինձ չեմ պատկերացնում.... 92 ից ես միշտ իշխանություն եմ ունեցել ու պատաս խանատվություն կրել Ոչ մի բանակցություն չի եղել որին ես չմասնակցեի կամ կոնկրետ ինձ հետ չքննարկվեր....»:

Ըստ բանախոսի՝ Ղարաբաղում իշխանությունների միջև հակասություն չի եղել ու չի լինելու: Այլ բան է որ Ղարաբաղի և Հայաստանի տնտեսության այսպիսի զարգացումը Սամվել Բաբայանի սրտով չէ Իսկ տնտեսության խնդիրներն էլ իրեն հետաքրքրում են այնքանով որքանով դրանք առնչվում են բանակի խնդիրներին քանի որ «սոված փղամարդը չի կարող կռիվ գնալ...» Ըստ Սամվել Բաբայանի բանակն այո լուրջ խնդիրներ ունի մաս նավորապես 150 հազ բնակչությունից պահանջել հինգ վեց հազարանոց որակյալ սպայական կազմ անհիմն է Մյուս կողմից զինվորների 40 %-ի կրթական մակարդակը 4 րդ 5 րդ դասարանից չի բարձրանում Եվ այս փաս տի հետ հաշվի նստել է պետք

Խոսելով Հայաստան Ղարաբաղ հարաբերությունների մասին ԼՂՀ պաշտպանության նախարարը շեշտեց. «Չկա երկու հայկական պետու թյուն.... Մենք ապրում ենք միևնույն տնտեսական գոտում գործում նույն քաղաքական դաշտում, առաջնորդվում նույն օրենքներով Աշխարհի հա մար մենք երկու պետություն ենք բայց մեր ներսում այսպես մտածելն անհասկանալի է Մենք միասին ենք հաղթել այս կռվում....»: Բայցև չի նշա նակում թե Հայաստանի ու Ղարաբաղի միջև բոլոր կնճիռները հարթված են Մենք Հայաստանի իշխանությունների առջև դնում ենք կոնկրետ հարց փոխզիջումային տարբերակով ի՞նչ ենք զիջելու, ի՞նչը չենք զիջելու.... Էն գլխից թող ասեն մեզ հող պե՞տք է թե՞ ոչ....»: Մյուս կողմից Սամվել Բաբա յանը էական տարբերություն էր տեսնում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախա գահների այս և նախորդ առաջարկների միջև, քանի որ հենց Ադրբեջանի մեր ժողական դիրքն ինքնին ինչ-որ բան նշանակում է իսկ փաստաթուղթը բա նակցությունների ճանապարհով ապահովում է Ղարաբաղի անկախության հնարավորությունը ի տարբերություն նախորդի որն ի սկզբանե Ղարաբա ղը դիտում էր Ադրբեջանի կազմում «Ընդհանուր պետություն› ձևակերպու մը Սամվել Բաբայանը չի ընդունում քանի որ ըստ նրա դա քաղաքական

www.a-pdf.com



բառախաղ է Փոխզիջումների ճանապարհն ընդունելով որ մի բան պիտի զիջել» նա մերժում է Լաչինի ու Քելբաջարի հանձնումը «Ձեր գրավածը ձեզ հալալ մերը մեզ....› . Նրա կարծիքով չարժե շարունակ խոսել Շահումյանից վաղն էլ հիշել Նախիջևանը, հետո գուցե Արևմտյան Հայաստանը «Ծովից ծով Հայաստանն էլ մեր հողն է թող փան Տվող կա՞ բայց....»

Անդրադառնալով Ղարաբաղի զարգացման հեռանկարներին Սամվել Բաբայանը նշեց որ Ղարաբաղին պետք է առանձնակի մոտեցում և այս հարցը ևս դրված է Հայաստանի իշխանությունների առջև Քանի որ ներկա յումս ղարաբաղցիներից շատերը բնակարաններ ունեն Հայաստանում և կա րող են թողնել իրենց բնակավայրերը ուստի պետք է ոչ թե «սահման դնել և ասել չի կարելի» (որը դարձյալ փաբբերակ է բայց իր կողմից ոչ ընդունելի) այլ՝ տնտեսությունը խթանելու պայմաններ ստեղծել այնպես որ Հայաստա նից հոսք լինի Ղարաբաղ և ոչ հակառակը Սամվել Բաբայանն իրեն պատաս խանատու է զգում արյամբ ազատագրված հողի համար

Այն հարցին թե ինչպես է վերաբերվում Վազգեն Մանուկյանի այն հայտա րարությանը ըստ որի՝ Հայաստանի ու Ղարաբաղի տնտեսությունը գտնվում է 4 մարդու ձեռքին որոնցից մեկն էլ Սամվել Բաբայանն է վերջինս պատասխա նեց որ ժամը 16 ին պայմանավորվածություն ունի նրա հետ հենց այդ հար ցով եթե մի մարդու ասում են գող ես, պիտի ասեն թե ինչ է գողացել «Նա իմ մասին իրավունք չունի այդպես խոսելու »

**Հարցազրույց Ազատություն ռադիոկայանին**
**2 ապրիլի, 1999թ**

**– Արդյո՞ք ճիշտ են այն տեղեկությունները, որ Դուք խորհրդարանական նախընտրական պայքարում հովանավորում եք «Իրավունք և միաբանու թյուն» նախընտրական դաշինքի և Սամվել Շահինյանի «Ազգային պետու թյուն» կամ որևէ այլ քաղաքական ուժի, գործչի ընտրարշավը·**

Այո իրոք ես հովանավորում եմ «Իրավունք և միաբանություն նախընտրական դաշինքը·

Ի դեպ Սամվել Շահինյանի «Ազգային պետություն» կուսակցությունը նույնպես մտադրություն ուներ միանալու այդ դաշինքին: Սակայն դա տեղի չունեցավ Այնպես որ այսօր այն դուրս է մնացել մեր հետաքրքրության տե սադաշտից և, բնականաբար չի կարող օգտվել մեր հովանավորությունից

**– Ո՞րն է նման հովանավորության քաղաքական նպատակը**

Կարծում եմ նպատակը պարզ է ու հասկանալի Անձամբ ես ինչպես միշտ այսօր նույնպես իրավական պետության ստեղծման կողմնակից եմ որի շրջանակներում ամեն քայլափոխի իրեն զգալ պիտի տա օրենքի գերակա յությունը Կարծում եմ՝ շատ-շատերը կհամաձայնեն ինձ հետ որ առանց իրա վական համապարփակ դաշտի ստեղծման դա անհնար է: Հանրահայտ է որ այդ իրավական դաշտը ստեղծվում է առաջին հերթին խորհրդարանում այն

www.a-pdf.com



պես որ անպարբեր անցնել խորհրդարանական ընտրությունների կողքով անհնար է Ժողովուրդն իր թիկունքին ամեն քայլափոխի պետք է զգա իր ընտրյալների շնչառությունը և համոզված լինի, որ օրենսդիր մարմնում քննության առնվող յուրաքանչյուր խնդիր ուղղված կլինի իր կենսամակարդակի բարձրացմանը բարեկեցության ամրապնդմանը

Գաղտնիք չէ, որ Հայաստանի տնտեսական զարգացման վերաբերյալ իմ պատկերացումները միանգամայն այլ են քան ասենք ներկայիս իշխանությունների վարած քաղաքականությունը Բերեմ կոնկրետ մեկ օրինակ սե փականաշնորհման գործընթացում Հայաստանի ամենախոշոր ձեռնարկություններին տեր են դարձել հիմնականում իշխանության ներկայացուցիչները կամ այսպես ասած պետական չինովնիկները Այդ ձեռնարկությունների զգալի մասը ինչ-ինչ պատճառներով այսօր չի գործում Ես այն կարծիքին եմ, որ պետք է ընտրվի այնպիսի խորհրդարան որը կընդունի մի օրենք համաձայն որի՝ չգործող գործարանները ենթարկվեն հնգապատիկ ավելի գույքահարկման քան նրանք որ գործում են Նման պարագայում այս ձեռնարկատերերը ստիպված պետք է լինեն կատարելու խոշոր ներդրումներ նոր աշխատատեղեր ապահովելով բնակչության համար կամ ճարահատյալ կհրաժարվեն այդ ձեռնարկություններից

Հայաստանի տնտեսական զարգացումը մեզ ղարաբաղցիներիս, համար եղել և մնում է ամենաառաջնային և կենսական խնդիր որովհետև մենք առանց Հայաստանի հզորացման և բարգավաճման չենք պատկերացնում Լեռնային Ղարաբաղի վաղվա օրը Ահա թերևս այն հիմնական պատճառներից մեկը որ ես անհրաժեշտ եմ գտել հովանավորելու «Իրավունք և միաբանություն» նախընտրական դաշինքը:

**– Ինչպիսի՞ կանխատեսումներ ունեք Ձեր հովանավորած ուժերի ապագա խորհրդարանում զբաղեցնելիք տեղերի առթիվ, և, Ձեր կարծիքով, այս ուժերից ընտրված պատգամավորները օրենսդրական հատկապես ի՞նչ գործունեություն պիտի ծավալեն:**

Ես կանխատեսումներ անելու սովորություն չունեմ Խորհրդարանն ընտրվելու է ժողովրդի կողմից, և ես շատ կուզենայի, որ գոնե այս անգամ ժողովուրդը կատարի միանգամայն ճիշտ ընտրություն որովհետև գուցե հենց այս ընտրությամբ պայմանավորված լինի Հայաստանի ու նաև Լեռնային Ղարաբաղի ապագան Մի խոսքով ժամանակը ցույց կտա թե մենք ինչպիսի ընտրություն կատարեցինք

**– Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկն ասել է, թե «լավ ձիու վրա չեք դնում Ձեր խաղագումարը, ինչպե՞ս եք սրան վերաբերվում**

Ես մի թուլություն ունեմ սիրում եմ անպաշտպաններին թույլերին և տկարներին Մի խոսքով նրանց, ում իրավունքները ոտնահարվել են Նրանք միշտ էլ աջակցության կարիք ունեն ես մնում եմ այն կարծիքին որ հենց նրանք են արդարացի պետք է սատար կանգնել նրանց որպեսզի կարողանան արդարություն հաստատել այս երկրում: Ինչ վերաբերում է ուժեղներին չեմ կարծում որ նրանք որևէ պաշտպանության կարիք ունեն Ես ժողովրդի

www.a-pdf.com



այն հատվածի կողմն եմ, որն աջակցության կարիք ունի իր ճշմարտությունը հաստատելու համար:

**– Որքա՞ն գումար եք նախատեսում Ձեր այս հովանավորության համար:**

Չի բացառվում, որ այս հովանավորությունը ֆինանսական աջակցության կարիք չունենա: Նրանք, ովքեր կողմնակից են, որ Հայաստանը լինի հզոր և բարգավաճ պետություն, որ մենք դառնանք արժանապատիվ ազգ, մեզ կաջակցեն. Բացի այդ, չեմ կարծում, որ բոլոր խնդիրները կարելի է լուծել ինչ-որ գումարներով: Պետք չէ նվաստացնել մարդկանց, առավել ևս արժեզրկել պետի ունենալիք խորհրդարանական ընտրությունները:

**– Հայաստանի մամուլը գրում է, որ ընտրապայքարը հիմնականում ծավալվելու է Վազգեն Սարգսյանի և Սերժ Սարգսյանի հովանավորած քաղաքական ուժերի միջև, Դուք Ձեր ուժերը կհամարեիք երրո՞րդը:**

Անկեղծ ասած, ես նման խնդիր չեմ դրել իմ առաջ, թե մենք այս ընտրապայքարում որերորդ ուժը կներկայացնենք: Նորից եմ կրկնում, ընտրությունների արդյունքում ամեն ինչ կպարզվի, առավել ևս այն, թե որ քաղաքական գործիչներն են օգտվում ժողովրդի վստահությունից, աջակցությունից. Կարծում եմ, պետք է անել ամեն բան, որպեսզի նոր խորհրդարանում ընտրվեն մեր ազգի լավագույն զավակները, անկախ իրենց կուսակցական պատկանելությունից, պետք է անել ամեն բան, որպեսզի ընտրությունները լինեն արդար և թափանցիկ: Միայն նման պարագայում մենք կարող ենք վստահ լինել մեր վաղվա խոստումնալից օրվա հանդեպ: Այլընտրանք չկա: Նոր խորհրդարանն իր մակարդակով, բոլոր առումներով ժողովրդանպաստ օրենքներով պետք է գերազանցի նախորդներին: Ես դրան եմ ձգտում և համոզված եմ, որ այստեղ արտառոց ոչինչ չկա:

**– Ի՞նչ սահմաններում եք տեսնում ԼՂՀ ղեկավարության մասնակցությունը ՀՀ քաղաքական գործընթացներին:**

ԼՂՀ ղեկավարությունը բոլոր բնագավառներում էլ համագործակցել է և կշարունակի առաջիկայում նույնպես: Դա օրինաչափ երևույթ է: Այլ հարց է, թե որքանով է արդյունավետ այդ համագործակցությունը: Անձամբ ես մնում եմ համակողմանի համագործակցության կողմնակիցը: Եվ իմ ամենօրյա գործունեությամբ կնպաստեմ դրան:

Արդի փուլում, երբ Հայաստանում իշխանության համար պայքարը հետզհետե սպառնում է առավել լարված բնույթ, հաճախ անզամ անտեսվում են ժողովրդավարական սկզբունքները, որն իր բացասական ազդեցությունն է թողնում նաև Լեռնային Ղարաբաղի վրա, կարծում եմ, որ մեր մասնակցությունը դառնում է կենսական անհրաժեշտություն:

Վերջիվերջո, մենք դարաբաղցիներս գտնում ենք, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի բաղկացուցիչ մասն է:

www.a-pdf.com



## ԵՍ ԱՅՍՕՐ ԷԼ ԵՄ ԽՆԴՐՈՒՄ, ՈՐ ԻՆՁ ԱԶԱՏԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ»

Հարցազրույցը Արամ Աբրահամյանի
Առավոտ» 30 ապրիլի 1999թ

**– Մեր խոսակցությունը սկսենք բոլորի կողմից ընդունված այն ճշմար տությունից, որ մենք մի ազգ ենք, մի թիմ ենք, և տարբեր հատվածների, տեղայնականության հետ կապված բոլոր խոսակցությունները սին են և վնասակար Բայց երբեմն Հայաստանից և Ղարաբաղից այնպիսի ձայներ են հնչում, որ տպավորություն է ստեղծվում, թե մենք իրար խանգարում ենք.**

Ոչ ինձ չի թվում, որ մենք իրար խանգարում ենք Նման տրամադրու թյուններ են սերմանում որոշ ուժեր, որոնք ցանկանում են պղտոր ջրում ձուկ որսալ Երևի ճիշտ կլինի որ այդ մասին ժողովուրդն արտահայտվի և մենք կզգանք որ նման մթնոլորտ փորձում է ստեղծել քաղաքական վերնախավի մի մասը և ժողովրդի տրամադրության հետ դա կապ չունի

**– Հնարավո՞ր է արդյոք, որ, Ձեր ակտիվ քաղաքականության ընտր արշավ մտնելու հետ կապված սրվեն Հայաստանի և Ղարաբաղի միջև հակասությունները**

Չեմ կարծում, որ դրանով պիտի այդ հակասությունները սրվեն Արդեն սրված են դրանից ավելի չի լինի Ես մտածելով եմ քաղաքականություն մտել ունեմ իմ տեսակետները թե ինչպես է պետք դուրս բերել ժողովրդին այս ծանր վիճակից: Ամեն մի պատասխանատու մարդ պետք է իր առաջարկ ներն անի թե ինչպես է հնարավոր շտկել վիճակը: Ես պատրաստվում եմ իմ այս կոնկրետ առաջարկը հրապարակելու մամուլում և թող մարդիկ դատեն որտեղից են գալիս իմ մտահոգությունները: Պետք չէ կարծել որ եթե մարդը քաղաքականություն է մտել ուրեմն անպայման ինչ որ շահ ունի Ես ոչ մի շահ չունեմ բացի ժողովրդի նորմալ բարեկեցիկ կյանքից

**– Որքանո՞վ եք Դուք բնականոն համարում, որ Հայաստանի մի հատվա ծի ուժային նախարարը, որն ամբողջ Հայաստանի պաշտպանության նա խարար Վազգեն Սարգսյանի և զինված ուժերի գլխավոր հրամանատար, նախագահ Ռոբերտ Քոչարյանի ստորադասն է, ստեղծում է իր սեփական քաղաքական ուժը «Իրավունք և միաբանություն» դաշինքը, որն ընտրու թյունների ժամանակ հակադրվելու է Ձեր ղեկավարների կողմից հովանա վորված «Միասնություն» դաշինքին Այդ բախումը որքա՞ն է նորմալ պե տության համար**

Առաջինը ես չեմ կարծում որ որևէ բախում է եղել կամ լինելու է Երկրոր դը ես չեմ կարող մտնել Վազգեն Սարգսյան-Կարեն Դեմիրճյան դաշինքի մեջ զուտ գաղափարական պատճառներով

**– Այդ դաշինքի գաղափարներից որո՞նք են Ձեզ համար անընդունելի**

Ինձ համար անընդունելի է որ այդ դաշինքը ստեղծվել է որոշակի մի նպատակով որին ես համաձայն չեմ Ավելի մանրամասն ես չեմ ուզում խոսել դրա մասին գուցե իմ հաշվարկները սխալ են և հետո դա չփորձեն շահարկել

www.a-pdf.com



Ես ունեմ տնտեսության զարգացման իմ ծրագրերը և փորձելու եմ, որ հնարավորին չափ իմ առաջարկներն ընդունվեն Այստեղ ես որևէ բախում չեմ տեսնում

**– Բայց Ձեր հովանավորած թեկնածուներն ու «Միասնության» թեկնածուներն ընտրությունների ժամանակ պայքարելու են իրար դեմ.**

Պետք է լինի ազնիվ պայքար, և այստեղ ուժային մեթոդներ չեն կիրառվելու Իմ կարծիքով դա չպիտի լինի

**– Ենթադրենք մայիսի 30-ի գիշերը ընտրատարածք են մտնում «Միասնության» դաշինքի կողմնակիցները, «ֆիդայիներն» ու երկրապահները և փորձում են գողանալ քվեատուփը կամ ծեծել այլ թեկնածուների, վստահված անձանց: Դուք ի՞նչ եք դրան հակադրելու**

– Ոչինչ՝ օրենքից բացի Բայց ինձ չի թվում թե այդպիսի դեպքեր են լինելու Բոլորս հասկանում ենք որ ընտրությունները պետք է ազնիվ լինեն և խորհրդարանում իսկապես ժողովրդի ընտրյալները հավաքվեն

**– Դուք չեք կարծո՞ւմ, որ, հակազդելով Ձեր՝ քաղաքականություն մտնելուն, Ձեզ կարող են ազատել նախարարի պաշտոնից:**

– Խնդրեմ որևէ պրոբլեմ չունեմ Ես մի քանի անգամ ասել եմ, որ ինքս եմ դիմել ինձ պաշտոնից ազատելու համար Ցանկացած պահի կարող են ազատել

**– Եվ Դուք խաղա՞ղ եք հեռանալու.**

Իհարկե խաղաղ Ես ոչ մեկի համար խնդիր չեմ ստեղծի Եվ այսօր էլ եմ խնդրում որ ինձ ազատեն աշխատանքից Պաշտոնն ինձ իսկապես կաշկանդում է

**– Ի՞նչն է, որ Ձեզ դուր չի գալիս Հայաստանի կառավարության տնտեսական քաղաքականության մեջ և դրանից տարբերվող ի՞նչ եք Դուք անում Ղարաբաղում:**

– 1995 թվականի 130 միլիարդ դրամ բյուջեով Հայաստանի բնակչությունն ապրում է համարյա նույն թշվառության մեջ ինչև այսօր 260 միլիարդով: Այդ երկու անգամ ավելացումը կորում է կոնկրետ նորմատիվային ակտերում Պարզվում է որ պետական հիմնարկների պետական բյուրոկրատիայի սպասարկման ծախսերը նույնպես աճել են մոտ երկու անգամ. Ասենք նախարարն ունեցել է տարեկան 800 հազար դրամ ծախս ծառայողական մեքենայի համար Այսօր նույն ծախսը բյուջեում դարձել է 1 միլիոն 200 հազար դրամ Նույնը փոխնախարարը, վարչության պետը և մնացած պաշտոնյաները: Այդ գումարները մեր կարծիքով փոշիանում են: Ղարաբաղում այս նորմատիվ ակտերը փոխվել են և բյուջեի մոտավորապես 30 տոկոսը գնում է աշխատավարձի բարձրացմանը և ներդրումային քաղաքականությանը: Մենք առաջարկում ենք նույնը անել Հայաստանում. Այսօր Ղարաբաղում ուսուցիչը ստանում է 21 25 հազար դրամ թոշակառուն 6–7 հազար դրամ, որովհետև օրինակ նախարարի ծառայողական մեքենայի վրա միլիոններ չենք մսխում Մենք թվեր չենք ուռճացնում գումարները փոշիացնելու համար՝ Հրապարակեք Ղարաբաղի այս տարվա բյուջեն Ձեր թերթում թող տնտեսագետները դա քննարկեն ճիշտն ու սխալը մեզ ցույց տան

www.a-pdf.com



**– Տնտեսական զարգացումը պետք է խորհրդարա՞նն ապահովի**

Իհարկե խորհրդարանը Նա պետք է օրենքներով փոփոխություններ մտցնի նորմատիվային բազայի մեջ և հետևի որ այդ օրենքը կառավարո թյան կողմից կատարվի Առաջին հերթին դա վերաբերում է բյուջեին Դա սահմանադրությունից հետո պետության երկրորդ օրենքն է Դրա պապաս խանատուն ոչ այնքան վարչապետն է կամ նախագահը, որքան խորհրդարա նը, այն մարդիկ ովքեր քվեարկել են բյուջեի օգտին: Վարչապետը, կառավա րությունը, պետությունը պետք է մեկ տարի ապրեն այդ օրենքով: Տնտեսա կան սխալներ թույլ տալու մեղքը, իմ կարծիքով, առաջին հերթին պատգամա վորներինն է Երբ բյուջեն ընդունելուց հետո նրանք վեր են կենում և սկսում են խոսել սեփականաշնորհումից կամ էլեկտրաէներգիայի սակագներից, դա արդեն պոպուլիզմ է· Չընդունեինք այդ բյուջեն և վարչապետը նորը կառաջար կեր կամ նոր վարչապետ կլիներ. դրանով է տնտեսական իրավիճակը շտկվե լու: Խորհրդարանը չպիտի թողնի, որ բյուջեում անհեթեթ թվեր գրվեն, իսկ ըն դունած ռեալ թվերին պետք է տեր կանգնի վերահսկելով կառավարությանը

**– Ձեր հավակնությունները սահմանափակվո՞ւմ են պառլամենտով թե Դուք հետո ավելի առաջ եք գնալու**

Այո սահմանափակվում են պառլամենտով որովհետև այնտեղ է իմ կարծիքով որ պետք է որոշվեն ազգի համար կարևոր խնդիրները, որոնք այսօր իրենց բնույթով տնտեսական են Ես այլ շահագրգռություն չունեմ բացի Հայաստանի տնտեսական զարգացումից Հայաստան ասելով նկատի ունեմ նաև Ղարաբաղը

**– Մի քանի օր առաջ Դուք լրագրողներին ասացիք, որ Ղարաբաղին վտանգ է սպառնում առաջին հերթին Հայաստանից: Խնդրում եմ վերծանել այդ արտահայտությունը**

Ես նկատի ունեի որ Հայաստանի ճիշտ տնտեսական քաղաքականու թյունն է որ կարող է ապահովել Ղարաբաղի հաղթանակը Եթե սխալ տնտե սական քաղաքականություն վարվի, պարտությունը հենց այստեղից է գալու Ինչ էլ այստեղ անենք վիճակը չենք կարողանա փոխել:

Այստեղից ելնելով եմ ես կարևորություն տալիս խորհրդարանին Նայեք տարբեր կուսակցությունների ընտրական ցուցակները և կողմնորոշվեք Ինձ թվում է չի կարող գործարանի տերը պատգամավոր լինել և պաշտպանել ոչ թե իր բիզնեսը այլ ժողովրդի շահերը· Դրա համար ես գտնում եմ որ խորհրդարանում պետք է լինեն մասնագետներ տնտեսագետներ ովքեր ի վիճակի կլինեն փոխելու մաքսային հարկային օրենքները ճիշտ բյուջե կազմելու և դրանով աշխատեցնելու տնտեսությունը

**– Եվ այդ ամենը անմիջականորեն կապվում է Ղարաբաղի անվտանգու թյան հե՞տ**

Իհարկե Երբ պատերազմը սկսվում է, նույն հայաստանցի կամ ղարա բաղցի տղան պետք է գնա կռվի ու գնալուց առաջ պիտի իմանա, որ իր ընտա նիքն ապահով է: Մի անգամ նա կռվեց ու հաղթեց Այսօր նրա ընտանիքը կա րիքի մեջ է և մինչև նա իր երեխայի բարեկեցության համար վստահ չլինի երկրորդ անգամ չի գնա 88 ից հետո մեր հաղթանակները հիմնված են ազգի

www.a-pdf.com



անձնախնդիր ոգևորության, պոռթկման վրա Հիմա դա չի լինելու և չի կարող լինել եթե այսպես շարունակվի

**– Ի՞նչ է, մեզ նոր պատերազմ է սպասում**

Մենք պետք է միշտ պատրաստ լինենք, որպեսզի պատերազմ չլինի կռի վը միշտ էլ կա Եթե թույլ լինենք ապա իհարկե մեզ ուտելու են

**– Դուք լա՞վ եք ճանաչում այն մարդկանց, որոնց առաջադրել եք և պաշտպանում եք.**

Ոչ կան մարդիկ, որոնց հետ ես ծանոթ չեմ Բայց վստահ եմ որ նրանք ինտելիգենտ մարդիկ են Ես նրանց չեմ ընդունում որպես պառլամենտում «իմ մարդկանց»: Ամեն նորմալ ինտելիգենտ մարդու հետ ես կարող եմ և պատ րաստ եմ վիճել, բանակցել համոզել և համոզվել ‹Իմ մարդ» «նրա մարդ հասկացությունները չեմ ընդունում Գո ցե մեկն էլ իմ մասին է ասում թե ես այսինչի մարդն» եմ

**Հարցազրույցը Ալիք Ալեքսանդրյանի,**
**Հայկական միջազգային ամսաթերթ»,**
**18 մայիսի 1999թ**

**– ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ծանոթ առաջարկու թյունների Հայաստանի ու ԼՂՀ-ի կողմից ընդունվելուց և Ադրբեջանի կող մից մերժվելուց հետո ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման բանակցություն ների շրջանակում տիրում է անորոշ իրավիճակ: Ինչպե՞ս եք գնահատում ներկա փուլը. դեպի ո՞ւր ենք գնում և ի՞նչ հնարավոր զարգացումներ կա րող են լինել·**

Ադրբեջանը պատրաստ չէ խնդրի լուծմանը Նա ունի իր ներքին պրոբ լեմները Իշխանությունները չեն կարող լուծել անգամ փոքր հարցեր Նրանք պատրաստ չեն զիջումների որովհետև մինչ այդ ժողովրդին խոստումներ են տվել թե սա իրենց մարզն է լինելու: Ուրիշ հարց չկա. Ադրբեջանի իշխանու թյունը պետք է իր մեջ ուժ գտնի և որոշում կայացնի: Քաղաքական մթնոլոր տը գտնում եմ դրական: Չկան այն մտահոգությունները որոնք արտահայտ վում էին անցյալում ճնշումների կամ այլ ձևով Նման ճնշումներ չեն եղել չկան և առավել ևս չեն էլ լինելու Խնդիրն այն է որ կողմերը պետք է կտրուկ զիջումների գնան ու որոշում կայացնեն ինչը Ադրբեջանի դեպքում անսպասե լի է ոչ թե այն իմաստով որ նա պատրաստվում է ուժով գրավելու մեկ է նա չի կարող ուժով գրավել այլ իշխանությունն ուղղակի պատրաստ չէ որոշում կայացնելու:

**– Ասում եք, որ ճնշումներ չկան, և Ադրբեջանը չի դիմի պատերազմի, քանի որ գիտի, որ չի կարող հաղթող դուրս գալ: Սա նշանակում է որ ներ կա անորոշ վիճակը շարունակվելու է Դա չի՞ մտահոգում Ձեզ**

Այս վիճակը Ղարաբաղին չի նեղում այնքան որքան պետք է նեղի Ադրբեջանին Խնդիրը հարցի արագ կամ դանդաղ լուծման մեջ չէ այլ այն է

www.a-pdf.com



որ մարդիկ ապրեն ազատ իրենք որոշեն իրենց կյանքն ու ապագան Մեզ չի թվում որ հարցի լուծումից հետո տնտեսական վիճակն իսկույն լավանալու է Մեր և սփյուռքահայության պարտքն է արագ վերականգնել տնտեսությունը որպեսզի ժողովուրդը բարվոք վիճակում լինի Երևի Դուք նկատել եք, որ մենք չենք էլ սպասում, որ մեր հայրենակիցները դրսից գան, օգնեն Մենք մեր հնա րավորության սահմաններում փորձում ենք ներսից շտկել իրավիճակը, և ինձ թվում է, որ մեզ հաջողվում է դա անել Այս ձևով շարունակելու դեպքում մենք իրոք ոտքի կկանգնենք և շտապելու կարիք էլ չի լինի· Այսօր աշխարհում կարևորը տնտեսության հարցի լուծումն է: Այդ հարցի լուծումը բերում է քաղաքական հարցերի լուծման

**– Չունե՞ք մտահոգություն, որ Կոսովոյի հարցի լուծումից հետո Արև մուտքի և ՆԱՏՕ-ի ուշադրությունը կկենտրոնացվի Հարավային Կովկասի և հատկապես Ղարաբաղի վրա·**

Այդ մտավախությունը չունենք և բացի այդ Կոսովոյի հարցը չի կարելի Ղարաբաղի հետ համեմատել: Հետաքրքրության ակտիվանալու դեպքում ան գամ մեզ որևիցե վնաս չի հասնելու որովհետև մենք պահանջում ենք մեր ազ գային իրավունքները Մենք որևիցե կետ չենք խախտում և որևէ մեկը մեզ պատժելու ձև չունի Բայց Ադրբեջանը մի շարք կետեր է խախտում և պատժման թիրախը նա է Ինչո՞ւ մենք պետք է մտահոգվենք թող մտահոգվի Ադրբեջանը

**– Երևանյան թերթերից մեկի հետ հարցազրույցի ժամանակ Դուք վեր ջերս հայտարարել եք, որ այդքան էլ կառչած չեք ԼՂՀ պաշտպանության նախարարի պաշտոնից Այդ դեպքում աշխատանքի ի՞նչ ասպարեզ եք նախատեսում, արդյոք մտքով լիովին հանգիստ կլինե՞ք որ բանակը կշարունակի պահպանել իր ներկա հզորությունը**

Հարցը ճիշտ չեք մեկնաբանում Ինձ ուղիղ հարց էին տվել որ ‹եթե մտնում եք Հայաստանի քաղաքական կյանքի մեջ չե՞ք մտահոգվում, որ կա րող են ազատել Ձեզ ներկա պաշտոնից»: Ես պատասխանել եմ որ ինքս մի քանի անգամ դիմել եմ և որևէ մտավախություն չունեմ պաշտոնից ազատվե լու Ես չեմ մտածում որ մշտապես պետք է լինեմ պաշտպանության նախ արար Եթե Աստված մի օր տա որ հաջողություն ունենանք և վերջնական փաստաթուղթ ստորագրենք իհարկե զբաղվելու եմ բիզնեսով ոչ թե բանա կով, քանի որ այսօր մեզ պետք է նաև տնտեսական հաղթանակ: Նորից պետք է մտնել մի ուրիշ տարածք այս դեպքում տնտեսական տարածք որտեղ պետք է ունենալ հաղթանակ Խնդրի լուծման երկրորդ տարբերակն դա է Ես կարող եմ ցանկացած տեղ էլ աշխատել Կարող եմ անցնել ոչ պետական աշխատանքի բայց էլի լինել նույն Սամվել Բաբայանը

**– Դուք անցյալ տարվանից բացահայտորեն Ձեր տեսակետներն եք արտահայտում տնտեսական քաղաքականության վերաբերյալ Այս մեկ տարվա ընթացքում զգալի տեղաշարժ կարելի է նկատել Ղարաբաղի տնտեսության մեջ· Ո րն է տնտեսության զարգացման Ձեր ամփոփ պատկերացումը**

www.a-pdf.com



Ես փնտեսությամբ զբաղվել եմ 1996թ վերջից Իմ կարծիքով պետությունը պետք է սպառի այնքան որքան վաստակում է այլ ոչ թե պարտքերով ապրի Վարկերը պետք է օգտագործվեն միայն ներդրումների համար ոչ թե աշխատավարձ կամ թոշակ վճարելու Մերի նման պետությունը իրավունք չունի մտնելու պարտքերի տակ Պետք չէ որ պարտատերերը մեզ ղեկավարեն Սա է ամենավտանգավորը Սա է պատճառը որ պարտավոր եմ մտնել տնտեսական ոլորտ և հուշել օգնել և փորձել շտկել վիճակը այն չափով որ քան հասկանում եմ Նորից եմ ասում իմ կարծիքով մենք չպետք է ղեկավարվենք դրսից պարտատերերի կողմից Որոշ մարդիկ չեն հասկանում որոշ մարդիկ լավ չեն ըմբռնում դա որոշ մարդկանց թվում է թե ես հաճույքով եմ մտնում քաղաքական գործերի մեջ.

Ղարաբաղը որպես գյուղատնտեսական շրջան իր կարևոր տեղը պետք է ունենա Հայաստանի շուկայում Հիմնվելով մեր երկրի հարստության և շրջապատի շուկայի ուսումնասիրության վրա պետք է կարողանանք որոշել թե ինչ կարող ենք արտադրել Դրանից հետո պետք է ունենալ բիզնես-ծրագիր և ցածր տոկոսով վարկային ռեսուրս Վարկային ռեսուրսի համար երկրի հարկային ու մաքսային վարչությունները պետք է աշխատեն որոնք իմ կարծիքով շատ թույլ ու անկազմակերպ են աշխատում

**– Ղարաբաղո՞ւմ, թե՞ Հայաստանում:**

Ես Ղարաբաղի և Հայաստանի միջև տարբերություն չեմ դնում դրանք ինձ համար մեկ պետություն են:

**– Դա որպես սկզբունք, սակայն դրանք վարչական տարբեր համակարգեր են: Ղարաբաղն ունի իր առանձին կառավարությունը և բյուջեն**

Հետո ի՞նչ: Ամերիկայում ամեն նահանգ ունի իր կառավարությունը և բյուջեն Դա նույն Ամերիկան չէ՞ Յուրաքանչյուր նահանգի օրենքները կարող են իրարից տարբերվել մի տեղ վարկային արտոնություններ կարող են լինել մի այլ տեղ ոչ դա արդեն ուրիշ հարց է Եթե դրանք (Հայաստանն ու Ղարաբաղը) առանձին պետություններ էլ են ես չեմ ուզում տարբերել իրավունք չունեմ տարբերելու·

**– Վերջին տարվա ընթացքում Ղարաբաղում տնտեսական զարգացման ուղղությամբ միջոցներ են ձեռնարկվել (կան որոշակի ձեռքբերումներ), սակայն արտասահմանում դեռևս շարունակում է տիրել այն տեսակետը, թե Ղարաբաղը ռիսկի գոտի է: Նկատի ունենալով այս իրողությունը Դուք խրախուսո՞ւմ եք սփյուռքահայերի ներդրումները Ղարաբաղում և ուզո ւմ եք երաշխիքի Ձեր խոսքը ասել նրանց.**

Այդ մասին երկու կարծիք լինել չի կարող Մենք խնդրում ենք որ սփյուռքահայերը ներդրումներ կատարեն. Իսկ որպես երաշխիք մենք կապահովենք նրանց և տեղացի ներդրողների համար գործունեության հավասար պայմաններ· Այստեղ որևէ խնդիր չկա: Ինձ թվում է թե խնդիրը հենց սփյուռքահայերի մեջ է Չեմ ուզում վիրավորած լինել բայց նրանք չեն հասկանում երկու պարզ խնդիրներ Կռվի մեջ ազգի 2 տոկոսը իր կյանքն է դնում վտանգի տակ իսկ (ներդնելու դեպքում) արտասահմանցին իր բիզնեսի մի տոկոսն է դնում վտանգի տակ Ո՞րն է ավելի թանկ բիզնեսի մի տոկո՞սը թե՞ ժողովրդի կյան

քը Այստեղ ապրողը կռվի մեջ իր կյանքի համար երաշխիք պահանջելու փար բերակ չունի Եթե իմ երեխան կամ ընտանիքը առանց երաշխիքի այստեղ ապրում են ապա դու ինչո՞ւ բիզնեսի մի փոկոսը պիտի չդնես. Ի՞նչ երաշխիք եք ուզում ինձանից, որ հեպագայում վրան ռումբ չընկնի՞ Այսօր Իսրայելում ամեն օր ռումբ է պայթում ի՞նչ է Իսրայելում ներդրում չեն անո՞ւմ Ես խնդրին այլ կերպ եմ մոտենում՝ Սփյուռքահայերը պետք է մի քիչ սթափվեն և փորձեն ազգային շահերը վեր դասել իրենց բիզնեսից Այսօր խնդիրը շատ պարզ է վերջնական ազատությունն ու հաղթանակը տնտեսական հաջողություններից են կախված: Այստեղ հատուկ երաշխիքի հարց չկա սփյուռքահայը երաշխա վորված է բոլոր քաղաքացիների նման: Որևէ մեկը չի կարող ասել թե Ղարա բաղում ինչ-որ մեկը ներդրում արած լինի և նրան թալանած սպանած կամ նման այլ բան արած լինեն Նման դեպք չի եղել և չի էլ լինելու Ինչ վերաբե րում է կռիվներին Ասված պա դրանք չկրկնվեն: Դա կախված է այն բանից թե որքան շուտ կզարգանանք և ինչքան հզոր կլինենք

**– Անցյալ տարի Ղարաբաղում տեղի ունեցան համայնքային և քաղաքապետական ընտրություններ իսկ վերջերս գրանցվեցին նոր կուսակցություններ Ժողովրդավարացման այս գործընթացը կարո՞ղ է շարունակական լինել նախքան Ադրբեջանի հետ վերջնական խաղաղու թյան կնքումը**

Իրոք Ղարաբաղը վաղուց ժողովրդավարացված է Իրոք Ղարաբաղում կա այն ինչ որ հարևան հետխորհրդային երկրներում ասում են, կա Ղարա բաղում չի եղել քաղաքական ձերբակալություն Իհարկե, տեղի է ունեցել պա տերազմ, և պետք է եղել խիստ քաղաքականություն վարել և օրենքին ենթար կել բոլոր մարդկանց Պատերազմից հետո առկա է յուրաքանչյուրի ցանկու թյունը, մտածելակերպը աշխատանքը արտահայտելու ազատ իրավունքը Իշ խանությունը նշանակովի չէ, այլ ընտրովի սկսած դպրոցից մինչև գյուղապետ և համայնքի ղեկավար՝ Դրսից թվում է որ սա դիկտատուրա է, բայց իրակա նության մեջ ժողովուրդն իր իշխանությանը հարգում, սիրում ու ընդունում է

Մարդիկ ուզում են կուսակցություններ հիմնել, և դրան դեմ չենք Ես գտնում եմ որ հաջորդ ապրիլի խորհրդարանական ընտրությունները լինելու են կուսակցական թեքումով Օրենքները պետք է փոխվեն, և խորհրդարանում մե ծամասնություն ունեցող կուսակցությունը պետք է կազմի կառավարությունը

Իշխանության ներկայացուցիչներից որևիցե մեկը աթոռներով կառչած չէ իր աթոռից: Իրոք բոլորս էլ հոգնել ենք իշխանության աթոռներից բայց մեզ վրա է ժողովրդին այս վիճակից վերջնականապես հանելու պատասխա նատվությունը: Երբ ես զգամ որ ժողովուրդը հիսուն հարյուր հոգի բողոքում են և պահանջում որ ես հեռանամ պաշտոնից ես պատրաստ եմ այդ քայլին դիմելու: Ինձ թվում է թե նույնն է նախագահի և իշխանության մյուս ղեկա վարների կեցվածքը Խնդիրն այն է, որ Ղարաբաղում, իշխանությունից բացի ունենք մեծ պատասխանատվություն և մեծ պարտականություններ և ամեն մարդ չէ որ պատրաստ է այդ իշխանությունը ստանձնելու՝

**– Մամուլի բազմազանությունը ևս հնարավոր ե՞ք տեսնում**

www.a-pdf.com



Իհարկե երբ խոսում եմ ժողովրդավարացման մասին նկատի ունեմ ժողովրդավարական բոլոր ինստիտուտները Այստեղ խնդիրն այն է որ կուսակցությունները չունեն ֆինանսական աջակցություն Պետք է օրենքներ մշակվեն և պետական բյուջեից հատկացումներ կատարվեն Այստեղ պետք է օգնեն նաև Հայաստանի կուսակցությունները· Պետք է փորձեն կապեր հաստատել, որպեսզի մարդիկ կարողանան հստակ քաղաքականություն վարել Իմ կարծիքով Ղարաբաղն իր օրենքներով և աշխատաոճով պետք է ավելի թեքվի դեպի Եվրոպա քան դեպի Ռուսաստան Որքան էլ եվրոպացուն փորձում եմ բացատրել թե Ղարաբաղը ռուսական մի «լագեր» չէ նա չի համոզվում Ժամանակը ցույց կտա Խնդիրը հայտարարելու մեջ չէ, այլ օրենքներով աշխատաոճով և գործով ցույց տալու մեջ. Նաև թվում է, որ մենք քիչ ենք խոսում, բայց ավելի շատ ենք գործ արել քան նախկին Խորհրդային Միության բոլոր հանրապետությունները

**– Եկող ամիս կլրանա Մոնթե Մելքոնյանի զոհվելու վեցերորդ տարին Ինչպե՞ս եք գնահատում Մոնթեի դերը Ղարաբաղի ազատագրական պայքարի մեջ**

Մոնթեն Ղարաբաղի ազատագրական պայքարի մեջ ունեցել է կարևոր դերակատարություն Մարտունու երկրորդ պաշտպանական շրջանում: Կազմակերպել է պաշտպանական գործը առաջին ջոկատներից մինչև պահանջվող կառույցներով բանակ Եղել է շատ կարգապահ խիստ խստապահանջ Չի եղել դեպք որ խնդիր դնես և չլուծի, չչարչարվի, չփորձի հասնել դրված խնդրի վերջնական լուծմանը: Իր համար շատ դժվար էր դեռևս խորհրդային մտածելակերպով ժողովրդի հետ աշխատելը որովհետև մտայնությամբ և գաղափարներով տարբեր մարդիկ էին Առաջին շրջանում պրոբլեմներ ունեցավ որոնք շփվելուց հետո ինքն ամեն անգամ նեղանում էր մարտունեցիներից որ իրեն ճիշտ չեն հասկանում Ես փորձում էի բացատրել որ՝ «Ավո էդ մարդիկ մենթալիտետով գաղափարներով, մտքերով ուրիշ դաստիարակություն են ստացել, դու պետք է համակերպվես էդ դաստիարակությանն ու փորձես առավելագույնը քաղել ինչ որ մեր ազգին պետք է»: Նա մեծ դեր է ունեցել Ղարաբաղի պաշտպանության գործում: Միայն այն փաստը որ Մարտունու շրջանում ոչ մի գյուղ չենք հանձնել Մոնթեի աշխատանքի արդյունքն է եղել. Բացի դրանից շատ տարածքների ազատագրումը էլի նրա ջանքերի արդյունք է եղել Խնդիրը հստակ հասկացել ու լուծել է Բայց իմ կարծիքով, մեր ազգը միշտ տառապում է մի հիվանդությամբ որը ես չեմ ընդունում ու դրա համար եմ ես քիչ խոսում Փորձում ենք ամբողջ ազգի բախտը դնել մի անձնավորության ձեռքին Ավոյի մասին չեմ ասում Ես դա չեմ ընդունում, ճիշտ չեմ համարում Ինձ թվում է որ մեր ազգը հենց դրանից է միշտ տուժում: Եթե հետ շրջենք պատմության էջերը ապա կտեսնենք որ ամեն մարդ արել է իր գործը իհարկե առավել ևս Ավոն որ ավելի մեծ գործ է արել: Նույնը վերաբերում է նաև ինձ. պետք չէ ինձանից և մյուսներից ևս ստեղծել այդ կերպարը Սա իմ հստակ կարծիքն է

www.a-pdf.com



## ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՊԻՏԻ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ԴԱՍԵՐ ՔԱՂԵԼ»

Երկիր 8 հունիսի 1999թ

**– Ինչպե՞ս եք գնահատում ընտրությունները Հայաստանում.**

Գտնում եմ որ նորմալ ընտրություններ էին Ինչ խոսք թերություններ կային Սակայն թերությունների մասին խոսելիս չպիտի մոռանանք խորհրդային մենթալիտետի մասին որից վերջնականապես ազատվելու և միջազգային ստանդարտներին լրիվ համապատասխան ընտրություններ կազմակերպելու համար որոշակի ժամանակ և փորձ են պետք Ինչ վերաբերում է ցուցակների անճշտությանը որի մասին շատ է խոսվել ու գրվել, ապա ես հակված եմ այդ հանգամանքը դիտարկելու ոչ միայն ընտրությունների տեսանկյունից Սովորաբար, ես ամեն հարցի հարցի ավելի խորքային մոտեցում եմ փորձում ցուցաբերել և ձգտում եմ փոքր ինչ հեռուն տեսնել

Բացատրեմ միտքս: Բոլորը խոսում են այն մասին, թե ինչպիսի վնաս են հասցրել ընտրություններին ցուցակների անճշտությունները: Իսկ ինձ այդ հանգամանքը նաև հուշում է որ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները գյուղապետները թաղապետները քաղաքապետները իրենց տեղերում չեն ավելին. չեն տիրապետում իրավիճակին. Ինչո՞ւ ենք մոռանում, որ ցուցակներից դուրս մնացած մարդիկ ոչ միայն ընտրող են այլև հարկատու Եթե վերոհիշյալ անձինք իրենց պարտականությունները լավ կատարեին ապա կիմանային այդ մարդկանց տեղը Կրկնում եմ սա միայն ընտրությունների հարցը չէ այլև տնտեսական մեխանիզմների և հարկային դաշտի հստակեցման խնդիր Կարծում եմ նոր վարչապետը պիտի հեպագայում լուրջ ուշադրություն դարձնի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին որոնք պակաս կարևոր չեն

**– Գաղտնիք չէ, որ Դուք հովանավորում և ֆինանսավորում էիք «Իրավաւնք և միաբանություն» դաշինքը: Ձեր ծախսած միջոցները արդարացրի՞ն Ձեր սպասելիքները Նկատի ունենք հիշյալ դաշինքի 7 պատգամավորներին·**

Նախ ինչի ց եք ենթադրել, որ ես ինչ որ գումարներ եմ ծախսել ֆինանսավորել դաշինքը Ձեր տեղեկությունները ճիշտ չեն Երկրորդ ոչ թե 7 պատգամավոր, այլ 13· Նկատի ունեմ նաև մեծամասնական ցուցակով իմ հովանավորությամբ ընտրված պատգամավորներին: Ինչ վերաբերում է սպասելիքներին ապա ասեմ որ ես լիովին բավարարված եմ Նկատի ունեցեք այդ արդյունքին մենք հասանք այն դեպքում երբ չընդունված էինք բոլոր ուժերի կողմից. Երկրորդ մենք բոլորս պիտի ճիշտ դասեր քաղենք այդ ընտրություններից· Համաձայն չեմ երբ պնդում են թե այս ընտրությունների ժամանակ ժողովուրդը քաղաքականացված չէր Այդպես չէ պարզապես ժողովուրդը հոգնել է լիդերներից Կուսակցությունները պետք է իրենց մեջ ուժ գտնեն և հաշտվեն այն մտքին որ ժողովուրդն իրոք հոգնել է իր լիդերներից. Կարծում եմ չեք ժխտի որ ժողովուրդը նայում է ոչ այնքան կուսակցություններին որքան դրանց լիդերներին Ընտրություններում կուսակցությունները սպացել են այն

www.a-pdf.com



արդյունքը, որքան ունեն. Ինձ թվում է ընտրություններից հետո փոփոխու թյուններ կլինեն կուսակցությունների շարքերում:

**– Մեկ տարի առաջ դեռևս Ձեր և Արկադի Ղուկասյանի միջև կարծես հա կասություններ չկային Քոչարյանի՝ նախագահ դառնալուց հետո Ղուկա սյանը, որ համարում էր, թե ԵԱՀԿ Մինսկի խմբում հնարավոր չէ լուծել ղա րաբաղյան հարցը, այսպես էր ձևակերպում. «Ունենալու ենք այն ինչ ունե ինք 1988 թվականին (ինքնավարության կարգավիճակ)»**

Ղուկասյանի հետ ոչ մի պրոբլեմ չունեմ Ձեր տեղեկությունները դարձյալ ճիշտ չեն Ավելին մենք պրոբլեմներ չենք ունեցել և չենք էլ ունենալու, որովհե տև մենք համենայն դեպս գիտենք թե ինչ պատասխանատվություն ենք կրում, և ինչ բեռ է մեր ուսերին Ինչ վերաբերում է Ձեր մեջբերած արտահայ տությանը ապա ես ճիշտն ասած տեղյակ չեմ դրան Եթե նույնիսկ ասել է ապա պետք է ճշտել թե ինչ ենթատեքստում է դա ասվել

**– Դուք չէիք պատկերացնում Ղարաբաղի հարցի լուծումն առանց Իրանի ինչ-որ միջնորդության Հիմա՞ էլ եք այդ կարծիքին.**

Ես երբևէ չեմ ասել թե հարցի լուծումը հնարավոր չէ առանց Իրանի Բայց գտնում եմ որ Ղարաբաղում խաչվում են տարածաշրջանի խոշոր պե տությունների շահերը և հարցի կարգավորման ժամանակ մենք պիտի հաշվի առնենք դրանք որպեսզի հետագայում նոր խմորումներ չլինեն այ լապես կունենանք մի որոշում որը պաշտպանելու են ոչ բոլոր շահագրգիռ կողմերը Գտնում եմ որ նրանք պիտի մասնակցեն խնդրի կարգավորմա նը: Այսօր էլ մնում եմ այդ կարծիքին Ինչ խոսք կան հարցեր որոնք Իրա նից են կախված Չպիտի մոռանանք որ Իրանը մեր հարևան երկիրն է Բայց դա չի նշանակում թե առանց Իրանի խնդիրը չի կարող լուծվել.

**– ՀՀ ԱԳՆ-ն ընդունելի է համարում «ոչ անկախություն, ոչ ինքնավա րություն» կարգավիճակը, մինչդեռ Դուք Ղարաբաղը համարում եք Հա յաստանի անբաժանելի մաս, ինչպես Լոռին կամ Սյունիքը:**

Ես, որպես զինվորական գտնում եմ, որ Ղարաբաղը Հայաստանի անբա ժանելի մասն է Այսօր էլ մնում եմ այդ կարծիքին Եկեք հիշենք թե ինչի հա մար է ոտքի կանգնել մեր ժողովուրդը և ինչ է պահանջել Այլ հարց է որ դի վանագիտությունն իր խնդիրներն ու քայլերն ունի

**– Դուք կարծում եք ԵԱՀԿ Մինսկի խմբի վերջին առաջարկությունները Ընդհանուր պետության» մասին չե՞ն տարբերվում 1996թ Լիսաբոնի և 1997 թ գարնան առաջարկներից**

Ես երբևէ չեմ ասել, թե դրանց միջև տարբերություններ չկան Տարբերու թյուններ կան, դրանք մեծ են· Այն հանգամանքը, որ Ադրբեջանը չի ընդունել վերջին առաջարկները, հենց դրա վկայությունն է: Այլ հարց է որ այդ առա ջարկները չեն կարող լիովին գոհացուցիչ լինել մեզ համար Դա խնդրի կար գավորման փոխզիջումային տարբերակի նկատմամբ մեր կառուցողական վե րաբերմունքի առհավատչյան է. Սակայն մենք նաև հայտարարել ենք որ դա մեր կողմից արվող զիջումների առավելագույն սահմանն է Դրանից այն կողմ մենք չենք գնա

www.a-pdf.com



**– Ինչպե՞ս եք վերաբերվում Վազգեն Սարգսյանի վարչապետ դառնալու հավանականությանը·**

Շատ նորմալ· Գտնում եմ, որ դա պիտի կատարվեր ութ ամիս առաջ այլ ոչ թե հիմա Ես վաղուց էի դրան կողմնակից, որովհետև համոզված եմ որ նա այն մարդն է որ ցավում է երկրի համար և ինչ հնարավոր է, անպայման կանի երկրի բարգավաճման ու հզորացման համար Նա պատրաստ է և կարող է անել:

**– Ի՞նչ ազդեցություն եք ունենալու ՀՀ կառավարության կազմավորման գործընթացում:**

– Ես երբեք ազդեցություն չեմ ունեցել նման գործընթացում և մտադրություն էլ չեմ ունեցել Եվ ընտրապայքարին միջամտելուս պատճառն ամենևին էլ դա չէր ինչի մասին բազմիցս առիթ եմ ունեցել ասելու հայաստանյան մամուլում Ես ընդամենը իմ ծառայություններն եմ առաջարկել և իմ պատրաստակամությունը օգնելու հայրենիքի բարգավաճման ու զորացման գործին Պատրաստ եմ օգնելու և օգնում եմ

## ‹ՆԵՐԿԱՅՈՒՄՍ ԵՍ ՈՉ ՄԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՄ

Առավոտ 14 նոյեմբերի 1999 թ

**– ԵԿՄ 4-րդ համագումարին մասնակցելու հրավեր Դուք ստացե լ էիք Եթե այո, ինչո՞ւ չէիք եկել·**

ԵԿՄ ոչ մի համագումարի չեմ մասնակցել և ստեղծման օրից կապ չունեմ այդ միության հետ Պարզ է որ կապեր ունեմ այդ միության այն անդամների հետ ում գործունեությունն առնչվում է պաշտպանության նախարարությանն ու բանակին· Բայց միության հետ կապ չունեմ

**– ԵԿՄ վարչության նախագահ ընտրվեց գեներալ Մանվել Գրիգորյանը Ի նչ կարծիքի եք այս ընտրության մասին, մանավանդ Ձեր և գեներալ Մանվելի հարաբերությունններն այնքան էլ, մեղմ ասած, բարյացակամ չեն.**

Եթե երկրապահները իրենց վստահության քվեն տվել են նրան ապա ինչի մասին է խոսքը Ես պարտավոր եմ հարգել նրանց որոշումը

**– Փաստորեն ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանի և Ձեր միջև հակասություն կա ամեն առիթով, նաև անառիթ Արկադի Ղուկասյանը Ձեր մասին այնքան էլ մեղմ չի արտահայտվում· Այս պայմաններում Դուք չե ք մտածում Ձեր հրաժարականի մասին**

Մեր պայմաններում իմ հրաժարականը պարզապես փախուստ կնշանակեր և փոքրոգություն Հիմա երբ չկա Վազգեն Սարգսյանը, ես բարոյական իրավունք չունեմ հեռանալու: Մեկ մեկ մտածում եմ, թե ավելի շատ ո՞ւմ է ձեռնտու իմ հեռանալը ու գալիս եմ այն եզրակացության որ ձեռնտու է մեր երկրի թշնամիներին· Որքան էլ վիրավորված լինեմ այս կամ այն պաշտոնյայից մարդուց միևնույն է ես պատասխանատվություն եմ զգում այս երկրի

www.a-pdf.com



առաջ և գտնում եմ, որ այս երկրին ես դեռ պետք եմ Թող հրաժարական տան այն պաշտոնյաները ովքեր շատ են խոսում այդ մասին և զգում են իրենց ավելորդությունը

**– Արկադի Ղուկասյանը վերջերս հրապարակեց իր հստակ կարծիքը Ձեր մասին՝ մասնավորապես ասելով, թե Ձեր ինտելեկտուալ ունակությունները չեն բավարարում տնտեսությամբ և լուրջ գործերով զբաղվելու Սակայն հենց նույն Ղուկասյանի և Ռոբերտ Քոչարյանի օրոք Դուք զբաղվում էիք այդ «լուրջ» գործերով, ինչպե՞ս էիք կարողանում**

– Ձեր հարցն իր մեջ նաև պատասխան է պարունակում ուստի ավելացնե լու ոչինչ չունեմ Կասեմ միայն որ ավելի ճիշտ կլիներ որ այդ հարցն ուղղեիք Ղուկասյանին

**– Ժամանակին ղարաբաղյան բանակցությունների հիմնական կողմը Դուք էիք, հնարավորինս տեղյակ էիք անցուդարձին Ինչքանո՞վ եք այժմ տեղեկացված, ի՞նչ դեր ունեք Դուք ղարաբաղյան բանակցությունների այս փուլում· Ի՞նչ կարծիքի եք հարցի կարգավորման ընթացքի վերաբերյալ**

Ներկայումս գրեթե ոչ մի դերակատարություն չունեմ և քիչ եմ տեղեկաց ված պաշտոնական բանակցությունների մասին. Բայց նաև ուշադիր հետևում եմ դրանց ընթացքին հնարավորությանս սահմաններում փորձելով իրազեկ լինել Ես չեմ կարող անտարբեր լինել այդ հարցում որովհետև մեծ պատաս խանատվություն եմ զգո մ երկրի ճակատագրի համար

**– Ռոբերտ Քոչարյանի հնարավոր հրաժարականի մասին մի առիթով Դուք ասացիք, որ նա չի զիջի: Հիմա՞ էլ եք այդ կարծիքին**

Նախ հրաժարականի համար ոչ մի հիմք չեմ տեսնում: Հետո էլ ամենա կարևորը չեմ կարծում թե այս պայմաններում հրաժարականը կարող է թե կուզև չնչին դրական դեր խաղալ կայունացնել կամ առողջացնել մթնոլորտը Ընդհակառակը կարծում եմ որ բացասական հետևանքներն անհամեմատ շատ կլինեն

## ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆԸ ՄԻՏՔ ՉՈՒՆԻ ԽԱՌՆՎԵԼՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ

«Հայաստանի Հանրապետություն»
16 նոյեմբերի 1999թ

Գորիս Ստեփանակերտ ճանապարհի բացման արարողությանը ներկա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանին և ԼՂՀ զինված ուժերի հրամանատար Սամվել Բաբայանին լրագրողներն ուղ ղեցին հոկտեմբերի 27 ի ողբերգական դեպքերին և ԵԱՀԿ Ստամբուլի գա գաթնաժողովին առնչվող մի շարք հարցեր

ԼՂՀ նախագահը հավաստեց, որ համոզված է որ Ստամբուլում փաստա թուղթ չի ստորագրվելու ղարաբաղյան հակամարտության կարգավորման վե րաբերյալ այլ հավանաբար հայտարարություն Ինչ վերաբերում է ողբերգա

www.a-pdf.com



կան դեպքերին, Ղո կասյանը նշեց, որ Վազգեն Սարգսյանի մահը մեծ կո րուստ էր հայ ազգի համար, ինչը, սակայն ոչ մի կերպ չի հանգեցնի ղարաբա ղյան հարցի հայության համար աննպաստ լուծմանը Նա շեշտեց նաև որ Արցախի ժողովուրդը երբեք չի ունեցել ‹գեներալիտետ իշխանություններ ժողովուրդ› խնդիրը: ‹Եղել է մեկ անձի խնդիր որը լուծվել է»․ ասաց նա ԼՂՀ նախագահն ավելացրեց որ հոկտեմբերի 27 ի հանցագործության ղարա բաղյան հետագիծ ունենալը բացառվում է:

ԼՂՀ ՊԲ հրամանատար Սամվել Բաբայանը առաջին հարցի առթիվ լակո նիկ հայտարարություն արեց ‹Զինվորականները երբեք պարածքներ չեն վե րադարձնում, սովորաբար»: Վ. Սարգսյանի ողբերգական մահը նա որակեց որ պես մեծագույն կորուստ ինչպես Հայաստանի այնպես էլ Արցախի համար նշելով որ ամեն դեպքում, դրանով չի վտանգվի ԼՂՀ խնդրի կարգավորումը բայց. ակներևաբար Հայաստանում անկայուն իրավիճակ է ստեղծվել ինչը հաղթահարել, ըստ նրա առանց Վազգեն Սարգսյանի դժվար է

Իր անունը ողբերգական իրադարձություններից հետո արծարծելը Բաբա յանը որակեց որպես մարդկանց անլուրջ և անիմաստ ջանքեր ովքեր ցանկա նում են քաղաքական շահաբաժին ունենալ այդ ողբերգությունից: «Եղբայրը եղբոր վրա ձեռք չի բարձրացնի»,– նկատի ունենալով Վազգեն Սարգսյանին ընդգծեց նա Արցախի բանակի հրամանատարը շեշտեց իր անմասն մնալը Հա յաստանի ներքաղաքական զարգացումներից հիշեցնելով միայն, թե ‹որոշ մարդկանց թվացել է, թե ես ցանկանում էի խառնվել, և նրանք նախապես էին արգելքներ դնում սակայն ես չեմ խառնվել ու մտադիր չեմ մասնակցություն ու նենալու Հայաստանի քաղաքական կյանքին» Ինչ վերաբերում է ձերբակալ ված պատգամավոր Մուշեղ Մովսիսյանի միջոցով Նաիրի Հունանյանին իր (Բաբայանի) անունից գրություն փոխանցելու մասին լուրերին ապա գեներալ լեյտենանտը հայտարարեց «Իմ գործունեության 7 8 տարիների ընթացքում ես երբեք գրություններ չեմ գրել» ավելացնելով որ եթե ներկայացվի այդպի սին ինքը պատրաստ է պատասխան տալու

**Հարցազրույց Ազատություն» ռադիոկայանին**
**11 դեկտեմբերի 1999թ**

Երեքշաբթի Ստեփանակերտի մեր գործընկեր Վահրամ Աթանեսյանը ( Ազատություն ռադիոկայանի թղթակից) հաղորդեց Լեռնային Ղարաբաղի նախագահ Արկադի Ղուկասյանի աուլիսում հնչած մի հայտարարության մա սին թե Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի փոխհրամանատար Արմեն Աբգարյանը բոլոր զորամասերի հրամանատարներին կարգադրել էր մարտական պատրաստականության արդյունավետ կազմակերպման նպա տակով տանկեր նախապատրաստել անձնակազմերով դեկտեմբերի 3–9 ժա մանակահատվածում տեղաշարժվելու համար Արմեն Աբգարյանը Սամվել Բաբայանի տեղակալն է իսկ դեկտեմբերի 3–4 ին Երևանում ընթանում էր

www.a-pdf.com


Երկրապահ կամավորականների միության համագումարը Ինչևէ իր ասու լիսում պարոն Ղուկասյանը այս հրամանը վերածել է, մեջբերում եմ

«Բացարձակ սաղրանքի, և առանց Հայաստանի ու Ղարաբաղի նախա գահների և պաշտպանության նախարարների իմացության ինչ-որ տանկեր են տեղափոխվում Պաշտպանական շրջաններից, բնակչության մեջ առաջաց նում խուճապ և իբր Քոչարյանին փրկելու համար ուժերի նետում նախապատ րաստում դեպի Հայաստան»

Երեկ էլ փոխանցվեց թե Ազգային ժողովի ղեկավարության հետ ունեցած հանդիպմանը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանն ասել է թե զրուցել է Լեռնա յին Ղարաբաղի Պաշտպանության բանակի հրամանատար Սամվել Բաբայա նի հետ ու համոզվել, որ նման բան չի եղել Ինքը Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի հրամանատար Սամվել Բաբայանը մեր հարցին թե իրո՞ք եղել է այդպիսի հրաման պատասխանում է

«Մեկնաբանությունները պարզապես ավելորդ են».

Շարունակում եմ մեջբերել մեր հեռախոսային հարցազրույցից

«Ռազմական գործից գոնե մի փոքր հասկացող մարդը կիմանա, որ թրթու րավոր տեխնիկան (այս դեպքում տանկը) գործնականում անհնար է սեփական ընթացքով նման հեռավորությամբ տեղաշարժելը եթե իհարկե դրանք շարքից հանելու խնդիր չի դրված

Ես ափիպված եմ զանգվածային լրատվության միջոցներին լուսաբանելու զորքի մարտական պատրաստականության խնդիրներին առնչվող հարցեր որոնք գաղտնի բնույթ են կրում» Շարունակում եմ մեջբերել

‹Իրականում եղել է Պաշտպանության բանակի սպառազինության բաժնի պետի կարգադրությունը բանակի շտաբի պետի գիտությամբ որը հե տապնդել է մարտական տեխնիկայի մի զորամասից մյուսը տեղափոխելու նպատակ».

Օրերս «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում հրապարակված մի հարցազրույցում նախագահ Արկադի Ղուկասյանն արձանագրել է որ իրոք որոշակի խնդիրներ կան Սամվել Բաբայանի հետ: Մեջբերում եմ

‹Ես նրան չնշանակեցի պաշտպանության նախարար» Մի այլ հատված

«Կարծում եմ որ նա պետք է զբաղվի միայն բանակով նա ի վիճակի չի զբաղվելու ուրիշ հարցերով քանի որ դրա համար չունի ոչ համապատասխան կրթություն ո՛չ ինտելեկտ, ոչ փորձ»·

Իսկ այս մասին ի՞նչ կասի ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատարը Մեջբերում եմ

Պաշտպանության նախարարի պաշտոնում իմ նշանակումը չի կայացել քանի որ ես ինքս եմ հրաժարվել ելնելով սկզբունքային նկատառումներից Ինչ վերաբերում է կրթությանս, ինտելեկտիս ու փորձառությանս, ծնվել մեծա ցել եմ բանվորի հասարակ ընտանիքում այնուհետ ստիպված եմ եղել աշխա տել ընտանիքիս նյութական կարիքները հոգալու համար Մեր ժողովրդի ազ գային ազատագրական պայքարն ստիպեց շատ հայրենակիցներիս նման զենք վերցնել պաշտպանելու մեր ազգային շահերը»

Շարունակում եմ մեջբերել

www.a-pdf.com



‹Կյանքի թելադրանքով առաջ քաշվեցի, նշանակվեցի ինքնապաշտպանության ուժերի ջոկատները ղեկավարող պաշտոնում Այդ ջոկատները հետագա յում դարձան Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի հիմքը Իմ կողմից ղեկավարվող բանակի մարտունակությանը հակառակորդը ոչ թե խոսքով այլ իրական գործով է ծանոթ Ինչպե՞ս կարող էի առանց թվարկված հատկանիշների հասնել այդ ամենին և ղեկավարել նման «բարձր ինտելեկ տի պետ մարդկանց Միայն ես չեմ որ ծանոթանալով Արկադի Ղուկասյանի մամուլի ասուլիսների նյութերին և նման հայտարարություններին տպավո րություն ունեմ թե երկրի նախագահի հետ չէ որ գործ ունենք› – ասում է Սամվել Բաբայանը

Ինչ վերաբերում է այժմյան ԵԿՄ նախագահ Մանվել Գրիգորյանի հայտա րարությանը թե Հայաստանում 150 Սամվել Բաբայան կա Լեռնային Ղարա բաղի Պաշտպանության բանակի հրամանատարը գտնում է որ Հայաստա նում մեջքերում են

«Բաբայանի նման 1 5 միլիոն և ավելի տղամարդիկ կգտնվեն շարունա կում եմ մեջբերել բայց հետաքրքրական է, վերոհիշյալ մտքերն արտահայ տողի նման մարդ գոնե մեկը կգտնվի՞ թե՞ ոչ»:

Վերջին հարցիս, թե ինչո՞ւ չի մասնակցել ԵԿՄ համագումարին պարոն Բաբայանը չպատասխանեց

## ԵՍ ՏՂԱՄԱՐԴԱՎԱՐԻ ՀԵՌԱՆՈՒՄ ԵՄ ՄԱՐՏԱԴԱՇՏԻՑ ՄՏՆՈՒՄ ԵՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏ

Հարցազրույցը Շուշանիկ
Աբրահամյան Հայրապետյանի
10 րդ նահանգ 25 դեկտեմբերի 1999 թ

Հայ ժողովրդի համար Վազգեն Սարգսյան և Սամվել Բաբայան անունները անքակտելիորեն կապված են բանակի հետ Ասել են մեկը հասկացել մյուսը

Ի՞նչ է ստացվում. «հայ բանակ» հասկացությունը խորհրդանշող Վազգեն Սարգսյանին սպանեցին, իսկ Սամվել Բաբայանին հեռացրին Հավատա՞նք որ բանակը կայացել է, «և սա է ամեն մի հայ› թե՞ ազատվեցին ազգային շահերը հետապնդող անձանցից Արցախի հիմնախնդիրը լուծվե՞լ է և հաղթա ղը թելադրե՞լ է իր կամքը (հեռու է այդ օրը)

**– Պարոն Բաբայան, մինչ հարցին անցնելը ուզում եմ հիշեցնել Վահան Թեքեյանից մի տող**

**Կարենալու համար ապրել այսուհետ**
**Օդի, ջրի, հացի նման**
**Մենք պետք ունինք Հպարտության**

**Հպարտությու՞նն է, որ ստիպում է Ձեզ լռել ու անձայն հեռանալ, թե՞**

Սկսեմ «թե»-ից. Լռում եմ որովհետև ոչ թե մեղավոր եմ այլ որովհետև իմ խոսելը ևս ավելորդ կրքեր կարող է բորբոքել: Եթե իմ նկատմամբ արդեն կա մի փոքր անվստահություն ապա հեռանում եմ Ես այն Սամվել Բաբա

www.a-pdf.com



յանն եմ, ում ուսերին 92 ին դրվեց ազգի համար ճակատագրական ծանր բե ռը Փառք Աստծո պատվով տարա՝ Ինչ մնում է այսօր իմ դեմ հնչող ելույթնե րին ապա ասեմ որ դրանք միայն անձնական շահեր են հետապնդում, ոչ թե ազգային Եթե դա ներկայացնում են որպես ազգային ու ես եմ խանգարողը ապա ես հեռանում եմ թող լուծեն առանց ինձ Որոշ ժամանակ անց շատ չէ ժողովուրդն ինքը կիմանա ով ով է

**– Շատերն ասում են որ Դուք ուխող արեցիք ղարաբաղյան հիմնախնդրի լուծումից:**

Հայտարարում եմ բոլորին որ ես մարտադաշտից իջնում եմ քաղաքա կան դաշտ Չնայած քաղաքականությունն սկսվեց դիրքերից բայց շարու նակվում է սեղանների շուրջ Ես քաղաքական դաշտում ինձ նետված ձեռնո ցը վերցնում եմ, և քանի որ մեր հարցի լուծումն անցել է դիվանագիտության ձեռքը իմ ուժերը կփորձեմ այնտեղ. Այնպես որ ես ոչնչից չեմ խուսանավում Ճիշտ է հիմա սա կարող է ընդունվել այնպես, ինչպես ժամանակին ասում էին թե ես պատրաստ չեմ վարչապետ դառնալու քանի որ փնտեսությունը չգի տեմ Նրանք մի բան չգիտեին կամ չէին ուզում հասկանալ, որ բանակի բյու ջեն ավելի մեծ էր քան հանրապետությանը Եվ այդ ամենը ես հավուր պատ շաճի տնօրինում էի և բանակում ամեն ինչ ճշգրտորեն արվում էր

**– Մինչ քաղաքականության ասպարեզ անցնելը, մի հարց ևս նախկին հրամանատար Սամվել Բաբայանին՝ Լուսահոգի Վազգեն Սարգսյանն ակնարկում էր «Կովկասի մեծ կռվի մասին» Ասված մի արասցե այդ ժամանակ Սամվել Բաբայանն անելիք չի՞ ունենա.**

Ավելին ասեմ ես վաղուց երեք դիմում էի տվել, որ ինձ ազատեն աշխա տանքից Չարեցին Բայց Վազգեն Սարգսյանի զոհվելուց հետո ինձ չէի ների բանակից դուրս գալու համար դա դավաճանություն էի համարում Վազգենի հանդեպ Ինչ մնում է հետոյին ես մնում եմ Ազգի զինվորը Եթե պետք լինի կգամ բայց առանց որևէ հրամանի Կգամ որպես շարքային զինվոր

**– Դուք հիշատակեցիք Վազգեն Սարգսյանի անունը երևանյան վերջին իրադարձությունների մասին ի՞նչ կասեք Քանի որ Ձեր անունը բազմ- երանգ շոշափվեց խոսվեց նաև, թե իբր Դուք նամակ եք հղել Վազգեն Սարգսյանին.**

Այդ դաժանությունների ցավը հետո ավելի խոր կզգա մեր ժողովուրդը ինչպես որ կզգա Վազգենի կորստի մեծությունը, ինչպես ասում են՝ հիմա դեռ տաք են Այո ես նրան նամակ եմ գրել 1998 թվականի մայիսի 26 ին: Նամակն օրինապահ մարմինների ձեռքին է Օրինակն ունեմ կգա ժամանակը, եթե իրենք չհրապարակեն ես կհրապարակեմ (նամակն ամբողջապես ներկայացված է 2 րդ գլխում ծանոթ. կազմողի) Իսկ Հայաստանը թուլաց նում են ներսից Ժողովուրդը, կարծում եմ դա արդեն հասկանում է

**– Բայց Ձեզ ազատեցին վերջին միջադեպերի պատճառով**

Առաջին համաշխարհային պատերազմն իբր սկսվեց թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանության պատճառով Ծիծաղելի է Ժամանակին շրջանառության մեջ դրված «ժուչոկը» և այլն նախապատրաստական առիթ ներ էին Ինձ ազատելու խոսակցությունը դրանից մեկ շաբաթ առաջ է եղել

www.a-pdf.com



Եթե գեներալ Զինևիչը շիտակ լինի, կհաստատի. Ես վարչապետին զգո շացրել եմ, որ հյուրը պանփիրոջը չի կարող հիմարի տեղ դնել. ինչպես նա է վիրավո րում մեր գյուղապետներին, նրանց ովքեր իրենց որդիներին դրեցին Ղարա բաղի ազատագրության զոհասեղանին: Եվ եթե խնդիրներ կան փնտեսության զարգացման կամ կարգուկանոնի հաստատման հարցում դրանց համար ծառայություններ կան: Իսկ վարչապետության վեց ամիսներին նա բիզնես է իրագործում սրենքներ խախտելով: Եթե հարկ կա օրինակներ կբերեմ: Ասեմ որ դրանով նախապատրաստվում են առաջիկա ընտրություններին բայց մեր ժողովուրդն ամեն ինչ տեսնում ու հասկանում է.

**– Ներեցեք, Ձեր մասին էլ ասում էին, որ բանակի փողերն եք օգտագործում անձնական շահերի համար.**

Ես կուզեի, որ մեր նախարարության ստուգումներն իրականացրած երևանյան տարբեր հանձնաժողովներն իրենց գրավոր եզրակացություն ները հրապարակեին Դա կլիներ իմ պատասխանը: Ասեմ որ նրանք գնա լիս միայն կեցցես› ու ‹շնորհակալություն» էին ասում քանի որ մենք բանակին տրված բյուջեի կրկնակի չափով աշխատանքներ էինք կատարել

**– Պարոն Բաբայան, բայց ասպրակ պալը, թեկուզ դատախարակից, հան ցագործություն է, և Ձեզ կարող են դատել**

1991 թվականին ադրբեջանական բանտերում եմ եղել. հիմա էլ թող այս տեղ դատի տան չեմ վախենում Հավատում եմ մեր ժողովրդին Ես միայն ժողովրդի դատից եմ վախենում Բայց հաստատ ասում եմ որ նրանք ինձ մենակ չեն թողնի Ես էլ նրանցից հեռու չեմ լինի

**– Ձեր պատասխանները շատ սառն են, դա վիրավորված ինքնասիրությունի՞ց է թե՞ «նույն» գործի հոգնածությունից. Բանակին չե՞ք կարոտելու**

– Դժվար բան եք ասում: Օրորոցից ձեռքերիս վրա եղավ Սիրում եմ երեխայիս նման Եթե ասեմ՝ հեշտ եմ բաժանվել, սուտ կլինի Բայց ես չեմ հեռանում ոչ Ղարաբաղից ոչ էլ պայքարից Ինչպես վերևում ասացի ես մտնում եմ քաղաքական պայքարի մեջ: Միայն մի բան եմ ուզում ցանկանալ որ իմ փոխարեն բանակը ղեկավարի նա ում սիրտը կցավի և զինվորի և ամեն մի թիզ հողի համար

**– Այդ դեպքում, որպես սկսնակ քաղաքագետ ինչպե՞ս եք պատկերաց նում արցախյան հիմնախնդրի լուծումը**

Նախ սխալ ասացիք: Ճիշտ է ասում են բանակը քաղաքականությամբ չի զբաղվում, բայց բանակում նաև քաղաքականություն են սովորում: Ես պա տերազմում և պատերազմել սովորեցի և քաղաքականություն Դեռ Մարիո Ռաֆայելիի Ղարաբաղ այցելության ժամանակ ես հասկանում էի որ ‹ինչ-որ տեղ ինչ որ բան սխալ է և ոչ հայանպաստ · Եվ հետո կարծում եմ՝ չեք ժխտում որ ինքնակրթությունը գիտելիքների հենասյունն է Այնպես որ ես սկսնակ չեմ Ինչ մնում է արցախյան հիմնախնդրին ես այն «փանաստը› չեմ որ ասեմ հենց վաղը Ղարաբաղն անկախ է լինելու Թող այդ փոխզիջում ասվածն ամրագրի մեր անվտանգությունը մեր այն ազատությունը որի ժամանակ մենք պետք է որոշենք ինչ անենք և ինչ չանենք Եվ ի վերջո Ղարաբաղը պետք է միավորվի Հայաստանին

www.a-pdf.com



**– Քաղաքական դաշտ միայնա՞կ եք իջնում**

Ոչ Եկող տարի կգրանցվի մեր կուսակցությունը պայմանական անունը «Միացյալ Հայաստան» է (խոսքը «Մեր տունը Հայաստանն է» կուսակցության մասին է – ծանոթ կազմողի): Նրանք ում համար այս նպատակն առարկայական շոշափելի է կանդամագրվեն մեզ

**– Որպես քաղաքական գործիչ՝ ինչպե՞ս եք պատկերացնում ժողովրդավարությունը.**

– Նախ Ղարաբաղում դեմոկրատիայից խոսելը հակաօրինական է քանի որ մինչև դեկտեմբերի 31 ը մեզ մոտ ռազմական դրություն է Դեմոկրատիան խոսքով չէ, գործով է օրինապահությամբ: Պետք է կարողանալ տարբերել ազատությունը կամայականությունից. Սրանք տարբեր բաներ են տարբեր դրսևորումներ և տնտեսական և քաղաքական դաշտում Իսկ որ ամենակարևորն է՝ ով սիրում է իր ժողովրդին, պետք է իմանա որ լավագույն օրենքները ծնվում են ավանդույթներից Պարզապես պետք է ապրել հայաբար հպարտությամբ

**– Ի՞նչ կմաղթեք Ամանորի առթիվ և զինվորներին և հայ ժողովրդին.**

Հայոց բանակին մաղթում եմ կայունություն և արիություն հայ ժողովրդին համբերություն Ես հավատում եմ մեր ժողովրդի կամքին

## ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍՎՈՒՄ Է ԶԻՆՎՈՐԻ ԽՐԱՄԱՏԻՑ...»

35 հարց 35 ամյա զորապետին, Սիրվարդ Մարգարյան
Ստեփանակերտ, 21 փետրվարի 2000թ
(«Զորավարը» անտիպ գրքի համար)

**– Սամվել Անդրանիկի որտե՞ղ «գտավ» Ձեզ Արցախյան շարժումը**

Աշխատում էի Ստեփանակերտի արտադրական կոմբինատում որպես հերթափոխի վարպետ Սկսվեց շարժումը և երևի յուրաքանչյուր արցախցի էլ մտածում էր մի բան անել... Պատմությունից քիչ թե շատ տեղյակ էինք ով է մեր թշնամին. Մենք թաղի տղաներով ևս հավաքվեցինք նրանք որոշեցին որ իրենց կազմակերպիչը լինելու եմ ես դպրոցից ու «Դինամո»-ից լավ ճանաչում էին ինձ 1989 թ ես լիիրավ մտա արցախյան շարժման մեջ·

**– Ըստ Ձեզ զարգացման ի՞նչ փուլեր անցավ մեր 12-ամյա պայքարը Եվ ո ր փուլն եք Ձեր ինքնադրսևորման համար հաջող համարում**

Ինքնադրսևորման համար հաջող եմ համարում 1992 թվականի պարտ վերջից սկսած ներառյալ 93 և 94 թվականները Ինչ խոսք շատ դժվար էր բայց ես փորձեցի պայքարի մեթոդները փոխել և ինձ հաջողվեց բեկում մտցնել, և արդեն ոչ թե թելադրվում այլ թելադրում էինք Մեր ազգային խնդիրների լուծման գործում դա մեծ հաջողություն էր և ես իմ ներդրած լումայի համար ուրախ եմ, ինչքան էլ փորձեն ասել՝ խիստ էր Կռվում չիր ու չամիչ չեն բաժանում և իրոք խիստ են պատերազմի օրենքները Այլընտրանք չկար

www.a-pdf.com



խիստ պետք է լինեի. Պիտի միավորեի ես հաղթանակ տանող ճամփան այդ պես էի տեսնում, չեմ էլ փոշմանում իմ այդ խստության համար և հենց իմ խստապահանջությունն էլ բեկումնային գործոն եղավ մեր պայքարի ու հաղ թանակի վճռորոշ ելքի համար

**– Դուք բախտ ու պատիվ ունեցաք ԼՂՀ Պաշտպանության բանակի հրամանատարը լինելու շատ բարդ ու պատասխանատու մի ժամանակա-հատվածում, ցույց ճիշտ կլիներ ասել մեր ժողովրդի համար օրհասական պահին Փորձենք մի հետադարձ հայացքով ընդգրկել ազատագրական պայքարի այդ փարիները. Ի՞նչ հաջողվեց ու նաև ի՞նչ չհաջողվեց իրակա նացնել այդ փարիներին**

Դեռ շատ ջահել էի, այդ պայքարն ինձ համար մեծ փորձ էր .. Ես շատ օգ տակար դասեր քաղեցի ընկալեցի մեր առավելություններն ու թերություննե րը և հպարտ էի զգում որ իրոք օրհասական պահին իմ ժողովրդի հետ էի ու ժողովուրդն իմ ինձ հետ հույսեր էր կապում

Չհաջողվեց ազգային մեկ ընդհանուր գաղափարի շուրջ համախմբել ժողովրդին ու այդ հարցը մեր ժողովրդի համար վերջնականապես լուծված համարել. Չհաջողվեց այնպես անել որ ազգային խնդիրները լինեն ամենա առաջնայինը հետո մնացած ածանցյալ հարցերը Ժամանակը թույլ չտվեց մարդիկ իրար չհասկացան, դժգոհությունները գլուխ բարձրացրին Հաջողու-թյուն էր, որ մենք փորձեցինք ու հասանք մեր նպատակին, մենք առաջին անգամ ունեցանք հայկական բանակ ունենալով թույլ սպայական կազմ ոչ փորձառու կոնտինգենտ սակայն հասանք մեծ հաջողությունների Ես կրկնակի հպարտ եմ որ հայոց բանակն իր հաղթության արմատները ձգեց Ղարաբաղում և հենց այստեղից սկսվեցին մեր բանակի ծնունդն ու հաղթարշավը և հրադադարից մեկ տարի անց մենք անցկացրինք առաջին համահայկական զորահանդեսը որի ականատեսն էինք բոլորս

**– Արցախի ազգային-ազատագրական պայքարն ընթացել է վայրիվե-րումներով մենք ունեցանք թե նվաճումների և թե կորուստների ծանր շրջան. ինչպե՞ս էին ազդում այդ վայրիվերումները Ձեզ վրա Մեր ողջ պայքարի ընթացքում ամենից շատ ի՞նչը կարժևորեիք**

Պատերազմական թոհուբոհի մեջ մենք համարյա թե ուշադրություն չէինք դարձնում թե քանի տուն կամ բնակավայր ավերվեց... Հիմնական մեր խնդի րը սա էր ի՞նչ անել ինչպե՞ս անել որ այս ամենի առաջն առնվի և երբ ես կոնկրետ հարց էի դնում որ այս ամենին վերջ տալու համար անհրաժեշտ է լռեցնել մի շարք կրակակետեր Աղդամը լիներ դա, թե մեկ ուրիշը, ինձ քաղցր› աչքով չէին նայում. Ու շատերը նույնիսկ զարմանքով էին նայում իմ հանդգնությանը Իսկ ինձ համար կար միայն մեկ գերխնդիր հաղթանակ... Չտալ ոչ մի բնակավայր, մաքրել մեր թիկունքը Քելբաջարը Կուբաթլուն, Զանգելանը Ես դրեցի և լուծեցի խնդիրը Եթե հիշում եք բոլոր հաղթանակ ները եղել են իմ հրամանատարության օրոք

Իսկ ինչը կարժևորեի՝ իհարկե զինվորի դերը Հրամանատարը որոշում է ուղղությունները առաջադրում է խնդիրը իսկ այդ խնդիր լուծողը զինվորն է Ես ինձ թույլ չեմ տա «սեփականաշնորհել› զինվորի արածը մեր հաջողու

www.a-pdf.com



թյունները մեր հաղթանակները զինվորինն են մեր ողջ ժողովրդինն են Կենտրոնական շտաբում դու որոշում ես կայացնում մշակում ընդհանուր ստրատեգիան սակայն ի վերջո այն ի կատար ածողը զինվորն է Մինչև 92 թվականը ես էլ զինվորի դերում էի հանդես գալիս ու լավ գիտեմ նրա դերն ու արժեքը

**– Կարծեմ՝ Ավետիք Իսահակյանն է ասել. «Հայ ծնվելը դժբախտություն է հայ մնալը հաղթանակ .»: Մեր պայքարը նաև հայ մնալու համար էր... Ձեր կարծիքով է՞լ մենք դժբախտ ենք որ հայ ենք ծնվել, թե՛ մնալու ենք հայ և ի վերջո հաղթանակելու ենք:**

Որ մնալու ենք Հայ դա փաստ է... Մեր ազգը մի թերություն ունի շուտ է պառակտվում միշտ ներքին պրոբլեմներ է ունենում Եթե ազգային շահերը անձնականից վեր դասենք ու միասնական լինենք հաղթելու ենք Ոչ թե յոկ խոսքերով միասնություն, ոչ թե քարոզելով այլ յուրաքանչյուր քարոզող թող իր մեջ գտնի այդ միասնությունն ու համոզված լինի որ հաղթելու ենք Այլ պարագայում ես հաղթանակ չեմ տեսնում

**– Անշուշտ, պատմությունն ու ժամանակը թերևս ամենամեծ դատավորը, կգնահատեն Ձեր արած-թողածը Ամենքը կգնահատվեն իրենց վաստակին համեմատ... Ուզում եմ, որ Դուք գնահատեք ինքներդ Ձեզ. Ինչո ւ ինքնաքննադատել, ասենք, կարելի է, իսկ ինքնագնահատելը ոչ:**

Երևի ճիշտ չի լինի ինքս իմ գնահատականը տալը թող կողքից նայողը դա անի մեկը լավ մյուսը վատ

Ես ամեն ինչ արել եմ իմ ժողովրդի իմ ազգի համար ու երբեք չեմ մտածել դափնիներ ստանալու մասին 89 թվականին երբ մտա պայքարի մեջ, նման բաներ մտքովս չէին էլ անցնում: Չէիր էլ կարող մտածել որ դու լինելու ես առաջին դեմք, պարզապես փորձել եմ իմ անձնական օրինակով ցույց տալ, պայքարել ու համախմբել ու թե որքանով է դա ինձ հաջողվել թող ուրիշներն ասեն Ես բանվորական միջավայրից սերած ոչ մի թիկունք չունեի ի՞նչ պաշտոնի մասին կարող էր խոսք լինել պարզապես ամեն ինչ եղավ ժամանակի թելադրանքով

**– Ղարաբաղյան հարցի քաղաքական ճանապարհով լուծման ո՞ր տարբերակին եք կողմնակից, գուցե կառաջարկեիք կամ ունեք Ձեր սեփական տարբերակը**

Ղարաբաղի ժողովուրդը լինելու է անկախ Ես գտնում եմ, որ երկրի քաղաքականությունը սկսվում է զինվորի խրամատից .. Պետությունը պետք է քաղաքականությունը վարի ելնելով ռազմական հաջողություններից ոչ թե պետք է մտածեն՝ ինչքան հող հանձնեն կամ պահեն այլ, ստրատեգիական նկատառումներից ելնելով պահեն մեր թիկունքը և սահմանը Հայաստանի հետ լինի մարմնակցված: Դա կլինի մեր խնդիրների առաջնային լուծումներից մեկը Չպետք է տարվենք այն մտքով թե ինչքան շատ հողեր, այնքան լավ պարզապես թույլ չպիտի տանք որ մեզ նեղեն կողքից, թիկունքից... Այսօրվա քաղաքականությանը հենց այդտեղ համաձայն չեմ: ‹Ընդհանուր պետություն» անունը կունենա թե կկոչվի «ազատ ասոցիացիա»՝ սա չէ կարևորը կարևորն այն է թե այն ինչ է բովանդակում Նորից եմ կրկնում այս տարած

www.a-pdf.com



քում ապրող ժողովուրդը պետք է լինի անկախ Ադրբեջանից, նրա իշխանությունից իր օրենսդիր գործադիր դատական ճյուղերով բոլոր օրենքներով Այնպես պիտի արվի որ վաղը մեր ժողովուրդը կրկին շրջափակման մեջ չընկնի, նույն խնդիրները չառաջանան

**– Պատերազմը դեռ չի վերջացել, և ամեն րոպե կարող է փխրուն կոչվող խաղաղությունը փուլ գալ Ո՞րն է լինելու Ձեր առաջին քայլը.**

Իմ առաջին քայլը վերցնել զենքը և կանգնել առաջին գծում ինչպես դա արեցի մեր շարժման սկզբին. Առանց մտածելու և երկմտելու Եթե ինչ ինչ իշխանավորի կողմից ճիշտ քաղաքականություն չի տարվում, դա չի նշանակում թե պետք է նեղանաս քո ժողովրդից, հայրենիքից քո սեփական բախտից ու մոռանաս այդ ամենը «Հոգնել ենք» կամ «ո՞ւմ համար ենք անում...›· Նման բառերն ու մտածելակերպը ինձ համար խորթ են Իսկ որ նման մարդիկ իշխանություն են ներկայացնում, դրա մեղավորներից մեկն էլ ես եմ Դա էլ իմ սխալն է ես ընդունում եմ ու կաշխատեմ սխալս շտկել

**– Ի՞նչ սկզբունքային տարբերություններ կան Ձեր և ղարաբաղյան շարժման մյուս գործիչների հայացքների միջև· Կա՞ն գործիչներ ում կտայիք նախապատվությունը, և ո՞ւմ կողմն է Ձեր համակրանքը**

Ես չեմ ընդունում նրանց վարած ու վարվող քաղաքականությունը Ազգային խնդիրների հարցում մեր տեսակետները չեն համընկնում և մեզանից մեկը պիտի հեռանար Եվ քանի որ վերջնական ստորագրության գրիչը իրենց ձեռքին է ես հետ եմ քաշվել, ես ոչ թե մեկին համակրում եմ մյուսին ոչ այլ դեմ եմ տարվող քաղաքականությանը Միշտ էլ այդ հակասությունները կային մանավանդ ռազմավարական խնդիրների հետ կապված· Ինձ թվում է ժամանակի ընթացքում քաղաքականությամբ զբաղվողները ճիշտ կտան շատ հարցերի պատասխանը

Կան այդպիսիք որոնց կողմն է իմ համակրանքը սակայն վերջիններս բարձր պաշտոններ չեն զբաղեցնում Չէի ուզենա անուններ հոլովել սակայն կան նման գործիչներ Ժամանակին Լևոն Տեր Պետրոսյանը փորձում էր համոզել որ եղածից ավելին անհնար է ստանալ այսօր Ռոբերտ Քոչարյանը Ղարաբաղի իշխանությունների հետ միասին գտնում է որ «Ընդհանուր պետությունից» ավելին անհնար է ստանալ վաղը կլինի մեկ ուրիշն ու կգտնի որ սրանից ավելի անհնար է ստանալ... Ես չեմ կարող նրանց գնահատական տալ սակայն կոնկրետ ինքս գտնում եմ որ առանց պատերազմի կարելի է ստանալ այն ինչ առաջարկվում է և Ադրբեջանը վաղ թե ուշ համաձայնելու է դրան Պարզապես աշխարհը պիտի հասկանա որ դու ոչ թե հող ես զավթում այլ, քո ժողովրդի անվտանգությունից ելնելով առաջարկում ես այդ տարբերակը հանուն Կովկասում երկարատև խաղաղության Անհրաժեշտ է ձևակերպել ու ապացուցել որ միայն անվտանգությունից ելնելով ես այս խնդիրները դնում Ես չեմ կարծում, թե մեր քաղաքագետները չեն կարողանում պարզապես ինչ որ պատճառներ կան, որ հետամուտ չեն լինում Չեմ էլ կարող ասել, թե ամեն հնար փորձել են՝ չի ստացվում Խնդիրը ես ի կուրծք ծեծելու մեջ չէ այլ մեր վերջնական նպատակին հետամուտ լինելու մեջ է

www.a-pdf.com



**– Ի՞նչ է Ղարաբաղը Ձեզ համար ծննդավա յր հայրենի ք արյան հիշողությու՞ն, թե ...**

Ամեն ինչ է Ղարաբաղն ինձ համար... Թե ծննդավայր թե հայրենիք Ղարաբաղն ինձ համար տուն է ընտանիք է ծնող է հարազատ է առանց Ղարաբաղի իմ կյանքը չեմ պատկերացնում

**– Ձեր գնահատականն ու վերաբերմունքը Արցախ-Հայաստան հայոց բանակների նկատմամբ.**

– Պայմանավորվենք միայն Արցախի բանակի մասին խոսենք այն մասին ինչը ես լավ գիտեմ... Մեր բանակը դեռ շատ զարգանալու աճելու տեղ ունի սակայն այսօր մենք ունենք փոքր, բայց ուժեղ բանակ որը կարող է ապահովել մեր խաղաղությունը· Մեր բանակն արժանի է մեծագույն հարգանքի մեր ժողովուրդն էլ լավ գիտակցելով բանակի դերը պիտի սատարի նրան ու մեկընդմիշտ հասկանա որ հզոր բանակի և միասնության մեջ է իր ուժը Իսկ բանակում պիտի շատ աշխատել զինվորի հետ աշխատել նրա բարոյամարտական կերպարի ուղղությամբ մեր զինվորը պիտի բարձր նկարագիր ունենա ու իսկապես հպարտ լինի, որ ինքն արցախյան բանակի զինվոր է և իր հերթին պիտի վստահ լինի որ իր ղեկավարները իրեն չեն դավաճանում ու ոչ մի հարցում չեն խաբելու

Մեր բանակը պետք է հզորանա իր հակաօդային պաշտպանության համակարգով ունենա հրետանային մեծ հզորություններ ու էլեկտրոնիկայի պահանջվող համալրում որովհետև վաղը եթե վտանգվի տարածաշրջանի խաղաղությունը, մեզ առավել շատ վտանգ է սպառնալու օդից հեռահար հրետանուց այլ ոչ թե հետևակից Դրա համար ուղղությունները պետք է ճիշտ ընտրվեն, ժամանակին մենք ճիշտ էինք ընտրել և փա Աստված որ շարունակեն ու զորացնեն

**– Հայոց պատմության մերօրյա պայքարում Սամվել Բաբայան-Զորապետը գրեց իր տողը՝ պայքարի ու հաղթության մեկ տողը... Ո՞րն է այդ տողը՝ ըստ Ձեզ: Հայտնի են մի շարք ռազմագործողություններ, որոնց իրականացումը կապում են Ձեր համարձակ նախաձեռնության հետ. . ի հեճուկս չկամների տարիների հեռվից պարզ երևում է որ Դուք ճիշտ ուղի էիք ընտրել.**

Հայկական «դիվանագիտությունը» երբեք չի որոշել ինչը ով վերցնի, երբ վերցնի... ճիշտ է՝ ես մտածում էի որ շատ դժվար կլինի, խորհրդակցում էի իմ հրամանատարական կազմի հետ Բայց խնդիրն ինձ համար պարզ էր և երևի հիշում եք թե Աղդամը վերցնելիս տակտիկական ինչ քայլ արեցինք Հակառակորդը մեծ ուժ էր կուտակել այնտեղ սակայն մենք ընդամենը 11 զոհ տվեցինք որոնցից շատերը ականի վրա էին «պայթել» կամ էլ զոհվեցին անզգուշության հետևանքով Ես գտնում եմ որ տակտիկան էր ճիշտ մշակված և հակառակորդն անընդհատ զգում էր իր շրջափակումն ու խուճապի էր մատնվում· Օպերացիաները անձամբ ես էի մշակում կադրային սպաներ կային, սակայն նույն Զիննիչը (ԼՂՀ ՊԲ շտաբի նախկին պետ ծանոթ կազմողի) գտնում էր որ սխալ է Աղդամ մտնելը մեծ կորուստներ ենք ունենալու և հրաժարվեց իր վրա պատասխանատվություն վերցնելուց Ասացի

www.a-pdf.com



որ ինքս կվերցնեմ պատասխանատվությունը, և այդպես էլ արեցի Հասանք հաջողության և մեր ժողովուրդը դրա վկան էր· Նույն կերպ և Քելբաջարի շրջանը ռազմագործողությունը մշակել եմ ես, սակայն Վազգեն Մանուկյանն ու Սերժ Սարգսյանն արդեն պատասխանատվություն էին կրում. Եթե հիշողությունս չի դավաճանում նախանշել էի, որ 4–5 օրվա ընթացքում օպերացիան կավարտվի և ուղիղ 5 րդ օրն այն ավարտվեց Նույնը Ջանգելանի ու Կուբաթլուի օպերացիաները Մենք չպետք է դավաճանենք մեր պատմության ը անհրաժեշտ է որ ասվի ու գրվի ճշմարտությունը: Մեր քաղաքական գործիչներից շատերը չեն ընդունել, որ մենք այդ տարածքները ազատագրենք Այստեղ կա պատասխանատվություն վերցնելու պահը և ես դա ստանձնեցի ու հասա մեծ հաջողությունների և Աստված մի արասցե, պապալեի.. Հետո երբ ամեն ինչ բարեհաջող ավարտ ունեցավ քաղաքական շրջանակներում ասում էին թե բոլորս միասին ենք որոշել· Դա ինձ համար էական չէ Էական ինձ համար մեր հաջողություններր մեր հաղթանակներն էին... Ես հստակ տեսնում էի այդ ճանապարհը, ես հստակ տեսնում էի այդ հաղթանակը և պատասխանատվությունը վերցրի 92 թվականից այն ժամանակ երբ Ղարաբաղի տարածքի 48 տոկոսը հանձնված էր գրավված էր Ես «փանատ» չէի և հստակ տեսնում էի մեր հաղթանակների մեխանիզմը: Վերցնել պատասխանատվություն օրհասական պահին ու հաղթել... Սա է, երևի, իմ տողը

**– Մեկ ազգ, մեկ հայոց բանակ և երկու սպարապետ՝ Վազգեն ու Սամվել .. Մի բուռ ազգի համար սա մեծ «շռայլություն» չէ՞·**

– Ես եղել եմ մի հատվածի հրամանատար ու չեմ փորձի հավասարվել Վազգեն Սարգսյանին... Երկուսս էլ ունեինք թերություններ երկուսս էլ ունեինք առավելություններ, բայց ազգի սպարապետը մեկն է լինում

**– Դուք մեծահոգաբար այդ «տիտղոսը» զիջո՞ւմ եք...**

Այո զիջում եմ ու մտածում եմ որ թե սպարապետության հարցում և թե մնացած բոլոր հարցերում էլ մեր ազգը կիսվելու մաս մաս դառնալու իրավունք չունի

**– Ըստ Ձեզ ի նչ առավելությունների շնորհիվ ԼՂՀ ինքնապաշտպանության բանակը կարողացավ դիմակայել ու ի դերև հանել 7-միլիոնանոց Ադրբեջանի ագրեսիան**

Առաջինը միասնությամբ, աշխարհասփյուռ մեր ազգի բոլոր հատվածների միասնությամբ Հայաստանի իշխանություններն օգնեցին իրենց հնարավորությունների չափով Այդ միասնությունը բերեց մեր հաղթանակը ոգին և համոզվածությունը որ կհաղթենք և թիմի այն 3000 տղաների կամքը որ գլխավորում ղեկավարում ու առաջնորդում էին բոլոր ջոկատներին: Պատճառներից մեկն էլ այն է որ մենք 70 տարի ի վեր ադրբեջանցիների հետ ապրել ենք կողք կողքի և գիտեինք այդ ազգի և թույլ, և ուժեղ կողմերը Հաջորդը խորհրդային իշխանության տարիներին մեր զորակոչիկ տղաներին ծառայության էին ուղարկում ամենադժվար զորամասերը Դա էլ կարելի է համարել Ադրբեջանի թույլ տված սխալներից մեկը: Ինչ նոր զենք որ մենք ստանում էինք, մեր տղաները իսկույն տիրապետում էին Ես միայն մի օրինակ բերեմ ադրբեջանցի զինվորը տանկը վարելու համար թղթի վրա գրում էր թե երբ

www.a-pdf.com



ինչ կոճակ պիտի սեղմի, ու մինչև այդքանը կաներ կոճակների տեղերն անգիր իմացողը նրան շարքից հանում էր Մեր հաղթանակը բերեց մեր հպարտություն զինվորը և նրա վստահ շարժուղարձն ինքնավստահության սղեց մեր ժողովրդին Ինչքան էլ այսօր ինձ մեղադրեն թե ես խիստ եմ եղել, բայց իմ գործելակերպով ներշնչել եմ ժողովրդին որ վստահ լինեն դա ոչ քաշից էր ոչ էլ բոյուբուսաթից պարզապես ես հստակ տեսնում էի դեպի հաղթանակ տանող ուղին:

**– Կնքվեց զինադադարը, և արդեն Դուք միայն բանակային խնդիրներով չէիք զբաղվում, կուզենայինք իմանալ դրա հիմնարար պատճառները**

Խնդիրն այն է որ քո ողջ ժողովուրդն էր ներքաշված պատերազմի մեջ մենք ունեինք նաև մարդկային մեծ կորուստներ: Այդ պայքարում մեկը դարձել է առաջնորդ հարցն այն չէ ես եմ դա, թե մեկ ուրիշն է... Զոհվածի ընտանիքը վատ է ապրում թոշակը քիչ են տալիս՝ մեղքը լիդերինն է հաղթանակած մարտիկը աշխատանք չունի վատ է ապրում՝ դարձյալ մեղքը լիդերինն է Ես այդ դժգոհությունների ականատեսն էի ու փորձում էի շտկել իրավիճակը մտնելով տնտեսական դաշտ աշխատել մի շարք հարցերի լուծում տալ 98 թվականի մի հանդիպման ժամանակ ասացի որ 99-ին պետք է վարկային ռեսուրս ունենանք և կռված տղաների միջոցով զարգացնենք բիզնեսը: Որոշ մարդիկ ինձ չհասկացան ոմանք մինչև այսօր էլ չեն հասկանում Կամ պիտի լիդերը հեռանար և չերևար ոչ ոքի աչքին կամ էլ այդ մարդկանց պիտի ապահովեր աշխատանքով Անկախ նրանից ով էր նախագահը վարչապետը և ով ինչպես էր ապրում. մեղավորը ես էի ու հասկանալով պարտավորվում էի ու փորձում շտկել իրավիճակը Եվ ամեն անգամ մեծ արգելքի էի հանդիպում, ու չէին թողնում ոչ թե չէի կարողանում, այլ չէին թողնում հասնել նպատակիս Որովհետև այդ նույն իշխանությունները շատ հստակ էին հասկանում, որ ամեն տապալված գործի համար (թե տնտեսական թե այլ բնագավառում) մեղադրվելու է Սամվել Բաբայանը Իսկ ամեն մի հաջողության դեպքում ձգտում էին որ Սամվել Բաբայանի անունը չլինի

Ես այս օրվան ու այս ելքին սպասում էի բայց՝ ոչ այս ժամանակահատվածում այլ վերջնական փաստաթղթի ստորագրումից հետո իսկ թե ինչու շաբաթն ուրբաթից շուտ եկավ, երևի էլի ես գործընթացն արագացրի.

**– Խնդրում եմ՝ վերաիմաստավորեք մեր պայքարի բոլոր բեկումնային պահերը:**

Ամենաբեկումնային պահը 1992 թվականին էր հոկտեմբեր ամսին Հանձնված էին Շահումյանը Մարտակերտի շրջանի մեծ մասը Հադրութի շրջանի 18 գյուղերը, Ասկերանում 7 8 գյուղ· Հակառակորդն ամեն օր թելադրում էր իր կամքը, և դու չէիր հասցնում որոշում կայացնել: Անհրաժեշտ էր փոխել խաղի կանոնները որպեսզի ինքդ դառնայիր թելադրող թե չէ արդեն պարզից էլ պարզ էր որ պարտվում ես տանում ես տալիս պատերազմը Զոկապները պետք է հստակ ընկալեին իրադրությունը պետք էր մեկը որ պատժի՝ հրամանը չկատարելու դեպքում.. Ես Ստալին չեմ եղել, չեն եղել քաղաքական բանտարկյալներ և հենց այնպես ոչ ոքի չեմ պատժել իմ հաճույքի համար ոչ մեկին պաշտոնից չեմ ազատել· Ով գեթ մի փոքր մտածում է իր

www.a-pdf.com



ազգի մասին չպիտի ինձնից նեղանա Ես երբեք չեմ ասել թե այս մեկի հետ աշխատում եմ մյուսի հետ չեմ աշխատում անձնական ամբիցիաները ինձ համար խորթ են ես աշխատել եմ այն մարդկանց հետ ովքեր ի զորու էին աշխատելու հարցեր լուծելու: Այդ մարդկանցից շատերին ես հանդիպել եմ պատերազմի դաշտում ընկերություն եմ արել նրանց հետ և գնահատել ու նշանակել եմ նրանց անձնական հատկանիշներից նրանց գործելակերպից ելնելով Ասում են Սամվել Բաբայանը նշանակել է կառավարության անդամ ներին Ես այդպիսի բան չեմ արել որպես լիդեր և այս երկրի հոգսերով ու ցավով ապրող մարդ՝ ունեի իմ կարծիքը և արել եմ առաջարկություններ այս կամ այն հարցի ու թեկնածուի վերաբերյալ

**– Այսօր շարունակաբար, փորձում են հաղթանակած բանակին զիջում ներ պարտադրել. ինչպիսի՞ն է Ձեր վերաբերմունքը**

Մեր ամեն մի հրամանատար դեռևս 94 թվականից սկսած, գիտեր թե որտեղ է լինելու իր սահմանը Ես միշտ ասել եմ որ զիջումներ պետք է լինեն բայց դրանք չպիտի լինեն միակողմանի Իսկ Քելբաջար Լաչինի հարցում ոչ մի զիջում դա մեր ժողովրդի անվտանգության երաշխիքն է Այստեղ հողի խնդիր չկա այստեղ կա անվտանգության խնդիր: Եվ եթե Ադրբեջանից բռնագաղթած 400 հազար հայ փախստականներ ապրելու են Քելբաջարի շրջանում ապա դա նրանց իրավունքն է Ղարաբաղն ունեցել է 5 շրջան եղել է ինքնավար մարզի կարգավիճակում հիմա կունենա առնվազն 7 շրջան հանրապետության կարգավիճակով Ադրբեջանի հետ կողք կողքի ապրելով կփնօրինի իր ինքնիշխանությունը, և արդեն Ղարաբաղը մարմնակցված կլինի Հայաստանին Մենք կլինենք Հայաստանին տարածքով միացած հոգով միացած Այդ ամենից ելնելով էլ մենք պիտի մեր ստրատեգիան ճիշտ մշակենք Անհրաժեշտ է հարցին ճիշտ լուծում տալ և մասնակի զիջումները չպետք է մեր ժողովրդի գլխին նոր փոր ձանքներ բերեն Բոլոր դեպքերում մենք առաջին հերթին պիտի մտածենք ժողովրդի անվտանգության մասին

**– Ձեր գնահատականը հոկտեմբերի 27-ի դեպքերին·**

Հոկտեմբերի 27 ը ահավոր էր մեր ազգի համար... Լիդերը ծնվել էր բայց կատարվեց ոճրագործություն Տարիներ են պետք որ Հայաստանում կրկին ծնվի լիդերը

**– Ձեր գնահատականը Վազգեն Սարգսյանին նրա դերը Հայոց բանակի ու պետականության կայացման գործում**

Մեծ դեր ունի Վազգեն Սարգսյանը թե Հայոց բանակի ստեղծման թե կայացման և թե ազգային պետականություն ունենալու գործում Այսօր թե մեր բանակի և թե պետականության գոյությունը վտանգված է Այսօր երբ ես զիջում ու հանգիստ հետ եմ քաշվում դա չի նշանակում, թե ես այլ կերպ հար ցեր լուծել չեմ կարող, սակայն գտնում եմ որ մենք չպետք է նմանվենք ասիա կան բռնապետություններին, այլ ավելի քաղաքակիրթ եղանակներով պիտի պայքարենք ժողովրդավարական մեթոդներով Մեծ չարչարանքների ու զրկանքների գնով ձեռք բերված հաջողությունները, որոնցում իր մեծ ավանդն ունի Վազգեն Սարգսյանը այսօր վտանգված են և ես չգիտեմ թե

www.a-pdf.com



որքանով կհաջողվի ստեղծվածը պահպանել Իսկ այդ ստեղծվածը Վազգեն Սարգսյանի հաջողությունն է Չպահվեց ուրեմն Վազգենը ճիշտ քաղաքակա նություն չի վարել. Նույնը և ես եթե իմ հեռանալուց հետո բոլոր կառույցները գործում են ուրեմն ճիշտ քաղաքականություն եմ վարել, եթե հակառակն է ամեն ինչ փուլ է գալիս ուրեմն ես «թայֆայություն» եմ արել

**– Իսկ, ավելի կոնկրետ, որո՞նք են Ձեր սխալները..**

Ժամանակին ես իմ շրջապատից բազմաթիվ տղաների հեռու եմ պահել Ինչի՞ համար: Որովհետև մարդիկ օգտագործում էին իմ անունն իրենց անձնա կան հարցերը տեղերում լուծելիս: Միաժամանակ մի 3–4 տարի ես կտրված էի ներքևի օղակներից շփումներ չունեի և իրական վիճակին լիարժեք տեղյակ չէի Իմ սխալն այն է որ ժամանակին ես չպետք է կտրվեի այդ մարդկանցից այդ շրջապատից ես պետք է լսեի այդ մարդկանց ու լուծեի նրանց բոլոր խնդիրները Բայց դե անցածն արդեն անցած է և ես էլ ճիշտ քաղաքականու թյուն չեմ վարել: Իսկ ռազմական իմ սխալի մասին ես Ձեզ մեկ անգամ արդեն ասել եմ դա Մարտակերտում էր Ինչ մնում է իմ սխալի առաջին մասին ապա ես կտրվել եմ այն մարդկանցից ում շնորհիվ հասել ենք այսօրվա հաղթանա կին Ես դա արել եմ որովհետև մենք պետք է ստեղծեինք պետություն ունե նայինք մեր պետականությունը ես կտրվեցի նրանցից որովհետև որոշ մար դիկ արդեն շահարկում, շահագործում էին իրենց վաստակը, չէին ենթարկվում իրավապահ մարմիններին և այլն. Ես կանգնած էի երկընտրանքի առջև և նախընտրեցի որ մենք պետք է ամեն ինչ անենք իրավական պետություն ունենալու համար Եվ քաղաքական գործիչները ճիշտ պահին իմ գործած սխալն օգտագործեցին իմ դեմ, երբ հենց նրանք պիտի ինձ սատարեին որով հետև դրան գնալով ես լուծում էի քաղաքական խնդիրներ: Ժամանակին ես պետք է զգայի որ դա օգտագործելու են իմ դեմ. Կրկնում եմ ես այդ ‹սխա լը» գործել եմ հանուն ազգի հանուն պետականության Ես կուղղեմ իմ սխալը իսկ այն մարդիկ որ գտնում էին թե այդ տղաներն իմ կողքին չեն կանգնելու ավա ղ սխալվել են

**– Ի՞նչ եք կարծում մեզ ավելի մեծ փորձություններ սպասո՞ւմ են քան արդեն ունեցել ենք**

Չեմ կարող ասել ավելի մեծ բայց կարող է պատերազմ լինել ես էլի եմ ասել այդ 4 րդ «ռաունդի» մասին

Ամեն ինչ կախված է մեր ժողովրդի ամրությունից միասնությունից Եթե աշխարհը զգա որ մենք միասնական ենք ու պինդ ենք, այդ դեպքում կարելի կլինի խուսափել վտանգից Որքան էլ որ տարաձայնություններ լինեն ես գտնում եմ, որ սխալ է հեռուստատեսությամբ դրանք հրապարակելը Մեր հաղթանակը վերջնականապես դեռ ամրագրված չէ և մեր միասնությունն էլ օրախնդիր պահանջ է

**– Երբ մտաք պայքարի մեջ Դուք ընդամենը 24 տարեկան էիք Ինչպե ս և ի նչ հատկանիշների շնորհիվ հաջողվեց դառնալ շարժիչ ու առաջնորդ ուժ Ձեր հետևից տանելով հարյուրների, ապա հազարների.**

Ես իմ խառնվածքով էությամբ միշտ էլ դեռևս դպրոցից, եղել եմ շատ ակտիվ անձնավորություն Դա իմ մեջ կար բնությունից և ընկերական շրջա

www.a-pdf.com



պատում հայտնի էի որպես նոր ու հետաքրքրական գաղափարների տեր Նաև նախաձեռնող էի ու եռանդուն Ես ոչ ոքի չեմ պարտադրել ինձ ենթարկվել, պարզապես գործով ապացուցել եմ, որ կարելի է ինձ վստահել ու գալ իմ հետև ից. և կամաց կամաց իրենց ջոկատներով եկել ու միացել են ինձ և միասին հա սել ենք հաջողությունների: Սա է պատճառը որ սկսել է իմ անունը բարձրանալ, և միշտ եթե փորձել եմ ինչ որ բան ապացուցել ապա դա արել եմ անձնական օրինակով

**– «Սա մեր պատերազմն է», «Սա մեր վերջին պատերազմն է», նմանա տիպ արտահայտություններ մեր պետական այրերի բերանից լսել ու լսում ենք. Ձեր կարծիքով՝ սա մեր վերջի՞ն պատերազմն է·**

– Եթե հիշում եք ես մի անգամ հայտարարել եմ որ սա մեր վերջին պատե րազմը չէ· Փոքր զիջումներով հակառակորդը չի հանգստանում իմ 4 րդ «ռա ունդի › մասին երևի հիշում եք ինչը շահարկվում է քաղաքական գործիչների կողմից նրանք չէին զլանում ասել. թե իբր ես պատերազմ եմ սիրում: Իրոք եթե մենք ուզում ենք վերջնականապես իրականացած տեսնել մեր ազգային նպատակները մենք պիտի մի պատերազմ էլ շահենք Պարտադիր չէ որ դա լինի մեծ բախումների տեսքով: Թույլ չպիտի տալ, որ հակառակորդը հանգս տանա նա ամեն օր պետք է ունենա կորուստներ, որ գնա զիջումների, եթե սա եղավ, և երկու կողմերն էլ հանգիստ նստեցին ու սպասեցին քաղաքական գործիչների որոշումներին ապա այս դեպքում լինելու է մեծ պատերազմ Եթե զինվորականները ճկուն օգտագործեն հրադադար անվանվածը մեծ բախում դժվար թե լինի: Պետք է այնպես անենք (իհարկե, մեր ուժերով) որ պարա- ծաշրջանում մեզ հետ հաշվի նստեն, այլապես ազգային խնդիրների վերջնա կան լուծման գործում հանդիպելու ենք դժվարությունների Իսկ այսպես կի սատ պտատ ես հակված չեմ ընդունելու որ պատերազմը վերջացել է

**– Փոքր-ինչ վերաձևելով հայտնի խոսքերը ասենք. «Յուրաքանչյուր ժո ղովուրդ արժանի է իր բանակին»... Իսկ մեր յուրաքանչյուր հրամանատար (Դուք բոլորին մեկ առ մեկ ճանաչում եք) ինչի՞ է արժանի**

Ես բոլորին մեկ առ մեկ չեմ բնութագրի կփորձեմ ներկայացնել ընդհա նուր գծերով... Երևի հեշտ է կողքից նայել ու ասել՝ այս մեկը իր տեղում չէ կամ այսինչ կադրը ճիշտ չի նշանակված Իհարկե ղեկավարի կողմից լինում են կադրային բացթողումներ, սակայն իմ օրոք, կարծում եմ, 90 տոկոսով կադ րերին ճիշտ էի բաշխել: Ամենքն իրենց դերակատարությունն ունեին իրենց առջև դրված հստակ խնդրին էին ծառայում Ես ծանոթ էի բոլորի կազմա կերպչական ունակություններին Ունեի հրամանատար, որը պատերազմի դաշտում իրեն փայլուն չէր դրսևորել սակայն ուներ կազմակերպելու անձնա կազմը «բռունցք հավաքած պահելու» ընդունակություն պատասխանատվու թյան գիտակցում, խիստ էր տեղը տեղին պահպանում էր կարգուկանոնը և ես նմաններին դրսևորվելու հնարավորություն եմ տվել Ինձ պետք էին կադ րեր որ ունենային պատասխանատվության խոր զգացողություն ժողովրդի ներկայի ու ապագայի հանդեպ: Առաջին նախապայմանը ինձ համար դա էր... Հետո էլ ուրիշ հարց է որ շատ կադրեր ունենաս ու չկարողանաս տեղավորել և բոլորովին այլ հարց է չունենալ և եղած քչին օգտագործել ըստ էության

Մյուս թևը նույնպես իմ կադրային քաղաքականությունը չփոխեց եթե չհավենք աննշան տեղաշարժերը և ինձ հետ հեռացածներին Դա նշանակում է որ ես կադրերին ճիշտ էի տեղաբաշխել

Ես բոլորին էլ լավ գիտեմ և գիտեի թե ամենադժվար պահին որ հրամանատարն իր խնդիրը ինչպես կկատարի Խնդիրը հրաման տալու մեջ չէ, այլ թե ում ես տալիս այդ հրամանը, և նա ինչպես է կատարելու Ես կամաց-կամաց արդեն անցնում էի պրոֆեսիոնալ բանակի պահանջներին, և մի 3–4 տարի էլ և մենք կունենայինք մեր երազած բանակը Ես չեմ ընտրել հրամանատարներին որ կատարեն իմ հրամանները և ծառայեն ինձ ես պաշտոններ չեմ բաշխել, ընտրել եմ նրանց, որ ծառայեն ազգին իրենց պետությանը Բոլոր հրամանատարներն էլ կլուծեն իրենց առջև դրված խնդիրները եթե նրանց ճիշտ պահանջներ ներկայացվեն Աստված նրանց օգնական

**– Դուք ունե՞ք հավատք առ Աստված**

Հավատք ունեմ սակայն միայն առ Աստված իսկ մեր եկեղեցու սպասավորներին չեմ հավատում. նրանք առավել շատ կոմերսանտներ են, քան՝ Աստծո ծառաներ Ես այդ եզրակացության հանգել եմ նրանց հետ շփումների ընթացքում: Ես անվերապահորեն հավատում եմ Աստծուն մանավանդ դժվար պահերին մենք նրան առավել հաճախ ենք հիշում

**– Ի՞նչ էիք զգում այն պահին, երբ տեղեկացաք, որ ազատված եք զբաղեցրած պաշտոնից, և որը Ձեզ համար սոսկ պաշտոն չէր այլ մաքառումների մի երկար ճանապարհ:**

Պահն իմ մեջ ծիծաղ առաջացրեց .. Փորձեմ բացատրել թե ինչու ես չունեմ չկա այդ հրամանը, որ Սամվել Բաբայանը նշանակվել է «Կոմանդոյուշչի»՝ Կա պաշտպանության նախարար նշանակվելուս հրամանագիրը միայն Ես մի տողով ստացա իմ ազատման հրամանագիրը և առաջին հարցը որ ծնվեց իմ մտքում դա էր արդյո՞ք ինձ որևէ մեկը նշանակել է, որ հիմա էլ ազատում են Սակայն, լավ հասկանալով որ արդեն պետություն ենք ես պարտավոր էի լուռ ընդունել այդ փաստը... Ի վերջո եթե թերթում ենք մեր ժողովրդի պատմության էջերը ապա միշտ էլ տարաձայնություններ եղել են քաղաքական ու ռազմական գործիչների միջև Ես իմ առջև խնդիր դրեցի զիջել և թույլ չտալ որ պատմությունը կրկնվի Առաջին քայլն արեցի ես սակայն գտնում եմ որ մեր իշխանությունները ժողովրդին սխալ ճանապարհով են տանում՝ թե քաղաքական և թե՛ տնտեսական կտրվածքով Ով էր ինձ նշանակել չտեսա բայց ազատողին տեսա սակայն հրամանագրում նշված չէր թե ինչի համար եմ ազատվում՝ պաշտոնը չարաշահելու՞, վատ աշխատանքի՞ համար թե՞ Սա քաղաքական ազատում էր որոշ քաղաքական գործիչների կամքով էր Ես ներկայացրել էի աշխատանքից ազատվելու երեք դիմում՝ 96 ին 98-ին և 99 ին առաջին անգամ Լևոն Տեր-Պետրոսյանի և երկու անգամ էլ Ռոբերտ Քոչարյանի ժամանակ՝ Բայց Վազգեն Սարգսյանի եղերական մահից հետո ես բարոյական իրավունք չունեի իմ դիմումի համաձայն հեռանալու: Ինձ իրավունք չէի վերապահում նաև հանդուրժելու թե Հայաստանում և թե՛ Ղարաբաղում վարվող քաղաքականությունը Ես ունեի իմ հստակ դիրքորոշումը իմ տեսակետ

www.a-pdf.com



ները և, որպես պատասխանատվություն կրող անձանցից մեկը հստակ կողմնորոշում ունեի·

**– Դուք հեռացաք ասպարեզից՝ դա զիջելով ավելի «արժանավորնե րի՞ն», թե՞ պարզապես այլընտրանք չկար և խուսափեցիք առճակատման բերելիք ավերածությունից:**

Ես խուսափեցի առճակատումից խո ւսափեցի ժողովրդին կոնֆլիկտի մեջ ներքաշելուց և խուսափեցի աթոռի համար կռվողի պիտակից Ես երբեք աթո ռի պաշտոնի չեմ ձգտել: Եթե հիշում եք 94 ին ես ասեցի հայտարարություն որ անհրաժեշտ է ունենալ նախագահ վարչապետ և կոնկրետ անձանց էի մատնացույց անում Ես կարող էի և 96 ին և 97 ին մասնակցել ընտրություննե րին և, ինչու՞ չէ, հաղթել.. Ես չէի գտնում, որ կարող եմ լինել նախագահ և նմա նապես վաղը չեմ տեսնելու ինձ նախագահի դերում Ես գտնում եմ որ ինձ կա րող եմ դրսևորել կոնկրետ գործի մեջ, լինի դա բանակ թե տնտեսություն Իսկ նախագահ լինելու համար դու պետք է ունենաս թող ներվի ասել, պար տադրված տեսք, չափած ձևած շարժումներ Ես զինվորական պայքարով ան ցած մարդ եմ մի քիչ ազատ մի քիչ համարձակ ես զսպվածության մեջ էլ ազատ պիտի լինեմ Սամվել Բաբայանը պիտի լինի մի այնպիսի բնագավա ռում, որ նրա կատարած աշխատանքը երևա... Ես որ հետ եմ նայում, պիտի քա ղեմ իմ աշխատանքի պտուղները, հարցը բարձր պաշտոն զբաղեցնելու մեջ չէ սա է իմ տեսակետը. Գուցե ես սխալվում եմ բայց փաստը սա է

**– Փաստորեն Դուք կայացաք բանակում, իսկ բանակը կայացավ Ձեր ու Ձեր մարտական ընկերների շնորհիվ.. Այսօր ինչպե՞ս եք զգում առանց բա նակի**

Ճիշտ չի լինի որ ասեմ շատ լավ եմ զգում Ներքուստ հանգիստ եմ, իմ դե րը բանակում մեծ էր, և պատասխանատվության չափն էլ էր մեծ ես ծանր բեռ էի կրում ու անհանգիստ գիշերներ էի անցկացնում Հիմա մի քիչ հանգիստ եմ Ինչքան էլ երկիրն ունենա նախագահ, վարչապետ քաղաքական գործիչներ, և պնդեն որ իրենք պատերազմող երկրում պատասխանատվություն են կրում կրում են մասամբ, իսկ ամենամեծ պատասխանատվությունը կրում է պաշտ պանության նախարարը զորահրամանատարը Երբ դու ստանում ես հետա խուզական ինֆորմացիան և տեսնում ես, թե ինչ է քո դեմ կանգնած և ինչ հա կառակորդ ունես և երբ նայում ես դեպի ներս շատ դժվար է լինում հանգիստ քնելը, եթե ուղղակի պաշտոն չես զբաղեցնում այլ ծառայության պաշտպանու նակության գինը լավ հասկանում ես: Ես հիմա հանգիստ եմ ու մի քիչ էլ վիրա վորված վիրավորված ոչ թե բանակից այլ ժողովրդի մոտեցումներից մտածե լակերպից վերաբերմունքից Կա մի հատված որ մտածում է որ եթե Սամվել Բաբայանը չլինի ինքը լավ է ապրելու, և Բաբայանը նրա մի կտոր հացն է ուտում Ես կասեի ճիշտ հակառակը՝ Սամվել Բաբայանը փորձում էր այդ կտո րը 2 3 սարքել Ես արդեն մեկ անգամ ասել եմ ու կրկնում եմ ինձ թվում էր թե պատերազմից հետո մեր ժողովուրդը սթրկությունից դուրս է եկել բայց, ավաղ չէ. Իմ հետագա պայքարի նպատակը պիտի լինի որ մեր ժողովուրդն ազատվի այդ բարդույթից և մտածի որ հաղթանակն ինքն է տարել և առանց իրեն չկա հաղթանակ Մեր ազգը դարեր ի վեր տառապում է այն հիվանդությամբ թե

www.a-pdf.com



ռուսը ամերիկացին գալու են իրեն օգնեն սա իրոք հիվանդություն է, և մեր ազգը պիտի ձերբազատվի դրանից... Մենք ենք հաղթել մենք՝ հայե՛րս՝ 20-րդ դարի վերջին դու տարար փայլուն հաղթանակ ինչը չես ունեցել վերջին 1500 տարվա ընթացքում և այսօր լինես պարտապանի դերում ու վախենաս ինչ-որ մեկից անընդունելի է Պետք է ձերբազատվենք դրանից այլապես որպես ազգ երբեք ինքնուրույն չենք լինելու

**– Եթե գաղտնիք չէ, որո՞նք են լինելու Ձեր հետագա քայլերը:**

Միաժամանակ կողքից նայելու եմ թե ինչ է կատարվում ուզում եմ լավ ճանաչել մեր ժողովրդին և հասկանալ թե նա ինչ է ուզում. Վերջին 10 տարում հոսանքի բերանն ընկած գնում էի ու շատ ջահել էի հիմա ամեն ինչ կչափեմ հասուն հայացքով ավելի անմիջականորեն կշփվեմ ժողովրդի հետ Ես ոչ միշտ էի ճիշտ ինֆորմացիա ստանում հիմա ուզում եմ պարզել՝ մեր ժողովուրդն ուզո՞ւմ է ամրապնդել իր հաղթանակը ուզո՞ւմ է ազատ ապրել, թե՞ ոչ Նաև պիտի ժամանակ տանք որ ժողովուրդը գնահատական տա երկու կողմերին էլ Վերջին ձևակերպումը իշխանափոխություն է կոչվում նման բան չկա Սամվել Բաբայանն է փոխվել, իշխանությունը նույնն է Ես այսպես կձևակերպեի ուրեմն Սամվել Բաբայանը մի ամբողջ իշխանություն է Միաժամանակ կողքից կնայեմ ու նոր քայլեր կձեռնարկեմ Կտեսնեք

**– Ամենադժվար իրավիճակներից ելք գտնելու, էքստրեմալ պահերին զսպվածություն ու սառնասրտություն ցուցաբերելու Ձեր կարողությունների մասին հաճախ է ասվել ու խոսվել. Եղավ մի պահ, երբ սկսեցին խոսել Ձեր մարդկային թուլության մասին. Մի՞թե այդչափ անհնար էր ինք նատիրապետումը.**

Ես չէի ասի թե դա մարդկային թուլություն էր դա կոնֆլիկտի արդյունք էր բայց դա չի նշանակում թե ես չկարողացա ինձ զսպել Անհրաժեշտ էր մի ծայրահեղ իրավիճակ և դա ինքն իրեն ստացվեց ու կայացվեց որոշում Ես դա իմ ձեռքով արեցի այս հարցը միշտ կիսատ էր մնում և պիտի մի օր այսպես լիներ: Առիթը ներկայացավ և ես դրա համար ուրախ եմ Թե չէ առ այսօր բանակն իմ պատճառով պիտի տուժեր բոլոր առումներով և ողջ Ղարաբաղն էր տուժում իմ պատճառով... Այսօր էլ չեն զբաղվում Ղարաբաղի շահերով ոչ տնտեսական, ոչ էլ քաղաքական զարգացման բանակի հզորացման խնդիրներով, այլ զբաղվում են կոնկրետ Սամվել Բաբայանին հեռացնելով, կանգնեցնելով ու նրա հետ հաշիվներ մաքրելով Անբարոյականություն չէ՞ երբ այսօր ինտերնետում կայքէջ են բացում գրում են մեր պայքարի հետ կապ ունեցողների անունները իսկ քո անունը չեն գրում անտեսելով քո ներդրումը արցախյան բանակի կայացման գործում Ես ոչ թե վիրավորված եմ ու դրա համար եմ արտահայտվում ոչ ամենևին դրանով նրանք ցույց են տալիս իրենց թուլությունը և վատ նախադեպ են ստեղծում Ես երբեք ուժով իշխանություն չեմ պահել ու չեմ գալու իշխանության ուժով Ես ուժ ունեցել եմ և ունեմ եթե ես չցանկանայի ոչ ոք չէր կարող ինձ հեռացնել ինչ հրաման էլ որ ձևակերպելու լինեին Ես իմ օրինակով ցույց տվեցի որ ժողովրդին չի կարելի բաժանել երկու մասի

www.a-pdf.com



**– Ինձ հայտնի է, որ Դուք ունեք բազմաթիվ ծրագրեր, Դուք այդ ծրագրերի հետ մի կո՞ղմ եք քաշվելու թե՞ դրանք կենսագործելու հնարավոր տարբերակներ ունեք.**

Ես բնականաբար, իմ ծրագրերն իրականացնելու եմ այն ժամանակ, երբ գամ իշխանության՝ Ես ոչ թե պրոբլեմներ ունեմ մի անձի հետ այլ դեմ եմ ողջ համակարգին: Եթե դու գրում ես բյուջե, և դրա 15 20 տոկոսը ներդրումային քաղաքականություն է ցույց տալիս, զարգացման ապագա է ցույց տալիս, գալ- նստել և ասել թե դա «ավանտյուրիստական բյուջե» է. և մեծ հաճույքով այդ վարկերը ծախսել... Դա եղել է Ղարաբաղի առաջին բյուջեն երբ որ վարկային ռեսուրս է դրվել դա արել եմ ես: Խոսքեր ինչքան կուզեք թղթի վրա օդում բայց կոնկրետ զարգացման ու մի ծրագիր նրանց կողմից առ այսօր չեմ տեսնում Եկեք ընդունենք որ ոչ մի ներդրող չի մտնելու պատաձաշրջան որովհետև այն ռիսկի գոտի է և պետությունը պիտի հոգա դրա մասին երաշխավորի ու իր բիզնեսը ստեղծի Այլ տարբերակներ մենք չունենք Առ այսօր մենք Հայաստանի հետ չենք ճշտել մեր մոտեցումները... Հայաստանն այսօր նայում է Ղարաբաղին (պատերազմի գոտուն), ինչպես՝ Սյունիքին կամ մեկ այլ մարզի Ես գտնում եմ որ սա սխալ ու ոչ պետական քաղաքականություն է Ես ժամանակին փորձել եմ կողքից օգնել, բայց գտնում եմ, որ քո գաղափարն ինքդ պիտի իրագործես եթե ժողովուրդը կվստահի ու ժամանակն էլ ցույց կտա քո իրավացիությունը

**– ԼՂՀ ՊԲ հզորությունը կապվում էր Ձեր անվան, Ձեր անհատականության հետ... Ասում են նաև որ Ձեր հեռանալով այն թուլանալու է Համաձա՞յն եք այդ մտքին**

Ես հակված չեմ այդ մտքին Սակայն նաև մտածում եմ, որ եթե մեկին ազատում ես աշխատանքից նրանից հետո եկողը մի գլուխ բարձր պիտի լինի... Սրանից ելնելով ոչ թե ամեն ինչ պիտի կապել Բաբայանի անձի հետ, այլ՝ այն բանի հետ թե ինչ կադրային քաղաքականություն է վարվելու Եվ թե՝ լավ ու վատի հարց չի եղել բայց քեզ հեռացրել են, սա էլ արդեն մեկ այլ խնդիր է. Ես չեմ ուզում կանխագուշակություններ անել ուղղակի ժամանակը ցույց կտա ով էր ճշմարիտը՝ Ես վերացական խնդիրներ երբեք չեմ դրել, դեռ ավելին ցույց էի տալիս կատարման մեխանիզմները այդ մասին, ժամանակը կգա կարտահայտվեն հրամանատարները դեպքերից առաջ չընկնենք Ես չեմ ուզում որ անձնավորեն Սամվել Բաբայանին, մեր ազգն այդ թերությունն էլ ունի մեկից անհատի պաշտամունք են սարքում ու ձեռից կրակն ընկնում. Բայց նաև գտնում եմ, որ պետություն ստեղծելու համար ճիշտ կադրային քաղաքականություն է պետք Իմ կարծիքով բանակի կադրերի 90 տոկոսն իր տեղում է ուղղակի պետք է խնդիրը ճիշտ դնել ու պահանջել:

**– Դուք հայտնի եք Ձեր խստությամբ, այդպե՞ս եք արդյոք նաև ընտանիքում, ինչո՞ւ չէ՝ նաև ընկերական շրջապատում**

Իմ խստությունը միշտ ուռճացնում թանձրացնում են մեր ժողովուրդը մի քիչ այլ կերպ է հասկանում խստություն ասվածը Ընտանիքում ես չեմ կարծում թե խիստ եմ առավել ևս ընկերական շրջապատում: Ես շատ անմիջական եմ ու շփվող սակայն աշխատավայրում ես մի քիչ ուրիշ եմ և իմ

ընկերն ինձ մոտ գործով արդեն որպես ընկեր չպիտի մտնի դա յուրաքանչյուրը հասկանում է Իսկ խիստ լինել առաջինը պատերազմն էր սպիկում, երկրորդը՝ պատասխանատվությունը ազգի առաջ երրորդը դա էր հաղթանակ տանելու միակ տարբերակը՝ Այս երեք խնդրի լուծման համար մի խստությունն ի՞նչ է որ չդիմանային.

Իմ խստության մասին լուրերը շրջանառության մեջ մտան 91 ին, 92 ին և դա խստություն էր ոչ թե հաճույքի համար այլ պահի թելադրանքով էր ու դրությունից փրկվելու ելք էր Ես պատասխանատվությունը երբեք ինձնից չեմ հեռացրել ու պարտավոր էի որոշակի պահերին նաև խիստ լինել դա ժամանակի թելադրանքով էր

**– Ազգի սպարապետները երբեք չեն զորացրվում ի նչ կցանկանար 35-ամյա սպարապետը ապագա սպարապետներին՝**

Հայոց ամեն մի սպարապետ իր տեղն ու դերն ունեցավ որոշակի ժամանակահատվածում պատմական պահի. Ցանկությունս է որ մեզանից հետո եկողները սերտելով մեր դասերը խուսափեն սխալներից, ունենան հստակ ծրագրեր ու դիրքորոշում չլինեն տատանվող իրենց տեսակետներում ու ընտրած ճանապարհին՝ Ես արդեն ասացի, որ մեր ազգը պիտի ստրկամտության բարդույթը թոթափի սա մի տասնամյակի խնդիր չէ և կարող են այդ ընթացքում մի քանի սպարապետներ փոխվել բայց այդ խնդրում պետք է հետևողական լինել ու հասնել նպատակին: Թող ապագա մեր բոլոր սպարապետները հասնեն իրենց նպատակին: Եթե մարդ իր առջև հստակ նպատակ է դնում անպայման հասնում է Եթե ազգն իր առջև նպատակ է դնում և հետևողականորեն այն իրագործում է ապա նա անպայման հաղթելու է եթե անգամ ողջ աշխարհն իրեն դեմ լինի Թող երբեք ու ոչ մի հայ չդավաճանի ազգային նպատակներին

## ‹ՄԵՆՔ ԿԱՐՈՂԱՑԵԼ ԵՆՔ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԱՌԱՆՑ ԵՐՐՈՐԴ ՈՒԺԻ, ՊԵՏՔ Է ՆԱԵՎ ԿԱՐՈՂԱՆԱՆՔ ԿԱՆԽԵԼ ԱՅՆ ԱՌԱՆՑ ԵՐՐՈՐԴ ՈՒԺԻ»

Հարցազրույցը Հովհաննես Գալաջյանի
Իրավունք» 3 դեկտեմբերի 2004թ

Բանտարգելությունից գեներալ-լեյտենանտ ազգային հերոս Սամվել Բաբայանի երկար սպասված ազատումից հետո մեր հազարավոր ընթերցողները, ողջունելով և շնորհավորելով «Կոմանդույուշչիին», բազմաթիվ հարցեր են ուղղում նրան որոնց այսօր պարոն Բաբայանը համաձայնել է պատասխանելու Քաջ հայտնի է որ ԼՂՀ բանակի նախկին հրամանատարը զբաղվել է և բանակաշինությամբ, որը կապ է ունեցել տնտեսության բոլոր ճյուղերի և բնականաբար քաղաքականության օրենսդրության հետ Ակնհայտ է նաև որ Արցախի Պաշտպանության բանակի նախկին հրամանատարը հանդիպել է առանց բացառության բոլոր նրանց հետ ովքեր զբաղվել են Ղարաբաղի

www.a-pdf.com



հիմնահարցով, լինեն նրանք ռազմական, թե քաղաքական գործիչներ Մեր հարցազրույցի մեջ կշոշափվեն այդ բոլոր հարցերը սակայն սկսենք ազատ ման առնչվող հարցից

**– Պարոն Բաբայան, Ձեր ազատումից հետո մամուլում երևացին տարաբնույթ մեկնաբանություններ Շատերը դա կապեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հետ**

Իմ ազատումը պայմանավորված չէ հակամարտության խնդրի կարգավորմամբ կամ որևէ այլ քաղաքական հարցով, համենայնդեպս ինձ հետ ոչ որ այդ հարցի և որևէ այլ հարցի շուրջ չի խոսել որևէ բանակցություն չի եղել, ոչ մի պայմանավորվածություն չկա Բացի այդ չեմ կարծում որ ԼՂՀ հիմնահարցը լուծման մոտակա փուլում է և կարելի է դա կապել ինձ հետ

**– Հետադարձ հայացք նետելով Ձեր անցած քաղաքական ուղուն ընդունո ւմ եք, որ եղել են նաև սխալներ.**

Ամենամեծ սխալը իմ կարծիքով, եղել է այն, որ ես անգամ զինադադարից հետո շարունակել եմ աշխատել իմ գաղափարները և հայացքները չընդունող անձանց հետ

**– Պարոն Բաբայան, հետաքրքիր է իմանալ, թե որոշ ընդմիջումից հետո ինչպիսի՞ն եք տեսնում և գնահատում Հայաստանի Հանրապետությունում ներքաղաքական իրավիճակը**

Ներկայումս ես զբաղված եմ ընտանեկան և առողջությունս վերականգնելու խնդիրներով ուստի շատ բան ասել չեմ կարող, սակայն կարծում եմ որ ներքաղաքական դաշտում օրենսդրական փոփոխություններով պետք է հասնել իշխանության ապակենտրոնացման և կայացնել իրատեսական որոշումներ հաշվի առնելով որ օրենքն ընդունելու ժամանակ պետք է հարց տանք մեզ այդ օրենքն համապատասխանո՞ւմ է առկա իրադրությանը և հասարակության համար ընդունելի է Օրինակ անհրաժեշտ է ունենալ այնպիսի օրենսդրություն որը կապահովի տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրված անձի գործունեության անկախությունը և կընդլայնի տեղական ինքնակառավարման մարմնի լիազորությունների շրջանակը: Ընտրված անձը պետք է դառնա կամուրջ հասարակության ու գործադիր իշխանության միջև և օրենքի շրջանակներում կատարի ընտրողի հանդեպ իր պարտավորությունները Նա ֆինանսապես ևս պետք է անկախ լինի Իշխանության ապակենտրոնացումից հետո միայն կարելի է բարեփոխել ընտրական օրենսգիրքը քանի որ միայն այդ դեպքում բարեփոխումը կլինի արդյունավետ Ընդ որում ապակենտրոնացում ասելով նկատի ունեմ անխտիր բոլոր բնագավառները այդ թվում կրթությունը առողջապահությունը և այլն

**– Պարոն Բաբայան, կարելի՞ է ենթադրել, որ ապակենտրոնացում եք առաջարկում նաև իրավապահ կառույցներում**

Անշուշտ, նույնը պետք է կիրառել նաև ոստիկանության համակարգում Ես կարծում եմ, որ օպերատիվ ու քննչական մարմինները պետք է լինեն ոստիկանության համակարգում իսկ հասարակական կարգի պահպանումը պետք է վերապահել տեղական ինքնակառավարման մարմիններին: Միայն այս պարագայո մ երկու կառույցները կշարունակեն փոխգործակցել օրենքի

www.a-pdf.com



շրջանակներում. Եթե անդրադառնանք դատախազական համակարգին ապա այստեղ էլ կան անելիքներ Ես կարծում եմ որ դատախազի նշանակումը և ազատումը պետք է լինեն Ազգային ժողովի պատգամավորների համաձայնությամբ քանի որ օրենսդիրը ստեղծում է մեխանիզմ իսկ հսկողություն իրականացնողը պետք է այն ճիշտ կիրառելու պարտավորություն ունենա Օրենսդիրը պետք է ունենա լծակ դատախազի վրա ազդելու համար Այլ ոչ թե վարչապետը առաջարկի իսկ երկրի նախագահը, ով պատասխանատու է գործադիրի համար նշանակի դատախազին Դատախազն էլ լինելով ընդամենը գործադիրից կախված պաշտոնյա հսկի օրենսդիր իշխանության ընդունած օրենքի ճիշտ կիրառումը Ես կարծում եմ որ սա տարիմաստ է և ոչ ճիշտ (վերջին դրույթներն այս ոգով իսկ կարգավորվել են հաջորդ 2005 թվականին փոփոխված սահմանադրությամբ –ծանոթ կազմողի) Ինչ վերաբերում է դատական համակարգին դա առավել բարդ է չնայած ջանում են ցույց տալ որ դա անկախ է Բայց այստեղ կա մի պարզ և հասկանալի դրույթ դատական համակարգի տարանջատումը և անկախ դատական համակարգի առկայությունը կանխելու են ամենաթողությունն ու անպատժելիության մթնոլորտը: Հասարակությունը պետք է այս ոլորտում ևս ընտրելու հնարավորություն ունենա և դատական համակարգը նույնպես պետք է լինի ընտրովի

**– Դուք խոսում եք համակարգային փոփոխությունների մասին Արդյոք հասարակությունը պատրա՞ստ է ընդունելու նման փոփոխությունները**

Այո հասարակությունը պատրաստ է, և, կարծում եմ, վաղուց է սպասում Պետք չէ փորձել ապացուցել որ եթե բոլոր բնագավառներում փոփոխություններ կիրառենք, ապա չի ստացվի Ճիշտ հակառակը Քաղաքական ուժերը չպետք է դա շահարկման առարկա դարձնեն Եթե իշխանությունը փորձի կյանքի կոչել այդ բարեփոխումները ապա պետք է աջակցել նրան: Ինչ վերաբերում է ընտրական օրենսդրությանը քանի դեռ չկա ապակենտրոնացված իշխանություն որքան էլ օրենսդրական փաթեթը փոփոխու թյան ենթարկենք այն չի գործելու

**– Պարոն Բաքայան ի՞նչ կասեք Հայաստանում խոսքի ազատության մակարդակի մասին: Հատկապես Ձեր ձերբակալությունից հետո մի շարք լրատվամիջոցներ տարբեր մեկնաբանություններով հանդես եկան·**

– Լրատվամիջոցների մասին որքան էլ ասենք որ նրանք ազատ են միևնույն է այդպես չէ: Միայն զարգացած ու ազատական տնտեսություն կայուն իրավաքաղաքական համակարգ ունեցող երկրում է հնարավոր անկախ ԶԼՄ ների գոյությունը այսինքն երբ դրանք ֆինանսապես անկախ են Պետությունը պետք է բոլոր հնարավոր պայմաններն ապահովի անկախ մամուլի որպես տարանջատված չորրորդ իշխանության, լրագրողների համակողմանի պաշտպանվածության համար մշակելով և վարելով հստակ քաղաքականություն Ներկայումս ես չեմ տեսնում անկախ դատարան դատախազություն ուստի անիմաստ է կեղծ լրատվության համար դիմել դատարան. Չէի ցանկանա անձնավորել Խնդիրն այն է որ առհասարակ ամբողջ օրենսդրական դաշտը պետք է փոխվի: Քաղաքացին պետք է կարողանա իր շահերը պաշտ

www.a-pdf.com



պանել դատարանում անկախ նրանից թե լրատվամիջոցնե րն են իրեն զրպարտել թե՞ իշխանության որևէ ներկայացուցիչ. Կարծում եմ որ յուրա քանչյուր քաղաքացի պետք է իրեն ապահով ու պաշտպանված զգա լինի դա Սամվել Բաբայանը թե մեկ ուրիշը

**– Վերադառնալով ներքաղաքական խնդիրներին ինչպիսի ն է ըստ Ձեզ մեր երկրի քաղաքական դաշտը:**

Քաղաքական դաշտում համագործակցությունը պետք է լինի գաղափա րի շուրջ և նպատի օրենսդրական դաշտի բարելավմանը Այսօր իշխանու թյունը կոալիցիան է վաղը կարող է ընդդիմությունը լինել Քաղաքական ու ժերը մի բան պետք Ւ հստակ գիտակցեն առաջիկա ընտրական պայքարը քա ղաքակիրթ անցկացնելու համար պետք է հստակեցնել օրենսդրական դաշտը Պետք է առաջ ընթանանք և հնարավորություն չտանք արտաքին ուժերին օգ տագործելու մեր ներքին հակասությունները Կուսակցությունները որոնք ընդգրկված չեն ԱԺ ում կարծում եմ պետք է սերտորեն համագործակցեն և օրենսդրական առաջարկություններ ներկայացնեն խորհրդարանի քննարկ մանը Ազգային ժողովը պետք է պատրաստ լինի իրականացնելու իրատեսա կան օրենսդրական փոփոխություններ ստեղծի վստահության մթնոլորտ նաև այդ կուսակցությունների ինչպես նաև հասարակական կազմակերպու թյունների մասնակցությամբ ապահովի օրենսդրական փոփոխությունների արդյունավետությունը

**– Պարոն Բաբայան, Դուք չանդրադարձաք տնտեսությանը կարելի է ենթադրել** որ **այստեղ ամեն ինչ հարթ է**

Ոչ տնտեսության զարգացման համար նույնպես պետք է ունենանք հստակ օրենսդրական փաթեթ, ուսումնասիրենք հարևան երկրների տնտե սական համակարգը: Ավելացնեմ նաև որ Հայաստանն ունի հաղորդակցուղի ների խնդիր Մեր օրենսդրական դաշտը պետք է այնպիսին լինի որով հնա րավոր դառնա լուծել այդ խնդիրը Փոքր և միջին բիզնեսով զբաղվողներին պետք է աջակցել և հնարավորություններ ստեղծել որ նրանք կարողանան դուրս գալ արտաքին շուկա և լինեն մրցունակ Միայն ճիշտ և արդյունավետ օրենք ունենալու դեպքում հնարավոր կլինի ապահովել մրցունակություն ու շահագրգռել գործարարին արտահանման համար Հարկային դաշտում վար չարարությունը պիտի նպատակամիտված լինի տնտեսվարող բոլոր սու բյեկտներին այդ դաշտը բերելուն ու հարկային կարգապահություն հաստա տելուն: Այդ համակարգը պարտավոր է մարզային ու հանրապետական կա ռույցների միջոցով արդյունավետ աշխատանքային մեխանիզմ ստեղծել Հարկատուն էլ իր հերթին չպետք է շրջանցի օրենքը: Այսինքն օրենքը պետք է ընդունվի կատարելու համար մինչդեռ շատ դեպքերում հասարակության զգալի մասն այն խախտում է Այսօրվա գործող օրենքն այնպիսի վիճակի մեջ է դնում հարկատուներին որ անկախ իրենց կամքից նրանք կատարում են տնտեսական հանցագործություն. Պետք է ապահովենք տնտեսության զար գացում, ոլորտի ճիշտ կառավարման քաղաքականություն, բացառենք կրկնա կի հարկումները: Հակառակ դեպքում մենք տարածաշրջանում չենք կարող զարգացող տնտեսություն ունենալ: Սա ավելի արդյունավետ մեխանիզմ կլի

www.a-pdf.com



նի տարածաշրջանային ինտեգրման հետագա համագործակցության և իրական դաշտում մրցունակություն ապահովելու համար Հարկային փաթեթն ընդունելիս պետք է հստակ գիտակցենք, որ մենք ունենք մասնակի շրջափակում և օդային բաց ճանապարհ, տարանցիկ փոխադրումների տուրքերը սպան դարտից մի քանի անգամ բարձր են և կան ներմուծման հետ կապված անուղղակի այլ հարկեր որոնք անմիջականորեն ազդում են մեր պետությունում արտադրվող ապրանքի ինքնարժեքի և, ինչու՞ չէ հետագայում նաև նրա արժեքի վրա՝ դարձնելով ապրանքն անմրցունակ Ես կարծում եմ, որ մեր պետությունը պետք է հնարավորինս արագացնի ներմուծվող ապրանքները կրկնակի հարկումից ազատելու գործընթացը բանակցություններ վարի տարբեր պետությունների հետ տարանցիկ փոխադրումների համար սահմանված վճարների իջեցման ուղղությամբ. Կամ գուցե այդ ժամանակավոր բացը լրացնի իր ներքին հարկային դաշտում համապատասխան հարկային դրույքաչափերի նվազեցման վերաբերյալ օրենքների ընդունմամբ

**– Ձեր կարծիքով՝ ինչպիսի՞ն պետք է լինի ներդրումների նկատմամբ պետության քաղաքականությունը**

Երբ խոսում էի տնտեսական դատական դատախազական համակարգերի և ապակենտրոնացված իշխանության օրենսդրական դաշտ ունենալու մասին նկատի ունեի դրանց բնականոն գործունեության ապահովումը որը կհանգեցնի պետության կայունությանը և կշահագրգռի ներդրողներին Ներդրողներին մեր շուկան կհետաքրքրի միայն այն դեպքում եթե ճիշտ են կիրառվում օրենքները, և դրանք գործում են ոչ թե առանձին անձերի այլ հասարակության համար: Բացի այդ, ներդրողը պետք է վստահ լինի, որ պետության վարած քաղաքականությունը կայուն է և իր շահերն օրենքով պաշտպանված են: Փոքր ու միջին բիզնեսի զարգացումը պետության կայունության հենասյունն է այս ճյուղի ճիշտ զարգացման դեպքում պետությունը ցնցումներ չի ապրի

**– Պարոն Բաբայան, Դուք խոսում եք երկրի զարգացումից բայց գաղտնիք չէ, որ կոռուպցիան տարածված է հասարակության մեջ**

Ապակենտրոնացված իշխանություն ունենալու դեպքում նվազագույնի կհասցվի կոռուպցիայի հավանականությունը Ինքնըստինքյան կնվազի որևէ նախարարի կամ բաժնի պետի դերակատարությունը այս կամ այն հարցի լուծման մեջ: Ասել է թե պաշտոնյան հնարավորություն չի ունենա օրենքը շրջանցելու և սեփական հայեցողությամբ որոշում կայացնելու Տնտեսական ոլորտում օրենքի խախտումներով մենք թուլացնում ենք պետության հիմքերը Իսկ խախտողները պետք է պատժվեն օրենքի ամբողջ խստությամբ Թեպետ մեր հասարակությունն արդեն իսկ խորհրդային ժամանակներից ժառանգել է մի այնպիսի հիվանդություն, ինչպիսին է կոռուպցիան հարկ է, օրենսդրական դաշտը բարելավելով դրա դեմ պայքարել օրենքի շրջանակներում

**– Ներքին քաղաքականությունն անմիջականորեն առնչվում է արտաքինին: Ինչպիսի՞ք եք տեսնում առաջիկա զարգացումները տարածաշրջանի անմիջական հարևանների՝ Ադրբեջանի և Վրաստանի հետ**

www.a-pdf.com



Վրաստանի հետ պետք է անմիջապես փորձենք բանակցային գործըն թաց սկսել երկկողմանի պայմանագրի շրջանակներում քանի որ կան մի շարք խնդիրներ որոնցով շաղկապված ենք Անհրաժեշտ է գալ ընդհանուր եզրակացության կողմերը պետք է ձերբազատվեն Հարավային Կովկասում այլ պետության ռազմական ներկայության համախտանիշից: Ես կառաջար կեի կողմերին հնարավորություն տալ տարածաշրջանով հետաքրքրված բո լոր պետություններին հետաքրքրության գոտիներ տեսնել առաջին հերթին տնտեսական դաշտում: Պետք է հարավկովկասյան պետությունները գան տարածաշրջանում այլ պետության ռազմահենակետեր չտեղակայելու մասին համաձայնության վարեն ընդհանուր տարածաշրջանային քաղաքականու թյուն Այդ դեպքում արդեն կարող ենք մրցակցություն ապահովել տնտեսա կան դաշտում լինի դա անմիջական հարևան, թե հեռավոր երկիր Սա կար ծում եմ, ճիշտ կլինի և ավելի կայուն զարգացումներ կունենանք Չնայած մենք Ադրբեջանի հետ հակամարտություն ունենք բայց չի բացառվում որ հենց իր շահերից ելնելով նա էլ ինտեգրվի ինչն էլ կբերի փոխվստահության Ղարաբաղի հիմնահարցի լուծման կապակցությամբ Առհասարակ կարծում եմ, որ տնտեսությունը և արտաքին քաղաքականությունը շաղկապված են ո չի կարելի դրանք տարանջատել: Կողմերը պետք է տնտեսական և առևտրա յին շահեր ունենան դա էլ հիմք կդառնա Հարավային Կովկասում քաղաքա կան ինտեգրմանը

**– Աշխարհաքաղաքական զարգացումներից չի կարող անմասն մնալ նաև Հայաստանը Արդյոք նպատակահարմա՞ր եք համարում Հայաստանի անդամակցությունը ՆԱՏՕ-ին**

Իմ տեսակետն այն է որ մի ծայրահեղությունից չի կարելի անցնել մյու սին Առհասարակ ռազմական բազաներ տեղակայելը Հարավային Կովկա սում հավասար է նոր պատերազմի ազգամիջյան նոր հակամարտություննե րի առաջացման: Ցնցումներ ապրող տարածաշրջանում, բնականաբար տնտեսական զարգացում արդեն չի լինի իսկ դա չի բխում հենց իրենց՝ տա րածաշրջանի ժողովուրդների շահերից· Այդ պատճառով էլ պետք է տարա ծաշրջանը դարձնել մի գոտի որտեղ կբացառվի այլ պետության ռազմական բազայի տեղակայումը

**– Ի տարբերություն հարավկովկասյան երկու պետությունների, որոնք շտապում են անդամագրվել ՆԱՏՕ-ին, մենք, ըստ Ձեզ համագործակցու թյան ինչպիսի՞ քայլեր պետք է նախընտրենք:**

Ես չգիտեմ ինչ քայլերով են նրանք համագործակցում բայց գիտեմ որ մենք իրավունք ենք վերապահո մ մեզ գործակցելու ՆԱՏՕ-ի, Ռուսաս տանի Եվրամիության և մի շարք այլ պետությունների ու կառույցների հետ մեր շահերի շրջանակներում Իսկ ինչո՞ւ ոչ Ես կարծում եմ որ երկ կողմանի պայմանագրեր պետք է լինեն անվտանգության մասնագետների պատրաստման բայց ոչ տարածաշրջանում ռազմական բազայի տեղա կայման մասին Գերտերությունների մրցակցությունը տարածաշրջանում պետք է լինի բացառապես տնտեսական ոլորտում Այդ պատճառով պետք է պայմանավորվածության գալ հարավկովկասյան պետությունների ու

www.a-pdf.com



նախ և առաջ Վրաստանի հետ քանի որ Ադրբեջանն առայժմ չի ցան կանում Դրանից կշահեն տարածաշրջանն ու այդտեղ ապրող ժողո վուրդները

**– Հայաստանի և Ամերիկայի Միացյալ Նահանգների հարաբերություն ների զարգացումը ո՞ր ոլորտում եք մեզ համար շահավետ համարում·**

Ես համարում եմ որ Հայաստանը պետք է երկկողմանի պայմանագրի շրջանակներում համագործակցի ԱՄՆ ի հետ: Իր հարաբերությունները ինչ պես մյուս երկրների այնպես էլ ԱՄՆ ի հետ պետք է կառուցի գործընկերու թյան հիմքի վրա.

**– Ի՞նչ համապեքստում եք տեսնում Հայաստան Եվրամիություն զար գացումները**

Այն քայլերը որոնց մասին ես ասացի ներքին քաղաքականության հա րավկովկասյան պետությունների տնտեսությունների ինտեգրման մասին խոսելիս ինքնըստինքյան կբերեն Եվրամիությանը հարավկովկասյան ըն տանիքի ինտեգրման համարյա թե նույն մեխանիզմներով բայց փոքր ինչ այլ օրենսդրական փոփոխություններով Ճիշտը դա է քանի որ Եվրամիու թյունը Հարավային Կովկասը դիտարկում է որպես մեկ միավոր մենք պար տավոր ենք առաջին հերթին իրար ինտեգրվելու: Խնդիրն այն է արդյոք ցան կանո՞ւմ ենք որ այդ ընթացքը սահուն լինի թե՞ նոր հակամարտությունների դաշտ ենք ստեղծում

**– Պարոն Բաբայան ինչպե ս եք տեսնում Հայաստան Թուրքիա հարա բերությունները·**

Թուրքիան մեր հարևանն է մենք նրան ընդունում ենք որպես անկան խատեսելի պետության բայց եկել է պահը, երբ պետք է վերանայենք մեր հայացքները և չառաջնորդվենք զգացմունքներով Նոր սերունդը հարցը պետք է այլ կերպ դնի աշխարհաքաղաքական զարգացումները ցույց են տալիս որ կարելի է այնպես գործել և այնպիսի քաղաքականություն վարել, որպեսզի Թուրքիան վերացնի շրջափակումը բացելով ցամաքային ճանապարհները. Ցեղասպանությունը թեպետ փաստ է բայց դրա ճանա չումը նախապայման չեմ համարում այդ երկրի հետ հարաբերություններ սկսելու համար

**– Տարածաշրջանային ամենամոտ հարևաններից է նաև Իրանը Այդ երկրի հետ է՞լ փոխգործակցության առաջնահերթությունը տալիս եք տնտեսական ոլորտին:**

Անշուշտ՝ Իրանն էլ Թուրքիան էլ տարածաշրջանում ունեն իրենց շահե րը Ճիշտ քաղաքականություն վարելով Իրանը պետք է տնտեսական դաշտում մրցակցի Նա մեր հարևանն է և հարավային դարպասը և մենք պետք է վարենք նրա շահերը խոչընդոտող քաղաքականություն Առհասա րակ պետք է այնպիսի քաղաքականություն վարենք որը չհակասի մեր հա րևանների շահերին

**– Վերադառնալով ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը.**

Նախ համամիտ չեմ «ղարաբաղյան հակամարտություն» բնորոշմանը. ղարաբաղյան հիմնահարցը համահայակական հիմնախնդիր է այսինքն

www.a-pdf.com



բոլոր հայերի անկախ նրանից թե որտեղ է ապրում հայը Խնդրի կարգավո րումը այսօր իրականացվում է բանակցություններով Ես չէի ցանկանա բանակցությունների մասին հայտնել իմ կարծիքը Կարող եմ ավելացնել որ խնդրի քաղաքական կարգավորման նոր ուղիներ պետք է ընտրել

**– Դուք ասացիք, որ տնտեսական դաշտում ինտեգրումը Ադրբեջանի հետ կսպեղծի փոխվստահության մթնոլորտ**

Ես կարծում եմ որ առանց փոխվստահության ինտեգրման, հարցի լուծ ման մեխանիզմ չկա Մնացած բոլորը իմ կարծիքով պարզապես այսպես ասած ժամանակ շահելու միջոց են:

**– Իսկ պնդումներն այն մասին որ բանակցությունների կողմ պետք է դառնա ԼՂՀ-ն.**

Նորից եմ կրկնում չէի ցանկանա անընդհատ շոշափել ԼՂՀ հարցը Կա մի պարզ ճշմարտություն դա պետք է բխի առաջին հերթին Ղարաբաղի բնակչության շահերից: Եթե բանակցում ենք հանուն բանակցությունների սա այլ խնդիր է Ես կարծում եմ ճիշտը Ստեփանակերտ-Բաքու երկխոսությունն է Ճիշտ ճանապարհը սա է Իմ կարծիքով բանակցային գործընթացում փակուղիների կամ խոչընդոտների պատճառը հենց այն է որ պաշտոնական Ստեփանակերտը բանակցային կողմ չէ:

**– Ի պատասխան ադրբեջանցիների՝ պատերազմական գործողություն-ներ վերսկսելու սպառնալիքների, մենք հայտարարում ենք թե պատրաստ ենք արժանի հակահարված տալու՝**

Արժանի հակահարվածը ռազմի դաշտում է երևում մեր ռազմական գերապետսչությունը պետք է ամենօրյա քրտնաջան աշխատանք կատարի այդ ուղղությամբ: Ամեն ինչ անի որ հարցը դրան չհասնի, ու հակառակորդը նման ախորժակ չունենա այլ իրեն զսպված պահի ու չփորձի ուժի դիրքերից խոսել Եթե մեր ռազմական գերապետսչությունը կարողանա դա ապահովել ապա ամեն ինչ կտեղափոխվի քաղաքական դաշտ Ես կարծում եմ որ առանձին դեպքերում պետք է հանրությանը տեսանելի դարձնել ռազմական գերապետս չության իրական հնարավորությունները Այլ ոչ թե սպասենք պատերազմը սկսվի հազարավոր զոհեր տանք հետո ապացուցենք, որ կարող ենք հակա հարված տալ՝ Ավելացնեմ նաև որ մենք կարողացել ենք պատերազմը դադա րեցնել առանց երրորդ ուժի պետք է նաև կարողանանք կանխել այն առանց երրորդ ուժի

## ԵՍ ՈՉ ՄԵԿԻՑ «ՊՐԱԽՈԴԻ» ԿԱՐԻՔ ՉՈՒՆԵՄ›

Հարցազրույցը Արամ Աբրահամյանի
Առավոտ 28 մարտի 2005թ

**– Երբ Դուք ասում եք որ մտնում եք քաղաքականություն նկատի ունեք Հայաստա՞նը, թե՞ ԼՂՀ-ն**

www.a-pdf.com



Ես այդ երկուսն իրարից չեմ բաժանում

**– Այսինքն՝ Դուք ակտիվորեն մասնակցելու եք այս տարի Ղարաբաղում կայանալիք խորհրդարանական ընտրություններին.**

– Եթե չասեմ ակտիվորեն ապա ինչ-որ մասնակցություն հավանաբար կունենանք Քանի նախընտրական պայքարը դեռ չի սկսվել առայժմ հարկ չեմ համարում դրան մանրամասն անդրադառնալ

**– Իսկ Դուք հավատո՞ւմ եք որ Հայաստանում հնարավոր են արդար ընտրություններ.**

– Համարում եմ, որ դա հնարավոր է եթե քաղաքական ուժերը նման ցանկություն և կամք ունենան

**– Ենթադրենք՝ քաղաքական ուժերը դա ուզում են իսկ նրանք, ում ձեռքին են բանակը, ոստիկանությունը, ազգային անվտանգությունը, հարկայինը, մաքսայինը և այլն, չեն ուզում: Ի՞նչ կարող է հակադրվել նրանց:**

Այդ լծակները կարող են օգտագործվել թույլ, ոչ մաքուր խղճով մարդկանց դեպքում: Օրինակ հարկայինը կարող է ճնշել այն գործարարին ով խախտում է օրենքը

**– Իսկ, ասենք, մարզպետին, քաղաքապետին գյուղապետին չե՞ն կարող կանչել և հրամայել լցրո՞ւ կամ նկարի՞ր:**

Հարցը հենց այն է որ այդ գյուղապետն էլ ընտրված չէ, վաստ է կատարում իր պարտականությունները դրանով էլ ամբողջությամբ կախված է գործադիր իշխանությունից և վերջինս էլ կարող է նրան ինչ ուզի հրամայի Օրենսդրական դաշտը պիտի այնքան կարգավորված լինի իշխանությունները պետք է այնքան տարանջատված լինեն որ այդ ճնշումը բացառվի· Եթե նույն գյուղապետն անկախ չէ նա կամավոր է զնում կեղծիքների նույնիսկ առանց որևէ պարտադրանքի Սկզբից պետք է լինի այդ տարանջատումը հետո միայն խոսենք ընտրական օրենսգրքից Հակառակ դեպքում նույնիսկ ամենալավ ընտրական օրենսգիրքը ձևական փաստաթուղթ կմնա

**– Հետևաբար, Դուք ելքը տեսնում եք օրենքների փոփոխությունների մե՞ջ.**

Այդ տեղական ինքնակառավարման մարմինները պետք է հստակ տարանջատվեն գործադիր իշխանությունից իրենց ֆունկցիաներով այնպես, որ առաջինները կախվածության մեջ չլինեն երկրորդից Դրա մեխանիզմները նախ և առաջ ֆինանսական են

**– Հայաստանի պայմաններում, քանի որ ընտրական տեղամասերի մեծ մասը դպրոցներում է, կեղծիքներին ակտիվորեն մասնակցում են նաև դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները:**

Այստեղ նույն խնդիրն է 1999-ին Ղարաբաղում օրենք ընդունվեց որ դպրոցի տնօրենը պետք է ընտրվի իր կոլեկտիվի և ծնողների կողմից Դպրոցը ֆինանսավորվել է ուղիղ ֆինանսների նախարարությունից իր կազմած բյուջեով Դա ապահովում էր տնօրենների անկախությունը. 2001 ին այդ օրենքը ցավոք փոխվեց և կրթական համակարգը վերադարձավ հին սկզբունքներին

www.a-pdf.com



**– Դուք պատրաստվում եք կուսակցություն ստեղծելու Գաղափարական ո ր դաշտում է այն գործելու**

Ազատական ժողովրդավարական դաշտում իշխանությո ւնների տարանջատում ապակենտրոնացում անկախ դատական համակարգ

**– Սակայն Դուք գիտեք, որ Սամվել Բաբայանը Ղարաբաղի նախկին բռնապետի «իմիջ» ունի: Ինչպե ս է այն համապեղվելու Ձեր դավանած ազատական արժեքների հետ**

Ամեն մարդ իր կարծիքն ունի, և ես չեմ փորձում որևէ մեկին համոզել, որ փոխի իր կարծիքը Բայց կան փաստեր: Ես եղել եմ Ղարաբաղի կառավարու թյան անդամ և 98 99 թվերին իմ նախաձեռնությամբ կամ մասնակցությամբ ընդունվել են բազմաթիվ օրենքներ Վերցրեք այդ օրենքները և վերլուծեք դրանք բռնապետակա՞ն են թե՛ ազատական Այդ օրենքներն ուղղված են եղել տարբեր ոլորտներում ընտրական համակարգի ներմուծմանը, իշխանության ապակենտրոնացմանը մասնավոր սեփականության զարգացմանը Եթե որևէ փաստեր կան իմ բռնապետ լինելու մասին թող ներկայացնեն դրանք որ հասկանանք, թե ինչ նկատի ունեն բռնապետ ասելով

**– Օրինակ ուժային ճնշում գործարարների վրա, ‹ փանիք կանգնել և այլն**

Բայց այդ գործարարները կան չէ այսօր: Շատերն էլ Երևան են տեղա փոխվել Խնդրում եմ ճշտեք նրանցից իրո՞ք իմ կողմից նման բաներ են եղել

**– Ի՞նչ է կոչվելու Ձեր կողմից ստեղծվելիք կուսակցությունը**

Առայժմ դա լինելու է հասարակական կազմակերպություն՝ Միացյալ Հայաստան›

**– Բացի Ձեզնից այդ կազմակերպությունից ինչ որ մարդկանց կարո ղ եք նշել**

Կազմակերպությունը կհաստատվի արդարադատության նախարարու թյան կողմից տեղի կունենա համագումար, և Դուք բոլորի հետ հնարավորու թյուն կունենաք ծանոթանալու: Ասեմ միայն որ նրանք չվարկաբեկված մար դիկ են մի կուսակցությունից մյուսը թռչող անձնավորություններ չեն

**Այդպիսիք դեռ կա՞ն Հայաստանում**

Այո գուցե որպես քաղաքական գործիչների Դուք այդ մարդկանց չճանա չեք Նրանք զրագետ կիրթ մարդիկ են որոնք ցավում են այս պետության համար

**– Հասարակական կազմակերպություն կամ կուսակցություն պահելը թա՞նկ հաճույք է: Ես մի տեղ կարդացել եմ, որ հատուկ Ձեր գործունեու- թյունը ծավալելու համար բիզնեսներից մեկում Ձեզ այսպես ասած պրա խող են փվել·**

Ես ոչ մեկից ‹ պրախոդի› կարիք եմ զգում Ես ունեմ շրջապատ որը զբաղվում է բիզնեսով՝ Հայաստանում և Ղարաբաղում Նրանք ինձ հետ նոր մալ հարաբերություններ ունեն և օգնում են ստեղծել այդ քաղաքական ուժը

**– Այդ բիզնեսմենների անունները Դուք, իհարկե, չեք ցանկանա տալ որովհետև չէիք ուզենա նրանց հարվածի տակ դնել· Այդպես չէ**

Ճիշտ չեմ գտնում նրանց անունները տալ

www.a-pdf.com



**– Դուք շփումներ ունե ք քաղաքական ուժերի գործիչների հետ քննար կո ւմ եք նրանց հետ Հայաստանի ապագան**

Այն գործիչները ովքեր ցանկություն են հայտնում ինձ հետ հանդիպելու և իմ տեսակետները լսելու կամ իրենց մտքերը ինձ ներկայացնելու նրանց հետ հանդիպում եմ

**– Խոսակցություններ կան, որ Դուք աջակցելու եք նախկին իշխանու թյուններին կամ, հակառակը, ներկա իշխանություններին.**

Ես աջակցելու եմ իմ գաղափարներին: Դրանցից մի քանիսը ես շատ հակիրճ Ձեզ ներկայացրի Այդ գաղափարների շրջանակներում ես համագոր ծակցելու եմ ցանկացած ուժի հետ

## ՈՐՔԱՆ ՇՈՒՏ ԼՈՒԾՎԻ ԱՅՆՔԱՆ ԼԱՎ

Հարցազրույցը Արամ Աբրահամյանի
‹Առավոտ» 29 մարտի 2005թ

**– Դուք ակտիվորեն մասնակցում էիք 1998-ի իշխանափոխության գործընթացին, որի պաշտոնական հիմնավորումն էին Ղարաբաղի խնդրի շուրջ տարաձայնությունները: Արդյունքում Ղարաբաղի հարցի լուծումը 7 տարով հետաձգվեց Մենք շահեցի՞նք այդ 7 տարում, թե կորցրինք·**

– Այսօր ես տեղյակ չեմ բանակցային գործընթացին չգիտեմ թե այս պահին ինչ հարցեր են քննարկվում այդ պատճառով այժմ չեմ կարող ասել, թե ինչի ենք մենք հասել: Ինչ վերաբերում է 98-ի իշխանափոխությանը, ապա կար սկզբունքային հարց՝ Ղարաբաղի և նրան հարող տարածքների կարգա վիճակը այստեղ ես մնացել եմ նույն կարծիքին Ղարաբաղը և որոշակի տա րածքներ չեն կարող Ադրբեջանի մաս կազմել

**– Իսկ ո՞ր տարածքները կարող են մտնել Ադրբեջանի կազմի մեջ.**

Երբ մի հարցի շուրջ դեռևս պետք է բանակցել նախապես հայտարարել, թե ինչ ենք վերցնելու և ինչ տալու, ճիշտ չէ Պետք է լինի այնպիսի վիճակ որը կապահովի Ղարաբաղի բնակչության անվտանգությունը որևէ ռազմավարա կան կետ չպիտի հանձնվի Թե ինչ կարգավիճակ է ունենալու այդ պետական կազմավորումը հետագա բանակցությունների հարց է

**– Դուք այսօր տեսնո՞ւմ եք Ղարաբաղի հարցի կարգավորման հնարա վորություն·**

Ներկա փուլում չեմ տեսնում Հայաստանում և Ադրբեջանում հիմա այնպիսի քաղաքական և տնտեսական վիճակ է որ այդ երկու երկրների ղեկավարները չեն կարող փոխզիջումների գնալ

**– Իսկ ընդհանրապես պե՞տք է լուծվի այս հարցը թե մենք կարող ենք ևս 50 կամ 100 տարի պահպանել այս կարգավիճակը·**

Ես գտնում եմ, որ պետք է լուծվի և որքան շուտ այնքան լավ մեզ համար և ընդհանրապես Հարավային Կովկասի համար Որպեսզի այս տա

www.a-pdf.com



ռածաշրջանը կնտեսապես զարգանա, ռազմական լարվածությունը պետք է թուլանա Ղարաբաղի խնդիրը պետք է լուծվի Եթե այս երեք պետությունները ծրագիր ունեն հետագայում ինտեգրվելու Եվրամիությանը, ապա նրանք նախ բոլոր նման խնդիրները պետք է լուծեն այնուհետև տնտեսապես և քաղաքականապես ինտեգրվեն միմյանց նոր միայն հնարավոր կլինի խոսել Եվրամիության մասին: Մտքում նման հեռանկար ունենալով պետք է կարգավորել Ղարաբաղի հարցը Բայց կարգավորել ոչ ի վնաս որևէ կողմի Մեզ համար կարևոր են նախ և առաջ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի անկախությունն ու անվտանգությունը. Իսկ փախստականների և բռնի տեղահանվածների խնդիրը հարկավոր է լուծել փոխադարձ հիմքերի վրա՝ թե ադրբեջանցիները պետք է վերադառնան Ղարաբաղում և այլ շրջաններում իրենց տները թե՛ հայ փախստականները պետք է վերադառնան այն վայրերը, որտեղ ապրել են Խորհրդային Ադրբեջանի տարիներին Դա էլ պետք է տեղի ունենա կարգավորման ինչ-որ փուլում. առանց փախստականների և տեղահանվածների վերադարձի մշտապես պրոբլեմ ենք ունենալու

**– Ադրբեջանում ժամանակ առ ժամանակ սրվում են ռազմատենչ տրամադրությունները, և հիմա հենց այդ ժամանակն է, երբ գրեթե ամեն օր սպառնալիքներ են հնչում՝ խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու Այդ խոսակցությունները լո՞ւրջ եք համարում, թե՞ ինչպես ասում են, հաչան շունը չի կծում:**

Կարծում եմ Ադրբեջանը պատրաստվում է քայլեր ձեռնարկելու ռազմական ուղղությամբ անընդհատ փորձում է բարելավել իր մարտական դիրքերը իրետանի և այլ տեխնիկա է կուտակում. Այսինքն՝ ինչ-որ պատրաստություն տեսնում է որ եթե բանակցությունները չտագվեն հարցերը այլ ճանապարհով լուծի Աշխարհում էլ այնպիսի ֆոն է ստեղծում թե զիջումն անհնարին է թե հայերի պահանջները իրատեսական չեն և համուն տարածքային ամբողջականության իրենք իրավունք ունեն հարձակվելու և այլն: Այլ հարց է իրականում պատրա՞ստ է Ադրբեջանը պատերազմին թե՞ ոչ: Գուցե նրանց միայն թվում է թե պատրաստ են Հայաստանի և Ղարաբաղի խնդիրն էլ այն է, որ ունենանք այնպիսի բանակ և տնտեսություն, որ հակառակորդը երբևէ պատրաստակամ չունենա նման քայլերի դիմելու Որովհետև եթե պատերազմ սկսվի, նոր զոհեր ավերածություններ, հաշմանդամներ կլինեն այնքան էլ կարևոր չէ թե ով է հաղթելու Պետք է այնքան ուժեղ լինել որ պատերազմը չվերսկսվի

www.a-pdf.com



## ՑԱՎՈՒՄ ԵՄ, ՈՐ ՄԵՐ ՄԵՋ ԿԱ ՄԻ ՄՈԼՈՒՑՔ ՏԵՄՆԵԼ ՆԵՐՔԻՆ ԹՇՆԱՄՈՒՆ»

Ազգ» օրաթերթի կայք 11 նոյեմբերի 2005թ

Մարիետա Խաչատրյան ‹Ազգ› օրաթերթ

**– Պարոն Բաքայան, Ձեր հիմնադրած «Դաշինք» կուսակցության համա գումարի հանդեպ հետաքրքրությունը մեծ էր այնուամենայնիվ որոշ հարցեր մնացին չպարզաբանված. Հայաստանի քաղաքական դաշտի ո՞ր հատվածն եք զբաղեցնելու Դուք, ի՞նչ եք անելու, որ ուրիշները չեն անում·**

Իմ համախոհների հետ հիմնադրել եմ «Դաշինքը» և մենք հույս ունենք ստեղծելու այնպիսի կուսակցություն որը հիմնված չի լինի մեկ անձի հեղինա կության վրա նաև այս պատճառով ես հավակնություն չունեմ զբաղեցնելու քաղաքական դաշտի որևէ հատված Իսկ ինչ չափով քաղաքական դաշտում իր տեղը և դերը կգտնի «Դաշինքը», կախված է մեր աշխատանքի արդյունավետու թյունից որն էլ պարզ կդառնա 2007 թ ԱԺ ընտրությունների արդյունքից Չգիտեմ ուրիշները ինչ են անում կամ չեն անում մենք գործում ենք

**– Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման վերաբերյալ Ձեր մոտեցումները տարբերվո՞ւմ են իշխանության պաշտոնական դիրքորոշումից·**

«Դաշինքը» ավելի քան մեկ ամիս առաջ մամուլով հասարակության դա տին է ներկայացրել իր ծրագրային ընդհանուր դրույթները, որտեղ և արտա ցոլվել են մեր մոտեցումները նաև այս խնդրի վերաբերյալ: Համագումարում նույնպես խոսվել է այդ մասին: Հակամարտության կարգավորումը մենք տես նում ենք չորս հիմնական սկզբունքների շրջանակում դրանք են

1 միջազգային հեղինակավոր կազմակերպության հովանու ներքո միջան կյալ ինքնիշխանություն

2 փախստականների և ներքին տեղահանված անձանց կամավոր վե րաբնակում

3 Արցախում տնտեսության զարգացման նախադրյալների ստեղծում

4 Արցախի կարգավիճակի որոշում նոր հանրաքվեի միջոցով:

Եթե այս ամենին գումարենք նաև գոնե անցյալ մեկ տարում իմ տված տարբեր հարցազրույցները, ապա վստահ եմ որ հարգարժան լրագրողը կարող է համադրել այդ ամենը իշխանության պաշտոնական դիրքորոշմանը և ստանալ իրեն հուզող հարցի պատասխանը

**– Դուք հայտարարել եք, որ մասնակցելու եք բոլոր ընտրություններին հատկապես ո՞ր կուսակցությունների հետ դաշինքով եք հավանական համարում Ձեր մասնակցությունը ապագա խորհրդարանական ընտրու թյուններին**

«Դաշինքի» հիմնադիր համագումարում մենք տվել ենք այդ հարցի պա տասխանը: Կրկնում եմ «Դաշինքը» խորհրդարանական ընտրությունների չի գնալու որևէ կուսակցության հետ դաշինք կնքած մենք դաշինք ենք կնքել մեր ժողովրդի հետ և ընտրության ենք գնալու՝ ակնկալելով նրա վստահությունը

**– «Դաշինք» կուսակցության հիմնադիր համագումարին չէր մաս- նակցում արմատական ընդդիմության մեծ մասը Վերլուծե՞լ եք թե**

www.a-pdf.com



**հապկապես ինչն էր դրա պատճառը և արդյո ք Դաշինքը կարելի է իշխանամետ ուժ համարել:**

Դուք ճիշտ եք նկատել, համագումարին ներկա չէին ընդդիմության որոշ գործի ներ: Որքանով են նրանք արմատական ընդդիմություն դա դեռ հարց է Սակայն ես ուզում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել նաև այն հանգամանքի վրա, որ ներկա չէր նաև կոալիցիայի մեծամասնությունը կազմող Հանրապետ պական կուսակցությունը Խորհուրդ եմ տալիս վերհիշել, թե ներկայիս այդ ուժերն ինչպե՞ս են նախկինում համագործակցել· Պատահական չէր, որ Դաշինքի» քաղաքական խորհրդի կողմից ընդունվեց հայտարարություն որտեղ, մասնավորապես ասվում էր որ մենք արհեստածին ենք համարում ներկայիս իշխանամետ կամ ընդդիմադիր կեղծ ու լղոզված տարանջատումը Վերլուծությունները թողնում եմ Ձեզ·

Աշոտ ԱՄՆ

**– Պարոն Բաբայան, կարդալով Ձեր կենսագրությունը իրոք կարելի է ասել, որ Դուք կերտել եք Ձեր պատմությունը: Եվ նման պատմություն կեր- տած անձնավորության համար 4,5 տարի անհիմն բանտում նստելը, այն էլ այն ժամանակ, երբ Դուք շրջապատված եք եղել Ձեր համախոհներով ու մարտական ընկերներով, Ձեզ չի՞ թելադրում գտնել այդ սխալի արմատնե րը և պատճառները. Եթե գտել եք հետաքրքրական կլիներ իմանալ**

**Շնորհակալություն**

Հարգելի Աշոտ, պատերազմի տարիներին ես համագործակցել եմ գրեթե բոլոր քաղաքական ուժերի հետ: Համագործակցությունն ունեցել է մեկ գլխա վոր նպատակ պաշտպանել մեր հայրենիքը և հաղթանակի հասնել թվապես սպառազինությամբ մեզ գերազանցող թշնամու նկատմամբ Այս մոտեցման շնորհիվ էլ մեր ժողովրդին հաջողվեց հաղթել պատերազմում: Զինադադարից հետո կարճ ժամանակ անց ինձ համար հասկանալի էր որ Արցախում հարկա վոր է կատարել բարեփոխումներ տնտեսության ազատականացման իշխա նության ապակենտրոնացման և բազմաթիվ այլ ոլորտներում Այդ բարեփո խումները հարկավոր էին թեկուզև Արցախի սահմանների անվտանգությունը էլ ավելի բարձր մակարդակի հասցնելու նպատակով· Այդ պարզ ճշմարտու թյունը, սակայն, ապրիճանաբար հանդիպեց իշխանության մեջ գտնվող տար բեր խմբավորումների, մենաշնորհ ունեցող տարբեր գործարարների հակազ դեցությանը: Մի խոսքով իմ սխալներից մեկը եղել է այն որ ես անգամ զինա դադարից հետո շարունակել եմ աշխատել իմ գաղափարները և հայացքները չընդունող անձանց հետ բայց անգամ այդ հանգամանքը չէր կարող լինել վճռական Կարծում եմ՝ իրականում կարևոր է, թե ինչպիսի երկրում ես ապ րում պետականության ավանդույթներ ունեցող ուժե՞ղ թե՞ անցումային շրջա նում գտնվող պետության քաղաքացի ես Ցավոք մեր հայրենիքում ազատա կան արժեքները դեռևս խոր արմատներ չեն ձգել Այդ արժեքներից շատ եմ կարևորում անկախ դատական համակարգի առկայությունը: Հենց դրա բա ցակայությամբ էր պայմանավորված իմ ազատազրկումը: «Դաշինքի» ծրա գրում մենք խոսել ենք այդ մասին Անկախ դատական համակարգի վերջնա

www.a-pdf.com


կան կայացումը լինելու է մեր ամենօրյա պայքարի կիզակետում Մենք այս հարցում որևէ զիջման չենք գնալու համագործակցելու ենք այսօրվա բոլոր առողջ ուժերի հետ ինչպես դա արել ենք պատերազմի տարիներին

Աղաջանյան Յուրա Ռուսաստան Սամարա

**– Ես ապրում եմ Ռուսաստանում, այստեղ հայերի և ադրբեջանցիների հարաբերությունները շատ լավ են. շատերն ընկերություն են անում. Արդյոք կգա մի պահ, որ Հայաստանը և Ադրբեջանը կընկերանան.**

Ինչպես Ադրբեջանը այնպես էլ Թուրքիան մեր հարևաններն են. Չնայած առկա բազմաթիվ խնդիրներին համոզված եմ, որ ապագան կախված է տարածաշրջանային փոխշահավետ համագործակցությունից Բացի Իրանից Հայաստանի մյուս բոլոր հարևաններն իրենց արտաքին քաղաքականության օրակարգի գլխավոր հարց են դիտարկում եվրաինտեգրումը· Ես հավատում եմ որ դա իր հերթին կխթանի տարածաշրջանային ինտեգրման գործընթացները Ես լավատես եմ և գտնում եմ որ այդ ուղիով զարգանալու դեպքում իրոք կգա մի պահ երբ ոչ միայն Ադրբեջանի հետ այլև մեր մյուս բոլոր հարևաննե րի հետ մենք կունենանք լավագույն հարաբերություններ

**– Ո՞նց եք գտնում, ինչպիսի՞ն պիտի լինի իսկական դեմոկրատիան և ո ր պետության դեմոկրատիան կցանկանայիք Հայաստանինը լիներ (միայն չասեք ամերիկյան):**

Մենք կրողն ենք ազատական ժողովրդավարական գաղափարախոսու թյան որի հիմնական արժեքները կարծում եմ բոլորին են հայտնի Ինչպես գիտեք այդ արժեքները զանազան երկրներում զարգանում և արմատավոր վում են տարբեր ճանապարհներով ելնելով տվյալ երկրներում առկա ավան դույթներից հասարակական մտակերտվածքից և այլ գործոններից Հետևա բար որքան էլ որ մենք համակրենք այս կամ այն երկրի փորձը և պետական կառուցվածքը չենք կարող այն պատճենել Հայաստանում Մենք ունենք ազգային առանձնահատկություններ, ազգային ավանդույթներ որոնց հիման վրա վստահ եմ կստեղծվի ազատական արժեքների յուրահատուկ մոդել մեր հայրենիքում և մենք կունենանք իրապես ժողովրդավարական իրավական ու սոցիալական բարգավաճ ու ազգային հզոր պետություն

XXX YYYյան Երևան

**– Կոռուպցիայի դեմ պայքարելու՞ եք Միայն գեներալին հատուկ խոստում տվեք. Ձեզ հաջողություն:**

Իհարկե: Սակայն կան տարբեր կարծիքներ պայքարի մեխանիզմների մասին Ոմանք գտնում են, թե պետք է ցուցադրաբար մի երկուսին գնդակա հարել որպեսզի մյուսները խրատվեն Ուրիշները գտնում են որ կոռուպցիա յի դեմ պայքարելու համար հարկավոր է ռազմավարական ծրագրեր ընդունել կամ նոր պետական վարկեր ստանալ Ես կարծում եմ որ այդ չարիքի դեմ պետք է պայքարել համակարգային փոփոխություններ կատարելով երկրի կառավարման համակարգում Քանի դեռ դատախազությունը անկախ չէ իր գործունեության մեջ քանի դեռ դատարաններում դատավորների կողմից թույլ

www.a-pdf.com

են տրվում կամայականություններ մեր քաղաքացիների նկատմամբ և գլխավորը՝ քանի դեռ երկրում իշխանությունը կենտրոնացված է իսկ տեղական ինքնակառավարման մարմինները չունեն ինքնուրույնություն կոռուպցիայի դեմ ամեն պայքար արդյունավետ չէ:

Գառնիկ Թադևոսյան Սևան

**– Առողջապահության ոլորտում ի նչ փոփոխություններ եք նախապեսում. Դո՞ւք էլ եք հանրապետության ներկա նախագահի նման բուժաշխատողներին ճմռելու քաղաքականություն վարելու. Ինչպե՞ս եք, օրինակ նայում, որ վիրաբույժը 25000 դրամ աշխատավարձով, ասենք, սրտի վիրահատություն կատարի**

Գտնում եմ, որ առողջապահության ոլորտը պետք է գտնվի պետական ամենօրյա հոգածության ներքո քանի որ դա, իմ համոզմամբ ուղղակիորեն առնչվում է մեր ազգային անվտանգությանը: Պետությունը պետք է ամբողջությամբ ստանձնի սանիտարահակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների մոր և մանկան առողջության պահպանության ֆինանսավորումը Պետության կողմից առանձնացված անվճար բուժսպասարկման իրավունք ունեցող խավերին պետական միջոցները պետք է հատկացվեն ուղղակիորեն հնարավորություն տալով որ քաղաքացին ինքը որոշի թե որ բուժհիմնարկում ստանա օգնություն: Դա թույլ կտա չփոշիացնել պետական միջոցները և օրենքով նախատեսված անվճար բուժսպասարկումը լիարժեք իրականացնել Արդյունքում նաև բուժհիմնարկներում չեն ոտնահարվի մեր քաղաքացիների իրավունքները և արժանապատվությունը: Ինձ համար խիստ անընդունելի է նաև մեր պետական այրերի կողմից անվերջ կրկնվող այն հիմնական գովազդը ըստ որի Հայաստանում կա որակյալ և էժան աշխատուժ Ես գտնում եմ որ Հայաստանում նվազագույն աշխատավարձը թոշակները նպաստները պետք է սահմանվեն առնվազն 28 ից 30 հազար դրամ: Հենց այդ ժամանակ Ձեր գործատուն այլևս չի կարող ստիպել, որ 25000 դրամով վիրահատություն կատարեք Այլապես նման մոտեցման դեպքում Դուք պարզապես կնախընտրեք չաշխատել քանի որ կստանաք նույն գումարը իսկ գործատուն իր հերթին, շահագրգռված կլինի բարձր աշխատավարձով իր հիմնարկում աշխատանքի հրավիրելու լավագույն մասնագետներին·

Դավիթ Սողոմոնյան Հայաստան Երևան

**– Պարոն Բաբայան, ի՞նչ եք կարծում, օրերից մի օր կունենա՞նք ամբողջական Հայաստան (այժմյան Հայաստանն ու Արցախը միասին) և ինչպե՞ս եք նայում այդ խնդրի իրականացմանը**

**Շնորհակալություն**

Իսկ ինչո՞ւ եք Դուք փարանջապատում մտցնում. Յուրաքանչյուր հայ Հայաստանն ու Արցախը դիտարկում է ամբողջության մեջ: Ինչ վերաբերում է խնդրի միջազգային կարգավորմանը ապա մենք ներկայացրել ենք «Դաշինքի» մոտեցումներն այն սկզբունքների շրջանակներում որոնց մասին ես արդեն խոսել եմ

www.a-pdf.com



Յուրիկ Դանիա

**– Հարգելի գեներալ· 1) Դուք Քոչարյանի, Սերժ Սարգսյանի ու վարչապետի (նկատի ունի լուսահոգի Անդրանիկ Մարգարյանին - ծանոթ կազմողի) նման համարում ե՞ք, որ հոկտեմբերի 27-ը լիովին բացահայտված է· Եթե ոչ, ի՞նչ եք անում, որ գործն ամբողջությամբ բացահայտվի: 2) Ձեր և գեներալ Մանվել Գրիգորյանի միջև կա՞ն պրոբլեմներ 3) Ձեզ նման փայլուն անցյալ ունեցող հայրենասերին սազական չէ հայ րենիքի դաշնակցական դավաճանների ու հոկտեմբերի 27-ի» հովանավո րողների հետ շփվելը**

Ձեր հարցադրումը բաղկացած է երեք մասից Փորձեմ հերթով պատաս խանել դրանց Ես չեմ ցանկանում դատավորի դեր ստանձնել և գնահատա կաններ տալ բացահայտվա՞ծ է թե՞ ոչ Ես քննիչ չեմ և որևէ իրավասություն չունեմ նոր հետաքննություն սկսելու Որպես քաղաքական գործիչ՝ հետա մուտ եմ լինելու անկախ դատական իշխանության կայացմանը ինչի մասին արդեն նշել եմ·

Տարբեր առիթներով մամուլով լուրեր են տարածվում որ ես խնդիրներ ու նեմ այս կամ այն անձնավորության հետ Նշեմ որ որևէ խնդիր որևէ մեկի հետ չունեմ այդ թվում Մանվել Գրիգորյանի· Ես զբաղված եմ իմ ամենօրյա աշխատանքով: Իսկ եթե ուրիշներն ինձ հետ խնդիրներ ունեն դա իրենց անձնական գործն է

Եկեք խուսափենք որակումներից և գնահատականներից Թե ովքեր են դավաճանները թող որոշի պատմությունը

Դավո ԱՄՆ

**– Կարծում եք այս ձևով ղարաբաղյան հարցի լուծումը արդարացի կլի նի՞ . Ո՛չ ադրբեջանցիները և ո՛չ էլ հայերը չեն շոշափում քուրդ ժողովրդի շահերը գրավված տարածքներում... Միգուցե Դուք ու՞ժ կգտնեք գոնե շո-շափելու այդ հարցը... Պատմությունը չի սիրում անարդարացի լուծումներ**

Սկզբունքորեն ես չեմ խուսափում որևէ հարցի պատասխանելուց բայց Ձեր հարցն ինձ համար անհասկանալի է խնդրում եմ հաջորդ անգամ բացել փակագծերը և նշել թե ինչ նկատի ունեք

Մարտիրոս Հայկ Սիսլյան Սիրիա ք Հալեպ

**Հարգելի գեներալ,**

**1 Ի՞նչ է Ձեր առնչությունը հոկտեմբերի 27-ի դավադրության հետ (հու սով եմ՝ հարցիս պատասխանելու դեպքում ինձ չեք դասի ապուշների շար քում)**

**2 Արդյո՞ք Դուք ևս, ինչպես Ձեր հայրենակից Ռոբերտ Քոչարյանը Դաշնակցության գաղտնի անդամ եք**

**Շնորհակալություն:**

www.a-pdf.com



Ես ապուշներ եմ անվանել ոչ թե այն մարդկանց ովքեր հարց են ուղղում հոկտեմբերի 27 ի վերաբերյալ, այլ նրանց, ովքեր մտածում են որ ես առնչու թյուն ունեմ այդ ոճրագործության հետ Ես բազմիցս նշել եմ և հիմա էլ եմ շեշտում, որ հոկտեմբերի 27 ն ուղղված էր հայոց պետականության դեմ որի կերտման գործում ես և Վազգեն Սարգսյանը համատեղ բարդ ու դժվարին ճանապարհ ենք անցել

Ես իմ բոլոր քաղաքական քայլերը իրականացնում եմ հրապարակավ Ինչ վերաբերում է կուսակցական լինելուն ապա ես համախոհներիս հետ միասին հիմնել եմ ‹Դաշինք› կուսակցությունը և բնականաբար հանդիսանում եմ այդ կուսակցության անդամ

Յուրի Մանուկյան, Իսրայել, Թել Ավիվ

**– Պարոն Բաբայան, Արցախը կատարել է իր ընտրությունը գուցե նրան հանգիստ թողնենք Իսկ մնացածի շուրջ բանակցություններ վարվեն Ինչ պե՞ս է Ձեր կուսակցությունը պատրաստվում գործելու այդ ուղղությամբ Ցանկանում եմ Ձեզ ամուր արցախյան առողջություն և բոլոր հայերի երա զանքի իրականացում**

Շնորհակալ եմ բարեմաղթանքների համար Արդեն նշել եմ թե հարցի կարգավորումը ինչպես ենք մենք պատկերացնում, և այդ սկզբունքների շրջա նակում վերջին մեկ տարվա ընթացքում ես կատարել եմ ինձանից կախված ամեն ինչ հանուն մեր երազանքի իրականացման: «Դաշինքը նույնպես շատ ունակելու է աշխատել այդ ուղղությամբ

Արմինե Մարտիրոսյան Երևան

**– Շենգավիթի շրջանում ապրող հիմնականում բանվորական դասին պատկանող բնակիչներս միշտ չէ, որ հնարավորություն ենք ունենում Երևանի կենտրոնի էլիտար շենքերում բազմած կուսակցական շտաբներ այցելելու: Այնինչ լավ կլիներ տեղերում աշխատել, որպեսզի ժողովրդի իրական կարիքները հասկանաք Արդեն քանի շաբաթ է՝ Երևանի Շենգա վիթի համայնքում, Ծերեթելու փողոցում, Ձեր կուսակցության գործող շտաբը փակվել է ու չի գործում (ասում են ֆինանսական խնդիրների պատ ճառով գրասենյակներ պետք է լինեն միայն կենտրոնական վայրերում) Չէինք ուզենա, որ մյուս կուսակցությունների նման Ձեր կուսակցությունը դեռ չծնված, դառնար քաղքենի ու ծայրամասերիս բնակիչներին հիշեր միայն ընտրությունից ընտրություն Այնինչ մենք Ձեր՝ Շենգավիթի համայնքի այդ շտաբի հետ մեծ հույսեր էինք կապում մեր զանազան խնդիրների արդարացի լուծման առումով**

Նախ տեղեկացնեմ որ մինչ հիմնադիր համագումար անցկացնելը մենք ամիսներ շարունակ մեծ աշխատանք ենք կատարել և կարողացել ենք ձևավորել վեց տասնյակից ավել տարածքային կազմակերպություններ ամ բողջ Հայաստանի տարածքում: Այդ տարածքային կազմակերպություն ներն աշխատում են ամեն օր և մշտական կապ են պահպանում կուսակցո թյան կենտրոնական գրասենյակի հետ Եվ քանի որ կուսակցո թյունը

www.a-pdf.com



ամեն դեպքում նոր է ձևավորվում ուսփի առաջանում են նաև տեխնիկա կան որոշ դժվարություններ որոնք մենք փորձում ենք արագ լուծել՝ Շեն գավիթի շրջանի Ծերեթելու փողոցի գրասենյակը ոչ թե դադարեցրել է իր գործունեությունը այլ տեղափոխվել է Բագրատունյաց 15

Արմեն Իսրայելյան Երևան

**– Հարգելի գեներալ**

**Մի քանի անգամ եղել եմ Ձեր կուսակցության Ծերեթելու փողոցի վրա գտնվող շտաբում, անպայման ցանկանում էի անդամագրվել: Սակայն հասկացա, որ այստեղ էլ է գործում պաշտոն փախցնելու կարգը: Ինչպե՞ս կարելի է Ձեզ հետ հանդիպել՝ Ի միջի այլոց այդ գրասենյակը չբացված փակվել է, չի էլ գրված որտեղ դիմել.**

Շնորհակալ եմ Շենգավիթի բնակիչների ակտիվության համար Ես ար դեն կարգադրել եմ որ նոր գրասենյակի հասցեի մասին հայտարարություն փակցնեն: Ինչ վերաբերում է պաշտոն փախցնելուն վստահեցնում եմ որ մենք շարժվում ենք մեր կանոնադրությամբ որը նախատեսում է բոլոր տարածքա յին կազմակերպություններում ընտրությունների անցկացում Այո, դեռ ամեն տեղ կուսակցական աշխատանքն իր հունի մեջ չի մտել, որը սակայն, ժամա նակավոր է Խորհուրդ կտայի կուսակցության բոլոր անդամներին ակտիվո րեն ներգրավվելու տարածքային կառույցներում և մասնակցելու ինչպես ընտրություններին այնպես էլ հետագա քարոզչական աշխատանքներին

Արմեն Խաչատրյան ՀՀ

**1 Պարոն Բաբայան, կարծում եք ապուշներ անվանելով պատասխա նու՞մ եք ու փարատու՞մ եք կասկածները՝**

**2. Համարու՞մ եք Քոչարյանին լեգիտիմ առաջադրված թեկնածու, եթե ոչ կհա մարե՞ք Ձեզ լեգիտիմ թեկնածու հաջորդ նախագահական ընտրությունում**

**3. 2-րդ հարցի համատեքստից Արցախի անկախությանը ի՞նչ վնաս կարող է տալ արցախցիների կողմից ընտրված՝ Արցախի նախագահի առաջադրումը այլ երկրի, Հայաստանի, Ռուսաստանի, Ամերիկայի կամ Նիգերիայի նախագահի պաշտոնում**

Ես արդեն պատասխանել եմ թե ում եմ անվանում ապուշ

Մինչ այժմ պետական վեճ է ընթանում լեգիտիմության և լեգալության շուրջ Ես այդ հարցի մասին արդեն բազմիցս խոսել եմ եթե իմ պատասխան ները Ձեզ չեն գոհացրել, կարող եք դիմել համապատասխան դատական ատյաններին Ինչ վերաբերում է իմ նախագահության թեկնածությանը ապա ես բազմիցս նշել եմ որ չեմ պատրաստվում նախագահ դառնալու Ձեր երրորդ հարցը փիլիսոփայության ոլորտից է Մեր որդիներից ոչ ոք կամավոր ծառայություն չի կատարում ոչ Ռուսաստանում ոչ Ամերիկայում ոչ էլ Նիգերիայում Նրանք բոլորն էլ մեր հայրենիքում են ծառայում և երբ վերա դառնում են մենք նրանց ասու՞մ ենք թե Դուք քաղաքացի չեք և չեք կարող մասնակցել ընտրություններին

www.a-pdf.com



Միխայիլ, 24 տարեկան, Ստեփանակերտ

**– Ամենից առաջ թույլ տվեք մաղթել Ձեզ հաջողություն Ձեր գործերում Պարոն Բաբայան, ինչպե՞ս եք տեսնում Ձեր հետագա քաղաքական գործու նեությունը Ղարաբաղում, եթե, իհարկե, Դուք վերադառնաք այստեղ**

Շնորհակալ եմ բարեմաղթանքների համար: Իսկ ո՞վ ասաց թե ես հեռա ցել եմ Արցախից Ես ըստ անհրաժեշտության լինում եմ Ստեփանակերտում Եվ կամ ո՞վ ասաց, թե Հայաստանում գործում է մի քաղաքական դաշտ իսկ Արցախում այլ Մերը մեկ պետություն է ըստ էության միևնույն օրենսդրու թյամբ Պարզապես ժամանակին պատերազմ էր ընթանում, և ես այնտեղ էի իմ ժողովրդի հետ էի, այսօր նույն պատերազմը շարունակվում է տնտեսա թյան, դիվանագիտության ոլորտներում, և ես կրկին իմ ժողովրդի հետ եմ և փորձելու եմ օգտակար լինել· Անհրաժեշտության դեպքում ես կրկին կլինեմ այնտեղ

Անահիտ, Հայաստան

**– Ինչպիսի՞ դրություն է Հայաստանում.**

Հայաստանում տիրող իրավիճակը ինձ չի գոհացնում ես խնդիրներ եմ տեսնում բոլոր այն ոլորտներում, որոնք հանդիսանում են ազատական արժեք ների կարևոր բաղադրիչներից· Ես խնդիրներ եմ տեսնում իշխանական թևերի տարանջատման տեղական մարմինների ինքնակառավարման սկզբունքի հիման վրա իշխանության ապակենտրոնացման օրենքի գերակայության իշխանությունների նկատմամբ հասարակական վերահսկողության խոսքի ազատության սեփականության անձեռնմխելիության տնտեսության ազատականացման քաղաքացիների իրավահավասարության կիրառման և այլ ոլորտներում

Հովհաննիսյան Վահագն Երևան Հայաստան

**– Ձեր կարծիքով այսօրվա մեր զինված ուժերի, մեր հայոց բանակի վիճակը գոհացուցի՞չ է. Ե՞րբ կբարելավվի, ըստ Ձեզ մեր բանակի վիճակը: Մի՞թե անիմաստ չի կորում այդ երկու տարին առողջության վատթարացումով ու առանց որևէ հետաքրքրության, ուղղակի, այսպես ասած, օրացույց ջնջելով մահացնում ենք կյանքի երկու տարիներ· Ամեն դեպքում, ես ինքս, լինելով հայ տղա, համարում եմ, որ բոլորն էլ պետք է անցնեն այդ երկու տարիները, և հիմա պատերազմը շարունակվում է... Անկեղծ ասած ես կուզեի անդամագրվել Ձեր կուսակցությանը, ուղղակի չգիտեմ՝ դրա հա մար ինչ է պետք**

Չեմ կարծում թե զանգվածային լրատվամիջոցներում նպատակահար մար է քննարկել զինված ուժերում տիրող իրավիճակը առկա խնդիրները: Ինչ վերաբերում է ծառայության ժամկետին պետք է նշեմ որ անհրաժեշտ է բանակն աստիճանաբար համալրել կարգավարժ (պրոֆեսիոնալ) սպորաբա ժանումներով և համապատասխանաբար կրճատել ժամկետային պարտադիր

www.a-pdf.com



զինվորական ծառայության պնողությունը պայմաններ ընձեռելով զորակո չիկներին փիրապեփելու ռազմական փեխնիկային և արդի ռազմարվեսփին Ինչ վերաբերում է մեր կուսակցությանն անդամագրվելուն նշեմ որ մենք Հայաստանի գրեթե բոլոր համայնքներում ունենք կառույցներ և Դուք կարող եք դիմել Ձեր համայնքի փարածքում գփնվող համապափասխան կառույցին և կսփանաք Ձեր բոլոր հարցերի պափասխանները

Անահիփ ԱՄՆ Մայամի

**– Ինչու՞ Ղարաբաղից եկածները իրենց համարում են միակ փղամարդը Հայասփանում**

Հայասփանում կա ինձ համար անընդունելի մի մփածելակերպ Ըսփ որի եթե որևէ մեկը գործունեություն է ծավալում քաղաքական կամ փնփեսական ոլորփներում ապա անմիջապես նրան հարցնում են, թե ‹արդյո՞ք ունեք իշխանությունների թույլփվությունը կամ ի՞նչ պայմաններ են թելադրել Ձեզ թույլփվություն սփանալու դիմաց»: Նման հարցերին ես միշփ պափասխանել եմ, որ գոնե իմ դեպքում չկա որևէ մեկը ով կարողանա ինձ որևէ պայման թելադրել այսինքն ես պնդում եմ որ այս երկրում բոլորը հավասար են և կոչ եմ անում բոլորին ամեն հարց քննարկել իբրև հավասարը հավասարի հեփ

Շավասպ Աղամյան Կանադա Տորոնփո

**– Պարոն գեներալ, Դուք էլ ե՞ք ուզում աթոռ. Իսկ ո՞վ է կռվելու Շուփով սկսվելու է ազերների առաջ գալը, թե՞ մփածում եք, որ նորից Հայասփանի փղաները կկռվեն որ Արցախի փղամարդիկ Երևանում ղեկավարեն: Չե ք կարծում, որ Արցախը պեփք է ապրի առանձին իր ժողովրդով, Քոչարյանը շափ բան սովորեց, փարեք Ձեզ հեփ: Մենք կօգնենք Արցախի ազափ հանրապեփությանը:**

**Հարգանքներս Ձեզ, պարոն գեներալ**

Ես իմ ողջ գիփակցական կյանքը նվիրել եմ մեր հայրենիքի պաշփպանու թյանը մեր երեխաների անվփանգության ապահովմանը Իմ պափկերացրած հայրենիքի սահմանները այլ են Ես հավափում եմ իմ ժողովրդին իմ զինվոր ներին և երբեք պափերազմի փարիներին հարց չեմ փվել թե զինվորներս Սփեփանակերփի՞ց են Երևանի՞ց թե՞ Տորոնփոյից: Մենք եղել ենք միասին և պաշփպանել ենք մեկ հայրենիք, մեկ պեփություն մեկ ժողովրդի Պափերազ մի վերսկսման դեպքում ես կրկին լինելու եմ իմ զինվորների հեփ և կրկին հարց չեմ փալու իրենց փոքր հայրենիքների մասին: Մենք խոսելու ենք կրկին մեր մեկ հայրենիքի Հայասփանի անվփանգության մասին Ցավում եմ որ մեր մեջ կա մի մոլուցք գփնել ներքին թշնամու· Երբ 20-րդ դարի կեսերին հայրենադարձություն էր փեղի ունենում այդ թշնամին սփյուռքահայերն էին հիմա ղարաբաղցիներն են ոմանց համար էլ՝ ջավախքցիները կամ ապարան ցիները: Եթե Ձեզ դուր է գալիս մեկ փոքր ժողովրդի մեջ այսչափ թշնամանք դա Ձեր գործն է եթե չասեմ մեծ սխալը

www.a-pdf.com



Ջավեն Երևան

**– Հարգելի պարոն Բաբայան, ինչպիսի՞ն է Ձեր վերաբերմունքը 2004 թ ապրիլի 12–13-ի դեպքերին· Ի՞նչ եք կարծում, ո՞րն է այն կարևոր բանը, որ պետք է արվի, որպեսզի երկրում իշխանությունը ձևավորվի այնպես, ինչպես գրված է օրենքում՝ ժողովրդի կողմից արդարացի ձևով· Չե՞ք գտնում, որ 2006 թ բյուջեի եկամուտը իշխանությունը բաշխել է անամոթա բար խորացնելով երկրում փիրող սոցիալական անարդարությունը·**

Ապրիլի 12 13-ի դեպքերի մասին ոչինչ ասել չեմ կարող քանի որ ես այդ ժամանակ չեմ գտնվել ազատության մեջ: Սակայն գտնում եմ որ այն քա ղաքական ուժը, որը կազմակերպում է հանրահավաքներ, երթեր պետք է ամ բողջությամբ պատասխանատվություն զգա իր հետևից եկող բոլոր քաղաքա ցիների անվտանգության համար· Այդ կուսակցություններն այնքան կազմա կերպված պետք է լինեն, որ հենց իրենց գործելակերպով թույլ չտան որևէ ուժի կիրառում իրենց համակիրների նկատմամբ

Ես արդեն պատասխանել եմ, թե որ ոլորտներում է անհրաժեշտ կատարել բարեփոխումներ Հիմնադիր համագումարում մենք խոսել ենք նաև բյուջետա յին համակարգի մասին: Մեր կարծիքով բյուջետային քաղաքականությունը ամբողջությամբ պետք է դրվի ծրագրային հիմքերի վրա: Պետական ծախսե րի իրականացումը անհրաժեշտ է համապատասխանեցնել հիմնավորված նորմատիվներին, որոնք պետք է քննարկել և ընդունել Այլապես պետական ծախսերը անվերահսկելիորեն կավելանան իսկ ժողովրդի սոցիալական վիճակը այդպես էլ չի լավանա

Վիկտոր Ստեփանյան

**– Պարոն Բաբայան, երբ Դուք իշխանություն ունեիք, ԼՂՀ-ն ավտորի- տար երկիր էր, Դուք Ձեզ պահում էիք լկտի և ամբարտավան, որը ներելի էր միայն պատերազմի ժամանակ և ոչ մի դեպքում դրանից հետո Ինչպես Հայաստանի, այնպես էլ ԼՂՀ-ի համար չկա ժողովրդավարության այլընտրանք, որից Դուք շատ հեռու եք և որը պահանջում է բարձր դիվա նագիտական ունակություններ քաղաքական առաջնորդներից. Ես վստահ եմ, որ Դուք կգտնեք համախոհներ բայց ո՞րն է Ձեզ համար գլխավորը Ձեր սեփական ամբիցիաների իրագործու՞մը, թե ազգի ճակատագիրը·**

Պատերազմի տարիներին իմ գլխավոր խնդիրն եմ համարել հայրենիքիս պաշտպանությունը և բացառապես կլանված եմ եղել այդ խնդիրների լուծ- մամբ: Հրադադարից հետո մինչև 1998 թ. հիմնականում զբաղվել եմ բանակա շինությամբ: Այն ժամանակ չէի հետևում թե ինչ է կատարվում թիկունքում: Իսկ շատերը, իրենց փաքուկ գրասենյակում նստած, սեփական իշխանության խնդիրներն էին լուծում: Մինչդեռ, ինչպես արդեն նշել եմ հասկանալի էր ինձ որ մեր բոլոր ձեռքբերումները փանուլ կտանք, եթե արմատական բարեփո խումներ չկատարենք քաղաքացիական դաշտում սոցիալ-տնտեսական զարգացման ասպարեզում Սակայն իմ այդ մտադրությունները սվիններով ընդունվեցին Ուստի ստիպված էի հրաժարականի դիմում ներկայացնելու

www.a-pdf.com



ինչպես նաև հրաժարականիս դրդապատճառների մասին ծավալուն նամակ հղելու ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանին (1998 թ մայիս). Այդ նամակում, մասնավորապես ընդգծել եմ «Իմ գործունեության ըն թացքում, ցավոք, միանգամից 4 հակառակորդների եմ դիմակայել. ա) թուրքը բ) ԼՂՀ իշխանությունները գ) ՀՀ իշխանությունները, դ) ՀՀ պաշտպանության նախարարությունը: Թեև սկզբունքորեն պիտի պայքարեի միայն մեկ՝ թվում էր մնացյալ երեքի համար էլ ընդհանուր թշնամու դեմ»: Հրաժարականս չըն դունվեց և հնարավորություն ստեղծվեց ձեռնամուխ լինելու իմ ծրագրային բարեփոխումների իրականացմանը Նոր կառավարությունը կազմավորվեց 1998 թ հունիսին. Հենց այդ պահից սկսած ընդունվեցին այնպիսի կարևորա գույն հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված օրենքներ և ենթա օրենսդրական ակտեր, ինչպիսիք էին տեղական ինքնակառավարման ձևավո րումը դպրոցների ինքնավարության և ուղղակի ֆինանսավորման ապահո վումը սոցիալական ապահովագրության համակարգի կատարելագործումը դատաիրավական բարեփոխումները և այլն: Մենք վերանայեցինք պետական ապարատի պահպանման ծախսերի նորմատիվները և արդյունքում կարողա ցանք բարձրացնել նվազագույն աշխատավարձը կենսաթոշակների չափը Մասնավորապես 1999 թ հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձի չափը հասավ 10 հազար դրամի (այն դեպքում երբ ՀՀ-ում ընդամենը հինգ հազար դրամ էր) իսկ կենսաթոշակառուների համար սահմանվեց ‹Արցախ› պարած քային հավելում ամսական երկու հազարական դրամի չափով ուսուցիչների միջին դրույքաչափը բարձրացվեց 2 2 5 անգամ և այլն Որևէ մեկն այն ժամա նակ չէր հարցնում թե ինչպես է դա հաջողվել փոխարենը նորմատիվների վերանայման պատճառով մենք պրորեցինք շատ շատերի հատկապես բազմաթիվ պաշտոնյաների անձնական շահերը Եվ իմ դեմ կազմակերպվեցին այդ բոլոր զրպարտությունների խաչակրաց արշավանքն ու գոյություն չունե ցող դատարանի բեմադրությունը ինչն արդեն ձեզ բոլորիդ է հայտնի Եթե Դուք իրոք անկողմնակալ ցանկություն ունեք համոզվելու արդյո՞ք ես եղել եմ բռնակալ, թե՞ ոչ ուսումնասիրեք այդ ժամանակաշրջանում ընդունված օրենսդրությունը. Իսկ ո՞ւմ էր հարկավոր իմ ավտորիտար դիկտատորի բացա սական կերպարի մոգոնումը Բոլոր նրանց, ում անձնական նեղ շահը ոտնա հարվել էր այդ բարեփոխումների հետևանքով Իսկ Դուք պարզապես զոհ եք դարձել հենց նշածս ապատեղեկատվական ագրեսիային Բոլոր այն մարդ կանց ովքեր թույլ են տալիս որ իրենց ականջներից պարապետսակ ապատեղե կատվական արտադրանք կախեն խորհուրդ կտայի ուշադրություն դարձնել լուրերի տարածման աղբյուրին և պատճառներին

Աշոտ Գյումրի

**– Ինչպե՞ս եք պատրաստվում լուծելու Քոչարյանի ստեղծած արցախ ցի հայաստանցի» կոնֆլիկտը. Դա Ձեզ չի՞ խանգարի**

– Իմ նախորդ պատասխաններում ես արդեն անդրադարձել եմ բոլոր նմա նատիպ կոնֆլիկտներին հավատում եմ ժողովրդի առողջ բանականությանը

www.a-pdf.com



Արթուր Ղազարյան Հայաստան Երևան

**– Պարոն գեներալ, ինչպե՞ս եք պեսնում ԼՂՀ բաղկացուցիչ մաս կազմող Շահումյանի շրջանի հեպագա ճակապագիրը Դուք կողմ եք կրկնական հանրաքվեի անցկացմանը, բայց չէ՞ որ առաջին հանրաքվեին մասնակցել է Շահումյանը, որն այսօր գերված է Շահումյանը երկրորդ հանրաքվեին հիմա չի կարող արդեն մասնակցել դա ավելի չի՞ խոչընդոտի նրա ազապագրման հարցում**

Ես առաջարկում եմ առավել ուշադիր կարդալ չորս սկզբունքները և ու շադրություն դարձնել երկրորդ կետին: Հիշեցնեմ նաև որ այսօր ևս գոյու թյուն ունի Շահումյանի շրջանը Ավելին ասել ներկայումս գտնում եմ աննպա տակահարմար

Խաչիկ Օհանյան Սիրիա Հալեպ

**– Պապվարժան հերոս, բարձր եմ գնահապում Ձեր սխրանքները, բայց կարծես Ձեզ չի բավարարում, այս հոգու Վեհությունն է Ձեր, կարող եք ընտրել երկու ուղիներից մեկը՝ ըլլալ Հայոց Կարիպալփին Տիգրան Մեծ, Դավիթ-Բեկ, Նժդեհ շարքը բաց է և լրացումի կարիք ունի անհապաղ. Կամ էլ ըլլալ սպասպարապետ, սպազգային, սպամենքասեր, սպարժեքներու մարմնացում, սպա.. սպա... Ուղղակի չեմ ուզում Դուք այս ուղիով քայլեք**

Ձեր գովասանքն ու մտահոգությունը կընդունեմ ի գիտություն

Շնորհակալություն·

Ռազմիկ Գալստյան, ԱՄՆ

**Ներկայացված Ձեր կենսագրությունում նշված է, որ Դուք 14 տարով անհիմն դատապարտվել եք բանտարկության. Որևէ քայլ արե՞լ եք արդարությունը վերականգնելու, այսինքն արդարացվելու համար Եթե ոչ ապա ինչպե՞ս եք պատրաստվում մտնելու քաղաքականություն և պայքարել ուրիշների իրավունքների համար:**

Մի կողմից ես արդարացվելու խնդիր չունեմ քանի որ ինձ ազատազրկման է դատապարտել գոյություն չունեցող դատարանը Մյուս կողմից վաղ թե ուշ ես հետամուտ եմ լինելու արդարության վերականգնմա նը Պարզապես դրա համար հարկավոր է նախ պայքարել անկախ արդարա դատության կայացման համար

## ԻՄ ՀԱՅԱՑՔՆԵՐՈՒՄ ԵՍ ԱՆԿԱԽ ԵՄ»

‹Չորրորդ իշխանություն ›
17 20 հունվարի 2006թ

**– Ինչպես եք գնահապում ղարաբաղյան կարգավորման գործընթացի առկա իրավիճակը**

www.a-pdf.com



Ես իրավիճակը համարում եմ շատ վտանգավոր Շատ վատ է ես վստահ եմ որ հաջողության չենք հասնելու Ես չեմ տեսնում խնդրի լուծում նրանց մեջ ովքեր բանակցում են

**– Այսինքն Դուք չե՞ք պատկերացնում թե Ձեր պատկերացրածը չեք տեսնում**

Իմ պատկերացրածը չեմ տեսնում թե չէ ինչու՞ չէ շատ լավ եմ պատկերացնում գոնե բանակցություններին 10 տարի մասնակցել եմ: Բավական է որ երկու բառով արտահայտվեն և դա ինձ հերիք է որ հասկանամ թե կոնկրետ ինչի մասին է խոսքը ինչ ենթատեքստ ունի: Ասենք երբ Ղարաբաղի իշխանությունները հայտարարում են թե Հայաստանի իշխանությունների հետ կան փոքր-ինչ հակասություններ և փորձում են դրանք լուծել ապա ինձ համար արդեն պարզ է թե դրանք ինչ հակասություններ են ինչից են գալիս Չեմ տեսնում ես լուծումը Բայց չեմ էլ շտապում

**– Այդ փոքր-ինչ հակասությունը ո րն է Քելբաջարի շրջա՞նը:**

Ոչ ինձ չի թվում թե դա Քելբաջարի շրջանն է Ինձ թվում է դա կապված է կոնկրետ զորքերի տեղակայման, հանրաքվեի ժամկետների հետ Ինչպես նաև վերադարձվող տարածքների չափը որոնք այս պահին ես չէի ցանկանա կոնկրետացնել:

**– Բայց մամուլում մի քանի անգամ նշվեց թե Դուք այդ սկզբունքներին համաձայն եք**

Գիտեք ընդհանրապես մամուլում ով ինչպես է ձևակերպում դա ինձ չի հետաքրքրում Երբ ասում են թե իմ տեսակետները նման են ապա այո նման են, երբ ես էլ եմ գտնում, որ պետք է հանրաքվե լինի Նման են որ ես էլ եմ գտնում որ մենք չենք կարող միջազգային հանրությանը, հարցի կարգավորմամբ զբաղվող գերտերություններին համոզել որ Լեռնային Ղարաբաղի բնակչության ձայնով միանգամից անկախություն ձևակերպեն, կամ ինչ-որ կարգավիճակ որոշվի Ուրեմն պետք է և հայ փախստականները և ադրբեջանցի ներքին տեղահանվածները վերադառնան բայց ո ր տարածքով ո՞ր հատվածով Ղարաբաղն ի՞նչ տարածք է ունենալու դա պետք է հստակեցնել Երրորդը ուզում եմ նաև նշել որ ես խաղաղարար ուժերի տեղակայմանը դեմ եմ. Ես կարծում եմ որ այնտեղ զորքեր բերելու կարիք չկա Չեմ գտնում, որ Ադրբեջանն այն պետությունն է որ մեզ սպառնում է և դրա համար պետք է մեր միջև զորք լինի խաղաղություն պահպանելու համար. Բավական է փոքր ուժերով ապահովել այդ տարածքների անվտանգությունը Բայց նորից եմ կրկնում իմ տեսակետը առնվազն Լաչինը և Քելբաջարը Ղարաբաղի 5 շրջանների հետ միասին պետք է լինեն մեկ միավոր: Եթե մենք փորձում ենք վստահություն ձեռք բերել այդ թևերի միջև ապա երբ հետագայում 10–15 տարի հետո, հանրաքվե լինի, Ղարաբաղը ի՞նչ կարգավիճակ կստանա ու՞մ կմիանա ի՞նչ կորոշվի թողնենք դա 15 տարի հետո. Իմ տեսակետը այս հարցում հստակ է և երբևիցե չի փոխվել. ոչ այն ժամանակ ո՛չ էլ հիմա Լաչինն ու Քելբաջարը պետք է լինեն Ղարաբաղի ենթակայության տակ

**– Ձեր ասելով ստացվում է, որ Ղարաբաղին հարող հարավային շրջանները՝ Կուբաթլուն Զանգելանը և այլն պետք է վերադարձնել որի դեպքում**

www.a-pdf.com



**ռազմաճակատի գիծը բավական երկարում է Դուք գտնում եք, որ այդ դեպքո՞ւմ էլ մենք մեր ուժերով կարող ենք ապահովել Ղարաբաղի ան վտանգությունը առանց միջազգային ուժերի**

Ես նորից եմ կրկնում. բանակցություններում պետք է փոխզիջման գնալ Թե դրանք որ շրջանները կլինեն ինչպես դա կլինի դա էլ իր սպրապեգիան ունի Այստեղ զինվորականները պետք է ունենան իրենց դիրքորոշումը ինչ պես են պաշտպանելու այդ տարածքները Ղարաբաղի բնակչության վերա դարձն ու անվտանգությունը Պետք է ճշտվի Ղարաբաղի ապագա կարգավի ճակի լուծման մեխանիզմը՝ Հարավային Կովկասը ինտեգրվում է Եվրամիու- թյանը Ղարաբաղը լինելու է Եվրամիության վիճելի տարա՞ծք, թե՞ ունենալու է այլ կարգավիճակ Բայց ինչ որ, գոնե ժամանակավոր, կարգավիճակ պետք է լինի մինչև Հարավային Կովկասը հասունանա Եվրոպային ինտեգրվելու համար: Նոր հանրաքվե լինի

**– Ճի՞շտ հասկացանք, որ Ձեզ համար Լաչինը և Քելբաջարը վերադարձ նելն ընդհանրապես քննարկման առարկա չէ՝**

Այո ոչ մի դեպքում Լաչինը և Քելբաջարը չպետք է վերադարձվեն Ավե լին Ղարաբաղի բոլոր ջրային պաշարները խմելու և ոռոգման, հոսում են հիմ նականում այդ շրջաններից: Այսօր, երբ բազմաթիվ միջազգային փորձագետ ներ գիտնականներ, վերլուծաբաններ նշում են որ 30–40 տարի հետո աշխարհի բնակչությունը լինելու է 10 մլրդ և խմելու ջրի լուրջ դեֆիցիտ է լի նելու, ջուրը նավթից թանկ է լինելու, հարց է ծագում՝ ի՞նչ ենք անում ո՞ւր ենք գնում Մենք անվտանգություն ասելով, նկատի չունենք միայն բանակը կամ որ զինվորը պետք է հսկի սահմանները՝ Դա հայոց պետականության համար կարևոր խնդիր է դա նաև Հայաստանի սահմանն է: Նորի՞ց մտնենք օղակի մեջ և հույս դնենք որ միջազգային որևէ գերտերություն մեզ պաշտպանելո՞ւ է Դա լուրջ չէ, որովհետև մենք ունեցել ենք այդ գերտերությունը ԽՍՀՄ ը որը փլուզվել է: Ո՞վ է ասում, որ մի գեղեցիկ օր էլ Եվրամիությունը չի փլուզվի: Կամ ի՞նչ երաշխիք որ երաշխավոր գերտերությունները մի օր հակասություն ներ չեն ունենա, և մենք նորից չենք կանգնի փաստի առաջ

Ուրեմն մենք պետք է այնպես հարցը լուծենք, որ որևէ գերտերությունից կախում չունենանք և անակնկալի չգանք և՛ նորմալ վիճակում լինենք, և կարո ղանանք ինքներս մեզ պաշտպանել՝ Իսկ ինչ վերաբերում է մյուս շրջաններին ապա եթե նկատեցիք ես այդ թեման շրջանցում եմ, որովհետև այդ շրջաննե րի հետ կապված կան տարածքներ որոնք նույնպես ռազմական առումով կարևոր են մեզ համար Սա ես ասում եմ լավ տեղյակ լինելով այդ շրջաննե րին Սա է պատճառը որ ես չեմ ասում այս կամ այն շրջանը

**– Իսկ ինչո՞ւ չեք կոնկրետացնում, օրինակ, Շահումյանի շրջանը.**

Կրկնեմ երբ ասում եմ վերաբնակեցում ապա նկատի ունեմ Ադրբեջանից տեղահանված շուրջ 400 հազար հայ փախստականներին Այդ մարդկանց առ ջև եթե մենք գնում ենք խաղաղության պատասխանատվություն կրո՞ւմ ենք Ի վերջո՝ նրանք Ղարաբաղի հարցի պատճառով են տեղահանվել: Ասենք նրանք ցանկանում են կամավոր վերադառնալ Բաքու բայց Բաքուն չի ապա հովում նրանց անվտանգությունը կամ դեմ է դրան Իսկ եթե նրանք ցանկա

www.a-pdf.com



նում են բնակվել Շուշիում կամ Քելբաջարում ապա որպես նախկին Խորհրդային Ադրբեջանի քաղաքացիներ իրավունք ունե՞ն թե ոչ Այդ հնարավորությունը պետք է փակ Դրա համար եկեք հարցը այդպես չդնենք, թե ինչպես ենք լուծում օրինակ, Շահումյանի հարցը՝ Եթե խնդիրը մարդու իրավունքներն են ապա այդ իրավունքները պետք է պաշտպանվեն Փասփաթղթում պետք է հստակ երևա թե ինչպես ենք այդ մարդկանց հարցը լուծում:

**– Մենք խոսում ենք մի հարցի շուրջ, որով պետք է զբաղվեն Հայաստանի կամ Ղարաբաղի իշխանությունները: Դուք կուսակցության ղեկավար եք և այդ հարցերով չպետք է զբաղվեք՝ Այդպե՞ս է**

Ի՞նչ է նշանակում՝ չպետք է

**– Այսինքն Դուք չեք զբաղվողը**

Իհարկե ես անմիջական բանակցող չեմ Օրվա իշխանությունն է բանակցում, նա կգա մի համաձայնության, և եթե մեր հասարակությունը, առաջին հերթին ԼՂՀ բնակչությունը, ընդունի իշխանությունների առաջարկվող մոդելը, ապա ես ինձ իրավունք չեմ վերապահի այդ մասին բարձր գոռգոռալու թե ես դեմ եմ: Ես իմ տեսակետը կարտահայտեմ, բայց առանց որևիցե այլ խնդիր դնելու Իսկ եթե այդ հասարակությունը չընդունի առաջարկվող փաթեթը ապա իշխանությունները պետք է հրաժարական տան

**– Ժամանակին Դուք այս ամենի մասին խոսում էիք որպես ԼՂՀ պաշտպանության նախարար**

Չէ ես այս մասին որպես հայ եմ ասում որպես Ղարաբաղում ինչ-որ լումա դրած ցավում եմ հարցի համար՝ Ես ունեմ իմ տեսակետը աշխատում եմ այդ հասարակության հետ Ես չէի ցանկանա վերցնել մի բեռ, որ չէի կարողանալու տանել՝ Եթե ես կարողանում եմ 80 կգ ծանրաձող բարձրացնել ինչո՞ւ պետք է ասեմ թե կարող եմ 120 կգ անոց բարձրացնել, հետո կանգնեմ փաստի առաջ Եթե Դուք կարողանում եք 120 կգ բարձրացնել բարձրացրեք ես Ձեզ չեմ խանգարում

**– Հիմա անդրադառնանք ձեր կուսակցական գործունեությանը Դաշինքը ինչի՞ համար է ստեղծվել**

Կուսակցությունը ստեղծվել է Հայաստանի ապագա զարգացման համար Իսկ Հայաստան ասելով ես Ղարաբաղը չեմ տարանջատում: Ես Հայաստանի զարգացման վերաբերյալ ունեմ իմ մոտեցումները, հայացքները ունեմ գաղափարակիցներ հիմա համախմբվել ենք, մի թիմ ենք դարձել և շարժվում ենք այդ ճանապարհով Իսկ հասարակությունը որքան մեզ վստահի այդքան բեռ էլ կվերցնենք:

**– Ասացիք գաղափարակիցների թիմ Որո՞նք են այդ գաղափարները**

Ղարաբաղի հարցում արդեն գիտեք: Երկրորդը ապակենտրոնացված իշխանություն Օրինակ՝ չի կարելի որպեսզի ներքին զորքերը ոստիկանությունը թաղայինները ամբողջությամբ լինեն մի նախարարության ենթակայության տակ Մեկը գրանցի մյուսն այդ գրանցումը չեղյալ համարի Այդ լիազորությունների մի մասը պետք է տալ տեղական ինքնակառավարման մարմիններին: Համայնքի ղեկավարը պետք է լայն լծակներ ունենա: Դպրոցի տնօրենը արդեն բառն ասում է որ տնօրենը պետք է պատասխանատու լինի

www.a-pdf.com



ամեն ինչի համար ո միայն կրթական այլ նաև ֆինանսական տնտեսական հարցերում և հաշվետու չլինի միայն զիպելիքների համար Ես օրինակ չեմ համարում, որ այսօր մեր դպրոցներն ունեն բարձր մակարդակ խայտառակ վիճակ է Եվ պատճառը հենց առկա քաղաքականությունն է երբ հստակ չէ, թե ով է այդ վիճակի պատասխանատուն. լիազորությունների հստակություն չկա Կամայականորեն են նշանակվում նայած թե այդ պահին որ կուսակցությունն է նշանակողը այդ տնօրենը ստանում է նշված կուսակցության տոմսը և ծառա յում նրան

Նման ծրագրեր ունենք բոլոր ոլորտների համար Գյուղատնտեսությունը պետք է զարգացնել. Պետք է ռացիոնալ օգտագործվեն Հայաստանի ջրային ռեսուրսները Օրինակ գյուղացուն ինքնահոս ջրով ապահովենք որ դրա հա մար ավելորդ գումարներ չծախսի Կամ ջրային ռեսուրսներով ապահովենք Հայաստանի էներգետիկ անկախությունը որ հետո չասենք Ռուսաստանը գազի գինը բարձրացնում է մինչև 200–230 դոլար· Ադրբեջանն այսօր շատ է շահարկում նավթի գործոնը բայց եթե մենք կարողանանք լիովին կառավա րելի դարձնել մեր ջրային ռեսուրսները որոնցով էլ ոռոգվում է Ադրբեջանի հողային տարածքների 60% ը ապա Ադրբեջանը պետք է իր նավթի վաճառքի գումարով մեզանից թանկ գնով ջուր գնի: Պարզ խնդիր է. Բնությունը մեզ այդ հնարավորությո նը տվել է Միլիարդները որոնք կարող էինք ունենալ զրո յացնում ենք·

Հարկային քաղաքականությունը պետք է հստակեցվի Դրա համար պետք է ուսումնասիրվի տարածաշրջանի օրենսդրությունը· Այնպիսի հարկային դաշտ ձևավորվի, որ տնտեսությունը փոքր և միջին բիզնեսը զարգանան, հա վասարություն լինի: Այս ծրագրերով ենք առաջնորդվելու: Այսպես ենք ներկա յանալու հասարակությանը Ոչ թե կզանք հետո կմտածենք Ոչ թե մենք ինչ որ մեկի ձեռքին գործոն ենք օգտագործվելու համար ինչպես շատերն են զգնում Ես ընդհանրապես ինձ թույլ չեմ տվել գործիք լինել Եթե այդպիսին լինեի 4–5 տարի բանտերով չէի անցնի մնացածների նման «չեստ› կպայի ավել կոչում էլ կստանայի ու կնստեի իմ տեղը Ես ազատ եմ իմ հայացքներում և մեր ծրագրի շրջանակներում կհամագործակցեմ ցանկացած ուժի հետ· Ոչ ավելի

**– Ենթադրենք որ ընտրություններում դուք բավականին շատ ձայներ ստացաք, խորհրդարան մտաք և այնտեղ մեծ ներկայություն ապահովեցիք: Ձեր կուսակցության առաջին 3 քայլերը կարո՞ղ եք ասել·**

Առաջին երեք քայլերը օրենքներ ընդունելն է բոլոր ոլորտներում Որոնց մասին մենք խոսում էինք: Մեր գաղափարները ծրագրերը վերածենք օրենքի

**– Իսկ եթե խորհրդարանում չկարողանաք ապահովել մեծամասնու թյուն ինչպե՞ս եք անցկացնելու ձեր օրենքները**

Մենք չենք էլ ձգտում մեծամասնություն լինել Ընդհանրապես ես ձեր թերթի վերլուծություններին համաձայն չեմ ես ունեմ իմ տեսակետը Դեռ մինչև մարտ ժամանակ կա կլինեն վերադասավորումներ և պարզ կլինի թե ով ինչ ուժերի հետ ինչ է անում ուր են գնում: Ովքեր կլինեն մեծամասնու թյուն ովքեր մեծ լծակներ կվերցնեն չէի ցանկանա այժմ շտապել և պատաս խանել Երբ կմտնենք խորհրդարան, այնտեղ պարզ կլինի ով ինչ է իրենից

www.a-pdf.com



ներկայացնելու, նոր կարելի է խոսել. Երբ դեռ պարզ չէ թե ինչ ուժեր են լինելու խորհրդարանում համագործակցության մասին խոսելը ճիշտ չէ Իմ կարծիքով 6–7 կուսակցություն է մտնելու խորհրդարան Թե ով ինչ տոկոս է ունենալու կամ ով ում հետ է համագործակցելու սա արդեն խնդրի մյուս կողմն է

**– Խորհրդարանում տեղ գրավելու համար 6–7 կուսակցություն ցանկանում է պահպանել Քոչարյանի իշխանությունը...**

Բայց ո՞նց կարող են անել եթե Քոչարյանի վերջին ժամկետն է

**– Դուք կարծում եք հնարավոր չէ՞ այնպիսի իրավիճակ, որ իրավաբանորեն Քոչարյանին թույլատրվի երրորդ անգամ առաջադրվել**

Կարծում եմ ոչ

**– Ոչ մի դեպքում հնարավոր չէ**

Չեմ տեսնում Որքանով որ ես նրան ճանաչում եմ նա չի գնա այդ քայլին

**– Իսկ եթե գնա, Դուք դրա դեմ պայքարողների մեջ կլինե ք**

Ես ընդհանրապես չեմ ընդունում ինչ որ մեկի դեմ սկզբունքը Ես պայքարում եմ մեր հասարակությանը ներկայացնելու համար այն գաղափարները որոնք ես կրում եմ Իմ գաղափարներն անձնավորված չեն Կապ չունի մարդը Ով ուզում է լինի Ով կլինի նրա դեմ կամ կողմ ես խոսելու եմ ծրագրից կետերից Չեմ նայելու՝ ով է իմ դեմ Եթե այդ գաղափարները չի ընդունում օրինակ արտաքին քաղաքականության մեջ որ տարածաշրջանում պետք է լարվածությունը թուլացնել ու ոչ թե ռազմակայաններ տեղակայել նատօ ական ռուսական այլ պետք է ապառազմականացնել ապա համագործակցելու եմ այն ուժերի հետ որոնք կընդունեն իմ այս գաղափարները Շատ պարզ եմ ասում Ոչ թե խաղում եմ

**– Հարցը կոնկրետ է դրված Ենթադրենք Քոչարյանը երրորդ անգամ է առաջադրվում, ենթադրենք խախտում է սահմանադրությունը, կամ մեկ այլ մարդ է խախտում սահմանադրությունը օրինակ ՀՀ քաղաքացի չհանդիսացող Արամ Կարապետյանը, ով պատրաստվում է առաջադրվելու, կամ մեկի 35 տարին չի լրացել, բայց ցանկանում է առաջադրվել, կպայքարե՞ք դրա դեմ Անձերի մասին չէ խոսքը**

Իհարկե եթե դա սահմանադրությանը դեմ է պայքարելու ենք

**– Եթե Սահմանադրական դատարանը (ՍԴ) հայտարարի, օրինակ, որ այս՝ փոփոխված սահմանադրությունը նոր է, և Քոչարյանը կարող է նորից առաջադրվել..**

Խնդիրն այն է որ Սահմանադրությունը ոչ թե փոխվել է այլ նրանում փոփոխություններ են արվել ՍԴ և բոլոր դեպքերում նման խախտում չի կարող անել Դա կվարկաբեկի այդ կառույցը Կմարի

**– Արդեն մարել է Ձեր պատկերացմամբ 2000թ-ից հետո Ղարաբաղում դրակա՞ն տեղաշարժեր են եղել, թե՞ բացասական**

Գիտեք, որքանով տեղյակ եք ես Ղարաբաղում չեմ մնացել Չեմ ցանկացել մնալ մարդկանց հետ հանդիպել քննարկել ինչ որ հարցեր

www.a-pdf.com



**– Վերջերս հեռուստատեսությամբ Դուք նշեցիք, որ ժամանակին, երբ ԼՂՀ պաշտպանության նախարարն էիք, կառավարության անդամներին ազատում էիք աշխատանքից...**

Ես ասել եմ հետևյալը Հայաստանը ԼՂՀ ին հատկացրել է 8 մլրդ 600 մլն դրամ 1998 թվականին Գրեթե նույնքան էլ հատկացվել էր 1999 թվականին Բայց այդ ընթացքում աշխատավարձերն ու թոշակներն այնտեղ կրկնա պատկվել են Եվ ես որպես կառավարության անդամ առաջարկել եմ վերա նայել նորմատիվային ակտերը մասնավորապես բյուջետային ծախսերը Սա է փաստը Երկրորդ՝ եթե այդ գումարը 1998 թվականին 20 նախարար էր մսխում, կենտրոնացված ‹ուտում էին› դու վերցրել ես բաշխել տվել ես հա սարակությանը

Այսօր Հայաստանում 20 նախարար ուտում է այդ գումարը. 600 մլն դոլար գնում է պետական ապարատի պահպանման, ավտոմեքենաների գրասենյա կային ծախսերի վրա: Ես ասում եմ այդ նորմատիվային ակտերը ուռճացված են, փոխեք Փոխեք ուղղեք դեպի հասարակությունը որպեսզի տնտեսությու նը զարգանա: Սա է իմ ասածը եղել

Իսկ կոնկրետ նախարարներ փոխելու վերաբերյալ եթե կրթության նախարարն իր ոլորտո մ փոփոխություններ է կատարում Ձեզ թվում է պաշտպանության նախարարը չպե՞տք է ստորագրի. մակագրում է իր տեսա կետն է արտահայտում Ես լինելով կառավարության անդամ իրավունք ունեմ համաձայնելու առաջարկին կապ չունի թե ինչ պաշտոն եմ կրում Վարչապետն այդ կառավարության աշխատանքներն է կոորդինացնում՝ Հա յաստանում մի քիչ ուրիշ կերպ են դա հասկանում. վարչապետին ‹պապա» են անվանում: Ամեն ոլորտի վերաբերյալ առաջարկներին կառավարության բո լոր անդամները պարտավոր են ծանոթանալ հայտնել իրենց տեսակետը և ստորագրել այդ փաստաթղթի տակ Եթե որևիցե նախարար չի ստորագրել ապա հնարավոր է որ առաջարկը մերժվի և այդ փաստաթուղթը չմտնի խորհրդարան Կամ պետք է այդ նախարարին ազատեն աշխատանքից կամ նա հրաժարական տա

Իմ որոշ տարաձայնությունները ժամանակին Լեոնարդ Պետրոսյանի հետ զուտ այդ մասով էին՝ Երբ Հայաստանում ասում էին՝ Սամվել Բաբայա նը Լեոնարդ Պետրոսյանի հետ պրոբլեմներ ունի որևէ անձնական պրոբլեմ չենք ունեցել Զուտ գրվում էր որ նորմատիվային այն ակտերը որոնք կի րառվում էին Հայաստանում Ղարաբաղի դեպքում չպետք է գործեին Տար բեր մասշտաբներ էին Ասենք պաշտոնյայի մեքենայի համար հատկացվող բենզինի գումարը նույնն էր թե Հայաստանի, թե Ղարաբաղի դեպքում Դա լուրջ չէր, որովհետև Ղարաբաղն իր տարածքով զգալի փոքր է Հայաստա նից այսինքն ավելի քիչ բենզին պետք է պաշտոնյան ծախսեր Ինքներս մեզ չխաբենք Եվ առաջարկվել է այդ ակտերը փոփոխել այլ ոչ թե ար տագրել Սա էր խնդիրը, մեկմեկու չէինք հասկացել, և մեկը պետք է հեռա նար այդ փուլում Հետագայում այն, ինչ սկսվել էր սկսվել էր 1998 թվակա նից և շարունակվում է Թե ինչ է եղել Բաբայան Սամվելը հանկարծ մարտին տեռորիստ է դարձել թե ինչ է դարձել Չէ որ մինչև այդ հրաժա

www.a-pdf.com



րական եմ փվել պայքար էր ընթանում Գաղափարական պայքար Էդ ի նչ էր որ չեմ կիսել Եթե հավատանք լրատվամիջոցներին ես այնտեղ թագավոր էի Մի՞թե չէի կարողանա իշխանությունը պահել Կբռնեինք, կշպրտեինք փեղը կնստեինք: Բայց ես հասկանում էի որ շպրտելով չէ· Որևիցե մեկին պետք չէր շպրտել: Ես ունեի իմ հայացքներն ու գաղափարները ձեռք չէր տալիս խնդրեմ հեռացրեք:

**– Անդրադառնանք ևս մեկ՝ Ձեր քաղաքացիության թեմային**

Ես Հայաստանի Հանրապետության քաղաքացի եմ: Րաֆֆի Հովհաննիսյանը ԱՄՆ ի քաղաքացի լինելով հետո կարող է ՀՀ քաղաքացի լինել Արամ Կարապետյանը ՌԴ քաղաքացի էր կարող է ՀՀ քաղաքացի լինել, իսկ Բաբայան Սամվելը այլ պետության քաղաքացի երբևիցե եղե՞լ է ԽՍՀՄ ը փլուզվել է, և ես դարձել եմ ՀՀ քաղաքացի ՀՀ դիվանագիտական անձնագիրը ստացել եմ 1995 թ · Մինչև իմ ձերբակալությունը ես հանձնել եմ իմ անձնագիրը ինձ ազատել են և ես վերցրել եմ Հայաստանի անձնագիր Մեր օրերում չի գրվում թե որտեղ ես գրանցված: Բայց եթե պետք լինի գրանցումս էլ կփոխեմ: Այդքանից հետո մի՞թե ես իրավունք չունեմ Հայաստանում քաղաքականությամբ զբաղվելու

**– Խոսքն այդ մասին չէ, թե Դուք իրավունք ունեք կամ չունեք Հայաստանում քաղաքականությամբ զբաղվելու: Խոսքն այն մասին է, թե այդ դեպքում ինչո՞ւ Ղարաբաղում բնակվող հայերը նույնպես իրավունք չունեն մասնակցելու Հայաստանի ընտրություններին կամ հանրաքվեին**

Սպասեք ո՞վ է այսօր ձեր նախագահը

**– Դա սխալ չէ՞:**

Հարցն այն է, որ կան բաներ որոնք չպետք է անել քանզի կա արտաքին աշխարհի գործոնը:

**– Արտաքին աշխարհը հետևում է նաև Հայաստանի ընտրություններին**

Նախ բոլոր ղարաբաղցիները չեն որ Հայաստանի անձնագիր են վերցրել: Լևոն Տեր Պետրոսյանի օրոք Ազգային անվտանգության խորհրդում քննարկվել էր ղարաբաղցիների քաղաքացիության հարցը և որոշվել էր որ հարցի լուծումը կարող է միջազգային ասպարեզում խնդիրներ հարուցել Այդ իսկ պատճառով հարցի լուծումը մինչ այսօր սառեցված է

Ի վերջո՝ բոլորս էլ հասկանում ենք Ղարաբաղն ու Հայաստանը մի պետություն են բայց երբ որոշ պատգամավորներ հայտարարում են թե պետք է Ղարաբաղի անկախությունը ճանաչել եկեք Հայաստանին սանկցիաների տակ չմտցնենք Այն ինչ որ այսօր անում են ներկա իշխանությունները որոնք իրենց վրա բեռ են վերցրել և բանակցում են, նրանք բանակցում են մինչև մի սահման երբ փաստաթղթի նախագիծը դրվում է բանակցությունների սեղանին Հետո բանակցում է Ղարաբաղը

Ասենք՝ շրջանակը գծվել է արդեն որոշվում է թե որտեղ ինչ կետեր պիտի փոխվեն, ինչ բառ ավելացվի, կամ մասնիկ պակասեցվի Նույնն էլ եղել է Լ Տեր-Պետրոսյանի ժամանակ: Լիպարիտյանը բանակցել է, բերել են փաստաթուղթը համաձայնել կամ չենք համաձայնել: Հիմա էլ է այդպես: Բանակցում են Վերջում մի փաստաթուղթ է լինելու

www.a-pdf.com



Բայց ես գիտեմ որ այսօրվա իշխանությո նները չեն կարող այն ափով ինչից ես եմ խոսում վերցնել այդ բեռը

**– Վերջին տարիներին, մամուլով հեռուստատեսությամբ, կամ կոնկրետ Ռ Քոչարյանը հայտարարեց, որ շատ դեպքերում մենք Ղարաբաղում պա տերազմական գործողությունները թաքուն էինք անում Հայաստանից որովհետև մեզ չէին թողնում Եվ ստացվում է այնպես, որ Հայաստանը չէր ուզում, որ մենք պատերազմում հաղթենք, իսկ Ղարաբաղը միայնակ թա քուն հաղթեց**

Գիտեք, երբևիցե դուք լսած չեք լինի որ ասեն թե Սամվել Բաբայանն իրեն ինչ-որ բան է վերագրել Ղարաբաղի պատերազմում Բայց կասեմ բոլոր ռազմական օպերացիաները մշակել եմ ես կառավարել եմ ես անձամբ Որևի ցե մեկը որևիցե կապ չունի· Այսօրվա այս գեներալները մարշալները, հրամա նատարները այն ժամանակ ամեն մեկը 20 կիլոմետրանոց մի հատված են ունեցել՝ իմ ենթակայության տակ Աղդամի օպերացիայից Երևանում տեղյակ չէին Մենք կրակակետերը ոչնչացնում էինք Մեզ ռմբակոծում էին. պետք էր վնասազերծել: Նույնն էլ Ֆիզուլիի ժամանակ

Նման դեպքերում ինչ ինչ տարաձայնություններ առաջանում էին Հայաս տանի ղեկավարության հետ մանավանդ որ միջազգային ասպարեզում Հայաստանը դրանից հետո խնդիրների առաջ էր կանգնում.

Կարող է ինչ-որ հարցերում մենք Հայաստանի հետ իսկապես խնդիրներ ենք ունեցել բայց առանց Հայաստանի Ղարաբաղը ո՞նց կարող էր հաղթել·

## ԱՌԱՋԻՆ ՏԵՂՈՒՄ ԿՈՎԿԱՍԻ ՇԱՀԵՐՆ ԵՆ ՀԵՏՈ ՆՈՐ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ›

**ԼՂՀ պաշտպանության նախկին նախարարի հարցազրույցը ռուսաս տանյան «Ռեգնում» լրատվական գործակալությանը**

Թարգմանություն ռուսերենից, հարցազրույցը ռուսաստանյան «Ռեգ նում› լրատվական գործակալության Իրավունք» 2 փետրվարի 2006թ

**– Պարոն Բաբայան, ներկայացրեք Ձեր ղեկավարած Դաշինք կուսա կցության արտաքին և ներքին քաղաքական հիմնական առաջնահերթու թյունները**

Կուսակցության հիմնական արտաքին քաղաքական ուղղվածությունը եվրաընտանիքին ինտեգրվելն է որին առաջին հերթին պետք է նախորդի կով կասյան պետությունների ինտեգրումը Բացի այդ անհրաժեշտ է լիովին բացառել տարածաշրջանում երրորդ երկրների ռազմական ներկայությունը քանի որ ամեն նման փորձ լինեն դրանք ռուսաստանյան թե ՆԱՏՕ ի զորքեր կհանգեցնի իրավիճակի լարման Այս դեպքում պետությունները կսպարեն այն տերությունների քաղաքականությանը որոնք ունեն ռազմական բազա ներ փվյալ տարածքում Ինչ վերաբերում է ներքին քաղաքականությանը ապա մենք կփորձենք նպաստել մեր պետության զարգացմանը ազատ շուկա յական տնտեսության ձևավորմանը Այս նպատակին հասնելու համար

www.a-pdf.com


անհրաժեշտ են անկախ դատական համակարգի կայացում և իշխանության ապակենտրոնացում:

**– Ի՞նչ տեղ է գրավում Ռուսաստանը Ձեր կուսակցության արտաքին քաղաքական օրակարգում**

Մենք պետք է կառուցենք մեր քաղաքականությունն այնպես, որ չվնասենք մեր հարևաններին, այսպես ասենք՝ ընդհանուր կովկասյան ընտանիքին: Առաջին տեղում մեր շահերն են, Կովկասի շահերը, այնուհետև կարելի է մտածել նաև Ռուսաստանի շահերի մասին: Եվ ոչ հակառակը՝ կարծել, որ Ռուսաստանի համար կառաջանան խնդիրներ, եթե մենք հանկարծ հայտարարենք Հայաստանում տեղակայված ռուսաստանյան բազայի դուրսբերման մասին: Ռուսաստանն արդեն իսկ կորցրել է իր ազդեցությունը Վրաստանում և Ադրբեջանում: Եթե մենք շարունակենք ապագայում ևս վարել ներկայիս քաղաքականությունը, ապա կարող ենք ունենալ, մեղմ ասած, վատ հարաբերություններ մեր հարևանների հետ: Սկզբունքորեն մենք չենք գնում Ռուսաստանի դեմ, այլ հանդես ենք գալիս մեր ժողովրդի շահերի օգտին:

**– Ինչպե՞ս եք գնահատում Ռուսաստանի վարած քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ՝ բնական գազի սակագնի հնարավոր բարձրացման տեսանկյունից, և կարելի՞ է արդյոք դիտարկել Իրան-Հայաստան գազամուղը որպես այլընտրանք ռուսաստանյանին:**

Համարում եմ, որ Ռուսաստանը կառուցում է իր քաղաքականությունը՝ ելնելով սեփական շահերից. նա իր խնդիրներն է լուծում: Գազի գների բարձրացման խնդիրը զուտ տնտեսական հարց է: Ռուսաստանը բարձրացրել է գները Ուկրաինայի և Վրաստանի համար, և այս պարագայում նա չի կարող շրջանցել Հայաստանը, քանի որ գազը տարանցիկ կարգով է տրամադրվում Վրաստանի տարածքով: Բայց թե ինչպես են նրանք մտադիր փոխհատուցել սակագների բարձրացման դիմաց Հայաստանին՝ որպես ռազմավարական գործընկերոջ, դա արդեն այլ հարց է: Ինչ որ լուծում անպայման կգտնվի: Սրա հետ մեկտեղ չեմ կարծում, որ Հայաստանը պետք է ձեռքերը ծալած նստի և սպասի, թե երբ Ռուսաստանը կիջեցնի կամ կբարձրացնի գները. այսօր դա 110 դոլար է, իսկ վաղը կարող է հասնել մինչև 210 դոլարի: Հայաստանին անհրաժեշտ է կառուցել իր էներգետիկ անկախությունը, փնտրել էներգետիկ պաշարներ երկրի ներսում, օգտվել այլընտրանքային էներգառաջբյուրներից: Քանի դեռ մենք չենք ստեղծել նման պայմաններ, Հայաստանը միշտ էլ կախման մեջ կգտնվի: Մենք պետք է ունենանք հստակ ռազմավարական դիրքորոշում, պետք է հասկանանք, թե ինչի ենք ընդունակ, իսկ մենք ընդունակ ենք շատ բաների: Մենք կարող ենք օգտագործել Հայաստանի հարուստ ջրային պաշարները, արեգակնային էներգիան. եթե այս ամենից կարողանանք քաղել առավելագույնը, ապա կարող ենք էներգետիկ ոլորտում 70 %-ով դառնալ անկախ: Հետագայում մենք կարող ենք սակարկել և Իրանի, և Ռուսաստանի հետ: Եթե այսօր եվրոպացիներն առաջարկում են մեզ փակել ատոմակայանը և կառուցել հիդրոէլեկտրակայաններ մեր տարածքում, պետք է կշռադատենք և փորձենք իրականացնել այս նախագծերը, որպեսզի 10 12 տարի հետո կարողանանք փոխհատուցել այսօր ատոմակայանում

www.a-pdf.com



արտադրվող էներգիայի 40 %-ը: Մենք պետք է ի վիճակի լինենք վերահսկե լու մեր ջրային ռեսուրսները, որոնք այսօր հենց այնպես հոսում են դեպի Ադրբեջան, իսկ հետագայում ստացված շահույթի հաշվին շարունակելու կառուցել, իրականացնել նոր ծրագրեր, շահագրգռել գործարարներին, ներդրումներ բերել: Դա մեծ լծակ է, որը հետագայում մեզ թույլ կտա հարևաննե րի հետ խոսել ինչպես հավասարը հավասարի:

Ինչ վերաբերում է Իրան-Հայաստան գազամուղին, ես այն չեմ դիտում որ պես այլընտրանք: Կարծում եմ, որ Իրանն ու Ռուսաստանը համաձայնեցնում են իրենց քաղաքականությունը և գործողությունները Հայաստանի նկատ մամբ, և եթե Ռուսաստանը շարունակի վարել ներկայիս քաղաքականությու նը, մենք կգնենք իրանական գազը, եթե նույնիսկ այն ավելի թանկ լինի ռուսաստանյանից: Այս տեսանկյունից նշված գազատարը կարող է դիտվել որպես այլընտրանք ռուսաստանյան գազին:

**– Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս կարող է անդրադառնալ Հայաստանի վրա Իրանում միջուկային ծրագրի շուրջ ստեղծված իրավիճակը: Ինչպիսի՞ն եք տեսնում այս հարցի հանգուցալուծումը:**

Եթե Իրանի նկատմամբ կիրառվեն տնտեսական պատժամիջոցներ, բնա կան է, դա բացասաբար կազդի նաև Հայաստանի վրա: Այնպես որ Իրանում ամեն բարդացում ծանր կանդրադառնա Հայաստանի տնտեսական և սոցիա լական վիճակի վրա: Սակայն ես չեմ կարծում, թե միջուկային ծրագրի հարցում Իրանը հետագայում ևս կպահպանի այդ դիրքորոշումը: Բանակցող կողմերն ընդհանուր լեզու կգտնեն: Հնարավոր է, որ Իրանը գնա որոշակի զիջումների: Ժամանակը ցույց կտա:

**– Ճի՞շտ եք համարում Հայաստանի միացումը ՆԱՏՕ-ի հետ անհատա կան գործակցության ծրագրին (IPAP)՝ հաշվի առնելով Հայաստանի անդամակցությունը անվտանգության այլ կառույցի` Հավաքական ան վտանգության պայմանագրի կազմակերպությանը.**

Հայաստանի համագործակցությունը ՆԱՏՕ-ի և այլ կազմակերպություն ների հետ ճիշտ եմ համարում: Հայաստանը համագործակցում է տարբեր կազմակերպությունների հետ այնքանով, որքանով որ դա բխում է իր շահե րից: Միևնույն ժամանակ պետք է հիշել Կովկասի տարածքում երրորդ երկրների զորքերի տեղակայման հնարավորությունը բացառելու մասին:

**– Ներկայացրեք, թե ինչպիսին եք տեսնում Կարս – Ախալքալաք – Թբի-լիսի երկաթգիծը Հայաստանի ներկայումս գոյություն ունեցող Կարս – Գյումրի – Թբիլիսի երկաթգծի շրջանցումով կառուցելու հեռանկարները:**

Այս հարցում ես որևէ մեկին չեմ մեղադրում: Ուղղակի Հայաստանին անհրաժեշտ է արմատապես վերանայել իր արտաքին քաղաքականությունը, որն այսօր միանշանակ կաղում է:

**– Ինչպե՞ս եք վերաբերվում ԼՂՀ-ում հանրաքվեի դիմաց Լեռնային Ղա րաբաղի շուրջ գտնվող տարածքների վերադարձի մասին վերջերս հաճախ հնչող գաղափարին և ինչպիսի՞ն եք, ընդհանուր առմամբ, տեսնում Լեռնա յին Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացը:**

www.a-pdf.com



Չեմ կարծում, որ հարցը նման կերպ է դրված` տարածքներ հանրաքվեի դիմաց. Սակայն փաստ է՝ որ հանուն խաղաղության մենք պետք է գնանք ինչ-ինչ զիջումների Եթե մենք ցանկանում ենք, որ հարցը լուծվի գլոբալ առումով պարզ է դառնում՝ որ անհրաժեշտ է կրկնական հանրաքվե Հարցն այն է՝ թե Լեռնային Ղարաբաղի շուրջ հատկապես ո՞ր տարածքների մասին է խոսքը Սա` առաջին հերթին: Երկրորդ Լեռնային Ղարաբաղի սահմանները պետք է նորովի գծվեն Այսօրվա Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը նույնը չէ ինչ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) այն ժամանակվա ԼՂՀ Շահումյանի շրջանը գտնվում է Ադրբեջանի վերահսկողության ներքո Եվ հասկանալի չէ՝ թե հատկապես ո՞ր տարածքը կներառի Լեռնային Ղարաբաղ միավորը. այնպես որ անհրաժեշտ է նոր քարտեզ Բացի այդ` պետք է արծար ծել Խորհրդային Ադրբեջանի հայ բնակչության հարցը՝ որը հիմնախնդրի պատճառով դարձավ փախստական Մենք պատասխանատո՞ւ ենք նրա համար Եթե մենք այսօր խոսում ենք մարդու, նրա ազատության և իրավունք ների մասին՝ ապա պարտավոր ենք մտածել այդ 400 հազարանոց բնակչու թյան մասին և բոլոր կարբերակների պարագայում գտնել լուծում նրանց հարցին Երբ միակողմանիորեն դրվում է ներքին տեղահանված ադրբեջանցի ների իրենց տուն վերադարձնելու հարցը՝ ապա ինքնաբերաբար և առավել ևս պետք է դրվի նաև Ադրբեջանից բռնագաղթած հայ փախստականների հարցը Ամեն դեպքում, խնդրի կարգավորման ճանապարհին առաջին քայլը փախստականների և տեղահանվածների վերադարձն է Դա ընդհանրապես լավ մոդել է բոլոր հակամարտությունների համար. Դրանից հետո, եթե կողմե րի միջև առաջանան վստահություն՝ փոխըմբռնում՝ ապա կարելի է մտածել նաև հանրաքվեի մասին Դա տեղի կունենա 5՝ 10՝ թե 15 տարի հետո, չգիտեմ Իսկ այն, որ դրվում է տարածքների վերադարձի հարցը հանրաքվեի դիմաց համարում եմ սխալ: Բացի այդ՝ մեզ համար, Լեռնային Ղարաբաղի՝ որպես հակամարտող կողմերից մեկի՝ համար՝ անընդունելի է որևէ երրորդ պետու թյան ռազմական ներկայությունը

**– Ի՞նչ զարգացումներ կարելի է ակնկալել Հայաստանի ներքին քաղաքական դաշտում` հաշվի առնելով մոտեցող 2007 թվականի ԱԺ ընտրու թյունները: Ինչպե՞ս եք գնահատում ընդդիմության գործողությունները, արդյո՞ք նա ունի ընտրություններում հաջողության հասնելու հնարավորու թյուններ·**

– Այսօր բուն իշխանության ներսում՝ իշխանական կուսակցությունների կո ալիցիայում կարելի է հանդիպել ավելի ընդդիմադիր տրամադրությունների քան՝ բուն ընդդիմությունում: Խոսել ընդդիմադիր գործչի մասին, ինչպես մեկի ով ընդամենը հանրահավաքներ է կազմակերպում՝ համարում եմ սխալ: Չեմ կարծում՝ որ ընդդիմադիր լինելը միայն դա է Ընդդիմադիր և իշխանամետ ո ժերին անհրաժեշտ է վերախմբավորվել Ոմանց համար դա՝ իհարկե՝ ձեռնտու չի լինի Վերախմբավորումների գործընթացը դեռ երկար կտևի՝ նվազագույնը մինչև մարտ, դրանից հետո պարզ կդառնա, թե որ ուժերը ում հետ են, ով` մի այնակ՝ ով` դաշինք կազմած, կամ էլ կոալիցիայի հետ՝ Ժամանակը ցույց կտա սակայն՝ որ վերախմբավորումներն անհրաժեշտ են Եթե ընդդիմությունը չհա

www.a-pdf.com



մագործակցի այլ ուժերի հետ և շարունակի կարգավորել հարցերն իր ներսում ապա, բնականաբար նա ոչ մի նպատակի չի հասնի կպահպանի իր ներկայիս կարգավիճակը և չի կարողանա վաստակել շատ ձայներ խորհրդարանում Անհրաժեշտ է զործել ամբողջ քաղաքական դաշտի մասշտաբով հասկանալ ով ում բարեկամն է և ինչ հարցեր է լուծում

Ընդդիմությունը պետք է հանդես գա որոշակի ծրագրով գաղափարներով և մասնակցի վերախմբավորումներին Իշխանությունում այսօր տեղի են ունենում որոշակի վերադասավորումներ իսկ ընդդիմությունն այս փուլը մ իմ կարծիքով գտնվում է դիտորդի դերում

**– Դուք կմասնակցեք խորհրդարանական ընտրություններին միայնա՞կ թե այնուամենայնիվ, կկազմեք դաշինք կամ կոալիցիա**

Քանի որ ‹Դաշինքը» նորաստեղծ կուսակցություն է, մենք ցանկանում ենք փորձել մեր անմիջական ուժերն ընտրություններում· Այդ իսկ պատճառով որևէ կոալիցիա կամ դաշինք չենք ստեղծելու· Մեր կուսակցությունը հանդես է գալիս ելնելով իր հնարավորություններից ծրագրերից Մենք կհամագոր ծակցենք այն կուսակցությունների հետ որոնք ակտիվորեն զբաղվում են քաղաքականությամբ և որոնց ծրագրերի հետ մենք էական տարաձայնու թյուններ չունենք

**– Դուք մտադի ր եք առաջադրելու Ձեր թեկնածությունը ՀՀ նախագահի պաշտոնում**

Ոչ. Ես նման ցանկություն չունեմ, ցանկություն չունեմ նաև առաջադրվե լու խորհրդարանի նախագահի պաշտոնում· Ես հրաշալի գիտեմ իմ տեղն ո դերը և ինչ հարցեր եմ վճռելու

**– Ձեր՝ բանտարգելությունից ազատվելուց հետո Դուք շարունակեցիք Ձեր քաղաքական գործունեությունը ոչ թե Լեռնային Ղարաբաղում, այլ Հայաստանում Ինչի՞ հետ է դա կապված**

Ես երբեք չեմ դիտել Լեռնային Ղարաբաղը որպես առանձին մաս: Ժամա նակին ես սկսել եմ իմ գործունեությունը Հայաստանում, և այն ժամանակ ինձ որևէ մեկը նման հարց չի տվել Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը մի պե տություն են Ինձ և բնակչության մեծ մասին հասկանալի է թե ինչ նպատակ է իմ առջև դրված Իսկ ի՞նչ կարող եմ անել ես Լեռնային Ղարաբաղում Բոլոր խնդիրները լուծվում են Հայաստանում Երևանում·

## ՔԻՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԵԼՆ ԱՆԻՄԱՍՏ Է ՔԱՆԻ ԴԵՌ ԱԴՐԲԵ ՋԱՆԸ ԽՈՍՈՒՄ Է ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ԼԵԶՎՈՎ

Հարցազրույցը Լիլիթ Պողոսյանի
‹Հայոց աշխարհ› 14 մարտի 2006թ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

**Քոչարյան-Ալիև բանակցությունների վերջին ռաունդից հետո ով չի ծուլանում՝ Ռամբույեի հանդիպման վարիացիաներով մտավարժանքներ է**

www.a-pdf.com



**անում Մինչդեռ Արցախյան ազատամարտի հրամանատարները հաղթանակն արարողները, չեն շտապում հանդես գալ հայտարարություններով Առավել ևս ամենագետի դիրքերից դատել ու դատապարտել հայկական կողմի «պարտվողական» վիճակը**

**Հետաքրքրական է՝ բանակցային գործընթացի արդի փուլը ինչպե՞ս է գնահատում ԼՂՀ Պաշտպանության բանակի նախկին հրամանատարը Սպոըն՝ «Դաշինք կուսակցության նախագահ ՍԱՄՎԵԼ ԲԱԲԱՅԱՆԻ տեսակետները:**

Չեմ համարում թե Ռամբույեում ինչ որ արտառոց բան է տեղի ունեցել կամ բանակցային գործընթացը մտել է փակուղի Մեծ ակնկալիք պետք չէր ունենալ· Ադրբեջանի ղեկավարները դեռ մինչև Ռամբույեի հանդիպումը միան շանակ հայտարարում էին, որ Ղարաբաղը Ադրբեջանի մասն է և 100 տարի հե տո էլ Ադրբեջանի մասն է լինելու Այս պարագայում ակնկալել, թե Ռամբույեում հիմնախնդիրը կարող է լուծվել կամ կարգավորման հիմնական սկզբունքների շուրջ համաձայնություն ձեռք կբերվի ուղղակի լուրջ չէր լինի

Ավելին այս ձևաչափով հիմնախնդիրն ընդհանրապես չի լուծվի և դրա համար շատ պատճառներ կան Սկսենք նրանից որ Ղարաբաղը, որպես հակամարտության սուբյեկտ ըստ էության չի մասնակցում բանակցություն ներին

**– Ադրբեջանը, ինչպես հայտնի է կտրականապես հրաժարվում է բանակցել Ղարաբաղի հետ Այս պայմաններում Ղարաբաղի լիարժեք մասնակցությունը պնդելը չէ՞ր նշանակի կանխավ փակուղի մտցնել բա նակցային գործընթացը:**

Իմ կարծիքով միջնորդներն առաջին հերթին պետք է Ղարաբաղի ղեկա վարության հետ փորձեն համաձայնեցնել հիմնախնդրի լուծման մեխանիզմ ները և միայն դրանից հետո բանակցեն Հայաստանի ու Ադրբեջանի հետ· Ի վերջո սա նախ և առաջ Ղարաբաղի հարցն է և մինչև ԼՂՀ ն չտա իր համա ձայնությունը վերջնական կարգավորման մասին խոսելն ուղղակի անիմաստ կլինի

Բայց սա հարցի միայն մի կողմն է Բուն խնդիրն այն չէ թե ով է բա նակցում ադրբեջանական կողմի հետ Հայաստա՞նը թե՞ Ղարաբաղը Մի կողմ թողնենք նաև որ Ադրբեջանն այսօր ընդհանրապես պատրաստ չէ որևէ փոխզիջման Խնդիրը հետևյալն է Ղարաբաղը և Հայաստանը գոնե միմյանց հետ հստակեցրե՞լ են զիջումների փաթեթը Պայմանավորվե՞լ են որն է այն առավելագույն սահմանը որից այն կողմ գնալը կնշանակեր հարցականի տակ դնել մեր անվտանգությունն այս տարածաշրջանում

Չկա միասնական ծրագիր՝ մոտեցումների ընդհանուր փաթեթ որի շրջա նակում հայկական կողմը պետք է բանակցություններ վարի Ադրբեջանի հետ անկախ նրանից բանակցողը Հայաստա՞նն է թե՞ Ղարաբաղը Քանի դեռ այդ փաթեթը չկա միշտ կարող է այնպիսի իրավիճակ ստեղծվել, որ Հայաստանը որպես բանակցող կողմ Ադրբեջանի հետ հասնի ինչ որ համաձայնության իսկ Ղա րաբաղի ղեկավարությունը չհամաձայնի կամ պատրաստ չլինի իր վրա վերց նելու այդ պատասխանատվությունը

www.a-pdf.com



**– Այս տեսանկյունից արդարացվա՞ծ եք համարում ոմանց ակնկալիքնե րը, թե Հայաստանի և Ղարաբաղի միջև «արմատական» հակասությունները կարող են իշխանափոխության պատճառ դառնալ ինչպես 1998-ին Դուք նման իրավիճակ տեսնու՞մ եք**

Ոչ Որ հակասություններ կան դա փաստ է. Բայց չեմ կարծում, թե այդ հակասություններն այնքան խորն են որ կարող է իշխանափոխության խնդիր առաջանալ: ՀՀ նախագահը որպես անմիջական բանակցող կողմ փիրապետում է իրավիճակին և շատ լավ գիտի այն քայլերը որ պետք է ար վեն: Այնպես որ 98-ի սցենարը ես ուղղակի չեմ տեսնում: Որքան էլ բանակցու թյունները գաղտնի են ակնհայտ է որ Ռամբույեում նախագահներին առաջարկված փաստաթուղթը նախատեսում է Հայաստանի հետ ցամաքա յին կապը պահպանելով Ղարաբաղում նոր ինքնորոշման հանրաքվե անցկացնել

Հայկական կողմը պնդում է որ քանի դեռ ԼՂ կարգավիճակի հարցն առկախ է, Լաչինի և Քելբաջարի հարցն ընդհանրապես քննարկման առարկա չի կարող լինել· Ադրբեջանն առաջարկում է ազատել բոլոր տարածքները և դրանից հետո միայն՝ 15 20 տարի անց հանրաքվեով որոշել Ղարաբաղի կարգավիճակը: Փաստորեն Հայաստանը գնդակը տեղափոխել է Ադրբեջանի դաշտ միջնորդներին հասկացնելով որ Ադրբեջանը պատրաստ չէ կառուցո ղական քայլերի Հետևաբար հայկական կողմը այս խաղից» պարտված դուրս չի եկել

**– Բանակցային փակուղու դեպքում ԼՂՀ անկախությունը ճանաչելու վերաբերյալ Ռոբերտ Քոչարյանի հայտարարությունն իրավիճակին համ արժե՞ք էր, թե՞, ինչպես ոմանք «սարսափով» արձանագրում են, պատե րազմի մարտահրավեր էր՝ ուղղված Ադրբեջանին**

Չեմ համարում թե դա ռազմատենչ հայտարարություն էր Այն ինչի մասին ասում էր ՀՀ նախագահը պետք է դիտարկել զուտ քաղաքական հա մատեքստում: Վերջին հաշվով Ադրբեջանի հետ Քոչարյանն է բանակցում, և ինքը գիտի ինչ է ասում ու ինչի համար Նաև չմոռանանք որ 90 ականների սկզբին Հայաստանը ըստ էության զուտ կամավորական հիմունքներով էր ներգրավված պատերազմական գործողություններում և կաշկանդված էր լիարժեք մասնակցելու հայ ժողովրդի մի հատվածի պաշտպանական մար տերին. Իմ կարծիքով սա առաջին հերթին քաղաքական հայտարարություն էր որով ՀՀ նախագահը ևս մեկ անգամ փաստեց որ ռազմական գործողու թյունների վերսկսվելու դեպքում այդ իրավիճակն այլևս չի կրկնվի

**– Կարծում եք Ադրբեջանը խոսքից գործի՞ կանցնի· Այսինքն խնդիրը պատերազմի միջոցով լուծելու մասին հոխորտալից հայտարարություննե րից այն կողմ գնալու համարձակություն կունենա՞**

Նախ և առաջ դա կախված է մեր ռազմական գերապեւռւթյան հետագա քայլերից Այսինքն հայոց բանակը ինչքանո՞վ պատրաստ կլինի հակահար ված տալու Ադրբեջանին և, ցուցադրելով մեր ռազմական պոտենցիալը, զսպե լո հակառակորդին թույլ չտալու որ պատերազմը վերսկսվի Եվ քանի դեռ

www.a-pdf.com


խաղաղության համաձայնագիրը չի ստորագրվել Ադրբեջանի ղեկավարու թյանը այսպիսով միշտ զգոն կպահի Սա՝ առաջին Երկրորդ՝ ես այն կարծի քին չեմ, թե Ադրբեջանն այսօր ի վիճակի է պատերազմ սկսելու Ավելին ճանաչելով Ադրբեջանի ռազմական գերապետաչության պատասխանատունե րին ափսպված եմ հիշեցնելու որ այդ փարածքներն անձամբ պաշտպանու թյան նախարար Աբիևն է հանձնել: Այսինքն ղեկավարելով ռազմական գերա պեսչությունը չի կարողացել պաշտպանել Ադրբեջանի իրենց բնորոշմամբ «տարածքային ամբողջականությունը»:

Եվ վերջապես Ղարաբաղը ստեղծել է իր բուֆերային գոտին որտեղ 15–20 կմ շառավղով բնակելի տարածքներ չկան Ադրբեջանի կողմից այդ բու ֆերային գոտու հետ շփման գիծն ընդամենը 100 մետր է և ցանկացած ռազ մական գործողությունների դեպքում Ադրբեջանը 2–3 շաբաթում կես միլիո նից մեկ միլիոն նոր տեղահանված բնակչություն է ունենալու Ադրբեջանի ղե կավարությունը հրաշալի գիտակցում է՝ անկախ նրանից թե ԼՂՀ ն պատե րազմական գործողությունների առաջին փուլում իր հաշվին ինչպիսի հաջո ղություններ կգրանցի, մինչև Կուր գետն ընկած տարածքների ազգաբնակչու թյունը դառնալու է թիրախ Այնպես որ եթե Ադրբեջանն իսկապես պատե րազմը վերսկսելու ցանկություն ունի պետք է գոնե իրեն հաշիվ տա, որ պա նուլ տալու դեպքում ոչ միայն տարածքներ է կորցնելու այլև 3–3 5 միլիոն տե ղահանված բնակչություն է ունենալու

**– Ինչպե՞ս եք վերաբերվում Արտաշես Գեղամյանի հայտարարությա նը, թե ժողովուրդը իշխանություններից այնպես «վառված» ու բարոյա լքված է, որ պատերազմի վերսկսվելու դեպքում չի գնա պաշտպանելու հայրենիքը**

Պատերազմի հետ կապված ես իմ կարծիքն արդեն ասացի. Ինչ վերա բերում է Արտաշես Գեղամյանի կամ մյուս քաղաքական ուժերի հայտարա րություններին նրանց իրավունքն է մարդիկ ազատ են իրենց արտահայտու թյունների մեջ և ես չէի ուզենա գնահատականներ տալ կամ հանդես գալ դա տավորի դիրքերից

**– Ղարաբաղը ծախելու հարցում է լ են ազատ**

Բարեբախտաբար իրենք ոչ ծախող են ոչ առնող այնպես որ նրանցից շատ բան կախված չէ

**– Ներսի ու դրսի պատերազմի հայրենական և արտասահմանյան քարոզիչների կողմից համառորեն փորձեր են արվում համոզելու հանրու թյանը, թե Ադրբեջանի բանակը նավթադոլարների հաշվին կուժեղանա և մի գեղեցիկ օր Հայաստանի նկատմամբ գերազանցության կհասնի: Այս մասին ի՞նչ կասեք.**

Ադրբեջանը երբ կհարստանա ինչպես և ինչքանով կհզորացնի իր բանակը՝ թողնենք Ադրբեջանին: Մենք պետք է ամեն ինչ անենք բարելավե լու մեր տնտեսական քաղաքականությունը ճիշտ արտաքին քաղաքականու թյուն վարենք և ունենանք ապակենտրոնացված իշխանություն որպեսզի ազատ մրցակցություն ապահովելով զարգացնենք մեր տնտեսությունը

www.a-pdf.com



Այսինքն մեր ներսում լուծենք մեր ազգային խնդիրները, որպեսզի կարողա նանք դիմակայել արտաքին սպառնալիքներին Միայն այդպես մենք կարող ենք պահել Ղարաբաղը և փեր կանգնել մեր հաղթանակներին Կարծում եմ սա ուղղակի անվիճելի է

**– ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը վերջերս հայտարարեց թե Հայաստանը պետք է դուրս գա բանակցություններից և իր տեղը զիջի Ղարաբաղին Սա կարո՞ղ է առաջընթաց ապահովել բանակցային գործըն թացում**

Հայաստանն ընդհանրապես բանակցային գործընթացից դուրս մղելը իմ կարծիքով ճիշտ մոտեցում չէր լինի Միաժամանակ փաստ է որ Ղարա բաղը պետք է լինի լիարժեք բանակցող կողմ և ինքը լուծի իր հարցերը Ինչ վերաբերում է բուն հայտարարության համատեքստին սա ընդամենը ավելորդ անգամ փաստում է, որ Ղարաբաղի և Հայաստանի դիրքորոշումնե րը որոշ հարցերում համաձայնեցված չեն և անհրաժեշտ է միասնական ծրա գիր մշակել բանակցություններում հանդես գալ հստակ դիրքորոշումներով

Չէի ցանկանա գնահատական տալ ով է ճիշտ ով սխալ կամ Ղարա բաղը բանակցային գործընթացին երբ ինչպե՞ս և ինչ չափով պետք է մասնակցի Մանավանդ մանրամասներին լավատեղյակ չեմ Համենայն դեպս, միջազգային հանրությունը հստակ ամրագրել է որ Ղարաբաղը բանակցությունների սուբյեկտ է օբյեկտ չէ, և երբ էլ լինի որպես լիարժեք բանակցային կողմ պետք է մասնակցի այդ գործընթացին քանի որ առանց Ղարաբաղի կրկնում եմ որևէ հարց չի լուծվի

**– Պարոն Բաբայան, «փուլայինի› ջատագովները հանրությանը փորձում են ապակողմնորոշել պնդելով, թե այսօր առաջարկվող փաթե- թակն ավելի լավը չէ, ավելին ավելի վատն է, քան՝ 1998-ին մերժվածը, որով նախատեսվում էր առանց նախապայմանների, կարգավիճակի հարցը բացարձակապես առկախ թողնելով, հանձնել «գրավյալ» տարածքները Ձեր կարծիքով այդպե՞ս է**

Ես այլ բան կասեի Բանակցային գործընթացում մեր դիրքերը անշուշտ էապես բարելավվել են Բայց այն ինչ հայկական կողմին առաջարկվում է բավարարո՞ւմ է հակամարտության սուբյեկտին այսինքն Ղարաբաղին՝ Սա է խնդիրը Ինչ վերաբերում է 98-ի և այսօր քննարկվող առաջարկների «համե մատական վերլուծությանը» այսօր սեղանին դրված փաթեթակով տարած քային ամբողջականության սկզբունքը հավասարեցված է ինքնորոշման սկզբունքին և Ղարաբաղի ապագա կարգավիճակն այդ հարթության վրա է քննարկվում

Մինչդեռ 1997-ի փաթեթակով արդեն էն գլխից որոշված էր որ Ղարաբա ղը մնում է Ադրբեջանի կազմում այսինքն կարգավիճակի հարցն ընդհանրա պես չէր արծարծվում Մեկնաբանությունները կարծում եմ ավելորդ են

**– Այնուհանդերձ, այն, ինչ դրված է բանակցությունների սեղանին, Ձեզ համար ընդունելի՞ է**

Ո՛չ: «Դաշինքն ունի իր հստակ դիրքորոշումը Նախ պետք է լուծվի Ադրբեջանից բռնագաղթած շուրջ 400 հազար հայ փախստականների վերա

www.a-pdf.com



բնակեցման խնդիրը եթե իհարկե նրանք ցանկանում են վերադառնալ իրենց նախկին բնակության վայրերը կամ վերաբնակվել այն տարածքնե րում, որոնք մեր վերահսկողության տակ են գտնվում Նույն կերպ ադրբեջան ցիները պետք է հնարավորություն ունենան վերադառնալու իրենց նախկին բնակավայրերը եթե ուզում են· Այսինքն պետք է փոխադարձ վստահության քայլեր անել հետո գնալ կարգավիճակի վերջնական լուծմանը.

«Դաշինքի» դիրքորոշումը հետևյալն է հանուն խաղաղության զիջումներ պետք են և հաղթող կողմը պետք է պատրաստ լինի ինչ-որ քայլերի: Դա փաստ է: Բայց այդ զիջումները պետք է լինեն չափավոր և ոչ մի դեպքում չվտանգեն մեր պետության անվտանգությունը Հայկական կողմը հստակ երաշխիքներ պետք է ունենա որ վաղը նա մի «սովետ» չի փլուզվի և մենք չենք սկսի փնտրել, թե էլի ով մեզ անվտանգության երաշխիքներ կտա Սա է մեր մտահոգությունը Այսինքն հայկական կողմը պետք է հենվի իր ուժերի վրա և հայոց պետականության համար ռազմավարական տարածքները սակարկության առարկա չդարձնի.

Բայց քանի դեռ Ադրբեջանը խոսում է սպառնալիքների լեզվով զիջումնե րի մասին խոսելն ընդհանրապես անիմաստ է

## ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՓՈԽԶԻՋՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ»

‹Առավոտ› թերթ իրավական բաժին,
13 մայիսի 2006թ

**– Մայիսի 9-ը Շուշիի ազատագրման օրն է Լեռնային Ղարաբաղի անկախության կերտման ուղենիշը Շատերն են գնահատական տվել այդ օպերացիային, ոմանք նույնիսկ հաղթանակը վերագրելով մեկ-երկու անձի. Ինչպիսի՞ն է ԼՂՀ Պաշտպանության բանակի նախկին հրամանատա- րի վերաբերմունքն այդ տեսակետներին.**

Չգիտեմ՝ ինչած տեսակետերից որը նկատի ունեք բայց ակնհայտ է որ պատերազմի ողջ պատմությունը խեղաթյուրված է մասամբ գիտակցաբար թե ոչ կարևոր չէ. Ոմանք այն խեղաթյուրել են իրենց կարծիքով օգտակար գործ են արել, ինչ որ մարդկանցից հերոսի կերպար են ստեղծել այն աստիճա նի որ մի ամբողջ ռազմական գործողության հաջողություն կամ անհաջողու թյուն վերագրել են մի անձի սակայն պատմությունը կեղծիքներ չի ներում ժամանակի ընթացքում նա բոլորին իր անաչառ գնահատականներն է տալիս: Իրական պատմության հիմքում այսօր արխիվային գաղտնի փաստաթղթերն են որոնք կբացվեն 25 տարի անց. Ցավում եմ որ պատերազմի ու հաղթանակ ների հետ իրենց անունները կապում են նրանք ովքեր հարյուրավոր կիլոմետ րեր հեռու են գտնվել ռազմաճակատից, ովքեր երբեք չեն առել նույնիսկ վա ռոդի հոտը Արցախյան պատերազմի հաղթանակը ոչ թե որևէ նախարարի հրամանատարի սեփականությունն է այլ ողջ ժողովրդինը շարքային

www.a-pdf.com



զինվորինը, նրան պատերազմ ճանապարհած ու սպասումներով ապրած ծնողներինը: Մենք պարտավոր ենք հիշել ու խոնարհվել նրանց բոլորի առջև:

Ինչ վերաբերում է Շուշիի օպերացիային, ապա պետք է նշեմ, որ այն ազատագրել ենք փակփիկապես Ստեղծեցինք մի իրավիճակ, երբ հակառակորդը շրջափակման մեջ մնալու վտանգի առջև կանգնեց. Այդ պատճառով էլ հակառակորդը լքեց քաղաքը: Շրջափակման մեջ գցելու մարտավարությունը կիրառել ենք բոլոր մյուս օպերացիաների ժամանակ, ինչը հնարավորություն է ընձեռել ունենալու ավելի քիչ մարդկային կորուստներ.

**– Սակայն Քելբաջարում մարդկային կորուստները մեծ եղան**

Խնդիրն այն է, որ 1993-ին և 1994 ին մշակվել ու իրականացվել է Քելբաջարի երկու գործողություն 1993-ին, երբ որոշ հաջողություններ ունեինք Մարտակերտում, հակառակորդն էլ սպասում էր, որ դրանք կզարգացնենք հենց այդ ուղղությամբ: Ռազմական գործողությունների ուղղությունը տեղափոխեցինք Լաչին-Քելբաջար Պատերազմի ժամանակ պետք է կարողանաս թելադրել և հակառակորդը չպետք է զգա կամ հասկանա, թե որտեղ է լինելու հաջորդ հարվածը Պատերազմի օրենքն է, ռազմադաշտում հաղթանակում է իր կամքը թելադրողը Արդյունքում հաջողվեց վերցնել Քելբաջարը, որտեղ տեղակայվեցին ՀՀ պաշտպանության նախարարության ուղիղ ենթակայության տակ գտնվող զորքերը, քանի որ իմ ենթակայության տակ գտնվող զորքը ես պետք է տեղափոխեի այլ ուղղությամբ 1993-ի դեկտեմբերին սկսվեց Ադրբեջանի լայնածավալ հարձակումը և Քելբաջարում գտնվող հայկական զորքը նահանջեց նաև սարսափելի սառնամանիքի պատճառով, և հենց այդ ժամանակ զգալի կորուստներ ունեցանք Իմ ուժերը կրկին տեղափոխեցի Քելբաջար, որի աշխարհագրական դիրքը շատ կարևոր է ինչպես Արցախի, այնպես էլ Հայաստանի համար Հենց այդ պատճառով եմ միշտ շեշտում Քելբաջարի կարևորությունը և այդ մասով զիջումների անհնարինությունը. 1994-ի օպերացիայի ժամանակ ցավոք, շուրջ երկու տասնյակ զոհ տվեցինք: Սակայն հաշվի առնելով բարդությունները՝ մեր կորուստները կարող էին ավելին լինել Հակառակորդի ուժերի մի մասին գերի վերցրինք, մյուս մասը ձյան մեջ մնաց կամ փախավ Քելբաջարում դիրքավորված ադրբեջանական այդ բրիգադը 2500 ից ավելի զինվոր ուներ, թե դրանցից քանիսն են փրկվել՝ չեմ կարող ասել:

**– Ըստ Ձեզ ի՞նչ սխալներ կամ բացթողումներ եղան, որոնք, թեկուզ անփորձ լինելու պատճառով, ունեցավ մեր բանակը**

Հիմնական սխալը, կարծում եմ, բանակինը չէ, այլ մեր պետությանն է Խաղաղության թանկագին պարիները մենք սխալ օգտագործեցինք: Բուն հակամարտության լուծումը պետք է սկսել պատերազմի հետևանքները վերացնելուց Իսկ գլխավոր հետևանքը շուրջ 400 000 հայ փախստականների և մոտ 300 000 ադրբեջանցի տեղահանվածների խնդիրն է Հասկանալի է, որ խաղաղության պայմանագիրը չկնքած, հնարավոր չէր լուծել այդ խնդիրն ամբողջությամբ Բայց գոնե հայ փախստականների մասով մենք կարող էինք ճիշտ քաղաքականություն վարել Պետք էր այդ մարդկանց խնդիրները լու

www.a-pdf.com



ծել, վերաբնակեցնել նրանց ազատագրված տարածքներում որովհետև հաս կանալի է որ փախստականներին չենք կարող համոզել թե ապագայում Բաքվում իրենց սպասում է անվտանգ կյանք: Ահա սա եմ համարում մեր ամենամեծ բացթողումը Իհարկե, սա չի նշանակում, թե այլ սխալներ տեղ չեն գտել· Ժամանակը սխալ է օգտագործված թե՛ քարոզչական թե դիվանա գիտական թե տնտեսական առումներով·

**– Պարոն Բաբայան, համամի՞տ եք տեսակետին որ մենք դեռևս պա տերազմական իրավիճակում ենք գտնվում**

Իհարկե Քանի դեռ չկա խաղաղության պայմանագիրը պատերազմի վերսկսման հավանականությունը մեծ է· Ես մի վտանգ եմ տեսնում բոլորն անհամբեր սպասում են հաշտությանը և այնպիսի տպավորություն կա որ համաձայնագրից հետո բոլոր սպառնալիքները կվերանան Մերի նման պե տությունը անկախ նրանից գտնվո՞ւմ է պատերազմի մեջ, թե՞ ոչ, միշտ պետք է պատրաստ լինի իրադարձությունների անսպասելի զարգացումներին Իսկ դրա համար զինված ուժերը միշտ պետք է պատշաճ մակարդակի լինեն

**– Կարելի է ենթադրել, որ Ձեզ չի գոհացնում Հայաստանի զինված ու ժերի պատրաստության ներկա վիճակը**

Զինված ուժերի պատրաստության իրական մակարդակը երևում է ռազ մական գործողությունների ժամանակ Մեր հրամանատարությունը միշտ պետք է ջանա ցուցադրել ողջ կարողությունը որպեսզի թշնամին պատերազ մը վերսկսելու ախորժակ չունենա Ինչ վերաբերում է իմ գնահատականին մամուլն այն տեղը չէ, որտեղ հարկ է քննարկել բանակային խնդիրները

**– Ինչպե՞ս եք տեսնում հակամարտության կարգավորումը և հնարա վոր համարո՞ւմ եք դրա լուծումն այս փուլում**

Արցախի հիմնախնդրի լուծումը հնարավոր է միայն հակամարտող կող մերի ժողովրդավարացման փոխզիջման դեպքում Կարգավորման հիմքում պետք է ընկած լինեն որևէ միջազգային հեղինակավոր կազմակերպության հովանու ներքո Արցախի միջանկյալ ինքնիշխանության փախստականների և ներքին տեղահանված անձանց կամավոր վերաբնակման Արցախում տնտե սության զարգացման նախադրյալներ ստեղծելու և Արցախի կարգավիճակը նոր հանրաքվեի միջոցով որոշելու սկզբունքները Լուրջ չեմ համարում խնդրի կարգավորման առումով որևէ ժամկետի նշումը Առավել կարևորում եմ որ հայկական կողմը բանակցություններում հանդես գա մեկ միասնական տեսա կետով. Մինչդեռ տարբեր գործիչների հայտարարություններից պարզ է դառնում որ կան հակասություններ Ստեփանակերտի և Երևանի միջև: Պետք է ընդունել մի ճշմարտություն որ առանց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամքը հաշվի առնելու հնարավոր չէ վերջնական հաշտության հասնել.

**– Պարոն Բաբայան քաղաքականությամբ զբաղվելու Ձեր ներկայաց րած հայտը որոշ քաղաքական գործիչների, մեղմ ասած, դուր չեկավ Ոմանք անթույլատրելի համարեցին զինվորականների հարելը քաղաքա- կանությանը**

www.a-pdf.com



Եթե խոսք լիներ գործող զինվորականի մասին կհամաձայնեի, բայց քանի որ ես այլևս գործող հրամանատար չեմ, հետևաբար՝ բոլոր այդ մարդ կանց նման հայտարարությունները համարում եմ վախի հետևանք Բոլորն էլ հասկանում են որ քաղաքական դաշտ մտնելով մենք խնդիրներ ենք արդեն իսկ ստեղծել և դեռ կստեղծենք շատերի համար

**– Բայց «Դաշինքն» ակտիվ մասնակցություն չի ունենում քաղաքական գործընթացներին Ինչո՞վ դա բացատրել, և արդյո՞ք նման քաղաքակա նությունը Ձեզ հաջողություն կբերի**

Ակտիվության Ձեր գնահատականին մի փոքր համաձայն չեմ Նայած թե ինչ եք պատկերացնում ակտիվություն ասելով Եթե նկատի ունեք առա վել հաճախ տարբեր հեռուստաեթերներում երևալը, ապա դա իմ ոճը չէ Կուսակցությունը որդեգրել է քաղաքականություն առավել ակտիվ աշխա տելու ժողովրդի հետ և ոչ թե հեռուստաաստղ դառնալու: Մենք դեռևս մեր հիմնադիր համագումարում հայտարարել ենք որ ցանկանում ենք դաշինք կազմել ժողովրդի հետ ինչին էլ ներկայում նպատակաուղղված են մեր ջան քերը Հենց այդ նպատակով են աշխատում շուրջ վեց տասնյակ տարածքա յին կազմակերպություններ Հայաստանի ողջ տարածքում և մարդկանց փոր ձում ենք համախմբել կուսակցության ծրագրային այն գաղափարների շուրջ որոնք կյանքի կոչելով՝ հնարավոր կլինի ներկա իրավիճակի փոփոխությու նը Իհարկե ես ‹եմ թերագնահատում ԶԼՄ ների դերը, և ապրիճանաբար մենք կակտիվացնենք նաև աշխատանքներն այդ ուղղությամբ բայց գլխա վորը մեզ համար կշարունակեն մնալ անմիջական շփումները բնակչության հետ Թե ո՞ր չափով կունենանք հաջողություն ցույց կտա ժամանակը

**– Քաղաքական ո՞ր ուժերին եք տեսնում ապագա խորհրդարանում և ինչպե՞ս եք պատրաստվում պայքարելու ընտրակեղծիքների դեմ, որոնց մասին այդքան շատ սիրում են խոսել մեր քաղաքական գործիչները**

Կան քաղաքական գործիչներ, ովքեր շատ են սիրում կանխատեսումներ անել Ձեր հարցը երևի նրանց է ուղղված· Ես տեսնում եմ ապագա խորհր դարանում միայն այն ուժերին ում կվստահի ընտրողը Պայքարն անշուշտ լինելու է շատ ավելի դժվար բոլոր առումներով կարելի է ասել որ քարոզ արշավն արդեն սկսված է իսկ այդ պայքարում կշահի այն քաղաքական ուժը որը ճիշտ մարտավորություն կընտրի Ինչ վերաբերում է ընտրակեղ ծիքներին ապա կոչ եմ անում բոլոր քաղաքական ուժերին գոնե մեկ անգամ հանդես բերել պատասխանատվություն ու քաջություն տեր կանգնելու սեփական քվեներին: Ինչ վերաբերում է մեզ ապա ամեն ոտնձգություն կամ մեր դեմ ուղղված կեղծիք ստանալու է արժանի հակահարված Սրանում կարող են համոզված լինել բոլորը

**– 2000 թվականի հայտնի դեպքերից, ապա նաև Համլետ Ղուշչյանի տեսաերիզի ցուցադրումից հետո Ձեր անձի նկատմամբ հակասական վերա բերմունք ձևավորվեց: Եթե նկատի ունենանք, որ «Դաշինք» կուսակցությու նը դեռևս այդքան ճանաչում չունի, ընտրություններն էլ սարերի հետևում չեն, ինչպե՞ս եք գնահատում Ձեր հնարավորությունները**

www.a-pdf.com



Մեր հնարավորությունների մասին արդեն նշեցի ամեն ինչ կախված է
ժողովրդի ընտրությունից Ինչ վերաբերում է հիշատակված պեսաերիզին
ապա պետք է նշեմ որ կգա ժամանակը և ինչպես պեսաերիզի հեղինակնե
րը, այնպես էլ պապլիրապուներն առնվազն ներողություն կխնդրեն իսկ եթե
ոչ հարցը լուծում կստանա օրենքի շրջանակներում

## ԲԱԲԱՅԱՆԸ ԺԱՆԴԱՐՄ ՉԷ ԱՅԼ ԱՋԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽԻՉ

‹Ա1+» 1 նոյեմբերի 2007թ

«Բաբայանը որևէ մեկին չի պաշտպանում Բաբայանն ո ղղակի ուզում է
որ իրեն «բոբոյի» պեղ չդնեն Բաբայանը ժանդարմ չէր որ Ղարաբաղից բոլո
րին քշեր· Հիմա էլ փորձում են վիճակը սրել և ինձ օգտագործել Սերժ Սար
գսյանի դեմ» – «Ա1+»-ի հետ զրույցում մեկնաբանելով իր և Սերժ Սարգսյա
նի հարաբերությունները՝ ասել է ԼՂՀ Պաշտպանության բանակի նախկին
հրամանատար «Դաշինք» կուսակցության նախագահ Սամվել Բաբայանը
Շատ հոյակապ նորմալ հարաբերություններ ունեմ Սերժ Սարգսյանի
հետ գաղափարական արտաքին քաղաքական կամ այլ հարցերում կարող է
իրար չհասկանանք բայց թշնամանք չկա»,– ասաց Սամվել Բաբայանը Նա
խորհուրդ տվեց փաստերով գնահատականներ հնչեցնել իր և Սերժ Սար
գսյանի հարաբերությունների մասին «Կան փաստեր փաստաթղթեր՝ սևով
սպիտակի վրա գրված՝ հրաժարական հրամանագիր և այլն. Եվ, ի վերջո կա
1997 թվականին Վազգեն Սարգսյանի ելույթը որում ասում է «Ես ինքս եմ
գնացել Սերժ Սարգսյանին խնդրել, բերել» – իր և Սարգսյանի միջև անընդ
հատ արծարծվող հակասություններն է հերքում Սամվել Բաբայանը Հա
րաբերությունների սրում որևիցե ժամանակ չի եղել արդեն 17–18 տարուց
ավել մոտիկից ճանաչում եմ Սերժ Սարգսյանին և որևիցե անգամ բարձր
ձայնով իրար հետ խոսած չկանք»:

Մեր հարցին թե արդյո՞ք այսօր իրենք հանդիպո մ են Դաշինք› կու
սակցության նախագահը պատասխանեց «Հանդիպումներ լինում են բայց
ոչ շատ հաճախ ասենք 3 ամիսը մեկ Քոչարյանի հետ վերջին 2 տարում մեկ
անգամ եմ հանդիպել»:

Ի դեպ Սամվել Բաբայանի համար փոքր ինչ անհասկանալի է մեր քաղա
քական դաշտում ընդդիմության և իշխանության գործածույթը ըստ նրա
այս բևեռների դասական իմաստը Հայաստանում խեղաթյուրված է. «Հայաս
տանում իշխանության և ընդդիմության տարանջատումն այսօր պայմանա
վորված է միայն մեկի իշխանություն ունենալով մյուսի չունենալով Վերջ»
Սամվել Բաբայանը նկատում է որ ինքը դատավոր չէ, որ ասի իշխանությու
նը վատն է:

‹Դատավորը ժողովուրդն է որն ընտրությունների միջոցով արտահայտում
է իր կարծիքը եթե չի ընդունում ընտրության արդյունքը ըմբոստանում է· Չըմ

www.a-pdf.com



բոստացավ Ուրեմն բոլորին ձեռք է տալիս այս վիճակը, ավելորդ է այդ մասին խոսելը: Ընդդիմադիր գործիչները, երբ տեսնում են ղեկավարներին երկու ձեռքով են բարև տալիս երկու անգամ էլ խոնարհվում են բայց միևնույնն է իշխանությունը աշխատանք չի առաջարկում, դրա համար ասում են՝ ընդդիմություն ենք» ընդդիմության հիմնական մասին բնութագրում է Սամվել Բաբայանը: «Ես ունեմ իմ հայացքները, որոնք ձևավորվել են 1997–1999 թթ.. Պետք է դատել հայացքներով ու գաղափարներով: Եթե աշխարհայացքդ համընկնում է իշխանության հետ ուրեմն իշխանություն ես, եթե չի համընկնում. ու դրա մասին բարձրաձայն ասում ես ուրեմն ընդդիմություն ես»,– ասում է նա

Սամվել Բաբայանը գտնում է որ Հայաստանում խորհրդարանական ընտրություններով իշխանության հարցը, մեծ հաշվով լուծված է թեև չի թերագնահատում նաև նախագահական ընտրությունները. «Նախագահական ընտրություններում դեռ կկողմնորոշվենք Այդ առումով հետևում ենք բոլոր գործընթացներին Սակայն արդեն կա պառլամենտական մեծամասնություն որն էլ որոշում է կառավարության ծրագրերը, քաղաքականությունը. Ուստի մեծ ակնկալիքներ նախագահական ընտրություններից առանձնապես չունենք› ,– նախագահական ընտրությունների մասին իրենց պատկերացումները բացատրեց Սամվել Բաբայանը

‹Ա1+› ի հետ զրույցում ԼՂՀ բանակի նախկին հրամանատարը խոսեց այն ուժերից ովքեր խոսում են ազատականությունից առանց հասկանալու դրա իմաստը ‹ Ես այսպես եմ հասկանում ամեն մի մարդու մեջ կա չարիք և այդ չարիքը սահմանափակվում է օրենքներով Նույն օրենքներն էլ օժանդակում են մարդուն դրսևորելու իր դրական լիցքերը՝ հանուն իր պետականության Այ, սրանով սկսվում և ավարտվում է ազատականությունը Ազատականությունը վայնասուն բարձրացնելը գոռալն ու հայհոյելը չէ. Ազատականությունը կատարյալ պարզեցված օրենսդրական դաշտ ստեղծելն է օրենքներ առանց սողանցքերի, առանց երկիմաստության. Օրենքներ որոնք հնարավորություն չեն տալու չինովնիկներին իշխան զգալու. Օրենքներ, որոնք սահմանափակելու են նույն չինովնիկների դերակատարությունն ընդհանրապես: Այ սա է իմ պատկերացրած ազատականությունը

## ԲԱԲԱՅԱՆ – ՏԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵՌ ԱՌԿԱ ԵՆ

‹Ա1+› 5 նոյեմբերի 2007թ

«ՀՌԱԿ ին ‹Դաշինքի› միաձուլումը այլևս իրողություն է և դրան խոչընդոտելու, խանգարելու բոլոր փորձերն անիմաստ են չեն ստացվելու» Ա1+»-ի հետ զրույցում ասաց ‹Դաշինք› կուսակցության նախագահ Սամվել Բաբայանը: ‹ Սա բանակցային փուլ չէ արդեն վերջացած են բոլոր խնդիրները որ որևէ մեկից կախված են ոչ էլ հարց կա միաձուլումը կատարված է

www.a-pdf.com



ուղղակի համագումարի ենք սպասում որտեղ մի հարց է լինելու միաձուլվել› նշեց նա

Ընդ որում ըստ Բաբայանի, ոչ միայն կուսակցականներն են միավորվելու այլև ծրագրերն ու կանոնադրությունները

Երբ նրան հիշեցրինք Հարություն Առաքելյանի այն միտքը թե 122 պարվա կուսակցությունը չի պապրաստվում կանոնադրություն ու ծրագիր փոխելու պարոն Բաբայանը պատասխանեց «ՀՌԱԿ-ի կանոնադրության ծրագրի մեջ կամփոփվեն մեր բոլոր ազատական գաղափարները, որոնք ի մի կբերենք Մեզ հետաքրքրում է գաղափարական թիմ ունենալը Իսկ ինչ վերաբերում է Առաքելյանի ասածին ապա ոչ ինքը ոչ ես չենք պապրաստվում փոխելու ծրագիրը կամ կանոնադրությունը: Դա անում է համագումարը Հրավիրվելու է համագումար հին կանոնադրությամբ համագումարում քննարկվելու են ինչ ինչ կետեր որից հետո ծրագիրն ու կանոնադրությունը կընդունվեն»:

Սամվել Բաբայանը պատմեց, որ այդ միավորման գաղափարը ծնվել է դեռ խորհրդարանական ընտրություններից առաջ «Մենք միացանք ռամկավարների հետ, փորձեցինք խորհրդարան անցնել Բազեյան Ալբերտը պետք է իր կուսակցությամբ միավորվեր և պառլամենտ միասին գնայինք բայց վերջին պահին իրենց քաղխորհրդի ներքին որոշմամբ վճռեցին որ միանում են Ստեփան Դեմիրճյանին»:

Բաբայանն այդտեղ որևէ վատ բան չի տեսել «Ես դրան նորմալ էի նայում քանի որ ընդհանրապես արդեն իսկ պարզ էր որ պառլամենտում ընդդիմությունը ոչինչ չի կարող անել քանի որ գաղափարական երեք միավոր ստեղծել ու համախմբել այդ երեք միավորը չստացվեց: Հասարակությանը չհաջողվեց ուղղորդել և տալ հնարավորություն ընտրություն կատարելու»: Ըստ նրա խորհրդարանի ընտրություններից հետո սկսել են լուրջ բանակցել ծրագրային գաղափարական կանոնադրության բոլոր հարցերի շուրջ և եկել են համաձայնության

Սամվել Բաբայանը համոզված է որ Բազեյանի ղեկավարած «Ազգային վերածնունդում» լուրջ խնդիրներ չկան «Եթե կա կուսակցությունում պրոբլեմ (ամեն կուսակցությունում կա պրոբլեմ) համագումարում կլուծվի Կինի իրենց համագումարը կտեսնենք եթե չուզողներն այդքան շատ են ոչ մեկն իրենց չի ստիպում ո՛չ լուծարվել ոչ միաձուլվել Արդեն Բազեյանը կարող է իր համակիրների հետ որոշել միանալ մյուս թևին Բայց առայժմ այդ հարցը չկա»:

Մեր հարցին թե հնարավո՞ր է որ Սամվել Բաբայանի երբեմնի դաշնակից ՍԻՄ ը ևս միավորվի ՀՌԱԿ ին պարոն Բաբայանն ասաց «Երբ ՍԻՄ ը տրոհվեց հիշում եք որ ինձ մեղադրում էին, որ ես ինչ որ մասնակցություն եմ ունեցել դա իրականությանը չէր համապատասխանում, դրանից հետո ես փորձեցի հարթել իրավիճակը, բայց այն ինչ պայմանավորվել էինք այդ սկզբունքները չեն պահպանվել, դրանից հետո ես չեմ խառնվում իրենց գործերին ու չեմ հանդիպել ոչ մի թևի ոչ մյուսի հետ›

www.a-pdf.com



Ի դեպ Սամվել Բաբայանը չբացառեց հնարավորությունը որ մինչև նախագահական ընտրություն ՀՌԱԿ-ին միավորումը չկայանա. «Կարող է դա լինել մինչև ընտրություններ, կարող է լինել ընտրություններից հետո բայց ես հակված եմ որ ամեն ինչ ընթանա նորմալ հունով և միաձուլումը ձևական բնույթ չկրի Եթե վաղը ‹Դաշինքը› կամ ՀՌԱԿ-ը հարց դնեն որ իրենք պատ րաստ չեն համագումար անելու իհարկե հետաձգվելու է›

‹Դաշինքի» առաջնորդը վստահեցրեց որ այս գործընթացը Հայաստանի նախագահի ընտրությունների հետ որևէ կապ չունի «Ունենալու ենք դիրք որոշում զուտ ծրագրային Եթե ես որպես քաղաքական գործիչ կամ որպես մարդ, ինչ որ մեկի կողքին կանգնեմ ապա միայն ծրագրային դրույթներից ելնելով»

**«Իսկ հնարավո՞ր է, որ Տեր-Պետրոսյանի առաջադրման դեպքում նրան պաշտպանի ՀՌԱԿ-ը կամ «Դաշինքը»** »

«1997 թվականին հեռացել ենք Ղարաբաղի խնդրի շուրջ ունեցած տարաձայ նությունների պատճառով Տեր-Պետրոսյանը երբ Ղարաբաղի հարցի շուրջ իր դիրքորոշումը կձևավորի, իսկ մեր դիրքորոշումը ձևավորված է կետ առ կետ այդ ժամանակ կնայենք. Եթե գլխավոր ազգային խնդրի շուրջ ունենք տարբեր մոտե ցումներ պաշտպանելն անիմաստ է› – պատասխանեց նա

www.a-pdf.com



# ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Սամվել Բաբայանը ազգային հերոսը զորավարը պետական քաղաքական գործիչը արցախյան գոյապայքարի մեջ մտավ կամոքն Աստծո և օրհնությամբ իր ժողովրդի· Նրա զորավարական հանճարը միևնույն սերուցք հյուսվածքից է ինչ որ արցախյան ծագմամբ մեծ զորավարներինը Արցախյան բնությունը բաժին էր հանել նրան արցախցիների հատկություններից նախաձեռնության ոգի, ճշգրիտ հաշվարկ, վճռականություն և կարգապահություն:Այստեղ հատկապես կարելի է հիշել որ գեներալը պատերազմի բոլոր տարիներին կարողացավ կարգ ու կանոն մտցնել բանակում «ֆիդայական» սուբյեկտիվ քմահաճույքին հակադրելով պատերազմական ժամանակների օբյեկտիվ չափանիշեր ֆիդայական» անհապաղաշտությանը բանակի զորանոցային օրենքներ

Բաբայանի տեղն ու դերակատարությունը մեր բազմադարյան պատմության և մերօրյա հերոսապատումի մեջ պայմանավորված են նրա անմիջական հրամանատարությամբ տարած հաղթանակներով Այդ հաղթանակների բնույթը ճիշտ պատկերացնելու համար պետք է նկատի ունենալ տվյալ ժամանակի աշխարհաքաղաքական հակասական ու բարդ երբեմն ոչ հայանպաստ երևույթները

Արցախի համար օրհասական պահին երբ (1992 թվականի ամառ) հակառակորդը օգտագործելով նախկին խորհրդային 4 րդ բանակի բոլոր ռեսուրսները զավթեց Շահումյանի շրջանն ու Մարտակերտի շրջանի հիմնական մասը անմիջականորեն սպառնալով մայրաքաղաք Ստեփանակերտին և բռնի տեղահանվեցին շուրջ 40 հազար բնակիչներ ռազմաճակատ գործուղվեց Սամվել Բաբայանը ստանձնելով Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարի առաքելությունը Այդ առաքելությամբ նա կարողացավ կազմակերպել մեծատառով իսկ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ հիրավի կրավորամերժ «կրոն... միակ միջոցը որ թե ժողովուրդների և թե սրանց ստրվածների գոյությունն է ապահովում» (Նժդեհ),–ի վերջո կանխել վերահաս նոր ցեղասպանությունը և հակամարտության մրցատախտակի վրա գրեթե տանուլ տրված շախմատային պարտիայի ելքը կտրուկ փոխել հօգուտ հայոց կողմի

Տակավին քելբաջարյան հերոսամարտի ժամանակներից ի վեր ծնունդ առած քաղաքական բարդ մթնոլորտի ելևէջների պայմաններում Սամվել Բաբայանն ունեցավ իր անհատական ու ինքնուրույն դիրքորոշումը Նա օրինակ բացահայտորեն իր վճռական վերաբերմունքը դրսևորեց Աղդամի Ֆիզուլիի Ջաբրայիլի Կուբաթլուի ազատագրական մարտերի առնչությամբ Երևանի մերժողական մոտեցումների հանդեպ հաշվի առնելով Արցախի և Սյունիքի անվտանգության ապահովման անհրաժեշտությունը: Այս և նման այլ փաստերն ու կոչվածները պատերազմի տարիների իրողություններին

www.a-pdf.com



աղերսվող և ներկա ժամանակների քաղաքական կոնկրետ դեմքերին ուղղված իր ազգաշահ կարծիքները հիմք են տալիս պնդելու որ բաբայանա կան կարողությունները բխում են ռազմական, պետական և քաղաքական գործչի իրատեսական մոտեցումներից Մասնավորապես ղարաբաղյան հիմնախնդրի լուծման իր տեսակետն արտահայտում է բավականին հստակ և իրական զերակայություններից ելնելով. Բացի այդ նկատառումներից Արցախի հիմնահարցում Բաբայանի վերաբերմունքի մասին կարևորագույն փաստ է պարունակում նրա այն ընդդիմագործ կեցվածքը որ հասունացավ 1997 թվականի երկրորդ կեսին ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր Պետրո սյանի հետ հանդիպման ժամանակ Բաբայանի առաջարկած ծրագրով Քելբաջարի Լաչինի և ազատագրված այլ տարածքների ամրագրումը Ար ցախի ապագա վարչաքաղաքական քարտեզում առավել փոխզիջումային և ընդունելի տարբերակ է պատկերանում: Նամանավանդ որ վաղուց հետե հայտնի է որ օգտակարն ու հաճելին իմաստավորվում են այն ժամանակ երբ համդես են գալիս միասնաբար երբ զուգակից են միմյանց

Օմարից մինչև Արաքս ձգվող ռազմաճակատներում տեղի ունեցած ազատագրական մարտերի ընթացքում Սամվել Բաբայանն ո իր գլխավո րած Պաշտպանության բանակը հայ ժողովրդի ռազմական պատմության հերոսական էջերում իրենց կենսագրությունը կերտեցին ոսկե տառերով և վավերացրին անջնջելի դրոշմակնիքով

Սամվել Բաբայանի գլխավորած պաշտպանական և ազատագրական ռազմագործողությունների օպերատիվ պլանների մշակման և իրականաց ման առանձնահատկությունների ամբողջությունը կարելի է սահմանել որպես **համադրական ինտենսիվ մարտավարություն** Դրա էությունը տարատեսակ ռեսուրսների (մարդուժ, սպառազինություն և այլն) հնարավոր նվազագույն ծախսերով կորուստներով ու ժամկետներում առավելագույն արդյունքների հասնելն է հակառակորդի հոգեբանական ու բարոյամարտա կան վիճակի համարժեք գնահատման վրա խարսխված բաբայանական մարտարվեստի համալիր կիրառման ճանապարհով (հիմնական դրսևորում ներն ու օրինակները հանգամանորեն ներկայացված են գրքի առաջին գլխում բուն ռազմագործողությունների նկարագրման շարադրանքում):

Սամվել Բաբայանի ազգային գաղափարական արժեկողմնորոշումների և գործունեության առանցքը սկսած տակավին ազգային զարթոնքի առաջնա փուլի ձեռքբերումներից և արցախյան գոյապայքարի պատերազմական բեկումնափուլից, անվերապահորեն մարմնավորում են հայոց իղձերի վեկտո րը պետականության կայացումն ու հզորացումը, ազգային անվտանգության երաշխավորումը. Եվ եթե եղել են տարաձայնություններ և հակասություններ պետական ավելի կամ պակաս հեղինակավոր պաշտոնատարերի հետ ապա բացառապես գաղափարական քաղաքական սկզբունքների և հայացքների տարբերության հողի վրա, երբեք ու ոչ մի պարագայում չիջնելով տարբեր տեղերում դեռ, ցավոք թյուրըմբռնաբար շահարկվող անձնական թշնամանքի ստորնամակարդակին Մյուս կողմից բոլոր ժամանակներում այն պաշտոն

www.a-pdf.com



ները որ զբաղեցրել է Բաբայանը կամ կարիք զգացվելու դեպքում կվարի վստահ քիչ է ասել, թե ինքնանպատակ չէին ու չեն էլ կարող լինել երևույթն ինքնին անհրաժեշտորեն թելադրվել և թելադրվելու է միմիայն ազգային և համապետական շահերով

Այդ իսկ շահերից բխող և այդ շահերի ոլորտը լավագույն իմաստով ընդարձակող ազգային միասնության հավաքական ուժի անմոռաց խտացումները նվիրագործեցին 1995 և 1997 թվականների իր հենց Բաբայանի մտահղացմամբ կազմակերպված մեր վերանկախ պետականության պարեգրության մեջ առաջին համահայահավաք զորահանդեսները Դրանք, ի շարս բարոյակամային ու ռազմատեխնիկական ամփոփ բնութագրերի հավելյալ անգամ հաստատեցին այն ճշմարտությունը, որ Պաշտպանության բանակը տարածաշրջանում ամենից կարգապահն ու մարտունակն է

Եվ այսպես Բաբայանին չճանաչողները դեռ կարող են կասկածել թե նա ինչ ինչ պաշտոնների է ձգտել կամ էլ այժմ է հավակնում. Իրականում, ակնհայտ անհրաժեշտության պայմաններում միայն և մյուսներից առավել ազգանպաստ գործունեություն ապահովելու պայմանով միմիայն պետականությանը դեռևս փալիք պարտքի պարտադրանքով պիտի հավակնի իշխանական դիրքերի Զինվորական ծառայության մարզում լինեն դրանք թե քաղաքականության կեռմաններում..

Այս գիրքը գեղարվեստական ստեղծագործություն չէ թեև կան տողեր և էջեր որոնք վիպական են Բայց այս ամենի մեջ չկա որևէ ամփոփ միտք որ չհամապատասխանի իրականությանը

Ազատագրական մարտերի մասին շատ բան է գրված և հաճախ չափազանցված Ավելին այդ հրապարակումներում շատերին վերագրված են գործեր որ նրանք չեն կատարել իսկ շատ դեպքերում էլ զանց են առնվել նրանց կատարած իրական գործերը: Ինչևէ ռազմագործողությունների քարտեզագրական ու տեքստային նկարագրությունների ժամանակ հիմք են ընդունվել զորահրամանատարի մշակած ընդհանուր մարտական ուղղությունները

Մենք գիտենք որ մեր այս հերոսական պարեգրությունում իրենց փայլուն բաժինն ունեն նաև բազմաթիվ հերոսներ ովքեր ապրում են մեր կողքին կամ զոհվել են ու սրբացրել հողը հայրենի

Նախատեսվում է առանձին գրքույկներով ներկայացնել կարևորագույն ազատագրական ռազմագործողությունների ընթացքը, արդյունքներն ու նշանակությունը այդ մարտերին մասնակցած և հաղթանակներին իրենց անուրանալի նպաստը բերած կամավորական ջոկատները Պաշտպանական շրջանների զորամասերն ու ստորաբաժանումները առավել աչքի ընկած հրամանատարներին վասն հայրենյաց փրկության սեփական կյանքը զոհաբերած ազատամարտիկներին և այս ամենը հագեցրած բազմաբնույթ տեղեկատվությամբ, լուսանկարներով ու քարտեզներով

Հաղթանակներ... Եթե փորձենք հետ գնալ հայոց պատմության հոլովույթի ընթացքով ապա դժվար չէ համոզվել որ ղարաբաղյան պատերազմի հաղթանակները հայոց բազմադարյան գոյապայքարի մերօրյա

www.a-pdf.com



թագուպսակն են Հինավուրց Արցախի նորագույն ազատամարտը հայ ժողովրդի սխրանքի ու հերոսության դրվագներից է Նվաճված հաղթանակների մղիչ ուժը եղել է իմացյալ մահով անմահանալու ազգն ու երկիրն անմահացնելու պատրաստակամությունը Եվ այս գիտակցությամբ առաջնորդվել են մեր ժողովրդի բոլոր շերտերը Այս իսկ իմաստով էլ ղարաբաղյան ազատագրական պատերազմը հայ ժողովրդի միաբանության ու հավաքական կամքի պայծառ արտահայտությունն է

Գիրքը կարող է օգտակար լինել ապագա գրողների, պատմաբանների ռազմագետների քաղաքագետների հանրության լայն շերտերի համար ամբողջացնելու վերարժևորելու հայ ժողովրդի անկրկնելի այս դյուցազնամարտը և նմանապես նրա հերոսների մարտական ուղիները.

Թե որքանով է հաջողվել մեզ ըստ հնարավորին սպառիչ ներկայացնել զորահրամանատարի կերպարը և մեր հաղթանակների նշանակո թյունը արդեն մենք չէ որ պիտի դատենք

**Հենրիկ Խաչատրյան**
**Գարեգին Ղազարյան**

www.a-pdf.com



# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1 Ազիզբեկյան Ռ Հայաստանը վերակառուցումից մինչև անկախությունից և ի ս մառոպ ակնարկ Եր.,1992:

2 Բալայան Զ., «Դժոխք և դրախտ» Եր 1995

3 Աբրահամյան Հ., «Երբ Հայրենիքը վտանգի մեջ է» Եր 1997

4 Մարգարյան Ս., Մարտակերտ հայկարարված պատերազմի կիզակետ Ստեփանակերտ, 1999·

5 Գևորգյան Հ., «Դեպո», Եր., 2000:

6. Հարությունյան Մ Արցախյան պատերազմի սկիզբը և Շո շիի ազատագրո մը», Եր 2000:

7 Աղաջանյան Վ., «Ազգային հերոս Սամվել Բաբայան»:

8 Հաարաթյան Ս., «Ղարաբաղյան պատերազմ», Եր., 2001:

9 Մանուկյան Վ «Հայկական երազանքը գոյատևման փակուղո մ ելույթների և հոդվածների ժողովածու)», Եր., 2002:

10. Այվազյան Հ., «Հաղթանակի և վերհուշի ճամփաներով» Եր 2006

11. Բարխուդարյան Ա., «Ղարաբաղ. դարավերջ», Եր., 2004:

12 Սպուպիշին Վ., «Իմ առաքելությունը Հայաստանում 1992–1994» Եր., 2005

13 Գարեգին Նժդեհ Բաց նամակներ հայ մտավորականության Բեյրութ 1929

14 Кишмишев С. Русско турецкая воина 1877—1878гг. , Тифлис 1884

15 Потто В 'Героиская ооорона крепости Шуши" изд 2 е С Петер бург 1903

16. Потто В Историческии очерк Кавказских воин от их на ıa, a до при соединения Грузии к России Тифлис, 1899.

17. Ступишин В., "Карабахский конфликт", М., 1998

18 Арсалы Д "Армяно азербайджанский конфликт военнь и аспект Баку 2004


**Մամուլ**


1 Հայաստանի Հանրապետություն», թթ. 42, 78 90 1998 թվական Երևան

2 «Ազատ Արցախ», թթ 9.16, 40 53–55 108 120 1999 թվական Ստեփանա կերտ.

3. «Время , н. 44, 1993, Ереван.

4. «Голос Армении», н 136, 1995 Ереван

5 Сегодня 17 05 1994 Москва

www.a-pdf.com

Հենրիկ Խաչատրյան
Գարեգին Ղազարյան
Միրվարդ Մարգարյան

# ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐՆ՝ ԻՆՉՊԵՍ ԵՂԵԼ ԵՆ. ԱԶԳԱԿԱՆՉ 44

Խմբագիր խորհրդատու Ալբերտ Բագեյան
Խմբագիր Գնել Ղլեչյան
Ոճաբան-սրբագրիչ՝ Օֆելյա Միքայելյան
Շարվածքը Գայանե Աղամալյանի
Էջադրումը և ձևավորումը Աննա Ղազարյանի
Գրքի և կազմի ձևավորումն ու պատկերների մշակումը
Վահան Քոչարի
Պատկերների և քարտեզների մուտքագրումը
քարտեզագիր Արտավազդ Բաբայանի
Լուսանկարները
Աշոտ Երամիշյանի. Մարտին Շահբազյանի
Օլեգ Լիտվինի Հովհաննես Արմենակյանի

«ԱՆՏԱՐԵՍ» ՄԵԴԻԱ ՀՈԼԴԻՆԳ
PER ASPERA AD ASTRA

Անտարես» հրատարակչատուն
Երևան 0009 Մաշտոցի 50ա/1
Հեռ (+374 10) 58 10 59
հեռ /ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am

panarmenian freebooks library
www.freebooks.do.am
www.freebooks.am

## - [illegible] «44»

բկանշաններից
(խորհրդանշաբար երկու «4»-երը)
պայմանական զուգորդում,
ու ընտրել էր «Կոմանդոսության»
զորահրամանատար
Սամվել Բաբայանն արցախյան
պատերազմի ողջ ընթացքում
ռադիոկապի միջոցով զորերը
կառավարումն իրականացնելու
համար

## - [illegible] «44»

նա սովոր տարբերանշան չէր, ոչ էլ
պարզ ավելին փոխանուն։
Սա մի յուրահատուկ ֆենոմեն էր,
որ երբեմն հնչելիս ամեն ինչ
էր ասում թե՛ կողի ինքնության
և թե՛ նրա անցյալի մասին՝
դառնալով զորքի ազդանշան և
հաղթանակների սիմբոլ։

## - [illegible] «44»-ը

ոգեշնչող մարտակոչ էր թե՛
դաշտային հրամանատարի
և թե՛ [illegible]
առաջնագծում մարտնչող
ազատամարտիկի համար

## - [illegible] «44»-ը

հակառակորդի շարքերում
խառնաշփոթ սփռող «արագ
գործողության» ազդանշան էր

## - [illegible] «44»-ը

Արցախի ազատագրման հայ
ժողովրդի հաղթանակների
կոդն է

Antares

